| 13, ՍԱԹ6 | Զունի | Զունի | Զունի | Կարմիր | Զունի |
| 14, ԱՏ4 | Կնիք՝ قرهبت ارسلانيان [ԿԱՐԱՊԵՏ ԱՐՍԼԱՆԵԱՆ] | 686կր., հսկ.՝ 17,2սմ, տրմգծ.՝ 15սմ.՝ վեր, 18,5սմ՝ յտկ., հստթն՝ 0,7մմ | Վիզին շուրջբոլորը 4 գիծեր | Դեղին | 1930 |
| 15, ԱՏ5 | Կնիք՝ بلابان | 626կր., հսկ.՝ 16սմ, տրմգծ.՝ 15սմ վեր, 16,5սմ յտկ., հստթն.՝ 1մմ. | Վիզին շուրջբոլոր կրկնուող նախշեր, եւ 4 գիծեր, իսկ յտկ.էն քիչ վեր շուրջբոլոր 6 գիծեր | | Զունի |
| 16, ԱՏ7 | Կնիք՝ **ارسلانيان حلب** [ԱՐՍԼԱՆԵԱՆ ՅԱԼԷՊ] | 622կր., հսկ.՝ 17,5սմ, տրմգծ.՝ 15սմ. վեր, 18սմ յտկ., հստթն՝ 0,8մմ | Վիզին շուրջբոլոր 6 գիծեր | Կարմիր | |
| 17, ԱՏ8 | Կնիք՝ ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐՄԱՆԵԱՆ حلب [Յալէպ] | 810կր., հսկ.՝ 18,5սմ, տրմգծ.՝ 14,5սմ. վեր, 18,5սմ յտկ., հստթն.՝ 0,5մմ, | Վիզին շուրջբոլոր 2 գիծեր | Դեղին | 1930 |
| 18, ԱՏ9 | Կնիք՝ ԳԷՈՐԳ ՊԻԼԷՄՃԵԱՆ | 522կր., հսկ.՝ 15սմ, տրմգծ.՝ 13սմ վեր, 14,5սմ յտկ., հստթն.՝0,8մլ | Վիզին շուրջբոլոր կրկնուող նախշեր, 4 գիծեր, իսկ յտկ.էն քիչ վեր շուրջբոլոր երկու գիծ | | Զունի |
| 19, ԱՏ10 | Անընթ. արաբատառ կնիք | | Վիզին շուրջբոլոր կրկնուող նախշեր | Կարմիր | |
| 20, ԱՏ11 | Կնիք՝ ՊԵՏՐՈՍ ԱՐԸՃԵԱՆ | 747կր., հսկ.՝ 18սմ, տրմգծ.՝ 13,5սմ վեր, 18սմ յտկ., հստթն.՝ 0,8մմ. | Վիզին շուրջբոլոր կրկնուող նախշեր, 2 ակօսներ՝ 0,4սմ լայնքով, իսկ | Դեղին | |

[1] Ըստ սեփականատիրոջ հետ մեր հաղորդակցութեան «շատ հաւանաբար փոքրիկի մը պատկանած, 1900ականներուն»: Գնուած է Իսթանպուլի մէջ 2010ականներուն (հաղորդակցութիւն 26 Մայիս 2022):

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | յտկ.էն քիչ վեր շուրջբոլորը նոյնամսան ակօս | | |
| 21, ԱՏ12 | Երկու կնիք՝ ՅՈՎ ՊՕՇԿԷԶԷՆԵԱՆ 1940ﻫﻠﺐ [Հալէպ], իսկ երկրորդը շատ նման է ԱՏ10ի քնիքին | Տուեալներ չունինք | Չունի | | |
| 22, ԱՏ13 | Կնիք՝ كيوبلانسرلا كريوت | 875կր., հսկ.՝ 19,5սմ, տրմգծ.՝ 16սմ վեր, 20սմ յտկ., հստթն.՝ 1,2մլմ | Վիզին շուրջբոլոր կրկնուող 5 նախշեր՝ 1,2 սմ ակօսի մը մէջ, որուն վարի սահմանը, շուրջբոլոր դարձող դուրս ցցուած կիսակլոր գօտի մը, վիզին շուրջբոլր չորս գիծեր, նաեւ՝ յտկ.էն քիչ վեր՝ երկու գիծեր | Կարմիր | 1930 |
| 23, ԱՏ14 | Արձ.՝ Ծ.Խ. | 166կր., հսկ.՝ 9սմ, տրմգծ.՝ 8,8սմ վեր, 9սմ յտկ. հստթն.՝ 0,6մլմ | Չունին | Կարմիր | Չունին |
| 24, ՇՄ1 | Կնիք՝ ﻞﻳﺮﻜﻳﻟﺍ ﻑﺳﻮﻳ ﻝﻤﻋ [ԵՈՒՍԷՖ ՏԻԼՐՊԵՔԻՐԼԻԻ ԱՇԽԱՏԱՆՔ] | հսկ.՝ 14սմ, տրմգծ.՝ 18սմ վեր, 19սմ յտկ. | | | |
| 25, ՎԱ1[2] | Արձ.՝ Շաքէ Ե. Հօտլեան ծնաւ 1896ին.նոյեմբ. 27ին ուրբաթ օրը ժամը 6.ու[1]/2ին զայս նուիրեաց Մելքոն գազանճեանը որ շինեց 1897ին փետ. 1ին | 291կր., հսկ.՝ 11,5սմ, տրմգծ.՝ 12,5սմ, հստթն.՝ շուրջ 1մլմ | | | 1897 |
| 26, ՍՓ2 | Արձ.՝ Սաքա Հանիֆի, 1312 | | Վիզին մօտ շուրջբոլոր 4 գիծ | | Չունի |
| **Տարատեսակ 2** | | | | | |
| 1, ԱՄ1[3] | Չունի | շուրջ 825կր., հսկ.՝ 16սմ, տրմգծ.՝ 18սմ վեր, 21 յտկ. | Չունի | Կարմիր | |
| 2, ԵՊԹ1 | Կնիք՝ Մժ | Տուեալներ չունինք | Շուրջբոլոր կրկնուող կամարանման նախշեր վիզին տակ, եւ՝ յտկ.էն վեր դէպի դուրս եւ շուրջբոլոր դարձող երկու ցցուած կիսակլոր գօտիներու միջեւ | | չունի |
| 3, ԵՊԹ2 | Կնիք՝ «Մ[եւ անընթ. տառ մը]» | | Շուրջբոլոր կրկնուող կամարանման նախշեր վիզին տակ | | չունի |
| 4, ԵՊԹ3 | Չունին | | Չունին | | չունի |
| 5, ԵՊԹ4 | | | | | չունի |
| 6, ՁԹ1 | Կնիք՝ Հ.Գ. | | | | 1914 |
| 7-15, ՍԱԹ1-3, | Տուեալներ չունինք | | | | |

[2] Անձնական նամակագրութիւն 15 Օգոստոս 2022: Վրէժ Արմէն Արթինեան, «Ճակատագիր», *Ոստայն 2*, տպարան կաթողիկոսութեան հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1988, էջ 113-119: Պատմուածքը նախ տպուած է Գահիրէի *Յուսաբեր*ին մէջ, 31 Դեկտեմբեր 1965ին, ապա ընդգրկուած գիրքին մէջ:

[3] «Տատիկս այն ունեցել է 1952 թուականից: Մայրիկիս տատիկին է եղել: Երեւի հենց Լենինականում էլ են արտադրել: Նախշերը ամբողջ շրջանով են» ( հաղորդակցութիւն 26 Մայիս 2022):

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5, 8-10, 12-13 | | | | | |
| 16, ՍԱԹ4 | Կնիք՝ Հ.Օ, Հ. Օ. | | | | |
| 17-8, ՀՊԹ1-2 | Չունին | հսկ.՝ 15-15,5սմ, տրմգծ.՝ 14 սմ. | Չունին | | ԺԹ. դարավերջ |
| **Տարատեսակ 3** | | | | | |
| 1, ՍԱԹ | Չունին | Տուեալներ չունինք | Չունի | Կարմիր | |
| 2, ԱՀԹ4 | Արձ.՝ ԶԱՐՄԱՆ ՊԱՐՊԱՐԵԱՆ 1914 | | Նախշեր | | 1914 |
| 3, ԱՀԹ5 | Արձ.՝ ՈՎՍԱՆՆԱ ՖԱՐԻՆԵԱՆ 1906 | | | | 1906 |
| 4, ԱՀԹ6 | Արձ.՝ ԳԲՐԵԱԳԶԻ ՈՐԴԻ ՀՃԻ ԼՈՒՍԻԱՅ 1908 | | | | 1908 |
| 5, ԱՀԹ7 | Արձ.՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԵԱՉԻԵԱՆ 1908 | | | | 1908 |
| 6, Անծ.1 | Չունին | | Հարուստ են նախշերով | Կարմիր | Չունի |
| 7, Անծ.2 | | | | | |
| 8, ԱՏ1 | | 2930կր., հսկ. 26սմ, տրմգծ.՝ 25,5սմ վեր, 31սմ յտկ., հստթն.՝ 1,2մլմ. | | | |
| 9, ԱՏ2 | 3 նոյնանման կնիք | 2030կր., հսկ. 22սմ, տրմգիծ՝ 23.5սմ վեր, 29,5սմ յտկ., հստթն. 0,6մլմ | Շուրջբոլոր միքանի գիծեր | | |
| 10, ԺԱԹ1 | Չունի | Տուեալներ չունինք | | Դեղին | |
| 11, ՄՊ1 | Արձ.՝ ՄԱՐԻԵԱՄ ԳԱԶԱՆՃԻԵԱՆ[5] | 1170կր., հսկ. 18սմ, տրմգծ.՝ 25սմ վեր, 25սմ յտկ., հստթն. 1մլմ. | Շուրջբոլոր գծային եւ խոյականման նախշեր | Կարմիր | 1895 |
| 12, ՍՍ4 | Չունի | 1435կր., հսկ. 17սմ, տրմգծ.՝ 16սմ վեր, 21.5սմ յտկ. | Շուրջբոլոր սիրուն նախշեր | | Չունի |
| 13, ՍՍ5 | Արձ.՝ ՀԱՃԻ ԵՒ ԵՐԷՑ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ | Շուրջբոլոր գծային եւ խոյականման նախշեր | | | 1895 |
| 14, ՄուՊ1 | Տուեալներ չունինք | | | | |
| 15, ՊՏԿ1[6] | Արձ.՝ Ի Վայելումն Պօղոսին է Թվ. ՌՃԼԸ (1689)։ | Նկարէն մեկնելով կարելի է հետեւցնել որ ան սովորական եւ ընթացիկ չափի նմուշ մը չէր | | - | 1689 |
| 16, ՍՓ1 | Արձ.՝ «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԲԸՐԱԲԻՕՆ ՌՄԻ»: Ունի երկրորդ թուական՝ «1205», | Սիրուն նախշեր | | Դեղին | ՌՄԻ, 1205 |
| 17, ՍՓ3 | Արձ.՝ Սեժտէ 1166[7] | Արձանագրութիւնը կը գտնուի կաւամանին վերնամասին ներքին կողմը | | Կարմիր | 1716, Թոքաթ կամ Սեբաստիա |

[4] Մ եւ Ա տառերը միացուած։

[5] Նոյն գրութիւնը արձանագրուած է միքանի անգամ։

[6] Կարապետեան զայն կը բնութագրէ իբրեւ «խիստ ընտիր նմուշ», կը նշէ նաեւ որ ան կը գտնուէր Վահէ Սէթեանի հաւաքածոյին մէջ, եւ թալանուած է Պէյրութի 1976-77 կռիւներուն ընթացքին (Կարապետեան, էջ 240)։

[7] Շատ նման է ԱՏ1ին։

Իրենց ընդհանրական ձեւին մէջ, այս տիպին մեծերը կը յիշեցնեն ճիտապուրի կաթսաները, իսկ փոքրերը՝ կաթի դոյլերը: Առկայ օրինակներէն ու տարբերակներէն կարելի է հետեւցնել որ այս տիպը անցած է ձեւաւորման բաւական երկար ճամփայ, հուակ, հանգրուանած գլխաւոր 2-3 տարատեսակներու վրայ: Մեկնելով առկայ նմուշներէն, կը թուի թէ այս տիպի երեք տարատեսակ առաւել ընդհանրական կենցաղավարութիւն ունեցած է:

Ստորեւ կ'անդրադառնանք անոնց:

***Տարատեսակ 1.-*** այս նմուշները պատրաստուած են ճարտարարուեստականացած պղնձեայ ողորկ ու հարթ, կլոր թերթերէ[11]: Ասոնք ունին կլոր, ողորկ (երբեմն թեթեւ թեքութեամբ) յատակ, ուրկէ վեր բարձրացող հատուածը՝ իրանը, յատակին ներքին հարթակին համեմատ գոյացնելով շուրջ 60 աստիճան թեքութիւն (դէպի ներս), կը կազմէ կոնաձեւ (տակաւ նեղցող) 'գաւաթ' մը: Նեղցող գաւաթին վերի տրամագիծը երբ կը հասնի յատակի տրամագիծին 2/3րդ համեմատական չափին, կը գոյացնէ վիզ մը, որ ապա կը բարձրանայ թեքելով եւ ծաւալելով դէպի դուրս: Երբ բարձրացող եւ դէպի դուրս բացուող հատուածին տրամագիծը գրեթէ հաւասարի յատակի տրամագիծին, ան կ'առնէ հորիզոնական ուղղութիւն ապա կ'իջնէ վար:

***Տարատեսակ 2.-*** այս նմուշները պատրաստուած են թէ՛ ճարտարարուեստականացած պղնձեայ ողորկ ու հարթ, կլոր եւ թէ՛ չճարտարարուեստականացած թերթերէ: Տարատեսակ 1էն ասոնք ունին հետեւեալ տարբերութիւնները.- ա) չափով աւելի փոքր են, բ) իրանի բաժինը թեթեւ փորիկութիւն մը ունի, գ) յատակը ողորկ չէ, այլ՝ ուշագրաւօրէն կոր, դ) իրանէն վիզ անցնող հատուածը չունի տարատեսակ 1ի գեղագիտական նրբութիւնը:

***Տարատեսակ 3.-*** այս նմուշները պատրաստուած են ճարտարարուեստականացած պղնձեայ ողորկ ու հարթ, կլոր թերթերէ: Ասոնք ունին հետեւեալ յատկանիշերը.- ա) չափով աւելի մեծ են, բ) ոմանք հարուստ են նախշերով (ուրիշներ չունին նախշեր), գ) ոմանց իրանի բաժինը ունի թեթեւ գոգաւորութիւն, ուրիշներունը՝ թեթեւ փորիկութիւն. ոմանք ունին հարթ իրաններ, դ) ոմանց յատակը ողորկ է, ոմանցը՝ թեթեւակիօրէն կոր, ե) գրեթէ վիզ չունին, զ) յատակին ներքին հարթակին համեմատ իրանը ունի տարբեր թեքութիւններ՝ շուրջ 60էն մինչեւ 80 աստիճան, է) ի տարբերութիւն նախորդ երկու տարատեսակներուն (որոնց նմուշները – իրենց տարատեսակին մէջ – մանրամասնային քիչ տարբերութիւն ունին), տարատեսակ 3ի նմուշները իրենց մանրամասնութիւններուն մէջ այլազան են: Տարատեսակ 3ին ձեւի, չափի ու նախշերու այլազանութիւնը ենթադրել կու տայ որ ան ու-

[11] Քիչ պարագաներու կը հանդիպինք արհեստանոցի թերթերու:

նեցած է այլազան կիրառութիւններ՝ բաղնիքի կաւի ընտանեկան (կամ մեծաքանակ պահեստի) գործածութենէն, մինչեւ կաթսայի գործառոյթ[12]:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

***Ամերիկայի հայկական թանգարան* (ԱՀԹ1-7)**

ԱՀԹ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, նախշ, թուական: Ունի կնիք՝ «سركيس جمبرجيان» (ՍԱՐԳԻՍ ՉԵՄՊԵՐՃԵԱՆ):

ԱՀԹ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ՆԱԶԱՐԻԱՆ 1885», չունի նախշ, կնիք:

ԱՀԹ3ը կը պատկանի տարատեսակ 1ին[13]:

ԱՀԹ4ը կը պատկանի տարատեսակ 3ին պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ԶԱՐՄԱՆ ՊԱՐՊԱՐԵԱՆ 1914»: Չունի կնիք, ունի գծային նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը թեթեւ կլորութիւն ունի, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն մ:

ԱՀԹ5ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն, թուական՝ «ՈՎՍԱՆՆԱ ՖԱՐԻՆԵԱՆ 1906»: Չունի կնիք, ունի գծային եւ երկրաչափական նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը տափակ է, իրանը՝ ողորկ ու հարթ:

ԱՀԹ6ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն, թուական՝ «ԳԸՐԵԱԳԶԻ ՈՐԴԻ ՀՃԻ ԼՈՒՍԻԱՅ 1908»: Չունի կնիք, նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը տափակ է, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն ունի:

ԱՀԹ7ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԷԱՉԻԵԱՆ 1908»: Չունի կնիք, նախշեր, արձանագրութիւնը տեղաւորուած է զարդանախշ-վահանակի մէջ: Յատակը թեթեւ կորութիւն ունի, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն:

***Անծանօթ* (Անծ.1-2)**

Անծ.1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Ունի շուրջբոլոր նախշուած

[12] Լիբանանի Պեքաայի շրջանի Թըրպոլ գիւղի ազգագրական թանգարանին մէջ հանդիպեցանք տարատեսակ 1 ցուցանմուշին, որ ըստ տրուած բացատրութեան կը գործածուէր կաթ տաքցնելու համար (անձնական զրոյց, 12 Յուլիս 2023): Կիրակոսեան զանոնք կը կոչէ բաղնիքի ջրաման (էջ 180):

[13] Թեքնիք պատճառներով անկարելի եղաւ աւելի բան գրել այս նմուշին մասին:

հինգ գօտի, որոնց երկրորդն ու չորրորդը կրկնուող նոյն նախշերն ունին, մինչ առաջինն ու հինգերորդը ունին իրարմէ տարբեր, կրկնուող նախշեր: Երրորդ գօտին անհամեմատ լայն է, ունի կրկնուող այլ նախշ մը: Յատակը հարթ է, իրանը՝ թեթեւ գոգաւորութիւն ունի:
Անծ.2ը կը պատկանի տարատեսակ 3ին պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Ունի շուրջբոլոր նախշուած վեց գօտի, որոնց առաջինը կը կրկնէ 6րդին նախշը, երկրորդը՝ 5րդինը: Երրորդ եւ չորրորդ գօտիները անհամեմատ լայն են եւ ունին կրկնուող նախշ մը: Յատակը հարթ է, իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն:

***Երեւանի պատմութեան թանգարան*** **(ԵՊԹ1-5)**
ԵՊԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական: Ունի կնիք՝ «Մժ», շուրջբոլոր կրկնուող կամարանման նախշեր վիզին տակ եւ երկրորդ մը՝ յատակէն վեր եւ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներու միջեւ: Իրանը ողորկ է ու հարթ:
ԵՊԹ2ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական: Ունի կնիք՝ «Մ[եւ անընթ. տառ մը]»: Ունի շուրջբոլոր կրկնուող կամարանման նախշեր վիզին տակ, եւ յատակէն վեր դէպի դուրս ու շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներ: Յատակը կլոր է, իրանը ողորկ է ու հարթ:
ԵՊԹ3ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր: Յատակը կլոր է, իրանը ունի որոշ գոգաւորութիւն:
ԵՊԹ4ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներ: Յատակը կլոր է, իրանը ողորկ է ու հարթ:
ԵՊԹ5ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր:

***Հրազդան Թոքմաճեանի հաւաքածոյ*** **(ՀԹ1-3)**
ՀԹ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական եւ նախշեր: Ունի կնիք՝ «ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ»:
ՀԹ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի վիզին շուրջբոլոր կրկնուող նախշեր, կնիք՝ «يوسف فستقجيان عينتاب» (ԵՈՒՍԷՖ ՖՍՏՔՃԵԱՆ ԱՅՆԹԱՊ):
ՀԹ3ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «Զ. Մկրտիչեան 1957[,] 9[,] 22» եւ կենդանակերպ նախշ մը:

***Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու թանգարան* (ԺԱԹ1)**
ԺԱԹ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, նախշ ու կնիք: Չափերով աւելի լայն է, իրանը յատակին ներքին հարթակին համեմատ կը գոյացնէ շուրջ 80 աստիճան թեքութիւն, իսկ վիզի կտրուածքը աւելի նախնական մշակում ունի:

***Հայաստանի պատմութեան թանգարան* (ՀՊԹ1-2)[14]**
ՀՊԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր չունի: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր երկու ցցուած կիսակլոր գօտի: Ըստ Կիրակոսեանի, ան ԺԹ. դարավերջի Ալեքսանդրապոլի արտադրութիւն է:
ՀՊԹ2ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր չունի: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր երկու կիսակլոր ցցուած գօտի: Ըստ Կիրակոսեանի, ան ԺԹ. դարավերջի Ալեքսանդրապոլի արտադրութիւն է:

***Սերժ Հաքիմեան* (ՍՀ1)**
ՍՀ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի թուական, արձանագրութիւն, նախշեր, կնքուած է՝ «ՆԵՐՍԷՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ عينتاب» [ԱՅՆԹԱՊ]: Իրանին տարբեր մասերուն շուրջբոլորը կան 9-10 գիծեր:

***Հիլմիա Հիլմի հաւաքածոյ* (ՀՀ1)**
ՀՀ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, արձանագրութիւնը թասին շրթունքին է՝ «ԵՂԻՍԱԲԵԹ», չունի թուական, նախշեր, «շատ հաւանաբար շինուած փոքրիկի մը համար, շուրջ 1900ին», գնուած է Իսթանպուլի մէջ 2010ին[15]:

***Զիթողցեանց թանգարան, Գիւմրի* (ԶԹ1)**
ԶԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի երկու սկզբնատառ՝ «Հ.Գ.» եւ թուական՝ «1914», երկուքն ալ նոյն վահանակին մէջ առնուած: Չունի նախշեր, յատակը կիսակլոր է, իրանը հարթ-ողորկ: Ունի յատակէն վեր եւ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտիներ:

[14] Այս երկու նմուշներուն տուեալները կը քաղենք Կիրակոսեանի հատորէն, օգտուելով նաեւ նկարներէն:
[15] Ելնամակային հաղորդակցութիւն 26 Մայիս 2022:

***Աննա Մանուկեան* (ԱՄ1)[16]**
ԱՄ1ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Վիզին մօտ ունի շուրջբոլոր կամարանման կրկնուող նախշ: Իրանը թեթեւ ուռուցիկութիւն մը ունի եւ՝ շուրջբոլոր ցցուած երկու կիսակլոր գօտի:

***Շողեր Մարկոսեան* (ՇՄ1)[17]**
ՇՄ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է հաւանաբար կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական: Ունի արաբատառ կնիք՝ «يوسف ديابكرلي» (ԵՈՒՍԷՖ ՏԻԱՐՊԵՔԻՐԼԻ): Ունի վիզին մօտ շուրջբոլոր նախշ, կնիքը զետեղուած է նախշուած վահանակի մէջ:

***Մոսիկ Պարսումեան* (ՄՊ1)**
ՄՊ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի կրկնուող արձանագրութիւն եւ թուական՝ «ՄԱՐԻԵԱՄ ԳԱԶԱՆՃԻԵԱՆ 1895», շուրջբոլոր գծային եւ խոյականման նախշեր, չունի կնիք: Իրանը, յատակին ներքին հարթակին համեմատ կը գոյացնէ շուրջ 80 աստիճան թեքութիւն՝ դէպի ներս:

***Սասուն Սիմոնեանի հաւաքածոյ* (ՍՍ1-5)**
ՍՍ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, ունի նախշեր վիզին շուրջ, ինչպէս նաեւ շուրջբոլոր գիծեր:
ՍՍ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական: Ունի կնիք՝ «ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ ՇԱՄ», կրկնուող նախշեր՝ վիզին շուրջ, ինչպէս նաեւ շուրջբոլոր գիծեր:
ՍՍ3ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն: Ունի երկու տարբեր կնիքներ՝ «Յ. Կ. ԱՍԼԱՆԵԱՆ» եւ «ՆՇԱՆ ԿԵՑՈՅԵԱՆ», կրկնուող նախշեր վիզին շուրջ, ինչպէս նաեւ շուրջբոլոր գիծեր:
ՍՍ4ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, ունի համատարած սիրուն կրկնուող նախշեր: Իրանը ունի որոշ գոգաւորութիւն:

---

[16] Հաղորդակցութիւն Աննա Մանուկեանի հետ, Երեւան, Մայիս 2022:

[17] Համացանցի «Յուշամատեան» (https://images.app.goo.gl/whVmB4hkLbWeDKfk9) կայքէջին վրայ հանդիպելով պղնձեղէններու նկարի մը հաղորդակցեցանք (22 Օգոստոս 1922-14 Յուլիս 1923) անոնց սեփականատէր Շողեր Մարկոսեանին հետ, որմէ քաղեցինք վերոյիշեալ տուեալներն ու չափագրութիւնը, որոնց համար շնորհակալ ենք իրեն:

ՍՍ5ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «ՀԱՃԻ ԵՒԱ ԵՐԷՑ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1895», շուրջբոլոր գծային եւ խոյականման նախշեր: Չունի կնիք: ՍՍ4ին նման ունի որոշ գոգաւորութիւն, սակայն կը տարբերի անկէ ու ՍՍ1-3էն նաեւ՝ համաչափութեամբ: Ասոր գոգաւորութեան, յատակի ու բերանի չափերը չունին ՍՍ1-4ի համաչափական նրբութիւնը:

***Սարդարապատի ազգագրութեան թանգարան* (ՍԱԹ1-13)**

ՍԱԹ1ը կը պատկանի տարատեսակ 2ին պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, կնիք, թուական: Ունի վիզին շուրջբոլոր կրկնուող նախշ, յատակը հարթ չէ: Յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի:

ԱԱԹ2ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Ունի վիզին շուրջբոլոր կրկնուող նախշ, չունի արձանագրութիւն, կնիք, թուական. յատակը հարթ չէ: Յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր, ցցուած երկու գօտի: Իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն:

ԱԱԹ3ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Ունի վիզին մօտ նախշ մը, չունի կնիք, արձանագրութիւն, թուական. յատակը կոր է: Յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի: Իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն:

ԱԱԹ4ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի նախշեր, թուական. ունի արձանագրութիւն՝ «h O» եւ «ՀՕ»: Յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի: Իրանը հարթ ու ողորկ է, յատակը՝ կոր:

ԱԱԹ5ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի նախշեր, արձանագրութիւն, թուական, կնիք: Յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի: Իրանը ունի թեթեւ գոգաւորութիւն, յատակը կոր է:

ՍԱԹ 6ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք, նախշեր:

ՍԱԹ7ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, յատակը տափակ է, իրանը՝ հարթ ու ողորկ, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի: Չունի արձանագրութիւն, կնիք, թուական, նախշեր:

ՍԱԹ 8ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի անընթեռնելի կնիք, չունի նախշեր, արձանագրութիւն, թուական. իրանը հարթ ու ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

ՍԱԹ 9ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

ՍԱԹ 10ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:
ՍԱԹ 11ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը թեթեւ գոգաւորութիւն ունի, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:
ՍԱԹ 12ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:
ՍԱԹ 13ը կը պատկանի տարատեսակ 2ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարթ եւ ողորկ է, յատակէն քիչ վեր ունի շուրջբոլոր ցցուած երկու գօտի, յատակը կոր է:

### *Սուրբ Փրկիչ ամսագրի լուսանկարներ* (ՍՓ1-3)[18]

ՍՓ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է դեղին պղինձէ, ունի արձանագրութիւն, թուական՝ «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԲԸՐԱԲԻՕՆ ՌՄԻ [1771]»: Ունի երկրորդ թուական՝ «1205 [=1791]», կնիք չունի: Արձանագրութիւնը տեղաւորուած է իւրօրինակ վահանակ-նախշի մէջ: Ունի շուրջբոլոր գիծեր: Ըստ նկարին ենթագրութեան, ան բաղնիքի կաթսայ է:
ՍՓ2ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ըստ նկարի ենթագրութեան, ունի արձանագրութիւն՝ «Սաքա Հանիֆի, 1312», որ զետեղուած է վահանակի մէջ, վիզին վրայ: Չունի նախշեր, այլ շուրջբոլոր 4 գիծ, վիզին մօտ:
ՍՓ3ը կը պատկանի տարատեսակ 3ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ըստ նկարի ենթագրութեան, ունի արձանագրութիւն՝ «Սեժտէ[19] 1166 [=1752]», իբրեւ բացատրութիւն աւելցուած է թէ ան Եւդոկիոյ (Թոքաթ) կամ Սեբաստիոյ գործ է: Արձանագրութիւնը կը գտնուի կաւամանին վերնամասին ներքին կողմը: Հարուստ է նախշերով: Ձեւով, չափով ու նախշերով շատ նման է ԱՏ1ին:

### *Վրէժ Արմէն* (ՎԱ1)[20]

ՎԱ1ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, ունի արձանագրութիւն եւ թուական՝ «Շաքէ Ե. Հօտլեան ծնաւ 1896ին. նոյեմբ. 27ին ուրբաթ օրը ժամը 6.ու½ին զայս նուիրեաց Մելքոն Գազանճ-

[18] Այս երեք նմուշներուն տուեալները կը քաղենք նկարներուն ենթագրութենէն, օգտուելով նաեւ նկարներէն:
[19] Գուցէ Սէյտէ՞:
[20] Ելնամակային հաղորդակցութիւն 14 Օգոստոս 2022 եւ 14 Յուլիս 2023:

եանը որ շինեց 1897ին փետ. 1ին»: Չունի կնիք: Ունի շուրջբոլոր կրկնուող բուսանախշեր վիզին տակ եւ երկրորդ մը՝ յատակէն վեր:
Վրէժ Արմէն այս կաւամանին մասին «Ճակատագիր» վերնագրեալ գեղարուեստական գրութիւն մը ստորագրած է *Յուսաբեր*ի 31 Դեկտեմբեր 1965ի թիւին մէջ, զոր յետագային ընդգրկած է իր *Ոստյն 2* հատորին մէջ, էջ 113-19 (Թորոնթօ 1988, լոյս տեսած Պէյրութ, մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարանէն):

***Անդրանիկ Տագէսեանի հաւաքածոյ* (ԱՏ1-14)**[21]
ԱՏ1ը կը պատկանի տարատեսակ 3ին, բայց վիզի բաժինը չունի անոր կորութիւնը, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, կնիք: Իրանը հարուստ է համատարած երկգօտի երկու տարբեր նախշերու կրկնութիւնով: Ունի նաեւ գծային նախշեր: Շատ նման է ՍՓ2ին:
ԱՏ2ը կը պատկանի տարատեսակ 3ին պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, նախշեր, այլ միքանի շուրջբոլոր գիծեր: Ունի անընթեռնելի երեք օսմաներէն կնիք: Յատակը կոր է, իրանը թեթեւ գոգաւորութիւն ունի:
ԱՏ3ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն, թուական, նախշ, ունի կնիք՝ «ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ»:
ԱՏ4ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ, չունի արձանագրութիւն: Վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի կնիք եւ թուական՝ «ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ 1930»:
ԱՏ5ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի կնիք՝ «بلاب» (ՊԱԼԱՊԱՆ):
ԱՏ7ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի կնիք՝ «ارصلانيان حلب» (ԱՐՍԼԱՆԵԱՆ ՀԱԼԷՊ):
ԱՏ8ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, նախշ: Ունի կնիք՝ «ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐՄԱՆԵԱՆ [եւ արաբերէն՝] حلب [ՀԱԼԷՊ]»:
ԱՏ9ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի կնիք՝ «ԳԷՈՐԳ ՊԻԼԵՄՃԵԱՆ»:
ԱՏ10ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի անընթեռնելի արաբատառ կնիք, որ շատ նման է ԱՏ12ի երկրորդ, արաբատառ կնիքին:

[21] Թեքնիք պատճառներով զանց ըրինք ԱՏ6ը:

ԱՏ11ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է դեղին պղինձէ: Չունի արձանագրութիւն, թուական, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի կնիք՝ «ՊԵՏՐՈՍ ԱՐԸՃԵԱՆ»:
ԱՏ12ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի երկու կնիք եւ թուական՝ «ՅՈՎ ՊՕՇԿԷԶԷՆԵԱՆ 1940حلب [ՀԱԼԷՊ]» Երկրորդ կնիքը արաբատառ է եւ անընթեռնելի, շատ նման ԱՏ10ի կնիքին:
ԱՏ13ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ: Չունի արձանագրութիւն, վզին մօտ ունի շուրջբոլոր կրկնուող նախշ: Ունի արաբատառ կնիք, որուն առաջին անունը հաւանաբար Պարգեւ է՝ «ارسلانيان» (ԱՐՍԼԱՆԵԱՆ):
ԱՏ14ը կը պատկանի տարատեսակ 1ին, պատրաստուած է կարմիր պղինձէ, չունի նախշ, կնիք, թուական: Ունի արձանագրութիւն՝ «Ծ.Խ.»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐ

Մեկնելով վերոյիշեալ նկարագրութիւններէն կարելի է հետեւցնել.-

1) Տարատեսակ 1ի նմուշներուն բացարձակ մեծամասնութիւնը արձանագրութիւն, թուական չունի, ունի կնիք, պատրաստուած է դեղին (երբեմն կարմիր) ճարտարարուեստականացած պղինձի թերթէ, ուշագրաւ նրբութիւն ունի թէ՛ ճարտար կատարումով եւ թէ՛ ձեւի առումով իր համաչափութեամբ:
2) Տարատեսակ 2ի նմուշներուն բացարձակ մեծամասնութիւնը արձանագրութիւն, թուական, կնիք չունի, պատրաստուած է կարմիր պղինձէ, նրբաճաշակութեամբ կը զիջի տարատեսակ 1ին, մեծմասամբ պատրաստուած չէ ճարտարարուեստականացած մետաղաթերթէ:
3) Տարատեսակ 3ի նմուշները չափերով ամենամեծն են: Ձեւի առումով իրարմէ կը զանազանուին իրենց մանրամասնութիւններով, հաւանաբար եւ կիրառութեամբ ու գործառոյթով, հարուստ են շուրջբոլոր նախշերով, որոշ տեսականի մը կը զատորոշուի թուականակիր եւ անուանակիր արձանագրութեամբ, բոլորն ալ անկնիք են, բոլորը պատրաստուած են կարմիր պղինձէ, նրբաճաշակութեամբ կը զիջին տարատեսակ 1ին, բայց կը գերազանցեն տարատեսակ 2ը, պատրաստուած են ճարտարարուեստականացած մետաղաթերթէ: Տարատեսակ 3ին մէջ կան նմուշներ, որոնք շատ հաւանաբար նոյն արհեստանոցի արտադրութիւն են:
4) Բոլոր արձանագրութիւնները կը վերաբերին իգական անձնանուններու, ինչ որ կը հաստատէ թէ ասոնք - մանաւանդ տարատեսակ 3ը - իգական գործածութեան համար եղած են եւ պատկանած նմուշներուն վրայ արձա-նագրուած անուանատէրերուն: Ենթադրելի է որ անոնց պատուիրա-տուները եղած ըլլան անուանատէրերուն ծնողքը կամ հարազատը, կամ նոյնինքն անուանատէրը: Թուականի գոյութիւնը

ենթադրել կու տայ որ անոնք ծնունդն են անուանատիրոջ կեանքին անկիւնադարձային դէպ-քի մը (ծնունդ, մկրտութիւն, տարեդարձ, օժիտ եւն.) կամ առիթի մը: Տա-րատեսակ 1ի քիչ նմուշներուն արձանագրութենէն եւս կարելի պէտք է ըլլայ հետեւցնել, թէ ասոնք նոյնպէս ունեցած են իգական սեռի կիրա-ռութիւն:

ԱՐՀԵՍՏԱԽՈՐ, ՎԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ, ԹԱՍԻ ՏԷՐ ՈՒ ՉԱՓԱԳՐՈՒԹԻՒՆ

***Տարատեսակ 1***

*Արձանագրութիւն-կնիքներ.*- Յ. Կ. ԱՍԼԱՆԵԱՆ, ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ, ՊԵՏՐՈՍ ԱՐԸՃԵԱՆ, ԱՐՍԼԱՆԵԱՆ ՀԱԼԷՊ (արաբատառ), ԳԷՈՐԳ ԱՐՍ-ԼԱՆԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ԱՐՍԼԱՆԵԱՆ (արաբատառ), ՄԵԼՔՈՆ ԳԱԶԱՆՃ-ԵԱՆ, ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐՄԱՆԵԱՆ, ՆՇԱՆ ԿԵ-ՑՈՅԵԱՆ, ՆԵՐՍԷՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ, Զ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՉԵՄՊԵՐՃ-ԵԱՆ (արաբատառ), ՊԱԼԱՊԱՆ (արաբատառ), ԳԷՈՐԳ ՊԻԼԵՄՃԵԱՆ, ՅՈՎ ՊՕՇԿԷՉԷՆԵԱՆ, ԵՈՒՍԷՖ ՏԻԱՐՊԵՔԻՐԼԻ (արաբատառ):

*Տէր.*- ԵՂԻՍԱԲԵԹ, Զ. ՄԿՐՏԻՉԵԱՆ, ՆԱԶԱՐԻԱՆ, ՇԱՔԷ ՀՕՏԼԵԱՆ, ՍԱՔԱ ՀԱՆԻՖԻ:

*Թուականներ.*- 1312 (=1894), 1885, 1897, 1930, 1940, 1957:

*Չափագրութիւն.*- Ասոնք կը կշռեն 166-875 կրամ, ունին 9-25,5սմ հա-սակ, մետաղը ունի 0,7-1,6 մլմ հաստութիւն:

*Վայրեր.*- Այնթապ, Հալէպ, Շամ (Դամասկոս), Տիարպեքիր:

Այս տուեալներէն կրնանք հետեւցնել, թէ տարատեսակ 1ը կենցաղա-վարուած է 1870-80ականներէն մինչեւ 1950ականներու վերջ, իգական սե-ռին կողմէ: Ան կենցաղավարուած է Արեւմտեան Հայաստանի (հաւանա-բար նաեւ Կիլիկիոյ) մէջ, ապա նաեւ՝ Հալէպի: Աւելի որոշակիօրէն ասոնց կը հանդիպինք Այնթապի, Դամասկոսի, Հալէպի եւ Տիարպեքիրի մէջ: Կողմնակի տուեալներէ կարելի է հետեւցնել նաեւ թէ ասոնք արտադրուած են Արեւմտեան Հայաստանի մէջ: Բազմաթիւ նմուշներ պահպանուած են Այնթապի եւ Հալէպի արհեստանոցներու արտադրութիւններէն:

***Տարատեսակ 2***

*Արձանագրութիւն-կնիքներ.*- ՄԺ, Մ?, ԻՕ, ՀՕ:

*Տէր.*- Ըստ բանաւոր վկայութեան՝ նմուշ մը պատկանած է իգական սե-ռին:

*Թուականներ.*- Ըստ Կիրակոսեանի՝ ԺԹ. դարավերջ, 1914, ըստ բանա-ւոր վկայութեան 1950ականներ:

*Չափագրութիւն.*- Ունինք միակ նմուշի մը չափագրութիւնը.- կշիռք՝ 825 կրամ, հասակ՝ 16 սմ:

*Վայրեր.*- Ըստ Կիրակոսեանի՝ Ալեքսանդրապոլ, ներկայիս Գիւմրի:

Դժբախտաբար տուեալները սակաւ են, որոնց հիմամբ ալ վերապա-հութեամբ կրնանք նշել, թէ ասոնք կենցաղավարուած են ԺԹ. դարավերջ-

1950ականներ շրջանին, Գիւմրիի մէջ: Քանի որ նման նմուշներու չհանդիպեցանք արեւմտահայ-սփիւռքահայ միջավայրի մէջ, միւս կողմէ՝ Հայաստանի Հանրապետութեան վերոյիշեալ թանգարաններուն մէջ բազմաթիւ են այս տարատեսակին նմուշները, կարելի է հաստատել, թէ ասոնք կենցաղավարուած են արեւելահայ իրականութեան մէջ:

Ի տարբերութիւն տարատեսակ 1ի նմուշներուն, այս տարատեսակի հազուադէպ օրինակներ ունին կնիք եւ արձանագրութիւն, եւ միակ մը՝ թուական: Պէտք է ընդգծել, սակայն որ այս տարատեսակին նմուշները չունին տարատեսակ 1ի չափագրական տարբերութիւնները:

***Տարատեսակ 3***

Նմուշները բազմազան են եւ բազմաչափ: Ոմանք ունին արձանագրութիւն եւ թուական: Կարելի է ենթադրել, որ այս տարատեսակէն տակաւ զարգացած է տարատեսակ 1ը որ սկսած է ունենալ յատուկ եւ մէկ գործառոյթ:

*Արձանագրութիւն/Տէր.*- *ՄԱՐԻԵԱՄ* ԳԱԶԱՆՃԻԵԱՆ, *ՀԱՅԿԱՆՈՒՇ* ԳԷԱԶԻԵԱՆ, ԳԸՐԵԱԳԶԻ ՈՐԴԻ *ՀՃԻ ԼՈՒՍԻԱՅ*, *ՀԱՃԻ ԵՒԱ* ԵՐԷՑ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, *ՋԱՐՄԱՆ* ՊԱՐՊԱՐԵԱՆ, Ի Վայելումն *Պօղոսին* է Թվ. ՌՃԼԸ, Սեժտէ, *ՈՎՍԱՆՆԱ* ՖԱՐԻՆԵԱՆ, «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԲԸՐԱԲԻՕՆ ՌՄԻ»:

*Թուականներ.*- ՌՃԼԸ (=1689), 1716, 1166 (=1752), ՌՄԻ/1205 (=1791), 1895, 1906, 1908, 1914:

*Չափագրութիւն.*- Ունինք միակ նմուշի մը չափագրութիւնը.- կշիռք՝ 1170 կրամ, հասակ՝ 18 սմ, 1 մլմ մետաղի հաստութիւն:

Այս տուեալներէն կրնանք հետեւցնել, թէ տարատեսակ 3ը կենցաղավարուած է 1689էն մինչեւ 1920ականներ, իգական սեռին կողմէ: Ան կենցաղավարուած է Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի (հաւանաբար նաեւ Կիլիկիոյ) մէջ: Նմուշներէն ոմանք նոյն արհեստանոցի արտադրութիւն են:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եզրափակելով[22], հայկական պղնձագործութեան բաղնիքի պղնձեայ կաւամաններու այս տիպի մեզի ծանօթ նմուշներուն հիմամբ կը պարզուին, թէ ասոնք պատկանած են հայուհիներու, ունեցած են կիրառական եւ աշխարհագրական լայն ծիր՝ Այնթապ, Ալեքսանդրապոլ (Գիւմրի), Դամասկոս, Թոքաթ (Եւդոկիա), Հալէպ, Սեբաստիա, Տիարպեքիր-Տիգրանակերտ: Թերեւս ասոնց սկիզբը կարելի է տանիլ ԺԷ. դարավերջ, եւ ընդգծել որ անցած են ձեւաւորման դարաւոր ճանապարհ:

[22] Հասկնալի է, որ այս եզրակացութիւնները ենթակայ են փոփոխութիւններու՝ նոր նիւթերու յայտնաբերման պարագային:



Տարատեսակ 1՝ ԱՏ12, ԱՏ10, ԱՏ5, ՀԹ1, ՇՄ1








Տարատեսակ 1՝ ԱՏ9, ՀԹ2, ՀԹ3, ՍՍ3







Տարատեսակ 3՝ ՍՓ1, ՄուՊ1, ՄՊ1, ԱՏ1, Անծ.1



Տարատեսակ 3՝ ԱՀԹ4, ԱՀԹ6, ԱՀԹ7




Տարատեսակ 2՝ ՍԱԹ1, ՍԱԹ2, ԶԹ1, ՀՊԹ2

## A SURVEY OF THE ARMENIAN COPPER BATH *TASS* USED FOR CLAY

(Summary)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

The study focuses on the diverse shapes of a set of bath *tass*es, in which clay used as soap was stored and carried to the public bath, where women used the clay to wash their hair.

Through extensive research in different museums, catalogues, and collections the author has been able to collect data on some 60 such *tass*es used for clay and accordingly develop his observations. The study discerns three groups of *tass*es used for clay and notes that one of the groups was mostly used in Eastern Armenia, while another group was mostly used in Western Armenia, Cilicia and among the Armenian communities of the Middle East up to the 1950s. The third group, however, which has several versions in shape, weight and function, was used by both the Western and Eastern Armenians for other purposes as well.

The article provides a table that reveals the height, diameter, weight, and thickness of some of the *tass*es described here.

# ՎԵՐՅԻՇԵԼՈՎ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԷՍԵՐ, ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐ

ԳԱԼԻԱ ԴԱՒԻԴՈՎԱ
galya.davidova.60@gmail.com

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Ներկայումս զգալիօրէն կրճատուել է հարսանեկան արարողութիւնների շրջանակը: Դրանցից միքանիսն այլեւս չեն կենցաղավարւում եւ երիտասարդ սերնդին գրեթէ անծանօթ են: Պահպանուել են նշանդրեքն ու բուն հարսանիքը: Որոշ արարողութիւններ էլ կա՛մ կրճատուել են, կա՛մ գրեթէ իմաստազրկուել, երբեմն էլ՝ վերաիմաստաւորուել: Այսօր հարսանեկան ծիսաշարքում մոռացուել է ազգայինը: Շատ յաճախ ներմուծուած, օտար ծէսերն աւելի ընդունելի եւ սիրուած են, ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հայոց հարսանեկան ծիսաշարքից դուրս մղուած կամ մասամբ պահպանուած հետաքրքիր եւ ուշագրաւ ծէսեր: Միայն աւագ սերնդի յիշողութիւններն են թոյլ տալիս վերադառնալ մեր ակունքներին, մասամբ՝ վերյիշել աւանդականը: Անհրաժեշտ է նոր մօտեցում, ապրել նորովի՝ չմոռանալով, թէ ո՛վ ենք, որտեղի՛ց ենք գալիս եւ որտե՛ղ են մեր ակունքները:

Յօդուածի նպատակն է ներկայացնել հայոց հարսանեկան որոշ ծէսեր, որոնք ժամանակակից սերնդին անծանօթ են: Մասնակի անդրադարձ ենք կատարել եւ համեմատական զուգահեռներ անցկացրել Հայաստանում ապրող ասորիների, եզդիների, ինչպէս նաեւ աշխարհի այլ էթնոսների հարսանեկան ծէսերի հետ:

ՀԱՐՍԱՆԻՔԸ՝ ՈՐՊԷՍ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ԿԵՆՍԱՓՈՒԼ

Հարսանիքը ժողովրդական մշակոյթի իւրօրինակ հանրագիտարան է, ազգային մշակոյթի խորհրդանիշ: Այն դիտուել է իբրեւ ազգապահպան առաքելութեան բաղկացուցիչ մաս: Հայոց մէջ կենցաղավարուել են ինչպէս առեւանգմամբ, այնպէս էլ գնմամբ կամ պատգամախօսութեամբ ամուսնութեան ձեւերը: Այդ մասին բազմաթիւ գրաւոր տեղեկութիւններ են պահպանուել միջնադարեան աղբիւրներում, վկայագրերում, մանրանկարներում. Մխիթար Գօշի *Դատաստանագիրք*ում[1] եւ «Հարսանիքը Կանայում»[2] մանրանկարի նկարազարդումներում: Հայոց հարսանիքի վերաբերեալ ո-

[1] Մխիթար Գօշ, *Դատաստանագիրք*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 95:

[2] Հ. Յակոբեան, *Վասպուրականի մանրանկարչութիւնը*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1982, (ձեռ. N8782, նկարիչ՝ Ծերուն, 1391, էջ 33, ձեռ. 7566, նկարիչ՝ Մկրտիչ, 1460):

րոշ նկարագրութիւններ են պահպանուել պատմիչների, մասնաւորապէս՝ Մովսէս Խորենացու մօտ. «*Տեղ ոսկի փեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, փեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկանն*»[3]:

Հարսանեկան են այն բոլոր ծիսական արարողութիւնները, որոնցով ապահովւում է տղամարդու եւ կնոջ սեռական կապի յարատեւ կայունութիւնն ու ամրութիւնը, նոր սերունդ ստեղծելու նպատակը: Հարսանեկան ծէսերը, ինչպէս աշխարհի ժողովուրդների, այնպէս էլ հայ ազգի վերարտադրութեան հիմքն են հանդիսանում: ԺԹ. դարին բնորոշ հարսանեկան ծէսերը հայոց մէջ ընկալւում են որպէս աւանդական: Հայոց հարսանիքին անդրադարձել են ազգագրագէտներ Երուանդ Լալայեանը, Ստեփան Լիսիցեանը եւ այլ ուսումնասիրողներ[4]:

## ՆԱԽԱՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԷՍԵՐ

Նախահարսանեկան ծէսերի հիմնական նպատակն ու իմաստն եղել է երկու կողմերի միջեւ համաձայնութիւնը, որն ուղեկցուել է նուէրների փոխանակմամբ: Յատկապէս կարեւորուել է փեսայի կողմից բերուած նուէրը, որն ընկալուել է իբրեւ ապագայ ամուսնութեան «նշան», հարսնացուին «իրենցը դարձնելու» իւրօրինակ կնիք: Եթէ մեր օրերում նշանի դերում հանդէս է գալիս ոսկէ մատանին, ապա աւանդական հարսանիքում որպէս այդպիսին կարող էր հանդէս գալ իւրաքանչիւր թանկարժէք իր՝ գլխաշոր, մետաղադրամ, ոսկէ կախազարդ, գործուած եւ կամ արծաթէ ընծայագիր գօտի, «փնջած խնձոր»: Աւանդական հարսանիքի նշանային ցուցիչ է եղել նաեւ հարսի արծաթեայ գօտին, որը գնում էր նրա հայրը նշանդրէքին հիւրերի կողմից նուիրաբերուած դրամով[5]: Գօտիները համարուել են չարը խափանող հուռութք՝ թալիսման: Դրանք զարդաբանուել են կեանքի գոյներով՝ սպիտակ, կանաչ մետաքսաթէլերով՝ կենաց ծառի մոտիւներով: Թէ՛ ազնուազարմ տիկնայք, թէ՛ գեղջուկ կանայք կրել են արծաթէ նուրբ ճարմանդներով գօտիներ[6], որոնք թալիսմանի, հմայակ-

---

[3] Մ. Խորենացի, *Հայոց պատմութիւն*, գ. 1, ՍՍՌՄ ԳԱ հայկական մասնաճիւղ, Երեւան, 1940, էջ 17-20:

[4] Ե. Լալայեան, «Գանձակի գաւառ», *Ազգագրական հանդէս*, 6:1900. նաեւ նոյնի՝ «Վայոց ձոր», *Ազգագրական հանդէս,* 13:1906. նաեւ նոյնի՝ «Վասպուրական», *Ազգագրական հանդէս,* 26:1916. նաեւ նոյնի՝ «Մուշ-Տարօն», *Ազգագրական հանդէս,* 26:1916. նաեւ՝ Ս. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969. նաեւ նոյնի՝ «Լեռնային Ղարաբաղի հայերը», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1981:

[5] Ս. Պօղոսեան, «Հայկական զարդահամալիրների առանձնայատկութիւնը. աւանդոյթներ եւ նորոյթներ», *Աւանդականը ու արդիականը հայոց մշակոյթում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2010, էջ 428-43:

[6] Գ. Կարախանեան, «Հայոց ժողովրդական մշակոյթը», *Հանրագիտարան, հտր. Ա.*, «Գիտութիւն», Երեւան, 2003, էջ 129:

պահպանակի գործառոյթ են ունեցել: «Փնջած խնձոր»[7] ներկայացուած է Հայոց ազգագրութեան թանգարանի (ՀԱԹ) ցուցադրութիւնում: Հարսանեաց խորհրդանիշերի շարքում կարեւոր դեր են խաղացել խնձորը եւ խնձորի գոյնը: Ծիսարարողակարգերում յատուկ տեղ են գրաւում «փնջած խնձորը», փեսացուի ծառի խնձորը, ինչպէս նաեւ «կարմիր խնձոր» ծէսը: Խնձորը կարեւոր դերակատարում ունի տարբեր ժողովուրդների դիցաբանութեան եւ մշակոյթի մէջ: Շատ ժողովուրդների համար այն սիրոյ, երջանկութեան, արգասաբերութեան, վերածննդի, առողջ սերնդի խորհրդանիշ է, իսկ ոմանց համար՝ տարակարծութեան (յունական դիցաբանութիւն) եւ արգելուած պտղի: Այստեղից է ծագում «Արգելուած պտուղը միշտ քաղցր է լինում» աստուածաշնչեան արտայայտութիւնը: Երկու դէպքում էլ խնձորն ընկալւում է որպէս «դրախտային, սրբազան» միրգ: Յունական առասպելներում Դիոնիսիոսը ի նշան սիրոյ՝ խնձոր է նուիրել Աֆրոդիտէին, իսկ երկինք Գեան (յունականական մայր հողի՝ երկրի չաստուածուհին) որպէս պտղաբերութեան խորհրդանիշ՝ Հերային, նրա եւ Զեւսի ամուսնութեան կապակցութեամբ[8]: Հայոց մէջ խնձորը ամրագրուել է որպէս սիրոյ, ամուսնութեան խորհրդանիշ, նոյնիսկ սիրոյ խոստովանութեան նամակի դեր է կատարել: Ինչպէս աշխարհի շատ ժողովուրդների մշակոյթներում, այնպէս էլ հայոց մէջ տղան հաւանած աղջկայ ոտքերի տակ կամ ջրում խնձոր է գլորել: Ըստ սովորութեան, եթէ աղջիկը վերցրել է խնձորը՝ տուել է իր լուռ համաձայնութիւնը: Այս գեղեցիկ սովորոյթն իր արտայայտութիւնն է գտել նոյնիսկ ժողովրդական բանահիւսութեան մէջ.

Խնձոր մ'ունիմ խաճած է
Խաճած տեղն արծթած է,
Էղբէրս ուզեց չտուի՝
Էս իմ եարիս տուածն է: (Գամիրք, Բինգեան)[9]

Թէ՛ յունական առասպելներում, թէ՛ հայոց մէջ ամուսնացող զոյգերը մինչ առագաստ մտնելը կերել են կիսուած խնձորի երկու կէսերը, որը սեռական մերձեցման համաձայնութեան միտում ունէր: Խնձորը հարսնացուի բարոյականութեան մաքրութեան խորհրդանիշն է: Ինչպէս աշխարհի շատ ժողովուրդների (հարաւային սլաւոններ), այնպէս էլ հայոց (Գամիրք, Աղձնիք) մէջ խնձորը նոյնիսկ հարսանիքի հրաւէրքի դեր է կատարել:

Նախահարսանեկան ծէսերը եղել են շատ բազմազան: Հայաստանի իւրաքանչիւր պատմաազգագրական շրջան ունեցել է նախահարսանե-

[7] Նշանադրութեան ժամանակ աղջկան ձեռքն էին տալիս կարմիր խնձոր, որի վրայ հրաւիրեալերը ոսկեայ եւ արծաթեայ դրամներ էին խրում որպէս ընծայ:

[8] Ն. Կուն, *Հին Յունաստանի լեգենդներն ու առասպելները*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1979: Երկիր Գեան իր ընդերքից աճեցրեց մի հրաշք խնձորենի՝ ոսկէ պտուղներով ու նուիրեց Հերային:

[9] Գ. Թեմուրճեան, «Գամիրքի հայերը», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 115:

կան ծէսերի իրեն բնորոշ տարբերակները: Հայոց մէջ արբունքի հասած աղջկայ համար յատուկ նուիրագործման ծէսեր չեն կատարել, պարզապէս շրջազգեստի փէշը երկարացուել է՝ հասնելով մինչեւ կռունկը եւ աւելացուել են զգեստի որոշ մանրամասներ: Ախալքալաքում տարազային համալիրին աւելացել է գոգնոցը, որի խորհրդանշական բնոյթը լաւագոյնս արտայայտուել է «գոգնոցը խելք կը բերէ» արտայայտութեամբ[10], իսկ Շիրակում աղջկայ գլխին կապել են կարմիր գլխաշոր[11]: Որոշ շրջաններում էլ ձախ ձեռքի մատնեմատին կարմիր թել են կապել[12], որը խորհրդանշել է աղջկայ սեռատարիքային նոր խմբի մէջ մտնելու փաստը:

Աղջիկ ընտրելիս տղայի ծնողները յատուկ հետաքրքրուել են աղջկանով, հարց ու փորձ արել հարազատներից՝ տեղեկանալու համար, թէ նա ի՛նչ բնաւորութիւն ունի եւ ինչպիսի՛ տանտիկին կարող է լինել: Թեման եղել է ապագայ հարսնացուի առողջական վիճակը, ծնողների վարքն ու բարքը, դիրքը հասարակութեան մէջ: Առանձնայատուկ ուշադրութիւն են դարձրել հարսնացուի մօր վարքին. Բորչալուում ասել են՝ «Մօրը նայիր՝ աղջիկը առ, եզրին նայիր՝ կտաւը առ»,[13] Վայոց ձորում՝ «Ծէրիկը տես՝ գօտիկը առ, մէրիկը տես՝ աղջիկն առ», իսկ Նախիջեւանում աղջիկ ուզելիս ասում էին. «Եթէ մայրը ծառը բարձրանայ՝ աղջիկը ճիւղերի վրայ ման կը գայ»[14]: Այս դէպքում եւս, ամենայն հաւանականութեամբ, նկատի են ունեցել աղջկայ մօր պահուածքը, բնաւորութիւնը եւ հասարակութեան վերաբերմունքը նրա նկատմամբ:

Հայաստանի պատմաազգագրական շրջաններում եղել են նշանադրութեան միքանի ձեւեր՝ օրօրոցի, շալակի, բարգեահի[15], Ծաղկազարդի նշա-

---

[10] Ե. Լալայեան, «Տղաբերքի սովորոյթների զարգացումը հայոց մէջ», *Տեղեկագիր*, ՀՍՍՀ գիտութեան եւ արուեստի ինստիտուտի հրատ., Երեւան, 1931. նաեւ՝ Կարախանեան, էջ 125:

[11] Գ. Դաւիդովա, Դաշտային ազգագրական նիւթ, այսու՝ ԴԱՆ, Շիրակ, 1990-92:

[12] Ե. Լալայեան, «Ջաւախք», *Ազգագրական հանդէս*, Ա:1896, Շուշի, էջ 29:

[13] Ե. Լալայեան, «Բորչալուի գաւառ», *Ազգագրական հանդէս,* 9:1902, Թիֆլիս, էջ 214. նաեւ նոյնի՝ «Վայոց ձոր», *Ազգագրական հանդէս,* 13:1906, Թիֆլիս, էջ 143:

[14] Ե. Լալայեան, «Նախիջեւանի գաւառ, Օրդուբադի կամ վերին Ագուլիսի ոստիկանական շրջան եւ կամ Գողթն», *Ազգագրական հանդէս,* 12:1905, էջ 134:

[15] Բարգահի (Գամիրք, Նախիջեւան, Սիսիան) ժամանակ տղան չէր մասնակցում նշանադրութեանը: Խնամախօսները խնձորի մէջ խրած մի մատանի էին տանում աղջկայ տուն՝ խնձորի վրայ գրելով հարսի անունը:
Շալակի նշանադրութեան դէպքում սիրահարուած տղան աղջկան իր զգացմունքների մասին յայտնելու համար ամէն օր գաղտնի մի զամբիւղ (քթոց) միրգ է ուղարկել աղջկայ տուն: Միքանի անգամ այս գործողութիւնը կրկնելուց յետոյ մէկի միջոցով յայտնել է «շալակ»ի իմաստը՝ որ նա սիրում է այդ տան աղջկան: Տանտէրերը համաձայնելիս՝ «շալակ»ի զամբիւղում դնում էին միքանի գաթա, թարմ կամ չորացրած մրգեր, միքանի զոյգ գուլպայ: Այս լուռ ծիսակատարութիւնից յետոյ աղջիկը համարւում էր նշանուած:

նադրութիւն եւ նոյնիսկ՝ օճախի պսակ: Միմեանց համակրող գերդաստանները բարեկամանալու նպատակով իրենց մանկահասակ երեխաներին նշանել են (Վարանդա) օրօրոցի մէջ: Գողթն գաւառում տղայի հայրը, ցանկանալով բարեկամանալ աղջկայ գերդաստանի հետ, խազ է քաշել աղջկայ օրօրոցի լծին, կամ կարմիր–կանաչ թէլ կապել[16]: Այս ծէսը կոչուել է օրօրոցի նշանադրութիւն, որը ԺԹ. դարասկզբին համընդհանուր բնոյթ է կրել: Ամուսնութեան այս ձեւով յաճախ հարթուել են գերդաստանների միջեւ եղած տարակարծութիւնները: Գանձակում ասել են «*եթէ աղջկան գդակով խփէք, նա վայր չընկնի, արդէն ժամանակն է պսակուելու, որովհետեւ ուժեղ է եւ կարող է աշխատել*»[17]: Այս արտայայտութիւնը լաւագոյնս բացայայտում է ժողովրդի վերաբերմունքը հարսնացուի նկատմամբ: Նա լրացուցիչ աշխատուժ էր եւ ընտրելիս հաշուի էին առնում աղջկայ ֆիզիկական հնարաւորութիւնները:

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԱՌԸ՝ ՈՐՊԷՍ ՊՏՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Հարսանեկան ծէսերի համակարգում իւրայատուկ տեղ է յատկացուել «փեսայի ծառին»: Այն խորհրդանշել է զոյգի պտղաբերութիւնն ու կեանքի յարատեւութիւնը: Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններում էլ տարածուած է եղել «կենաց ծառ», «փեսու ծառ» կամ «հարսանեաց ծառ» ստեղծելու, զարդարելու սովորոյթը: Զարդարուած ծառը տարբեր պատմաազգագրական շրջաններում տարբեր անուանումներ է ունեցել. Բաղէշում, Բուլանըխում՝ «նուռձ», Սասունում՝ «ուռք», Շատախում՝ «ուրց», Ալաշկերտում՝ «թագուորի բաղ», Արթիկում՝ «փեսի ծառ», Հայոց ձորում՝ «փեսի թառ», «փեսի փէտ», Իջեւանում՝ «փոփխ»:

Պսակադրութեան օրը՝ առաւօտեան, մակարները (փեսացուի ընկերները) հաւաքուել են փեսացուի տանը: Եօթ մակարներից մէկը յատուկ սափորի մէջ մի ծառի ճիւղ է բերել ու դրել մէջտեղում, այնուհետեւ երգելով ու պարելով քաղցրեղէնով զարդարել են «ծառը»: Այս արարողութիւնը կոչուել է «ծառ փնջել»:

Փեսայի ծառի մէկ այլ տարբերակում փայտէ խաչի շուրջը հասկեր են հիւսել եւ չոր պտուղներ կախել, իսկ ձողերի ծայրին՝ կարմիր խնձոր, կանաչ ու կարմիր ներկած ձուեր ամրացրել, որը խորհրդանշում է նորաստեղծ ընտանիքը՝ նրա բերրիութիւնը: Բուլղարների մօտ փեսայի «ծառը» նոյնպէս զարդարել են պտղատու կամ մշտադալար ծառերից կտրուած ճիւղերի վրայ, որոնք նորաստեղծ ընտանիքի աճման խորհրդանիշերն են

[16] Լալայեան, «Նախիջեւանի գաւառ», էջ 119:

[17] Ե. Լալայեան, «Գանձակ», *Երկեր, հտր. 2*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 339:

եղել: Ծառը որքան առատ ու գեղեցիկ էր զարդարուած, այնքան հասարակութեան մէջ գնահատուած էր ու արժէքաւոր[18]:

Մուշում «փեսի ծառը» խաչածեւ էր, որի երկու թեւերին մեծ խնձորներ են ամրացուել: Ծառը զարդարել են նաեւ գունաւոր ժապաւէնով, նռով, քաղցրաւենիքով: Ամբողջ հարսանեկան երթի ժամանակ այն ուղեկցել է ամուսնացող զոյգին եւ դրուել նրանց կողքին: Աղձնիքում փեսածառը փշատի ծառի մի հաստ ճիւղ է եղել, որի փշերի վրայ ամրացրել են չոր մրգերի շարան, նուռ, խնձոր, ընկոյզ եւ գագաթին՝ սպիտակ փետուրներով մորթած աքլոր, որը ունեցել է փեսացուին առնականութիւն հաղորդելու ակնկալիք:

«Ուռք»-«նուռն»-«կենաց ծառ»ը հարսանիքի արարողութիւններում եղել է փառքի ու պտղաբերութեան խորհրդանիշ[19]: Մակարները փեսայի տան բակում պսակածառի պտուղները «կողոպտել» եւ նետել են հարսի շքախմբի գլխին՝ պտղաբերման նպատակով: Հարսի գլխին անձրեւի պէս տեղացել են արծաթեայ եւ պղնձեայ դրամներ, չիր ու չամիչ, նուշ ու ընկոյզ, որը համահայկական երեւոյթ էր[20]: Սասնայ Խուլթիկ գիւղում հարսին հագցնելուց յետոյ կանայք նրա ծամերի հետ չամիչի ու ընկոյզի շարք են հիւսել[21], իսկ Բուլղարիայում հարսնացուի ընկերուհիները ծաղիկներ են հիւսել վարսերի հետ[22]**:** Ծէսի նպատակն է եղել ապահովել հարս ու փեսայի քաղցր, երկար եւ բեղմնաւոր կեանքը: Խնձորի ծէսի ուշագրաւ նկարագրութիւն կայ *Սասնայ ծռեր* դիւցազնավէպում.[23]

*… Դաւիթ հասաւ վեր դռան,*
*Քշեց, գնաց առջեւ Խանդութի պաւրուհան:*
*Խանդութ խանում՝ որ աչք ընկաւ,*
*ՋԴաւիթ փեսաւ՝ ուրախացաւ.*

---

[18] Р. Иванова, Л. В. Маркова, “Болгары,” *Брак у народов Центральной и Юго-Восточной Европы*, («Պուլղարներ», Ամուսնութիւնը Կենտրոնական եւ Արեւելեան Եւրոպայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1988, էջ 135-60:

[19] Վ. Պետոյեան, *Սասնայ ազգագրութիւնը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ. Երեւան, 1965, էջ 259:

[20] Հարսին ոսկեայ եւ արծաթեայ դրամներ տալու հետաքրքիր ծէս ունեն հունգարները. նշանդրէքի դրամները փեսան փաթեթաւորել է գունաւոր թղթերի մէջ եւ հարսի հետ ձեռքսեղմման ծէսի ժամանակ փոխանցել նրան (Н. Е. Руденский, “Венгры,” *Брак у народов Западной и Южной Европы* («Հունգարներ», Ամուսնութիւնը Արեւմտեան եւ Հարաւային Եւրոպայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1989 էջ 66-87):

[21] Ռ. Նահապետեան, *Աղձնիքահայերի ընտանիքը եւ ընտանեկան ծիսակարգը*, ՀՀ ԳԳԱ հրատ., Երեւան, 2004, 258 էջ:

[22] Иванова-Маркова, էջ 147:

[23] *Սասունցի Դաւիթ, հայկական ժողովրդական էպոս*, «Արեւիկ» հրատ., Երեւան, 1989, էջ 357:

*Ուրախութիւնէ խնձոր մէզար Դաւթին:*

Հայաստանի ասորիները տանիքից հարսի գլխին հարսանեկան ծառից՝ «ջեբլեանա կամ գեանթա դ մալքիա (թագաւորի այգի)»[24] նետել են խնձոր, նուռ, չիր, իսկ եզդիները «Դարա մրազա (երջանկութեան ծառ)»ից[25] երեք խնձոր են նետում դէպի հարսը՝ նրան իւրային դարձնելու միտմամբ (ԴԱՆ, 2016): Ուշագրաւ ու խորհրդանշական է, որ նորապսակների սենեակում մրգերով զարդարուած ծիսական ծառի պտուղներից են դրել, որպէսզի միասին ճաշակեն: Զարդարուած ծառի ոգին եղել է սրբազան եւ սերունդ է պարգեւել կանանց[26]: Հայոց մէջ նորապսակներին բարեմաղթանք անելիս ասում են. «Ծլի՛ս ու ծաղկի՛ս. քու տիրոջ հետ մի բարձի ծերանաք», ասորիները՝ «Ըլ խա սպադիյա սեւի» (մի բարձի ծերանան), իսկ եզդիները հարսի ընտանիքի կողմից հարսնառի ժամանակ փեսային նուիրում են ասեղնագործ բարձ, որը խորհրդանշում է նրանց անբաժան, երջանիկ կեանքը[27]: Հարսանիքի ժամանակ՝ միչեւ տուն մտնելը, մակարներից մէկը այդ բարձով երեք անգամ խփում է փեսացուի գլխին:

ՆՈՒԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԾԷՍԵՐ

Հարսանիքի ընթացքում հարսն ու փեսան անցել են փորձութիւնների միջով: Հարսանեկան ողջ ծիսակարգի ընթացքում նորապսակների նուիրագործման ծէսերն անընդհատ փոփոխութեան են ենթարկւում: Անցումային ծէսերի ժամանակ փորձութիւնների միջոցով ստուգել են նորապսակների ուշիմութիւնը, խելացիութիւնը, զգօնութիւնը, մի կարգավիճակից միւսին անցնելու պատրաստուածութեան աստիճանը:

Գամիրքում հարսի զգօնութիւնը փորձելու համար շէմի առաջ խաչերկաթ են դրել, հարսը ոտքը քսքստացնելով առաջ է շարժուել եւ զգացել ծանր երկաթի ներկայութիւնը, վերցրել է եւ յենել պատին: Այսպիսով փորձել են հարսի զգօնութիւնը, եթէ նա երկաթը յենել է պատին՝ ուրեմն խելացի է:

Գանձակում պսակադրութեան ժամանակ ստուգել են փեսայի խելացութիւնը. երբ քահանան միացրել է թագաւորի ու թագուհու ձեռքերը, փեսան պէտք է գտնէր հարսի ձեռքում պահուած մոմի փոքրիկ կտորը, որը

---

[24] Г. Кагаров, *Свадебные обычаи ассирийцев,* Советская этнография (Ասորիների ամուսնական սովորոյթները, սովետական ազգագրութիւն), Մոսկուա, 1933, N 1, էջ 163:

[25] Ամինէ Աւդալ, *Եզդի քրդերի հաւատալիքները*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2006, էջ 57:

[26] Ջ. Ֆրեզէր, *Ոսկէ ճիւղը, մոգութեան եւ կրօնի ուսումնասիրութիւն*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1989, էջ 146-47:

[27] Ամինէ Աւդալ, *Անդրկովկասեան քրդերի կենցաղը*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1957, էջ 53: «Ռաւանդնա բալգիէ բուկէ» - հարսի բարձը փախցնել:

հարսնացուին տուել են ընկերուհիները: Եթէ նա գտել է մոմը եւ ցոյց տուել մակարներին՝ նրանք գովաբանել են իրենց ընկերոջ խելքը, եթէ ոչ՝ ծաղրել: Ծաղրանքի ենթարկուած փեսան փող է վճարել հարսնացուի ընկերուհիներին, որ թաքցնեն չգտած մոմի պատմութիւնը[28]: Արցախի Փիփ, Բանանց գիւղերում նորահարսի հայրական տան բակում մի ձողի ծայրին ցցել են խնձոր, իսկ ներքեւից՝ կապել նորահարսի ձեռքով գործած գուլպայ: Մակարները հրացանով խփել են խնձորին եւ թռցրել ձողի ծայրից: Յաղթող դիպուկահարն արժանացել է գովասանքի եւ ստացել գուլպան[29]: Այստեղ փորձութեան է ենթարկւում տղաների նուիրագործման ծէսի եւս մէկ մասնակից՝ մակարը: Հարսանիքից յետոյ շարունակուել են հարսի փորձութիւնները: Աւել անելիս եթէ նա աղբը աւլէր դէպի դուրս՝ տան գաղտնիքը դուրս հանող էր, իսկ դէպի անկիւն՝ ընտանիքի գաղտնիքը պահող, խելացի հարս, որի համար նա նուէր կը ստանար[30]: Հայոց հարսանիքի ժամանակ հարսը չի նստել եւ սպասել է սկեսրոջ ընծային, որը կոչուել է «նստելա»: Այս ընթացքում հարսը եւս փորձութեան է ենթարկուել՝ նրա տակ դրել են թաշկինակ կամ որեւէ իր: Եթէ նստելուց առաջ նա դա վերցրել է՝ արժանացել է գովասանքի, եթէ ոչ՝ ծիծաղի ու ծաղրանքի: Այստեղ մեծ դեր է ունեցել մօր դաստիարակութիւնը, քանի որ հարսնացուն տարիքով փոքր է եղել եւ նրա բոլոր սխալները վերագրուել են մօրը:

## ՇԷՄԻ ԵՒ ՀԱՐՍԻՆ ԴԻՄԱԽՈՐԵԼՈՒ ԾԷՍԵՐ

Հարսանեկան ծիսակարգի ողջ ընթացքում ամուսնացող զոյգը խոցելի է՝ վտանգուած չար ուժերի կողմից: Հարսանեկան ծիսաշարում մեծ կարեւորութիւն են ունեցել շէմի հետ կապուած արարողութիւնները, որոնք ապահովել են հարսի բարեյաջող մուտքը նոր ընտանիք: Սա կապուած է այն պատկերացման հետ, որ չար ուժերը բնակւում էին տան շէմի վրայ: Նորապսակների մուտքը շէմից առաջին անգամ նշանաւորուել է ափսէ կոտրելով՝ չարը խափանելով: Վասպուրականում փեսան ոտքի մէկ հարուածով կոտրել է ափսէն, ներկաների «կոտրի քեասէն, ապրի փեսէն»[31] կանչի տակ: Այսպէս ի ցոյց է դրուել փեսայի իշխանութիւնը հարսի նկատմամբ: Աղձնիքում էլ հարսն է չոր մրգերով լի սափորը գետնին խփելով կոտրել հենց շէմի վրայ՝ իբրեւ զոհաբերութիւն, որը հաւանաբար հասցէ-

---

[28] Լալայեան, «Գանձակ», էջ 351:

[29] Նոյն, էջ 352:

[30] Նմանատիպ ծէս ունեն աւստրիացիները. եթէ հարսը աղբի կոյտի վրայով անցնէր՝ ապա կը համարուէր «վատ տնտեսուհի եւ անկարգապահ կին» (Т. Д. Филимонова, “Австрийцы,” *Брак ы народов Западной и Южной Европы* («Աւստրիացիներ», Ամուսնութիւնը Արեւմտեան եւ Հարաւային Եւրոպայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1989, էջ 56:

[31] Ե. Լալայեան, «Վասպուրական», *Ազգագրական հանդէս*, 20:1910, Թիֆլիս, էջ 156. նաեւ՝ Թեմուրճեան, «Գամիրք», էջ 119:

ագրուած է եղել տնարարութեան աստուածուհի Նանէին[32]: Ակնում, Արաբկիրում հարսի մուտքի ժամանակ կնքամայրն ու սկեսուրը կամ սկեսրայրն ու սկեսուրը տան շէմին ձեռքերով կամար են կապել, որ հարսն ու փեսան անցնեն՝ ի նշան հնազանդութեան: Սկեսուրը հարսին շէմի վրայ համբուրել է, ասելով. «Հարսս ոտքդ երջանկաբեր, գլուխդ բախտաւոր լինի»: Այստեղ «գլուխ» բառը նշանակում է տղամարդ, տան գլխաւոր: Իսկ Աղձնիքում տարածուած է եղել նաեւ հարսի կողմից նուռը դռան գլխին խփելով ջարդելու սովորոյթը. նռան հատիկները խորհրդանշել են բազմազաւակութիւն[33]:

Հարք գաւառում պսակադրութեան գնալիս, մինչեւ եկեղեցի հասնելը, փեսան քթի տակ խնձոր էր պահում, որը պէտք է ապահովէր զոյգերի արգասաւորութիւնը[34]: Հայաստանի ոչ-բոլոր պատմազգագրական շրջաններում է ընդունուած եղել հարսի ուսերին սկեսուրի ձեռքով լաւաշ գցելու սովորոյթը, որից յետոյ հարսն այն գցել է տան վերին անկիւններից մէկը, որպէսզի ոտքը բարեբեր լինէր, տունը՝ հացով միշտ լի: Ուշադրութեան արժանի հարսանեկան մի գեղեցիկ սովորոյթի համաձայն, երբ հարսն ու փեսան անցել են գերդաստանի շէմը, նրանց ետեւից ներս է մտել տան տիկինը՝ բերքառատութեան մաղթանքներով եւ նրանց ուսերից վերցրել նախօրօք գցած լաւաշները, իր ձեռքով մանրացրել է փոքր մասերի եւ դուրս եկել բակ, շրջուել մէջքով դէպի շէմը եւ հացի կտորտանքը նետել կտուրը, ասելով. «Էս էլ թռչունների բաժինը»: Թռչուններին բաժին հանելու ծէսը դիտւում է որպէս զոհաբերութիւն եւ աստուածահաճոյ արարք, որպէսզի Աստուած քաղցր աչքով նայէր նորապսակներին[35] (ԴԱՆ 1990-92): Աղձնիքում սկեսուրը հարսին դիմաւորել է ալիւրով ու չամիչով: Հարսը մատը թաթախել է ալիւրի մէջ, խաչեր է արել դռան կողերին: Ազգագրագէտ Բդոյեանի կարծիքով այս ծէսը կապուած է եղել մարդուն հաց պարգեւող

---

[32] Նահապետեան, էջ 150:

[33] Խորվաթիայում երիտասարդ կինը մտնելով նոր տուն, տուեալ օճախին խնձոր է «նուիրել»: Սերպիայում եկեղեցում պսակադրութեան ժամանակ հարսնացուն իր հետ վերցրել է խնձոր, որպէսզի երեխաները ծնուէին առողջ ու գեղեցիկ, իսկ Սլովաքիայում հարսը շուռ է տուել խնձորով լի զամբիւղը (М. С. Кашуба, “Народы Югославии,” *Брак у народов Центральной и Юго-Восточной Европы* («Հարաւսլաւիայի ժողովուրդները», Ամուսնութիւնը կենտրոնական եւ հարաւ-արեւելեան ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1988, էջ 82-135): Իսկ Հնդկաստանում հինդու հարսնացուն «Արատոր» ծէսի ժամանակ աջ ոտքով շուռ է տալիս բրնձով եւ մետաղադրամներով կճուճը, որը խորհրդանշում է հարստութիւն (hy. Wikipedia.org/wiki/Հնդկաստանի մշակոյթը , մատչում՝ 25.02.2022):

[34] Բենսէ, «Բուլանըխ կամ Հարք գաւառ», *Ազգագրական հանդէս*, Ե:1889, Թիֆլիս, էջ 113:

[35] Հայոց մէջ ընդունուած է եղել առաջին բերքի ալիւրից թխած առաջին հացը զոհաբերել՝ բաժանել թռչուններին:

Ամանոր եւ Վանատուր աստուածութիւնների հետ[36]: Չամիչը քաղցրացրել է հարսի մուտքը, ալիւրը՝ խորհրդանշել հացնառատութիւն: Տանեցիներից մէկը՝ իւղի ամանը ձեռքին, դիմաւորել է նորապսակներին դռան շէմին: Նորահարսը միքանի կոպեկ է գցել իւղի մէջ, մատը իւղոտել ու քսել դռան գլխին եւ սկեսրոջ մազերին: Սկեսուրը նրան օրհնել է՝ ասելով. «Ձեռնդ ընի եղի մաջին, քըմատաղ»[37]: Այս ծէսում դրամը դիտւում է որպէս հարստութեան, լիութեան, իսկ սկեսուրի գլխին իւղ քսելը՝ առատութեան խորհրդանիշ, քանի որ նա էր ճաշ պատրաստողը: Նմանատիպ հարսանեկան ծէսեր ունեն ինչպէս հայերը, այնպէս էլ աշխարհի շատ ժողովուրդներ. հնդիկների մոտ հարսը շէմի մօտ մատը իւղոտել ու քսել է դռան շէմին:

## ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻՆ ՉԱՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԾԷՍԵՐ. ՉԱՐԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ ՊԱՐՈՎ

Մի ամբողջ խումբ են կազմել հարսանեկան ծիսակատարութիւններին ուղեկցող հաւատալիքներն ու հմայական գործողութիւնները, որոնք միտուած են եղել նորապսակների առողջութեան եւ արգասաւորութեան ապահովմանը, ինչպէս նաեւ չարքերից ու վնասակար ուժերի ազդեցութիւնից զերծ պահելուն:

Այսպիսի միջոցառումներից են եղել չար ուժերի ուշադրութիւնը շեղելու նպատակով եկեղեցուց վերադառնալիս ճանապարհը փոխելը (այսօր որոշ գիւղերում կիրառում են), չարքերին խափելու նպատակով փեսային լողացնելիս մակարներից մէկին փեսայի հետ լողացնելը, երբեմն էլ՝ տաշտի մէջ երկաթ դնելը[38]: Այս ամէնի նպատակը փեսացուի առնականութիւնը պահպանելն է եղել: Նոյնանման բովանդակութիւն է ունեցել փեսացուին սափրելու ծէսը, երբ նրա երեսը շախմատաձեւ ածիլել են՝ վերածելով բոստանի: Հարքում ու Սասունում չսափրուած մազերը ներկայացուել է իբրեւ սէխ ու ձմերուկ: Սափրիչն ու մակարապետը կատակով բոստանը վաճառքի են հանել: Այս ծէսը կոչուել է բոստան դնել[39]: Ժողովրդական պատկերացումներում առաւել ազդեցիկ է եղել մազի, եղունգի, լուսանկարի, հագուստի վրայ արուած կախարդութիւնը: Ուստի փեսայի մազերը որպէս բոստան ներկայացնելը նպատակ է ունեցել շեղելու չար ուժերին, միւս կողմից, բոստանն ինքնին պտղաբերութեան խորհրդանիշ է եղել: Ոչ միայն հայերի, այլեւ աշխարհի տարբեր ժողովուրդների մօտ այս պատկերացումներն ունեն տարբեր դրսեւորումներ: Փեսային առնականութիւնից զրկելու համար մսացուի մորթի ժամանակ հանգոյցներ են արել, մսացուի

---

[36] Վ. Բդոյեան, *Հայ ազգագրութիւն, համառօտ ուրուագիծ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1974, էջ 61:

[37] Լալայեան, «Վարանդա», *Երկեր,* էջ 117 :

[38] Ըստ հաւատալիքների երկաթը չարից պաշտպանելու յատկութիւն է ունեցել:

[39] Նահապետեան, էջ 59:

արեան վրայ կողպէք են փակել: Փեսային «կապելու» մտավախութիւնն էր, որ մսացուի օրը քաւորը կամ փեսայի մայրը մորթուող անասունի արեան մէջ թաթախել են կողպէք եւ փակել, որը բացել են առագաստի գիշերը՝ նորապսակների անկողնու վրայ: Ժողովրդական պատկերացումների համաձայն, փեսան կը կորցնէր իր սեռական ուժը, եթէ մինչեւ ամուսնութեան քառասունքի լրանալը այցելէր մեռլատուն: Այս դէպքում փեսան համարուել է «կոխուած» եւ հաւատացել են, որ «կոխը» կը վերանար միայն հանգուցեալի քառասունքը լրանալուց յետոյ: Նորափեսան եւ նորահարսը կարող էին «կոխը» ստանալ նաեւ դեռեւս քառասունքը չլրացած ծննդկանին այցելելու հետեւանքով: Կոխը չէզոքացնելու նպատակով տղայի մայրը նորապսակներին լողացրել է մի տաշտի մէջ՝ մէջք-մէջքի ամուր յենուած, եօթ բաժակ ջրով, եօթ սրբի անուն տալով: Ըստ Բդոյեանի, այս գործողութիւնը հայոց եօթ գլխաւոր աստուածութիւններին դիմելու հին սովորոյթի արձագանգն էր: Մէկ այլ ծէսի համաձայն «կոխուած» նորահարսին եօթ անգամ պտտել են Տեառնընդառաջի խարոյկի շուրջը, որի իմաստը պտղաբերելու կարողութեան ապահովումն է եղել:

Ըստ հաւատալիքների՝ ճանապարհներն այն վտանգաւոր տեղերն են, որտեղ մշտապէս վխտացել են չարքերը: Երաժշտութեան ձայնից աշխուժանալով՝ նրանք դարձել են աւելի վտանգաւոր, իսկ հարսն ու փեսան՝ աւելի զգայուն ու խոցելի: Պարն այս դէպքում համարուել է աւելի զօրեղ պաշտպանիչ միջոց (հմայակ-պահպանակ): Պարերում կրունկների, ծափերի զարկերը նրանց ոչնչացնելու ամենազօրեղ միջոցներն են եղել, որոնցով ակնկալուել է չար ուժերի չէզոքացում: Ճանապարհը, որով անցել են հարսն ու փեսան, մէկ կարգավիճակից միւսին անցնելու այն ճանապարհն է, որով սահման է դրուել անցեալի ու ներկայի, եւ ինչ-որ չափով՝ ապագայի միջեւ:

Հայաստանի բոլոր պատմաազգագրական գաւառներում հարսի պարը համարուել է պարտադիր վերջաբան-արարողութիւն: Երբ լուսաբացին աքաղաղը երեք անգամ կանչել է, քաւորը յայտարարել է, որ եկել է հարսի մոմերով պարը կատարելու ժամանակը, պէտք էր պատրաստուել այդ եզրափակիչ արարողութեանը: Այս պարին մասնակցելու իրաւունք է տրուել միայն ամուսնական զոյգերին, այն էլ՝ երջանիկ, ունեւոր ու բազմազաւակ: Եօթ զոյգի ներկայութիւնը այս պարում պարտադիր է եղել: Քաւորակինը իւրաքանչիւր զոյգին բաժանել է մէկ վառուող մոմ: Որպէս օրէնք պարաշրջանը փակ է եղել: Հարսն ու փեսան կատարել են միայն երեք պտոյտ եւ դուրս եկել պարաշրջանից: Հաւատալիքների համաձայն վառուող մոմը եւ առհասարակ կրակը սեռական ուժի խորհրդանիշն է եղել եւ իր ուժը փոխանցել է ամուսնացող զոյգերին: Հարս ու փեսայի կիսավառուած մոմերը պահել են եւ վառել հարսի առաջին ծննդաբերութեան ժամանակ:

Պարելու ժամանակ փեսան աջ գրպանից հանել է նախապէս պատրաստած ցորենի հատիկներ, քաղցրաւենիք, մանր դրամ եւ շաղ տուել

պարողների գլխին[40]: Հաւատալիքի համաձայն այս արարողութիւնը ապահովել է առատութիւն, պահպանել փեսայի տղամարդկային ուժը եւ պտղաբերելու կարողութիւնը: Այս ծէսը փեսային իրաւունք է տուել մտնել ամուսնական առագաստ եւ համարուել հասարակութեան լիարժէք անդամ: Ըստ օրէնքի ամուրի տղաներին ցորեն ցանելու իրաւունք չի տրուել:

## (ՊԱՊԵՆԱԿԱՆ) ՔԱՒՈՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԻՔՈՒՄ

Շատ մեծ է եղել քաւորի (շէմի, օճախի, գերդաստանի, պապենական քաւոր) դերը հայոց աւանդական գերդաստանում: Առանց նրա մասնակցութեան չի կատարուել ընտանեկան եւ ոչ մի նշանաւոր իրադարձութիւն, ոչ մի հանդէս: Նա ընտանեկան բոլոր տօնախմբութիւնների եւ սգոյ արարողութիւնների գլխաւոր դերակատարն էր ու պատուաւոր ղեկավարը: Քաւորի դերը մեծ է եղել յատկապէս հարսանեկան ծէսերի ու կնունքի ժամանակ[41]:

Հարսանեկան հանդերձը հագցնելուց յետոյ նորահարսի գօտին կապել է քաւորը՝ բեղմնաւորութեան բարեմաղթանքով. «Առաջնեկդ տղայ լինի»[42], «Ծառ էղնիս ու ճիւղ տաս»[43]: Գօտին հանդէս է եկել որպէս ուժի փոխանցման եւ բեղմնաւորութեան խորհրդանիշ: Բազմաթիւ ժողովրդական սովորոյթներում քաւորը միշտ հանդէս է գալիս իբրեւ նորափեսայի ընտանիքի ամենայարգուած, հեղինակաւոր անձ, խորհրդատու, ընտանեկան դատաւոր եւ վէճերի հաշտարար: Քաւորի իւրաքանչիւր այցը համընտանեկան իրադարձութիւն էր, իսկ խօսքը՝ օրէնք: Ոչ մի կարեւոր հարց չի լուծուել առանց քաւորի միջամտութեան: Քաւորը սրբութիւն է եղել ոչ միայն ընտանիքի, այլեւ ողջ ազգատոհմի համար[44]: Հասարակութիւնը դատապարտել եւ մեղք է համարել քաւոր փոխելը: Երբ քաւորն ու քաւորակինն այցելել են սանիկների տուն, տնեցիներին արգելուել է տանիք բարձրանալ կամ անցնել տան ետեւի կողմով. դա քաւորին հաշուի չառնելու, վիրաւորելու իմաստ է ունեցել: Քաւորի անկողնու վրայ նստելը, նրա տան կտուրը բարձրանալը «մեղք» է համարուել: Ըստ եկեղեցու կանոնների՝ բացարձակօրէն արգելուել է որեւէ ամուսնութիւն սանիկների եւ քաւորի

---

[40] Ժ. Խաչատրեան, *Ծիսական պարը հայոց հաւատալիքների համատեքստում*, ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2014, էջ 54:

[41] Քաւորը յատուկ լիազօրուած իրաւունքներ է ունեցել նաեւ Սլովաքիայում եւ հարաւ-արեւելեան Եւրոպայի այլ ժողովուրդների մօտ (Ю. В. Бромлей, М. С. Кашуба, *Брак и семья у народов Югославии* (Ամուսնութիւնը եւ ընտանիքը Հարաւսլաւիայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն», Մոսկուա, 1982, էջ 237):

[42] Պօղոսեան, էջ 436:

[43] Ա. Իսրայէլեան, «Խօսքի մոգական ուժը», *Շնորհ ի վերուստ. առասպել, ծէս եւ պատմութիւն, գիտաժողովի նիւթեր*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», Երեւան, 2008, էջ 162-75:

[44] Գ. Իփէկեան, «Քաւորը», *Ազգագրական հանդէս*, 24:1913, Թիֆլիս, էջ 90-91:

սերունդների միջեւ՝ սահմանելով քաւորի ու սանամօր միջեւ մի ազգակցութիւն, որը հաւասար էր արեան ազգակցութեան: Սովորոյթի համաձայն՝ հարսն ու սանամէրը երբեք չպիտի խօսէին քաւորի հետ: Վերջիններիս իրարից խուսափելու մասին պատմւում են շատ աւանդազրոյցներ: Շիրակի Սառնաղբիւր գիւղի ձորի «Քաւոր-սանամէր քարերը», «Սանամէրը աղբիւրի մօտ»[45] վարքաբանական աւանդազրոյցներում ներկայացուած են բարոյաընտանեկան կարգի խախտման իրադրութիւններ: Քաւորն ու սանամէրը աւանդազրոյցներում բարոյական կարգը խախտելիս քար են դարձել:

Սակայն ոչ-բոլոր ընտանիքներն են ապրել համերաշխ ու երջանիկ: Ոչ յաճախ, սակայն գրանցուել են նաեւ ամուսնալուծութեան դէպքեր, որտեղ վճռական խօսքը քաւորինն է եղել: Ժողովրդի պատկերացմամբ՝ «Աստծուց ներքեւ միայն քաւորն է»[46]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հետազօտողների գրանցուած հարուստ ու առատ նիւթերը հնարաւորութիւն են ընձեռել եզրակացնել, որ այսօր դադարել ենք արժեւորել մեր աւանդական հարսանեկան ծէսերը: Այս ծէսերից որոշները մնացել են միայն որպէս գրաւոր աղբիւր: Բնութագրական է, որ աւանդական ծէսերի մեծ մասը մոռացուել է կամ աստիճանաբար կորցրել հիմնական ձեւը: Մոռացութեան են մատնուած տիեզերաստեղծ ծէսերը, յատկապէս՝ եզմորթէք, փեսասափրէք, թագուտրագովք: Լիայոյս ենք, որ մեր ժողովրդի ներէթնիկ փոքր խմբերում դեռեւս ապրում են ու կենցաղավարւում որոշ ծէսեր՝ փոքր ինչ վերափոխուած ձեւերով, ստանալով նորանոր դրսեւորումներ: Յիրաւի, դարերի խորքից եկած սովորոյթի, աւանդոյթի ուժն ամենակարող է, մնում է միայն դիմակայել դրսից ներմուծուած փորձութիւններին:

[45] Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, «Անտարես», Երեւան, 2017, էջ 241:

[46] Դաւիդովա, ԴԱՆ, Արմաւիր, 2016:

## REMEMBERING AND REVIVING ARMENIAN WEDDING CEREMONIES AND MARRIAGE SYMBOLS
**(Summary)**

GALYA DAVIDOVA
galya.davidova.60@gmail.com

The paper describes a set of Armenian wedding ceremonies (or remnants of them) that no longer exist and are almost unknown to the younger generation. The author draws parallels between the wedding ceremonies of the Armenians, Assyrians, and Yezidis living in Armenia to understand how natives have preserved their folkloric tradtions.

The paper notes that the current range of wedding procedural ceremonies has been significantly reduced. Only the engagement and wedding ceremonies have been preserved. Besides, oftentimes foreign rites are adopted and have become a trend.

The author argues that it is necessary to revive interesting and notable traditional rites, which are partly preserved in the Armenian wedding ritual. Reviving such traditions would put the participant in connection with their origins. The author argues that reviving these traditions by enriching them with a contemporaray twist or a new approach would help the individual avoid rituals that are incompatible with the nature and traditions of the Armenian nation.

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԱՊԱՏՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

ԱՐՄԷՆ Շ. ՍԱՐԳՍԵԱՆ
armensargg@gmail.com

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հայ ժողովրդական ստապատում-սուտասելուկների հանդէպ հետաքրքրութիւնը եւ անդրադարձը պայմանաւորուած էր իմ դոկտորական ատենախօսութեան՝ հայկական զուարճապատում-զուարճախօսութիւնների (անեկդոտներ) մասին գրուող հետազօտութեան ձեռնարկմամբ:

Աւելի քան 170 տարիների ընթացքում հրատարակուած անեկդոտների ժողովածուներ ու զուարճապատում-զուարճախօսութիւններ պարունակող տարաբնոյթ գրքեր (բանահիւսական եւ ազգագրական ժողովածուներ, որոշակի տարածաշրջանների ու որոշ տեղավայրերի, ինչպէս նաեւ զուարճախօսներին նուիրուած գրքեր, բարբառագիտական ուսումնասիրութիւններ, հայ ժողովրդական հեքիաթների ակադեմիական հրատարակութիւններ եւն.), ինչպէս նաեւ պետական ու որոշ անձնական արխիւներում պահպանուող անտիպ գրառումներ կարդալիս եւ ուսումնասիրութեան համար անհրաժեշտ նմուշներն առանձնացնելիս զգում էի, որ ժողովրդական բանահիւսութեան այլ տեսակներից դրանց տարանջատելն ու ըստ պատումների բնոյթի, կառուցուածքի եւ թեմատիկայի դասդասելը երբեմն որոշակի դժուարութիւնների առաջ էին կանգնեցնում:

Մեր ձեռքի տակ եղած նիւթերի մէջ (ինչպէս ժողովրդական երգիծապատում-զուարճախօսութեան՝ անեկդոտների դէպքում) հանդիպում էին նաեւ *դիպաշարով* (սիւժէով) եւ *անդիպաշար* (անսիւժէ) երգիծական բանահիւսութեան այնպիսի նմուշներ, որոնք, լինելով վիպական սեռի ինքնուրոյն տեսակներ, իրենց բնոյթով, նպատակաուղղուածութեամբ ու կերպարներով էականօրէն տարբերւում էին անեկդոտներից եւ գերազանցապէս չունէին վերջիններիս ամենաէական յատկանիշերը՝ տարաբնոյթ թեմատիկ դրսեւորման լայն ու ընդգրկուն հնարաւորութիւնները եւ կերպարների կերտման բազմազանութիւնը, զաւեշտի դրսեւորման տարատեսակ ձեւերն ու մատուցուող նիւթի անսպասելի ծիծաղ յարուցող աւարտը:

Ժողովրդական երգիծանքի նմանատիպ նիւթերն, ինչ խօսք, այդ ընթացքում առանձնացուեցին՝ յետագայում դրանց անդրադառնալու, ուսումնասիրելու եւ ի մի բերուած տպագիր ու անտիպ նիւթերի, ինչպէս նաեւ մեր գրառումների հետ առանձին գրքով հրատարակելու ակնկալիքով:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԵԶՐՈՅԹՆԵՐԸ

Պատմական Հայաստանում եւ նրան յարակից երկրներում հաստատուած հայութեան շրջանում ստայօդ պատմութիւններն ու կարճառօտ սուտ

խօսքերը՝ ստապատում-սուտասելուկները, զանազան անուանումներով են հանդէս գալիս:

Արեւելահայոց մի շարք տարածքներում (Արարատեան դաշտավայր, Լօռի, Տաւուշ եւ այլուր) ժողովուրդը չափազանցուած, անիրական պատմութիւններն ու եղելութիւնները պարծանքով պատմողներին անուանել է **փչաններ,** իսկ այդ անհաւատալի յօրինուածքները՝ **փչոցներ**[1]**:** Փչանից բացի, Լօռիում ասացողներին անուանում են նաեւ **սուտլիկներ**[2]**:**

Ժողովրդական զուարճապատում-զուարճախօսութիւնների պէս Լօռու եւ Տաւուշի մարզերում ասացողները երբեմն ստապատումին եւս ***առակ*** են ասում: ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան արխիւում պահպանուող գրառումներից մէկում ասացող Գագիկ Օհանեանն այսպէս է աւարտում իր ստապատումը. «*Ափսո՛ւս, որ նաւը ծակ էր, որ ծակ չըլեր,* ***առակըս*** *շատ կերգարեր»*[3]*:*

Ջաւախքում սուտ պատմութիւններին ժողովուրդը ***պոչաւոր ստեր*** է անուանում, իսկ դրանց հեղինակներին՝ ***«ծով կրակողներ», «օդի հետ կռուողներ», «քամի թակողներ»***[4], որոշ տարածքներում, օրինակ՝ Ախալցխայում, ասացողներին **սըտլիկներ** էլ են ասում[5]:

Արեւմտահայոց պատմաազգագրական շրջաններում եւս երգիծական բանահիւսութեան այս տեսակը, դրա պատմողներն ու հերոսները տարբեր անուանումներով են հանդէս գալիս: Այսպէս.-

* Այնթապցիները ստապատումներ պատմողներին անուանել են ***սուտասաններ*** կամ ***փչող-փշրող մեծ խօսիկներ,*** իսկ նրանց ներկայացրած ստեղծագործութիւնները, ինչպէս արեւելահայոց շրջանում, **փչոցներ**[6]:

* Կեսարիացիները սուտասաններին ***խօսք ջարդողներ*** են անուանում[7]:

---

[1] Հրաչեայ Յակոբեան, «Մանկուց լսածներից, փչոցներ», ՀՀ ազգային արխիւ, ՀԳՄԿի ֆոնդ, 1336, ցուցակ 7, գործ 713, էջ 31:

[2] Յովհաննէս Թումանեան, «Սուտլիկ որսկանը», *Ընտիր երկեր,* «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1978, էջ 367. նաեւ՝ Հրաչեայ Քոչար, «Սուտլիկ Սարօն», *Ընտիր երկեր՝ երկու հատորով, հատոր առաջին*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1975, էջ 137:

[3] «Սուտասանը», ՀԱԻ արխիւ, Մուշեղ Յակոբեանի թղթապանակ:

[4] Մամիկոն Ասատրեան, *Արծուանիստ,* «Լուսաբաց» հրատ., Արամէ բարեգործական ընկ., Երեւան, 2006, էջ 280:

[5] «Ստախօսն ու հնարագէտ ընկերը», *Առակներ, աւանդութիւններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով),* գրի առաւ Ստ. Մալխասեանց, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 88:

[6] «Եփրէմ ամու փչոցները», *Պատմութիւն Անթէպի հայոց, Գ. հատոր*, խմբ.՝ Երուանդ Պապայեան, ա/հ, Լոս Անճելըս, 1994, էջ 365:

[7] «Սուտ խօսիլն ալ ճարպիկութիւն կ'ուզէ», *Գիրք առակաց, (առակներ, առածներ, իմաստուն խօսքեր եւ այլն),* պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆայեան, տպ. Կ. Տօնիկեան, Պէյրութ, 1957, էջ 159:

* Մոկսում սուտասանների մրցոյթի մասնակիցներին ժողովուրդն անուանում է ***սութսաւ***[8]:

* Երզնկացիները սուտ յօրինուածքներն անուանում են ***սրախօսութիւններ***, իսկ ասացողներին՝ ***սրախօսներ***[9]:

* Քեսապցիները ստայօդ պատմութիւններն անուանում են ***«սէօփ»*** (սուտ)[10]: Իդէպ, քեսապցի եւ այնթապցի վարպետ ասացողները «սէօտ» պատմելուց առաջ մատուցուող նիւթը «համեմել» են նախերգանքով, որը քեսապցիներն անուանում են **թաքեարլամա**, իսկ այնթապցիներն այդ եզրաբառն արտաբերում են՝ **թէքէրլեմէ**[11]**:**

Իր ասացողներից մէկին՝ Պօղոս Չերչիկեանին ներկայացնելիս ահա թէ ինչ է գրում վաստակաշատ մանկավարժ, հայագէտ Յակոբ Չոլաքեանը. «*Պօղոս հեքիաթներէ առաջ անպայման "թաքեարլամա" մը կ'ըսէ եղեր, թուրքմէն բանուորներուն ալ հաճոյանալու համար: "Թաքեարլամա"ն թրքերէն է եւ բառացիօրէն կը նշանակէ «գլորելով, գլորտուք»*[12]*, այսինքն՝ սուտ գլորել՝ փչել»* [13]*,* ինչը ունկնդրի կողմից ընկալւում է ***սուտ գլորել՝ փչել***:

Մի շատ կարեւոր հանգամանք եւս. թէ՛ արեւելահայոց, թէ՛ արեւմտահայոց շրջանում իրենց պատմածների ճշմարտացիութիւնը ունկնդիրների կողմից կասկածի տակ դնելու դէպքում ասացողներն տարակոյսը անչափ հիւանդագին էին ընդունում, վիրաւորւում, հասակակիցներին վկայակոչելով՝ փորձում հաւաստիացնել դրանց իրական լինելը, երբեմն էլ դադարեցնում էին պատմելը:

Այդ կապակցութեամբ Չոլաքեանը վերյիշում է.

Անփորձ բանահաւաք՝ ես ալ օր մը մօտեցայ Հաճի Արթինին, խնդրելով որ քանի մը **սուտ** ալ ինծի պատմէ:

- Վեց գիրդ[14] առ գնա սկէ,– ըսաւ,– ես սուտասան չեմ, գիս ինչի՞ տեղ կը դնես:

Չպատմեց: Բայց իր զրոյցները տակաւին բերնէ բերան պատմողներ կան[15]:

---

[8] И. Орбели, *Избранные труды* (Յ. Օրբելի, *Ընտիր երկեր*), *հտր. 2*, Երեւան, Գիտութիւն հրատ., ՀՀ ԳԱԱ, 2002, (Էրկու սութսան). էջ 67:

[9] Ս. Ազնաւուրեան, *Հեքիաթներ, զուարճալիքներ*, Միչիկըն, ԱՄՆ, 1971, էջ 126:

[10] Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Բ. հատոր*, հրատ. Ամերիկաբնակ քեսապցիներու ուսումնասիրաց միութեան, տպ. «Ասֆահանի», Հալէպ, 1998, էջ 395:

[11] Այնթապեան *Թէքէրլեմէք* (նախերգանքներ)ի թուրքերէն 13 նմուշ՝ այնթապցի ասացող Գրիգոր Պարսումեանի հայերէն թարգմանութեամբ, մեզ է տրամադրել Մատենադարանի եւ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի աշխատակից Միհրան Մինասեանը:

[12] Յակոբ Չոլաքեան, «Սուտլիկ հեքիաթներ պատմողներս», 23.03.2021, Դիմատետրի նիւթերից:

[13] Յակոբ Չոլաքեան, «Սուտլիկ հեքիաթներ պատմողներս», 23.03.2021, Դիմատետրի նիւթերից:

[14] Ծածուկ, վեց հնչիւնով թրքերէն մի հայհոյանք:

[15] Քեսապցի գրող Գէորգ Աբէլեանը Հաճի Արթինի պատումները 1970ին հրատարակել է *Հէլէ, հէլէ, հէլէ... Քեսապ* (տպ. Սեւան, Պէյրութ, 1968) գրքում:

Հենց այդ հանգամանքը հաշուի առնելով էլ Քեսապում «*սէօփեր*» վայելել ցանկացող ունկնդիրները, որպէսզի չվիրաւորէին տարեց ասացողի ինքնասիրութիւնը, ստապատում-սուտասելուկներ պատմելու համար նրան դիմելիս բանահիւսութեան այդ տեսակը բնորոշող ***սէօփեր*** անունը երբեք չէին կիրառում, այլ խնդրում էին մի հետաքրքիր բան ***հեքեթել***:

Արեւելահայոց շրջանում ստապատումներ գրառողներից մէկը՝ Հրաչեայ Յակոբեանը եւս հաստատում է այդ նոյն երեւոյթը. «*Գիւղացի ծերունիները նրան փչան էին կանչում, իսկ երիտասարդները այդ մականունը չէին գործածում նրա նկատմամբ, երեւի նկատի էին ունենում նրա պատկառելի հասակը կամ կարծում էին՝ ծերունին կը վիրաւորուի, այլեւս ոչինչ չի պատմի եւ իրենց կը զրկի նրան լսելու հաճոյքից*»[16]:

Երբեմն ասացողները, վիրաւորուած ունկնդիրների թերահաւատ արձագանգներից, ներկայացնում էին մի ուրիշ պատում՝ հետեւեալ սկսուածքով. «*Մէկ էլ են ա սու՞տ, որ...*», եւ մատուցւում էր մէկ այլ՝ է՛լ աւելի համով-հոտով ստապատում[17]:

## ՍՏԱՊԱՏՈՒՄ-ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐԻՆ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԲԱՆԱՀԱՒԱՔԲԱՆԱԳԷՏՆԵՐԻ ՏՈՒԱԾ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

Թէ՛ օտար, թէ՛ հայ բանագէտների եւ գրառող-հրատարակիչների շրջանակներում ստապատում-սուտասելուկներին, իբրեւ երգիծապատումային ինքնատիպ կառոյցի տրուած անուանումները եւս տարբեր են: Այսպէս.-

Ռուս բանագէտ Պրոպը ստապատում-սուտասելուկներն անուանում է ***небылицы*** (չեղած, չկատարուած *պատմութիւններ*)՝ դրանք մտցնելով մարդկանց մասին հեքիաթների շարքում[18]:

Ֆրանսացի բանագէտները եւս անիրական, յօրինովի պատմութիւնները (ֆրանսերէն՝ Mensongerie-մանսոնժըղի), մտցրել են հեքիաթների ժողովածուների մէջ: Որսորդական թեմայով նմուշներից մէկը՝ «Երեք որսորդ»ը, որ հայկական «Սուտլիկ որսկանը»ի ֆրանսական տարբերակն է եւ սկսւում է «լինում է, չի լինում» հեքիաթային բանաձեւային նախաբանով, ընդգրկուել է Մոսկուայում հրատարակուած «*Ֆրանսական ժողովրդական հեքիաթների ժողովածուում*[19]:

Անգլերէն ստապատում-սուտասելուկները ներկայանում են **co′ck-and-**

---

[16] ՀԱՀ, ՀԳՄԿի ֆոնդ, 1336, ցուցակ 7, գործ 713, էջ 31

[17] Նոյն:

[18] В. Проп, *Жанровый состав русского фольклора, Фольклор и действительность* (Վ. Պրոպ, Ռուսական ժողովրդական բանահիւսութեան տեսակները, ժողովրդական բանահիւսութիւնը եւ իրականութիւնը), Մոսկուա, 1976, էջ 47-50:

[19] *Французские народные сказки* (ֆրանսական ժողովրդային հեքիաթներ), Կրթադիդակտիկ գրականութեան պետական հրատարակչութիւն, Մոսկուա, 1959, էջ 299:

**bu′ll sto′ry**[20] անուամբ՝ շեշտելով միայն դիպաշարային՝ սիւժէ ունեցող պատմութիւնները եւ անտեսելով սուտասելուկների անդիպաշար-երկխօսական բնոյթը:

Հայ բանահաւաք-հրատարակիչներն ու բանագէտները եւս իրենց գրանցած ստայօդ նիւթերին տարբեր անուններ են տուել: Այսպէս.-

* Ստեփան Մալխասեանցն անիրական՝ սուտ պատմութիւններ պատմողներին անուանում է ***ստախօսներ***[21], իսկ Արտաւազդ Սաքանեանը նրանց պատմածներն անուանում է ***հանաքներ***[22]**:**

* Չոլաքեանը սիւժէ ունեցող՝ դիպաշարային սուտ յօրինուածքների մի մասն անուանել է ***սուտլիկ հեքիաթներ*** (հաւանաբար Թումանեանի «Սուտլիկ որսկանը»ի ազդեցութեամբ)**,** իսկ այդ խմբի որսորդական պատումները՝ ***սուտլիկ զրոյցներ***[23]**:**

Աւագ տարիքի քեսապցիները շուրջ ութ տասնամեակ անց անգամ յիշում են Պաշուրտ գիւղի վարպետ բանասաց ***Պօղոս Չերչիկեանին***, ընդգծում նրա բացառիկ շնորհքն ու պատմած համով-հոտով սուտլիկ հեքիաթները: Չոլաքեանը նրա մասին գրում է. «*Շատ լսեր էի վարպետ ասացող Չերչիկեան Պօղոսի մասին (Պաշուրտ գիւղէն, մահ.՝ 1946):* ***Կը պատմէին, որ անոր սուտլիկ հեքիաթները իրարայաջորդ սուտերով կը զարգանային***»[24]:

* Աբէլեանը, հաշուի առնելով նման ստեղծագործութիւնների երգիծական եւ անիրական բնոյթը, Գարեգին Սրուանձտեանցի եւ Սարգիս Հայկունու նման[25], դրանց անուանել է ***առասպելներ,*** իսկ ասացողներին՝ ***առասպելագործներ***[26]:

Աբէլեանն իր ասացողի եւ նրանից գրառած պատումների մասին այսպէս է գրել. «*Իմ «մօրքիրէրս» ըլլալով մեծ* ***առասպելագործ*** *մը, շատ կը սիրէր իր հիւսած* ***առասպելները*** *պատմել, որոնց առանցքը կը կազմեն ինք,*

---

[20] В.К. Мюллер, *Англо-руский словарь* (անգլերէն-ռուսերէն բառարան), Մոսկուա, հրատ.՝ Русский язык, 1989, էջ 138:

[21] «Ստախօսն ու հնարագէտ ընկերը», *Առակներ, աւանդութիւններ, անեկդոտներ*, էջ 88:

[22] Արտաւազդ Սաքանեան, *Լօռուայ հանաքներ (Հումորիստական մանրապատումներ)*, վերահրատարակուած եւ լրամշակուած հրատ., հեղ. հրատ., Երեւան, 2004, էջ 6:

[23] Չոլաքեան, «Սուտլիկ հեքիաթներ պատմողներս»: Նշենք նաեւ, որ դեռեւս 1970ին նա գարատուրանցի Սարգիս Լրջիկեանից գրի էր առել Թումանեանի «Սուտլիկ որսկանը»ի քեսապեան տարբերակը (Չոլաքեան, էջ 398-99):

[24] Չոլաքեան, «Սուտլիկ հեքիաթներ պատմողներս»:

[25] Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան (ԳԱԹ), Գարեգին Սրուանձտեանց, Տետր բ., ցուցակ 1, 2/1, «Վէպ, գովք, առակ, առասպել». նաեւ՝ ԳԱԹ, Սարգիս Հայկունի, տետր 9, Է մաս. Առասպելներ, էջ 7:

[26] Աբէլեան, «Հաճի Արթինին առասպելները», *Հէլէ՛, Հէլէ՛, Հէլէ*, էջ 133:

*իր «չիֆթէն» եւ ընդհանրապէս... կաքաւներ, որոնց հանդէպ շատ մեծ փկա-րութիւն ունի... Շատ հաճելի է մտիկ ընել զինք, եւ ինք եւս իր կարգին բնաւ չ'ախորժիր հակաճառութենէ...»*[27]:

Այնուամենայնիւ հեղինակը «Հաճի Արթինին ***առասպելները»***ի առաջաբանում մատնանշում է Քեսապի բարբառով պատմած նիւթի եւ դրա գրական արեւմտահայերէնի վերածածի ակնառու տարբերութիւնը. «*...Դժբախտաբար երբ քեսապերէնէ դուրս բերուին այդ համով պատմութիւնները, **շատ բան կը կորսնցնեն իրենց հմայքէն**, բայց դարձեալ կը մնան համով*»[28]:

Բացառութեամբ Չոլաքեանի՝ նմանատիպ նիւթերի անդրադարձի[29] եւ քեսապցի ստապատում-սուտասելուկների ասացողների (Կիրակոս Պաճաքեան՝ Կեկիւսուօկ հելեվուր, Պօղոս Չերչիկեան) մասին համացանցում ներկայացրած նիւթի[30]՝ հայ բանագիտութեան ասպարէզում, որքան մեզ յայտնի է, ոչ ոք չի անդրադարձել երգիծական բանարուեստի այս ինքնատիպ տեսակին: Իսկ եթէ ոմանք էլ ինչ-որ տեղ առնչուել են դրանց, ապա բանահիւսական ստեղծագործութիւնների ժողովածու հրատարակելիս կանգնել են որոշակի խնդրի առաջ՝ յստակ չկողմնորոշվելով՝ ո՞ր խմբում ընդգրկել վիպական երգիծական բանահիւսութեան այդ տեսակը: Իր *Տաւուշ* գրքում բանագէտ Էսթեր Խեմչեանը ժողովրդական ստապատումը («Մինաս Ապու սուտը») մի դէպքում ընդգրկել է ***զուարճախօսութիւնների***ն բաժնում[31], մէկ այլ պարագայում՝ «Հանթոյի սուտը» մտցրել է նոյն գրքի ***Սփեր***ի բաժնում[32]: Խեմչեանի «Ստեր» բնորոշումը թերեւս չի արտացոլում ստապատումի տեսակային յատկանիշը:

Ինչ խօսք, այդ ամէնի գլխաւոր «մեղաւորը» հենց ստապատում-սուտասելուկներն են, քանզի այդպիսի նիւթերը մասնագէտների կողմից դեռեւս լիարժէք ուշադրութեան չէին արժանացել, եւ իբրեւ բանահիւսութեան ինքնուրոյն տեսակ՝ չեն առանձնացուել, յստակ չեն ներկայացուել ու մատնանշուել դրանց՝ սեռը բնորոշող հիմնական տարբերակիչ յատկանիշերն ու այն սահմանները, որոնցով ստայօդ նմուշները տարբերւում են վերը թուարկուած ժողովրդական բանարուեստի տեսակներից: Իսկ նման անորոշ իրավիճակում բանահիւսութեան այդ տեսակի մասին գիտական հետազօտութիւնների առկայութեան, դրանցում ներկայացուած տեսակէտերի շուրջ խօսելն ու գնահատականներ տալն արդէն իսկ դառնում են աւելորդ:

Ըստ այդմ էլ, հաշուի առնելով այդպիսի նմուշների ամենաբնորոշ յատ-

---

[27] Նոյն:

[28] Նոյն, էջ 136:

[29] Չոլաքեան, «Սուտլիկ տաղեր», *Քեսապ, Բ. հատոր*, էջ 395:

[30] Չոլաքեան, «Սուտլիկ հեքիաթներ պատմողներս»:

[31] Էսթեր Խեմչեան, «Իջեւան (Ձորոփոր)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հատոր 21*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2000, էջ 184:

[32] Նոյն:

կանիշերը, այն է՝ ***դիպաշարային***՝ երբեմն կարճառօտ, երբեմն էլ ծաւալուն պատումով ստայօդ պատմութիւններ լինելը, ինչպէս նաեւ երկխօսական եւ առանց երկխօսութեան արձակ կամ չափածոյ խօսքի կառուցուածքով ***անդիպաշար*** յօրինուածքների բնոյթը, վիպական երգիծական բանահիւսութեան այդ տեսակները մենք անուանել ենք ժողովրդական ստապատումներ եւ սուտասելուկներ:

Իսկ իբրեւ եզրաբառ-եզրոյթ՝ ո՞րն է սուտը եւ ինչո՞վ է առնչւում ստապատում-սուտասելուկի հետ:

Դրանք իրար մօտ, բայց միաժամանակ իրարից տարբեր եզրոյթներ են: Սուտը որեւէ անձի, երեւոյթի, գործողութեան մասին ասուած ոչ-ճիշտ հաղորդումը՝ սուտ լուրն է: Այն վերաբերում է անհատի նպատակադրուած արտաբերած բացասական խօսքի բնոյթին:

Ստող, երբեմն արդարանալու համար ոչ-ճշմարիտ պատճառներ ներկայացնող մարդուն ժողովուրդն անուանում է ***ստախօս,*** որը, սուտ լուրեր հաղորդելով, հաճոյք է ստանում:

Սուտ խօսողին մարդիկ քննադատում, ձաղկում, պախարակում են: Եւ իզուր չէ, որ դարերի ընթացքում աշխարհի ժողովուրդները ստախօսների դէմ պայքարել են բանարուեստի մի շարք տեսակներով, մասնաւորապէս առածներով եւ ասացուածքներով: Ստախօսների վերաբերեալ հայ ժողովուրդը եւս քննադատական խտացուած ու դիպուկ բազմաթիւ իմաստախօսութիւններ է ստեղծել.-

* *Ստի ոտները կարճ են:*

* *Սուտը սուտ ասողի տունն ա քանդում:*

* *Սուտ ասողի երեսն ի սեւ, հոգին ի դեւ*[33]*:*

***** *Սէօտ խուսուղեն տէօնը հա վառա ըղիր ի, հաւար կինչիր ի, դրէ՛ցէն ըէ՛սիր ի. «Սէօտ հա խուսա» (Ստախօսին տունը վառում է, հաւար է կանչում, դրացին ասել է՝ սուտ է խօսում)*[34]**:**

* Ստել նշանակում է հայհոյել ճշմարտութեանը,– գրում է Գարեգին Նժդեհը:

Նոյնիսկ ստին բնորոշող «Ստի վարձը» վերնագրով զուարճապատում է ստեղծուել.

*Գիւղամիջում մի ստախօսի հետ տաք վէճի ժամանակ, Գորին պապը քարով խփում, ջարդում է նրա չորս ատամը:*

*Գործը դատարան է հասնում: Դատաւորը հարցնում է նրան.*

*– Մեղադրեալ Գորին, քարով ինչու՞ բերանին խփեցիր եւ ոչ թէ, ասենք, ձեռքին կամ ոտքին:*

---

[33] Արամ Ղանալանեան, *Առածանի*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1960, 400 էջ:

[34] Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Գ. հատոր*, հրատ. Ամերիկաբնակ քեսապցիներու ուսումնասիրաց միութեան, տպ. «Արեւելք», Հալէպ, 2004, էջ 348:

*– Քաղաքացի դատաւոր,- ասում է Գորին պապը,– ախր սուտը բերանով է ասել: Եթէ ոտով ասած լինէր՝ ոտին կը խփէի*[35]:

Ի տարբերութիւն ստի՝ ստապատում-սուտասելուկի նիւթն առաւել ընդգրկուն է եւ բնորոշում է սուտ պատմութեան, անիրական յօրինուածքի տեսակը: Ստապատում-սուտասելուկի հետ սուտն առնչւում է այնքանով, որ երկուսի հիմքում էլ սուտն է, սակայն ստապատումը, ի տարբերութիւն ստի, որոշակի դիպաշար ունեցող գեղարուեստական երկի՝ ժողովրդական բանահիւսութեան տեսակ է: Ստապատումներ եւ սուտասելուկներ ներկայացնողը ստախօս չէ, նա, ինչպէս շատ ժողովածուներ կազմողների նմուշներում է ներկայացուել, **պարծենկոտ**[36] է: Իսկ պարծենկոտը հասարակութեան, շրջապատի համար վտանգաւոր չէ, ինչպէս ստախօսը: Նա բնատուր շնորհքով աշխարհ եկած մի անձնաւորութիւն է, որը «ոտքի վրայ» յօրինում-ստեղծում է սուտ պատմութիւններ՝ հաճոյք ստանալով իր յօրինուածքից եւ միաժամանակ հաճոյք պարգեւելով դրանց ունկնդիրներին: Մարդիկ նրանց չեն քննադատում ու պախարակում, ընդհակառակն, դրանցում ներկայացուած պատկերաւոր նկարագրութիւններից ու գունազարդումներից բաւականութիւն են ստանում թէ՛ ստապատում-սուտասելուկների ասացողները, թէ՛ դրանց ունկնդիրները, առաւել եւս երբ վերջիններս հաստատ գիտեն, որ դրանք իրականութեան հետ ոչ մի առնչութիւն ունեն:

## ԳՐԱՌՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԺԹ. դարի կէսերից սկսած՝ շուրջ 150 տարի, թէ՛ արեւելահայոց, թէ՛ արեւմտահայոց շրջանում պարբերաբար հայ ժողովրդական ստապատում-սուտասելուկներ են գրառուել: Մեր օրերում եւս շարունակւում են դրանց գրառման եւ հրատարակման աշխատանքները[37]: Այնուամենայնիւ ինչպէս մի շարք բանարուեստի տեսակների (դիւցազնավէպ, հեքիաթ, աղօթք, ժողովրդական տարաբնոյթ երգեր, հանելուկ, առած-ասացուածք եւն.) պարագայում է կատարուել, ստապատում-սուտասելուկների գրառման աշխատանքը համակարգուած չի եղել, բանահաւաքների կողմից դրանք գրան-

[35] Բենիկ Սէյրանեան, *Գուգարքի ուրախ զրոյցներ*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1982, էջ 53, 96:

[36] *Անեկդօտներ, 1-ին հատոր*, աշխ.՝ Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 93:

[37] Միայն վերջին միքանի տարում անձամբ գրառել ենք աւելի քան մէկուկէս տասնեակ ստապատում-սուտասելուկ: Միքանի տարի է՝ համացանցում եւս օգտատէրերը երբեմն ներկայացնում են իրենց տարածաշրջաններում շրջանառուող նմանատիպ նմուշներ:

ցուել են կա՛մ որպէս անեկդոտ[38], կա՛մ էլ իբրեւ երգիծական առակ[39] ու հեքիաթ[40]: Հենց այդ պատճառով էլ նմանատիպ նիւթերն ընդգրկուել են բանահիւսական այլ տեսակների՝ մասնաւորապէս հեքիաթների, անեկդոտների, երբեմն էլ առակների ժողովածուներում: Իդէպ, անգամ «Անթէպական ասոյթներ եւ մանրապատումներ» բաժնում ընդգրկուած «Աստուր Էտէի ***փչոցներէն»***ի նմուշները նոյնացուել են անեկդոտների հետ[41]: Պատճառը ակնյայտ է. այդ ժամանակ ո՛չ հայկական զուարճապատում-զուարճախօսութիւնների՝ անեկդոտների[42], եւ ո՛չ էլ, առաւել եւս, ստապատում-սուտասելուկների տարբերակիչ յատկանիշերն ու տեսակային բնորոշումները բանագէտների կողմից յստակեցուած չէին:

Հայկական ստապատումների եւ սուտասելուկների՝ մեզ յայտնի առաջին գրառող-հրատարակողներից մէկը եղել է դպրոցական մի շարք դասագրքերի հեղինակ, մանկավարժ Յովհաննէս Նազարեանցը, որի՝ 1876-83ին հրատարակած *Անեկդոտների*ի երեք հատորներում տեղ են գտել 5 նմուշ[43]:

Տիգրան Նաւասարդեանցն[44] ու Արտեմ (Յարութիւն) Եսայեանն[45] իրենց ժողովածուներում եւս մէկական նմուշ են հրատարակում: 1954ին Էդուարդ Աղայեանը Մեղրու բարբառին նուիրուած իր ուսումնասիրութեան նմուշների բաժնում ընդգրկել է մէկ նմուշ[46]:

---

[38] *Անեկդօտներ, 1-ին հատոր*, էջ 93:

[39] *Գիրք առակաց*, էջ 159:

[40] Տիգրանայ Նաւասարդեանց, *Հայ ժողովրդական հեքիաթներ, 10րդ գիրք*, 1903, էջ 44: *Հայ ժողովրդական հեքիաթներ*ի՝ մինչեւ այժմ հրատարակուած հատորներում 14 ստապատում-սուտասելուկ է տեղ գտել:

[41] «Աստուր Էտէի *փչոցներէն», Պատմութիւն Անթէպի*, էջ 365:

[42] «Հայկական անեկդոտների ժողովրդական եւ գիտական եզրոյթները», *Պատմա-բանասիրական հանդէս*, 1:2017, էջ 79-92:

[43] *Անեկդօտներ, 1-ին հատոր*, էջ 93. նաեւ՝ *Անեկդօտներ, 2-րդ հատոր*, աշխ.՝ Յովհաննէս Նազարեանց, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, Տփխիս, 1877, էջ 10. նաեւ՝ *Անեկդօտներ, 3-րդ հատոր*, աշխ.՝ Յովհաննէս Նազարեանց, Մ. Վարդանեանցի եւ ընկ. տպարան, Թիֆլիս, 1883, էջ 103-4, 117:

[44] Նաւասարդեանց, *Հայ ժողովրդական հեքիաթներ, 10րդ գիրք*, էջ 44:

[45] *Ծիծաղի փկճոր: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդօտներ եւ սրախօսութիւնների ժողովածու*, կազմ.՝ Արտեմ (Յարութիւն) Եսայեան, տպ. Էպոխա, Թիֆլիս, 1913, էջ 20:

[46] Էդուարդ Աղայեան, «Սուտ խօսելն էլ հմտութիւն է (Սուտասանը)», *Մեղրու բարբառը*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1954, էջ 361:

Կարապետ քահանայ Գալֆայեանը Լոս Անճելըսում մի ժողովածու է հրատարակում[47], որը վերահրատարակւում է Պէյրութում[48], դրանցում ընդգրկելով 3 նմուշ: Նշենք նաեւ, որ դրանցից միայն մէկի՝ «Սուտ խօսիլն ալ ճարպիկութիւն կ'ուզէ»ի հերոսներն են հայեր: Միւս երկուսից մէկը այլազգիների (թուրք եւ պարսիկ), միւսը տարբեր դաւանանք (քրիստոնեայ տիրացուի եւ իսլամ սոֆթայի) կրող մարդկանց սուտ ասելու մրցակցութիւններ են: Վերջինիս յենքը տարբեր կրօնների առաւելութիւնները պարծանքով ու չափազանցուած ներկայացնելն է:

Արշակ Ալպոյաճեանը 1961ին Մալաթիային նուիրուած իր ստուարածաւալ գրքում ընդգրկել է մէկ նմուշ[49]: 1968ին Աբէլեանը հրատարակում է *Հէյ՛, Հէյ՛, Հէյ՛...Քեսապ* գիրքը, որի «Հաճի Արթինին առասպելները» խորագրի ներքոյ ընդգրկել է գրական արեւմտահայերէնի վերածուած քեսապեան 13 ստապատում[50]:

Մինչեւ խորհրդային կարգեր հաստատուելը Արեւելեան Հայաստանում ստապատում-սուտասելուկների գրառումներն ընդգրկուել են հիմնականում անեկդոտների ժողովածուներում, իսկ 1920ականներից մինչեւ 1953՝ մինչեւ Ստալինի մահը, ըստ վերեւների հրահանգի, արգելուած էին անեկդոտների գրքերի հրատարակութիւնը, հետեւաբար չէին կարող հրատարակուել նաեւ ստայօդ՝ անհրական նմուշները: Եւ միայն 1954ից յետոյ դրանք սկսուեցին շռնդալից հրատարակուել՝ դրանցում ընգրկելով նաեւ խորհրդային ղեկավարներ Լենինի, Ստալինի, Խրուշչովի («Լենինի մտերիմը»[51], «Վազվզում էր»[52], «Աւագիմն ու Լենինը»[53] եւն.), 2րդ աշխարհամարտի ժամանակ «հերոսութիւն» ցուցաբերածների («Ուբիտիքը» – իմա՝ խփուածները[54], «Պատմըմ ա Եղէգնուտ գեղի բնակիչ Ղոռնանց Արտաւազը»[55]) եւ գերի ընկածների ու Հիտլէրի հետ հանդիպման[56], Չեխոսլովաքիա-

---

[47] *Հայկական զրոյցներ, առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ եւ իմաստուն խօսքեր*, պատր. Կարապետ քահանայ Գայֆայեան, տպ. Պոզաճեան, Լոս Անճելըս, 1944, էջ 33, էջ 51

[48] *Գիրք առակաց*, էջ 159:

[49] Արշակ Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Մալաթիոյ հայոց, տեղագրական, պատմական եւ ազգագրական,* հրատ.՝ Մալաթիոյ կրթ. ընկերութեան, տպ. Սեւան, Պէյրութ, 1961, էջ 1186-87:

[50] Աբէլեան, *Հէյ՛, Հէյ՛, Հէյ՛...*, էջ 137-53:

[51] Ս. Աբազեան, *Նոյեմբերեան կատակներ, անեկդոտներ, սրամտութիւններ*, «Արմինֆօ» հրատ., Վանաձոր, 1999, էջ 54:

[52] Նոյն:

[53] Բենիկ Ղուլեան, *Գիւլիստան. պատառիկներ մօտիկ անցեալից*, «Զանգակ-97», Երեւան, 2004, էջ 36-37:

[54] Նոյն:

[55] Արմէն Շ. Սարգսեանի գրառումներից (անձնական արխիւ):

[56] *Կատակում են մովսէսցիները* (գրառողներ՝ Ա. Պապեան, Հ. Պապեան), «Նոյեան տապան», Երեւան, 2012, էջ 11:

յի կռիւների[57] վերաբերեալ նիւթեր:

1959ից ակադեմիկոս Յովսէփ Օրբելու նախաձեռնութեամբ սկսւում են նաեւ հայ ժողովրդական հեքիաթների բազմահատորեակի հրատարակման աշխատանքները: Առ այսօր հրատարակուած 18 հատորներում ընդգրկուել են տարբեր պատմաազգագրական շրջաններից գրառուած 13 ստապատում[58]:

1970ից ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտը ձեռնարկում է «Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն» մատենաշարի (ՀԱԲ) հրատարակութիւնը, որի հատորներում տարբեր տարածաշրջանների բանահիւսական նիւթերի հետ պարբերաբար տեղ են գտնում նաեւ ժողովրդական ստապատումներն ու սուտասելուկները[59]:

1954ից ստապատումներ են ընդգրկւում ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտուտի բարբառագիտական ուսումնասիրութիւնների նմուշների բաժիններում[60],

---

[57] 1968 Օգոստոսին ԽՍՀՄ զօրքերը մտան Չեխոսլովաքիա՝ ճնշելու ժողովրդական շարժումը:

[58] «Ստախօս հովիւը» եւ «Ագահ հարուստը», *Հայ ժողովրդական հեքիաթներ* (*ՀԺՀ*), *հատոր 1*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1959, էջ 524, 527-28. նաեւ՝ «Սուտասան», «Սուտ հեքիաթ» եւ «Սուտլիկ աւչու հեքիաթը», *ՀԺՀ, հատոր 2*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 415, 513-16, 517-20. նաեւ՝ «Սոտ ըսողներէն նաղլը» եւ «Աշանցիների սոտը», *ՀԺՀ, հատոր 7*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 288, 381. նաեւ՝ «Սուտլիկ ֆորսկանի հեքիաթը», *ՀԺՀ, հատոր 8*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, Երեւան, էջ 709-10. նաեւ՝ «Սուտուտիկ» եւ «Հարուստի սուտ ու աղքըտի սուտ», *ՀԺՀ, հատոր 10,* ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 505, 324. նաեւ՝ «Իրեք ախպէր, ճոչ սութ հեքիաթ», *ՀԺՀ, հատոր 14*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1999, Երեւան, էջ 330-31. նաեւ՝ «Երկու սուտասան», *ՀԺՀ, հատոր 16*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2009, Երեւան, էջ 279-80. նաեւ՝ «Սուտ ասողը», *ՀԺՀ, հատոր 17*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 2012, էջ 583-84:

[59] Գ. Գէորգեան, «Ղզլար», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հատոր 10*, ԳԱ հրատ., Երեւան, 1980, 6 նմուշ՝ էջ 89, 90, 90, 90, 90, 90. նաեւ՝ Էսթեր Խեմչեան, «Տաւուշ», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հատոր 21*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2000, 2 նմուշ՝ էջ 184, 195-98. նաեւ՝ Էսթեր Խեմչեան, «Իջեւան-Ձորափոր», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հատոր 25*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2008, 6 նմուշ՝ էջ 292-93:

[60] Աղայեան, էջ 361. նաեւ՝ Ալեքսանդր Մարգարեան, *Գորիսի բարբառը*, ԵՊՀ, Երեւան, 1975, էջ 287-88. նաեւ՝ Ռազմիկ Մարկոսեան, *Արարատեան բարբառը*, «Լոյս» հրատ., Երեւան, 1989, էջ 258-59, 239. նաեւ՝ *Ագուլիսի բարբառի մասունքներ*, աշխատ.՝ Աբգար Այվազեան, 2րդ հրատ., «Գասպրինտ» հրատ., Երեւան, 2012, էջ 163, 169:

որոշակի տեղավայրերի[61] եւ տարածաշրջանների[62] նուիրուած գրքերում ու ազգագրական-բանահիւսական ժողովածուներում[63]:

Անցեալ դարում գրառած անտիպ ստապատում-սուտասելուկներ կան ինչպէս ՀՀ պետական արխիւներում[64], այնպէս էլ անձնական հաւաքածուներում[65]:

Այսօր էլ տարբեր առիթներով շարունակում են կենցաղավարել եւ շրջանառուել հայկական ստապատումներն ու սուտասելուկները, ինչի ապացոյցը նաեւ վերջին շրջանում դիմատետրի տարբեր հարթակներում տեղադրուած նիւթերն ու դրանց արձագանգներն են:

Իսկ ինչպէ՞ս են մեզ փոխանցուել ստապատում-սուտասելուկների՝ շուրջ 150ամեայ տպագիր եւ անտիպ նիւթերը:

Գրառումների մի մասը տպագրուել է գրական արեւելահայերէնով կամ արեւմտահայերէնով՝ երբեմն հերոսների խօսքի մէջ պահպանելով տուեալ տարածքի խօսուածքը:

Որոշ բանահաւաքներ, բանագէտներ, ժողովրդագէտներ, բարբառագէտներ, բարեբախտաբար պահպանել են ասացողի բարբառը: Նրանցից ոմանք (Չոլաքեան[66]) դժուարընկալ բարբառներով նմուշների հետ տուել են նաեւ դրանց գրական հայերէնի վերածած տարբերակները:

---

[61] Մամիկոն Ասատրեան, *Արծուանիստ*, «Արամէ» բարեգործական գիտամշակութային ընկերութիւն, «Լուսաբաց» հրատ., Երեւան, 2006, էջ 290-91. նաեւ՝ Վահան Աւետիսեան, *Վարդաձոր*, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2008, Էջ 221-22. նաեւ՝ Աւագ Խառատեան, *Մարգահովիտ*, Սիմ տպագրատուն, Վանաձոր, 2011, 3 նմուշ՝ էջ 244:

[62] *Կայրակում է Գորիսը: Սրախօսութիւններ եւ անեկդոտներ*, «Մուշ», Գորիս, 1994, էջ 16, էջ 5-6, էջ 6-7. նաեւ՝ Չոլաքեան, *Քեսապ, Բ. հատոր*, էջ 398-99. նաեւ՝ Աբազեան, էջ 36, 54, 55-56. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Պոլսահայ անգիր բանահիւսութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 183:

[63] *Պատմութիւն Անթէպի հայոց, Գ. հատոր*, էջ 365-66. նաեւ՝ Վերժինէ Սվազլեան, *Կիլիկիա, արեւմտահայոց բանաւոր աւանդութիւնը*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1994, էջ 67. նաեւ՝ *Համշէնահայ բանահիւսութիւն*, Հաւաքեց, կազմ. եւ ծանօթ.՝ Յակոբ Գուրունեան, «Լոյս» հրատ., Երեւան, 1991, էջ 72-73, 74-75, 111-12. նաեւ՝ Յովհաննէս Յովսէփեան, *Ղարադաղի հայերը. հտր. 2, բանահիւսութիւն*, Գիտութիւն, Երեւան, 2009, էջ 484-500:

[64] ՀԱՀ, ՀԳՄԿի ֆոնդ, 1336, ցուցակ 7, գործ 713, Հրաչեայ Յակոբեան, Մանկուց լսածներից, փչոցներ, էջ 31. նաեւ՝ «Սուտասանը», ԳԱԱ ՀԱԻ բանահիւսութեան արխիւ, Մուշեղ Յակոբեանի թղթապանակ. նաեւ՝ Սարգիս Հայկունի, «Էրկու սութսան», ԳԱԹ, տետր 9, Է մաս.Առասպելներ, էջ 7:

[65] Արմէն Շ. Սարգսեանի հաւաքածու:

[66] Չոլաքեան, «Քա՛լ տըղէն սէօտը՝ ճաղատ տղուն սուտը», *Քեսապ, Բ. հատոր*, էջ 444 (ամբողջականը՝ *Ահեկան*, 4:1969, էջ 38):

Գրառողների մի մասն էլ, հիմնականում՝ գրողներ (Թումանեան[67], Քոչար[68], Մկրտիչ Սարգսեան[69], Աբէլեան[70] եւ այլք), ստապատումները մեզ են փոխանցել գրական մշակումներով:

Ամէն դէպքում, այդ բոլոր նիւթերն էլ, շնորհիւ գրառողների, հայ բանաւոր մշակոյթի փրկուած հարստութիւնն են եւ այսօր՝ գիտակրթական այս աննախադէպ զարգացման ժամանակներում անգամ, շարունակում են օգտակար լինել մեր ժողովրդին, եւ յատկապէս, մատաղ սերնդին: Ինչպէս Թումանեանի «Սուտասանը» եւ «Սուտլիկ որսկանը» ստապատումները, գրառուած տարաբնոյթ նմանատիպ նմուշները եւս իրենց կառուցուածքով, առանձնայատուկ կերպարներով եւ զաւեշտ առաջացնող բովանդակութեամբ աներկբայ կարող են հաճոյք պատճառել տարբեր տարիքային խմբերի ունկնդիրներին: Իբրեւ ժողովրդական բանարուեստի գեղարուեստական ինքնատիպ նմուշներ՝ դրանց լաւագոյնների հիման վրայ գրուած բեմագրերը տիկնիկային թատրոնների եւ մանկապարտէզներում անցկացուող միջոցառումների համար հրաշալի աղբիւր են:

Այսպիսով, ԺԹ.-ԻԱ. դարերում արեւմտահայոց եւ արեւելահայոց պատմաազգագրական շրջաններում գրառուած եւ տարատեսակ տպագիր եւ անտիպ աղբիւրներում տեղ գտած ստապատում-սուտասելուկների յենքի վրայ կատարուած սոյն ուսումնասիրութեամբ առաջին անգամ փորձ է արւում մասամբ լրացնել հայ բանագիտութեան ասպարէզում առկայ բացը՝ մասնագէտներին հրամցնելով մինչեւ այժմ չուսումնասիրուած ժողովրդական երգիծանքի այս ինքնատիպ տեսակների առանձնայատկութիւնները, գրառման, հրատարակման եւ ուսումնասիրման պատմութիւնը, ժողովրդի, բանագէտների եւ բանահաւաք-հրատարակիչների կողմից շրջանառուող եզրաբառերը, անշուշտ, զուգահեռ ներկայացնելով նաեւ մեր սեփական մօտեցումներն ու տեսակէտերը:

---

[67] Յովհաննէս Թումանեան, «Սուտասանը» եւ «Սուտլիկ որսկանը», *Ընտիր երկեր,* «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1978, էջ 367:

[68] Հրաչեայ Քոչար, «Արուեստի փիլիսոփայութիւնը. սուտլիկ Սարօն», *Ընտիր երկեր՝ երկու հատորով, հատոր առաջին,* «Հայաստան» հրատ., Երեւան,1975, էջ 137:

[69] Մկրտիչ Սարգսեան, «Ինքնատիպ խօսք» եւ «Մուքէլի ասքը», *Երկերի ժողովածու, Դ. հատոր,* «Հայաստան» («Գրական հայրենիք») հրատ., Երեւան, 2005, էջ 60-116:

[70] Աբէլեան, *Հէլէ՛, Հէլէ՛, Հէլէ՛...*, էջ 149-50:

## ARMENIAN POPULAR/FOLK COCK-AND-BULL STORIES

(Summary)

ARMEN SARGSYAN
armensargg@gmail.com

For the last 150 years, since 1876, Armenian untrue, fake, unreal, and false folk tales have been published in books with compilations of humorous folktales, anecdotes, fairy tales, and proverbs.

After collecting a large number of such fake tales, the author singles them out and renames them as cock-and-bull stories/tales, due to their differentiating features. These features differ in the types of subject matter, structure, messages and characters of humorous folktales, fairytales, proverbs or anecdotes.

This is the first time such a group has being discerned and studied.

Within Western and Eastern Armenian ethnographic circles people have called such fake story tellers *pechan*, blowers, fakers, sea-shooters, air-fighters, wind hammerers/beaters, boastful blowers, and such tales fake tales, fake fairytales.

Unlike the liars, about whom people have created several negative and critical proverbs and sayings, these faketellers/narrators are not dangerous people for their surroundings. The teller is a boastful person, and he narrates his fake stories in such a lively, juicy way that both the audience and the teller enjoy it.

The author observes that unlike some other folkloric genres which are gradually disappearing and becoming less popular, these cock-and-bull stories, like humorous anecdotes and tales, continue to survive and reshape themselves and acquire new material according to modern lifestyles and value systems.

# ՆԻՒԹԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՓՈԽԱՏԵՂՈՒՄԸ ՀՐԱՉԵԱՅ ՍԱՐԻԲԷԿԵԱՆԻ *ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԻ ԱՐԵՒԸ* ԵՒ *ԱՊՈՒՇՆԵՐԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ* ՎԷՊԵՐՈՒՄ

**ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ**
karine.rafaelyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Հրաչեայ Սարիբէկեանը ծնուել է 1979ին, Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), ստեղծագործում է արձակ, նաեւ գրականագէտ է, բանասիրական գիտութիւնների թեկնածու: Առաջին անգամ տպագրուել է *Գարուն* ամսագրում, 2000ին: Հեղինակ է հետեւեալ գեղարուեստական գրքերի.- *Գուշակութիւններ հայելիներով (պատմուածք եւ վիպակներ)* (2003, 76 էջ), *Երկուորեակների արեւը, (վէպ)* (2012, 216 էջ), *Ապուշների ուղեւորութիւնը (երկաթուղային վէպ)* (Անտարէս, Երեւան, 2015, 160 էջ), *Այնտեղ աչքերդ երբ բացես (պատմուածքներ եւ վիպակներ)* (2018, 160 էջ): Պատմուածքների համար արժանացել է «Նարցիս», «Գրեթերթ», «Գրանիշ» ամսագրերի մրցանակներին: Իր երկերից միքանիսը թարգմանուել են անգլերէն, գերմաներէն, հոլանտերէն, շուէտերէն, ռուսերէն, ուքրայներէն եւ արաբերէն: 2018ին լոյս է տեսել *Երկուորեակների արեւը* վէպի մակեդոներէն թարգմանութիւնը: *Ապուշների ուղեւորութիւնը* վէպի համար 2008ին արժանացել է Հայերի համաշխարհային քոնկրէսի եւ Հայաստանի գրողների միութեան «Լաւագոյն անտիպ վէպ» մրցանակին: Լոյս է ընծայել նաեւ գիտական աշխատութիւններ՝ *Յովհաննէս Պետրոսեան. մատենագէտի կեանքն ու գործունէութիւնը* (Երեւան, 2009), *Հայաստանի՝ իբրեւ հայկական ինքնութեան առանցքի ընկալումը սփիւռքահայ արդի գրականութեան համապատկերում* (համահեղինակութեամբ Արքմենիկ Նիկողոսեանի, Երեւան, 2010), *Մոդեռնիզմի դրսեւորումները 20րդ դարի հայ գրականութեան մէջ* (համահեղինակութեամբ Յասմիկ Խեչիկեանի, 2019): Հեղինակ է նաեւ շուրջ երեքտասնեակ գրականագիտական յօդուածների:

Փաստօրէն, փոքր արձակի երկու ժողովածուների հրատարակման միջեւ ընկած տասնհինգամեայ շրջանում Սարիբէկեանը գրել եւ հրատարակել է իր վէպերը՝ *Երկուորեակների արեւը* եւ *Ապուշների ուղեւորութիւնը*, որոնք էլ մեր ուսումնասիրութեան նիւթն են այս յօդուածում:

ԱՌԱՋԱԲԱՆ

*Գուշակութիւններ հայելիներով* ժողովածուից արդէն իսկ նախանշւում է այն ստեղծագործական ոճը, խորհրդապաշտական եւ իրատեսական նիւթի փոխազդեցութիւնների, նիւթական եւ վերացական աշխարհների փո-

խատեղումների այն դաշտը, որում իր ասելիքն է կառուցում Սարիբէկեանը: *Գուշակութիւններ հայելիներով*ի առաջաբանում Գուրգէն Խանջեանը նշում է. «*Հրաչը, առհասարակ, շատ անսպասելի եւ ուշագրաւ է վարում ժամանակ կոչուած երեւոյթը – իրականի եւ առեղծուածայինի սահմանով, այս արահետն այն տարածքն է, ուր կայանում է իսկական գրականութիւնը, Հրաչեայ Սարիբէկեանն արդէն ձեռք է բերել այդ տարածքը, գտել է: Սրա հետ միասին, ասես ո՛չ Հրաչի, այլ նրա գրած այդ տարածքի պահանջով, գտնուած է նաեւ շատ ինքնատիպ, իւրայատուկ լեզուամտածողութիւն, ոճ, իրերի եւ մարդկանց, իրերի եւ իրերի, մարդկանց եւ բնութեան, մարդկանց եւ մարդկանց փոխյարաբերութիւնները դիտարկելու, իմաստաւորելու շատ հետաքրքիր, յաճախ անակնկալ ձեւ. աշխարհն այդպէս է տեսնում Հրաչեայ Սարիբէկեանը, եւ սա թանկ ձեռքբերում է մեծ գրականութեան մեկնարկին, որովհետեւ սա յուշում է, որ Հրաչեայ Սարիբէկեանը գտել է ինքն իրեն, եւ հիմա այն ամէնը, ինչ տեսնում, լսում, շօշափում, համտեսում, հոտոտում, մտածում է նա՝ չեն փախչի նրա ձեռքից, նրա ներսում կը բախուեն, կը համադրուեն, կը տարրալուծուեն, կը ձեւաւորուեն եւ ապա կը ներկայանան մեզ որպէս աշխարհընկալման եւս մէկ ուշագրաւ, եզակի տարբերակ, գրականութիւն*»[1]:

Այս ժողովածուում, ինչպէս եւ *Այնտեղ աչքերդ երբ բացես*ում Սարիբէկեանն իր գրականութեան տարածք է բերել աստուածաշնչեան ճշմարտութիւններն ու դրանց շուրջ խորհրդածումները, արեւի, ժամանակի, հայելիների, գնացքների ինքնօրինակ մեկնաբանութիւնները: Գրողը առերեւոյթ պարզ ու ծանօթ իրողութիւններին վերագրում է առեղծուածային, անշօշափելի բովանդակութիւն:

Ահա, օրինակ, հայելու խորհուրդը՝ ըստ Սարիբէկեանի, որը տրուած է «Գուշակութիւններ հայելիներով» վիպակում եւ յետագայում արծարծուածծաւալուած միւս երկերում. «*Կոտրուած հայելիները դժբախտութիւն են գուշակում: Հայելու այն կտորը, որի մէջ փշրուելու պահին կամ փշրուելուց յետոյ երեւացել է ձեր աչքը, քնած ժամանակ պահէք բարձի տակ՝ որպէս արթուն աչք*»[2]:

Մէկ այլ խորհրդանիշ՝ անդունդը, ընդգծուած է առաջին իսկ ժողովածուում եւ յետագայում էլ մնայուն թեմա է Սարիբէկեանի գործերում: «Կայէնի արդարացումը» վիպակում կարդում ենք. «…. *պառկեցի քնելու եւ երազում ինձ նորից անդունդի եզրին գտայ*» (էջ 98): Անդունդը կեանքի ու մահուան միջեւ ձգուող ջրբաժան գիծ է Սարիբէկեանի երկերում: Նոյն

[1] Հրաչեայ Սարիբէկեան, *Գուշակութիւններ հայելիներով (պատմուածք եւ վիպակներ)*, Զանգակ, Երեւան, 2003, էջ 4: Այս ժողովածուից յետագայ մէջբերումները կը լինեն այստեղից:

[2] Հրաչեայ Սարիբէկեան, *Այնտեղ աչքերդ երբ բացես (պատմուածքներ եւ վիպակներ)*, Անտարէս, Երեւան, 2018, էջ 153: Այս ժողովածուից յետագայ մէջբերումները կը լինեն այստեղից:

վիպակում այսպէս է մեկնաբանում իր եւ անդունդի փոխկապուածութիւնը հերոսը. «*Երբ ես դեռ ողջ էի քեզ նման, սովորութիւն ունէի անդունդը քարեր շպրտել. սովորութիւնները մահից զօրեղ են ու տեւական: Հիմա էլ եմ քարեր նետում՝ այն ժամանակ ներքեւ, հիմա՝ վերեւ, թէեւ իմ շպրտած ոչ մի քար անդունդից դուրս չի գալիս, բոլորն էլ նորից վերադառնում են: Վերջերս, սակայն, ինձ յաջողուեց ահռելի մի քար շպրտել վերեւ, որ հրաշքով դուրս պրծաւ անդունդից*» (էջ 113): Անդունդի եւ Սարիբէկեանի հերոսի միջեւ յարաբերութիւնների մէկ այլ դրսեւորման կը հանդիպենք «Երկուորեակների արեւը» վէպում:

Խորհրդաւորութեան մէկ այլ շերտ է վերագրւում ժամանակ-ժամացոյց հասկացութիւններին: «*Զգօն եղէք, այսօր վաղուայ օրն է*» (էջ 112),- կարդում ենք «Կայէնի արդարացումը» վիպակում: Ընդ որում՝ այս միտքն առնուած է մեծ եռանկիւնու մէջ, մի բան, որ յաճախ հանդիպող, սովորական դարձած արտասովորութիւն է Սարիբէկեանի երկերում. նա իր գիրն աւելի տպաւորիչ դարձնելու նպատակով դիմում է պատկերների, գծանշումների, գեղարուեստական արձակի բաղադրիչ դարձնում նկար-խորհրդանշանները: Այս պատկեր-գծանշումները դառնում են գրական խօսքի պարագայական ձեւաւորումներ:

Այս խորհրդանիշ-առարկաները, անորսալի երեւոյթ-թեմաները իրենց յարակայուն տեղն ունեն Սարիբէկեանի վէպերում նոյնպէս. «Երկուորեակների արեւը», «Ապուշութիւնների ուղեւորութիւնը» լայնածաւալ արտապատկերներն են այն նիւթի, որոնք նա մատուցել է փոքր արձակի գործերում:

### *ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԻ ԱՐԵՒԸ*

Սարիբէկեանի գործերում առհասարակ դժուար է զատորոշել եւ յստակ գծել իրականութեան ու երեւակայութեան սահմանները: Նա ասես ոչ միայն ընթերցողին է պարտադրում խարխափել այդ չորոշակիացող տիրոյթների միջակայքում, այլեւ ինքն է յայտնւում այդ խարխափումների ծիրում եւ ճիգ է անում ելք գտնել իր իսկ հիւսած սարդոստայնից:

«Երկուորեակների արեւը» պատմութիւն է մի ընտանիքի մասին, որտեղ երկուորեակութիւնը սերնդէսերունդ փոխանցուող ճակատագիր է: Ընթերցողներս, հիմնականում վկայ ենք դառնում երկուորեակների երրորդ սերնդի արկածաշատ, առեղծուածային կեանքի դիպուածներին, բայց յիշողութեան թէլը վէպում կատարուող իրադարձութիւնները տանում -հասցնում է մինչեւ առաջին սերունդ. հերոսների խօսքի, վարքի, հեղինակի յուշումների միջոցով հնարաւոր է դառնում հասնել վիպական գործողութիւնների նախասկզբում թաքնուած գաղտնիքներին եւ ըմբռնել պատճառահետեւանքային այն շղթան, որի՝ մեզ հասանելի ծայրին յայտնուած երկուորեակ տղեկներն իրենց բաժին տարուբերումների մէջ են, իսկ մենք՝ այդ տարուբերումների ականատես-մասնակիցը:

Վէպի հերոսներն են մանկահասակ երկուորեակներ Արեգը, Յարութը, նրանց տարեկից Շողերը, Զապէլը՝ երկուորեակների մայրը, Պօղոսը՝ երկուորեակների հայրը, հայր Թովմասը (աշխարհիկ անունը՝ Պետրոս)՝ երկուորեակների հոգեւորական հօրեղբայրը, որն իր հերթին երկուորեակ տղեկների կորած-փնտռուող հօր երկուորեակ եղբայրն է, Յարութ պապը: Վիպական պատումում շօշափելի ներկայութիւն են նաեւ ընտանիքի հանգուցեալ անդամները՝ երկուորեակների տատը, Առաքել մեծ պապը:

Հեղինակը երկուորեակներին միմեանց հակադրելու եւ կամ մէկմէկու փոխլրացնելու միտումն է զարգացնում վէպում: Երկուորեակութեան բնական-ֆիզիոլոգիական իրողութիւնը Սարիբէկեանի գրչի տակ դառնում է խորհրդապաշտական, վերերկրային երեւոյթների առարկայացում, որի շուրջ դատողութիւնները հանգիստ չեն տալիս ո՛չ վէպի ամենատարեց հերոսին՝ Յարութ պապին, ո՛չ նրա հոգեւորական որդուն՝ Պետրոս-Թովմասին, ո՛չ նրա մանկահասակ երկուորեակ թոռներին, ո՛չ էլ, իհարկէ, ընթերցողին:

«*Երկու բան է կրկնւում մեր տոհմում, նախ՝ ինքնակործանման բնազդը. էս շրջակայքում ոչ մի տոհմում էսքան ինքնասպանութիւն չկայ, ինչքան մեր տոհմում, յետոյ՝ երկուորեակները. մենք ոչնչացնում ենք, Աստուած բազմապատկում է մեզ …. փղամարդու սաղմի՞, թէ՞ կնոջ արգանդի մէջ է երկատման գաղտնիքը: Եթէ կնոջ արգա՛նդն է մասնատում նախասահմանուած ամբողջութիւնը, ուրեմն երկուորեակներից մէկն անպրոհելի ամբողջի դիւական կէսն է, որ միւսի բախտի օրինակով մտածում է իր բաց թողած հնարաւորութեան մասին*»[3]: Սրանք Յարութ պապի խոհերն են, որոնք հաստատագրւում են վիպական գործողութիւնների ընթացքում երկուորեակների հակասական վարքի դրսեւորումներով: Բոլոր սերնդի երկուորեակները միմեանցից խիստ տարբեր, անգամ հակոտնեայ տեսակներ են: Օրինակ՝ Արեգին բնորոշ են միամտութիւնը, երեւոյթների մէջ իր մանկական պատկերացումների շրջանակում խորամուխ լինելու մղումները, բարութիւնը, գեղեցիկի ընկալումը: Նրա երկուորեակ եղբայր Յարութի ամենացայտուն յատկանիշերն են արկածախնդրութիւնը եւ դաժանութիւնը: Դաժանութիւնն ասես նրա կոչումն է, տարերքը, խոշտանգումների հակուածութիւնը նրան մղում է որոնել նորանոր ահասարսուռ մեթոդներ՝ իր զոհերին տանջելու համար. յիշենք մեղուի կմախքը տանող մրջիւններին ոտքի մի հարուածով կոխկռտել-սպանելը, ծղրիդին, լուցկու տուփը դագաղ սարքած, թաղելը, մեծ պապի շիրմաքարը կոտրելը, գորտին փչելն ու երկաթուղագծերին կապելը, առնէտի ձագի աչքերը հանելը, Շողերի տիկնիկին բզկտելը: Եւ վերջապէս, դաժանութեան ամենասարսռեցնող փաստը խմորւում է Յարութի ուղեղում եւ գործւում սեփական

[3] Հրաչեայ Սարիբէկեան, *Երկուորեակների արեւը*, Անտարէս, Երեւան, 2012, էջ 133-34: Վէպից յետագայ մէջբերումները կը լինեն այստեղից:

անձի հանդէպ՝ իբրեւ մի հնչեղ հաւաստիացում Յարութ պապի այն մտքի, թէ ոչ մի տոհմում այնքան ինքնասպան եղողներ չկան, որքան իրենցում: Ինքնասպանութեան՝ Յարութի տարբերակը բացառիկ է, կ'ասէի՝ փորձագիտական-հետազօտական. նա պառկում է փապուղիում սուրացող գնացքի տակ՝ երկաթուղագծի արանքում, ինքն իր համար այդ փորձարկումի հնարաւոր ելքը պարզելու նպատակով:

Բայց որքան էլ տարբեր են երկուորեակներն իրենց բնաւորութեամբ, վարքով, ճակատագիրը նրանց անխուսափելի խաչաձեւումներ է պարտադրում, որոնց արդիւնքում նրանք գողանում-սեփականում են իրենց երկուորեակ կէսի ինքնութիւնն ու բառացիօրէն ապրում նրա կեանքով, նրա փոխարէն: Այսպէս, Արեգ եւ Յարութ երկուորեակների հայրը՝ Պօղոսը, առեղծուածային բացակայութիւն է վէպում: Ոչ մի որոշակիութիւն չկայ նրա կերպարի, ճակատագրի վերաբերեալ: Բայց այս չնիւթականացող անձն ու նրա ճակատագիրը մարմին են առնում երկուորեակ եղբօր՝ Պետրոս-հայր Թովմասի կերպարով: Պօղոսի վերադարձին սպասելու անիմաստութիւնը գիտակցող եղբայրն ու կինը որոշում են բեմադրել այդ անհնարին վերադարձը, քանի որ Պօղոսից երկար ժամանակ լուր չկար, նրան սպասելը դարձել էր անիմաստ, գուցէ զոհուել էր, գուցէ որոշել այլեւս չվերադառնալ. այս է յուշում Սարիբէկեանի պատումը. Պետրոս երկուորեակը յայտնւում է վիպական գործողութիւնների շղթայում՝ իբրեւ գտնուած-տուն դարձած Պօղոս, իբրեւ Զապէլի ամուսին, Արեգի եւ Յարութի հայր: Բայց Յարութ պապը չի հաւատում Պօղոս որդու վերադարձին, թէկուզեւ մինչ այդ աղով կուրացրել էր աչքերն ու ոչինչ չէր տեսնում: Նրա հիմնաւոր կասկածները յայտնի են դառնում նաեւ թոռանը՝ Արեգին, եւ վերջինս, իրերի ու երեւոյթների մէջ խորամուխ լինելու իր էութեամբ ջանում է վերլուծել կատարուածը. «*…երբ պապն ասել էր, որ անունները նշանակութիւն ունեն, հօրեղբօրը հարցրել էր, թէ ինչ է նշանակում Թովմաս, եւ հօրեղբայրը պատմել էր, որ Թովմասը տասներկու առաքեալներից է եղել, որ Թովմաս նշանակում է երկուորեակ: Դրա համա՞ր էր ձեռնադրուելիս Թովմաս անունով կնքուել: Ուրեմն իր հօրեղբայր Թովմա՞սն էր (մտքի մէջ դեռ նրան Պետրոս չէր կարողանում անուանել. նա Պետրոս էր հօր՝ իր պապի համար, իսկ Աստուա՞ծ… ի՞նչ անունով է Աստուած դիմելու նրան) եկել իր հայրը լինելու: Եւ վանքը լքել, Աստծու բացակայութե՞ն էր թողել*» (էջ 165):

Այս մտածումներից ծայր է առնում իր հայր Պօղոսի մասին դատողութիւնների հակասական շղթան, որը գնում-հիւսւում է աստուածաշնչեան նիւթին. «*Յիշեց հօրեղբօր խօսքերը, թէ Աստուած նոյնպէս անյայտութեան մէջ է, եւ յանկարծ կռահեց, որ անյայտութիւնը Երկնքում է հենց: Իմ հայրը Երկնքու՞մ է: Յանկարծ պարզեց, թէ ինչու է աղօթքի մէջ դիմում ոչ թէ Աստծուն, այլ՝ հօրը. «Հայր մեր, որ երկնքում ես»: Իմ հայրը Երկնքու՞մ է: Իմ հայրը անհետացել ու դարձել է Աստուա՞ծ: Մի՞թէ ոչ ոք չէր կռահել դա:*

*Յանկարծ հասկացաւ: Հասկացաւ, թէ ինչու իր անհետացած հայրը շիրմաքար չունի, ի տարբերութիւն անհետացած ուրիշների, ում շիրիմները գերեզմանոցում են: Որովհետեւ շիրիմները մարդկանց համար են եւ ոչ թէ Աստծու: Հասկացաւ նաեւ, թէ ինչու չէր աղօթում իր հայրը: Աստուած ինքը իրեն հօ չի՞ աղօթի: Հօրեղբայրն էր երեւի իմացել միայն: Հասկացել էր, որ հայրը նախընտրում է անյայտութեան մէջ Աստուած մնալ, քան վերադառնալ ու լինել իր հայրը: Յայտնութիւնը յետաձգւում էր, հօրեղբայրը դրա համար էր լքել վանքը: Յանկարծ հասկացաւ նաեւ երկուորեակների առեղծուածը: Յիշեց, որ հօրեղբօրը հարցնում էր, թէ հնարաւո՞ր է, որ Աստուած նման լինի իր հօրը: Յիշեց, որ հօրեղբայրը չբացառեց, ասաց, որ Աստուած էլ է մարդ, բայց ամէն դէպքում Աստուած է կամ նման մի բան: Ակնարկեց, որ իր հայրն Աստուած է, իսկ ինքը՝ նրա պատկերով մարդը, որ ապրում է եկեղեցում, ուր իր հայրը երբեք չէր գալիս*» (էջ 170):

Երկուորեակների փոխատեղումի սահմռկեցուցիչ օրինակ է Արեգի ու Յարութի արարքը՝ Յարութի ճակատագրական արկածից առաջ, երբ վերջինս առաջարկում է Արեգին փոխել իրենց շապիկները. «*Եղբայրը կանչեց իր եւրեւից, փսփսաց ականջին, փոխեցին իրենց շապիկները, եղբայրը մոշ քաղեց ու իր ինքնութեան տակ մօտեցաւ Շողերին*» (էջ 211):

Այս մանկական չարաճճիութեանը հետեւում է Յարութի չգիտակցուած ինքնասպանութիւնը՝ փապուղու միջով անցնող գնացքի տակ պառկելու տարբերակով: Եւ այսպէս, Յարութը փապուղի էր մտել Արեգի հագուստով, այսինքն՝ իբրեւ Արեգ: Եւ փապուղին կլանել-տարել էր Արեգի ինքնութիւնը: Շողերը, որի աչքերի առջեւ էր կատարուել ամէն բան, փապուղու խաւարի առջեւ կանգնած՝ կանչում է Արեգին. «*Արե՞գ,- հարցրեց Շողերը թունէլին: Այդտեղ, թունէլի առջեւ կանգնած, տղան առաջին անգամ զգաց, թէ իրականում ինչքան էր խորհրդաւոր, որ շփոթում էին իրենց*» (էջ 212):

Յարութի ֆիզիկական մահը Արեգի ինքնութեան մահն է նիւթականացնում: Եւ փապուղին, որ այս ու այն աշխարհների միջեւ ձգուող հանրայայտ խորհրդանիշն է, Սարիբէկեանի վէպում դառնում է կեանքից մահ տանող առարկայական ճանապարհ: Ու այդ ճանապարհի եզրին կանգնած՝ Շողերն ու Արեգը հանդիպադրւում են իրենց երկուորեակ-կէսերին. «*Շողերը բղաւեց թունէլից ներս. «Արե՛գ, վազի»: Տղայի ներսով դող անցաւ, որ աղջիկը համոզուած էր, թէ ինքը ԱՅՆՏԵՂ է, եւ ոչ թէ ԱՅՍՏԵՂ, փագնապեց, որ թունէլից ի՛նքը կարող է դուրս գալ յանկարծ, իսկ թունէլից աղջկայ անյայտ երկուորեակի պատասխան ձայնը լսուեց. «Րե՛գ, րե՛գ, զի՛, զի՛, զի՛»* (էջ 212):

Իդէպ, արձագանգի խորհուրդը եւս շեշտադրուած է Սարիբէկեանի ստեղծագործութիւններում: Եւ այն զուգընթաց է մահուան խորհրդին: Դեռեւս առաջին ժողովածուում լոյս տեսած «Կեցութիւնը եւ Soնo Տալեանը» պատմուածքում եւս հանդիպում ենք այդ զուգադրութեանը. «*Soնo Տալեա-*

*նը ժայռի գլխին կանգնել, երիցուկի թերթիկներ էր պոկում. սիրում է, չի սիրում, սիրում է, չի սիրում, վերջին թերթիկը պոկեց՝ չի սիրում: Սոյն վէպի հեղինակը չգիտի՝ ով չէր սիրում Տօնոյին: Տօնոյի դէմքին յուսահատութիւն յայտնուեց, նրա բերանից դուրս թռաւ «Լինել, թէ չլինել»ը: Չգիտես ինչու՝ իր ձայնն իրեն արձագանգեց անգլերէն.*

*- … not to be…*

*Հայերէն արձագանգը լսելու համար Տօնօն յամառօրէն կրկնեց.*

*- Լինե՞լ, թէ չլինե՞լ:*

*- Չլինե՞լ,- արձագանգեց նրան իր ձայնը*» (էջ 73):

Չէ՞ որ արձագանգն ինքն էլ ձայնի երկուորեակն է, ուրեմն, պատկերաւորումի այս հնարն ընտրուած է ոչ պատահաբար:

Իդէպ, Սարիբէկեանը շատ գործերում նաեւ իր «երկուորեակին» է դարձնում պատումի մասնակից-հերոս, ինչպէս մէջբերուած այս հատուածում: Եթէ այստեղ նա ինքն իրեն կոչում է հեղինակ՝ չճշգրտելով անունը, ապա «Բաց մնացած շիրիմ» պատմուածքում շեշտում է նաեւ իր անունը. «*Հրաչ»,- հօրեղբօրս կինը ցնցեց, որ ուշքի հրաւիրի ինձ. գիտէր, որ իրեն չէի լսում, որ պատմուածք էի տեսնում*» (էջ 75): Սարիբէկեանը առաւել ո-րոշակիացնում է իր անձը «Ապորիա» պատմուածքում՝ հերոսի եւ ոստիկանի երկխօսութեան մէջ. «*Իջեցրեց գնացքից, ուղեկցեց կայարանի ոստիկանութեան փոքրիկ խցիկ: Հարցրեց անուն-ազգանունս: Հրաչ, ասացի՝ Սարիբէկեան*» (էջ 39):

Վերադառնալով արձագանգի Սարիբէկեանական մեկնաբանութեանը, նկատենք, որ ոչ-պատահաբար է այն զուգակցւում մահուան խորհրդաւորութեան հետ: Մահը, թերեւս, կեանքի արձագանգն է, ինչպէս երազը՝ իրականութեան: Այս երեւոյթների համադրութիւններին հանդիպում ենք թէ՛ «Երկուորեակների արեւը» վէպում, թէ՛ *Գուշակութիւններ հայելինե-րով, Այնտեղ աչքերդ երբ բացես* պատմուածաշարերում: «*Եթէ երազում ձեզ տեսնէք քնած, հաստատապէս սենեակում հայելի կայ, ձեր երազը բռնուել է իրականութեան հայելային անդրադարձով*» (էջ 129),- ահա երազի եւ իրականութեան անշօշափելի սահմանագծի մի օրինակ «Գուշակութիւններ հայելիներով» վիպակից:

Մահուան քայլերթ է Սարիբէկեանի երկերում, որտեղ մահը բազմաթիւ կերպեր է ընդունում: Կարծես հեղինակը ջանում է իր եւ ընթերցողի համար ընկալելի դարձնել մահը, թերեւս, փորձում է հաշտութեան եզրեր մատնանշել անխուսափելի այդ երեւոյթի եւ պարզ մահկանացուների միջեւ: Օրինակ՝ Արեգը պապի, հօրեղբօր հետ երկխօսութիւնների եւ իր վերլուծութիւնների արդիւնքում արտածում է մահուան իր բանաձեւը. «*Տղան ներքին վստահութիւն զգաց, որ մահը քնից ծէսով է տարբերւում միայն*» (էջ 190):

Իսկ Յարութ պապն ունի իր ձեւակերպումը. «*Երբ մենք քնում ենք, դադարում ենք գիտակցել մեզ. մեր քունը մեր նախնիների մահն է,- այսպէս*

*ձեւակերպեց պապը,- դրա համար են մարդիկ թոռներին ապուպապերի անուններով կնքում*» (էջ 44):

Եւ քանի որ փոքրիկ տղան իրերն ու երեւոյթներն ընկալելու իր կերպն ունի, մահուան մասին՝ իր արտածած բանաձեւը, նաեւ հաւատում է Աստծու մասին իր հօրեղբօր մտահայեցումներին եւ հանգուցեալին յարութիւն տալու աստուածաշնչեան յայտնի պատմութեանը, ուստի այս հաւատը նրա մէջ ամուր է այնքան, որ պապի դագաղում՝ նրա բարձի տակ, զարթուցիչ է դնում, որպէսզի մահացած պապին զանգով արթնացնի, քանզի Աստուածաշնչում է ասուած՝ մեռած չէ նա, այլ քնած է:

Մահուան թեման այսպէս առօրէական, ինքնին ենթադրելի ներկայացնող հեղինակը, սակայն, շատ հանգամանօրէն է նկարագրում աքաղաղի զոհաբերութեան ծէսը, հոգեւորականի ձեռքով ագռաւ սպանելու դէպքը, գորտին փչելու, գնացքի երկաթուղագծին կապելու եւ նրա վախճանը նախապատրաստելու արարողութիւնը:

Զոհաբերութեան, մեղքի, ներումի մասին դատողութիւններում Արեգի միտքը խորն է, բնորոշ՝ հասուն մարդուն. «*Գիտէր, որ գառն ամենաանմեղ կենդանին է, գիտէր, որ նրանք Աստծու արարածներն են, եւ անմեղութիւնից բացի, ուրիշ պատճառ չկար, որ գառանը մորթէին … Եթէ ինքն Աստուած լինէր, գառ մորթած ոչ մի մարդ դրախտ չէր թողնի: Մտածեց, որ գոմը պիտի վառի, բարկութեան արտօնութիւնն իրեն էր վերապահուած, եւ ինքը ոչ մէկին չպիտի ների*» (էջ 189):

Սարիբէկեանի հերոսներին հետապնդում է գործած կամ չգործած մեղքի ուրուականը:

Արեգը, օրինակ, մտածում է, թէ ինքն է մեղաւոր պապի կուրանալու համար, քանի որ հայելիով արեւի լոյսը գցել էր նրա աչքերին: Յարութ պապը կուրացրել է ինքն իրեն, ասել է թէ՝ ինքնասպանութեան մեղքի նման մի բան է կատարել: Հայր Թովմասը իր եղբօր ինքնութիւնը իւրացնելու մեղքով է բեռնուած: Բայց մեղքի հետ յարաբերուելու նրա գործառոյթներն առաւել ընդգրկուն են. իբրեւ հոգեւորական՝ նա պիտի փորձի գտնել Աստծոյ առաջ ոչ միայն իր, այլեւ մերձաւորների մեղքը մեղմելու հիմքեր:

«*Զանգը խփելուց յետոյ հօրեղբայրը զանգակատնից նայեց ներքեւ ու ասաց. «Ինչու՞ է Աստուած անխտիր բոլորին սպանում, իսկ մարդուն գոնէ ինքն իր վրայ ձեռք բարձրացնելու իրաւունք չի վերապահել*» (էջ 101):

Աստուածաշնչեան թեման Սարիբէկեանի վէպում ներկայացւում է տարբեր դիտանկիւններից, ծաւալւում դատողութիւնների տարբեր շերտերում: «*Հօրեղբայրն ասաց, որ ինքն իրեն կուրացնելը ինքնասպանութեան կարգի մեղք է, որ Աստուած չի ների: Պապն ասաց. «Թող չների, ամենամեծ կոյրն ինքն է*» (էջ 67): Ահա հօր եւ որդու հակասական հայեացքների բախումը Աստծոյ դատաստանի առնչութեամբ: Բայց եւ հոգեւորական հօրեղբայրն անվերապահօրէն հաշտ չէ Աստծու հետ, եթէ կասկածի տակ է

առնում ինչ-ինչ աստուածաշնչեան հասկացութիւններ, ինչպէս վկայում է նախորդիւ մէջբերուած հատուածը եւ այն հանգամանքը, որ նա, իվերջոյ, հրաժարւում է հոգեւորականի իր առաքելութիւնից ու վերածւում աշխարհիկ Պօղոսի:

Իր տարիքին անյարիր խորքով է վերլուծում աստուածաշնչեան գաղտնիքները Արեգը. «*Ինչու՞ է հոգեւորականների հանդերձը սգի գոյն. չէ՞ որ Յիսուսը յարութիւն է առել*» (էջ 106): Կամ՝ «*… հօրեղբայրը փակ աչքերով է դիմում Աստծուն, պապի կոպերը նոյնպէս փակ էին, ուրեմն, կռահեց տղան, կուրութիւնն Աստծու հետ խօսելու առաւելութիւն է տալիս*» (էջ 66):

Արեգի յարաբերութիւնները հոգեւոր հասկացութիւնների հետ չեն սահմանափակւում Աստուածաշնչի, քրիստոնէական պատկերացումների տիրոյթում: Նա, իր անունի մեկնութեանը հետամուտ, հասնում է արեւապաշտութեան ոլորտները. «*Սա Արեւի Եկեղեցին է, եւ ինքը ԱՐԵԳՆ է, իր անունն ուրիշ չէր կարող լինել, ուրեմն ինքն է Արեւի Տաճարի տիրակալը, եւ իր ձեռքին են իրաւունքի բոլոր ապացոյցները՝ ոսպնեակը, հայելին եւ ժամացոյցը, որ արեւի նման կլոր է ու ոսկեզօծ փուփով: Հայելին, որ հնարաւորութիւն է տալիս տեսնել իր հոգին, եւ օձն անգամ սարսափեց իրենից: Ինքը Արեգն է՝ Արեւին պաշտող օձերի, խլէզների, բոյսերի տիրակալ Արեգը: Արեւը թողել էր իրեն, որ ոսպնեակով արտը հրդեհի: Մարդիկ Յայտնութեան այդ նախանշանից խուճապի կը մատնուեն եւ կը խաչակնքեն՝ փոխանակ Արեւին պաշտելու: Արդէն ուզում էր, որ մարդիկ իմանան, որ ինքն է ոսպնեակով հրդեհել արտը: Ուզում էր ակնածեն իրենից: Նա տեսաւ, որ թիթեռներն էլ են Արեւին պաշտում, պարսերով նետւում են ճարճատող կրակի մէջ: Եւ կրակից նոյնիսկ Աստուածաշունչ վառուեց: Ուրեմն նրանց Աստուածն Արեւն է: Այդտեղ՝ վանքի գլխին կանգնած, Արեւի քուրմ ընծայեց իրեն, եւ Արեւը գլխավերեւում շողում էր որպէս պսակ*» (էջ 171-72):

Ինչպէս նկատում ենք, Արեգը շեշտադրում է հայելի, ժամացոյց, ոսպնեակ, հրդեհ հասկացութիւնները: Դրանք Սարիբէկեանի երկերում մշտաներկայ խորհրդանիշեր են, առաւել կարեւոր ու գործունակ են, քան նրա ստեղծած հերոսները, վիպական գործողութիւնները, պատումի գեղարուեստական զարգացումը, բախումից հանգուցալուծում ձգտող ընթացքը: Ասես ամէնը Սարիբէկեանի երկերում ծառայում է այս խորհրդանիշերը բացող բանալիները գտնելու նպատակին եւ ոչ թէ՝ հակառակը, ինչպէս լինում է սովորաբար, երբ այս կամ այն խորհրդանիշը, այս կամ այն այլաբանութիւնը ենթաշերտ է դառնում գրողի, ստեղծագործողի կարեւոր ասելիքը կամ նրա երկի կենտրոնական հերոսին կերպաւորելու համար: Ահա Յարութ պապի դատողութիւնները կոտրուած հայելու մասին. «*Տարօրինակ է,- ասաց մտամփոփ լռութիւնից յետոյ, ասես ոչ թէ տղայի, այլ իր զարմացած կէսի հետ էր խօսում,- տարօրինակ է, որ հիմա է կոտրւում. սովորաբար, հայելիները դժբախտութիւնից առաջ են կոտրւում, ոչ թէ*

*յետոյ»: Պապն անակնկալի էր եկել, որ իրադարձութիւնների գաղտնի շղթայում հետեւանքը նախորդել էր պատճառին»* (էջ 33)։ Հայելու կոտրուելուն նախորդել էր թոռան անհետացում-մահը փապուղիում: Եւ թւում է, թէ հայելին այնքան զօրեղ գործօն է, որ պապին ստիպում է իր կոտրուելու փաստը չանտեսել. ասես հայելու հարկադրանքով է Յարութ պապն իր վրայ վերցնում գալիք անխուսափելի դժբախտութեան հարուածը. նախ աղով կուրացնում է աչքերը, ապա ինքնասպան լինում:

Տղայի ձեռքին է զօրութեան միւս նշանը՝ ժամացոյցը, որ ժամանակի ցուցիչն է, եթէ անգամ կանգ է առած. «*Կառամատոյցի մեծ, անախրոնիկ՝ ժամանակից վրիպած ժամացոյցով երեքն անց էր երեսունհինգ րոպէ: Գնացքներն այդտեղ երեքն անց երեսունհինգին են ժամանում, բայց նրանց մեկնելուց յետոյ ժամանակը շարունակում է նոյնը մնալ. ժամացոյցը կանգնած է: Յայտնի է, որ ամենաճշգրիտը կանգնած ժամացոյցներն են. ո՛չ առաջ, ո՛չ ետ են ընկնում. օրուայ մէջ ճշգրիտ ժամանակ են ցուցում երկու անգամ*» (էջ 203):

Սարիբէկեանի հերոսը ժամանակի իր չափումներն է ձեւակերպում: Վէպում պարբերաբար յիշատակուող նիւթ է թիթեռների կեանքի մէկօրեայ տեւողութեան փաստը: Դա նախ զարմանքի, ափսոսանքի, յետոյ իմաստուն մեկնաբանութեան տարածք է տեղափոխում Արեգին: Նա, իվերջոյ, մեծի նման գիտակցում է, որ թիթեռը մէկ օր է ապրում, բայց դա հաւասարազօր է մարդու ապրած երկարուձիգ կեանքին: Իսկ այս ճշմարտութեան ամենաբացայայտ հաւաստումը իր ճերմակած մազերն են, որոնց պատճառով նա տարակուսանքի, պատկառանքի, չըմբռնումի զգացողութեան պառճառ է դառնում իրեն հանդիպած ծանօթ ու անծանօթ իւրաքանչիւրի համար: «*Ո՜նց են հաշուած վայրկեաններում, որ անցել էր գնացքն իր վրայով, ճերմակել մազերը, ո՜նց կարող է միքանի ակնթարթում մի ամբողջ կեանքի փեւտողութիւն անցնել*» (էջ 26): Եւ մի ամբողջ կեանքի տեւողութեան չափ կենսափորձ ունեցողի նման նա վերլուծում է իր ձեռքին եղած միւս «զէնքի»՝ ոսպնեակի հնարաւորութիւնների ու դրա հետեւանք հրդեհի նշանակութիւնը: «*Կանգնել է քիչ հեռում, կանգնել է ապշած, հաւատը չի գալիս, թէ արեւի շողը, մտնելով ոսպնեակի օպտիկական առանցք, կարող էր այդքան մեծ կրակ վառել, կրակը կարող էր դառնալ իսկական ՀՐԴԵՀ, որ մի փոքրիկ ու անմեղ շողից այդքան մեծ հրդեհ կարող էր բռնկուել: Շփոթուած է, որ հրդեհի պատճառը հենց ինքն է, բայց ի՞նքն է որ: Ինքը կարո՞ղ էր դառնալ մի բանի պատճառ, որ իրենից այդքան մեծ էր ու զօրեղ*» (էջ 148):

Այս ու այսօրինակ մտածումների մէջ Արեգը հասնում է անդունդին՝ միւս շեշտադրուած խորհրդանիշին Սարիբէկեանի երկերում: Եթէ նրա Յարութ եղբայրը սեւեռուն միտք ունէր պառկել գնացքի տակ՝ երկաթգծերի արանքում, ապա Արեգին այլ արկածախնդրութիւն էր հրապուրում՝ անդունդի վրայով անցնելը՝ լարախաղացի յանգոյն:

Արտը հրդեհելու փաստը կոծկելու միամիտ մղումն է Արեգին բերում-հասցնում անդունդի եզրին. «*Որոշեց. ոչ ոք չի իմանայ, որ արտն ինքն է հրդեհել, եթէ անցնի անդունդի եզրով: Երկու ձեռքով յենուեց վանքի եւ-նապատին, որ տեղ-տեղ ծածկուած էր մամուռով*» (էջ 152):

Իսկ քանի որ նիւթական եւ վերացական աշխարհների փոխատեղումը օրինաչափ մի բան է Սարիբէկեանի երկերում, անդունդի վրայով անցնելու Արեգի մտասեւեռումը գծում է հենց այդ փոխատեղումի երթուղին: Անդունդը Արեգի բաժին մեծ գայթակղութիւնն է՝ իբրեւ նախամարդու՝ արգելուած պտղով գայթակղութեան փոխատեղում: Արեգն սկսում է քայլել անդունդի եզրով՝ յենուած եկեղեցու, ասել է թէ՝ Աստծոյ տան պատին: Իսկ այս դէպքում Աստծուն ապաւինելու անհրաժեշտութիւնը բանաձեւուած է հայր Թովմասի խօսքում. «*Եթէ հաստատ էք ձեր հաւատի մէջ, վստահ եղէք, որ Աստուած ձեզ հետ է եւ երբեք անդունդի վրայ բաց չի թողնի ձեզ. եթէ թերի է ձեր հաւատը, երկիւղ՛ք անխուսափելի անկումից: Յանկարծ չճչա՛ք, որովհետեւ ճիչը վախ է, իսկ վախը՝ թերահաւատութիւն*» (էջ 98):

Արեգը, որ ինչպէս հասկացանք, իր խոհեմութեան, վերլուծական մտքի սեւեռումների հետ մէկտեղ՝ նաեւ իրերն ու երեւոյթները բառացի ու առարկայօրէն ընկալելու յատկանիշն ունի (ինչպէս օրինակ՝ վերեւում յիշատակուած՝ մեռած պապի բարձի տակ զարթուցիչը դնելու եւ նրա արթնացումին անվերապահօրէն հաւատալու դէպքը), անդունդի հետ յարաբերուելու իր կերպը կառուցում է խորագիտութեան եւ պարզամտութեան անհամատեղելիութիւնը համատեղելու մեթոդով: Քանի որ թէ՛ Սարիբէկեանը, թէ՛ նրա հերոսը շատ խրթին ու բազմանիստ են իրենց տարուբերումներում, ուստի ստորեւ մէջբերուող հատուածը կը լինի առաւել ծաւալուն, քանզի այն ըմբռնել-վերլուծելու հնարաւորութիւնը կարող է տարբեր լինել իւրաքանչիւր ընթերցողի համար եւ անգամ չհամընկնել ո՛չ հեղինակի, ո՛չ Արեգի, ո՛չ, առաւել եւս, մեր ընկալումներին: Եւ այսպէս, Սարիբէկեանն Արեգին բերել-կանգնեցրել է անդունդի եզրին՝ այս բառի ուղղակի եւ անուղղակի իմաստներով:

> Կարմիր թերթիկներով մի փոքրիկ ծաղիկ էր բուսել քարափի գլխին՝ թեքուած դէպի անդունդը: Քանի՞ քայլ էր իրեն բաժանում անդունդից, կէ՞ս, թէ՞ մի քայլ, մի քիչ աւելի՞ գուցէ: Կ'ուզէր չափել, եթէ դիմացը անդունդ չլինէր, քայլ կ'անէր, վստահօրէն կը կանգնէր այնտեղ, ուր հիմա անդունդն էր, բայց կեանքում մուլտֆիլմերի պէս չի. անդունդի վրայ չես կանգնի: Կարո՞ղ էր արդեօք ձեռք պարզել ու հասնել քարափի եզրին՝ քարերի միջից ծաղկած այդ մի պուտ արեանը: Պառկելու համար տարածութիւնը փոքր էր, մտածեց՝ հերիք է ձգուի ծաղկին, որ ձեռքը կախուի դատարկութեան վրայ. ինքը չի վախենայ, վախեցողը ձեռքն է:
>
> Այս էլ որերոդ անգամ անդունդը հմայում էր, որ նայի իր մէջ, քիչ էր մնում պպզէր, ձգուէր ու վերցնէր անդունդի ձեռքով իրեն պարզուած այդ դիւթական ծաղիկը, հանել այդ ալ աչքը, որ անդունդը յառել էր իրեն: Շոգի պատճառով կրակի պէս վառուող ծաղիկը, որի նմանը չէր հանդիպել երբեք, կամ տեսել էր

դաշտերում՝ կանաչի ու ծաղիկների առատութեան մէջ, իսկ այդպէս մէն-մէնակ՝ արեւից շողացող քարերի միօրինակութեան մէջ, եզակի տեսակ էր՝ Քարերի Թագուհի: Մի գեղեցիկ թիթեռ նստեց ծաղկին, թիթեռն էլ էր իր պէս քարացած այդ տարածութեան մէջ ծաղիկ տեսել: Այնքան գեղեցիկ ու վառ էր թիթեռը, որ վախեցաւ: Թեւերի վրայ նախշեր կային՝ անվերծանելի նախշեր, որ վախեցնող իմաստ էին յղում իրեն: Այդքան նուրբ ու գեղեցիկ նախշեր ինչ-որ մէկը կարող էր նկարած լինել միայն: Կանաչ ցօղունը բեկուեց անդունդի վրայ. զարմացաւ, որ լոյսը ծաղկի բարակ ցօղունին էր անգամ ստուեր բաժին հանում: Ծաղիկը ճօճուեց, բայց թիթեռին պահեց. «Ինչքա՜ն թեթեւ են թիթեռները»,- անցաւ մտքով: Կախարդուած սեւեռումով նայում էր: «ՓՈՔՐԻ՛Կ ՏՂԱՅ, ՔՈ ՀՈԳԻՆ ԱՅՆՔԱՆ ԹԵԹԵՒ Է, ՈՐ ԿԱՐՈՂ Է ՆՍՏԵԼ ԹԵԻԵՐԻՍ, ՈՒ ԵՍ ՀԱՆԳԻՍՏ ԿԱՐՈՂ ԵՄ ԹԱՓԱՀԱՐԵԼ ԻՆՁ»: Յանկարծ թիթեռը պոկուեց ծաղկից, թեւին տուեց. թիթեռը ստուեր էր թողնում: Սիրտը թպրտաց, ասես սրտի տակ անդունդ կար. այնքան էր նայել թիթեռին, որ թիթեռն իր մէջ էր մտել ու դուրս էր եկել իր միջից: Քմահաճ վերուվար էր անում ահարկու դատարկութեան վրայ, քամահրում գրաւիտացիան. թիթեռներն ասես թքած ունեն՝ մագնիսական դաշտ կայ, թէ չէ: «Տեսնես թիթեռները յիշու՞մ են ծաղիկները, տեսնես երկրորդ անգամ նստելիս յիշու՞մ են, որ այդ ծաղկի վրայ են նստել»,- անցաւ Արեգի մտքով:

Հանեց թղթէ գլխարկը, միքանի մասի պատռեց, տպագիր թիթեռներ սարքեց՝ փոքրիկ սկաւառակներ, ու բաց թողեց անդունդ: Սկաւառակները թռցնում էին տղայի հոգին. իր հոգին իրենից բաժանուել, սահուն թռիչքով իջնում էր անդունդ: Պատից կպած՝ անդունդի եզրով, շարունակեց շրջանցել վանքը: Առաջին անգամ: Ամէ՛ն: Մնում է թունէլ մտնի (էջ 155-56):

Եւ եթէ կարծում էք, թէ Արեգը գլորուեց անդունդը, ու դրանով ամէն բան վերջացաւ, ուրեմն չէք հասցրել հասկանալ Սարիբէկեանի պատկերած աշխարհների փոխակերպումների անորսալիութիւնը: Վէպը եզրափակւում է Արեգի արթնացումով, չգիտես՝ քնի՞ց, մահի՞ց, կեանքի՞ց…

«*Երբ մեծանամ,- մտածում էր տղան,- լարախաղաց եմ դառնալու, իսկական լարախաղաց, անցնելու եմ ժայռից ժայռ՝ անդունդի վրայ ձգուած պարանով*»:

*Պատկերացնում էր, երբ յանկարծ սայթաքեց, բացեց աչքերն ու տեսաւ, որ ոտքը ցիրուցան գորտի վրայ է:*

*«Մի՞թէ գորտի արիւնը կարմիր է լինում»,- մտածեց տղան…*» (էջ 215):

Այստեղ հեղինակը վերջակէտ է դրել՝ յետցնցումների ուժգնութեան ու յաճախականութեան ընտրութիւնը վստահելով ընթերցողին:

Ինչպէս նշել էինք *Գուշակութիւններ հայելիներով* ժողովածուի առնչութեամբ, Սարիբէկեանը ասելիքին առաւել հաւաստիութիւն եւ շեշտուածութիւն հաղորդելու նպատակով երբեմն դիմում է նկարչութեանը: Եւ ահա *Երկուորեակների արեւը* վէպում մենք տեսնում ենք մի շարք պարզունակ գծապատկերներ:

«*Ուրիշ անուններ վերագրեց իրեն ու համոզուեց, որ իր անունն Արեգ կարող էր լինել միայն: Եւ պատի վրայ խազեց, ի՜նչ փափուկ էր սեւ քարը,*

*յետոյ հեռու կանգնեց ու կարդաց. Ա ր ե գ: Արեւն ամէն օր կը տեսնի իր անունը: Յետոյ մտածեց, որ արեւը գուցէ տառեր չգիտի, եւ քարին արեւի պատկեր խազեց.*



*ու մտածեց, որ արեւն այդ պատկերագիրն աւելի լաւ պիտի հասկանայ, ու որպէսզի հասկանար, որ արեւը նաեւ մարդու անուն է, մարդ նկարեց.*



*Ահա իր եւ արեւի կապի գրաւոր մի վկայութիւն՝ իր անունը պատկերագրի ձեւով: Արեւ եւ մարդ*» (էջ 157):

Իր ստեղծած աշխարհում Հրաչեայ Սարիբէկեանը բնակեցնում է իրեն հարազատ մարդկանց: Նրա հերոսների անուններն ընտրուած են ոչ-պատահաբար: Յարութը՝ Յարութիւնը, մահուանից յետոյ յարութիւն առնելու, երկրորդ կեանք ստանալու խորհուրդն է ցուցանում: Արեգը՝ Արեւը, յարութեան մարմնացումն է. չէ՞ որ արեւն ամէն օրուայ վերջում մեռնում է, իսկ յաջորդ օրը կրկին յառնում: Ասել է թէ՝ Արեգ տղան իր Յարութ պապի, Յարութ եղբօր, առհասարակ իր նախնիների անմահութեան, յաւերժութեան խորհրդանիշն է հենց: Ինչպէս մեկնաբանում է հեղինակը՝ Արեգը Յիսուսի մանկութիւնն է մարմանաւորում իր վէպում, եւ թիթեռներով նրա հետաքրքրուածութիւնը եւս Յիսուս-Արեգ կերպարների համադրումից է ծնուել: Որոշ սրբապատկերներում մանուկ Յիսուսը պատկերուած է թիթեռների ետեւից վազելիս. այսպէս է բացատրում Սարիբէկեանը: Բացի այս, անուններն ունեն իրենց իրական կրողները՝ Յարութիւն է Սարիբէկեանի հօր, Արեգ՝ որդու անունը: Այս անձինք եւս՝ որպէս նախատիպ, պայմանաւորել են գրողի ստեղծած հերոսների վարքը:

Արեւամարդու առեղծուածը «Երկուորեակների արեւը» վէպում միջակէտւում է, եւ Սարիբէկեանն անցում է կատարում դէպի մէկ այլ աշխարհ, որտեղ թագաւորում են խենթերն ու խենթացնող դիպուածները:

### *ԱՊՈՒՇՆԵՐԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ*

Հրաչեայ Սարիբէկեանն *Ապուշների ուղեւորութիւնը* կոչել է երկաթուղային վէպ: Այս բնութագրման հետ, սակայն, համաձան չէ վէպի մասին գրախօսութեան հեղինակ Վալերի Փիլոյեանը: Այսպէս, նա ունի իր գնահատականը վէպի տեսակին. «*Հրաչեայ Սարիբէկեանն իր երկի ժանրը բնութագրել է «երկաթուղային վէպ» բառակապակցութեամբ, այնինչ եր-*

*կաթուղայինը ժանրակազմիչ իւրայատկութիւն չէ: Պատումի շարադրանքը, պատկերից պատկեր անցումները, մոնտաժի իւրայատկութիւնը յուշում են, որ գործ ունենք մէկ այլ ժանրի հետ՝ կինովէպ կամ կինովիպակ»*[4]:

Թերեւս, կարելի է համաձայնել Փիլոյեանի այս տեսակէտի հետ, քանի որ Սարիբէկեանն իր շարադրանքն իսկապէս մատուցում է կինօխցիկի ճշգրտութեամբ եւ հեղինակի չպարտադրուող, ոչ-յուզական ներկայութեամբ. «*Հրաչեայ Սարիբէկեանը փորձում է իր իսկ ձեւաւորած ու պատկերած գեղարուեստական իրականութիւնը տեսնել ու գնահատել անկիրք, առանց արտաքին զգացմունքայնութեան: Զգացմունքներն այստեղ տեղ չունեն. կայ միայն հայեացք եւ տեսողութիւն, տեսածից էլ բծախնդիր ընտրութիւն է կատարւում, որ կառուցուածք ու ամբողջութիւն է դառնում բացառապէս կինօմոնտաժի օրէնքներով ու օրինաչափութիւններով*»[5]:

«Ապուշների ուղեւորութիւնը» վէպը բաղկացած է 9 մասից: Իւրաքանչիւր մասն ունի բնաբան՝ վերցուած համաշխարհային գրականութեան տարբեր ստեղծագործութիւններից, որոնք ունեն մէկ ընդհանրութիւն՝ բոլորը, այս կամ այն կերպ, առնչւում են գնացք երեւոյթին:

Գնացքի, փապուղու, մահուան, ժամացոյց-զարթուցիչ-ժամանակ եռամիասնութեան խորհրդանիշերի, բացակայութիւն հասկացութեան՝ իւրօրինակ մեկնաբանութեան համապատկերում հեղինակը պատմում է Պաքու-Երեւան գնացքով ճամփորդող արտասովոր ուղեւորների մասին: Դրանք Պաքուի հոգեբուժարանի հայ հիւանդներն են՝ «ապուշ»ները[6], որոնց նստեցրել են հանդիպակաց գնացքներ ու տանում են չէզոք գօտի՝ ադրբեջանցիների հետ փոխանակելու նպատակով: Գործողութիւնները կատարւում են արցախեան առաջին պատերազմի շրջանում, երբ դեռ ԽՍՀՄ հասարակութիւնն իր վրայ շատ թարմ ու զգալի դրոշմն էր կրում նոր-նոր քանդուած այդ հսկայ երկրի: Ադրբեջանցի Կէս Մարդաբոյ Սլաքավարն այդ պարզ ճշմարտութիւնն է փորձում հասցնել հայ ապուշներից մէկի՝ Դոդի «գիտակցութեանը». «*Հիմա ես քեզ երկու փուփ լուցկի ցոյց կը տամ,- ասում է Կէս Մարդաբոյը,- տեսնու՞մ ես՝ երկուսի փուփն էլ նոյնն է,- բացում է լուցկու փուփերը,- ահա տես, լուցկիներից մէկի ծողիկների քուքուրթը կապոյտ է, միւսինը՝ կանաչ: Պատկերացրու, թէ այդ ծողիկները զինուորիկներ են՝ մարդիկ: Նման են, չէ՞, գլխարկով զինուորների: Ենթադրենք կանաչ քուքուրթով զինուորները մենք ենք՝ ադրբեջանցիներս, կա-*

[4] Վալերի Փիլոյեան, «Հրաչեայ Սարիբեկեանի 'ապուշների ուղեւորութիւնը երկը», *Գրական թերթ*, 22.09.2016:

[5] Նոյն:

[6] Ապուշներ եզրոյթը մեր շարադրանքում գործածւում է իբրեւ հեղինակի՝ իր հերոսներին տրուած բնութագրական:

*պոյտները՝ հայերդ: Բայց, ախր, երկուսի տուփն էլ նոյնն է, երկուսն էլ սովետական ապրանք*»[7]:

Սարիբէկեանն իր հերոսների հետ ուղեւորութեան է հրաւիրում ընթերցողին եւ առաջնորդում մի երկարուձիգ ճանապարհով, որը տարուբերւում է խենթութեան եւ իմաստնութեան, իրականութեան եւ անիրականութեան սահմաններում. «*Մարդ-իրականութիւն եւ կերպար-գրականութիւն զուգորդումները երբեք եւ երբեւէ չեն կարող նոյնական լինել: Եւ չեն շփոթւում գրականութիւնն ու իրականութիւնը, անգամ ամենասթափ կամ նատուրալիստական պատկերը կեանքի որեւէ նմանատիպ դրուագի հետ: Սա գործառոյթների եւ աշխարհների տարբերութիւնից է գալիս, սրանք համեմատելի, բայց ոչ մէկտեղելի աշխարհներ են: Սակայն այս դէպքում անտանելիօրէն դժուար է իրականութեան ու ձեւախեղուածի, բանականութեան ու ապուշութեան սահմանները որոշելը*»[8]՝ կարդում ենք Փիլոյեանի վերլուծութեան մէջ:

Փոխատեղումների մի ամբողջ շարք է երեւան բերում Սարիբէկեանն այս վէպում: Նախ Պաքուից Երեւան շարժուող գնացքի ուղեւոր-ապուշները իրենց իրական ուղեւորութիւնն փոխատեղում են երազի տարածութիւն. ապուշները մտածում են, թէ արթնացել են գնացքով ուղեւորութեան մասին երազում, իսկ այդ երազում արտասովորն այն է միայն, որ բացակայում են իրենց ադրբեջանցի ընկերները:

Այս բացակայութեան չէզոքացումին հետամուտ՝ վէպի հեղինակն ու հերոսները արկածների մի խելայեղ տարափի մէջ են: Եւ առանձին պատում-պատառիկների, կերպար-ուրուանկարների միջոցով Սարիբէկեանը գործողութիւնները հասցնում է պատերազմական իրավիճակում ստեղծուած չէզոք գօտի. «*Պաքու-Երեւան երկաթգծերից երկուսն էլ կայարանից մէկ կիլոմետր հեռաւորութեան վրայ ականապատուած են:*

*Պաքուից եկող գնացքը չի կարող անցնել մէկ կիլոմետր այն կողմ գտնուող թունէլը: Եթէ մտնի թունէլ, հակառակ կողմից դուրս չի գայ: Թունէլը երկու կողմից պատուած է փշալարերով ու ականներով: Կայարանը չէզոք գօտի է*» (էջ 48):

Պատերազմի ժամանակ այստեղ առեւտուր են անում հայերը, պարսիկներն ու ադրբեջանցիները: Հայերը Ղարաբաղում ռմբակոծուած շէնքերի փլատակների մէջ աճող վարդի թերթիկներն են վաճառում պարսիկներին, պարսիկները հայերին՝ մոմ: Դէ, իսկ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ առեւտուրը բոլորովին այլ «նրբութիւններ» ունի՝ թելադրուած պատերազմի օրէնքներով. «*Հայերն ու ադրբեջանցիներն այստեղ գերի ու դիակ են փոխանակում՝ դիակը դիակի, գերին՝ գերու հետ: Պատահում է՝ եր-*

---

[7] Հրաչեայ Սարիբեկեան, *Ապուշների ուղեւորութիւնը*, Անտարէս, Երեւան, 2015, էջ 64-65: Վէպից յետագայ մէջբերումները կը լինեն այստեղից:

[8] Փիլոյեան:

*կու դիակը մէկ գերու հետ: Մի կենդանի զինուորը հաւասար է երկու զինուորի դիակի*» (էջ 149):

Քաղաքական, ռազմական այս լուրջ հաշուարկներին ի հակակշիռ՝ ապուշներն ունեն իրենց օրակարգը, որ ենթակայ չէ որեւէ կանոնակարգման. «*Իրենց սառած մարմինները, ենթակայ գնացքի ընթացքին, իրենք՝ յիմարանոցում: Պատերազմ է՝ գրաւել են իրենց ադրբեջանցի ընկերների տաք, դատարկ մարմինները, մինչեւ նրանց թափառելու ելած հոգիները եւ գան: Այնպէս որ՝ գնացքը հոգիներից դատարկուած մարմիններ է փոխադրում՝ այդ մարմիններում միայն սրտեր են տրոփում*» (էջ 91):

Մէկ այլ տեղ անգամ սրտերի ներկայութիւնն է բացառւում. «*Գնացքի այս վագոնով բացակայութիւններն են ճամփորդում՝ մարդկային բացակայութիւնները: Դագաղները՝ իւրաքանչիւրը մարդկային մի բացակայութեան համար նախատեսուած խցիկ*» (էջ 123):

Բացակայութեան նիւթականացման, դատարկութեան գոյութենականութեան մասին դատողութիւնները հանդիպում են նաեւ Սարիբէկեանի այլ երկերում: Ջորօրինակ՝ «Ապորիա» պատմուածքում նա գրում է. «*Վերջ՝ բացակայութիւնս իմ փոխարէն մեկնեց գնացքով*» (էջ 41):

Սարիբէկեանի ապուշ եւ ոչ-ապուշ հերոսները էապէս չեն տարբերւում միմեանցից: Ասուածի լաւագոյն վկայութիւններն այս հերոսների միջեւ երկխօսութիւններն են՝ ծաւալուած վիպական շարադրանքի բազմաթիւ էջերում: Յիշենք ադրբեջանցի Կէս Մարդաբոյ Սլաքավարի եւ հայ ապուշ Դոդի, հայ ապուշների առաջնորդ Դուռակի Արքայի եւ ադրբեջանական խուժանի ներկակացուցիչների, չէզոք գօտում սփռուած զինուորական գերեզմանի գերեզմանապետի եւ հայ ապուշ Պրոֆեսորի, հայ եւ ադրբեջանցի զօրավարների, Միթեւանի մարդու եւ երկու ազգերի ապուշների զրոյցները: Իսկ ապուշութեան գագաթնակէտին CNNի լրագրողն է՝ հայ եւ ադրբեջանցի զօրավարներին ուղղած իր տխմար հարցերով եւ ապուշների սարքած խենթախաղը իբրեւ իրադարձութիւն տեսանկարելու անհեթեթ վարքով:

Սարիբէկեանի հերոսների մէջ առանձնանում են երկուսը, որ ի տարբերութիւն միւսների՝ տենդագին որոնումների մէջ են՝ պայմանաւորուած իրենց երկփեղկուած ինքնութեամբ: Մէկը հայ ապուշների հետ ուղեւորութեան ելած Հէյդարն է, միւսը չէզոք գօտու կայարանում բնակուող Միթեւանին: Սրանց ծնողներից մէկը հայ է, միւսը՝ ադրբեջանցի: Հէյդարի խնդիրն արագ է «հանգուցալուծւում». նա վէպի հենց սկզբում դժբախտ պատահարի զոհ է դառնում, եւ ամփոփւում են նրա տարուբերումները սեփական ինքնութեան լաբիրինթոսում: Իսկ Միթեւանին յայտնւում է վէպի վերջին մասում, եւ ինքնութեան որոնումի նրա տուայտանքները, ժամանակային առումով համընկնելով վէպի գլխաւոր ասելիքի ամենահնչեղ հատուածի հետ, բնաւ չեն դառնում երկրորդական, չեն կորչում այդ ասելիքի ստուերում: «*Միթեւանու ծնողներից մէկը հայ էր, միւսը՝ ադրբեջան-*

*ցի: Ոչ ոք չգիտէր՝ ծնողներից ով է հայ, ով ադրբեջանցի: Ոչ ոք չգիտէր՝ հոգու խորքում Միթեւանին իրեն հա՞յ, թէ՞ ադրբեջանցի է համարում: Եւ ամէն անգամ հարբած ժամանակ գլուխ էր կոտրում որոշելու համար՝ իր ձախ, թէ աջ՝ անթեւ մնացած կէսն է հայ»* (էջ 154):

Հենց այս կերպարն էլ՝ իր կէս հայ-կէս ադրբեջանցի ինքնութեամբ, դառնում է հայ եւ ադրբեջանցի ապուշներին կապող կամուրջը: Նա թմրանիւթ է վաճառում կայարանում՝ «Բելոմոր» ծխախոտի անուան տակ, եւ այդ «բարիքից» բաժին է հանում կայարան ժամանած ապուշներին. «*հայ եւ ադրբեջանցի ապուշները շրջապատել են Միթեւանուն եւ երջանիկ, գոհունակ դէմքերով «բելոմոր» են ծխում*» (էջ 157):

Իսկ երբ «օրինաչափ» ապուշութիւնը խթանւում է «Բելոմորի» արտասովոր յաւելումով, սկսւում է միջազգային կարեւորութեան ու հետաքրքրութեան ծիրում տեղաւորուող մի խրախճանք՝ արժանի CNN հեռուստաընկերութեան լրագրողի բացառիկ ուշադրութեանը. «*Հայ եւ ադրբեջանցի ապուշները խառնուել են իրար: Թաքստոցներ են փնտռում, պահ մտնում, ծիկրակում, ցուցամատով նշան բռնում, կրակում, օդում երեւակայական փամփուշտներ են սուրում: CNN հեռուստաընկերութեան տեսախցիկը, գեներալների հետ հարցազրոյցը թողած, կռիւ-կռիւ է տեսագրում*» (էջ 158):

Եւ մինչ իրենց աշխարհի ամենակենտրոնն ու իմաստնութեան ամենագագաթը երեւակայող հայ եւ ադրբեջանցի զօրավարներն ու միջազգային նշանակութեան լրագրողները կը փքուեն ինքնագնահատականների զգլխիչ մշուշում, երկու ազգի ապուշները ցոյց կը տան Սարիբէկեանի փոխատեղումների համապատկերում ամենաանսպասելի, աննախադէպ օրինակը. «*Գեներալն ապրած կենայ,- ասում է Միթեւանին,- ձեր հիւանդները կարգին կայֆի տակ են եւ այդ կայֆի տակ փոխանակել են իրենց մարմինները: Այսինքն՝ հայ գժերի հոգիները ադրբեջանցիների մարմիններում, իսկ ադրբեջանցիների հոգիները հայերի մարմիններում են,- Միթեւանին նայում է ապուշներին,- հասկանու՞մ էք՝ ինչ եմ ուզում ասել. դրանք իրենց գնացքը փոխելու փոխարէն, բոլորիցս թաքուն իրենց մարմիններն են փոխանակել, եւ ինձ էլ, ձեզ էլ ապուշի տեղ են դրել: Ով իմանայ՝ ինչ են դրել մտքներին: Գուցէ ուզում են վերադառնալ իրենց յիմարանոցներ, գուցէ պարզապէս ուզում են կրկնել իրենց ուղեւորութիւնը հակառակ ուղղութեամբ: Գուցէ շարժուող յիմարանոցը դուր է եկել սրանց, հը՞, պարոն գեներալ*» (էջ 159): Ահա գրողի առերեւոյթ անտարբեր, չէզոք ոճի եւ ասելիքի ցնցող բովանդակութեան համատեղումի բացառիկ օրինակ: Իմաստուն-իմաստակների հաշուարկները՝ պատերազմ-փոխանակում-զինադադար հասկացութիւնների տիրոյթում, պայթում են փուչիկի պէս, յօդս ցնդում՝ չկարողանալով դիմակայել ապուշների հոգեգարութեան ալիքին: Ապուշները տարերքի նման սրբում-տանում են կանխաւ գծուած իրենց ճակատագրին ծեփուած տիղմը. իրենք անկանխատեսելի են, իրենց քայլերը անհնար է հաշուարկել: Այդ երեւոյթը լաւ ծանօթ է հայ զօրավարին.

նրա հրամանատարութեանը ենթակայ բոլոր զինուորներն են այդպիսի խենթեր: Խենթեր, որոնց մասին երազում է ադրբեջանցի զօրավարը. ուր էր, թէ ինքը խենթերից կազմուած զօրք ունենար: Այս մէկ-երկու նախադասութիւնը, որ թւում է՝ իմիջիայլոց յայտնուել է Սարիբէկեանի շարադրանքում, իրականում խոր բովանդակութիւն ունի. արցախեան առաջին պատերազմում միմեանց էին բախուել հայ խենթերն ու բոլոր տրամաբանական հաշուարկների առումներով նրանց համեմատութեամբ գերակայ ադրբեջանցիները: Բայց ինչպէս որ ապուշների փոխանակման դէպքում փուչ դուրս եկան բոլոր նախնական հաշուարկները, այդպէս էլ պատահեց արցախեան առաջին պատերազմի ժամանակ. անհնարինութիւնից իրական յաղթանակ կերտած հայերի միակ զէնքն իրենց խենթութիւնն էր, որի առաջ ոչինչ դարձան թշնամու ուժն ու դիւանագիտութիւնը: Ահա մի ճշմարտութիւն, որն ասես իմիջիայլոց նետում է Սարիբէկեանը եւ ասես չի էլ կարեւորում հասցնել այն ընթերցողի գիտակցութեանը: Բայց թերեւս, սա Սարիբէկեանի պատկերած ժամանակի իրականութեան ամենանիւթական, ամենաշօշափելի շեշտադրումն է *Ապուշների ուղեւորութիւնը* վէպում՝ զերծ այլասացութեան, ոճային աճպարարութիւնների շփոթեցնող շղարշից:

Նշենք, որ *mediamax.am* կայքի լրագրող Արմինէ Սարգսեանին տուած հարցազրոյցում Սարիբէկեանը մասնաւորապէս ասել է. «*Պատերազմն իմ թեմաներից չէ, եւ պատերազմի մասին գրուած սրտեղծագործութիւններ էլ կարդալ առանձնապէս չեմ սիրում, եւ եթէ կարդացել եմ, մտածել եմ, ես ուրիշ կերպ կը գրէի պատերազմի մասին, կը գրէի ոչ թէ պաթոսով, ողբերգական կամ էլ հերոսական վէպ, այլ գռեհիկ ու «սեւ հումորով» համեմուած սիւրռէալիստական թրիլլէր, ցոյց տալու համար, որ պատերազմն ամենամեծ թիւրիմացութիւնն է, ամենաիրական աբսուրդը, ամենաանողոք մամլիչ ուժը, որի դէմ մարդն անզօր է, ամենամեծ մասշտաբի ապամարդկային իրադարձութիւնը, որի ահաւորութիւնը քօղարկուած է հերոսական կարգախօսների, մարդկային կեանքից թանկ արժէքներ հոչակող գաղափարախօսութիւնների տակ, որոնցով մարդկանց բաց աչքերով ուղեկցում են «մսաղաց»*[9]:

Ինչպէս նկատել ենք նախորդիւ, Սարիբէկեանի երկերում բազմաթիւ թեմաներ, խորհրդանշաններ, գաղափարներ, դիպուածներ մշտառկայ են, դրանց շուրջ ծաւալուող ասելիքը չի սահմանափակւում հեղինակի այս կամ այն երկի տիրոյթում: Բացառութիւն չէ նաեւ «Ապուշների ուղեւորութիւնը», որ բազմաթիւ զուգահեռներ ունի *Երկուորեակների արեւը* վէպի հետ: Այսպէս, վէպի հերոսների մէջ կան երկուորեակ եղբայրներ՝ մեքենա-

9 https://mediamax.am/am/news/BookHouse/20028/?fbclid=IwAR2ioXHaZpSu441JKmS33U0Mzc0vbiK75xWoqeCgaeN6mPnq0FE8Tf74cA4

վարներ Ադիլը եւ Ագիլը, Պաքուի հոգեբուժարանի բուժքոյրեր Ֆարիդան եւ Ջուլֆիդան: Եւ նախորդ վէպի հերոսների՝ մէկը միւսի փոխարէն, մէկը միւսի կեանքով ապրելու բանաձեւն այստեղ տալիս է հայ ապուշ Դունդուկը. «*Երկուորեակ ունենալ պէտք է՝ մէկդ մեռնում էք, միւսդ շարունակում ապրել*» (էջ 104):

Ինչպէս *Երկուորեակների արեւը*ում, այս վէպում եւս գնացքի խորհրդանիշը՝ իր մահաբեր էութեամբ, խիստ ընդգծուած է եւ ասես գնում-կապւում է նախորդ վէպի պատումաշարի հետ: Այսպէս, գնացքի մեքենավար Ադիլի կակազելը հայ ապուշ Չոռոտը հաստատ համոզումով կապում է այն հանգամանքի հետ, թէ նա երեխայ է գցել գնացքի տակ (ակնարկը *Երկուորեակների արեւը* վէպի Յարութի մասին է ասես): Ըստ որում՝ պատահական չէ, որ հենց Չոռոտն է այս կարծիքի կրողը. բանն այն է, որ *Ապուշների ուղեւորութիւնը* վէպում այս կերպարը յիշեցնում է երկուորեակ Յարութին՝ իր անօրինակ դաժանութեամբ: Նրա զոհերը ճանճերն են. «*Չոռոտի սիրած զբաղմունքը ճանճորսութիւնն է. ճանճ տեսնէր՝ պոկում էր թեւերը կամ վառում, հետեւում, թէ ինչ աներեւակայելի արագութեամբ է ածուխի կտորի պէս շիկացած ճանճը պտրտում տեղում*» (էջ 108):

Մէկ այլ կրկնուող խորհրդանիշ է փապուղին՝ որպէս մահուան ճանապարհ, մահուան նիւթականացում. «*Ժորը, որ մահուան փորձառութիւն ունի՝ կլինիկական մահ է տարել, տեսել է Թունէլը…*» (էջ 109): (Ինչպէս Յարութը՝ *Երկուորեակների արեւը* վէպում):

Եւ առաւել հնչեղութիւն է հաղորդուած նախորդ վէպից, ինչպէս եւ այլ գործերից ծանօթ ժամացոյց-զարթուցիչ-ժամանակ խորհրդանիշերին, որոնք այս վէպում առնչւում են յատկապէս Կէս Մարդաբոյ Սլաքավարի կերպարի հետ: Վերջինս գնացքի տակ է ընկել ու կորցրել ոտքերը: Զարթուցիչը նրա գոյութեան անբաժան մասնիկն է. «*Ես զարթուցիչ եմ լարում էն օրուանից, երբ իմացել եմ, որ քնած ժամանակ մարդ կարող է մեռնել: Քնած ժամանակ լսողութիւնը կեանքի հետ ունեցած միակ կապն է, ախր*» (էջ 90): Սրանք Կէս Մարդաբոյ Սլաքավարի՝ քնած ժամանակ բարձրաձայն արտայայտուած մտքերն են, ասել է թէ՝ անգամ ենթագիտակցութեան շերտերում այս մարդու կենսականութիւնը պայմանաւորուած է զարթուցիչով:

«*Սլաքավարը միշտ վախենում էր, որ քնած ժամանակ կարող է մեռնել եւ դրա համար էլ զարթուցիչ էր պահում: Նրա մտքով երբեք չէր էլ կարող անցնել, թէ այդ զարթուցիչը երբեւէ կը յայտնուի դագաղի ներսում: Այդպիսի բան իր մղձաւանջների մէջ անգամ չէր տեսել*» (էջ 111),- կարդում ենք յաջորդիւ:

Բայց ահա նա կորցնում է իր զարթուցիչը, այն գողանում է Դոդը, որն էլ մեռնում է ադրբեջանցու կրակոցից, իսկ զարթուցիչը մնում է փակ դագաղում: Եւ սրանից յետոյ կանգ է առնում ժամանակը, ինչպէս *Երկուորեակների արեւը*ի կայարանի ժամացոյցը. «*Սլաքավարը նայում է ժամա-*

*ցոյցին: Ժամացոյցը, ինչպէս միշտ, չորսն անց տասն է ցոյց տալիս: Վերջ՝ ինքն այլեւս ժամացոյց չունի: Հիմա մշտապէս չորսն անց տասը կը լինի: Նոյն օրուայ նոյն ժամը, նոյն կայարանը: Ահա յաւերժութիւնը չափող ժամացոյցը, եւ ոչ մի գնացք այլեւս չի անցնի այդտեղով*» (էջ 133):

Եւ էլի մի ընդհանրութիւն. եթէ *Երկուորեակների արեւը* վէպում Արեգն էր պապի դագաղում դրել ժամացոյցը՝ հանգուցեալին քնից արթնացնելու վստահ նպատակով, ապա *Ապուշների ուղեւորութիւնը*ում այդ երեւոյթի մէկ այլ դրսեւորման ենք հանդիպում Դոդի եւ սպանուած մեքենավարի փոխառնչութեամբ. «*Զարթուցիչը կը զնգայ, կ'ազդարարի ժամը, մեքենավարը վեր կը կենայ այնտեղից, որտեղ անշարժ ընկած էր, թափ կը տայ շորերն ու կ'ասի.*

*- Սուտ բան է մահը: Նստէք գնացք, շարժուենք*» (էջ 54):

Եւ սա գրեթէ մարգարէական կանխասացութիւն է դառնում, որովհետեւ իսկապէս էլ յայտնւում է մեքենավարը՝ սպանուած Ադիլի երկուորեակ, նրա կրկնօրինակ Ագիլը, եւ շարժւում է գնացքը:

Այս վէպում, ի տարբերութիւն Սարիբէկեանի շատ այլ երկերի, գծանկարներ չկան: Փոխարէնը՝ գրքի կազմի դարձերեսին լուցկու տուփերի գունաւոր նկարներ են՝ երկաթուղուն, գնացքներին վերաբերող նախազգուշական գրառումներով, որոնք առկայ են նաեւ վէպում: Դրանք ինքնանպատակ չեն յայտնուել Սարիբէկեանի պատումում. իւրաքանչիւր նախազգուշացման եւ դրան չենթարկուելու աղէտալի հետեւանքների վերաբերեալ ինչ-որ դիպուած է նկարագրում հեղինակը, ինչպէս օրինակ՝ Կէս Մարդաբոյ Սլաքավարի ոտքերը կտրուելու պատմութիւնը կամ Հէյդարի զոհուելը գնացքի տանիքին:

Ինչպէս արդէն նկատեցինք, Սարիբէկեանի հերոսներն ունեն բնութագրական անուններ՝ Դուռակի Արքայ, Չոռոտ, Կէս Մարդաբոյ Սլաքավար, Միթեւանի եւն.: Կան նաեւ հերոսներ, որոնց անունները խորհրդային տարիներին շատ տարածուած, երբեմն անգամ զաւեշտալի մեկնաբանութիւններ ունեն: Այսպէս օրինակ՝ Լենդրուշ, որ նշանակում է լենինեան դրօշ, Մաէնլեստ, որ յապաւումն է Մարքս, Էնգելս, Լենին, Ստալին անունների, Վիլեն, որ դարձեալ յապաւում է՝ Վլադիմիր Իլյիչ Լենին, Նինել անունը հակառակ ուղղութեամբ կարդալիս ստացւում է Լենին:

Այս անունները եւս այն տեսակէտի հաստատումն են, որ բոլորը՝ հայ թէ ադրբեջանցի, «սովետական ապրանք են»:

Եզրափակենք՝ եւս մէկ անգամ նշելով, որ Հրաչեայ Սարիբէկեանի այս վէպը կեանքի-մահուան, նիւթականի-վերացականի, ապուշութեան-բանականութեան փոխատեղումների համապատկերում հիւսուած ստեղծագործութիւն է, որ լարուածութեան, անակնկալի մշտատեւ սպասման մէջ է պահում ընթերցողի միտքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սարիբէկեանի գրականութիւնը ինքնօրինակ մի տարածութիւն է, որ առերեւոյթ չի առկայծում կենսուրախութեան, կենսասիրութեան, կենսունակութեան լոյսով, բայց ներքին վստահութեան մի հիւղէ, այնուամենայնիւ, նա վերապահում է իր եւ ընթերցողի համար՝ նիւթականացող երազի, անդունդի եզրին բացուած ծաղկի, գոյնզգոյն թիթեռնիկի, չլռող զարթուցիչի, դատարկութիւնից լեցուն գոյաձեւի վերածուելու տեսքով: Իսկ սա արդէն յոյս է, որ նրա գրականութեան բազմաչուերթ գնացքները կը հասնեն ինչ-որ տաք հանգրուանի՝ ի հեճուկս ամայի կայարանների կանգ առած ժամացոյցների ու փշալարերով եւ ականներով պատուած փակուղիների:

Սարիբէկեանն ինքն էլ, իր ստեղծագործութիւնների մասին խօսելիս, նկատում է, որ ընկալումները դրանց վերաբերեալ կարող են խիստ յարաբերական լինել եւ չենթարկուել բացարձակ չափորոշիչների: Այստեղ կը փորձենք վերարտադրել այն մտքերն ու դատողութիւնները, որ մեզ հետ ունեցած քննարկումների ընթացքում արտայայտել է Սարիբէկեանը: Ըստ նրա՝ իրականութեան ընկալումը տարբեր է. մեծամասնութեան համար իրականութիւնը տեսողական ակնյայտութիւն է, իսկ կեանքը իրադարձութիւնների պատճառահետեւանքային յաջորդականութիւն, եւ սա իրականութեան ամենամակերեսային ընկալումն է, իրականութիւնը ծածուկ իրողութիւն է, որին աւելի շատ հաղորդակից է լինում մարդկային ոգին, եւ այդ իրականութեանը գրողը կարող է հասու դառնալ ենթագիտակցութեան պայծառացումներով, երազներով ու երեւակայութեամբ, իսկ հասարակական կեանքը բթացնում է մարդու երեւակայութիւնն ու երազներ տեսնելու կարողութիւնը: Նա ասում է, որ գրողն ազատ է իրականութեան սեփական ելակէտն ունենալու հարցում, նա կարող է պատկերել այն, ինչ տեսնում է, բայց ազատ է ստեղծել նաեւ նոր՝ իր իրականութիւնը, որ հիմնուած է բացառապէս երեւակայութեան վրայ: Եւ դժուար է ասել՝ ո՞րն է աւելի արժանահաւատ, ա՞յն իրականութիւնը, որ ստեղծել է գրողը եւ որն աւելի երկար է ապրելու իրենից, թէ՞ այն իրականութիւնը, որը հրաժարւում է պատկերել գրողը եւ որը անճանաչելիօրէն փոխւում է: Ժամանակը չի դիպչում գրողի ստեղծած իրականութեանը, ժամանակի հանդէպ այն աւելի կայուն է, հետեւաբար գրողն աւելի շատ հիմքեր ունի իր ստեղծած իրականութեանը հաւատալու, քան այն իրականութեանը, որի գոյութիւնը միայն հինգ զգայարաններն են յիշեցնում: Սարիբէկեանը նշում է, որ վիպասանն իր համար Աստուած է, որ ստեղծում եւ բնակեցնում է մի ամբողջ աշխարհ, նա ստեղծում է իրականութիւն եւ որպէս այդ իրականութեան միակ Աստուած՝ ապրում է իրականութիւնը հասկացած լինելու պատրանքը: Ինքը չի ուզում պատճէնել Աստծոյ ստեղծած աշխարհը, ուզում է ստեղծել իրենը: Եւ որքան այդ արարչագործութեան մէջ ինքնատիպ լինի, այնքան ինքնատիպ կը լինի իր ստեղծած աշխարհը: Ըստ Սարիբէկեանի՝

որքան էլ գրողները վերարտադրեն, պատճէնեն Աստծոյ ստեղծած աշխարհը, գերազանցել այն չեն կարող. Աստծոյ ստեղծածը կատարեալ է, իսկ ինքը գերադասում է մի փխրուն կատարելութիւն ստեղծելու յաւակնութիւն ունենալ, քան պատճէնողի դերում լինել:

## THE EXCHANGING OF MATERIAL AND ABSTRACT WORLDS IN HRACHYA SARIBEKYAN'S NOVELS *YERGVORYAGNERI AREVE* (THE TWINS' SUN) AND *ABUSHNERI OOGHEVORUTYUNE* (THE IDIOTS' JOURNEY)

**(Summary)**

KARINE RAFAELYAN
karine.rafaelyan@mail.ru

The paper focuses on the two novels of contemporary Armenian writer and publicist Hrachya Saribekyan, *The Twins' Sun* and *The Idiots' Journey*.

The paper examines the themes of these novels, their conceptual construction on notions of life, death, time, resurrection after death, etc. It notes as well that the names of the characters of these literary works are not accidentally chosen. Rather, they hide certain meanings. The writer voices the idea of winning over death and inevitably being resurrected after death through noticeably dark narration.

The paper identifies *The Idiots' Journey* as one of the more in demand literary works of our days, as it narrates the exchange of Armenian and Azeri fools in the aftermath of the first Karabagh war.

# ՀԱԿԱՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Զ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ԴՈՒԻՆԻ 506Ի ԺՈՂՈՎԻ ԴԱՒԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

ԼԻԶԱ Ռ. ՔԱՐԻՄԵԱՆ
liz79k@gmail.com

ՄՈՒՏՔ

Հանրաճանաչ է, որ Հայ Եկեղեցու դաւանական դիրքորոշման ուսումնասիրութեան գործում քաղկեդոնական մատենագրութիւնը առաջնորդուել է բացառապէս ենթակայական եւ կամայական մօտեցումներով, իսկ հիմնահարցի վերաբերեալ հրապարակ է նետել տարատեսակ մօտեցումների մի ողջ համակարգ: Ընդ որում, քննարկուող հիմնահարցը, որպէս կանոն, մեկնաբանուել է «աստուածաբանական պայքար»ի հոլովոյթից դուրս, որտեղ ուրոյն տեղ է յատկացուել արտաքին գործօնին:

Այդ կապակցութեամբ հրատապ է Հայ Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման հոգեւոր հիմքերի կրօնագիտական քննական վերլուծութիւնը: Վերջինս, առաջին հերթին, չափազանց արդիական է Հայ Եկեղեցու քրիստոսաբանական վարդապետութեան առարկայական ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ այդ գործընթացում արտաքին գործօնների արժեւորման տեսանկիւնից: Երկրորդ, այդ մօտեցման հետեւողական կիրառումը թոյլ կը տայ վեր հանել եւ համակողմանի գնահատել այն հոգեւոր նախադրեալները, որոնք ընկած են եղել Հայ Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման հիմքում: Եւ երրորդ, վերլուծական այդ մօտեցման շրջագծում հնարաւոր կը լինի առարկայական ներկայացնել Հայ Եկեղեցու պատմութեան առանցքային հիմնահարցերից մէկը՝ Քաղկեդոնի ժողովի դէմ ուղղուած դաւանական դիրքորոշումը: Վերոբերեալ խնդիրների առարկայական եւ համակողմանի քննարկմանն էլ միտուած է յօդուածը:

Բնագրերի անաչառ ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ Հայ Եկեղեցին Քաղկեդոնի ժողովը մերժել է նախ այն պատճառով, որ ուղղադաւան է ճանաչել միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները: Իսկ Քաղկեդոնի հաւատքային սահմանումը համարել է մասնաւոր[1]:

[1] Գարեգին Ա. կաթողիկոս ամենայն հայոց, «Հրոյցներ Ճիովաննի Գուայտայի հետ», *Կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր (հայերէն շարք, Ե. հատոր)*, հրատ.՝ Հայկ եւ Էլզա Տիտիզեան Ֆոնտի, Քանատա, 2008, էջ 107:

Այդ ենթախորքում արմատական վերանայման կարիք ունի Հայ Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման վերաբերեալ շրջանառուող այն տեսակէտը, թէ իբր Ե. դարի երկրորդ կէսին քաղկեդոնական եւ հակաքաղկեդոնական բանաձեւերի ընդունման խնդրով եկեղեցին պառակտուած է եղել միմեանց դէմ անհաշտ պայքար մղող երկու՝ հակաքաղկեդոնական եւ քաղկեդոնական (ըստ Ստ. Մալխասեանի՝ համապատասխանաբար ասորամէտ եւ յունամէտ) հոսանքների[2]: Մալխասեանը այդ մօտեցումը հիմնաւորել է, վկայակոչելով Նիկողայոս Մառին, ով նոյնպէս պնդել է, որ մինչեւ Ը. դար Հայաստանում սուր պայքար է ընթացել քաղկեդոնական եւ հակաքաղկեդոնական հոսանքների միջեւ: Ու թէեւ յաղթել է հակաքաղկեդոնական հոսանքը, սակայն քաղկեդոնականութեան դրոշմը առկայ է թէ՛ հայ աստուածաբանութեան եւ թէ՛ հայ մշակոյթի վրայ: Նա նաեւ հաւաստել է, որ «*Քաղկեդոնականութիւնը Հայաստանում եղել է հաստատուն, խորը եւ լայն արմատներ ունեցող առաջադէմ կրօնամշակութային շարժում, որը որոշ ժամանակ բաւականին արգասաբեր է եղել հայերի ազգային մտաւոր կեանքի վերելքի գործում*»[3]: Սակայն, գրում է նա, շրջանցելով այդ ամէնը, բաւարար ուշադրութիւն չի դարձուել այն

---

[2] Ս. Մալխասեանց, *Խորենացու առեղծուածի շուրջը*, Արմֆանի հրատ., Երեւան, 1940, էջ 136-38: Այս տեսակէտի մասին տե՛ս նաեւ՝ В. А. Арутюнова-Фиданян, “К вопросу о социально-административных и экономических характеристиках армяно-византийских лимитрофов в X-XI вв.,” *Восточная Европа в древности и средневековье. Экономические основы формирования государства в древности и средневековье: Материалы конференции*, (Վ. Ա. Յարութիւնովա-Ֆիդանեան, «X-XI դարերի հայ-բիւզանդական սահմանամերձ տարածքների հասարակական-վարչական եւ տնտեսական բնութագրութիւնների հարցի շուրջ», «Արեւելեան Եւրոպան հին շրջանում եւ միջնադարում. պետութեան ձեւաւորման տնտեսական հիմքերը հին շրջանում եւ միջնադարում» գիտաժողովի նիւթեր), Մոսկուա, 2013, էջ 12. նաեւ՝ E. F. C. Fortescue, *The Lesser Eastern Churches*, London, 1913, էջ 411-12: Իսկ Է. Դիւլորիէն պնդել է, որ հայոց հակաքաղկեդոնական կաթողիկոսները «յամառ պառակտողականներ չեն», քանի որ նրանց ղեկավարած ժողովները գտնուել են պարսից արքունիքի ճնշման ներքոյ, իսկ ժողովական որոշումները ընդունուել են բացառապէս պարսիկներին «գոհացնելու համար» (Édouard Dulaurier, *Histoire, dogmes, traditions et liturgie de l'Église arménienne orientale: Avec des Notions Additionnelles sur L'Origine de cette Liturgie, les Sept Sacrements, les Observances, la Hiérarchie Ecclésiastique, les Vêtements Sacredotaux et la forme intérieure des Églises chez les Arméniens* (Troisième édition), Paris, 1859, էջ 92:

[3] Նիկողայոս Մառ, «Արքաուն». Քրիստոնեաների մոնողլերէն անուանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչութեամբ, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստ., Երեւան, 2016, էջ 101: Նա յաւելել է նաեւ, որ «*Հակաքաղկեդոնականութեան յաղթանակից յետոյ հայ քաղկեդոնականներն սկսեցին անհետանալ ապազգայնացման գործընթացի արդիւնքում …*» (նոյն):

փաստին, որ «... *ինչ-որ ժամանակ քաղկեդոնականութիւնն ու հակաքաղկեդոնականութիւնը հաւասարապէս գոյութիւն են ունեցել հայ հասարակութեան մէջ*»[4], որ՝ բաւարար հիմքեր կան պնդելու նաեւ, թէ «... *հայերն ունեցել են քաղկեդոնական գրականութիւն, որն, ըստ երեւոյթին, չէր սահմանափակւում միայն զուտ հակաճառական եւ դոգմատիկ-աստուածաբանական երկերով*»[5]:

Գիտնականը հաւանական է համարել նաեւ, որ հայ «քաղկեդոնականները եղել են Սահակի, Մեսրոպի ու Ներսէսի աշակերտները» եւ որ հայոց մէջ «քաղկեդոնականութիւնը ծնուել էր Հայ Եկեղեցու վերոնշեալ հայրերի ուսուցչական գործունէութեամբ նախապատրաստուած հողի վրայ[6]: Այդ տեսակէտի կողմնակից են նաեւ Գ. Վինկլէրը[7] եւ, որոշ հարցերում նաեւ՝ ճանաչուած հայագէտ Նինա Կարսոյեանը, ով նոյնպէս հաւաստել է, որ Ե. դարի վերջին Հայաստանում գործել են եկեղեցական երկու կուսակցութիւններ, որոնց գոյութիւնը վկայել է ոչ միայն Յովհաննէս Եփեսացին, այլ նաեւ՝ Միքայէլ Ասորին[8]: Բոլոր այդ վերլուծաբանների համար ընդհանուրն այն է, որ Հայ Եկեղեցում դաւանական երկու կուսակցութիւնների միջեւ թուացեալ պառակտումը հիմնաւորելու համար հիմք են ընդունել գերա-

---

[4] Նոյն, էջ 2:

[5] Նոյն: Նա նաեւ յաւելել է, որ «... *ուշ շրջանի հայկական ժողովածուների մէջ ակնյայտ քաղկեդոնական տարրերի ի յայտ գալն աւելի տրամաբանական է բացատրել հայերէնով քաղկեդոնական գրաւոր յուշարձանների առկայութեամբ* ...» (նոյն, էջ 3): Երկրորդելով Մառին, այդ տեսակէտն է պաշտպանել նաեւ Յարութիւնովա-Ֆիդանեանը, ով անգամ պնդել է, թէ «*Հնարաւոր է յունասէր հոսանքի խորացման եւ ամրապնդման համար հայ գրականութիւնը պարտական է հայ քաղկեդոնականներին*», Арутюнова-Фиданян, "Армяно-византийская контактная зона (X-XI вв.)" *Результаты взаимодействия культур* (Յարութիւնովա-Ֆիդանեան, «Հայ-բիւզանդական շփման գօտին (X-XI դդ.)», Մշակոյթների փոխազդեցութեան արդիւնքները), Մոսկուա, 1994, էջ 66:

[6] Մառ, էջ 48:

[7] Կապրիէլլա Ուինքլէրի վարկածային տեսակէտը կառուցուել է Աշտիշատի ենթադրեալ 435-36ին թուագրուող ժողովի որոշումների հիման վրայ: Հեղինակը առաջադրել է «*Հայաստանում անտիոքեան եւ ալեքսանդրիական աստուածաբանական հոսանքների զարգացման*», ինչպէս նաեւ դրանց բախումների վարկածային ընդարձակ մեկնաբանութեանը (G. Winkler, "An Obscure Chapter in Armenian Church History (428-439)," *Revue des Études Arméniennes*, 19:1985, էջ 85-180:

[8] Մանրամասները տե՛ս՝ Nina G. Garsoian, *L'Eglise arménienne et le grand schisme d'Orient*, Corpus Scriptorum Christianorum Orientalium. Vol. 524, Subsidia. T. 100, Louvain-la-Neuve, 1999, էջ 99-106, 251-56:

զանցապէս քաղկեդոնական աղբիւրները, մասնաւորապէս «Narratio de rebus Armeniae» անանուն պատմութիւնը[9]:

Անշուշտ, բաւարար հիմքեր չկան հիմնաւորելու, որ Ե. դարի երկրորդ եւ Զ. դարի առաջին կէսին Հայաստանում «անկայուն կրօնական իրավիճակ» է եղել, որը բնորոշուել է քաղկեդոնական եւ հակաքաղկեդոնական հոսանքների պայքարով: Ըստ էութեան բոլոր հիմքերն առկայ են անվերապահ պնդելու, որ այդ տեսակէտը եւս հրապարակ է նետուել ջատագովութեան նպատակով:

Ըստ էութեան նոյնքան վիճաբանական են նաեւ Հայ Եկեղեցու կողմից Զենոն կայսեր «Հենոտիկոն»ը ընդունելու, ինչպէս նաեւ տեղական եկեղեցական ժողովներում Քաղկեդոնի ժողովի նկատմամբ դիրքորոշում որդեգրելու վերաբերեալ մօտեցումները:

Մինչեւ ԺԹ. դարի վերջը աստուածաբանական եւ հայագիտական գրականութեան մէջ գերիշխում էր միջնադարեան հայ մատենագրութեան տեղեկութիւնների վրայ կառուցուած այն տեսակէտը, թէ «հրամանաւ բարեպաշտ թագաւորացն Հոռոմոց՝ Զենոնի եւ Անաստասայ» Հայ Եկեղեցին Քաղկեդոնի ժողովը պաշտօնապէս մերժել է Վաղարշապատի 491ի ժողովում[10] եւ յարաբերութիւնները խզել Բիւզանդական Եկեղեցու հետ: Վերոնշեալ մօտեցման մասին Կարապետ Տէրմկրտչեանը գրում է. «*...մեզանում վաղուց ի վեր հաստատութիւն գտած եւ մի գրքից միւսն անցնող տեղեկութիւնն այն է, որ Բաբկէն կաթուղիկոս 491 թ. մի ժողով է գումարել Վաղարշապատում եւ նզովել Քաղկեդոնի ժողովը՝ անխորտակելի անջրպետ հաստատելով այսպէս իւր եւ յոյն-հռովմէական եկեղեցւոյ մէջ*»[11]:

Խնդրոյ առարկայ հիմնահարցի շրջանակներում առաջադրուել են նաեւ իրարամերժ եւ վարկածային այլ տեսակէտեր: Մասնաւորապէս, Հայ Ե-

---

[9] *La Narratio de rebus Armeniae* [Edition, critique et commentaire par Gerard Garitte], § 84, էջ 37:

[10] Յովհաննէս Դրասխանակերտցի, «Պատմութիւն հայոց», *Մատենագիրք հայոց, ԺԱ. հատոր, Ժ. դար: Պատմագրութիւն երկու գրքով, գիրք Ա*, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 394-95. նաեւ՝ Ուխտանէս Եպիսկոպոս, «Պատմութիւն հայոց», *Մատենագիրք հայոց, ԺԱ. հատոր, Ժ. դար: Պատմագրութիւն երկու գրքով, գիրք Բ.*, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 602: Դուինի 491ի Ժողովը վաւերական են համարում նաեւ բազմաթիւ հեղինակներ, ինչպէս՝ Յ. Գելցէր, *Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն*, Վենետիկ, 1896, էջ 49-50. նաեւ՝ Nina G. Garsoïan L'Eglise arme'nienne, էջ 444, նոյնի՝ *Interregnum: Introduction to a Study on the Formation of Armenian Identity (ca 600-750)* / Corpus Scriptorum Christianorum Orientalium. Vol. 640, Subsidia. T. 127, Lovanii, 2012, էջ 56 եւն.:

[11] Կ[արապետ] Վ[արդապետ], «Հայոց Եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը դաւանական վէճերի մէջ եւ Բաբկէն Կաթուղիկոս», *Արարատ*, Ժ:1898, էջ 431. նաեւ՝ Կարապետ Ծ. վրդ. Տէրմկրտչեան, *Հայ Եկեղեցու պատմութիւն, մաս Ա* (վերահրատարակութիւն), Ս. Էջմիածին, 2011, էջ 222:

կեղեցու պատմութեան վերաբերեալ հանրաճանաչ հաւաստումներից մէկն այն է, որ «*491 թ. Վաղարշապատի ժողովում Հայ Եկեղեցին ընդունել* է Զենոնի «Հենոտիկոնը», փոխզիջումային միարարական բանաձեւ, որը կոչուած էր հաշտեցնել Քաղկեդոնական ժողովի կողմնակիցներին եւ հակառակորդներին»[12]: Հայր Միքայէլ Չամչեանը, օրինակ, գրում է, որ «*Յետ-ւին պատմիչք, ...ասեն՝ թէ Ներսէս Աշտարակեցին է այն, որ ժողով առարեալ ՚ի Դուին, զառաջինն նզովեաց զսուրբ ժողովն Քաղկեդոնի. իսկ հին պատմիչք զԱշտարակեցուն ինչ ոչ ասեն. այլ աւանդեն, թէ Բաբկէն հերքեաց զայն. եւ զի վկայութիւն այդ առաւել է քան զյետնոյց ...*»[13]: Եւ այս հարցում հայ մատենագրութեան մէջ տեղ գտած հակասական տեղեկութիւնների համեմատական վերլուծութեան հիման վրայ յանգում է այն հետեւութեան, որ թէ «*... քանի՛ անհիմն բանք գտանին ՚ի գիրս յետնոց ՚ի վրայ այսպիսի ժողովոց*»[14]: Հայ կաթոլիկ միաբանների համար բնորոշ այդ մօտեցման կողմնակից է նաեւ Ա. Պալճեանը, ով հիմք ընդունելով Կղեմէս Գալանոսի *Պատմութիւն*ը, գրում է. «*Արդի պատմագիրներէն ոմանք՝ հայոց անկումը 491ին Վաղարշապատու ժողովին մէջ (Քաղկեդոնի ժողովքէն 40-50 տարի եփքը), Բաբկէն Կաթողիկոսի օրերը դնել ուզեցին. բայց՝ ինչպէս մեզի կ'երեւայ, առանց հիմնական պատճառի: Թէ՛ հին եւ թէ՛ միջին դարերու՝ Յակոբեան աղանդէ ազատ՝ ազգային պատմիչները նոյնպէս վանքերու մէջ հնուցմէ պահուած յիշատակարաններ եւ ողջամիտ Հարք մեր դրութիւնը կը վկայեն. որոնց վրայ երկար խօսիլն աւելորդ է*»[15]:

Կարսոյեանը հաւանական է համարում, որ Բիւզանդական կայսերական Եկեղեցու հետ Հայ Եկեղեցու յարաբերութիւնները աւելի տեւական են եղել, քան նախկինում կարծել են, թէեւ ակնյայտ է նաեւ, որ յայտնի սահմաններում այդ յարաբերութիւններն աչքի են ընկել բարդութեամբ: Այդ հիման վրայ նա գտնում է, որ Վաղարշապատի 491ի ժողովում Հայ Եկեղեցին Կովկասի այլ եկեղեցիների հետ միասին «արեւելեան մեկնաբանութեամբ» ընդունել է վարդապետական միութեան՝ Հենոտիկոնի հրովարտակը[16]: Վերլուծաբանն իր մօտեցումը փաստում է Դուինի 505/506ի ժո-

---

[12] Арутюнова-Фиданян В. А. «Повествование о делах армянских» (VII в.), *Источник и время* («Պատմութիւն հայոց հարցի մասին» (VII դ.), ակունքները եւ ժամանակը), Մոսկուա, 2004, էջ 42. նաեւ՝ Dulaurier, էջ 30-32. նաեւ՝ Fortescue, էջ 412:

[13] Միքայէլ վրդ. Չամչեանց, *Պատմութիւն հայոց ՚ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ տեառն 1784. ըստ աւանդելոյ այլեւայլ մատենագրաց, հտր. Բ.*, Վենետիկ, 1785, էջ 490:

[14] Նոյն, էջ 494-95:

[15] Աղեքսանդր Վ. Պալճեան, *Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հռոմեական Եկեղեցւոյ ի Փլորենտիոյ Սիւնհոդոսի*, Վիեննա, 1878, էջ 18:

[16] Garsoïan, էջ 158, 194. նաեւ՝ Գելցէր, էջ 48. նաեւ՝ F. Tournebize, *Histoiare politique et religieuse de l'Armenie*, Paris, 1900, էջ 90 եւն.:

ղովի այն յայտարարութեամբ, թէ «հոռոմները, հայերը, Վիրքը եւ Աղուանքը նոյն հաւատքն են դաւանում»[17]: Իր ժամանակին Տէրմկրտչեանը եւս պնդել է, որ յետքաղկեդոնական 50-60 տարիների ընթացքում «... *հայերը շատ մօտ պէտք է զգացած լինին իրենց յոյներին, հաւատով անբաժան նոցանից, եւ դաւանութեան նկատմամբ նոցա առաջնորդ հայեցակէտն այն էր, թէ Զենոն եւ Անաստաս ուղղափառ կայսրերը մի անգամ ընդմիշտ վերականգնել էին համայն քրիստոնէութեան համար նախնական, Նիկէական ուղիղ հաւատը, եւ ո՛չ Նեստորի միջոցաւ եւ ո՛չ նորանից յետոյ եղած որեւէ ներմուծութիւն ընդունելի չէր*»[18]:

Սակայն *Գիրք թղթոց*ի հրատարակութիւնից յետոյ անառարկելի վաւերագրերի՝ Բաբկէն կաթողիկոսի դաւանաբանական թղթերի հիման վրայ առաջադրուել է բաւականին հիմնաւոր այն տեսակէտը, որ Հայ Եկեղեցին առաջին անգամ տեղական ժողովում քաղկեդոնական հաւատքի սահմանումը մերժել է 505/506ի միջակայքում, իսկ ժողովի անցկացման վայր է համարուել Դուինը[19]: Ընդ որում, հայագիտութեան մէջ գերիշխող տեսակէտի համաձայն «*Քաղկեդոնի ժողովի վերաբերմամբ հայոց կաթողիկոսի բռնած այս դիրքն ունեցել է իր նախապատրաստական շրջանը, ... եւ այդ դիրքը պաշտօնապէս որոշուած է 508 թուականից արդէն առաջ եւ ոչ թէ, ինչպէս կարծում են առաջին անգամ՝ մօտաւորապէս 508 թ.*»[20]: Ինքնին հասկանալի է, որ այս հարցում նոյնպէս քաղկեդոնական ընդդիմութիւնը անհարկի որոնումների մէջ է: Նրանց կողմից մասնաւորապէս փորձ է արտում «հիմնաւորել», թէ իբր Դուինի 506ի ժողովի դաւանական բնոյթի որոշումները «թելադրուած» են եղել օտարների, մասնաւորապէս ասորական միաբնակների (Սիմոն Բէթ Արշամացու) կողմից, որոնք հայերին կարողացել են հաւաստիացնել, որ «Քաղկեդոնի ժողովը ոչնչացրել է Եփեսոսի աշխատանքը»[21]:

Գելցէրը հիմնահարցի լուծումը կապել է Զենոն եւ Անաստաս կայսրերի աստուածահաճոյ վարքով ուղղափառ աւանդութիւնը վերահաստատելու գործընթացի հետ եւ պնդել. «... *փեսութեամբ կը մեկնուի նաեւ այն՝ որ 491ին Բաբկէնի ի Վաղարշապատ գումարած ժողովն, ուր ժողովեցան ոչ միայն հայ եպիսկոպոսներ, այլ եւ աղուան եւ (21) վրացի եպիսկոպոսներ իրենց Գաբրիէլ կաթողիկոսին հետ, հանդիսապէս դատապարտեց Քաղկեդոնի ժողովն, Լեւոնի թուղթը եւ Բարծուման (Ուխտանէս Բ, 50) եւ «ի նմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կային: Եւ այսպէս յայսմ ժա-*

---

[17] Garsoïan, էջ 444:

[18] Տէրմկրտչեան, *Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն,* էջ 226:

[19] Կարսոյեանը ժողովն անուանում է նաեւ «Բաբկէնի ժողով» (L'Eglise arménienne, էջ 158-67):

[20] Մանուկ Աբեղեան, «Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Ա», *Երկեր, հտր.* Գ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1968, էջ 672-73:

[21] Fortescue, էջ 411-12:

*մանակի մի հաւատ բարեպաշտութեան առ հասարակ հաստատեալ լինէր յաշխարհին Հոռոմոց, Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ հաւասար ամենեցունց (Յովհ. Կթղ. Եղմ. էջ 43)*»[22]:

Այդ ենթախորքում անվերապահ մերժելի պէտք է համարել այն պնդումը, թէ իբր Բաբկէն կաթողիկոսի «*... օրով է՝ որ կը սկսի մատենագրական քան պատմական խառնակութիւնը՝ կրօնական խնդրոց հետ միասին*»[23]: Քաղկեդոնական ջատագով հայր Վարդան Հացունու համար նշեալ «խառնակութիւնը» աւելի քան «ակնյայտ է», երբ անդրադարձ է կատարում Բաբկէն կաթողիկոսի Ա. թղթին: Այդտեղ նա ամէնեւին չի քննարկում թղթի վաւերականութեան հարցը, սակայն միանգամայն այլ կերպ է մեկնաբանում դրա բովանդակութիւնը: Նրա դիտարկումը հետեւեալն է. «*Չորս բան կ'ուսանինք այս կարեւոր յիշատակարանէս: Նախ՝ որ Հնայ ժողովիդ խնդրոյ նիւթն է միայն* նեստորականութիւնը, *եւ չկայ բնութեանց հարց կամ ակնարկութիւն: Երկրորդ՝ իրենց գործը Պարսկաստանի եւ ասորւոց հերձուածողաց դէմ է, որոնք կը յիշուին մի առ մի: Երրորդ՝ ադոնց մէջ հայք չեն խառներ Քաղկեդոնի ժողովոյն եւ անոր հետեւողաց անունները: Չորրորդ՝ անգամ մ'ալ կը հաստատեն յայտնապէս՝ թէ կը շարունակէին դաւանակից մնալ հոռոմոց ու դրացի ազգերուն*»[24]:

Իսկ այն՝ որ Բաբկէն կաթողիկոսի Ա. թղթում Քաղկեդոնի ժողովը մերժելու կամ նզովելու մասին ոչ մի յիշատակութիւն չկայ, նրա կողմից ոչ միայն որակւում է որպէս «հայոց կաթողիկոսին զգուշաւոր ընթացք», այլեւ բերում է ընդհանրացնող այն հետեւութեան, թէ դրանից հետեւում է, որ «*... Բաբկէն շատ հաւանօրէն իւր սրտին մէջ կը շարունակէր պահել նոյն ժողովին հանդէպ յարգանքը, զոր ցուցեր եւ աւանդեր էին իւր նախորդները*»[25]: Իրականութիւնը, սակայն, արմատապէս հակադիր է այդ պնդմանը: Այդ պարագայում միտումնաւոր մոռացութեան է տրուած անհերքելի այն փաստը, որ Դուինի ժողովն ընթացել է այն պայմաններում, երբ «*Արեւելքը մերժել էր նոր, դրսից իրեն վզին փաթաթած դաւանանքը եւ «միաբնակ» կամ մոնոֆիզիտ կոչուած կուսակցութիւնը յաղթանակը տարել էր Զենոն կայսեր «Հենոտիկոն» հրովարտակով (482), որի մէջ թէեւ Քաղկեդոնի ժողովն իւր որոշումներով բացորոշ կերպով չէր դատապարտուած, բայց այն ձեւով էր յիշուած, որ դատապարտութեան հաւասար էր, հենց որ մարդ ուզենար Հենոտիկոնի մտքերի խորը թափանցել*»[26]: Իսկ այն, որ Ե. դարի

---

[22] Գելցէր, էջ 49:

[23] Հայր Վարդան Վ. Հացունի, *Կարեւոր խնդիրներ Հայ Եկեղեցւոյ պատմութիւնէն*, Վենետիկ-Ս. Ղազար, 1927, էջ 358:

[24] Նոյն, էջ 359:

[25] Նոյն, էջ 363:

[26] Երուանդ վրդ. Տէրմինասեանց, *Հայոց Եկեղեցւոյ յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ. հայկական եւ ասորական աղբիւրների համաձայն*, Ս. Էջմիածին, 1908, էջ 64-65:

երկրորդ կէսին եւ Զ. դարի առաջին տասնամեակներին քրիստոնէական արեւելքը, այդ թւում՝ Հայաստանին սահմանակից երկրները անվերապահ հակադրուել են Քաղկեդոնին[27] եւ ուղղադաւան են համարել միմիայն «Հոգւոյն Սրբով վերջնականապէս որոշուած եւ կնքուած» առաջին երեք տիեզերական ժողովները, կարելի է փաստել այդ շրջանի հակաքաղկեդոնական բազմաթիւ ժողովների առկայութեամբ[28]:

Այդ ենթախորքում, վերանայման կարիք ունի նաեւ Մաղաքիա արք. Օրմանեանի այն մօտեցումը, թէ քաղկեդոնականութեան հարցը *«... մինչեւ Բաբկէնի օրը, հայոց համար գոյութիւն ունեցող խնդիր մը չէր, եւ քաղաքական կացութիւնն ալ առիթ չէր ներկայեր, յունական կողմին գործերով եւ խնդիրներով զբաղիլ»*[29]: Հիմնահարցի վերաբերեալ առաւել հիմնաւորուած է ականաւոր աստուածաբան եւ հայագէտ Տէրմկրտչեանի տեսակէտը, ով բնագրերի համակարգային վերլուծութեամբ փաստում է, որ արդէն 480ականներին «Հենոտիկոն»ի ազդեցութեամբ Հայ Եկեղեցին պաշտօնապէս կանգնել էր հակաքաղկեդոնական քրիստոսաբանութեան դիրքերում[30]: Այդ ենթախորքում անվերապահ խոտելի պէտք է համարել նաեւ

---

[27] Քաղկեդոնականութիւն արմատաւորելու կայսերական հրովարտակների դէմ ուղղուած անհնազանդութեան եւ հակաքաղկեդոնական շարժումների մասին տե՛ս՝ G. Bardy, "Du Concil de Chalkedoine a l'avenement de Justin Ier (451-518)," *Histoire de l'Église depuis les origines jusqu'à nos jours, T. IV*, (sous la direction de A. Fliche et V. Martin), Paris, 1937, էջ 271-72, 276, 287, 289-90. նաեւ՝ R. Devreesse, *Le Patriarchat d'Antioche depuis la paix de l'Église jusqu'à la conquête arab*, Paris, 1945, էջ 63-76. նաեւ՝ Abbé L. Duchesne, *Autonomies ecclésiastiques*, Églises séparées, Paris, 1905, էջ 40. նաեւ՝ W.A. Wigram, *The Separation of the Monophisites*, London, 1923, էջ 16, 63, 147 եւն.:

[28] Քաղկեդոնի ժողովը նեստորականութեան հետ կապող եւ քաղկեդոնական դաւանական սահմանումը վերացնելու պահանջով քրիստոնէական արեւելքում գումարուած հակաքաղկեդոնական ժողովներից առաւել ազդեցիկ դեր են կատարել Աղեքսանդրիայի 457ի, 477ի (ղեկավար՝ Տիմոթէոս Էլուրոս) եւ 482ի (ղեկավար՝ Պետրոս Մոնգոս), Անտիոքի 477ի, 485ի (ղեկավար՝ Պետրոս Գնափէս) եւ 512ի (ղեկավար՝ Սեւերոս Ակեփալոս), ասիական եպիսկոպոսների Եփեսոսի 447ի ժողովները, Անաստաս կայսեր կողմից 496ին Կ. Պոլսում եւ 512ին Սիդոնում հրաւիրուած եպիսկոպոսական եւ 512ի (ղեկավար՝ Տիմոթէոս Կոլոնոս – Լիտրովուլոս) ժողովները (*Sacrorum conciliorum nova et amplissima collectio, Vol. VII (Ab anno CCCCLI. ad annum CCCCXCII. inclufive)*, (ed. by J.-D. Mansi), Florentiæ, MDCCLXL (1762), էջ 909-1166, *Vol. VIII (Ab anno CCCCXCII. ad annum DXXXVI. Inclufive)*, Florentiæ, MDCCLXL (1762), էջ 185-376:

[29] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտր. Ա*, Ս. Էջմիածին, 2001, սիւնակ 568:

[30] Կարապետ Տէրմկրտչեան, «Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրագոմեցի», *Շողակաթ (Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու)*, Ա:1913, Վաղարշապատ, էջ 89-93. նաեւ՝ Գալուստ Տէրմկրտչեան, «Հայ մատենագրութեան հնագոյն թուականները», *Շողակաթ*, Ա:1913, Վաղարշապատ, էջ 158:

քաղկեդոնական հեղինակների այն սնանկ պնդումը, թէ իբր «… *քաղկեդոնական խնդիրների շուրջ հայ քրիստոսաբանութիւնը տատանւում էր՝ նեստորականների… եւ եւտիքականների միջեւ*»[31]: Առարկայական վերլուծաբաններն ամէնեւին չեն մերժում, որ «… *Հայոց Եկեղեցու մաքառումը Զ. դարում գրեթէ ամբողջապէս նեստորականութեան դէմ է ուղղուած եղել. իսկ Դուինի Ա. ժողովում, 506 թ., Բաբկէն կաթուղիկոսի օրով, Քաղկեդոնի նկատմամբ նա այն դիրքն է բռնել, ինչ որ նոյն ժամանակի՝ Զենոն եւ Անաստաս կայսրերի կառավարած պետական եկեղեցին, այսինքն՝ լռելեայն միայն դատապարտել է*»[32]:

Վերանայման կարիք ունի նաեւ Ակինեանի այն տեսակէտը, թէ Դուինի 506/508ի ժողովից բացի Բաբկէն կաթողիկոսի օրօք կայացել են նաեւ Հայ Եկեղեցու տեղական երկու այլ ժողովներ եւս: Առաջինը նա թուագրում է Բաբկէն կաթողիկոսի առաջին թղթով եւ պնդում. «*Ըստ այսմ պէտք է ենթադրել թէ Բաբկէնի Ա. թղթին մէջ յիշուած ժողովն գումարուած է 510ին*»: Ինչ վերաբերում է Բաբկէնի Բ. թղթին, վերլուծաբանի կարծիքով այն աւելի ուշ շրջանի է, որը «… կարելի է դնել 514/5ի մէջերը[33]»: Իսկ այն ժողովը, որին մասնակցել են նաեւ վրաց եւ աղուանից կաթողիկոսութիւնները եւ որտեղ «*Զենոն բարեբանեալ թագաւորի թղթին համեմատ նզովուած են «Քաղկեդոնի Ս. ժողովն ու Մեծին Լեւոնի Տումարը … չի կարող այս ժողովն նոյնն ըլլալ Ա. եւ Բ. թղթոց մէջ յիշատակուած ժողովոց հետ: Ժողովը գումարուած կ'երեւայ Ա եւ Բ ժողովներու մէջ տեղը իբր 512-3, վասն զի Բ թղթի մէջ Քաղկեդոնի ժողովն արդէն մոլորական կը համարուի եւ Զենոնի Հենոտիկոնին քաջ յարեալ*»: Իսկ ժողովի գումարման տեղ է համարւում «հայոց *նոր քաղաքը*, այսինքն Վաղարշապատի Մայր Եկեղեցին», որը ոչ միայն «*աւելի կեդրոնական էր Վրաստանէն, Աղուանից եւ Սիւնեաց երկիրներէն գալու եպիսկոպոսաց համար*», այլեւ նրանով, որ վրացիները «*վարժած էին ուխտաւորութեամբ հոն գալ Կաթողիկէին եւ Կուսանաց մատուռներուն այցելութիւն ընելու*»[34]:

Նպատակավրէպ է նաեւ կաթողիկէ միաբանի մէկ այլ մօտեցումը, երբ վկայակոչելով Թէոփանէս պատմիչին, նա գրում է, թէ 508ին «… *թագաւորն Անաստաս սրիպէր զեպիսկոպոսն Անտիոքայ՝ զՓղաբիանոս ձեռն*

---

[31] «Դամասկինոս վրդ. Պապանդրէու, Հայ Եկեղեցու հիմնադրումը եւ կազմաւորումը մինչեւ Դ տիեզերական ժողովը»՝ Եզնիկ արք. Պետրոսեան, *Ներածութիւն Հայ Եկեղեցու քրիստոսաբանութեան,* հրատ.՝ Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, Երեւան, 2016, էջ 161:

[32] Կ[արապետ] Վ[արդապետ], «Թիւրիմացութիւններ Հայոց Եկեղեցւոյ պատմական անցեալի նկատմամբ», *Արարատ*, Թ-Ժ:1902, էջ 832:

[33] Հ. Ն. Ակինեան, «Մատենախօսական. հայ եկեղեցական իրաւունքը», *Հանդէս ամսօրեայ*, 7:1904, էջ 211:

[34] Նոյն, էջ 211-12. նաեւ՝ Հ. Ն. Ակինեան, «Մատենագրական. քննութիւն եւ համեմատութիւն Եզնկայ նորագիւտ ձեռագրին», *Հանդէս ամսօրեայ*, 1-2:1904, էջ 42:

*արկանել Հենոտիկոնին Զենոնի, որ արար իսկ ժողով եպիսկոպոսաց, որ ընդ իւրեանն էին, գրեաց գիր երկայնաձիգ, յորում ընդունէր զժողովս Նիկիայ, Կ. Պոլսի եւ Եփեսոսի, իսկ զժողովէն Քաղկեդոնի ամէնեւին իսկ լռէր*»[35]: Եւ քանի որ ըստ Ակինեանի «*Հայոց, վրաց եւ աղուանից եկեղեցական կապն Անտիոքի պատրիարքութեան հետ ծանօթ իրողութիւն է: Անշուշտ այս կապի շնորհիւ՝ Անտիոքի միջնորդութեամբ Անաստասի ձայնն լսուեցաւ ի Հայս. եւ Զենոնի Հենոտիկոնին թարգմանութիւնն Անաստասի թղթին հետ (յամէ 506) նաեւ ի Դուին խաւրուեցաւ յամի 508: Անաստասի խնդիրքն լսելի եղեւ մանաւանդ այնու, որ ի Միջագետս եւ ի Հայս Պարսից դէմ՝ տարաւ յաղթութիւնք ... իւր անունն փառաւորած էին այն կողմերը*»[36]:

Իրականութիւնն այն է, որ Հայ Եկեղեցին արդէն Ե. դարի վերջին քառորդում ճշտել էր իր դիրքորոշումը Քաղկեդոնի ժողովի նկատմամբ, եւ համարելով, որ հակաքաղկեդոնական քրիստոսաբանութիւնը միակ ուղղադաւանն ու աւանդապաշտն է՝ հանդէս էր եկել հաւատքային այդ դիրքերի պաշտպանութեամբ: «*506 թուականից առաջ արդէն որոշուած է եղել Հայոց Եկեղեցու դիրքը մի բնութեան եւ երկու բնութեան վերաբերմամբ*,- գրում է Աբեղեանը,- *քանի որ այդ որոշ է ըստ Ղ. Փարպեցու Թղթի, նոյնիսկ Եւտիքէսին նզովելով հանդերձ: Այդ կատարուած է հաւանօրէն Յովհան Մանդակունու կաթողիկոսութեան ժամանակ, երբ եւ 480-84ի միջեւ թարգմանել են Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնը, երբ Քերթողահայր Մովսէսը, ապա եւ Յովհան Մանդակունի կաթողիկոսը գրել են իրենց յայտնի թղթերն ընդդէմ երկաբնակութեան*»[37]:

Փաստական նիւթի վերլուծութիւնը նաեւ ցոյց է տալիս, որ յետքաղկեդոնական քրիստոսաբանական վիճաբանութիւնների ընթացքում նեստորականներն ամէն կերպ աշխատել են իրենց հերձուածող ուսմունքն արմատաւորել Հայաստանում, որի պատճառով այդ հիմնահարցը ժողովական լուծում է պահանջել: Նեստորական հերձուածի նկատմամբ Հայ Եկեղեցու դիրքորոշման, ինչպէս նաեւ Զ. դարասկզբի դաւանական շարժումների ու գործող անձնաւորութիւնների վերաբերեալ արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում «Թուղթ հայոց ի Պարսս առ ուղղափառս» վաւերագիրը, այլ կերպ ասած՝ Բաբկէն կաթողիկոսի Ա. թուղթը[38]:

Ինչպէս բազմաթիւ այլ հարցերում, այս պարագայում եւս քաղկեդոնական վերլուծաբանները, նենգափոխելով պատմական իրականութիւնը,

---

[35] Հ. Ներսէս Ակինեան, *Կիւրոն կաթողիկոս վրաց: Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց յեօթներորդ դարու մէջ (Քառասնամեայ շրջան Հայոց եկեղեցական պատմութենէն. 574-610)*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1910, էջ 92:

[36] Նոյն, էջ 92-93:

[37] Աբեղեան, *Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք Ա*, էջ 673:

[38] *Գիրք թղթոց, մատենագրութիւն նախնեաց*, (Բ հրատ.), տպ. Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, էջ 147-56:

փորձում են «հիմնաւորել», թէ իբր այդ վաւերագիրն ուշ շրջանի երկ է[39], սակայն այդ տեսակէտը քննադատութեան չի դիմանում: Ճիշտ է, ինչպէս վերը ցոյց է տրուել, հայագիտութեան մէջ տարբեր կարծիքներ են արտայայտուել Բաբկէն կաթողիկոսի թղթի շարժառիթների մասին, սակայն հերքելի չէ, որ այն թուագրւում է Զ. դարասկզբով, աւելի որոշակի՝ Դուինի 506ի տեղական ժողովով: Այդ ենթախորքում հաւանական է համարւում, որ ժողովը հրաւիրուել է ներեկեղեցական յարաբերութիւնները քննարկելու եւ Զենոնի «Հենոտիկոն»ի նկատմամբ որոշակի կեցուածք մշակելու միտումով[40]:

Դուինի 506ի ժողովի գործունէութեան մասին արժէքաւոր տեղեկութիւններ է բովանդակում Բաբկէն կաթողիկոսի առաջին թուղթը: Նրանում հաւաստւում է, որ մինչ հայոց կաթողիկոսը, եպիսկոպոսները, վանականներն ու նախարարները ժողովուել էին հայոց ոստան Դուինում, այնտեղ է ժամանում նաեւ Պարսկաստանի ուղղադաւան քրիստոնեաների մի պատգամաւորութիւն եւ հաւաստիացնում, որ իրենց սպառնում է «չարութեան խմոր անսուրբ նեստորականութիւնը», որը «*... ի տեղիս տեղիս ժողով արարեալ գլխաւորաց հայհոյութեան հերձուածոյն, երբեմն ի Գունդշապուհ, երբեմն յԱսորեստանի, Ակակ եւ Բարծումա, եւ Մանի, եւ Յոհաննան, եւ Պաւղէ եւ Միքա, եւ այլք նոցին հաղորդք, զՆեստորի եւ զԴիոդորի. եւ զԹէոդորոսի միաձայնելով զմի ասացուածս եւ զամպարշտութիւնս անձանց. եւ այսու ձեռնարկութեամբ յամենայն ժամ առաջի իշխանաց եւ դպրաւորաց բազում աշխատութիւն եւ վշտանգս հասուցանեն յանձինս մեր, եւ այլոց ամէնեցուն ուղղահաւատից, որ յաշխարհիս մերում են*»[41]: Եւ չկարողանալով տանել այդպիսի չարահնար եւ դառը հայհոյութիւնը, նրանք դիմում են Հայ Եկեղեցուն «*... վասն նորին վշտանգի եւ նեղութեան, գտանել աւգնականութիւն վկայութեամբ աստուածային գրոց, որպէսզի հաստատուն կացցեն անշարժ սրբոց հարցն աւանդութիւնք եւ պատուէրք, եւ մի՛ հանապազորդ նեղութիւնք հոգեկան եւ մարմնական տարակուսանաւք վասն այդպիսի իրաց տառապեցուսցէ զմեզ*»[42]: Ընդառաջելով խնդրանքին, հայոց կաթողիկոսը ժողովականների անունից պարզաբանել է «*... սպուգութիւն քրիստոնէութեան, հաւատ ... ըստ կանոնի եւ գիտութեան աշխարհին Հոռոմոց եւ Հայոց, Վրաց եւ Աղուանից, եւ մի՛ վայրապար բանիւք եւ աւելորդ իմացուածովք խրամատեսցի եւ սահման առ ի Քրիստոս հաւատացելոց*»[43]:

---

[39] Հացունի, *Կարեւոր խնդիրներ*, էջ 362:

[40] Գարեգին Սարգիսեան, *Քաղկեդոնի ժողովը եւ Հայ Եկեղեցին*, էջ 231-32. նաեւ՝ Երուանդ վրդ. Տէրմինասեանց, *Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ*, Ս. Էջմիածին, 1908, էջ 65-70:

[41] *Գիրք թղթոց*, էջ 151:

[42] Նոյն, էջ 150:

[43] Նոյն, էջ 151:

**Վերոբերեալը միանգամայն ակնյայտ փաստում է, որ Դուինի 506ի ժողովի հրաւիրման պատճառն ամէնեւին էլ ասորի ուղղափառները չեն**: Հակառակը, նրանք Հայաստան են հասել ժողովական քննարկումների ընթացքում: Եւ քանի որ պատուիրակների նպատակը եղել է պարզել նեստորականութեան նկատմամբ Հայ Եկեղեցու դաւանական դիրքորոշումը, ինչպէս նաեւ օգնութիւն են խնդրել այդ հարցում, ժողովի անունից **Բաբկէն կաթողիկոսը ասորիներին է ներկայացրել Նիկիական Հանգանակի հիման վրայ շարադրուած Հայ Եկեղեցու հականեստորական դաւանագիրը**: Նրանում հռչակուել է Աստուածորդու՝ Յիսուս Քրիստոսի աստուածային էութեան եւ Կոյս Մարիամի միջոցով իրական մարդեղացման վարդապետութիւնը: Հայոց կաթողիկոսը հաւաստել է. «*Այսպէս հաւատացաք, որպէս մկրտեցաք, եւ սուրբ հարքն կանոնեցին, եւ այլ սահման՝ արտաքոյ այսորիկ կանոն ոչ է, եւ ոչ ընկալաք, եւ ոչ ընդունիմք*»[44]:

Անդրադառնալով նեստորականութեան հանդէպ Հայ Եկեղեցու կեցուածքին, թղթում մատնանշուել է, որ նեստորական եպիսկոպոսները «*...զայս խաւսին. երկուս Որդիս ասեն լեալ Աստուծոյ, զմին Աստուածն Բանն հաւասար Հաւր, որ էջն յերկնից, եւ այլն Յիսուս՝ մարդ մահկանացու նման մեր, որ ծնաւն ի Մարիամայ, եւ վասն զի արդարացաւ աւելի քան զամենայն մարդ՝ պատուեցաւ, եւ շնորհաւ կոչեցաւ Որդի Աստուծոյ, անուամբ միայն, եւ ոչ Որդի Աստուծոյ, եւ ոչ հաւասար Հաւր. այլ մարդ էր արարեալ մահկանացու որպէս զմեզս*»[45]: Դուինի ժողովի էութիւնը լուսաբանելու գործում մեծ կարեւորութիւն են ներկայացնում Բաբկէն կաթողիկոսի Ա. Թղթի հետեւեալ տողերը. «*Եւ զի կամեցայք ի մենջ վասն նորին իրաց ուսանել, ծանուցանեմք ձեզ եթէ Հոռոմք եւ մեք Հայք, եւ Վիրք, եւ Աղուանք զհայհոյութիւնս զայս ո՛չ ընկալաք, եւ ոչ ընդունիմք, եւ ոչ հաղո-դիմք, եւ ոչ հաւատամք, այլ եւ նզովեմք, որ այսպէսն ասեն եւ ուսուցանեն*»[46]:

Այդ ամէնը հաւաստում են, որ Թուղթը գրուած է «որոշ նպատակով եւ որոշ խնդրի համար», որից դուրս այլ բանի, ներառեալ «Հենոտիկոն»ի ու Քաղկեդոնի մասին բացէիբաց չի խօսւում[47]: Թղթի այդ առանձնայատկութիւնը յստակօրէն արտացոլուած է նեստորականութեան մասին հայոց հաւատքային հետեւեալ շարադրանքում, որտեղ յիշատակուած են նաեւ քաղկեդոնական ջատագովներ. «*...եւ ասեն հերձուածողքն, թէ Յիսուս Քրիստոս մարդ էր մահկանացու, արարեալ հաւասար մեր, եւ ոչ յերկնից իջեալ, եւ ոչ յերկինս ելեալ, այլ որպէս Եղիա եւ Ենովք վերացան յաւդս եւ*

---

[44] Նոյն, էջ 153: Հայոց նուիրապետը հաւաստել է նաեւ, որ «Զայս հաւատ Հոռոմք եւ մեք Հայք եւ Վիրք եւ Աղուանք ունիմք» (նոյն):

[45] Նոյն, էջ 153:

[46] Նոյն, էջ 155:

[47] Այդ մասին մանրամասները տե՛ս՝ Տէրմինասեան, *Նեստորականութիւնը Հայաստանում 5-6 դարերում*, էջ 201-2. նաեւ նոյնի՝ *Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները*, էջ 71-74:

*չե՛ւ եւս տեսեալ զԱստուած, եւ ոչ տեսանեն զնա մինչեւ լինի յարութիւն: Զայս ասեն նեստորիանոսք ընդդէմ մեր, ուժաւորութեամբ գրոց Դիոդորի եւ Թէոդորի եւ Նեստորի եւ Թէոդորիտի եւ Հաբայի, եւ ի կանոնէ, զոր եդին Ակակ եւ Բարծումէ, եւ Մանի եւ Պաւղի, եւ այլ ընկերք նոցուն*»[48]:

Անհերքելի է, որ պարսից ուղղափառ քրիստոնեաներին յանձնուած Հայ Եկեղեցու դաւանաբանական այդ թուղթը **Հայ Եկեղեցու առաջին ժողովական որոշումն է, որում անվերապահ մերժուել եւ բանադրուել է նեստորականութիւնը**[49]: Ընդ որում, նրանում քննարկուող դաւանական բնոյթի հարցերը, ինչպիսիք **Թէոդորէտ Կիրիացու եւ Իբաս Եդեսացու նզովումն է, ակնյայտօրէն վերաբերում են նաեւ Քաղկեդոնի ժողովին**: Այդ հիման վրայ հայ աստուածաբանական գրականութեան մէջ աներկբայ է համարւում, որ Դուինի ժողովում «*Հայերը կարող էին Քաղկեդոնի ժողովը պաշտօնապէս նզոված չլինել, բայց ասել երբ տեղը գալիս էր, թէ իրենք չեն ընդունում այն՝ նզովել Թէոդորէտին եւ Իբասին, որոնց անունն, իբրեւ Նեստորի համախոհների եւ Կիւրեղ Աղեքսանդրացու հակառակորդների՝ ատելի էր բոլոր արեւելքում. նզովել նաեւ Եւտիքէսին, ցոյց տալու համար, որ նեստորականութեան եւ քաղկեդոնականութեան հակառակ լինելուց չպէտք է հեռուեցնել, թէ Եւտիքէսի մոլորութիւնն են ընդունում*»[50]: Այդ հաւաստումը փաստւում է նաեւ Բաբկէն կաթողիկոսի թղթով, որտեղ ուղղադաւան քրիստոսաբանութեան դիրքերից հաւաստւում է, թէ «*Հոռոմք եւ մեք Հայք, եւ Վիրք, եւ Աղուանք, զհայհոյութիւնս զայս ո՛չ ընկալաք, եւ ոչ ընդունիմք, եւ ոչ հաղորդիմք, եւ ոչ հաւատամք, այլ եւ նզովեմք, որ այսպէսն ասեն եւ ուսուցանեն*»[51]: Եւ միանգամայն ակնյայտ է, որ 506ին հայերն ու յոյները կարող էին միեւնոյն հաւատը ունենալ միայն «Հենոտիկոն»ի հիման վրայ: Այդ ենթախորքին համահունչ է նաեւ Տէրմկրտչեանի տեսակէտը, ով գրում է. «*Բաբկէն կաթուղիկոս իրաւունք ունէր ասելու, թէ «հոռոմք եւ հայք եւ վիրք եւ աղուանք» մի հաւատ ունին, որովհետեւ Դուինի ժողովը գումարուեցաւ Անաստաս կայսեր իշխանու-*

---

[48] *Գիրք թղթոց*, էջ 154:

[49] Տէրմինասեանց, *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները*, էջ 77. նաեւ նոյնի՝ *Նեստորականութիւնը Հայաստանում*, էջ 203:

[50] Կ[արապետ] Վ[արդապետ], «Հայոց Եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը դաւանական վէճերի մէջ եւ Բաբկէն Կաթուղիկոս», *Արարատ*, Ժ:1898, էջ 434: Այդ փաստն է վկայում նաեւ Տէրմինասեանը, ով գրում է. «*Դուինի առաջին ժողովի քննարկումները տեղի են ունեցել Բիւզանդական Զենոն եւ Անաստաս կայսրերի կրօնական քաղաքականութեան ազդեցութեամբ, «երբ քաղկեդոնականութիւնը փաստօրէն եւթ էր մղուած եւ լռելեայն մերժուած էր, բայց յուզուած մտքերը հանգստացնելու եւ կրքերը չգրգռելու համար թոյլ չէր տրւում ուղղակի յարձակումներ գործելու հակառակորդների վրայ*» (Տէրմինասեան, *Նեստորականութիւնը*, էջ 209):

[51] *Գիրք թղթոց*, էջ 155:

*թեան այն տարիներում, երբ ամէն տեղ բացարձակ մի բնութիւն էին ուսուցանում՝ խոտում եւ հալածում քաղկեդոնականներին: Զարմանալի չէ ուրեմն, եթէ նա Քաղկեդոնի ժողովը նկատում է լոկ իբրեւ նեստորականութեան ուժ տուող մի երեւոյթ, մինչեւ վերջինս բոլոր չարեաց արմատն է եւ եկեղեցւոյ ալեկոծման բուն պատճառը*»[52]:

Ահա թէ ինչու հայ աստուածաբանական գրականութեան մէջ աներկբայ է համարւում, որ Դուինի 506ի ժողովը «*ա. ... մերժել է Քաղկեդոնի ժողովը եւ Լեւոնի տոմարը: բ. Այդ ժողովը մերժել է նաեւ նեստորականութիւնը: գ. Քաղկեդոնը մերժելու մեզ յայտնի առաջին յստակ պատճառն այն է, որ այն դիտուել է իբրեւ նեստորականութեանը վերածնունդ տուող մի ուժ*»[53]:

Բաւականին յստակ է նաեւ այն հարցը, թէ Թղթում ինչու են յիշատակւում միայն հայ եպիսկոպոսները, իսկ ժողովի մասնակից հայերին եւ յոյներին հաւատակից վրաց եւ աղուանից եպիսկոպոսները, որոնք նոյնպէս մասնակից են ժողովին, «անհաղորդ են մնացել» դաւանագրին: Այդ հարցի պատասխանը տալիս է Բաբկէն կաթողիկոսն իր երկրորդ Թղթում, ուր յիշատակւում է. «*Այսուհիկ վարիմք հաւատովք զոր եւ գրեցաք իսկ ձեզ յառաջագոյն, Վրաց եւ Աղուանից միաբանութեամբ իւրաքանչիւր աշխարհի գրով: Եւ այժմ զնոյն երկրորդեցաք, ...զի մի ոք համարձակեսցի յայսմ հակառակել եւ ընդդիմանալ պատճառաւ առ ի մէնջ*»[54]: Եւ դժուար է չհամաձայնել այն վերլուծաբանների հետ, որոնք պնդում են, թէ հայոց հայրապետն այդ տողերով հաւաստում է, թէ հայոց թղթի հետ միասին վրաց եւ աղուանից եպիսկոպոսներն էլ իրենց առանձին «Հաւատի նամակն» են տուել պարսից ուղղափառներին[55]:

Վերոբերեալ դիտարկումները թոյլ են տալիս ընդհանրացուած պնդել, որ անկախ ամէն ինչից Բաբկէն կաթողիկոսի առաջին թուղթը հաւաստի աղբիւր է նաեւ այն տեսակէտից, որ միանգամայն ճիշտ է բնորոշում ինչպէս նեստորական ուսմունքի էութիւնը, այնպէս էլ նրա գլխաւոր ներկայացուցիչների՝ Դիոդոր Տարսոնացու, Թէոդոր Մոպսուեստացու, Նեստորի, Թէոդորիտի, Իբասի, ինչպէս նաեւ նրանց համախոհ Պարսից Եկեղեցու ներկայացուցիչների հերձուածող քրիստոսաբանութիւնը: Իսկ որպէս անձնաւորման ուղղադաւան վարդապետութեան հիմք հայոց կաթողիկոսը հռչակել է սուրբ հայրերի կողմից հաստատուած աւանդութիւնը՝ «*... հանդերձ երկոտասան գլխովք Կիւրղի եպիսկոպոսի երանելւոյ, ի նոյն յարելով*

---

[52] Կ[արապետ] Վ[արդապետ], «Հայոց Եկեղեցւոյ առաջին», էջ 434:

[53] Եզնիկ արք., էջ 30:

[54] *Գիրք թղթոց*, էջ 161:

[55] Դուինի 506ի ժողովին Հայ, Վրաց եւ Աղվանից Եկեղեցիների մասնակցութեան եւ դաւանական համամտութեան մասին է յիշատակել նաեւ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսը («Թուղթ Տեառն Մովսիսի Հայոց Կաթուղիկոսի առ Կիւրոն Վրաց Կաթուղիկոս», *Գիրք թղթոց*, էջ 224):

*եւ զթուղթն Զենոնի բարեբանելոյ թագաւորին Հոռոմոց …*»[56]: Այդ պարագան միանգամայն ակնյայտ ցոյց է տալիս, որ թղթում «ուղիղ դաւանութեան ուղեցոյցը» յիշատակւում է «առանց Քաղկեդոնի ժողով եւ Լեւոն պապի անուն յիշելու», իսկ հերետիկոսների կարգում նզովւում են Քաղկեդոնի ժողովի հետ անխզելի կապուած Թէոդորէտը, Իբասը եւ Եւտիքէսը[57]: Այդ հիման վրայ Տէրմկրտչեանը պնդում է. «*Բաբկէն եւ իւր ընկերները, ժողովով որոշել էին Քաղկեդոնի ժողովի նկատմամբ ընդունել այն դրութիւնը, ինչ որ առաջարկել էր Զենոն իւր նշանաւոր* հենոտիկոնով, *այսինքն հերքել քաղկեդոնականութիւնը՝ չյիշելով ամէնեւին նորա եւ նորա գլխաւոր հեղինակների անունները*»[58]:

Դուինի 506ի դաւանաբանական Ա. Թուղթն, այսպիսով, չափազանց մեծ նշանակութիւն ունի Հայ Եկեղեցու պատմութեան համար: Այն, գործնականում, Հայ Եկեղեցու առաջին ժողովական որոշումն է, որը բացայայտօրէն մերժում է նեստորականութիւնը եւ, միաժամանակ, առանց անունը տալու, նաեւ՝ քաղկեդոնականութիւնը: Այդ ամէնն էլ թոյլ են տալիս եզրակացնել, որ Բաբկէն կաթողիկոսի ղեկավարած Դուինի 506ի «*… ժողովը դարագլուխ է կազմում Հայ Եկեղեցու պատմութեան համար …*»[59]:

«*Կարելի է ենթադրել, թէ նոյն ժողովը բազմադիմի խնդիրներ է ունեցել աչքի առաջ եւ ի միջիայլոց քաղկեդոնականութեամբ զբաղուել*»[60]: Այդ եզրակացութիւնը փաստւում է Բաբկէն կաթողիկոսի «ի Պարսս առ ուղղափառս» գրած երկրորդ Թղթով: Նշեալ թուղթը հակաճառական-ջատագովական ուղղուածութիւնից զատ չափազանց կարեւոր նշանակութիւն ունի նաեւ Հայ Եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշման հիմնահարցը պարզաբանելու գործում: Այդ իրողութեան վկայութիւնն այն է, որ թղթում նեստորականութեան առնչութեամբ երկու անգամ յիշատակւում է նաեւ Քաղկեդոնի ժողովը: Իսկ դրանից հետեւում է, որ Բաբկէն կաթողիկոսի օրօք Հայ Եկեղեցին ոչ միայն փաստացի հռչակել է իր հակաքաղկեդոնական դիրքորոշումը, այլեւ Քաղկեդոնի ժողովը համարել նեստորական հերձուածի ամրապնդման հիմքերից մէկը[61]:

Պատճառներից մէկն այն է եղել, որ հայերին դաւանակից Պարսկաստանի ուղղափառները վկայել են, թէ Նեստորական Եկեղեցին «զմարտ պատերազմի նորոգելով»՝ պնդում է իրենց մոլորութեան վրայ՝ «ի ժողովոյն Քաղկեդոնի զօրացեալ»: Դրանով է պայմանաւորուած այն պարագան, որ Բաբկէն կաթողիկոսի Բ. թղթում արդէն ոչ միայն յիշատակւում է

---

[56] *Գիրք թղթոց*, էջ 159:

[57] Կ[արապետ] Վ[արդապետ], *Հայոց Եկեղեցւոյ առաջին*, էջ 434:

[58] Նոյն:

[59] Տէրմինասեանց, *Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները*, էջ 78. նաեւ՝ Կ[արապետ] Վ[արդապետ], «Հայոց Եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը», էջ 434:

[60] Տէրմկրտչեան, *Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն*, էջ 224:

[61] *Գիրք թղթոց*, էջ 158:

քաղկեդոնական հաւատքը, այլեւ վերջինիս հիմքերից է համարում «Նեստոր չարիմաց խորհեցողը»: Իսկ քաղկեդոնականութիւնը որակւում է իբրեւ նպաստաւոր հանգամանք նեստորականութեան տարածման համար, որի պատճառով թղթում մատնանշւում է, որ «Աստուածային բարութիւնից օտարուած» մարդկութիւնը իր այդ ընթացքը շարունակում է «… *մինչեւ ցայսաւր ժամանակի, ալեկոծեալ սուրբ եկեղեցի, ի ժողովոյն Քաղկեդովնի զաւրացեալ*»[62]: Եւ մէկ անգամ եւս հաւաստելով նեստորականութեան նկատմամբ Հայ Եկեղեցու եւ հոգեւոր դասի անփոփոխ դիրքորոշումը, հայոց հայրապետը հաւաստում է, որ ուղղադաւան եւ նեստորական եկեղեցիների պայքարն աւելի սուր բնոյթ է ստացել: Եւ միանգամայն բնական է, որ Թուղթը ոչ միայն անվերապահ հռչակել է Հայ Եկեղեցու անփոփոխ հաւատարմութիւնը Նիկիական հանգանակի եւ ուղղադաւան քրիստոսաբանութեան նկատմամբ, այլեւ հիմնովին մերժել է նեստորականութիւնը՝ նզովելով ե՛ւ հերձուածը, ե՛ւ դրա պարագլուխներին՝ Դիոդորոսին, Թէոդորին, Նեստորին, Թէոդորիտին, Իբաս Եդեսացուն, պարսից աշխարհի նեստորական պարագլուխներ Ակակին, Բարծումային, Բաբէին, ինչպէս նաեւ՝ Եւտիքէսին ու «զնմանս նոցին»[63]:

Ինչ վերաբերում է «… *եւ փախչիմք ուրացեալ զի Քաղկեդոնին սպութիւն Նեսպորի եւ այլոցն նմանից*»[64] պնդմանը, ապա Քաղկեդոնից ուրացեալ փախչելու իմաստն այն է, թէ «*մենք ուրանում (մերժում) եւ փախչում ենք Նեսպորի եւ նրա նմանների սպութիւնից, որոնց ուժ է պուել Քաղկեդոնի ժողովն*» իր յայտնի որոշմամբ: Եւ Բաբկէնի թղթի այս զգուշաւոր արտայայտութիւնները միանգամայն օրինաչափ են եւ համապատասխանում են պատմական իրադրութեանը[65]:

---

[62] Նոյն:

[63] Նոյն, էջ 153, 158:

[64] Նոյն, էջ 157-158:

[65] Այդ կապակցութեամբ Տէրմկրտչեանը գրում է, որ քաղկեդոնականութեան նկատմամբ Դուինի 506ի ժողովում «… *աւելի հաւանականն այն պիտի համարենք, որ … ժողովում նորա վերայ նայել են իբրեւ մի իւր ուժը կորցրած եւ ամէնքի կողմից բարձիթողի եղած մեծութեան վերայ եւ կարեւոր էլ չեն տեսել առանձնապէս ուշադրութեան առնել*», (*Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն*, էջ 225): Իսկ Տէրմինասեանը յաւելում է, որ Բաբկէն կաթողիկոսի Բ. թղթի իմաստը լիովին համահունչ է Զենոնի «Հենոտիկոն»ին: «*Ճիշտ է,*- գրում է նա,- *Քաղկեդոնի անունը պրուած է, բայց բանադրւում եւ նզովւում է նեստորականութիւնը, որը «ուժ է սպացել, զօրացել է» Քաղկեդոնի ժողովի որոշումներով … **ուրեմն եւ խօսք չի կարող լինել Քաղկեդոնի դաւանութեան պաշտօնական դատապարտութեան մասին**, այլ այն նկատի է առնուել իբրեւ մի անցած պատմական երեւոյթ, որի մասին այլեւս որոշում կայացնել հարկաւոր չէ* (ընդգծումը մերն է - Լ.Ք.)», մանրամասները՝ Տէրմինասեան, *Նեսպորականութիւնը Հայաստանում*, էջ 209-10:

Այդ ամէնը թոյլ են տալիս եզրակացնել, որ Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու ընդդիմադիր դիրքորոշման ձեւաւորումը եկեղեցու դաւանական ըմբռնումների բնականոն զարգացման արդիւնքն է: Այդ գործընթացի կարեւոր հանգրուաններից մէկը Վրաց եւ Աղվանից եկեղեցիների մասնակցութեամբ տեղի ունեցած Դուինի 506ի տեղական ժողովն էր, որն անդրադարձել եւ դատապարտել է նեստորականութիւնը: «Հենոտիկոն»ի ոգուն համահունչ ժողովը առնչուել է նաեւ նեստորականութեանն ուժ տուող քաղկեդոնականութեան հետ կապուած դաւանական խնդիրների: Թէեւ ժողովական կանոնների մասին որեւէ վաւերագիր չի պահպանուել, այդուհանդերձ անհերքելի է, որ այն միանգամայն յստակ արտայայտել է Հայ Եկեղեցու հակաերկաբնակ դաւանական դիրքորոշումը, որը դրսեւորուել է նեստորականութեան եւ քաղկեդոնական ակնառու գործիչների բանադրանքի տեսքով: Բաբկէն կաթողիկոսի դաւանաբանական թղթերը աներկբայ հաւաստում են նաեւ, որ Քաղկեդոնի ժողովը լռելեայն մերժելով Հայ Եկեղեցին Եւտիքէսի դէմքով նզովել է նաեւ միաբնակութիւնը՝ ի ցոյց դնելով, որ նեստորականութեանը համահաւասար խոտում է նաեւ հերձուածող այդ վարդապետութիւնը:

## ANTI-CHALCEDONISM IN ARMENIA IN THE EARLY 6TH CENTURY: THE CONFESSIONAL ORIENTATION OF THE DVIN COUNCIL IN 506 (Summary)

LIZA KARIMIAN
liz79k@gmail.com

The paper argues that the issue of the anti-dual (anti-Nestorian, as well as anti-Chalcedonian) position of the Armenian Church concerning the nature of Christ should be discussed in the context of the church realities of the late 480s and the early decades of the 6th century. The paper notes that there is no evidence on the existence of a contest between pro-Assyrian or anti-Chalcedonian, pro-Greek or Chalcedonian currents in Armenia. Besides, the anti-dualistic Christology stance of the Armenian Church laid the basis of the fight against Nestorianism and Chalcedonism, which strengthened the latter in the last quarter of the 5th century.

On the other hand, the stance towards the Chalcedonian Council is entirely consistent with the religious reality established by the Byzantine emperors Zeno and Anastas, whereby Chalcedonism was discretely pushed to backstage. The reason for this "spiritual balancing" policy was that the emperors forbade the opposing factions from open arguments which could provoke further fights among the contesting currents.

Such a policy explains why the Chalcedonian Council was not directly condemned at the Council of Dvin in 506. Nonetheless, the Armenian Church had already openly announced its loyalty to the orthodox proclamations of the first three Universal Councils and the Cyrilian Twelve Anathemas, and had expressed preparedness to unite with the Byzantine Church.

# AN EXAMINATION OF THE INTERSECTION OF POPULISM AND DEMOCRACY: THE CASE OF ARMENIA[1]

**SAMVEL KHACHATRYAN**
samuelkhatchatourian@gmail.com

ABSTRACT

The highly contested construct of populism continues to be under the close investigation of scholars around the world. Its potential positive as well as negative impacts on democracy and democratic institutions are regarded as tenuous and difficult to generalize. However, despite the prime focus of studies on Western (right) and Latin American (left) variations, empirical studies are sparse, and little is analyzed about the populist challenge to democracies, particularly on transitioning democracies that have not attained political resilience against shocks or complex challenges to the system.

The aim of the present research is a) to analyze the impact populism may or may not have had on the nascent democratic system of government in the Republic of Armenia, taking into account the time frame of April/May 2018 up until November 2020; and b) to analyze the populist challenge to democratic institutions and governance under the complex challenges created by the new Coronavirus pandemic and the war in Artsakh. The research adds new knowledge to academia by way of demonstrating the changes in populist manifestation in election campaigns as opposed to in government, also focusing on and analyzing changing patterns of populist impact on key components of the local democratic (unconsolidated) regime, under the unforeseen influence of unexpected and unprecedented challenges.

BACKGROUND

Social science scholars have long considered various aspects of populism,

---

[1] This is an abridged version of the MA thesis presented in May 2021 to the American University of Armenia, Political Science and International Affairs department, in partial fulfillment of the requirements for the degree of Master of Arts in Political Science and International Affairs. The thesis in its original format is accessible through the following link: https://www.academia.edu/99959466/Samvel_Khachatryan_An_Examination_of_the_Intersesion_of_Populism_and_Democracy_2021_

This research would have not been completed without the thorough supervision of Dr. Arpie G. Balian. I would also like to express my gratitude to my family, classmates and closest friends, who were exceptionally encouraging and understanding at difficult times of developing this study.

but the topic gained more resonance and was widely discussed in the past decades, gradually inciting growing debate on perceptions, meanings, implications, and diverse features of the construct (Kaltwasser 2017; Mudde and Kaltwasser, 2017; Stavrakakis and Jäger, 2008). In its early manifestation, populism conjectured demagogic leaders who came on stage making popular promises to the people and building political support by invoking the power of the people (de la Torre, 2015; Mudde, 2004). Gradually, populist movements have emerged in different parts of the world, mobilizing segments of the populace under the guise of achieving improved governance and democratization or other contrasting and divergent notions of practices aimed at influencing the political landscape (Ristov, 2017; Urbinati, 2018).

In retrospect, the resurgence of populism in the 19th century American and Russian movements points to the birth of egalitarian struggle against the elite (Urbinati, 1998; Yaman, 2009; Mudde & Kaltwasser, 2013; Woods, 2014). Whether through a coalition of agrarian activists or the mass political awakening of peasants, these movements were organized and also perceived as intended for corrective reform measures (Mudde and Kaltwasser, 2017; Kudors and Pabriks, 2017; de Vresse et al., 2018; Urbinati, 2018) and demands for restraining the elite from realizing their planned modernization pursuits (Urbinati, 2018; Viviani, 2018).

However, parallel to the gradual transformation of the socio-economic and geopolitical environment in different regions, populism has also taken on different forms and pursued diverse schemas, portraying similar or contrasting articulations of the phenomenon (Mudde, 2004; Mudde and Kaltwasser, 2017; Gidron and Bonikowski, 2013).

## THE CASE OF ARMENIA

Considering that no standard definition has emerged, except for a few prevalent explanations, the concept of populism merits further attention to recognize the potential challenges it poses to democracy and the unique differences among the triggers of history, culture, and sociopolitical position of the country where it sprouts.

The paper is a study of populism in the Republic of Armenia (RA), as manifested in the period of 2018 to November 2020, a time period during which Armenia had just moved to the parliamentary system of government, was challenged by the COVID-19 pandemic and the Artsakh war, and faced ensuing social, political, and economic challenges. It is important to investigate whether or not populism was uniformly manifested during that period (pre-election, rise to power, COVID-19, wartime, and afterwards) and what were the most marked triggers and conceptual underpinnings of those changes, if any.

In April-May 2018, mass protests in major cities across the country grabbed

the attention of the global media and increased interest in studying the dynamics of populist politics and shedding further light on the characteristics and constructs of the phenomenon. The movement, branded the 'Velvet Revolution', was generally peaceful and brought to power its initiator Nikol Pashinyan, the leader of the Civil Contract opposition party. The rhetoric that brought thousands of young and old to assemble in his support was a vivid expression that *"Armenians had grown tired of broken promises, endemic corruption, and the widening gap between the country's haves and have-nots"* as one global reporter wrote in *The Atlantic* on April 24, 2018 in an article titled "Armenian Democratic Triumph".[2] Similar content dominated the local and international media.

An examination of the populist movement in Armenia, before and after the 2018 snap parliamentary elections, will add new insight into the evolving understanding and triggers of the populist phenomenon and lay out its potential influence on the process of democratization. *"The danger in post-revolutionary Armenia was always that Pashinyan, lacking the ability to transform the country quickly or sustainably, would fall back on the populism that got him into power"* wrote a Freedom House expert months after Pashinyan was victorious in the elections.[3] But, not all populism is damaging or counterproductive vis-à-vis the state, which is what the current study examines. Particularly the concepts of power, pluralism, polyarchy, and the democratization process embedded in democratic theory are examined within the populist framework exercised by Pashinyan at different stages of the period considered, before and after the 2018 elections and up to the present.

## POPULISM AS AN IDEOLOGY

The construct put forth by Mudde (2004) reflects a dominant theme in the literature on populism that captures the essence of the concept, beyond the characteristics of populist rhetoric, demagoguery, and power-striving discourse, within the discordant relationship between the 'elite' and the 'people'. Thus, populism is

"*A thin-centered ideology that considers society to be ultimately separated into two homogeneous and antagonistic groups, 'the pure people' versus 'the corrupt elite', and which argues that politics should be an expression of the volonté générale (the general will) of the people. Populism, so defined, has two opposites: elitism and pluralism*" (Mudde, 2004: 543).

The characterization of populism as a "thin-centered" ideology separates it from genuine political ideologies, inferring the absence or deficiencies vis-à-vis

[2] Ironically, on the date of commemoration of the Armenian Genocide.

[3] A tweet by Nate Schenkkan of Freedom House on 20/5/2019.

clear principles and directions (Abromeit, 2017: 3; Woods, 2014: 11).

Moreover, although the Manichean distinction between the people and the elite describes the very essence of populism, it is manifested in different regions and states based on different criteria (Cannovan, 1999: 3-4). Hence, populism *"resists generalizations and makes scholars of politics comparative by necessity"* (Urbinati, 2018: 111).

Despite its thinness, populism (as an ideology) contains several components to establish itself as a unique, internally coherent map of political principles that a populist uses to attain power (Stanley, 2008: 102). The author expounds on the four components necessary for production of a populist ideology,

*"The assumption of the existence of two homogeneous units: the elite and the people; the position of the postulation of an antagonistic relationship between these two entities; the celebration of the idea of popular sovereignty; the positive moral valorization of the people and denigration of the elite"* (Stanley, 2008: 111).

## POPULISM AND DEMOCRACY

### *Populism at Odds with Liberal Democracy*

Within the context of this paper, the term democracy is understood as a system which promotes creating the necessary conditions to protect fundamental rights, including those of minorities. In essence, respect for diverse positions and groups through the advancement of plurality is embedded in liberal democracies, unlike democracies *sans* adjectives, which would essentially mean 'rule by the people' (Mudde and Kaltwasser, 2017). The populist challenge to pluralism as the cornerstone tenet of a liberal democratic regime threatens the regime's gradual reversal to authoritarianism, in which top-down politics eliminates the possibility of exercising evidence-based dialogue among multiple actors and undermines the performance of good governance.

The question whether populism is at odds with democracy *per se* has been rejected by many scholars who conjecture that populism could bolster political participation of the unheard segments of society and rejuvenate democracy (Urbinati, 2018; Mudde and Kaltwasser, 2017; Laclau, 2005; Kazin, 1995; Taggart, 2016). Moreover, some argue that *"Populism per se is neither good nor bad for the democratic system"* (Mudde and Kaltwasser, 2017: 79).

Questions arise, however, when one attempts to separate democracy (as a political regime) from liberal democracy (as a political system), examining the relevant constructs, such as the people, compromise, consensus, sovereignty, etc. (Rostbøll, 2000: 1; 2002: 34). Aside from majority rule and popular sovereignty, democratic institutions are specially designed to protect individual rights and freedoms, and to serve the interests of minorities of different types,

thereby assuring the inclusion of every citizen (de Wagt, 2016).

However, the global changes of 21st century liberal democracies not only serve as reasons for more people to isolate themselves from active political participation, but also underscore the differences among representative institutions and populist forces (Viviani, 2018; de Wagt, 2016). For a populist, these institutions are no longer capable of addressing the ever-changing issues of the people and leave them on the sideline, alienated and unnoticed. Hence, not only populists reject the democratic elements of pluralism (considering all interests of different segments of society), but they also reject a whole segment of society representing the elite and the institutions that pursue its policy agenda (Mueller. 2019; Mudde, 2004; Mudde and Kaltwasser, 2017; Müller, 2016, Urbinati, 1998).

## THEORETICAL FRAMEWORK

The case study builds upon the theory of polyarchy by Dahl (1997: 112-14) to investigate the intersection of populism and key tenets of democratic theory as they relate to the concepts of power, pluralism, and the democratization process in a polyarchy. Whether understood as a regime, a democratization engine, a democratic process, or a system of rights and control by competition, most characteristics of a polyarchy are applicable to the Republic of Armenia, considering that it is neither a developed democracy nor at the starting point in the democratization process of shaping the political order and incrementally strengthening its political institutions.

For the sake of clarity of the term polyarchy, the current research uses it to describe the conjectured form of government that Pashinyan best described as the power vested in the people.

The case study builds upon Dahl's theory within the frame of examining the influence of populism on the democratization process in a polyarchy. In Dahl's theory, polyarchy is understood as the passage to full democracy through the transformation of governance institutions and processes (Bailey and Braybrooke, 2003; Dahl, 1997). Yet, considering the deficiencies and inadequacies associated with ensuring plurality and a gradually maturing democratic process, democracy often remains more of an ideal than an actual functioning system of government, especially given the degree of availability of resources in developing countries. Thus, polyarchy serves as a placeholder or transformative mechanism to stimulate multiplicity of opinion, governance transparency and accountability, citizen participation, and other such democratic practices that prevent regression to tyranny or other forms of oppressive leadership.

Armenia's historical backdrop as well as socio-economic conditions and political-cultural perceptions of the population are considered, albeit narrowly,

in the examination of the triggers that fueled the 'Velvet Revolution' in 2018. The manifestation of populism and the promotion of a populist agenda appear to take on different meanings and direction, and may shift course through changing public discourse in the pre-election period vs. post-election, when the key actors assume new roles, i.e., revolution leader vs. statesman, election campaign technologist vs. parliament member, etc.

Thus, aside from investigating the intersection of populism and democracy in Armenia, the case study uses a comparative lens to add new knowledge about how the concepts of power, plurality and process were applied in the pre-election populist movement vs. post-election populist governance and in wartime. The research questions are:

Q1: How has populism influenced the exercise of power? A comparative lens that examines the power to win elections, power to rule, power to maintain legitimacy and popularity in face of multiple unprecedented challenges is used.

Q2: Did the changing circumstances require the government to exercise plurality and/or more consolidation among political parties?

Q3: How did the parliamentary regime employ the "polyarchy" system as a platform to maintain a majority or to foster political competition for electoral support?

Q4: How has the democratic process developed or advanced to integrate more responsibility and responsiveness to the people?

These research questions were used as the basis for developing the data collection instruments used in the case study.[4]

The hypotheses tested are:

H1: The exercise of populist power in the period examined changed from pre-election to post- election, COVID-19, and the Artsakh war.

H2: The arising new circumstances required the government to exercise more plurality and seek more consolidation with political parties.

H3: The government employed the system, "the polyarchy", as an advantageous platform to foster political competition.

H4: The populist government increased responsibility and responsiveness to the people to combat the unprecedented challenges imposed by COVID-19 and the Artsakh war.

To answer the research questions posed and to test the hypotheses stated above, the study uses a causal-comparative design to analyze the relationships among the concepts embedded in democratic theory within a populist context. The research methodology is mixed and employs both qualitative and quantitative data in a transformative sequence fitting to the time constraints of the current research. The qualitative data included speeches by Nikol

[4] For these and similar details, kindly refer to the original thesis.

Pashinyan *(n = 14)*, followed by in-depth interviews *(n = 12)* with scholars with a background in political science *(n = 6)* and politicians from different political parties, ruling as well as opposition *(n = 6)*.

> I can tell you that only some individuals and non-governmental organizations initiated some kind of program and thought about strengthening the relationship between the Syrian and native Armenians and increasing their social and political participation.

To the question whether ten years is a sufficient period for Syrian Armenians to become acquainted with the social and political culture of Armenia and whether this allows them to obtain a position in the government, the vast majority of the respondents stated that five years is sufficient to acquire the political culture of Armenia.

Interviews with native Armenians were important to examine their attitude towards the Diaspora's political participation in Armenia, particularly Syrian Armenians' political inclusion and participation. The findings indicate that the general attitude is neutral.

From the survey analysis and semi-structured interviews with Syrian Armenians, it can be inferred that Syrian Armenians' inclusion in the political life of Armenia has been achieved to some degree. The interviews with native Armenians, on the other hand, implied that their general attitude towards the political participation of Syrian Armenians is neutral.

CONCLUSION

The combined results of the survey and semi-structured interviews with Syrian Armenians imply that the political integration of Syrian Armenians in Armenia has been achieved to some degree.

First, by comparing the political participation of Syrian Armenians in Syria and in Armenia, the study found that Syrian Armenians are more actively engaged in politics in Armenia. This, in turn, implies that the political culture of Armenia impacts Syrian Armenians' political participation.

Second, by comparing the participation of Syrian Armenians in political activities in Armenia in the early stages after immigration with their participation after approximately ten years, it is noted that Syrian Armenians are more actively involved in politics today. The combined results of the quantitative and qualitative analysis also reveal that the political awareness and political participation of Syrian Armenians in Armenia are increasing over time.

The major findings derived from the analysis are that the time factor and political developments have played a crucial role in the process of political inclusion. By comparing voting in elections, following the news, and online activities in the earliest stages after immigration with today's reality, and by comparing participation during the Nagorno Karabakh Wars of 2016 and of 2020, the aforementioned argument is confirmed. The conclusions about the impact of political developments on the political integration of Syrian Armenians was reached not only by looking at the participation of Syrian Armenians in the Nagorno Karabakh Wars. The study also looked into the participation of Syrian Armenians during the Velvet Revolution and inferred that their participation during the protests of April-May 2018 and their participation in snap parliamentary elections were relatively high compared to other periods.

The findings of the study also indicate that the Syrian Armenians actively participated during the Nagorno Karabakh War of 2020 and continue discussing the consequences of the war and its impact on social life in Armenia. Indeed, the Nagorno Karabakh War of 2020, to a visible degree, positively affected Syrian Armenian immigrants' political inclusion.

By comparing these findings with existing literature, it is concluded that the argument provided by Adam and Strömbla (2018) concerning the impact of time on political integration and the argument provided by Bartram (2016) concerning the impact of political culture on political inclusion are supported.

Furthermore, it is observed that the general attitude of native Armenians towards the political participation of the Diaspora is neutral. According to the native Armenians, the political participation of Syrian Armenians does not have an immense and direct impact on Armenia's domestic politics.

This study examined Syrian Armenian political integration in Armenia. As a concluding note, it should be mentioned that Syrian Armenians to some degree are integrated politically in Armenia. It is also noted that, despite the desire of the Syrian Armenians to participate in the politics of Armenia and despite the attitude of native Armenians, the fulfillment of legal requirements is the factor that shapes the broader political participation of the Diaspora, in general, and Syrian Armenians in particular.

**References**


P. Adman, & P. Strömblad, "Political Integration in Practice: Explaining a Time-Dependent Increase in Political Knowledge among Immigrants in Sweden." *Social Inclusion*, 6(3):2018, pp. 248–59.

D. Bartram, (2016) *Researching Migrants' Well-Being* [paper presentation], Political Integration of Immigrants: Insights from Comparing to Stayers, Not Only to Natives, 3rd International ESS Conference, Lausanne, Switzerland,

J. W. Berry, "Immigration, Acculturation, and Adaptation," *Applied Psychology*, 46(1):1997, pp. 5–34.

J. W. Berry, "Acculturation: Living Successfully in Two Cultures," *International Journal of Intercultural Relations*, 29(6):2005, pp. 697–712.

*Constitution of the Republic of Armenia*. (2015). https://www.president.am/en/constitution-2015/

J. Hidalgo, *The Case for the International Governance of Immigration. International Theory*, 2016, pp. 8, 140.

J. Johnston & R. Audunson, "Supporting Immigrants' Political Integration through Discussion and Debate in Public Libraries." *Journal of Librarianship and Information Science*, 51(1):2019, pp. 228–42.

C. Kukathas, "The Case for Open Immigration", in Andrew I. Cohen & Christopher Heath Wellman (eds.), *Contemporary Debates in Applied Ethics*. Blackwell, 200, pp. 207-20.

E. S. Lee, "A Theory of Migration," *Demography*, 3(1):1966, pp. 47–57.

H. Manougian, *Should Armenian Dual Citizens Be Banned from Running for Office?* https://www.evnreport.com/politics/should-armenian-dual-citizens-be-banned-from-running-for-office, 2020.
D. Miller, "Immigration: The Case for Limits, 2005," in Cohen & Wellman (eds.), pp. 193-206.
A. Mkrtchyan, *Create Democratic Armenia together. The Problem of Adaptation of the Diaspora Armenians in Armenian Socium*, *New York*, 2008 (https://www.academia.edu/850345/Create_democratic_Armenia_together_The_problem_of_adaptation_of_the_Diaspora_Armenians_in_Armenian_socium ).
L. Morales, "Conceptualizing and Measuring Migrants' Political Inclusion," in *Social Capital, Political Participation and Migration in Europe,* Springer, 2011. pp. 19–42.
G. Stepanyan, *The Case of Armenia: Repatriation as an Option for Development*, 2016.
P. Strömblad, & P. Adman, "Political Integration through Ethnic or Nonethnic Voluntary Associations?" *Political Research Quarterly*, 63(4):2010, pp. 721–30.
Tanajyan et al. *Հայրենադարձների Ինտեգրման Խնդիրները Հայրենիքում (Սիրիահայերի Օրինակով)*, Yerevan, 2020.
A. Yijälä, & I. Jasinskaja-Lahti, "Pre-migration Acculturation Attitudes among Potential Ethnic Migrants from Russia to Finland," *International Journal of Intercultural Relations*, 34(4):2010, pp. 326-39.
C. H. Wellman, "Immigration and Freedom of Association," *Ethics*, 119(1):2008, pp. 109–41.

## ՍՓԻՒՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒ ՆԵՐԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ՀԱՄԱՐԿՈՒՄԸ

(Ամփոփում)

ՄԱՐԻ ԱԼԻՔ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
maryalikkaramanoukian@gmail.com

Յօդուածը կ'ուսումնասիրէ հայրենիք տեղափոխուած սուրիահայերու համարկումը Հայաստանի քաղաքական մշակոյթին՝ ի մասնաւորի անոնց մասնակցութիւնը Հայաստանի քաղաքական տարբեր իրադարձութիւններուն: Քաղաքական համարկումը մեծ դեր կը խաղայ գաղթականներու եւ ընդհանրապէս այլ երկիր տեղափոխուած անձանց նոր միջավայրի եւ նոր մշակոյթի ամբողջական ընդգրկման գործընթացին մէջ:

Յօդուածը կը փորձէ սահմանել քաղաքական համարկումը եւ բացատրել գործօնները որոնք ուղղակի եւ անուղղակիօրէն կ'ազդեն քաղաքական համարկումի գործընթացին: Հետազօտութիւնը կ'ուսումնասիրէ սուրիահայերու մասնակցութիւնը Սուրիա տեղի ունեցած տարբեր քաղաքական իրադարձութիւններու եւ կը համեմատէ անոնց մասնակցութիւնը նոյնանման կամ այլ քաղաքական իրադարձութիւններու՝ Հայաստանի մէջ:

Հետազօտութեան երկրորդ մասը կը ներկայացնէ տեղաբնիկ հայաստանցիին մօտեցումը սուրիահայերու քաղաքական ընդգրկման եւ մասնակցութեան հարցին: Հարցախոյզի եւ հարցազրոյցներու արդիւնքներուն հիման վրայ, կարելի է հաստատել, որ սուրիահայերը աւելի գործուն են Հայաստանի մէջ քաղաքական գետնի վրայ, քան էին Սուրիոյ մէջ: Քաղաքական մշակոյթի տարբերութիւնը, ինչպէս նաեւ կեանքի ընդհանուր պայմանները մեծ դեր կը խաղան անոնց՝ քաղաքական ընդգրկման գործընթացին մէջ:

# ՍՓԻՒՌՔԻ ՄԱՄՈՒԼՆ ETHNIC MEDIA ՀԱՍԿԱՑՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ

**ՍԻՒԶԱՆՆԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ**
syuzanna.barseghyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Որեւէ ժողվրդավար երկրի հիմնահոսանքային (mainstream) լրատուամիջոցների հաղորդագրութիւններում բնակչութեան էթնիկ կամ ցեղային ենթախմբերի, փոքրամասնութիւնների խմբերի ներկայացուածութեան ծաւալը եւ բովանդակութիւնը յաճախ պայմանաւորուած են տուեալ երկրի քաղաքական, ընկերատնտեսական եւ մշակութային ուղենիշերով: Դրանք ընդհանրապէս չեն արտայայտում էթնիկ խմբերի իրական շահերը, կանխամտածուած էթնօմշակութային սահմաններ են գծում հիմնահոսանքային հասարակութեան պատկերացումներում եւ չեն ստեղծում բաւարար հաղորդակցական միջավայր այդ ենթախմբերի համար:

Հիմնական լրատուամիջոցներից դուրս, էթնիկ ենթախմբի համար ե՛ւ նրանց կողմից ե՛ւ նրանց համար ստեղծուած հաղորդատարածքի անհրաժեշտութիւնն աւելի բնորոշ է ընդհանրապէս սփիւռքին, որն ունի կայուն համայնքներ ու հաստատութիւններ եւ գործադրում է ջանքեր՝ էթնօմշակութային ինքնութեան պահպանման ու վերարտադրման համար:

Որպէս «դասական սփիւռք» եւ «անպետութիւն իշխանութիւն»[1]՝ հայկական սփիւռքը (Սփիւռք), ինքնակազմակերպման եւ էթնօմշակութային ինքնութիւնը պահպանելու նպատակով, ձեւաւորել է աւանդական սեփական հաստատութիւններ՝ կրօնական, կրթական, կուսակցական, բարեսիրական, մշակութային, մարզական, արհեստակցական, հայրենակցական, *լրբիսրական* եւն.: Դրանց շարքում յատուկ տեղ ունի տպագիր մամուլը, որի ստեղծումը մշտապէս ուղեկցել է Սփիւռքի տարբեր հայօճախների ձեւաւորման պատմութեանը: Աշխարհի տարբեր երկրների գաղթօճախներն աւանդաբար ստեղծել են հայկական մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմաւորման եւ կարողութիւնների զարգացման նոր փուլի եւ մակարդակի մասին: Այն ոչ միայն նպաստել է էթնօմշակութային արժէքների պահպանմանն ու տարածմանը, այլեւ նշանակալի դեր է խաղացել ներգաղթեալների ամէնօրեայ կեանքում, էթնիկ համայնքի միաւորման, ինքնակազմակերպման եւ տուեալ երկրում նրա դերի կարեւորման գործում, տարածել է համազգային գաղափարներ, հանդիսացել հասարակական-քաղաքական մտքի զարգացման հարթակ եւն.: Արդի շրջանում Սփիւռքում տեղի ունեցող փոփոխութիւնները, աւանդական հաստատութիւնների դերի փոխակերպումները,

[1] Kh. Tölölyan, "Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment," *Diaspora: A Journal of Transnational Studies*, 5(10):1996, էջ 3:

վերարժեւորում են էթնիկ հաղորդամիջոցների դերակատարութիւնը եւ անհրաժեշտ դարձնում դրա արդի ուսումնասիրութիւնները:

## ԷԹՆԻԿ ՄԵԴԻԱՆ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅՕՃԱԽԻ ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ

Էթնիկ հաղորդամիջոցների վերաբերեալ օգտագործուող եզրոյթների նախընտրութիւնը յաճախ կախուած է նրանից, թէ ինչպէս են տարբեր երկրների պետական եւ գաղթականական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ գիտական շրջանակներն ընկալում մարդկանց ցեղային էթնիկ կամ կրօնական ծագմամբ պայմանաւորուած տարբերութիւնները, ըմբռնումները: Այդ պատճառով, միեւնոյն հանրակարգը (ինստիտուտ) նկարագրելու համար հետազօտողները օգտագործում են մի շարք եզրեր՝ «փոքրամասնութեան հաղորդամիջոցներ», «էթնիկ փոքրամասնութեան հաղորդամիջոցներ», «ներգաղթեալների հաղորդամիջոցներ», «տեղային կամ համայնքային հաղորդամիջոցներ», «սփիւռքեան հաղորդամիջոցներ» եւն.: Սակայն «էթնիկ հաղորդամիջոցներ» եզրոյթն ամենակիրառելին եւ համընդգրկունն է: Ինչպէս ձեւակերպում են Մացագանիսը եւ միւսները, «*էթնիկ մեդիան լրատուամիջոց է, որն արտադրւում է տարբեր երկրներում բնակուող ներգաղթեալների, ցեղային, էթնիկ, կրօնական եւ լեզուական փոքրամասնութիւնների, ինչպէս նաեւ տեղաբնիկների համար եւ նրանց կողմից*»[2]:

Փոքրամասնութեան գոյատեւման ապահովման համար ուրիշ ի՞նչ լաւ ռազմավարութիւն կարող է լինել, քան իրենց սեփական հաղորդամիջոցների զարգացումը, ինչը ներկայացնում է նրանց տեսակէտն իրենց լեզուով[3]: Էթնիկ խմբի համար հաղորդամիջոցների անհրաժեշտութիւնն առաջին հերթին սեփական արժէքներն ու մշակոյթը դրանում արտայայտելն է: Էթնիկ մեդիան փորձում է միջանկեալ տեղ գրաւել էթնիկութեան ու մշակոյթի լիովին պահպանման եւ ծայրայեղ ուծացման միջեւ: Այն նաեւ հանրային ոլորտում էթնիկ խմբի ներկայացուածութեան եւ նրա ճանաչման քաղաքական գործիք է, իր տարբերութիւնն ու առանձնայատկութիւնը շեշտելու իրաւունքի իրացում, համայնքի շահերի, տեղեկատուական կարիքի եւ նախընտրութիւնների արտայայտութիւն: Նման տեսանկիւններն արտայայտող եւ դրանց հետեւող էթնիկ մեդիան կարող է համարուել յաջողակ եւ արդիւնաւէտօրէն իր հաւաքականութիւնը ներկայացնող հաստատութիւն:

Դիտարկելով էթնիկ մեդիան բովանդակութեան տեսանկիւնից, կարելի է առանձնացնել երեք հիմնական գործառոյթ[4].-

---

[2] M. D. Matsaganis, V. S. Katz, S. J. Ball-Rokeach, *Understanding Ethnic Media: Producers, Consumers, and Societies*, SAGE Publications Inc., Los Angeles-London-New Delhi, 2011, էջ 10:

[3] S. H. Riggins, *Ethnic Minority Media: An International Perspective*, Էd. S. H. Riggins, SAGE Publication, Inc., Newbury Park-London-New Delhi, 1992, էջ 3:

[4] Matsaganis, էջ 67:

- միաւորող (կապում է հայրենիքի (իսկ անհայրենիք փոքրամասնութիւնների դէպքում՝ սփռման սկզբնական տեղի) հետ՝ ներկայացնելով այնտեղ տեղի ունեցող լուրեր եւ իրադարձութիւններ).
- կողմնորոշող (համարկում է ընդունող համայնքին՝ ծանօթացնելով համայնքի աղբիւրների հետ, տարածելով համայնքային կեանքի մասին պատմութիւններ, կողմնորոշում է նոր երկրում).
- խորհրդանշական (տարածում է արժէքներ, գաղափարներ, պահպանում կամ ձեւաւորում է էթնիկ ինքնութիւնը):

Էթնիկ հաղորդամիջոցների բովանդակութեան մէջ այս գործառոյթների առանձնացումը հնարաւորութիւն է տալիս դիտարկել էթնիկութեան պահպանման կամ ձուլման միտումները: Յատկապէս կարեւոր է մեդիայի բովանդակութեան մէջ միաւորող եւ կողմնորոշող գործառոյթների միջեւ հաւասարակշռութեան պահպանումը: Որոշ էթնիկ մեդիաներ շեշտադրում են միաւորող գործառոյթը՝ կենտրոնանալով հայրենիքի, ծագման երկրի մասին տեղեկատուութեան վրայ եւ չտրամադրելով լուրեր, որոնք կ'օգնեն էթնիկ խմբի անդամներին համարկուել նոր համայնքում[5]: Կամ հակառակը, իրականացնում են կողմնորոշող գործառոյթ, պատմում են համայնքի մասին՝ ապահովելով էթնիկ խմբի ներգրաւուածութիւնը, սակայն հեռացնելով հայրենիքի մասին գաղափարից: էթնիկ մեդիան համայնքի համար դառնում է «ուսուցանող»[6]: Այն կարող է կողմնորոշել նորեկներին՝ համարկուելու նոյն էթնիկ եւ այլէթնիկ միջավայրին, սովորեցնել վարքականոններ, տեղեկացնել նոր հասարակութեան արժէքների վերաբերեալ: Դրանով իսկ համայնքային մեդիան նպաստում է էթնիկ փոքրամասնութեանը՝ աւելի հեշտութեամբ համարկուել, ներառուել ընդունող հասարակութեան մէջ, կամ հակառակը՝ մեկուսանալ, արտամղուել նրանից: Ցանկացած դէպքում այն դառնում է էթնիկ համայնքին միաւորող, համախմբող ուժ: Ինչպէս նաեւ ինքնին կարող է արտացոլել համայնքի ընկերային փոփոխութիւնները:

Սակայն, մեր կարծիքով, էթնիկ հաղորդամիջոցների առաջնային դերը էթնիկ եւ մշակութային ինքնութեան պահպանումն ու ձեւաւորումն է: Հետե-

[5] Այստեղ խօսքը մամուլի բովանդակութեան մէջ լուրերի համամասնութեան եւ դրա ազդեցութեան մասին է:

[6] Տե՛ս՝ Անդրանիկ Տագէսեան, «Լիբանահայ մամուլին ընտելացնող դերը նորահաստատ հայ գաղթականութեան (1927-1952)», *Լիբանանի հայերը (Բ.), գիտաժողովի նիւթեր (14-16 Մայիս 2014)*, խմբ. Անդրանիկ Տագէսեան, Հայկազեան համալսարանի հրատ., Պէյրութ, 2016, էջ 63-92. նաեւ նոյնի՝ "Negotiating Armenian Identity in the Traditional Lebanese Armenian Media (1953-1975)"՝ *Centennial of Greater Lebanon Constituting the Idea of a "Lebanese Identity", Perspectives from the Lebanese Arts and Letters (Proceedings of the Symposium Organized on the Centennial of Greater Lebanon, February 5, 2021),* ed. by Antranik Dakessian, Beirut, 2022, էջ 43-63:

ւաբար, էթնիկ մեդիայի հայեցակարգը սերտօրէն կապուած է էթնիկ ինքնութեան հայեցակարգի հետ:

Ինչպէս ցոյց են տալիս ուսումնասիրութիւնները, էթնիկ ինքնութեան երեք փոխկապակցուած բաղադրիչներից՝ իմացական (գիտելիքներ էթնիկ մշակոյթի մասին), վարքային (էթնիկ խմբին պատկանելութիւնը ցուցադրող վարք) եւ զգայական (ինքնանոյնացում, էթնիկ խմբին պատկանելու զգացում), էթնիկ հաղորդամիջոցները - որպէս էթնիկ համայնքի հանրակարգ - առաւել մեծ ազդեցութիւն ունի վերջին բաղադրիչի վրայ՝ ամրապնդելով պատկանելութեան զգացումը[7]:

Էթնիկ ինքնութեան կառուցարկումը դիտարկւում է որպէս *փինամիք* գործընթաց, որը տեղի է ունենում անհատի կեանքի ողջ ընթացքում: Էթնիկ կենցաղացման եւ ինքնութեան ձեւաւորման վրայ ազդում են մի շարք գործօններ՝ ընտանիքը, էթնիկ հարեւանութիւնը, էթնիկ ընկերութիւնը (ընկերային միջավայր), էթնիկ լեզուի տիրապետումը, սեռը եւն.: Տեղային էթնիկ միջավայրերն իրենց հերթին ստեղծում են պատումների ցանց, որի հիմնական աղբիւրներն են բնակիչները, համայնքի անդամները, սեփական կազմակերպութիւնները եւ էթնիկ մեդիան[8]:

էթնիկ մեդիայի եւ ինքնութեան փոխներգործութեան գործընթացը միանշանակ չէ: Բազմաթիւ հետազօտութիւններ ցոյց են տալիս էթնիկ մեդիայի թէ՛ ձուլող, թէ՛ յոգնակիացնող դերը[9]: Մի շարք հետազօտութիւններ հաստատում են, որ էթնիկ մեդիան հիմնականում կատարում է ձուլող դեր՝ համոզելով էթնիկ համայնքին, որ նրանք ներգաղթելու ճիշտ որոշում են կայացրել, եւ օգնելով նրանց յարմարուել իրենց նոր միջավայրում[10]: Այլ հետազօտութիւններ եզրահանգում են, որ էթնիկ մեդիան գլխաւորապէս կատարում է յոգնակիացնող գործառոյթ՝ ամրապնդելով էթնիկ ինքնութիւնը, ձեւաւորելով համայնք, ներարկելով էթնիկ հպարտութիւն[11], փոխանցելով մշա-

---

[7] Նոյն, էջ 71:

[8] S. J. Ball-Rokeach, "Overview of Main Metamorphosis Project Databases, 2005," http://www.metamorph.org/images/uploads/Meta_Database_Book.pdf :

[9] F. A. Subervi-Velez, "The Mass Media and Ethnic Assimilation and Pluralism: A Review and Research Proposal with Special Focus on Hispanics," *Communication Research*, 13(1):1986, էջ 71-96:

[10] R. E. Park, *The Immigrant Press and Its Control*, Harper & Brothers Publishers, New York; London, 1922. նաեւ՝ L. Lam, "The Role of Ethnic Media for Immigrants: A Case Study of Chinese Immigrants and Their Media in Toronto," *Canadian Ethnic Studies, Calgary*, 12(1):1980, էջ 74-92:

[11] M. A. Johnson, "How Ethnic Are U.S. Ethnic Media: The Case of Latin Magazines," *Mass Communication and Society*, 3(2-3):2000, էջ 229-48:

կութային խորհրդանիշեր, որոնք իրաւականացնում եւ հաստատում են իրենց մշակութային արժէքները[12]:

Էթնիկ մեդիան կարեւոր դեր է խաղում էթնիկ խմբի գործունէութեան ծիրում՝ արտայայտելով հաւաքականութեան հակադրութիւնը կամ միասնութիւնը, ամրացնելով էթնիկ խմբի գիտակցութիւնը՝ քարոզելու էթնիկ խմբի ընդհանուր քաղաքական շահերը[13]: Յատկանշական է, որ էթնիկ մեդիան կենտրոնանում է այն թեմաների վրայ, որոնք շրջանառում են էթնիկ համայնքի դրական կերպարը, ստեղծում փոքրամասնութեան նորութիւնների օրակարգ եւ քիչ ուշադրութիւն են դարձնում այն պատմութիւններին, որոնք համայնքը ներկայացնում են բացասական լոյսի ներքոյ: Աւելին, էթնիկ մեդիան օգնում է պայքարել էթնիկ փոքրամասնութեան բացասական պատկեր ներկայացնող զանգուածային մեդիայի դէմ՝ մատուցելով էթնիկ խմբին օժանդակող հակագաղափարախօսութիւն[14]: Էթնիկ մեդիան գործում է որպէս օգնական՝ յայտարարելով տեղական համայնքային իրադարձութիւնները: Վերջապէս, էթնիկ մեդիան մատուցում է լուրեր հայրենիքի մասին, ի տարբերութիւն զանգուածային մեդիայի: Միանշանակ է, որ էթնիկ մեդիան տարածում է գաղափարախօսութիւն, ինչը շատ օգտակար է էթնիկ խմբի առանձնայատկութիւնների պահմանման եւ վերարտադրման համար:

Ակնյայտ ժիր բնոյթին զուգահեռ էթնիկ մեդիայի յոգնակիացնող գործառոյթն իրականացւում է նաեւ ոչ-ակնառու ձեւերով: Դրանցից առաջինը էթնիկ մեդիայի խորհրդանշական ներկայութիւնն է: Էթնիկ մեդիա կազմակերպութիւնների սոսկ ներկայութիւնը խորհրդանշականօրէն հաստատում է էթնիկ խմբերի տեղը հիմնական հասարակութեան մէջ: Երկրորդը, էթնիկ մեդիան ուժեղացնում է էթնիկ խմբին՝ օգտագործելով էթնիկ լեզուն[15]: Պահպանելով լեզուն՝ էթնիկ մեդիան ազդում է մշակութային փոխանցումի վրայ եւ ամրացնում էթնիկ կապերը[16]: Այն նաեւ տրամադրում է խորհրդանիշեր եւ դերային մոտէլներ, ամրապնդում էթնիկ պատկանելութեան զգացումը:

Էթնիկ մեդիան ամէնօրեայ գործառնութեանց սիրտն է, որն արտադրում եւ փոփոխում է էթնիկ ինքնութիւնը եւ մշակոյթը, մասնակցում էթնիկ հաւաքականութիւններին յուզող քննարկումներին, օժանդակում լայն ընկերաբանական գործընթացներին, ինչպէս նաեւ ինքնին կարող է հանդիսանալ հա-

---

[12] V. Barrera, D.D. Bielby, "Places, Faces, and Other Familiar Things: The Cultural Experience of Telenovela Viewing among Latinos in the United States," *The Journal of Popular Culture*, 2001:34, էջ 1–18. նաեւ՝ Mayer, էջ 479–95:

[13] Johnson:

[14] M. Mathani, "Representing Minorirties: Canadian Media and Minority Identities," *Canadian Ethnic Studies*; Calgary, 33(3):2001, էջ 99-133:

[15] Riggins:

[16] Johnson:

մայնքի ընկերային փոփոխութիւնների ցուցիչ[17]: Այն արտացոլում է սփիւռքերի մարտահրաւէրները, համարկումը, ձուլումը, հատուածականութեան/ծայրահեղականութեան դրսեւորումները ընդունող հասարակութիւնում:

Էթնիկ համայնքի կողմից մեդիայի օգտագործումը փոփոխում է անհատական ինքնութիւնները, ներազդում համայնքի ձեւաւորման եւ, իվերջոյ, հաւաքական գործողութեան վրայ: Ինքնութիւնը ձեւաւորւում է մեդիայում՝ որպէս իրադարձութիւնների պատմման խօսոյթային արդիւնք: Մեդիան տրամադրում է ինքնութեան կէտեր՝ նշելով խորհրդանշական սահմանները, վերամիաւորելով մշակոյթները կորսուած վայրերի հետ եւ իրագործելով յիշողութեան, առասպելների, փնտռելու եւ վերաբացայայտելու ցանկութիւնները[18]: Այն միաւորում է էթնոսի յիշողութիւնը, յառաջացնում նրա հաւաքական պատկերացումները ինքնութեան տարբեր հարցերի շուրջ հատուածականութեան եւ ցրուածութեան թուացեալ կապուածութեան փորձը[19]: Նման պատկերացումներն ընդգծում են անհատական ինքնութիւնների մշակոյթի, աշխարհագրութեան, պատմութեան ընդհանրական երեսակները, որոնք կամրջում են շատ ցրիւ անհատներին «երեւակայական համայնքի» մէջ[20]:

## ՄՈՍԿՈՒԱՅԻ, ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՀԱՅՕՃԱԽՆԵՐԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ «ETHNIC MEDIA»Ի ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ

Էթնիկ մեդիայի համեմատական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ չնայած ընդհանրութիւններին, գոյութիւն ունեն տարբեր էթնիկ խմբերի՝ էթնիկ մեդիա ստեղծելու, զարգացնելու, մեդիա բովանդակութեան եւ սպառման առանձնայատկութիւններ: Դրանք կախուած են թէ՛ էթնիկութիւնից, թէ՛ էթնիկ փոքրամասնութեան խմբի ձեւից եւ թէ՛ ընդունող երկրի իւրայատկութիւններից: Բացի ընդունող երկրների միջավայրերի տարբերութիւնից եւ նրանցում էթնիկ խմբերի առանձնայատկութիւններից, կարեւոր է նաեւ էթնիկ խմբի ձեւը՝ ազգային փոքրամասնութիւն, գաղթականներ, սփիւռք եւն., ինչպէս նաեւ մեդիա ստեղծելու նրանց աւանդոյթը: Անգամ նոյն երկրի, նոյն բնակավայրի մեդիա միջավայրում տարբեր էթնիկ խմբեր դրսեւորում են մեդիա սպառման եւ արտադրման տարբեր վարքաձեւ:

Տեղային, ազգային եւ անդրազգային սփիւռքեան մեդիան ձեւաւորում է տարածական ենթախորք, որտեղ սփիւռքի համայնքները, խմբերը ապրում

---

[17] Y. Shi, "Identity Construction of the Chinese Diaspora, Ethnic Media Use, Community Formation, and the Possibility of Social Activism," *Journal of Media & Cultural Studies*, 19(1):2005, էջ 55-72:

[18] Նոյն:

[19] S. Hall, *Cultural Identity and Diaspora, Contemporary Postcolonial Theory: A Reader*, ed. P. Mongia, London-New York-Arnold, 1996, էջ 110-21:

[20] B. Anderson, *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*, Verso, London-New York, 1983:

եւ պատկերացնում են իրենց սփիւռքեան տարածութիւնը: Բախուելով տարբեր մեդիաների արտադրման, սպառման եւ ընկալման հետ, ձեւաւորւում է սփիւռքեան մեդիայի մշակոյթը: Կան տարբեր ոլորտներ, որոնցում վերոյիշեալ տիեզերականութիւն-մասնայատկութիւն յարացոյցը արդիական է դառնում սփիւռքեան մեդիայի մշակոյթի համար: Դրանցից շատերը կապուած են սփիւռքի քաղաքականութեան եւ մեդիա ունենալու փորձի հետ:

Մեր կողմից դիտարկուած երեք հայօճախներից երկուսում՝ Մոսկուայում եւ Լոս Անճելըսում, էթնիկ մեդիա դաշտի համեմատական ուսումնասիրութիւնների օրինակները ցոյց են տալիս ժամանակակից հայկական մեդիայի կարեւորութիւնը հայօճախի համար:

Այսպէս, ԱՄՆ Լոս Անճելըսի Կլենտէյլ քաղաքի երեք հիմնական էթնիկ խմբերի՝ անկլօամերիկացիների, լատինամերիկացիների եւ հայերի շրջանում կատարուած համեմատական ուսումնասիրութիւնը[21], որի նպատակն էր պարզել հայօճախում էթնիկ մեդիայի դերը, մասնաւորապէս՝ ինչպէս են վերոնշեալ էթնիկ խմբերը ստանում տեղեկատուութիւն իրենց համայնքի մասին, ցոյց է տալիս, որ երեք էթնիկ խմբերի միջեւ գոյութիւն ունեն ակնյայտ հաղորդակցական տարբերութիւններ: Այսպէս, հայերի շրջանում էթնիկ մեդիայից օգտուելու յաճախականութիւնն աւելի մեծ է՝ հիմնական եւ էթնիկ մեդիայի սպառման յարաբերակցութեան համեմատութեամբ: Ի տարբերութիւն լատինամերիկացիների եւ անկլօամերիկացիների, հայերը հայօճախի մասին ամենաքիչ տեղեկութիւնն են ստանում միջանձնային ցանցի եւ համացանցի միջոցով[22]:

Ժամանակակից Ռուսաստանում էթնիկ մեդիայի հանրային դերի մասին կատարուած համեմատական ուսումնասիրութեան մէջ կարող ենք տեսնել հայկական մամուլին (*Ноев Ковчег*, *Новый Вавилон*, *Еркрамас*) վերագրուող դերը[23]: Մեր հետազօտութեան մէջ, դիտարկելով էթնիկ մամուլը որպէս Ռուսաստանում էթնիկ համայնքների (հայկական, հրէական, ադրբեջանական, գերմանական, ֆիննական, քորէական եւն.) ուսումնասիրման աղբիւր, բացայայտուել է նրանց գործառոյթները հին եւ նոր ձեւաւորուող սփիւռքեան եւ էթնիկ համայնքներում: Ըստ հետազօտութեան տուեալների, հայկական մամուլն կատարում է կազմակերպական եւ համախմբող դեր: Չնայած Ռուսաստանում հայ հաւաքականութեան բազմազանութեանը եւ ցրուածու-

---

[21] "Overview of Main Metamorphosis Project Databases, Annenberg School for Communication," University of Southern California/ S.J. Ball-Rokeach, Principal Investigator, 2005.
http://www.metamorph.org/images/uploads/Meta_Database_Book.pdf :

[22] Տե՛ս՝ ծանօթ. 19:

[23] В. К. Малькова, *Мобилизация этнических сообществ в современной России: По материалам этнических СМИ* (Վ. Կ. Մալկովա, Էթնիկ հանրոյթների համախմբումը ժամանակակից Ռուսաստանում. ըստ էթնիկ ԶԼՄների նիւթերի), Մոսկուա, ԷԱԻ ՌԳԱ, 2011:

թեանը, հայկական տեղեկատուական տարածութիւնը օգնում է համակարգել նրանց համազգային խնդիրների լուծման ջանքերը:

Իրանում հիմնական լրատուամիջոցները պետական են, ազգային-կրօնական փոքրամասնութիւններն ունեն սահմանափակ ներկայացուածութիւն տեղային հեռուստա- եւ ռադիօթողարկումներում: Ինչպէս ցոյց են տալիս ուսումնասիրութիւնները, փոքրամասնութիւնները հիմնական մեդիայում ներկայացուած են «վատ» նորութիւնների, երբեմն՝ ծաղրական ձեւով[24]: Ակնյայտ է, որ այս իրավիճակում առաւել պահանջուած է դառնում էթնիկ կամ կրօնական, այդ թւում՝ հայկական մամուլը:

Սփիւռքեան համայնքների համար էթնիկ մեդիայի դերն առաւել նշանակալի է, քանի որ այդ էթնիկ խմբերը ստեղծում են հաստատութիւններ եւ ջանքեր են գործադրում էթնիկութեան պահպանման համար, նրանց յատուկ է, այսպէս կոչուած, սփիւռքեան ինքնութիւնը:

Սփիւռքն ունի աւանդական սեփական համայնքային հաստատութիւններ, որոնց նպատակն է պահպանել եւ զարգացնել էթնօմշակութային ինքնութիւնն այլէթնիկ միջավայրում: Այդ հաստատութիւնները կոչուած են նաեւ կարգաւորելու էթնոսի կեանքն օտար միջավայրում, նպաստելու ընդունող հասարակութեան մէջ այդ խմբի անդամների առաւել դիւրին համարկմանը: Այդ կազմակերպութիւնների շարքում հարկ է ընդգրկել նաեւ էթնիկ մեդիան, որն էական դեր ունի էթնիկ ինքնութեան պահպանմանը նպաստող «տարբերութիւնների տարածութեան»[25] ձեւաւորման գործում:

Էթնիկ մեդիայի տարատեսակ ձեւերի առումով, հետազօտութեան մէջ առանձնացրել ենք մամուլը, քանի որ Սփիւռքն ունի մամուլի հարիւրամեակների պատմութիւն[26]: Յատկանշական է, որ գրեթէ բոլոր հայօճախների ձեւաւորման պատմութիւնը մշտապէս ուղեկցուել է մամուլի ստեղծմամբ: Աշխարհի տարբեր երկրներում ձեւաւորուած հայօճախներն աւանդաբար ստեղծել են էթնիկ մամուլ, ինչը վկայել է համայնքի կազմաւորման եւ կարողութիւնների զարգացման՝ Սփիւռքին բնորոշ ընդհանուր օրինաչափութիւնների մասին: Այն ոչ միայն նպաստել է էթնօմշակութային արժէքների պահպանմանն ու տարածմանը, այլեւ նշանակալի դեր է կատարել հայօճախի ներկայացուցիչների ամէնօրեայ կեանքում, հայօճախի ինքնակազմակերպման եւ տուեալ երկրում նրա դերի կարեւորման գործում: Հայ մամուլը կարեւոր դեր է խաղացել աշխարհով մէկ սփռուած հա-

---

[24] A. Tamandehrou, "Role of Media in Empowering the Ethnic Minority of Iran: An Overview," *Journal of Socio-Cultural Change*, 1(1):2014, էջ 118-27:

[25] V. Sahakyan, "Between Host-Countries and Homeland: Institutions, Politics and Identities in the Post-Genocide Armenian Diaspora (1920s to 1980s)," Ph.D. Dissertation, the University of Michigan, 2015:

[26] Առաջին հայկական մամուլը՝ *Ազդարար* ամսագիրը լոյս է տեսել Հնդկաստանի Մատրաս քաղաքում 1794ից 1796 (Մ. Մխիթարեան, *Հայերէն առաջին պարբերականը եւ նրա խմբագիրը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2016 էջ 5):

յերի ամէնօրեայ կեանքում, ընդունող երկրի հասարակութեան մէջ նրանց համարկման, ինքնութեան պահպանման եւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների սերտացման գործում: Պատահական չէ, որ մամուլը եւ տպագրութիւնը զարգացել են զարթօնքի, գաղափարախօսութիւնների տարածման կենտրոններում՝ Թբիլիսի, Փեթերպուրկ, Մոսկուա, Պոլիս, Վենետիկ, Վիեննա եւ այլուր: Սփիւռքի մամուլն արտացոլում է հայօճախի քաղաքական, ընկերատնտեսական, մշակութային կեանքի ընթացիկ վիճակը, փոփոխութիւնները եւ մարտահրաւէրները, խնդիրներն ու սպասումները: Հետեւապէս, մամուլը հայօճախների յետահայեաց ուսումնասիրութեան եւ Սփիւռքի ճանաչման կարեւոր աղբիւր է:

Ռուսաստանում առաջին հայերէն պարբերականը՝ *Արեւելեան ծանուցում*, լոյս է տեսել 1816ին, Աստրախանում: Յետագայում Ռուսաստանում հրատարակուել է շուրջ 90 պարբերական[27]: Իրանում առաջին հայերէն պարբերականը՝ *Շաւիղ*՝ 1894ին, Թեհրանում: Այնտեղ, ցարդ հրատարակուել է աւելի քան 80 հայերէն պարբերական[28]: ԱՄՆում, Ճըրզի Սիթիում 1888ին լոյս է տեսել առաջին հայերէն պարբերականը՝ *Արեգակը*: Ցայսօր լոյս է տեսել աւելի քան 300 պարբերական[29]: Ներկայումս Ռուսաստանում (Մոսկուա եւ Քրասնոտար) լոյս է տեսնում 2 պարբերական:

Իրանում հիմնական հայկական պարբերականը մէկ օրաթերթ է՝ *Ալիք*, որը լոյս է տեսնում Թեհրանում:

Ամենաբազմազանը եւ մեծաքանակը ԱՄՆում, մասնաւորապէս՝ Լոս Անճելըսում լոյս տեսնող պարբերականներն են: Կուսակցութիւններից, մշակութային եւ բարեգործական խոշոր կազմակերպութիւններից բացի, պարբերականներ են հրատարակում նաեւ եկեղեցական կառոյցները, զանազան միութիւններ, առանձին անհատներ:

## ՄԱՄՈՒԼ, ԷԹՆԻԿ ՄԱՄՈՒԼ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայումս հակառակ մեդիայի ժամանակակից ձեւերի, Սփիւռքի համար դեռեւս շարունակում է առանձնայատուկ դեր ունենալ մամուլը: Չնայած տեղեկատուութեան աղբիւրների բազմազանութեանն ու արագութեանը, սփիւռքեան տեղեկատուական դաշտը շարունակում է ունենալ իր սեփական մամուլը: Սփիւռքի մամուլը, ձեւաւորելով հայկական տեղեկատուական դաշտ, ստանձնում է յատուկ գործառոյթ՝ հայրենիքի հետ կապի պահպանման, Հայաստանի ու Սփիւռքի մասին տեղեկատուութեան եւ դրանց կերպարի ձեւաւորման, ազգային գաղափարների ու արժէքների, էթնիկ ու մշակութային ինքնութեան պահպանման եւ վերարտադրման գործում:

---

[27] *Հայ սփիւռք հանրագիտարան*, գլխ. խմբ. Յ. Այվազեան, Հայկ. հանրագիտարան. հրատ., Երեւան, 2003, էջ 500:

[28] Նոյն, էջ 263:

[29] Նոյն, էջ 77:

Ուստի, չնայած հայօճախների ընկալումների տարբերութիւններին, Սփիւռքի մեդիան համարելով էթնիկ, այն կը դիտարկենք «էթնիկ մեդիա» հայեցակարգի ենթախորքում՝ օգտագործելով էթնիկ կամ սփիւռքեան մեդիա եզրերը, եւ՝ էթնիկ կամ սփիւռքեան մամուլ ձեւակերպումները:

Ունենալով էթնիկ մեդիային բնորոշ գործառոյթներ, Սփիւռքի մեդիան ունի իր առանձնայատկութիւնները: Դրանց շարքում առաջին հերթին հարկ է առանձնացնել, որ մեդիան Սփիւռքին բնորոշ աւանդական հաստատութիւն է: Այն ցոյց է տալիս համայնքի նշանակալի ներկայութիւնը ընդունող երկրում, ինչպէս նաեւ ապահովում է էթնիկ ինքնագիտակցութեան բարձր մակարդակ ունեցող Սփիւռքի էթնօմշակութային արժէքների պահպանման տեղեկատուական պահանջը: Առանձնայատկութիւններից է նաեւ Սփիւռքի բազմազանութեան եւ ցրուածութեան պարագայում գրեթէ բոլոր հայօճախներում մամուլի առկայութիւնը եւ, չնայած բովանդակային տարբերութիւններին, ընդհանրական տեղեկատուութեան առկայութիւնը:

Սփիւռքի մեդիայի ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն է տալիս բացայայտել այն բովանդակութիւնը, որը ձեւաւորւում եւ տարածւում է մեդիա դաշտում եւ թոյլ է տալիս պարզել տուեալ էթնիկ խմբի հիմնախնդիրները տուեալ ժամանակահատուածում, էթնիկ խմբի եւ նրա նոր անդամների համարկումը նոր հասարակութեան մէջ, հակադրութիւնը ուծացման գործընթացին, ջանքերի համախմբում եւ համերաշխութիւն համազգային եւ հաւաքական խնդիրների լուծման գործում:

Հայօճախները, ունենալով ձեւաւորման առանձնայատուկ պատմութիւններ, տարբեր պայմաններում կենսագործունէութեան իւրայատկութիւններ, բազմազան համայնքային եւ տարածական կառուցուածք, ցոյց են տալիս օտարազգի միջավայրերում նոյն էթնոսի տարբեր խմբերի առանձնայատկութիւններն ու ընդհանրութիւնները: Ընդունող երկրի եւ հայօճախի ընկերային հաստատութիւնների ազդեցութեամբ եւ ընկերաքաղաքական կառոյցի պայմաններում ձեւաւորւում են սփիւռքեան ինքնութիւն, հայօճախի ինքնակազմակերպման եւ ազդեցիկութեան տարբեր աստիճաններ:

Այսպէս - այս երեք հայօճախների պարագային - ԱՄՆում Սփիւռքը համարւում է ամենակազմակերպուած եւ ազդեցիկ, իսկ Ռուսաստանի հայկական սփիւռքը՝ ինքնակազմակերպման ցածր մակարդակ ունեցող հայօճախներից մէկը, չնայած իր առաւել նշանակալի մարդկային եւ տնտեսական ներուժին: Իրանի հայօճախն ունի ներհամայնքային ինքնակազմակերպման բարձր աստիճան, սակայն կրօնական փոքրամասնութիւնների հանդէպ վարուող եւ երկրում առկայ առարկայական պատճառներով այն չի կարող լայնօրէն դրսեւորուել նաեւ բնակութեան երկրի ընկերաքաղաքական շրջանակներում:

Հայօճախների նման անհաւասարաչափութիւնը պայմանաւորուած է էթնիկ համայնքները բնորոշող մի շարք յատկանիշերով, ինչպիսիք են մարդկային ներուժը, կազմակերպութիւնների ներգրաւուածութիւնը, ընկե-

րային կամ համայնքային հաստատութիւնները եւն.: Այս շարքում կարեւոր տեղ է զբաղեցնում նաեւ հայկական մեդիան:

Սոյն յօդուածում օգտագործուել է հայկական մամուլի ուսումնասիրութիւն[30]՝ երեք հայօճախների մէկական պարբերականի օրինակով. *Ասպարէզ* (Լոս Անճելըս), *Ալիք* (Թեհրան) եւ *Ноев Ковчег* (Մոսկուա): Հետազօտութեան հիմնական նպատակն է բացայայտել էթնիկ մամուլի դերը արդի Սփիւռքում՝ ինքնութեան կառուցակցման եւ հայօճախի ընկերաբանական գործընթացներում: Քաղաքներն ընտրուել են որպէս մի շարք ցուցանիշներով բացառապէս տարբերուող համայնքներ: Պարբերականների ընտրութեան չափորոշիչները - ունենալով ընդհանուր սկզբունքներ – տարբեր են հայօճախներից իւրաքանչիւրի համար, ինչը թելադրւում է նրանց առանձնայատկութիւններով: Ընտրութեան ընդհանուր սկզբունքներն են՝ գործունէութեան երկարատեւութիւն, հանրաճանաչութիւն, տպաքանակ կամ զանգուածայնութիւն, ազդեցիկութիւն, բովանդակութիւն եւն.: Հետազօտութիւնն իրականացուել է բովանդակութեան վերլուծութեան մեթոդով, մեդիայի ուսումնասիրման քննական աւանդոյթի շրջանակներում[31]: Վերլուծութեան են ենթարկուել 3 պարբերականների վեց տարուայ (2005-10) հրապարակումները: Ընդհանուր առմամբ, ներկայացուցչական ընտրանքով վերլուծուել է թերթերի 312 համարի 4635 յօդուած: Վերլուծութեան համար առանձնացուել են երկու տասնեակից աւելի ցուցիչներ:

Պարբերականների բովանդակութեան վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ տարբեր հայօճախներում մամուլն ունի իր դերակատարման առանձնայատկութիւնները: Ակնյայտ են Մոսկուայի, Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայօճախների ինքնակազմակերպման, համարկմանն ու ազդեցիկութեան աստիճանների տարբերութիւնները, որոնք արտայայտուած են նաեւ մամուլի միջոցով: Տարբեր են նաեւ հայօճախների համար մամուլի՝ որպէս ընկերային հաստատութեան կարեւորութիւնը:

Սփիւռքի մամուլի բովանդակութեան մէջ դիտարկենք միքանի ցուցանիշ: Առաջինը պայմանականօրէն անուանենք հայկական եւ հիմնական տեղեկատուութեան յարաբերակցութիւն: Հետազօտութեան մէջ «հայկական թեմաներ» են համարուել ՀՀ-ին, ԼՂՀ-ին, Սփիւռքին, ընդհանրապէս

---

[30] Հետազօտութիւնն իրականացուել է ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի Սփիւռքի հետազօտութիւնների բաժնի կողմից, «Սեփական եւ այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազօտութեան հիմնական ուղղութիւնները. ուսումնասիրութեան խնդիրներն ու հեռանկարները» պետական նպատակային ծրագրի շրջանակներում:

[31] Հետազօտութեան մեթոդաբանութեան մասին առաւել մանրամասն տե՛ս՝ Ս. Բարսեղեան, *Հետազօտութեան մեթոդի ընտրութեան հիմնաւորումը. Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները հայկական մամուլում. Հայաստանի եւ Սփիւռքի թերթերի կոնտենտ անալիզ*, խմբ. Ռ. Կարապետեան, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2012, էջ 26-43:

հայութեանը կամ որեւէ հայ անհատի վերաբերող նիւթերը, իսկ «հիմնական թեմաներ» են համարուել ընդունող երկրի մասին եւ միջազգային տեղեկատուութիւնը:

Երեք թերթերի նիւթերի ընդհանուր ծաւալի մէջ հայկական թեմաների տեսակարար կշիռը, ընդհանուր առմամբ, մեծամասնութիւն է: Սակայն այդ ցուցանիշը տարբեր է իւրաքանչիւր թերթի համար. հայկական թեմաներով յօդուածների ծաւալը *Ասպարէզ*ում մօտ 74 տոկոս է, *Ալիք*ում՝ 67 տոկոս, իսկ *Ноев Ковчег*ում 48 տոկոս: Հայկական թեմաներում ՀՀին վերաբերող նիւթերը գերակշռում են բոլոր երեք թերթերում: Սփիւռքին կամ տուեալ հայօճախին վերաբերող տեղեկատուութիւնը զգալիօրէն զիջում է հայաստանեան լրատուութեանը: Բոլոր թերթերն ամենաքիչն անդրադարձել են Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններին: Այսպէս, չնայած *Ноев Ковчег*ում հայկական լրատուութեան աւելի փոքր ծաւալին, մեծամասնութիւնը (81%) ՀՀի մասին է: *Ասպարէզ*ում եւ *Ալիք*ում ՀՀ լրատուութիւնը 64-65 տոկոս է, իսկ հայօճախի՝ 29-30: Այսպիսով, հայկական մամուլն ակնյայտօրէն շեշտադրում է իր միաւորող գործառոյթը:

Այս համեմատութիւնից պարզ է դառնում, որ որքան կայացած է տուեալ հայօճախը, ունի կայացած հաստատութիւններ, ներքին հաւաքական կեանք, այնքան աւելի շատ է քննարկում, կարեւորում սեփական խնդիրները, որոնք տեղ են գտնում մամուլում: Եւ իսկապէս, դիտարկուած հայօճախներից, ամենակայացածը Թեհրանի հայօճախն է, ապա՝ Լոս Անճելըսինը, իսկ Մոսկուայինը՝ դեռեւս ոչ-այնքան: Այս ցուցանիշը պայմանաւորւում է նաեւ մամուլի բովանդակութեան մէջ հայկական եւ հիմնական նիւթերի համամասնութեամբ: Այսպէս, որքան Մոսկուայի հայօճախն ունի ցածր ինքնակազմակերպման աստիճան, այնքան քիչ է ներկայացնում հայօճախի պատմութիւններ եւ այնքան շատ՝ հիմնական (ոչ-հայկական) տեղեկատուութիւն: Թեհրանի եւ Լոս Անճելըսի թերթերն ունեն գրեթէ հաւասար համամասնութիւն Հայրենիք-Սփիւռք ուղղուածութեան մէջ: Սակայն, ելներով ընդունող երկրի մեդիա դաշտի եւ այլ առանձնայատկութիւններից, *Ալիք*ը մի փոքր աւելի շատ է ներկայացրել երկրի լուրերը:

Հայկական նիւթերի ծաւալը մամուլում ցոյց է տալիս նաեւ տուեալ հայօճախի՝ տեղեկատուութիւն ստանալու պահանջները. եթէ Մոսկուայի հայ համայնքն աւելի քիչ կարիք ունի հայկական տեղեկատուութեան, ապա Թեհրանի եւ Լոս Անճելըսի հայօճախներն էթնիկ մամուլից ակնկալում են հենց հայկական լրատուութիւն: Միւս կողմից, այս ցուցանիշը կարող է յուշել էթնիկ մեդիայի ազդեցութեան աստիճանի մասին: Կարեւոր գործօն է նաեւ ընդունող երկրի մեդիա դաշտի եւ դրանում էթնիկ խմբին ներկայացնելու առանձնայատկութիւնը:

*Ноев Ковчег* պարբերականի հայաստանեան նիւթերը աւելի շատ անդրադարձել են ՀՀ ներքին խնդիրներին (61%), քան նրա արտաքին քաղաքականութեանն ու միջազգային յարաբերութիներին (50%): Նոյնը Սփիւռ-

քի մասին նիւթերի համամասնութեան դէպքում է. համայնքի եւ, ընդհանուր առմամբ, Սփիւռքի մասին տեղեկատուութիւնը գերակշռում է (18%) բնակութեան երկրի հետ հայօճախի յարաբերութիւնների նիւթերին (5%):

*Ասպարէզ*ում ՀՀ թեմաների 51%ը վերաբերում է երկրի միջազգային յարաբերութիւններին ու արտաքին կապերին, 23%ը՝ բուն ՀՀ խնդիրներին: Հայօճախի ներքին խնդիրներն ու Մ. Նահանգների հետ յարաբերութիւնները լուսաբանուել են համապատասխանաբար՝ 18% եւ 16%ով:

*Ալիք*ի համարներում ՀՀ-միջազգային յարաբերութիւնների թեմաները 53% են, ՀՀի վերաբերեալ թեմաները՝ 22%, հայօճախ-բնակութեան երկիր փոխյարաբերութիւնները՝ 18%, ներհամայնքային կեանք ու Սփիւռք՝ 16%:

Մամուլի հայկական տեղեկատուութեան բովանդակութեան մէջ կարեւոր է նաեւ լուսաբանուող թեմաների տեսակը: Տիպաբանել ենք թեմաներն ըստ հետեւեալ ոլորտների.- *քաղաքական, տնտեսական, ընկերաբանական, իրաւական, մշակութային (ներառեալ՝ հոգեւոր, գիտակրթական), բարեգործական, ազգային:* Ուսումնասիրուած 3 թերթերում այս թեմաների համամասնութիւնը տարբեր է, սակայն բոլորի համար հայկական թեմաների առաջատարները քաղաքականն ու մշակութայինն են:

Ամենածաւալուն՝ քաղաքական թեմաներով նիւթերն ամենաբազմազանն ու լայնաշերտն են: Քաղաքական թեմաները, կազմելով մեծամասնութիւն եւ լինելով տեղեկատուական դաշտի ուշադրութեան կենտրոնում, աւելի մեծ սպառում ու ազդեցութիւն ունեն լսարանի վրայ: Եթէ հաշուի առնենք նաեւ այն, որ քաղաքական թեմաները հիմնականում վերաբերում են ՀՀին, ապա ակնյայտ է դառնում, որ Սփիւռքի ժամանակակից մամուլը Հայրենիքի ընկալումը միաւորում է Հայաստանի Հանրապետութեան քաղաքականութեան շուրջ, ինչպէս նաեւ փորձում է զուգահեռել Սփիւռքի օրակարգն այդ քաղաքականութեանը: Տուեալները ցոյց են տալիս Սփիւռքի հետաքրքրուածութիւնը ՀՀի թէ՛ ներքին, թէ՛ արտաքին քաղաքականութեամբ: Անշուշտ, իւրաքանչիւր հայօճախ առաւելապէս հետաքրքրուած է իր երկի հետ ՀՀ յարաբերութիւններով: Սակայն ընդհանուր ուշադրութիւն կայ ՀՀի արտաքին յարաբերութիւններով միջազգային կապերով եւ համագործակցութիւններով՝ այս առնչութիւնների ենթախորքում դիտարկելով նաեւ ազգային հարցերը, մասնաւորապէս՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը եւ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը: Սփիւռքի քաղաքական գործունէութիւնը, ի տարբերութիւն ՀՀի, ներկայացուում է բաւականին նեղ եւ փոքրածաւալ:

Մամուլում Սփիւռքն առաւելապէս ներկայանում է մշակութային թեմաների շրջանակներում: Հանդիսանալով Սփիւռքում ինքնութեան պահպանման հիմնական գործօն, մշակոյթը, եկեղեցին, կրթութիւնը մամուլի ուշադրութեան կենտրոնում են: Մամուլի բովանդակութեան մէջ մշակութային տեղեկատուութեան խճանկարը բաւականին բազմազան է: Այդ նիւթերը կարելի է խմբաւորել հետեւեալ թեմաների մէջ.- կրօն, եկեղեցի,

մշակութային արժէքների պահպանում եւ/կամ ոչնչացում, մշակութային քաղաքականութիւն, տօներ, պատմամշակութային իրադարձութիւններ, կրթութիւն, հրատարակչութիւն, գրականութիւն, թատրոն, երգարուեստ, մարզական կեանք, մշակութային գործիչներ եւ միջոցառումներ, թանգարաններ, պատկերասրահներ, գեղարուեստ, ցուցահանդէսներ, միջմշակութային առնչութիւններ, մշակութաբանութիւն եւ ուսումնասիրութիւններ:

Ի տարբերութիւն մշակոյթի, ընկերատնտեսական խնդիրները հիմնականում վերաբերում են ՀՀին: Իհարկէ, դրան նպաստում է նաեւ ՀՀի կողմից Սփիւռքից ակնկալուող աջակցութեան սպասումը, քանզի հայրենիքին աջակցելու Սփիւռքի ձգտումները յաճախ ուժգնանում են հենց երկրի ընկերատնտեսական դժուարութիւնների մասին տեղեկատուութեան ազդեցութեամբ: Հայօճախների տնտեսական վիճակի եւ ընկերային խնդիրների քննարկումը մամուլում կարեւորւում է հայօճախի ներուժի ինքնագնահատման, խնդիրների լուծման ուղիների փնտռման, ինչպէս նաեւ դրա շուրջ համախմբման ու փոխօգնութեան տեսանկիւնից:

Իրաւական թեմաները բազմազան չեն, սակայն ընդգրկում են ՀՀում եւ ընդունող երկրում առկայ խնդիրները, ինչպէս եւ համազգային հարցերը:

Բարեգործութիւնը, հանդիսանալով Սփիւռքի հետ նոյնացուող եւ ՀՀի կողմից աւանդաբար ակնկալուող գործունէութիւն, այդուհանդերձ մեծ արձագանգ չի ունեցել սփիւռքեան մամուլում:

Ազգային թեմաները յաճախ քննարկւում են քաղաքական ենթախորքում: Այդ թեմաների բովանդակութիւնը ինքնութեան պահպանման եւ ընդհանրութեան ստեղծման՝ մամուլի կարեւոր բովանդակութիւն է:

Ամփոփելով սփիւռքիահայ մամուլի բովանդակութեան ընդհանուր պատկերը, կարող ենք նշել, որ այն ունի սփիւռքեան ընդհանրութիւններ եւ հայօճախի առանձնայատկութիւններ: Մամուլի հայկական բովանդակութեան վերլուծութիւնը ցոյց է տալիս տարբեր հայօճախներում մամուլի բովանդակութեան, գործառոյթների եւ դերակատարութեան նմանութիւններ: Նրանց բովանդակութիւնն առաւելապէս հայկական է, որն իր հերթին մեծապէս վերաբերում է ՀՀին: Եթէ ծաւալի առումով գերիշխում է ՀՀ տեղեկատուութիւնը, ապա դրական գնահատականով նիւթերով՝ սփիւռքեան լրատուութիւնը: Հայրենիքն առաւելապէս ներկայացւում է քաղաքական, իսկ Սփիւռքը՝ մշակութային կողմով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, հայկական մամուլը, որպէս էթնիկ մեդիա, հայօճախի համար ստանձնում է հետեւեալ դերերը.-

- հանդէս է գալիս որպէս հայօճախի հաստատութիւն.
- արտացոլում է հայօճախի ընկերային փոփոխութիւնները.
- հաստատում է հայօճախի ազդեցիկութիւնը եւ նրա տեղը ընդունող հասարակութեան մէջ.

- իրազեկում է հայօճախի իրաւունքների մասին.
- հանդիսանում է ինչպէս հիմնական տեղեկատուական տարածութեան բաղկացուցիչ, այնպէս էլ հայօճախի մասին տեղեկատուական ցանցի կարեւոր օղակ.
- օժանդակում է ընկերային պատշաճումին՝ ընդունող հասարակութիւնում.
- դառնում է ընկերային հիմնաղբիւր՝ հայօճախը համալրող ներգաղթեալների համար.
- համախմբում է հիմնական հասարակութիւնից իրենց էթնիկ, մշակութային ու ընկերաբանական բնութագրիչներով տարբերուող եւ ինքնութեան պահպանմանը միտուած խմբերին:

Սակայն էթնիկ մամուլի գլխաւոր գործառոյթը սփիւռքեան ինքնութեան կառուցակցումն է: Այս հիմնական դերի տեսանկիւնից, Սփիւռքի այս երեք պարբերականների բովանդակութեան վերլուծութիւնը ցոյց տուեց, որ հայկական մամուլն ակնյայտօրէն շեշտադրում է միաւորող գործառոյթը՝ լուսաբանելով առաւելապէս հայկական տեղեկատուութիւն, կապելով էթնիկ խմբին Հայրենիքի հետ, օգնելով պահպանել լեզուն եւ մշակոյթը: Կողմնորոշող գործառոյթը, որով մամուլը օգնում է համարկուել ընդունող երկրում՝ տարածելով տեղեկատուութիւն հայօճախի եւ ընդունող հասարակութեան մասին, զիջում է միաւորող գործառոյթին: Սակայն միաւորող եւ կողմնորոշող պատմութիւնների որոշակի համամասնութիւնը նպաստում է երկակի տեսակէտերի, մօտեցումների, երկակի ինքնութեան ձեւաւորմանը, երբ էթնիկ խմբի ներկայացուցիչը գիտի եւ կարող է օգտագործել ընդունող եւ ծագման երկրների մշակոյթները, նորմերը եւն.: Այդպիսով, մամուլը դառնում է օգտակար աղբիւր էթնիկ խմբի համար: Մամուլի բովանդակութեան մէջ միաւորող եւ կողմնորոշող գործառոյթների համամասնութիւնն առանցքային է եւ կարող է պայմանաւորել ինչպէս մեդիասպառումը, այնպէս էլ ազդեցութիւնը ինքնութեան կառուցակցման վրայ:

Հայրենիքի մասին տեղեկատուութեան գերակշռութիւնը կամ միաւորող գործառոյթի շեշտադրումը, մի կողմից վկայում է Սփիւռքի ձգտումը՝ մշակութային երկատուածութեան իրավիճակում վերադառնալ արմատներին, մշակոյթին, անցեալին, միւս կողմից՝ էթնիկ մեդիայի հայաստանակենտրոն բովանդակութիւնը սփիւռքեան փոփոխուող ինքնութիւնը փորձում է դարձնել առաւել կայուն: Եւ վերջապէս, Հայրենիքը դառնում է հայկական տեղեկատուական դաշտի այն միջուկը, որի շուրջ համընդհանուր գաղափարներն ու էթնոմշակութային արժէքները վերարտադրւում ու տարածւում են Սփիւռքի հայօճախներում՝ անկախ նրանց տարբերութիւններից:

Մամուլն իր բովանդակութեան միջոցով միւս՝ խորհրդանշական գործառոյթը (արժէքների եւ գաղափարների տարածում, ինքնութեան պահպանում) հիմնականում կատարում է մշակութային եւ ազգային թեմաների, ինչ-

պէս նաեւ քաղաքական թեմաների քննարկման՝ նշուած թերթերում: Մշակութային միջսահմանային իրավիճակում եւ այլազգի միջավայրում ապրող հայերի համար սեփական մշակութային արժէքների վերաբերեալ մամուլի տեղեկատուութիւնը կարող է մշտարթուն պահել ծուլման վտանգի դէմ, ինչպէս նաեւ վերակազմաւորել հատուածական մշակութային ինքնութիւնը: Մշակութային նիւթերի բովանդակութեան միջոցով մամուլը նաեւ կարող է ամրագրել եւ պահպանել սեփական իւրայատուկ մշակութային դրամագլուխը եւ հարստացնել միջմշակութային դրամագլուխը: Էթնիկ ինքնութեան պահպանմանն է նպաստում նաեւ մամուլի բովանդակութեան մէջ ազգային թեմաների քննարկումը, պատմական յիշողութեան վերարտադրումը, էթնոսի պատմութեան վերաիմաստաւորումը: Հայոց Ցեղասպանութեան մասին մամուլում արծարծուող թեման դրա օրինակն է:

Էթնիկ մամուլի բովանդակութեան տարածման շնորհիւ, խորհրդանշական տեղեկատուութիւն փոխանցելով ընդհանուր անցեալի ու Հայրենիքի մասին եւ Սփիւռքին մասնակից դարձնելով հայրենիքում ընթացող ամէնօրեայ գործընթացներին, ստեղծւում է մշակութային ու էթնիկ միասնութիւն: Չնայած Սփիւռքի տարբեր հատուածների առանձնայատկութիւններին ու տարբերութիւններին, առաջանում է որոշակի էթնոմշակութային ընդհանրական արժէքների-հետաքրքրութիւնների ձեւաւորում:

## DIASPORA NEWSPAPERS IN THE CONTEXT OF ETHNIC MEDIA
## (Summary)

SYUZANNA BARSEGHYAN
syuzanna.barseghyan@gmail.com

The paper critically examines the paradigm of ethnic media and its importance for ethnic and/or Diaspora communities. In this context three Diaspora newspapers from three different Armenian Diaspora communities are observed.

The paper notes that the study of Armenian Diaspora media has usually revolved around their history and the causes of and reasons for their birth in the context of the history of the given community. These studies, however, are not helpful in understanding the place and role of the ethnic media in the said community vis-à-vis the latter's current challenges.

The examination of Armenian Diaspora newspapers in the context of an ethnic media paradigm reveals their role as a social institution in the community and an actor in identity construction.

The paper studies three Diaspora Armenian newspapers published in Tehran, Los Angeles and Moscow, conducts a content analysis of them for the years 2005 to 2010, and draws a number of conclusions.

# ԿՐՕՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՀԱՅՕՃԱԽՆԵՐՈՒՄ

**ԼՈՒՍԻՆԷ ՏԱՆԱՋԵԱՆ**
Lusine.tanajyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Սփիւռքում եկեղեցին ունի նշանակալի դեր հայօճախի ինքնակազմակերպման եւ գործընթացների կառավարման խորապատկերին: Սփիւռքում կրօնը եւ եկեղեցին ունեցել եւ ներկայումս էլ ունեն առանձնայատուկ կարեւորութիւն, ինչը սակայն ունի վերաիմաստաւորման եւ բացայայտման կարիք յատկապէս սփիւռքահայերի ընկալումներում: Չնայած նշուած կարեւորութեանը՝ դրանց վերաբերեալ ուսումնասիրութիւնները, մասնաւորապէս, նրանք, որոնք առնչւում են Սփիւռքի անդամների կրօնական վարքագծին, բաւականին սակաւ են: Սփիւռքում կրօնին եւ եկեղեցուն վերաբերող ուսումնասիրութիւնները հիմնականում կրօնագիտական մօտեցումների շրջանակում են կամ դիտարկում են մասնաւոր հարցեր, ինչպէս օրինակ եկեղեցիների հիմնադրման պատմութիւն, եկեղեցական թեմերի միջեւ յարաբերութիւններ, կրօնական կառոյցների գործառնութիւն, հոգեւոր առաջնորդների գործունէութիւն եւն.[1]: Մինչդեռ ընկերաբանական գիտութեան շրջանակում առանձին հետազօտութիւնները, որոնք կը վերաբերեն Սփիւռքում եկեղեցու եւ կրօնի ընկերաբանական նշանակութեան վերիանմանը՝ բացակայում են: Յօդուածը նպատակ ունի վերհանել ժամանակակից Սփիւռքի երկու հայօճախների (Թեհրան եւ Լոս Անճելըս) անդամների կրօնական վարքագծի առանձնայատկութիւնները տարբեր գործօնների հետ փոխկապուածութեան մէջ՝ համեմատական վերլուծութեան միջոցով:

---

[1] *Սփիւռքի դաւանանքային հատուածների խնդիրները եւ հնարաւորութիւնները,* հեղ. խմբի ղեկավար՝ Արեստակէս Սիմաւորեան, «Նորավանք» ԳԿՀ, Երեւան, 2011. նաեւ՝ Հ. Յովհաննիսեան, «Մայր աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան 20-րդ դարի երկրորդ կէսի յարաբերութիւնների վերլուծութեան փորձ», *ԵՊՀ աստուածաբանության ֆակուլտէտի տարեգիրք*, Գ:2008 Երեւան, էջ 316-38). նաեւ՝ Վ. Հովեան, «Լիբանանի հայ բողոքական համայնքը», *21-րդ ԴԱՐ*, 4:2010, էջ 56-57. նաեւ՝ S. Cowe, "Church and Diaspora: The Case of the Armenians", in M. Angold (ed.), *The Cambridge History of Christianity*, Cambridge University Press, Cambridge, 2006, pp. 430-56. նաեւ՝ M. Ashjian, *The Armenian Church in America*, Armenian Prelacy, New York, 1995:

## ԿՐՕՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓԻՒՌՔԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Աւանդաբար տարբեր սփիւռքներում կրօնի մասին քննարկումները կապւում են էթնիկ ինքնութեան, մշակութային փորձառութիւնների եւ ընկերաբանական ինքնակազմակերպման հարցերի[2]: Այս առումով կրօնը եւ կրօնական վարքագիծը միջգիտակարգային (միջուսմունքային) հետազօտութիւնների ուսումնասիրութեան առարկայ են եւ ուսումանսիրւում են ընկերային եւ մշակութային մարդաբանութեան, էթնիկութեան, գաղթի եւ սփիւռքագիտական ուսումնասիրութիւններով զբաղուող հետազօտողների կողմից: Յատկապէս վերջին տարիներին, հաշուի առնելով բազմազգ հասարակութիւնների աւելացումը եւ անընդհատ աճող գաղթի գործընթացները ժամակակակից Սփիւռքում, գիտական քննարկումները ծաւալւում են կրօնի եւ եկեղեցու՝ որպէս համախմբող, ներառող երեւոյթի ուղղութեամբ, ինչը համաշխարհային սփիւռքում համերաշխութիւն է խորհրդանշում տարբեր ազգերի, յատկապէս միեւնոյն կրօնին պատկանող գաղթականների շրջանում: Այս դիտարկման հետ նաեւ շեշտադրւում են կրօնի եւ եկեղեցու նշանակութեան ու առաքելութեան փոփոխութիւնները համաշխարհային սփիւռքի խորապատկերին[3]:

Սփիւռքագիտական գրականութեան մէջ, կազմակերպուած սփիւռքներում կրօնական վարքագծի վերաբերեալ ուսումնասիրութիւնները բովանդակային եւ գործառութային առումով կարելի է բաժանել երեք հիմնական շրջանակների.-

1) **Ազգային ինքնութեան կառուցակցում ու պահապանում**[4]- այստեղ կրօնը դիտարկւում է սփիւռքեան ինքնութեան ձեւաւորման հիմնական բաղադրիչ. այն հանդէս է գալիս որպէս ազգային տարրերի պահպանման եւ փոխանցման օղակ: Սփիւռքում կրօնական կազմակերպութիւնները, մասնաւորապէս եկեղեցին, հանդէս են գալիս որպէս ինքնութեան կրող, եւ կրօնական վարքագիծը դառնում է առօրեայի անբաժանելի մաս: Այս

---

[2] J. Dingley, P. Catterall, "Language, Religion and Ethno-national Identity: The Role of Knowledge, Culture and Communication," *Ethnic and Racial Studies*, 43(2):2020, էջ 307-37. նաեւ՝ W. Safran, "Language, Ethnicity and Religion: A Complex and Persistent Linkage," *Nations and Nationalism*, 14(1):2008, էջ 171-90. նաեւ՝ Sh. Mazumdar, S. Mazumdar, "Religious Placemaking and Community Building in Diaspora," *Environment and Behavior*, 41(3):2009, էջ 307-33:

[3] M. Nacpil, "The Church in the Twenty-First-Century Diaspora: The Local Church on Mission," *International Bulletin of Mission Research*, 42(1):2018, էջ 68-71:

[4] E.H. Cohen, "Components and Symbols of Ethnic Identity: A Case Study in Informal Education and Identity Formation in Diaspora," *Applied Psychology*, 53(1):2004, էջ 87-112:

մօտեցման շրջանակում կրօնի եւ եկեղեցու դերի որոշակիացումը առաւելապէս կապւում է Սփիւռքի վերնախաւերի կողմից իրականացուող գործունէութեան հետ եւ քննարկւում է հայօճախի շահերի ներկայացման տեսանկիւնից տուեալ երկրում:

2) Երկրորդ մօտեցման շրջանակում կրօնը եւ եկեղեցին **հայօճախի ինքնակազմակերպման գործընթացների խորապատկերին են ներկայացւում**[5]: Այս խորապատկերին Սփիւռքում կրօնը եւ եկեղեցին առաւելապէս կատարում են համախմբման, կարգուկանոնի հաստատման եւ այլ ընկերաբանական նշանակութեան գործառոյթներ: Այստեղ եկեղեցին ունի հայօճախում ընկերային միջոցների բաշխման լայն հնարաւորութիւններ:

3) Երրորդ մօտեցման դէպքում կարեւորւում է **եկեղեցու եւ կրօնի դերը սփիւռքեան հայօճախների ընկերամշակութային կեանքում**[6]: Այս մօտեցմամբ կրօնը եւ եկեղեցին առաւելապէս դիտւում են որպէս հայօճախի անդամների առօրէականութեան մէջ դրսեւորուող երեւոյթ: Դրանք քննարկւում են որպէս ազգային արժէքների, ազգային մշակոյթի առանձին տարրերի իրացման միջոց: Վերջինս հնարաւոր է դառնում եկեղեցու հովանու տակ կամ եկեղեցուն կից տարբեր կազմակերպութիւնների գործունէութեան ժամանակ, եւ տուեալ կազմակերպութիւնները դառնում են հայօճախի անդամների կենսագործունէութեան կարեւոր մասը:

Նման մօտեցումներից որեւէ մէկի գերակշռումը կարելի է նաեւ տեսնել ե՛ւ սփիւռքեան հայօճախների, ե՛ւ ընդունող երկրների առանձնայատկութիւնները ուսումնասիրելիս: Չնայած նշուած մօտեցումներում առկայ մի շարք տարբերութիւններին՝ անհերքելի է, որ կրօնը էթնիկ ինքնութեան մէջ ունի առանձնայատուկ տեղ: Որքան էլ որ ինքնութեան սահմանումների մէջ կան տարակարծութիւններ՝ դրսեւորման հիմնական բնութագրիչների վերաբերեալ, այդուհանդերձ, առանձնանում են կրօնը, լեզուն, հաւաքական յիշողութիւնը, կազմակերպութիւնները, եւ դրանց դրսեւորման ոլորտները[7]:

---

[5] M. Nacpil, "The Church in the Twenty-First-Century Diaspora: The Local Church on Mission," *International Bulletin of Mission Research*, 42(1):2018, էջ 69-70:

6 D.M. Barry, *Popular Perceptions of the Relationship between Religious and Ethnic Identities: A Comparative Study of Ethnodoxy in Contemporary Russia and Beyond,* Kalamazoo, Western Michigan University, Michigan, 2012 (online published dissertation), էջ 14-15:

[7] Յ. Մարութեան, «Հայ ինքնութեան պահպանման հիմնախնդիրները Սփիւռքի համայնքներում 21-րդ դարասկզբին», *Ռուսաստանի Դաշնութեան հայկական սփիւռքը. միջազգային գիտաժողով*, էջ 67 https://artsakhlib.am/wp-content/uploads/2019/05/Harutyun-Marutyan-Hay-inqnutyan-pahpanman-himnakhndiry.pdf :

## ԿՐՕՆԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՍՓԻՒՌՔՈՒՄ

Սփիւռքի համախմբուածութիւնը եւ հայ ինքնութեան պահպանումը հիմնուած են ընդհանուր լեզուի եւ կրօնի, որոշակի տարածքում ազգային պետութեան, հաւաքական յիշողութեան, ընդհանուր ազգային, համահայկական պահանջների առկայութեան եւն. վրայ[8]:

Բնակութեան երկրի միջավայրային առանձնայատկութիւնների բերմամբ - լինեն դրանք կրօնական, էթնիկական, մշակութային եւն. - նոյն էթնիկ խմբի հատուածներ այլազգի տարբեր միջավայրում դրսեւորում են տարբեր կրօնական վարքեր: Սփիւռքում մասնաւորապէս հետաքրքիր է տեսնել ձեւաւորման պատմութեամբ, կրօնական, ազգային միջավայրերով եւ այլ ելակէտային յատկանիշերով տարբերուող հայօճախներում կրօնի դերը եւ գործառոյթները:

Սփիւռքը այս առումով դառնում է ուսումնասիրութեան իւրայատուկ դաշտ, որի շնորհիւ կարելի է դուրս բերել տարբեր միջավայրերում հայերի կրօնական աւանդոյթների եւ վարքերի ընդհանուր եւ առանձնայատուկ կողմերը: Տեսական հարցադրումներից անցնելով ուսումնասիրութեան գործիական մակարդակ՝ հարկ է անդրադառնալ պայմանականօրէն երկու խումբ գործօնների՝ արտաքին եւ ներքին, որոնց ազդեցութիւնը պայմանաւորում է տուեալ հայօճախի ներկայացուցիչների վերաբերմունքը որեւէ երեւոյթի նկատմամբ:

Արտաքին գործօնները վերաբերում են ընդունող հասարակութեան միջավայրային պայմաններին՝ աւանդական կամ ժամանակակից հասարակութիւն, «բաց» կամ «փակ» միջավայր, կրօնական, տնտեսական, ընկերային միջավայր եւն.: Ներքին գործօնները հայօճախի ներքին միջավայրային առանձնայատկութիւններն են՝ ընկերային կառոյց, անդամների քանակ, ընկերաժողովրդագրական կազմ, գրիւ կամ հաւաք տեղակայում, համախմբուածութեան աստիճան, ընկերային կապեր, յարաբերութիւններ, ընդունուած արժէքներ, անդամների մասնագիտական-մշակութային վիճակ, հայօճախի կազմակերպման մակարդակ եւն.: Պէտք է նշել, որ այս երկու խումբ գործօնները փոխներգործութեան մէջ են եւ սփիւռքեան որեւէ երեւոյթ ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշուի առնել դրանք:

## ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

Այս նպատակով յատկապէս կարեւորուել է երկու հայօճախների ուսումնասիրութիւնը եւ համեմատութիւնը: Յօդուածում վերհանուել են Թեհրա-

[8] Ս. Ներսիսեան, Լ. Տանաջեան, «Ինքնակազմակերպման գործընթացները Կալինինգրադի հայերի շրջանում», *Պատմութիւն եւ մշակոյթ. հայագիտական հանդէս*, 2:2018, էջ 235. նաեւ՝ W. Safran, "Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return," *A Journal of Transnational Studies*, 1(1):1991, էջ 84-85:

նի եւ Լոս Անճելըսի հայերի կրօնական վարքագծի մի շարք առանձնայատկութիւններ: Տուեալ քաղաքներում հայօճախների ընտրութիւնը պայմանաւորուած է ոչ միայն հայերի մեծ թուաքանակով եւ հարուստ կենսափորձով: Նշուած խմբերի ընտրութիւնը բացատրւում է նաեւ տարբեր պայմաններում փոփոխականների մօտաւորապէս միանման ամբողջութեան համեմատութեամբ եւ վերլուծութեամբ, ինչը ենթադրում է միաէթնիկ-բազմաէթնիկ, մօտ-հեռու եւ այլակրօն միջավայր, հին եւ նոր հայօճախներ, բնակութեան պարզ, բարդ, հաւաք եւ ցրիւ ձեւեր եւն.[9]:

Աշխատանքը հիմնուած է էթնօընկերաբանական հետազօտութեան տուեալների վերլուծութեան վրայ, որն իրականացուել է, հեղինակի կողմից 2013ին Լոս Անճելըս (Ամերիկայի Միացեալ Նահանագներ) եւ 2014ին Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետութիւն) քաղաքներում[10]: Հետազօտութիւններն իրականացուել են որակական եւ քանակական մեթոտների համալիր կիրառմամբ: Այդ մեթոդներն են՝

- Փորձագիտական հարցազրոյց՝ տուեալ հիմնախնդրով, սփիւռքի ուսումնասիրութեան մեթոդաբանութեամբ զբաղուող մասնագէտների հետ, ինչպէս տուեալ հայօճախներում, այնպէս էլ դրանցից դուրս: Վերջինս հնարաւորութիւն է տուել ստանալ փորձագիտական գնահատականներ եւ կարծիքներ հայօճախների մասին՝ տարբեր ուղղութիւններով: Ձայնագրուել են աւելի քան 40 փորձագիտական եւ խորին հարցազրոյցներ՝ հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ: Այս մեթոդը թոյլ է տուել հայօճախներում գրեթէ բոլոր խմբերի, շերտերի հետ կապ հաստատել եւ հաւաքուած տեղեկատուութեան մէջ ապահովել գրեթէ բոլոր կողմերի ներգրաւուածութիւն: Առաջին քայլով իւրաքանչիւր քաղաքում առանձնացուել են գործող հիմնական հայկական կազմակերպութիւնները, որոնցից ընտրուել են էական ազդեցութիւն ունեցողները՝ ըստ փորձագէտների կամ եղած գրաւոր աղբիւրների, թերթերի հրապարակումների: Հաւաքագրուած կազմակերպութիւնները ներառել են միքանի խմբեր՝ կուսակցութիւններ, հայրենակցական միութիւններ, կրթական հաստա-

---

[9] Ռ. Կարապետեան, «Ժամանակակից հայկական տեղեկատուական տարածքի ուսումնասիրութեան խնդիրները», *Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները հայկական մամուլում. Հայաստանի եւ Սփիւռքի թերթերի կոնտենտ անալիզ*, խմբ. Ռ. Կարապետեան, Գիտութիւն հրատ., Երեւան, 2012, էջ 22:

[10] Էթնօընկերաբանական հետազօտութիւններն իրականացուել են «Սեփական եւ այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազօտութեան հիմնական ուղղութիւնները. խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2013-14): Այս յօդուածում տեղ է գտել հետազօտութեան արդիւքների որոշակի հատուածը: Ամբողջական տուեալներն արտայայտուած են հեղինակի այլ յօդուածներում եւ ատենախօսական աշխատանքում:

տութիւններ, եկեղեցիներ, բարեսիրական կազմակերպութիւններ, ՋԼՄներ, գրատներ, գրադարաններ, մշակութային կազմակերպութիւններ, ազգային հարցերով զբաղուող կառոյցներ, հասարակական կազմակերպութիւններ, հայօճախում գործուն անհատներ: Իւրաքանչիւր խմբից ընտրուել են մէկ կամ միքանի կազմակերպութիւն, որոնց համապատասխան ներկայացուցիչների հետ անցկացուել է հարցազրոյց՝ նախապէս մշակուած հարցաշարով:

- Ձեւայնացուած քանակական հարցում, որն իրականացուել է Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայերի շրջանում՝ ընտրանքով, ձնակոյտի մեթոդով: Ընտրանքի համար հիմք են ծառայել հետեւեալ ցուցիչները.- ծագումը (տարբեր երկրներից ներգաղթած եւ տեղացի), սեռը, տարիքը, կրթութիւնը: Հարցմանը մասնակցել են 230 հոգի՝ Թեհրանում, 450 հոգի՝ Լոս Անճելըսում: Հետազօտութեանը մասնակցել են 18 տարեկանից վեր եւ հիմնականում հայօճախի կեանքում ներգրաւուած հարցուողները:
- Հայօճախի կեանքի դիտարկում չներգրաւուած եւ առանց ծրագրի ձեւաչափով: Դիտարկման մեթոդը թոյլ է տուել գնահատել առկայ իրավիճակը ընդունող երկիր-հայօճախ երկկողմ յարաբերութիւններում: Ինչպէս նաեւ հաշուի են առնուել հայօճախի ներքին կեանքի եւ փոխյարաբերութիւնների որոշ կողմեր:

Յօդուածում առաջ քաշուած նպատակի բացայայտման համար առաջադրուել են հետեւեալ հիմնական հետազօտական խնդիրները.-

- Ցոյց տալ կրօնի դերը սփիւռքեան ինքնութեան ձեւաւորման եւ պահպանման գործում.
- Պարզել կրօնի եւ եկեղեցու գործառոյթները Սփիւռքում.
- Նկարագրել կրօնական վարքագծի դրսեւորման առանձնայատկութիւնները Թեհրանի եւ Լոս Անճելըսի հայերի շրջանում՝ ըստ մի շարք գործօնների (սեռ, տարիք, կրթութիւն):

## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԵՒ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՕՃԱԽՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Փորձագիտական հարցազրոյցներից ստացուած տուեալները հնարաւորութիւն են տալիս ընդհանրական ներկայացնել Լոս Անճելըսի եւ Թեհրանի միջավայրն ու հայօճախների բնութագիրը՝ ըստ վերոնշեալ ցուցիչների: Նախ դիտարկենք բնակութեան երկրի կրօնական, ազգային յատկանիշերի եւ փոքրամասնութիւնների նկատմամբ տուեալ երկրում ընդհանուր քաղաքականութեան ցուցանիշերը: Կրօնական առումով այս երկու հայօճախները գտնւում են միմեանցից տարբերուող միջավայրերում, ինչն առանձնայատուկ նշանակութիւն է ունեցել նրանց ինքնակազմակերպ-

ման, համարկման, ազգային ինքնութեան պահպանման եւ այլ կողմերի վրայ:

Իրանի Իսլամական Հանրապետութիւնը, լինելով մահմետական երկիր, արդէն իսկ որոշակի սահմաններ է գծել հայօճախ ձեւաւորման համար: Այս տարբերութիւնը նպաստել է հայօճախի հոծ բնակեցմանը եւ ներքին, զարգացած կառուցուածքի ստեղծմանը: Այստեղ հայերը սահմանադրութեամբ համարւում են էթնօկրօնական փոքրամասնութիւն, սակայն առօրեայ շփումներում եւ այլ տեսակի յարաբերութիւններում առաջնահերթ է համարւում յատկապէս կրօնական տարբերութիւնը: Ինչպէս նշում է Թեհրանում հայօճախի հարցապնդուողներից մէկը, *չնայած նրան, որ Իրանում հայերը պաշտօնապես՝ սահմանադրօրէն համարւում են էթնօկրօնական փոքրամասնութիւն, այլ ոչ թէ էթնիկական կամ ազգային, այդուհանդերձ հայերը բացառապէս կրօնական փոքրամասնութիւն են ճանաչւում բոլոր առումներով»:* Պետութեան կողմից էթնօկրօնական փոքրամասնութիւնների նկատմամբ վերահսկողական համակարգը օրէնքներով ամրագրուած է. իւրաքանչիւր փոքրամասնութիւն ունի իր համար նախատեսուած օրէնքները: Դրանք գլխաւորապէս վերաբերում են ամուսնութեան եւ ամուսնալուծութեան, կտակի եւ ժառանգութեան հարցերին: Սակայն հայօճախի համար յատկանշական է որ բացի վերոնշեալից, առկայ են ներքին ղեկավարման օղակներ, որոնք գործում են զուգահեռ եւ միայն ներքին որոշումներից յետոյ է հաստատւում վերին օղակների կողմից: Հայօճախն ունի իր ներկայացուցիչը խորհրդարանում, ով հանդիսանում է կապող օղակ հայօճախի անդամների հետ եւ լսելի է դարձնում հայօճախի հարցերը: Այս առումով ինչպէս նշում են հայկական կազմակերպութիւնների ղեկավարներից որոշները, հայերը որպէս փոքրամասնութիւն գտնւում են բաւականին շահեկան վիճակում:

Այսպիսով, Թեհրանի միջավայրի հիմնական նկարագրական բնութագրիչներ են նշուել աւանդական, փակ հասարակութիւն, այլակրօն միջավայրը: Իսկ հայօճախը բնութագրւում է որպէս համեմատաբար միատարր կրօնական փոքրամասնութիւն, որն առանձնանում է իր հոծ ընկերային կառուցուածքով, նուազող քանակական աճով, սեփական կազմակերպութիւնների հարուստ ներկայութեամբ:

Ամերիկեան միջավայրն իր կրօնական, էթնիկական, իրաւական եւ այլ յատկանիշերով հակադրւում է իրանականին: Ամերիկեան հասարակութիւնն ունի բազմամշակութային, բաց եւ ժողովրդավարական արժէքների բնոյթ: Ըստ էութեան այստեղ յայտարարուած է բարձր հանդուրժողութիւն կրօնական կամ ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ: Ամերիկայի Միացեալ Նահանգները համարւում է խառը ինքնութիւնների երկիր: Կան մի շարք առաջնահերթութիւններ՝ լեզուի, մասնագիտական կարո-

ղութիւնների եւն.ի առնչութեամբ, որոնց շնորհիւ որեւէ ազգի ներկայացուցիչ կարող է համարկուել հասարակութիւնում:

Հայօճախի վերաբերեալ կարեւորուել է դրա բազմաշերտերտութիւնն ու բազմազանութիւնը, ազգային փոքրամասնութիւն լինելը, ցրիւ ընկերային կառուցուածքը: Հայօճախը առանձնանում է անընդհատ քանակական աճով եւ փոփոխուող կազմով, կազմակերպութիւնների հարուստ ներկայութեամբ:

Ընդհանուր երկու միջավայրերը ունեն միմեանցից տարբերուող կամ նման մի շարք բնութագրիչներ:

Սփիւռքի տարբեր հայօճախներում կրօնը եւ եկեղեցին ունեցել են եւ ներկայումս էլ ունեն առանձնայատուկ նշանակութիւն հայօճախի անդամների ընկալումներում եւ վարքային դրսեւորումներում՝ անկախ ներքին եւ արտաքին պայմաններից: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել երեք հիմնական առանձնայատկութիւն Սփիւռքում կրօնի եւ եկեղեցու վերաբերեալ.-

1. Եկեղեցու եւ կրօնի ընկերաբանական նշանակութիւնը,
2. Ներքին եկեղեցական յարանուանական տարաբաժանումները,
3. Զուգակցումը կուսակցութիւնների հետ:

Անդրադառնալով այդ առանձնայատկութիւններից առաջինին՝ պէտք է նշել, որ եկեղեցին Սփիւռքում գործում է որպէս ընկերաբանական հաստատութիւն: Սա ենթադրում է, որ այն առկայ է հայօճախի կեանքի մի շարք բնագաւառներում եւ ունի ընկերային նշանակութիւն: Եկեղեցին կցուած է հայ էթնիկութեան գաղափարին եւ դրա դերն ու գործառոյթները Սփիւռքում համաձայնեցուած են: Եկեղեցին աշխուժ մասնակցութիւն ունի նաեւ մշակութային եւ ընկերային հարցերին: Այդպիսով եկեղեցին, որպէս ընկերաբանական հաստատութիւն, Սփիւռքում բացի բուն կրօնական գործառոյթից իրականացնում է նաեւ մի շարք այլ գործառոյթներ՝ ազգային, մշակութային, կրթական եւն., որոնք նպաստում են հայօճախներում ազգային ինքնութեան պահպանմանը, հայկական միջավայրի, ընկերային կապերի ապահովմանը, ընկերամշակութային կեանքի աշխուժացմանը եւն.: Այս առումով կրօնական, հոգեւոր-մշակութային, ընկերային ազդեցութեան մակարդակը - ըստ հայօճախի տեսակի եւ տարաբնակեցման ձեւի - կարող է լինել բարձր կամ ցածր: Եկեղեցու եւ կրօնի ներառուածութիւնը կենսագործունէութեան տարբեր բնագաւառներում ակնյայտ է դառնում, երբ դիտարկում ենք հայօճախի անդամների ներգրաւուածութիւնը հայկական կառոյցներում. այդ ցուցակում կրօնական կազմակերպութիւնների դերը բաւականին մեծ է: Իսկ եթէ նաեւ հաշուի առնենք այլ կառոյցների կապուածութիւնը եկեղեցուն՝ կարող ենք ասել, որ բաւականին նշանակալի ցուցանիշ է: Նաեւ դրա վառ օրինակ է, հայօճախի անդամների

կողմից նշանաւորուած եւ նշուող տօների մէջ եկեղեցական տօների մեծ թիւը:

Միւս առանձնայատկութիւնը այն է, որ առկայ են երեք՝ հայ առաքելական, հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական եկեղեցական յարանուանութիւնները: Վերջիններս ունեն իրենց առանձնայատուկ նշանակութիւնը եւ ազդեցութիւնը հայօճախում եւ դրանց դերերը միմեանց հետ համաձայնեցուած են: Իւրաքանչիւրն ունի իր կազմակերպութիւնների ցանցը, որի միջոցով իրականացնում է իր գործառոյթները: Բացի նշուածից, ինչպէս գիտենք, Հայ Առաքելական Եկեղեցին եւս իր մէջ ունի բաժանում՝ էջմիածնական եւ անթիլիասական, ինչը եւս բազմամազանթիւն է առաջ բերում հայօճախի կրօնական կեանքում[11]: Եթէ դիտարկենք զոյգ հայօճախների օրինակները, ապա Թեհրանում գերակշիռ մեծամասնութիւնը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ են: Լոս Անճելըսում կրկին մեծ թիւ են կազմում Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդները, սակայն միւս երկուսը եւս աշխուժ գործում են: Երեք թեւերի նշանակալի գործունէութիւնն ու առկայութիւնը Լոս Անճելըսում բացատրւում է այն փաստով, որ հայօճախը բազմաշերտ է, ունի տարբեր վայրերից ներգաղթած հոսքեր, ովքեր իրենց նախկին փորձը տեղափոխել են այստեղ, ստեղծել իրենց կառոյցները եւ շարունակել դրսեւորել նոյն կրօնական վարքը:

Երրորդ առանձնայատկութիւնը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ Սփիւռքում երեք եկեղեցական համայնքները զուգակցւում են կուսակցութիւնների հետ: Հայկական «դասական» հայօճախներում, որպէս կանոն ներքին միջավայրի ընկալումներում գործող երեք աւանդական եկեղեցիները կապուած են եւ զուգակցւում են երեք աւանդական կուսակցութիւնների՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ), Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (ՍԴՀԿ) եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (ՌԱԿ) հետ: Շատ յաճախ շահերի եւ նպատակների համընկնումն անխուսափելի է դառնում որոշ հարցերի շուրջ: Սա առաջին հերթին կարող է պայմանաւորուած լինել ընդունող երկրի կողմից թելադրուող պայմաններով ու տրուող հնարաւորութիւններով: Սակայն այս տարաբաժանումները նաեւ կարող են բախումների համար հող դառնալ տարբեր խնդիրների շուրջ, որտեղ առանձին եկեղեցիներն ունեն իրենց տեսլականն ու գաղափարախօսական տարբերութիւնները:

Այս առանձնայատկութիւնները ցոյց են տալիս ընդհանուր կրօնական միջավայրի դերը եւ նշանակութիւնը Սփիւռքում հայօճախի մակարդակով:

---

[11] Անկախ այդ երեւոյթի դրական կամ բացասական լինելուց, այդ տարաբաժանումը մի շարք ազդեցութիւններ է ունենում, հայօճախների եւ անդամների կրօնական վարքագծի եւ կրօնական կեանքի վրայ, որով եւ կը յառաջանան հոգեւոր եւ կրօնական գործընթացների տարբերութիւններ հայօճախներում:

ԿՐՕՆԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՒՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Անդրադառնանք այն հիմնական ցուցիչներին, որոնք արտայայտում են հայօճախի անդամների արժէքային եւ վարքային առանձնայատկութիւններն անհատական մակարդակում: Որպէս կրօնական վարքի դրսեւորման հիմնական ցուցիչներ առանձնացուել են.- 1) կրօնի նկատմամբ վերաբերմունքը, 2) եկեղեցի այցելելու յաճախականութիւնը, 3) եկեղեցի այցելելու նպատակը:

**Գծանկար 1.**- Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայերի վերաբերմունքը կրօնի նկատմամբ (% հարցուածներից)




Կրօնական վարքագծի ուսումնասիրութեան կարեւոր ցուցիչներից է կրօնի նկատմամբ վերաբերմունքը: Ե՛ւ Լոս Անճելըսում, ե՛ւ Թեհրանում հարցուած հայերի շրջանում կրօնամէտ մարդիկ կազմում են ճնշող մեծամասնութիւն: Ընդհանուր առմամբ կրօնի նկատմամբ վերաբերմունքի մակարդակների մէջ (խորապէս հաւատում եմ, պարզապէս հաւատում եմ) նկատւում է չնչին տարբերութիւն: Երկու դէպքում էլ «պարզապէս հաւատում եմ» պատասխանը կազմում է կէսից աւելին՝ Թեհրանում 56,5% իսկ Լոս Անճելըսում 60,2% [գծանկար 1]: Շատ քչերն են նշել, որ անտարբեր են կրօնի նկատմամբ կամ չեն հաւատում: Երկու հայօճախներում էլ արժէքային համակարգում կրօնը զբաղեցնում է կարեւոր տեղ՝ անկախ արտաքին եւ ներհամայնքային միջավայրային պայմաններից: Պէտք է նշել, որ Թեհրանում հայկական թաղամասերը, բնակատեղիները հիմնականում տեղակայուած են հայկական եկեղեցիների շուրջ, որոշ դէպքերում նոյնիսկ եկեղեցական կենտրոնները հայկական կառոյցների տարածքում են (ինչպէս օրինակ՝ «Արարատ» մարզամշակութային համալիրում գործող եկեղեցին): Լոս Անճելըսում գործող եկեղեցիները թուով աւելի շատ են, սա-

կայն ունեն ցրիւ տեղակայում, ինչը սակայն չի ազդել կրօնի նկատմամբ համյօճախի անդամների կրօնամէտութեան բարձր մակարդակի վրայ:

**Գծանկար 2**.- Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայերի վերաբերմունքը կրօնին՝ ըստ սեռի (% հարցուածներից)




Կրօնի նկատմամբ վերաբերմունքի բացայայտումը հետաքրքիր է դիտարկել միքանի ցուցիչների հետ փոխկապուածութեան մէջ: Կրօնամէտութեան իւրաքանչիւր մակարդակում դիտարկուել են տարբեր սեռատարիքային եւ կրթական խմբերի որոշակի միտումներ: Երկու հայօճախների տարբեր աստիճանի կրօնամէտ մարդկանց շրջանում աւելի բարձր ցուցանիշ է գրանցուել իգական սեռի ներկայացուցիչների մօտ: Սակայն Թեհրանում տղամարդկանց եւ կանանց կրօնամէտութեան միջեւ տարբերութիւնն աւելի մեծ է, քան Լոս Անճելըսում: Երկու հայօճախներում էլ հաւատքի նկատմամբ անտարբեր վերաբերմունք ունեցողների շրջանում առաւել մեծ թիւ են կազմել տղամարդիկ [գծանկար 2]: Սեռային պատկանելութեան մասին կարեւոր դիտարկում կարելի է համարել այն, որ կանանց մեծամասնութիւնը ներառուած է եկեղեցու իրականացրած միջոցառումներում եւ առաւելապէս Թեհրանում կանանց շրջանում ենք դիտարկում ամենաբարձր մասնակցութիւն՝ եկեղեցական կեանքում: Ինչպէս նշում է հարցապնդուողներից մէկը՝ «*Ես եկեղեցի աւելի շատ եմ այցելում, քան ամուսինս: Ամուսնուս համար դա աւելի սիմուոլիկ է. գնալ տօների, ներկայանալ տարբեր համայնքային կարեւոր իրադարձութիւնների, իսկ ինձ համար եկեղեցին տարբեր՝ այլ կառոյցների հետ գործ ունենալու միջնորդ է: Ես եկեղեցուց տեղեկանում եմ ինչ անելիքներ ունենք մենք կանանցով եւ ինչպէս ենք պատրաստուելու դրանց*»:

Տարիքային խմբերի առումով եւս հետաքրքիր է դիտարկել հայօճախների անդամների վերաբերմունքը կրօնի նկատմամբ: Այստեղ հիմնական

առանձնայատկութիւնն այն է, որ Թեհրանում չհաւատացողների մէջ մեծամասնութիւնը բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներն են: Ի տարբերութիւն Լոս Անճելըսի, որտեղ այդ նոյն խմբում 18-19 տարեկաններն են բարձր ցուցանիշ գրանցել: Խորապէս հաւատացեալների շրջանում երկու հայօճախներում էլ ամենաբարձր ցուցանիշն ունեն միջին տարիքի ներկայացուցիչները [գծանկար 3]: Խորին հարցազրոյցներից պարզ է դառնում նաեւ, որ աւագ սերնդի ներկայացուցիչների մօտ եկեղեցին հիմնականում ունի հոգեւոր նշանակութիւն, իսկ երիտասարդ սերունդը առաւելապէս ընկալում է այն որպէս ինքնութեան մի շարք տարրերից մէկը եւ ունի աւելի խորհրդանշական նշանակութիւն:

**Գծանկար 3**.- Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայերի վերաբերմունքը կրօնին՝ ըստ տարիքիային խմբի (% հարցուածներից)




Կրթութեան եւ կրօնի նկատմամբ վերաբերմունքի կապը եւս հետաքրքիր է դիտարկել երկու հայօճախների օրինակով: Այն ցոյց է տալիս կրօնի նկատմամբ վերաբերմունքի տարբերութիւնները ըստ կրթական աստիճանի: Կրօնի նկատմամբ վերաբերմունքի չորս մակարդակում էլ Լոս Անճելըսում առաւել մեծ թիւ են կազմում բարձրագոյն կրթութիւն ունեցողները: Սակայն աւելի մեծ տարբերութիւն է նկատւում չհաւատացողների շրջանում, որտեղ բարձրագոյն կրթութիւն ունեցողները կէսից աւելին են: Նման ցուցանիշ գրանցւում է նաեւ Թեհրանի հարցուածների շրջանում: Խորապէս հաւատացեալների շրջանում ըստ հայօճախների նկատւում է ակնյայտ տարբերութիւն. Թեհրանում մեծամասնութիւնը կազմում են բարձրագոյն կրթութիւն ունեցողները՝ ի տարբերութիւն Լոս Անճելըսի [գծ. 4]: Լոս Անճելըսում առկայ այս պատկերը բացատրւում է այն հանգամանքով, որ բարձր կրթական-մասնագիտական կարգավիճակ ունեցող անձանց

մեծամասնութեան մասնակցութիւնը եկեղեցական/կրօնական կեանքին առաւելապէս կրում է բարեսիրական բնոյթ եւ/կամ ներկայացւում է պարտականութիւնների ներքոյ: Թեհրանահայ կեանքի աշխուժութիւնը շաղկապուած է եկեղեցական գործունէութեան հետ, մասնաւորապէս ազգային առաջնորդարանի հետ, ինչը շատ դէպքերում նպաստում է բարձր ընկերային կարգավիճակի ձեռքբերմանը կամ ամրապնդմանը:

**Գծանկար 4**.- Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայերի վերաբերմունքը կրօնին՝ ըստ կրթութեան (% հարցուծներից)




Դիտարկենք նաեւ առօրեայ վարքային մակարդակում կրօնամէտութեան դրսեւորումները: Այդպիսի դրսեւորումներից է եկեղեցի յաճախելը, ինչը ոչ միայն հաւատքի արտայայտումն է, այլեւ ցոյց է տալիս հայօճախի կեանքում ներգրաւուածութեան եւ ընկերային նշանակութիւն ունեցող վարք:

Այսպէս, Թեհրանում եկեղեցի չյաճախողների թիւը շատ քիչ տոկոս է կազմում:

**Գծանկար 5**.- Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայերի՝ եկեղեցի այցելելու յաճախականութիւնը (% հարցուածներից)




Լոս Անճելըսի հայօճախում հարցումը ցոյց է տալիս, որ ամսուայ մէջ մէկից երկու անգամ յաճախողները կազմում են հարցուողների մօտ կէսը, իսկ Թեհրանում նոյն համամասնութեամբ՝ տարուայ մէջ միքանի անգամ է այցելում եկեղեցի: Սա բացատրւում է այն հանգամանքով, որ եկեղեցի յաճախելու ընկերային նշանակութիւնն առաւել քիչ է արտայայտուած ի հաշիւ այլ ներքին կառոյցների: Ընդհանրապէս եկեղեցի այցելելու յաճախականութիւնը կարող է կապուած լինել ոչ միայն հոգեւոր կամ կրօնական կեանքի հետ, այլ նաեւ՝ ազգային գործօնով: Սփիւռքում կրօնական ու ազգային բաղադրիչները յաճախ նոյնացւում են եւ դժուար է դրանք տարանջատելը: Դրանք միմեանց միջոցով են պահպանւում եւ կողք-կողքի են գոյակցում Սփիւռքում: Այսինքն, կրօնական եւ ազգային ինքնութիւնները տարբեր իրավիճակներում փոխյարաբերութեան մէջ են մտնում տարբեր կշռոյթներով, սակայն չեն սերտաճում լիովին:

Այստեղ է, որ կրօնական վարքագծի բովանդակութեան մէջ եկեղեցի գնալու յաճախականութիւնը պարզելուն զուգահեռ կարեւոր է դիտարկել նաեւ այցելութեան նպատակը:

Եկեղեցի այցելելու նպատակներից պարզ է դառնում, որ եկեղեցին Սփիւռքում (լինի առաքելական, կաթողիկէ, թէ աւետարանական), ծառայում է որպէս հայկականականութեան պահպանման վայր: Դա արտայայտւում է հարցուողների այնպիսի պնդումներում, որտեղ նշւում է.-

> եկեղեցին ազգային է, հայ լինելն ու քրիստոնեայ լինելը կարելի է ասել նոյնական են

կամ՝

> ես եկեղեցի եմ գնում մի պարզ պատճառով, որ երեխաներս շփուեն հայերի հետ, նշեն հայկական տօներն ու իրենց ինքնութիւնը պահպանեն

Միաժամանակ կարելի է որակական հարցազրոյցներից դուրս բերել մի շարք ուղղութիւններ, որոնք ցոյց են տալիս հայերի այցելութեան նպատակները այս երկու հայօճախներում: Խորին հարցազրոյցներից ստացուած տուեալների ամբողջացման արդիւնքում պարզ է դառնում, որ առկայ են մի շարք հիմնական նպատակներ երկու հայօճախներում էլ: Դրանք են.-

1. աղօթելու, հոգեւոր հանգստութիւն զգալու.
2. մոմ վառելու.
3. մասնակցելու տօներին, եկեղեցական իրադարձութիւններին, պատարագներին.
4. ընկերային կապեր ձեռք բերելու, հայերի հետ ծանօթանալու.
5. հայկական միջավայրին հաղորդակից լինելու եւն.:

Եթէ փորձենք տեսնել տարբերութիւնները Թեհրանի եւ Լոս Անճելըսի հայօճախներում, կարող ենք ասել, որ հարցուողների մեծ մասը Թեհրանում շեշտադրել է ազգակիցների հետ շփման, ազգային-մշակութային տօներին մասնակցութեան նպատակները: Իսկ Լոս Անճելըսի հայօճախում առաւել յաճախ մատնանշուել են պատարագները, եկեղեցական իրադարձութիւնները, նոր կապեր ձեռք բերելը:

Նաեւ կարեւոր առանձնայատկութիւններից է այն, որ Լոս Անճելըսի հայերը ունեն կրօնական կեանքով ապրելու աւելի լայն հնարաւորութիւններ եւ կան նաեւ եկեղեցի չյաճախող սակայն կրօնական աւանդոյթները տանը պահպանողներ: Թեհրանում այլ իրավիճակ է, քանի որ եկեղեցին ու դրա շուրջ հոծ ձեւով տեղակայուած կառոյցները դառնում են ընկերային միջավայրի ապահովման միջոց: Տարբեր ազգային, կրթական կամ մշակութային հարցեր լուծւում են հենց եկեղեցական միջնորդութեան միջոցով հայօճախի անդամների համար:

Եկեղեցի այցելելու եւ եկեղեցիներում հայերի ներգրաւուածութեան, ընկերային-հոգեւոր կապերի ամրապնդման վրայ նաեւ նշանակալի ազդեցութիւն ունեն եկեղեցու հոգեւոր առաջնորդները, սպասաւորները իրենց կերպարով, այսինքն յաճախ դա կարող է լինել անձնաւորուած:

Այս ամէնից ակնյայտ է դառնում, որ եկեղեցի յաճախողների մօտ կրօնական վարքը դրսեւորւում է միքանի մակարդակներում.- անձնային, ընկերաբանական, խորհրդանշական, կրօնաճիսական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ամփոփելով, կարելի է պնդել որ Սփիւռքում, մասնաւորապէս ուսումնասիրուած հայօճախներում կրօնական վարքագծի առանձնայատկութիւններն արտայայտւում են մի շարք դրոյթներում: Եկեղեցին Սփիւռքում ունի բացի կրօնականից, նաեւ ընկերաբանական, մշակութային, կրթական նշանակութիւն: Հայօճախներում եկեղեցին շաղկապուած է այլ կառոյցնե-

րի հետ, որոնց գործունէութեան բովանդակութեան մէջ տեսնում ենք կրօնական ազդեցութիւնը: Լոս Անճելըսի եւ Թեհրանի հայօճախներում կրօնական վարքագծի հիմնական առանձնայատկութիւնները կապուած են ընկերային կապերի խիտ կամ ցրիւ դասաւորուածութեան հետ: Այս տարբերութիւնները արտայայտւում են նաեւ տարբեր ընկերային-ժողովրդագրական խմբերի համեմատութեան մէջ: Կրօնամէտութեան ցուցանիշով երկու հայօճախները շատ մօտ են միմեանց. աւելի շատ կրօնամէտ են իգական սեռի ներկայացուցիչները: Թեհրանում կանանց եւ տղամարդկանց կրօնամէտութեան միջեւ տարբերութիւնը առաւել վառ է արտայայտուած: Տարիքային տեսանկիւնից Թեհրանում, ի տարբերութիւն Լոս Անճելըսի, կրօնի նկատմամբ անտարբեր են աւելի մեծ տարիքի ներկայացուցիչները, իսկ կրթական տեսանկիւնից՝ բարձրագոյն կրթութիւն ունեցողները: Միեւնոյն ժամանակ, Թեհրանում խորապէս հաւատացեալների շրջանում եւս մեծամասնութիւն են կազմում բարձրագոյն կրթութիւն ունեցողները: Սփիւռքում, մասնաւորապէս քննարկուած հայօճախներում, ազգային, մշակութային բնութագրիչները յաճախ համընկնում են կրօնականի հետ:

Ընդհանուր առմամբ, եկեղեցիների դերը Սփիւռքում բացի հոգեւորից, կարելի է բնորոշել մի շարք յատկանիշերով՝ մշակութային, ընկերային, տնտեսական, քաղաքական, կրթական եւն.: Այս դերերը եկեղեցիները իրականացնում են ինչպէս ուղիղ այնպէս էլ միջնորդաւորուած ձեւով: Սփիւռքի մի շարք հայօճախներում, ինչպէս օրինակ Թեհրանում եկեղեցիներին կից գործում են դպրոցներ, որոնց գործունէութեան մէջ եկեղեցին անմիջական դերակատարութիւն ունի, քանի որ ազգային կրթութիւնը յաճախ կազմակերպւում է ու յաճախ հովանաւորւում եկեղեցու կողմից: Եկեղեցու միջնորդաւորուած դերակատարութիւնը կարող ենք տեսնել օրինակ հայօճախի համար կարեւոր տնտեսական, ներդրումային կամ քաղաքական հարցերում, երբ ընդունող երկրի եւ հայօճախի միջեւ եկեղեցին ստանձնում է որոշակի ուղղորդիչ դեր: Կրօնական կառոյցների դերը յատկապէս բարձրանում է այն հայօճախներում, որոնք տուեալ երկրում ունեն կրօնական փոքրամասնութեան կարգավիճակ, ինչպէս Թեհրանում:

Այս հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ Սփիւռքում կրօնական վարքագծի, կրօնամէտութեան տարբեր կողմերը յաճախ մեթոդապէս բարդ ուսումնասիրելի են: Ուսումնասիրութիւններում յատկապէս ներկայացուցչական չեն դառնում Սփիւռքի որոշակի շերտերն ու խմբերը, որոնք դուրս են հայօճախի կեանքից, կամ չունեն պարբերական ներգրաւուածութիւն կրօնական/եկեղեցական միջոցառումներին: Եւ այդ խմբերի համամասնական կարծիքները նոյնպէս դժուար բացայայտելի են: Հետազօտութեան ընթացքում ի յայտ են գալիս, որոշակի խնդիրներ, որոնք արժանի են յե-

տագայում աւելի խորքային ուսումնասիրութեան: Այդ ուսումնասիրութիւնները թոյլ կը տան քննարկել օրինակ, այն հայերի վարքագիծն ու դիրքորոշումը, ովքեր չեն ներգրաւուած կրօնական կառոյցներում, սակայն աշխուժօրէն կարող են մասնակցել տարբեր կրօնական իրադարձութիւններին՝ հայօճախից դուրս:

Մէկ այլ ուսումնասիրութեան դաշտ է հոգեւոր առաջնորդների դերը, որպէս կարեւոր գործօն՝ կրօնի եւ եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի ձեւաւորման գործընթացում: Այդ վերաբերմունքը հայօճախի անդամների մօտ յաճախ կարող է ձեւաւորուել եւ վերափոխուել կապուած հոգեւոր առաջնորդների անձերի հետ: Հայօճախներում տարբեր եկեղեցիների հոգեւոր առաջնորդների համագործակցումը միմեանց հետ, նրանց կապերն ու անձնային դերակատարութիւնը կարող են դառնալ որոշիչ՝ հայօճախի ազգային մարտահրաւէրների յաղթահարման ճանապարհին: Սփիւռքում եկեղեցու, որպէս հաստատութեան գործունէութիւնը, տարբեր իրավիճակներում եւ դէպքերում կարող է փոխարինուել հոգեւոր առաջնորդի գործունէութեամբ արտայայտուելով անձնային եւ ոչ-ֆորմալ ձեւով՝ անհատական այցերով, ներքին ոչ-կրօնական/եկեղեցական միջոցառումներին աշխուժ քարոզներով ու մասնակցայնութեամբ:

Մի շարք հետազօտութիւններում նաեւ հանդիպում ենք այն մօտեցմանը, որ Սփիւռքում եկեղեցի պարբերական այցելութիւնները փաստում են անձի ներգրաւուածութեան մասին, եւ հակառակը՝ բարձր ներգրաւուածութիւնը երեք եկեղեցիներից որեէ մէկի հետեւորդ լինելու ցուցանիշ է: Իհարկէ շատ հայօճախներում այս երեւոյթը տեսանելի է: Սակայն նման մօտեցումը յանգեցնում է այդ երկու երեւոյթների սերտաճմանը ու թոյլ չի տալիս առանձին դիրքորոշումներով անձինք դրսեւորեն իրենց կրօնաց-ուածութիւնը: Կամ մէկ այլ օրինակ է, երբ հետազօտութիւններում եկեղեցի յաճախակի այցելելը կապում են կրօնամէտութեան հետ, առանց հաշուի առնելու, որ յաճախակի եկեղեցի այցելելութիւնները կարող են պայմանաւորուած լինել ազգային, ընկերային, մշակութային գործօններով:

Ներկայումս սակայն, նոր մարտահրաւէրների խորապատկերին, եկեղեցին սկսել է առաւել գործուն մասնակցութիւն ունենալ հայօճախի անդամների մասնաւոր կեանքին, եւ եկեղեցու սպասաւորները մասնակցում են հայօճախի կեանքին՝ մինչեւ իսկ անձնական ոչ-ֆորմալ կապերով: Սա նաեւ արդիւնք եւ հետեւանք է նրա, որ հայօճախներում եկեղեցուց սպասումները եւս փոփոխուել են, եւ եկեղեցին այլեւս չի դիտարկւում որպէս լոկ կրօնական, ծիսական կառոյց, այլ յաճախ ընկալւում է որպէս կառոյց, որն իր միջոցներով ու կապերով յաճախ կարող է մասնակցել եւ անդրադառնալ հայօճախի համար կարեւոր աշխարհիկ երեսակներին: Ակնկալւում է, որ եկեղեցին ստանձնի միջնորդի դեր եւ լինի նախաձեռնող, դառ-

նալով այն բազմազանութիւնների ընդունման հարթակը, որտեղ կը ներառուեն հայեր՝ անկախ իրենց կրօնական պատկանելութիւնից, կրօնամէտութեան մակարդակից կամ այլ ցուցանիշերից:

Կրօնի եւ եկեղեցու վերաբերեալ ուսումնասիրութիւններն ու քննարկումները ժամանակակից Սփիւռքում յուժ կարեւոր են քանի որ եկեղեցու դերը հայօճախներում դեռեւս նշանակալի է, ունի լայն հնարաւորութիւններ: Նոր մշակուած մօտեցումներով, ռազմավարութիւններով եկեղեցին կարող է դառնալ ազդեցիկ միջոց, ոչ միայն հայօճախներում ազգապահպանութեան եւ ընկերային ինքնակազմակերպման առումով, այլ նաեւ կարեւոր դեր կարող է կատարել Հայաստանի Հանրապետութեան հետ կապի տեսնակիւնից:

## SOME PECULIARITIES IN THE RELIGIOUS ATTITUDE OF THE ARMENIAN COMMUNITIES OF LOS ANGELES AND TEHRAN

(Summary)

LUSINE TANAJYAN
Lusine.tanajyan@gmail.com

The paper is based on ethno-sociological research and field work among the Armenians of Los Angeles and Tehran. The research included surveys conducted, secondary analysis, non-participant observation, standardized interviews, in-depth interviews, and expert interviews. The paper aims to reveal some peculiarities of the Armenians' religious behavior in Tehran and Los Angeles.

The paper identifies: a) the role of religion in the context of community self-organization; b) the role and functions of the church among the Armenians of Tehran and Los Angeles; c) the peculiarities of religious behavior related to a number of factors (sex, age, education, etc.). In the Armenian Diaspora, both religion and church, in addition to their main spiritual functions also perform a number of other social and cultural functions which contribute to maintaining Armenian national identity, social relations and the processes of self-organization in the communities.

# CULTURE AND PSYCHOPATHOLOGY: THE CASE OF THE ARMENIAN VILLAGE OF ANJAR[1]

**HERANT KATCHADOURIAN**
herantk33@gmail.com

A NOTE BY THE AUTHOR

*The research project that is the basis of this paper was carried out between 1963 and 1966 in the Armenian village of Anjar, in the Beqa'a valley of Lebanon. The conception of and impetus for this project did not originate with me, and the project that was carried out only partially fulfilled its original aims. These permutations were an example of the vicissitudes of conducting psychiatric research in the 1960s in Lebanon.*

*At the completion of my residency training in psychiatry at the University of Rochester, NY, I spent a year as a visiting scientist at the Institute of Mental Health in Bethesda, MD, and then I returned to Lebanon to join the faculty of the American University of Beirut. Dr. Lyman Wynne, the Chief of Adult Psychiatry at the NIH, whom I worked with, became interested in having me conduct cross-cultural applications of some aspects of his work, one of which was in the area of culture and psychopathology. To that end, he helped me to obtain a NIH grant and recruited an anthropologist to work with me.*

*The plan was to carry out a comparative study of the Armenian/Christian village of Anjar and the Arab/Muslim village of Majd-el-Anjar, a few miles further east on the Beirut-Damascus highway. We were able to complete the study of Anjar, but my collaborators failed to carry out the project in Majd-el-Anjar. This resulted in the loss of the comparative framework of the project. One example of how this fell through involved the study of value orientations*

---

[1] This is the sixth chapter of a survey study. The other chapters are entitled: "[From] Musa Dagh to Anjar" (Ch. 1), "Setting and Economy" (Ch. 2), "Kinship and Social Structure" (Ch. 3), "Psychiatric Disorders in Anjar" (Ch. 4), "The Field Survey" (Ch. 5).

The research was supported in main part by "Public Health Service Research Grant MH 06810 from the National Institute of Mental Health, US Public Health Service, Bethesda, Maryland. It was carried out at the American University of Beirut. The data analysis and writing was done while the author (H. Katchadourian) was a University Fellow at Stanford University. Additional support was provided...by the Hufty Foundation".

***E.N.:*** A complete version of the Study is deposited in the Derian Armenological Library of Haigazian University.

*based on the theory and questionnaire developed by Kluckhohn and Strodtbeck.*[2]

*This work was completed in Anjar and ostensibly in Majd-el-Anjar. However, the data from the latter made no sense. It turned out that one of the better educated men from the village that we had hired to administer the questionnaires had done it all himself by randomly checking the various choices!*

*The problems did not end there. After we wrote the book on Anjar itself, I sent it for review by a husband and wife team of sociologists at Columbia.*

*They happened to be conducting a somewhat similar study in another country and proposed that we combine the two studies thus creating a new comparative framework. Consequently, even though the Anjar manuscript had been accepted for publication, I withdrew it in light of this new prospect. However, two months later, the wife died suddenly, her husband became dysfunctional, and that was the end of that. The publisher was no longer interested, and the Anjar book never got published.*

*Another significant concern is that this material is now fifty years old. When the study was done, Anjar was a large village, and now it is a substantial town with a much improved infrastructure and buildings. Most of the original settlers are no longer alive, and a new generation now lives there. The community now faces new challenges due to the changed political circumstances in the region. Consequently, it is impossible to say if the findings of the study, particularly the statistical data, would still be valid today. That may seem to largely invalidate the findings of this paper. But not entirely. The findings in themselves have historical value, particularly since psychiatric research of this kind in Lebanon remains scarce and no other studies have been carried out in Anjar. Just as anthropological studies of long lost tribes still provide cultural insights, so does the study of Anjar deepen our understanding of Armenian culture and character. Moreover, the identity and personality of the people of Anjar still persist even though the links of the younger generations to their cultural heritage are becoming more tenuous, despite attempts to sustain them. This is also true of the generalizations that apply to Armenians more generally. Armenians do change, like everyone else, but most of them still remain Armenian.*

In this chapter we will attempt to come up with a unified interpretation of mental illness and health in cultural terms and will be concerned with a number

---

[2] ***E.N.:*** M. D. Hills, "Kluckhohn and Strodtbeck's Values Orientation Theory," *Online Readings in Psychology and Culture,* 4(4):2002, https://doi.org/10.9707/2307-0919.1040 .

of questions: What made it possible for the people of Anjar to survive the extraordinary conditions of life imposed upon them by historical and political circumstances? What accounts for their successful adaptation to a new land in such a short period of time? What are the sources of psychological strength that these people drew from? What are the psychic costs entailed in this process, and how are these manifested in terms of mental illness?

These are admittedly very difficult questions to answer. Approached in definitive terms, their solution would require unraveling the fundamental relationship of culture and personality and resolving the riddle of mental illness. This at present is not possible. But the case of Anjar, in a modest way, can cast considerable light on these issues. Our attempt to do this may be facilitated by a brief general consideration of the relationship between culture and psychopathology.

## CULTURAL INFLUENCES IN MENTAL ILLNESS

Psychiatrists generally have not been very specific about what they mean by the term "culture." Nor is there general agreement among anthropologists in this regard: one well known review offers over 150 definitions of culture.[3]

The concept of culture most often used by psychiatrists is normative and refers to a distinctive way of life. Psychiatric concern is mainly in those aspects of culture, such as child rearing, which directly influence personality development.

Psychiatric interest in culture and psychopathology goes back to the very origins of modern psychiatry in the 19th century. Emil Kraepelin,[4] who first classified mental disorders into a comprehensive scheme, travelled extensively to study the cross-cultural applicability of diagnostic categories. Freud had a keen professional and personal interest in the study of culture and was influenced by contemporary anthropologists such as Tyler and Frazer. His own first major statement on the evolution of culture appeared in 1913 in *Totem and Taboo*.[5]

---

[3] A.L. Kroeber and C. Kluckhohn, *Culture*, Vintage Books, New York, 1952.

[4] ***E.N.:*** Emil Wilhelm Georg Magnus Kraepelin (15 February 1856 – 7 October 1926) was a German psychiatrist. H. J. Eysenck's *Encyclopedia of Psychology* identifies him as the founder of modern scientific psychiatry, psychopharmacology and psychiatric genetics.
Kraepelin believed the chief origin of psychiatric disease to be biological and genetic malfunction. His theories dominated psychiatry at the start of the 20th century and, despite the later psychodynamic influence of Sigmund Freud and his disciples, enjoyed a revival at century's end (Emil Kraepelin - *Wikipedia*, accessed on July 7, 2023).

[5] Sigmund Freud, *Totem and Taboo,* Beacon Press, 1913.

Culture interacts with mental illness, at many levels. These include perceptions and categorization of illness, theories causation, definitions of sick role, forms of treatment, and so on. Of central interest to psychiatrists are the causal influences that cultural patterns might exert on mental disorders.

Alexander Leighton and Jane Murphy have summarized these influences whereby culture is conceived as:[6]

1. Determining the pattern of certain specific disorders, such as *latah* (in Malaya), *koro* (in China), and *witiko* (in the Indian cultures of Northeast America);

2. Producing basic personality types, some of which are especially vulnerable to psychiatric disorder;

3. Producing psychiatric disorders (usually considered latent for a time) through certain child-rearing practices;

4. Having a selective influence on a population's potential for psychiatric disorder as well as the pattern of disorder through types of sanctions and whether "shame" or "guilt" is engendered;

5. Precipitating disorder in an otherwise adequately functioning personality by confrontation with stressful roles;

6. Perpetuating disorder by rewarding it in prestigeful roles such as holy man, witch doctor, or shaman;

7. Precipitating disorder by changing more rapidly than personality systems are able to tolerate;

8. Producing disorder through the inculcation of sentiments (beliefs and values) that produce emotional states damaging to personality, such as fears, jealousies, and unrealistic aspirations;

9. Affecting the distribution of some kinds of disorder through breeding patterns;

10. Influencing the amount and distribution of disorder through patterns of poor hygiene and nutrition.

In addition to these factors which are hypothesized to produce differences in the prevalence and types of psychiatric disorders, there is also the notion that culture, as such, is responsible for a certain amount of mental illness presumably because of the restrictions and regulations imposed on "natural" urges. In other words, some psychic distress and psychopathology are the inevitable costs of culture and civilization.

## MASTERY IN SURVIVAL AND ADAPTATION

Let us set aside for the moment the issue of mental illness and take up the first question that we raised earlier: What accounts for the apparent mastery

---

[6] J.M. Murphy & A.H. Leighton (eds.), *Approaches to Cross-Cultural Psychiatry*, Cornell University Press, 1965.

of the people of Anjar in coping with and adapting to one drastic change after another? Since the settlement of Anjar rather than the earlier events are more accessible to analysis, we shall concentrate on the former.

This is a matter of considerable general importance above and beyond the case of Anjar. The settlement of refugees has been one of the more constant and serious problems throughout history. As war, famine, and migrations for other reasons drive large populations into new areas, profound adjustments become necessary. The usual outcome is one of protracted misery and conflict. Only rarely does one encounter as successful an adaptation and in such a short period of time as was effected by the people of Anjar.

The factors that determine the fate of a refugee community are obviously numerous, and a comprehensive cataloguing would be a hopeless task.

Besides, no list of factors would suffice in itself since the outcome is determined not by a series of independent and unrelated variables but by a complex interaction among such variables.

It is tempting, nevertheless, to sort out circumstantial or extraneous variables from factors that are more intrinsically cultural. For example, the fact that land was provided by the state may be taken as an example of the former. Yet this fact or the broader issue of the reception of the comers by the native culture are by no means totally independent of who the people of Anjar were. But how they used their lands is clearly more revealing of their culture than the fact of their being the relatively passive beneficiaries of the land grant. The significance of the cultural factor thus clearly varies, but the differences are only a question of magnitude.

In other words, cultural characteristics are always relevant to not only what a community does actively but also in what seemingly "happens" to it.

The categorization of factors that follows is thus mainly to facilitate discussion rather than to imply clear-cut distinctions between cultural and "non-cultural" variables.

*The Land Grant*

If a community is to survive, it obviously needs an adequate economic base for sustenance. And in order to culturally flourish, it requires something more than a precarious level of subsistence. The spectacular transformation of Anjar from a dismal refugee camp to a prosperous town in a few decades was made possible by a number of economic factors of which perhaps foremost was the land grant.

The process of "land reform" in much of the developing world aims at a more equitable distribution of land whereby peasant and farmer are freed of the exploitation of large landlords. In most of Lebanon, the peasantry does not

suffer in abject serfdom, yet many, in fact, have to toil on rented land, which condemns them to a hand-to-mouth existence.

In Anjar the program of land distribution by the mandatory authorities bypassed this centuries old obstacle by making each and every family in Anjar an independent landowner. Furthermore, the egalitarian manner in which the distribution occurred essentially eradicated whatever economic discrepancies existed in Musa Dagh. Under such circumstances there is considerable encouragement for self-advancement through hard work and ingenuity. A person can neither legitimately claim nor hide behind the excuse that one does not have a chance in the struggle because of socio-economically pre-ordained handicaps.

*The effect of emigration*

With all its advantages, the land grant in its original form would hardly have insured the economic development of Anjar because the land allotments were inadequate and did not allow for the growing of cash crops.

The emigration to Armenia of almost half the population changed this by effectively doubling the holdings of most families. The land parcels now became more effective economic units.[7]

In capitalizing on these gains, the people of Anjar fulfilled more active roles than when they were the passive recipients of the original land grants. The emigrants did not make a gift of these lands to those staying behind, nor did the state redistribute it to them. Rather, an alert, tightly organized and tough community essentially expropriated these freed lands against considerable resistance. It took patient and unrelenting political pressure to eventually convince the government to legalize the deeds of ownership of the new holders of the vacated lands.

The new lands may have been lost to the people of Anjar through inaction or by the active intervention of external agencies. The state may have claimed the lands. The emigrants may have managed to hang on to them or to sell them through agents. Or the Palestinian refugees who were already living in the houses of the deported may well have pressed claims to the attached lands as well. Yet the Anjar community successfully maneuvered all of these contenders by the adroit use of force and politics.

The emigration to Armenia had another profound effect, this time in physiological terms. One of the most serious obstacles in the way of

---

[7] ***E.N.***: For a detailed study on the initial phase of the settlement of Armenians in Anjar, see: Michel Paboudjian, "Du Moussa Dagh à Anjar, le 'recassement' des Arméniens", in *Les Arméniens, 1917-1939, La Quête d'un Refuge*, (R. Kévorkian, L. Nordiguian, V. Tachjian eds.), St. Joseph University Press, Beirut, 2006, pp. 267-298.

reintegrating refugees in the host country is their resistance to giving up their attachment to their native land. They hoped, sometimes with good reason, more often without it, to return and regain possession of what was theirs. This natural tendency is reinforced by political leaders pressing for restitution. If the refugees become comfortably resettled, the incentive and drive to press claims is largely lost. Thus, people continue to live as transients, perpetuating their marginal existence until the passage of generations converts the visions of return to an empty dream.

The Anjar Armenians were initially no different in this regard than other refugees. In their case there was also a striking historical precedent to reinforce their hopes. After all, did they not at the onset of the First World War lose their homes, live in a tent city for five years and then regain their ancestral heritage? Why should they not expect that as the Second World War came to a felicitous end the Allies once more would put Turkey in its place and return the Armenians to Musa Dagh.

Discipline is enforced easily in Anjar because of the internal harmony of its social institutions. The family, school, church, political party usually act in concert when the transgression is clear and serious. The person cannot usually play one against the other and is rapidly brought to bay or forced out of the village.

Equally important as an external control is the cohesiveness of Anjar society, which restrains people from acting antisocially. The justification and rules of conduct are not imposed from above. The values underlying them are widely shared. Children are inculcated with these values early, and they are repeatedly reinforced throughout their transition to adulthood. The focus is on consistency and conformity. As a result, most adults have internalized these attitudes and generally act accordingly as a matter of course.

Because the primary loyalty is ethnocentric, there is some room for acting out against outsiders, provided of course that one does not compromise the safety and standing of the community as a whole. The check on antisocial behavior is thus extended to some extent to outsiders, in part because Armenians have learned through the ages not to invite retaliation, but also

because adherence to standards of socially acceptable conduct have become incorporated into the national identity.

There are additional factors that check antisocial behavior which are not peculiar to Anjar. For example, like in other communities of comparable size, there is none of the anonymity and impersonality of urban settings. You cannot assault a stranger in Anjar or perpetrate acts of vandalism against persons unknown to you. Each destructive act is specifically directed at someone you know and by whom you are known in turn. This raises the risk of retaliation and also robs one of the relative comfort of acting out against faceless, nameless strangers on whom one may unconsciously displace hostility and aggression.

Another major social and psychiatric concern in the West, which creates far less of a problem in Anjar, involves problems of old age. We have no data about any differences in the arteriosclerotic processes which cause the organic changes of senility. But the way the culture handles old age is demonstrably different.

There are no socially imposed occupational checks in Anjar that are based on age. There is no retirement or hiring policy for or against employing the elderly. People simply go on working for as long as they can, yielding only slowly and grudgingly to the infirmities of old age. As a result, older men and women frequently can be seen engaged even in quite heavy physical labor. Whether living alone or with their close relatives, older persons thus readily earn their keep in agricultural, household and childrearing tasks.

Apart from their usefulness in practical, everyday tasks, older people in Anjar are respected and esteemed. Though they usually yield power gracefully, conflicts are not uncommon between father and son in business matters and between mother and daughter-in-law over domestic policy and practice. But whether in harmony or in conflict, the old are taken seriously and must be contended with. They are thus effectively shielded against much of the loneliness, despair, feelings of uselessness and worthlessness that mar the lives of a substantial sector of the elderly population in the United States. Despite their penchant for organization, the idea of an old-age home would be inconceivable in Anjar.

We did not see a single case suffering from the psychological ravages of old age. On the contrary, some of the most stable and contented persons we encountered were among the elderly. Suicide among the old is high in the West, but none were reported to us in Anjar. There were causes for unhappiness, no doubt, but these were usually linked to easily discernable external causes.

The present generation of the elderly in Anjar are specially privileged because they are the remnants of the heroic battle of Musa Dagh and the

architects of Anjar. Their pride in having come through these hardships is, thus, well-earned and widely respected in the community.

## THE OBSESSIONAL ORIENTATION

One of the most intriguing findings in Anjar is the prevalence of an obsessional orientation both in neurotic and characterologic terms. We have singled out this entity for further inquiry because of the following considerations. First, a wide range of behavioral phenomena are covered by these terms, including character traits, personality disorders and neurotic illness. Only the psychoses do not have a counterpart. Second, these characteristics can be reasonably viewed as predominantly psychological manifestations and thus more directly influenced by cultural considerations. Third, one can meaningfully extend the characteristics of these psychological components to describe societal patterns. Thus, excessive orderliness can typify compulsive individuals as well as certain societies. This allows for closer comparisons between broad cultural patterns in a group and dominant personality traits within its members.

In our presentation of Anjar patients and the field survey population, repeated references were made to the relative frequency of obsessive-compulsive traits and behaviors. We are in effect making a claim that such traits normatively and pathologically are more prevalent in Anjar than in neighboring Arab populations.

Prothro, in his study of child rearing practices in Lebanon, lists the characteristics of compulsive personalities (frugal, obstinate, orderly, tidy, punctual, meticulous, proper) and adds with some amusement, "To those who know, or who have read studies of the Lebanese, this list is startling in its inappropriateness."[11] True, but not for Armenians. On the contrary, this list is startling in its appropriateness so far as the people of Anjar are concerned.

Since our observations in this regard are not unequivocally documentable due to the lack of comparative quantified data from elsewhere in Lebanon, we will state our thesis as a plausible rather than definitive conclusion. This thesis is as follows. There is an obsessional orientation in Anjar which sets it apart from its Lebanese neighbors. This is manifested in personality traits among normal people and in neurotic form among the psychologically disturbed. The same tendency is characteristic of the Anjar culture, as shown by the pattern of social organization.

Why are some cultures more "obsessional" than others? What adaptive purpose do such orientations serve at the societal level?

---

[11] E. T. Prothro, *Child Rearing in the Lebanon*, Harvard University Press, Cambridge, Mass, 1961, p. 92.

Using Anjar as a case in point, let us attempt to tie together what we have observed at the level of personality patterns, social organization, and historical background. The obsessive aspects of the Anjar personality need not be belabored further. As to the nature of social organization, the ethnographic material presented earlier speaks for itself. This is a community that is more organized, regulated, and intellectually preoccupied than any comparable group in the area. It is inconceivable that an Arab village of any size could have more than a dozen formal community groups as they exist in Anjar. Similar statements could be made about the way women run their households, teachers run their classes, and people their businesses.

The links between culture and personality seem quite apparent in this regard. Through child rearing practices (including toilet training) and educational indoctrination, the group aspires to an ideology which requires control of the environment, control of society, control of the individual. This ideology is given meaning and continuity by the historical and mythological past and rational aspirations for the future (unrealistic as these may be).

Is this aspect of the Anjar culture understandable through its past history? It would seem that a plausible case could be made that it is, if we accept the premise that obsessive behavior in a collective sense can also be a defense against aggression. Hemmed in between more populous and powerful neighbors, Armenians have been pressed and persecuted for over twenty centuries. They have had a number of limited choices. They could have resorted to sustained frontal assault and gotten wiped out. They could have given up and become absorbed. Both of these choices were taken up at various times in limited ways. But their predominant mode of coping with external as well as internal aggression seems to have evolved over time into a cultural style that permitted survival without loss of ethnic identity.

Many of the typical features of the Anjar culture may thus be seen partly as sublimation and partly as defense against aggression. Hard work, perseverance, emphasis on order and organization, and intellectualism, among other values, combine to check and rechannel such impulses. Armenians take pride in the fact that they are a peaceful and constructive people, and their devotion to the national church further enhances this image. To be an Armenian has never been easy and is not easy now in countries where Armenians retain an ethnic identity.

As a foreigner wherever he is, the Armenian servant must be more honest and efficient, the artisan more skillful, the merchant shrewder, the professional better qualified in order to survive and effectively compete. When these traits and aspirations appear exaggerated, one wonders if, to some extent, these are not reaction-formations against repressed hostility. This is not to say such qualities are not admirable.

*What happens when there is a crack in the defensive armor?*

An important part of the study of personality patterns involves observations of what happens when defensive systems fail.

Even at best, neurotic solutions never fully work. That is why they are maladaptive. The repressed conflicts continuously threaten to break through and periodically leak into consciousness, causing anxiety. Or the psychological work of "keeping the lid on" may become so costly that the solution turns out to be worse than the problem. All these hazards are merely augmented when, due to a variety of circumstances, the personality and neurotic patterns begin to falter.

In this regard, the high number of "irritability reactions" and complaints about being quick tempered are quite remarkable. On first hearing these complaints, one is baffled. In a village as peaceful and relatively prosperous as Anjar, why should so many people be on edge all the time? Closer scrutiny shows that these irritable people may be those in whom the standard solutions to check aggression are failing to work.

This is such a transparent response that one hardly needs to couch it in psychopathological terms. Simply stated, a significant number of people find it difficult to maintain their calm in the context of their everyday lives. In other words, the culture creates conditions and expectations which they cannot fulfill except at considerable cost. Unable or unwilling to rebel openly, they displace their hostilities and give partial vent to the aggression elicited by these circumstances.

In collective terms, it has also been instructive to note what happens when there is a crack in the defensive armor. When pushed to the wall, these people have shown they can fight with remarkable ferocity. The Palestinian incident shows they can be less than altruistic to others. The summary confiscation of the lands of the emigrants to Armenia shows they can be just as ruthless to each other. The tight rule and intolerance to opposition by the dominant political party is backed by the will and ability to use force if necessary.[12]

## LIMITATIONS OF THE STUDY

In closing this case study, it may be worthwhile to once again point out the pitfalls in the approach we have taken here as well as comment on the promise it holds for a better understanding of culture and psychopathology.

---

[12] Beyond Anjar, in the Armenian community at large, there is ample evidence of passions seething below the surface. When Armenian political parties were more evenly matched in Lebanon, the violence of internecine conflict amazed even the Lebanese Arabs, who are themselves not exactly paragons of brotherly love. Even the Armenian Apostolic Church is split into two camps in the entire Diaspora.

The first and most fundamental problem is conceptual and definitional: What is culture? What is psychopathology? Our efforts at elucidating the relationship of one to the other will be muddled unless we attain sufficient clarity about what these concepts mean. On one hand, we cannot wait until there is general agreement about these terms. On the other, we cannot rush headlong investigating these matters without some prior understanding of their underlying assumptions.

Second is the necessity to isolate a specific, manageable problem for inquiry without losing sight of the larger issues. We have attempted to do this in connection with the obsessional orientation in Anjar.

Third is the need for quantified data to back the observational claims. This is necessary for both the study population and an appropriate control group. Our data on Anjar pass the first test readily, but our basis for control comparison is weak. We have relied on our general observations in other rural areas of Lebanon in connection with other research. But we have no comparable field survey data from a control community to document the prevalence of obsessional orientation in Anjar relative to elsewhere.

Fourth, there is a danger that psychological analyses of the sort presented here become viewed as aspersions cast on the character of people or pejorative judgments of cultures. Kindness is explained away as a reaction to hostility. One is clean because he basically wants to be dirty. People are orderly, civic minded, resourcefully organized and interested in intellectual matters, all because they are fighting off aggressive impulses. This is, of course, far from the case. Psychological explanations do not negate the value or usefulness of a given pattern of behavior or culture. Nothing detracts from the spectacular accomplishments of the people of Anjar, who in several decades built up a community that should be the envy of the region. If each refugee group in the world solved its problems half as successfully as those of Musa Dagh, the world would be far ahead. The same goes for the ideal personality model held up in Anjar of a hardworking, honest, and resourceful person.

Finally, there is the temptation to emphasize certain aspects of a situation at the expense of others when one sets out to demonstrate a point. Thus, the image of Anjar that may have emerged through our presentation could be misleading if it tended to focus on what is unique about Anjar. In fact, there is a great deal about Anjar that is similar to villages around it or other comparable communities elsewhere in the world. It is the task of anthropology and psychiatry to fathom the particulars about people without losing sight of the fundamental universality of man.

All of these shortcomings notwithstanding, we feel there is considerable merit in the approach taken here. The central purpose of this approach is to try to "make sense" out of a culture using as broad a perspective as possible

whereby personality structure and social structure are seen as inextricably linked together. By the same token, social stress and psychic distress are likewise seen as part of the larger adaptation scheme rather than as peculiar or mysterious aberrations beyond the pale of the mainstream of life.

Historically based cultural explanations of psychopathology do not make its expressions less burdensome to the individual sufferer, but when viewed in this manner, these apparently maladaptive patterns become more meaningful and perhaps socially more tolerable as the inevitable costs for survival and civilization.

## ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ՀՈԳԵԱԽՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ. ԱՅՆՃԱՐ ՀԱՅԱՒԱՆԻՆ ՊԱՐԱԳԱՆ

(Ամփոփում)

ՀՐԱՆԴ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
herantk33@gmail.com

Այս ուսումնասիրութիւնը մէկ գլուխն է 1963-66 շրջանին Այնճարի մէջ կատարուած ծաւալուն հարցախոյզի մը հիմամբ յառաջացած անտիպ հատորի մը: Հետազօտութիւնը կը նպատակադրէր կատարել Այնճարի եւ անոր դրացի Մեժտ էլ Այնճարի բնակչութեանց բաղդատական ուսումնասիրութիւնը՝ հանրային առողջապահութեան ծիրին մէջ:

Դժբախտաբար, բաղդատական ուսումնասիրութիւնը երբեք ալ իր աւարտին հասած չէ, որովհետեւ երկու աւաններուն արժէհամակարգերու մեծ տարբերութիւնները պատճառ դարձած են, որ հարցախոյզին հանդէպ մօտեցումներն ու վերաբերումը տարբեր ըլլան, ինչը նպաստած չէ հետազօտութեան գիտականութեան եւ ան չէ հրատարակուեցած:

Այսօր այս հետազօտութիւնը շուրջ 55 տարեկան է. փոխուած են Այնճարն ու անոր բնակիչները, որոնք նորատեսակ մարտահրաւէրներ կը դիմագրաւեն: Հետեւաբար դժուար թէ, այս հետազօտութեան տուեալները համապատասխանեն այսօրուան իրականութեան: Այդուհանդերձ, ուսումնասիրութիւնը ունի պատմական արժէք, մանաւանդ որ հազուագիւտ են նման հոգեբանական ուսումնասիրութիւնները Լիբանանի մէջ եւ ի մասնաւորի Այնճարի մասին: Ուստի, հրատարակելով այդ ուսումնասիրութեան տուեալ բաժինը, կրնանք աւելի խորունկ հասկացողութիւն ունենալ այնճարահայ ենթօճախին մշակոյթին եւ նկարագրին մասին:

Այս գլուխին մէջ փորձ կը կատարուի մտային առողջութեան բացատրութիւններ գտնել՝ մշակութաբանական ելակէտէ: Առանցքային-հարցումներն են.- ա) Ի՞նչը կարելի դարձուց որ այնճարահայութիւնը վերապրի պատմաքաղաքական պայմաններով իրեն պարտադրուած արտակարգ պայմաններուն մէջ, բ) Ի՞նչ գործօններ նպաստեցին որ ան յաջողապէս պատշաճի նոր բնակավայրին՝ կարճ ժամանակի մը ընթացքին, գ) Հոգեբանական ի՞նչ գործօններով հզօրացան այնճարահայերը՝ վերապրելու իրենց պայքարին մէջ, դ) Հոգեբանական ի՞նչ գին վճարեցին այնճարահայերը այս պատշաճեցումին համար եւ ինչպէ՞ս ազդեց այն անոնց մտային առողջութեան վրայ:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

ԶԱՒԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

ՄՈՒՏՔ

Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման Լիբանանի ենթայանձնախումբերէն քարոզչական յանձնախումբի մը մէջ, առիթով մը շեշտը դրի Թուրքիոյ հանրային կարծիքին՝ իր բոլոր խաւերով եւ շրջանակներով, թրքերէն հրատարակութիւններու միջոցով իրազեկ դարձնել Հայոց Ցեղասպանութեան իրականութեան: Պաշտօնակից մը հոն շեշտեց թէ թուրքերը լաւ գիտեն իրենց գործադրած ցեղասպանութեան իրողութիւնը: Հարց է՝ թէ բոլորը գիտե՞ն կամ որքանո՞վ իրականութեան տեղեակ են:

Թուրքիան հայերէն, արաբներէն, վրացիներէն եւ յոյներէն իր բռնագրաւած հողերով ընդարձակ պետութիւն մըն է, 301,381 քառ. մղոն տարածութեամբ: Բնակչութեան թիւը - կը թուի ուռճացուած - թրքական պետութիւնը կը գնահատէ 84,680,273՝ 2021ին: Ըստ կարգ մը գնահատումներու հոն ապրող քիւրտերը բնակչութեան 18 առհարիւրն են (հաւանաբար աւելի): Կան նաեւ այլազան ծագում ունեցող տարրեր՝ ինչպէս ալեւիներ, արաբներ, ազերիներ, լազեր, չերքէզներ, չեչէններ, պոշնաքներ, փոմաքներ, զազաներ, հեմշիններ, մցխէթներ, ասորիներ, արնաուտներ (ալպանացի), Կեդրոնական Ասիայէն վերջին յիսնամեակին Թուրքիա գաղթած թրքազգի ցեղեր, նաեւ Լոզանի պայմանագրով ճանչցուած հայ եւ յոյն փոքրամասնութիւններ, ինչպէս նաեւ հրեաներ: Երկրին 98 առհարիւրը իսլամ է:

Ըստ 1992ի տուեալներու, բնակչութեան տարիքային համեմատական բաշխումը հետեւեալն էր.-

0էն 14 տարեկան՝ 38,5 առհարիւր

15էն 59 տարեկան՝ 54,9 առհարիւր

60 եւ վեր տարիք՝ 6,6 առհարիւր:

Շատ հաւանաբար այս թիւերն ալ փոքր համեմատութիւններով փոփոխական են:

Ընդհանրապէս թուրքերը կ'ապրին արեւմտեան, եւրոպական եւ կեդրոնական Թուրքիոյ մէջ, ուրիշներու հետ կը գոյակցին Կիլիկիոյ շրջանին եւ Արեւելեան Թուրքիոյ նահանգներուն մէջ, ուր քիւրտերը թիւով կը գերազանցեն զիրենք:

Թուրքիոյ բնակիչներու գրաճանաչութիւնը եւ ուսման մակարդակը կը տարբերի բնակչութեան այլազան խաւերուն մէջ:

1923-65՝ թուրք պետութիւնը ընդհանրապէս անտեսեց Հայոց Ցեղասպանութեան առկայութիւնը, թէեւ այդ ժամանակաշրջանի իր բնակիչներէն անոնք որոնք ապրած էին 1894-96, 1909 եւ 1915-23 հայոց հանդէպ գործադրուած ցեղասպանութեան շրջանին, որոշ չափով տեղեակ էին կատար-

ուածին: Այդ սերունդը կեանքի օրէնքի բերումով անհետացաւ: Իսկ Թուրքիոյ կրթութեան նախարարութիւնը վերոյիշեալ արիւնոտ ժամանակաշրջանի պատմական իրողութիւնները նենգափոխուած կերպով կը ներկայացնէր, որուն պիտի անդրադառնանք այս գրութեան մէջ:

Պէտք է ըսել թէ Հայոց Ցեղասպանութեան իրազեկութեան հարցով միատեսակ գիտակցութիւն չկայ Թուրքիոյ տարածքին: Մեր գրութեան մէջ պիտի անդրադառնանք այս երեւոյթին յստակ պարզաբանումներով:

Յստակացնենք որ մեր այս գրութիւնը չի վերաբերիր այն ճեղքին որ նշմարուեցաւ թուրք մտաւորականութեան շարքերու փոքրամասնութեան մը մէջ, որոնք Հայոց Ցեղասպանութեան իրողութեան ծանօթ են եւ այդ կ'ընդունին երբեմն տարբեր ճանաչման աստիճանաւորումով[1]:

Սահմանափակ թիւով թուրք պատմաբաններ, մտաւորական եւ հասարակական գործիչներ որոնք հայանպաստ դիրքեր ունեցած են Հայոց Ցեղասպանութիւնը ընդունելով իբր այդպիսին, կամ իբր աղէտ, հետեւեալը նշած են Հայոց Ցեղասպանութեան գիտակ կամ անտեղեակ ըլլալու նիւթին շուրջ.-

Պասքըն Օրան նշած է թէ մինչեւ իր 40 տարիքը՝ տեղեակ չէր Հայկական Հարցէն[2]: Ճեմալ փաշայի թոռ Հասան Ճեմալ գրած է *Միլլիյէթ*ի մէջ. «*Մինչեւ 1973 թուականը մեր դիւանագէտներուն դէմ սկիզբ առած ահաբեկչական գործողութիւնը, ոչինչ գիտէի Հայկական Հարցին կամ 1915ի վերաբերեալ*»[3]: Իրաւաբան, մարդկային իրաւանց պաշտպան եւ գրող, *Աննէ-նայիմ* գիրքի հեղինակ Ֆեթհիէ Չեթին, որուն մեծմայրը՝ Հրանուշ, թաքուն բռնի դաւանափոխուած հայ էր Սեհէր անունով, 14 Նոյեմբեր 2015ին Նիւ Ճըրզիի Րամաքօ Քոլէճի ողջակիզման եւ ցեղասպանութեան հետազօտութեանց Կրոս կեդրոնի բաժնին մէջ իր բանախօսութեան ըսած է. «*Ան* (մեծմայրը – Զ.Մ.) *իր պատմութիւնը չպատմած՝ ես գաղափար իսկ չունէի մեր* (Թուրքիոյ – Զ.Մ.) *պատմութեան մէջ պատահած այդպիսի ցեղասպանական բռնութեան մասին*»[4]: Հայոց Ցեղասպանութիւնը ընդունած եւ «Ներողութիւն կը խնդրեմ» գրութեան 28,000 ստորագիրներէն Զէյնէպ Թամփայ ըսած է. «Չէի գիտեր, Նիւ Եորքի մէջ գիտցայ»: Հայու մը մանկութեան բարեկամ թուրք մը որ Արեւմտեան Գերմանիոյ մէջ պատմագիտութիւն կ'ուսանէր իր ընկերոջ ըսած է. «*Ես համալսարանին մէջ առաջին անգամ երբ*

---

[1] Այդ մասին անդրադարձած ենք մեր *Հայակական Հարցի հոլովոյթը 1939-2010* գրքին ԺԹ. գլուխին մէջ եւ *Հայոց նորագոյն պատմութեան էջերէն* գիքի «Հայկական Հարցի հոլովոյթը 2011էն 2020» գրութիւններուն մէջ:

[2] Հայկական հեռուստացոյցի Հ 1 կայանէն 10 Մարտ 2010ի հաղորդում:

[3] Հասան Ճեմալ, «Իրականութիւնը կը ճնշէ, սուտերով չ'ապրուիր», *Միլլիյէթ*, 28 Ապրիլ 2010: Թարգմանութիւնը՝ *Ազդակ*, 25 Մայիս 2010, էջ 6:

[4] «Բոլորին գիտցած "գաղտնիք"ը՝ իսլամացած հայերը», *Ազդակ*, 18 Դեկտեմբեր 2015, էջ 5:

*լսեցի ջարդերուն մասին՝ անկեղծօրէն ամչցայ*»[5]: *Թարաֆ* թերթի աւագ խմբագիր Ահմէտ Ալթան 2009ին դիտել տուած է որ «*Թուրքիայէն դուրս ապրող ամէն մարդ գիտէ թէ ինչեր պատահեցան հայերու դէմ: Ամէն մարդ գիտէ որ իթթիհատականները հետեւողական ցեղասպանութիւն մը գործադրեցին: Ամէն մարդ գիտէ, թէ հայերը որքան տառապեցան: Միայն թուր-քերն են որ չեն գիտեր այս ճշմարտութիւնը*»[6]: Հայոց Ցեղասպանութիւնը ժխտող վերլուծաբան եւ հրապարակագիր Մեհմէտ Ալի Պիրանտ իր կարգին ըսած է. «*Թրքական հասարակութեան մեծ մասը ծանօթ չէ այդ* (1915ի – Զ.Մ.) *իրադարձութեանց*»[7]:

Հարց է թէ ինչու:

Պատասխանը յստակ է: Որովհետեւ խեղաթիւրուած եւ նենգափոխուած պատմութիւն, երբեմն նոյնիսկ ուրացում, չգիտնալ ձեւացնել կամ անտեսել տեղի ունեցած են:

Թուրքերու վկայութիւններով պիտի խօսինք:

24 Ապրիլ 1915ի մասին գրելով, *Ռատիքալ*ի աշխատակից Օրալ Չալըշլար գրած է. «*Մենք անտեղեակ էինք այս պատմութենէն: Չկարդացինք, չսորվեցանք: Մեր պատմութեան մէջ տարբեր բաներ գրուեցան*»[8]:

Ահա այս վերջին տողն է բանալին մեր նախապէս ըրած հարցումին:

Գերմանաբնակ թուրք գրող, *Քեզմով կ'ուրախանայ սիրտս* գիրքին հեղինակ Քեմալ Եալչընը, վկայած է. «*թրքական ազգային կրթութեան սկզբունքներու համաձայն գրուած պատմութեան դասագիրքեր կարդացած եմ: Ո՛չ միջնակարգ դպրոցին մէջ եւ ոչ ալ բարձրագոյն ուսման հաստատութիւններուն մէջ հայերու, ասորիներու, յոյներու եւ միւս ոչ-մահմետական ժողովուրդներու հետ պատահած աղէտներու մասին չեմ կարդացած: Պատմութեան դասերու ժամանակ մեզի կ'ըսուէր "օսմանցիներուն հացը ուտող հայեր եւ յոյներ առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն Օսմանեան կայսրութիւնը թիկունքէն հարուածեցին, դաւաճանեցին: Օսմանցիներն ալ իրաւացի ըլլալով, անոնց անհրաժեշտ պատասխանը տուին"*»[9]:

*Թարաֆ*ի մէջ Ֆիքրէթ Տողան «Ներողութիւն կը խնդրեմ» խորագրեալ յօդուածին մէջ գրած է. «*Ներողութիւն կը խնդրեմ ...որովհետեւ իմ հայ եղբայրներուս ցաւերը մեզի չպատմուեցան երբեք դպրոցական նստարաննե-*

---

[5] Թորգոմ, «Թուրք մը առաջին ընկերս», *Ազդակ*, 24 Ապրիլ 2020ի յաւելուած, էջ 12:

[6] «Խելագարներու երկիր», *Ժարթօնք*, 28 Փետրուար 2009, էջ 4:

[7] «Մահացած է թուրք յայտնի վերլուծաբան եւ հրապարակագիր Ալի Պիրանտ», *Ժարթօնք*, 19 Յունուար 2013:

[8] Օրալ Չալըշլար, «Ի՞նչ պատահեցաւ Պոլսոյ հայ մտաւորականներուն», *Ռատիքալ*, 25 Ապրիլ 2010, թարգմ.՝ Գ[րիգոր] Կ[էօքճեան], *Ազդակ*, 12 Մայիս 2020, էջ

[9] Ռուբէն Մելքոնեան, «Թուրք գրողը "ծպտեալ հայերու" մասին», *Երկիր*, 23 Նոյեմբեր 2007, էջ 8:

*րուն վրայ: Ներողութիւն կը խնդրեմ որովհետեւ փոխանակ ափիկա մեզի սորվեցնելու, մեր ուղեղները լուացին...»*[10]:

Ուրիշ մը՝ Այշէ Քատըօղլու, *Րափիքալի* մէջ գրած է. «*...Բայց այսօր* (2009ին – Զ.Մ.), *փակաւին Թուրքիոյ նախակրթարաններուն մէջ, ամէն ջանք կը վափնուի որպէսզի փղաքը միայն հպարտութիւն զգան իրենց պատմութենէն: Մեր փղաքը բնաւ գաղափար չունին իրենց պատմութեան անցեալին մէջ առկայ ամօթալի էջերուն մասին, կամ այն դէպքերուն մասին որոնք պէտք չէ կրկնուին*»[11]:

Այլ գրող մը, կրկին *Րափիքալի* մէջ, կը գրէ. «*Այս բաները ձեզի դպրոցներուն մէջ չսորվեցուցին, բայց ափոր համար ալ կը կարծէ՞ք որ ասոնք պատմութենէն սրբուեցան...*»[12]:

Ընկերաբան, կանանց իրաւանց պաշտպան հակառազմապաշտ գրող Փինար Սելէք, *Քանի որ հայ էին*[13] գիրքին մէջ նշած է թէ ինք աճած է ազգայնական ախտէ զերծ միջավայրի մէջ եւ միայն ուշ դէմ յանդիման գտնուած է 1915ին «Թուրքիոյ հայերու բնաջնջման»: Ան կ'անդրադառնայ «*թուրք պետութեան կողմէ կատարուած ուղեղալուացքին՝ բոլոր մակարդակներու վրայ: Ան որպէս օրինակ կը նշէ 10 Յունիս 2003ին թուրք նախակրթարանի մը համար տրուած շարադրութեան նիւթը՝ «Հայոց Ցեղասպանութիւնը յերիւրանք մըն է, հովերը եւ հեղեղները տարած են, փաստել որ Անատոլուի հայերը երբեք չեն բնաջնջուած*»[14]:

Սելէք իր գիրքին մէջ կը նշէ թէ իրենց կը սորվեցնէին թէ «*բոլոր հայերը ահաբեկիչներ էին, անոնք պիտի ուզէին վնաս պատճառել երկրի միութեան եւ հիմա պիտի ուզէին լարել թուրքերը իրարու դէմ՝ պնդելով որ Հայոց Ցեղասպանութիւն մը տեղի ունեցած է*»[15]:

Ահմէտ Ալթան գանգատած է որ թուրք պետութիւնը դպրոցներուն մէջ մանուկներուն ցուցադրած է տեսերիզ մը, թէ՝ «ինչ որ հայերը ըրած են թուրքերուն»[16]:

Չեթին կու տայ բուն պատճառը թէ ինչու կ'ուրանան, կը ժխտեն Ցեղասպանութեան իրողութիւնը. «*Թուրքիոյ մէջ Հայկական Հարցին թապուն իր տեսակին մեծագոյնը կը համարուի, որովհետեւ ան սերտօրէն կ'առնչուի եւ*

---

[10] Յակոբ Տէրեան, «Բաց նամակ Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողանին», *Նայիրի շաբաթաթերթ*, Պէյրութ, 26 Մայիս 2009, էջ 12:

[11] Նոյն:

[12] Նոյն:

[13] Գիրքը – 90 էջ - լոյս տեսած է 2015ին: Հեղինակը ընկերաբան է եւ Նիսի համալսարանի դասախօս, ծնած է 1971ին, թրքական կառավարութեան կողմէ 1998ին բանտարկուած է:

[14] Յ. Պալեան, «Դեկտեմբերի այս ցուրտ Երկուշաբթին Փինար Սելէքի "Քանի որ հայ էին" գիրքը բերին», *Ազդակ*, 21 Յունուար 2019, էջ 5:

[15] Նոյն:

[16] «Խելագարներու երկիր»:

*կը դպչի թուրք պետականութեան կազմաւորման գործընթացին, ուր ի յայտ կու գայ քեմալական Թուրքիոյ պետական գործիչներուն անմիջական կապը կատարուածին հետ եւ անոնց հարստացումը տեղահանուած եւ սպանուած հայերու ունեցուածքներով*»[17]:

Սակայն ներկայ դարուն համաշխարհայնացման ատեն երբ համացանցը առկայ է, կայ Google, Wikipedia, Youtube, ընկերային հաղորդակցութեան այլազան համացանցային նիւթեր, կարելի չէ այլեւս ծածկել: Հարցը այն է թէ թուրքերը որքանով կ'ընկալեն Հայոց Ցեղասպանութեան իրական պատմութիւնը:

Թուրք յայտնի լրագրող եւ քրոնիկագիր Եասեմին Չոնկոր կը գրէ թէ Գահիրէի հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կողքին խաչքար մը տեսած է եւ հոն սորված է թէ խաչքար ինչ կը նշանակէ: Գաչքարը Անատոլուի հիւսիս արեւելեան շրջանի մը մէջ լեռան մը անունն է: Ապա կ'աւելցնէ. «*Մենք թուրքերս, կամ գոնէ ինծի նման հեռաքրքրասէր թուրքեր, իւրաքանչիւրս փարբեր պատահարով մըն է որ յանկարծ կ'արթննանք ու կը սկսինք սորվիլ բաներ որոնք մեզմէ թաքնուած էին աւելի առաջ: Եւ ասիկա ինքնազարգացում մըն է ընդդէմ այն փգիփութեան զոր կրթական մեր դրութեան մէջ մեզ կոյր դարձուցած է մեր նախնիներուն կողմէ գործուած ոճիրներուն դիմաց*»[18]:

Կիւլայ Կէօքթիւրք իր կարգին կը գրէ. «*Բայց նախակրթարանի փղաքը անշուշտ որ չեն գիտեր, անոնք տակաւին այնքան մաքուր են որ կը կարծեն թէ իրենց ըսուած ամէն բան ճիշտ է եւ միակ ճիշտը ան է*»[19]:

Լրագրող-մեկնաբան Մուրատ Պելքէ շեշտած է թէ թուրք պետութեան ուժը չէր բաւեր արտաքին աշխարհէն գաղտնի պահելու Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը, *«անոնք միայն Թուրքիոյ ժողովուրդէն գաղտնի պահեցին»*[20]:

Թուրք մտաւորական, Պելքէ հրարատակչատան տէր եւ տնօրէն, մարդկային իրաւանց պաշտպան Ռակըփ Զարաքօլու հարցազրոյցի մը ընթացքին ըսած է. «*ժողովուրդներու միջեւ երկխօսութիւնը կարեւոր է, բայց թուրք ժողովուրդին պէտք է լսել սորվեցնենք, սորվեցնենք՝ ինչպէս կ'ըլլայ երկխօսութիւնը: Եթէ թուրք ժողովուրդին կարենանք սորվեցնել, որ այն ինչ որ ունին թրքական թատրոնի շէնքը, լրագրութիւնը այս ամէնը հայերու կողմէ ստեղծուած են, եթէ այս ամէնը սորվին, անոնց մօտ արդէն հարց պիտի յառաջանայ՝ իսկ ի՞նչ պատահեցաւ այս հայերուն հետ: Անատոլուի բնակչու-*

---

[17] Սալբի Գասպարեան, «Ֆեթհիէ Չեթինի "Մեծմայրիկս" Միլանոյի մէջ», *Ազդակ*, 12 Փետրուար 2007:

[18] «Եասեմին Չանկարի յօդուածը. Խաչքար ի՞նչ կը նշանակէ», *Ժարթօնք*, 29 Օգոստոս 2013, էջ 3:

[19] «Հայկական Հարցի "ներքին ծալքը"», *Ժարթօնք*, 28 Փետրուար 2009, էջ 4:

[20] «Պելքէի յօդուածը "պետական գաղտնիք"ի վնասներուն մասին, *Ժարթօնք*, 17 Ապրիլ 2014, էջ 2:

*թիւնը չի գիտեր թէ այդ հողերուն վրայ ովքեր ապրած են: Թուրքերը իսկապէս չեն գիտեր, թէ ինչ փեղի ունեցած է հայ ժողովուրդին հետ եւ եթէ սորվին՝ պիտի սկսին պրպտել: Կը պատկերացնէ՞ք որ կ'ապրին տեղ մը, բայց տեղանքին պատմութիւնը չեն գիտեր, թուրք բնակչութիւնը իր երկրին լրիւ պատմութիւնը չի ճանչնար, քանի որ Թուրքիոյ պատմութիւնը պատմութեան գիրքերուն եւ դասագրքերուն մէջ կը սկսի 1923 թուականին, երբ հայերը արդէն չկան»*[21]:

Հայոց Ցեղասպանութիւնը թրքական արխիւներու փաստերով բացայայտող թուրք պատմաբան Թանէր Աքչամ իր կարգին կը գրէ Թուրքիոյ արեւմտեան շրջաններուն ու մեծ քաղաքներուն մէջ «*չիմացութիւնը 95 տարուան ազգայնական միակողմանի կրթութեան հետեւանք է: Նոր սերունդը այս կրթութեան արդիւնքն է եւ գրեթէ ոչինչ գիտէ, թէ ինչ պատահած է 1915ին*»[22]:

Պէտք չէ զարմանալ նոյնիսկ եթէ թուրք գրողներ ուշ իրազեկ դարձած են Հայոց Ցեղասպանութեան: Առ այդ յատկանշական է վկայութիւնը թուրք գրող Հուտա Քայայի, որ յայտնած է. «*1915ին տեղի ունեցածը բառին բուն իմաստով ցեղասպանութիւն է*»: Ան նշած է. «*ատեն մը հպարտութեամբ կ'ըսէինք՝ "Թուրքիոյ բնակիչներուն 98 առ հարիւրը իսլամ են": Երբ իմացայ իրական պատմութիւնը ոչ թէ այն ինչ որ մեզի սորվեցուցած էին, ամօթ եւ նմանատիպ զգացումներ ունեցայ*»: Ան աւելցուցած է որ «*երբ իմացած է որ տակաւին 80 տարի առաջ հողերու առնուազն կէսը ոչ-իսլամներով բնակուած եղած է, ուղեղը շանթահարուած է": Ու՞ր են հիմա միլիոնաւոր մարդիկ, Թուրքիոյ հանրապետութեան պատմութեան իւրաքանչիւր էջը կեղտոտ եւ արիւնոտ է: 100 տարուան ամօթը կայ...*»[23]:

Իսթանպուլի լաւագոյն համալսարաններէն Պողազիչի համալսարանի քսանամեայ ուսանող Պաթուհան, 2013ին պարզած է, թէ մինչեւ ցեղասպանութիւն բառը լսելը դպրոցին մէջ իրեն սորվեցուցած են թէ 1920ին Թուրքիա պատերազմած էր երկրի արեւելքին հայերու դէմ: Այսպէս, յաջորդաբար 3-4 տարի իրենց սորվեցուցած էին թէ «հայերը մեր թշնամիներն են»: 12 տարեկանին պատմութեան դասին հայերու մասին կը սորվեցնէին որ անոնք Թուրքիոյ մէջ ապրած են արդարութեան մէջ եւ նոյնիսկ հաւատարմութեան համար կոչուած էին *միլլեթի սատիքա*, բայց հայերը միաւորուելով ռուսերու հետ, Թուրքիային կռնակէն հարուածած էին. իբր պատիժ իրենց այս արարքին՝ անոնք քշուած էին այնպիսի վայրեր, ուր չէին կրնար վտանգ ներկայացնել: Ճանապարհին պատերազմական պայմաններու բերումով

---

[21] Զարաքօլու, «Տոն Քիշոթի պէս ենք», *Զարթօնք*, 12 Հոկտեմբեր 2010, էջ 4:

[22] «"Ալիք"ի հարցազրոյցը թուրք մտաւորական փրոֆ. Թանէր Աքչամի հետ», *Ազդակ*, 13 Յուլիս 2010, էջ 4:

[23] «Տեղի ունեցածը բառին բուն իմաստով ցեղասպանութիւն է կ'ըսէ թուրք գրող Քայա», *Զարթօնք*, 11 Մայիս 2014:

անոնց մէկ մասը մահացաւ: Պաթուհան միայն լիսէի ուսանողական իր տարիներուն, երբ 16 տարեկան էր, *Թարաֆ* թերթէն իմացած էր տեղեկութիւններ եւ իր մէջ կասկածներ արթնցուցած պաշտօնական պատմագրութեան շուրջ, թէեւ ինք մերժած էր ցեղասպանութիւն բառին կիրարկումը, որն ընդունուած էր համալսարանական իր օրերուն[24]:

Թուրք մտաւորական եւ մարդկային իրաւանց պաշտպան Այշէ Կիւնայսու, որ Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը ճանչցած է, 2008ին կը բացատրէր թէ թուրքերու մեծամասնութիւնը կը խորհի որ անարդար են իրենց հանդէպ երբ մարդիկ հաստատեն թէ 1915ին ցեղասպանութիւն տեղի ունեցած է: Անոնցմէ ամենէն ծայրայեղներ կը խորհին թէ հայերը արժանի էին անոր, իսկ ամէնէն տգէտները կը հաւատան թէ հայերն են որ թուրքեր սպանած են: Նուազ ծայրայեղները կը խորհին թէ եղածը ողբերգութիւն մըն էր, բայց օրուան կառավարութիւնը ուրիշ ընտրանք չունէր: Ուրիշներ կը խօսին փոխադարձ սպանութիւններու մասին, իսկ բարի կամքի տէր թուրքեր կ'ընդունին թէ մեծաթիւ հայեր սպաննուած են եւ այս ամօթ մըն է, բայց կը պնդեն թէ ասիկա հակամարտութեան կամ ատելութեան պատճառ ըլլալու չէ եւ ոչ Թուրքիան եւ ոչ ալ թուրք հաւաքականութիւնը այս մասին պէտք է հարցապնդուի[25]:

Հայոց Ցեղասպանութեան մասնագէտ հայ պատմաբաններ եւ թրքագէտներ «գիտեն թէ չեն գիտեր»ի մեր արծարծած հարցով հետեւեալ հիմնաւորեալ կարծիքները տուած են.-

Փրոֆ. դոկտ. Վահագն Տատրեան նշած է. «*Թուրք երիտասարդները եւ համալսարանականները բոլորովին անտեղեակ են այդ տարիներու* (1915-23 - Զ.Մ.) *թրքական պատմութենէն եւ յատկապէս՝ հայերու կոտորածներէն...*»[26]:

ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկի նախկին տնօրէն թրքագէտ դոկտ. Ռուբէն Սաֆրաստեան նոյն կարծիքը ունի տարբեր եզրակացութեամբ. «*Թուրքիայում դեռեւս գործում է այսպէս ասած "պաշտօնական պատմութիւնը" որի շրջանակներում պետութիւնը պատմութիւնը մատուցում է այնպէս ինչպէս ձեռնտու է իրեն: Այդ "պաշտօնական պատմութեան" մէջ ցեղասպանութեան մասին ոչ մի խօսք չկայ եւ հայ ժողովրդի մասին համարեա ոչինչ չի ասւում կամ ինչ որ ասւում է, բացասական է ասւում: Իսկ ինչ վերաբերում է երիտասարդներին, միթէ՞ թերթեր չեն կարդում, հեռուստացոյց չեն դիտում, չեն տեսնում հակահայկական պրոպագանդան... գու-*

[24] Տաթեւիկ Սարգսեան, «Անկախ» եւ արտատպում «1915 թուականը ինձ զրկեց իմ մանկութեան հայ ընկերից», *Ազդակ*, 10 Սեպտեմբեր 2013, էջ 4:

[25] "Le Scepticisme des intellectuels turcs," *Nouvelle d'Arménie*, Սեպտեմբեր, 144:2008, էջ 30:

[26] «Թուրքերը հետաքրքրուած են ցեղասպանութեան նուիրուած աշխատութիւններով», *Արարատ*, 22 Մայիս 2009, էջ 2:

*ցէ իրենք դիտմա՞մբ են ասում, որ տեղեակ չեն, որպէսզի խուսափեն խօսակցութիւններից*»[27]:

Հայաստան այցելած իզմիրցի լուսանկարիչ, 22ամեայ Պեքիր Արմէ Օկիւթը վերի կարծիքը հաստատած է: Ան Երեւանի Tert.amի հետ զրոյցի ընթացքին ըսած է. «*Թուրքիոյ մէջ Հայաստանի մասին շատ քիչ կը խօսին: Մենք չենք խօսիր Հայաստանի, Հայոց Ցեղասպանութեան մասին, որովհետեւ թուրքերը չեն ցանկար զայն ընդունիլ: Ես չեմ գիտեր անոր մասին, ես ափով հեպաքրքրուած չեմ*»: Ուղղակի հարցումի մը պատասխանելով ան ընդունած է ցեղասպանութեան իրողութիւնը, աւելցնելով «*շատ բան չեմ գիտեր այդ մասին, գիտեմ այն ինչ կայ Ուիքիփեդիայի մէջ: Չեմ գիտեր... ես չեմ ցանկար այդ մասին խօսիլ, ես ոչ մէկ տեղեկատուութիւն ունիմ անոր մասին*»[28]:

Հրանուշ Խառատեան, Արեւմտեան Հայաստանի տարածքին հայերու, իսլամացած հայերու եւն. հետ բազմաթիւ հարցազրոյցներ ունեցած է որոնք հրատարակուած են *Հայկազեան հայագիտական հանդէս*ին մէջ: Ան իր հիմնաւորուած կարծիքը տուած է ըսելով. «*Իմ պատկերացումն այն է, որ թուրքական հասարակութիւնը իսկապէս լաւ չի պատկերացնում Հայոց Ցեղասպանութեան պատճառները, իրական ընթացքն եւ հետեւանքները*», եւ իբր եզրակացութիւն աւելցուցած է. «*մեր կարեւոր առաքելութիւններից մէկը թուրքական հասարակութեան տեղեակ պահելն է*»[29]:

Նոյն կարծիքին է յաճախ Թուրքիա այցելած եւ տեղւոյն արխիւները քննած լոնտոնաբնակ պատմաբան Արա Սարաֆեանը, որ *Խօսնակ* ամսաթերթին հետ ունեցած իր հարցազրոյցին իմիջի այլոց ըսած է. «*թուրք հանրութիւնը անծանօթ է իր սեփական պատմութեան: Այս ուղղութեամբ բաւական մեծ աշխատանք կ'իյնայ մեր ուսերուն վրայ...: Պատկերացուցէք, թուրքեր կան որոնք մինչեւ օրս հայերուն ով ըլլալը չեն գիտեր, ոչինչ լսած են հայերուն մասին: Թուրքեր կան, որոնք միայն ժխտական բաներ լսած են հայերու մասին*»: Ան նաեւ նշած է որ քիւրտերը գիտեն եւ քրտական ղեկավար եւ մտաւորական շրջանակներ կ'ընդունին Հայոց Ցեղասպանութեան իրականութիւնը[30]:

Թրքագէտ Մելինէ Անումեան որոշակի տարբեր տեսակէտ նշած է: Ան ըսած է. «*Իմ կարծիքով այժմ Թուրքիայի հասարակութեան մէջ անտեղեակութիւն չկայ [Հայոց Ցեղասպանութեան] հարցում, բազմաթիւ գրքեր են*

---

[27] Մերի Ալեքսանեան, «Թուրք երիտասարդներն իսկապէ՞ս անտեղեակ են», *Երկիր*, 25 Յուլիս 2008, էջ 4:

[28] «Այո կ'ընդունիմ, բայց շատ բան չեմ գիտեր ատոր մասին. թուրք երիտասարդը Հայոց Ցեղասպանութեան մասին», *Ձարթօնք*, 30 Յունուար 2017:

[29] Հարցազրոյց Հրանուշ Խառատեանի հետ, *Նոր Յառաջ*, 22 Նոյեմբեր 2011, էջ 4:

[30] «Հարցազրոյց պատմաբան Արա Սարաֆեանի հետ», *Խօսնակ ամսագիր*, Ապրիլ 2009, էջ 25:

*հրապարակուել, թուրքերէնով լրատուութիւն ապահովող կայքէջեր էլ կան…»*[31]:

Ասոր ի պատասխան Մուրատ Պելքէ ըսած է. «*Այո՛, սակայն մի կողմից էլ բնականաբար հակառակ քարոզչութիւն է արւում. առկայ է ֆաշիստական ազգայնականութեան պահպանում: Այսինքն՝ ասում են. "նման բան եղել է, բայց բայց նրանք են մեզ սպաննել"*»[32]:

Հարցը բազմակողմանի կերպով սերտելէ ետք հետեւեալ եզրակացութեան յանգեցանք.-

Թուրքիոյ ղեկավարութիւնը գիտէ իր նախնիներուն կատարածը, բայց անգիտանալ կը ձեւացնէ, աւելի ճիշտը՝ կ'ուրանայ կատարուածին ցեղասպանութիւն ըլլալը:

Թուրքիոյ "խորքային պետութիւն"ը եւ իշխող տարրերը գիտակցաբար Հայոց Ցեղասպանութիւնը (***soykırım***) "այսպէս կոչուած ցեղասպանութիւն" (*sözde soykırım*) կը կոչեն: Անոնց մտահոգութիւնները յստակօրէն բանաձեւած է Եւրոպայի ռազմավարական կեդրոնին կից հայկական հարցերով զբաղող հիմնարկի ղեկավար Օմար Լիւթէմ: Ըստ անոր՝ «*Հայաստան կը հետապնդէ չորս հանգրուանով ծրագիր մը. առաջին՝ Եւրոպայի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչում, երկրորդ՝ Արեւմուտքին միջոցով սփիպել որ Թուրքիան ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը, երրորդ՝ բարոյական վնասուց հատուցում պահանջել, որմէ ետք Թուրքիա սփիպուած պիտի ըլլայ Հայաստանին զիջիլ Արեւելեան Անատոլուի մէկ մասը*»[33]:

Սոյն խօսքերը արտայայտուած էին երբ Ֆրանսա պետական օրէնքով 2001ին ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը: Լիւթէմի նշած Հայաստան բառը անշուշտ կ'ընդգրկէ նաեւ պահանջատէր հայութիւնը ի սփիւռս աշխարհի:

Ուրեմն Հայոց Ցեղասպանութեան պետական ճանաչումը քաղաքական հարց է:

Գալով թուրք հասարակութեան Հայոց Ցեղասպանութեան իրազեկութեան, այդ կը պարզենք աշխարհագրական տարածքներով: Թուրքիոյ արեւելեան նահանգներուն, այսինքն Արեւմտեան Հայաստանի մէջ, տեղաբնիկները (թուրքեր, քիւրտեր, իսլամացած եւ թաքուն հայեր եւն.) գիտեն Օսմանեան Թուրքիոյ հայոց վրայ գործադրած ցեղասպանութեան մասին:

Ուիքիլիքսի բացայայտուած վաւերաթուղթերուն մէջէն, որոնք ի հեճուկս ԱՄՆի պետութեան կամքին հրապարակուեցան, կը պարզուի թէ 2004ին Թուրքիոյ ԱՄՆի դեսպանատան աշխատակիցներ նախկին հայաշատ Արե-

---

[31] Մելինէ Անումեան, «Որտեղ հայերի կոտորածը աւելի մեծ մասշտապով է իրականացուել, այնտեղ աւելի շատ ձայն են տալիս ազգայնական շարժում կուսակցութեանը», *Զարթօնք*, 17 Նոյեմբեր 2013, էջ 3:

[32] Նոյն:

[33] «"Ֆրանսա հայերու ցեղասպանութիւնը ճանչցաւ պարզապէս հայերը ուրախացնելու համար", կ'ըսէ Օմէր Լիւթէմ», *Ազդակ*, 25 Փետրուար 2001, էջ 1:

ւելեան Թուրքիոյ շրջանները իրենց այցելութեան զարմացած են այն իրողութեան թէ շրջանի «բնակչութիւնը կը շարունակէ լաւատեղեակ մնալ հայոց հետ տեղի ունեցածին», ասյինքն ցեղասպանութեան[34]:

Կարելի չէ անգիտանալ, քանի քիւրտերն ու թուրքերը սերունդէ սերունդ փոխանցած են հայոց հետ տեղի ունեցածը: Աքչամ հարցազրոյցի մը ընթացքին ըսած է. «*եթէ դուք ալեւիներուն, տերսիմցիներուն, փիգրանակերտցիներուն, պիթլիսցիներուն, մշեցիներուն հարցնէք՝ քիւրտերը ձեզի հայերու դէմ կատարուած վայրագութիւններու մասին զարհուրելի պատմութիւններ կը պատմեն: Քիւրտերը բացէիբաց կը խօսին այդ մասին*»[35]:

Իթթիհատական ղեկավարութիւնը Թալաաթի գլխաւորութեամբ առաջին հերթին ուզած էր բնաջնջել Արեւմտեան Հայաստանի հայ ազգաբնակչութիւնը, նախքան ցարական Ռուսիոյ բանակներուն նուաճողական արշաւանքը: Ճիշտ է, զգուշ էին քաղաքներու մէջ զանգուածային ջարդ կատարելու մէջ, սակայն կարգ մը վայրերու մէջ, յատկապէս Սասուն-Մուշի շրջանին մէջ տեղւոյն վրայ իրագործած են ցեղասպանական արարքները: Նոյնն է պարագան Վանի եւ շրջակայքի հայկական 80 գիւղերուն, ուր 24,000 հայեր սպաննուած էին[36]:

Երկու հայեր՝ Շուշան Քերովբեան (Փարիզէն) եւ Վահագն Քեշիշեան (Հալէպէն) 24 Ապրիլ 2010ին կ'այցելեն Էլազըղ, (նախկին Մեզրէ եւ Խարբերդ), ընկերակցութեամբ քիւրտի մը՝ Մուսթաֆա Պալապան, եւ կը հանդիպին տեղւոյն մարդկային իրաւանց միութեան շրջանային կեդրոնին մէջ միութեան նախագահին եւ անդամի մը, որոնք կ'ըսեն թէ «*իրենց մանկութեան ատեն չէին գիտակցեր հայերուն հանդէպ կատարուած ոճիրին եւ որպէս հերոսութիւն կը դիտէին իրենց հայրերուն հայ մը սպաննած ըլլալը եւ կ'ափսոսային որ միայն հիմա է՝ քառասուն տարեկանէն վերջ, որ անդրադարձած են Աղէտին մեծութեան*»[37]:

Թաթուլ Յակոբեան կը գրէ. «*Թուրք պատմաբան Խալիլ Պեքթայը գրած է, որ 1915 թուականը պահպանուած է հասարակ ժողովուրդի յիշողութեան մէջ, ընդ որում, շատ թուրքերու եւ քիւրտերու քով այդ յիշողութիւնները ոչ միշտ են բացասական, երբեմն 'հերոսական' են ու ոգեւորիչ: Այսօր ալ Թուրքիոյ տարբեր վայրերուն մէջ կարելի է հանդիպիլ փուներու, ուր կան պատերէն կախուած թուրեր, որոնց մասին կ'ըսեն թէ վրայի արիւնը հայկական արիւն է: Ոմանք ատոնցմով կը հպարտանան, ուրիշներ կ'ամչնան*»[38]:

---

[34] Թաթուլ Յակոբեան, *Հայեացք Արարատէն. հայերը եւ թուրքերը*, Անթիլիաս, 2012, էջ 493:

[35] «"Ալիք"ի հարցազրոյցը թուրք մտաւորական», էջ 4:

[36] Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918, էջ 297:

[37] Շուշան Քերովբեան, Վահագն Քեշիշեան, «Խարբերդ՝ Ապրիլ 24ի ապրումներ», *Ջարթօնք*, 22 Մայիս 2010, էջ 7:

[38] Յակոբեան, էջ 493:

Թուրք մտաւորական Սայիթ Չեթինօղլուն ըսած է. «*Քանի դեռ Ամասիայի նախկին հայկական թաղամասին մէջ, ուր այժմ սուլթան Սելիմի հրապարակն է, փեղի հայերուն ու պոնտրացի յոյներուն կացինով սպաննած մսագործ Կապաշ Ալեւի պատկերը դրուած է [Հայոց] Ցեղասպանութեան [Թուրքիայէն] ճանաչումը մօտ ապագային հարց համարելը անհնար կը դառնայ*»[39]:

Անկախ՝ ցեղասպաններու անունները կրող պողոտաներէն, փողոցներէն, դպրոցներէն ու հասարակական վայրերէն, թուրք կամ քիւրտ գիւղացիներ ըստ թուրք դոկտորականի ուսանող Չայլիի վկայութեան երբ հետազօտութիւններ կը կատարէր Սվազի (Սեբաստիոյ) մօտակայ գիւղերուն մէջ, երբ տեղացիներու հարցումներ կ'ուղղէ շրջակայ վայրերուն մասին, գիւղի մը համար կ'ըսեն «հաւաքավայր» (այսինքն այն վայրը, ուր Սվազի շրջանի հայերը հաւաքելով կը կեդրոնացուէին նախքան ջարդի վայր ղրկուիլը): Այս վերջին շրջանն ալ գիւղացիք կը կոչէին «արիւնոտ գետ», ուր հայոց զանգուածային սպանութիւնները տեղի կ'ունենային եւ գետը ամիսներով կարմրագոյն կը հոսէր: Չայլի կ'աւելցնէ թէ ասոնք պաշտօնական անուններ չէին այլ գիւղացիներու կողմէ տրուած եւ ամէնուն կողմէ գործածուած անուններ[40]:

Արեւմտեան Հայաստանի գիւղաքաղաքներէն Տիարպեքիրի նահանգին մէջ գտնուող Չնքուշ (Cungus) այցելած *Նիւ Եորք թայմզ* հանրածանօթ ու ազդեցիկ թերթի թղթակից Թիմ Արանկօ, 16 Ապրիլ 2015ին կը գրէր Չնքուշէն թէ գիւղին մէջ հանդիպած է Վահիթ Շահին անուն 78ամեայ ծերունիի մը, որ գիւղին կեդրոնը սրճարան մը նստած էր, ան ձեռքով ցոյց տուած է գիւղին այն մասը ուր ատենին հայեր կ'ապրէին, ան ցոյց տուած է փոս մը, ըսելով թէ «այր մարդոց հոն կը նետէին»[41]: Պէտք է նշել որ ցեղասպանութենէն առաջ Չնքուշի մէջ 10,000 հայեր կ'ապրէին:

Ուղուր Անկէօր (Ugur Ungor) երիտասարդ պատմաբանը դասախօսութեան մը ընթացքին ըսաւ թէ իր մեծմայրը 2000ին Էրզինճանի (Երզնկա) մէջ երբ հեռատեսիլ կը դիտէին եւ խօսնակը "այսպէս կոչեցեալ ցեղասպանութիւն" կ'որակէր Հայոց Ցեղասպանութիւնը, իրեն ըսած է թէ Հայոց Ցեղասպանութիւնը իրական է:

Անկէօր կը նշէ թէ մինչեւ այդ ինք անտեղեակ էր իրողութենէն, սակայն երբ Արեւելեան Թուրքիոյ մէջ կը շրջի եւ տեսակցութիւններ կ'ունենայ տարեց մարդոց հետ, անոնք բացէիբաց կը խօսին պետականօրէն կիրարկուած հայոց ջարդերուն մասին: Ան կ'աւելցնէ տարեց թուրքեր եւ քիւրտեր

---

[39] «Չեթինօղլուն թուարկած է Թուրքիոյ հայկական տարածքները որոնք պէտք է վերադարձուին իրական ժառանգներուն», *Զարթօնք*, 20 Մայիս 2016, էջ 3:

[40] Internet, մատչում՝ 6 Փետրուար 2016:

[41] "A Century After a Genocide. Turkey's Denial Only Deepens", *The New York Times*, 17 Ապրիլ 2015, էջ A1:

Արեւելեան Թուրքիոյ մէջ իրենց նախորդներէն եւ ընտանեկան պարագաներէն որոնք «*ականատես եղած կամ մասնակցած են ցեղասպանութեան, յստակ ու վառ պատկերացումներ ունին:*- Ան եզրակացուցած է թէ,- *թուրք պետութիւնը կ'ուրանայ ցեղասպանութիւնը զոր իր սեփական ժողովուրդը կը յիշէ*»[42]:

Նոյնը կը հաւաստէ Էօզկէ (Eozge) անունով թուրք 28 տարեկան երիտասարդուհի մը՝ «*ինծի նման Թուրքիոյ արեւելքը ծնած թուրքեր գիտեն թէ հայերն են զոհերը, քանի մենք հայերու դրացիներ էինք եւ կը խօսէինք այդ մասին*»[43]:

Յատկապէս արեւելեան շրջաններուն մէջ, եւ ընդհանրապէս Թուրքիոյ տարածքին, մնացորդաց հայերուն *քլըչ արթըղը* (սուրէն մնացորդաց) վարկաբեկիչ արտայայտութիւնը կու տան, զոր մինչեւ իսկ վարչապետ Էրտողան օգտագործեց 2020ին: Ասիկա ցուցանիշ մըն է հարցին տեղեակութեան:

Արեւելեան Թուրքիոյ մէջ պարբերաբար ապացոյցներ երեւան կու գան Հայոց Ցեղասպանութիւնը փաստող, որոնք թուրք պետութիւնը տեղեկանալէն ետք կ'անհետացնէ:

Թուրք մտաւորական, մարդկային իրաւանց հարցերով զբաղող Այշէ Կիւնայսուն, որ ծանօթ է Հայոց Ցեղասպանութեան ժխտումին դէմ իր պայքարով, կը տեղեկացնէ թէ թերթերուն մէջ կարդացած է երբեմնի հայաշատ Տիարպեքիր-Մարտին ճանապարհին հին բերդի մը աւերակներուն տակ գտնուած մեծաթիւ մարդկային ոսկորներուն մասին: *Թարաֆի* հետ զրոյցի մը ընթացքին Չընարէ գիւղի գիւղապետ Պետիրհան Պալթան ըսած է. «*Իմ կարծիքով հայերու ոսկորներ են: Մեր պապերը միշտ կը պատմէին, որ հայերը կը բաժնէին 20-30 հոգի կազմող խումբերու եւ կը սպաննէին: Հայոց Ցեղասպանութեան շրջանէն մնացած ոսկորներ կրնան ըլլալ*»[44]:

Պարագան տարբեր է Թուրքիոյ արեւմտեան հատուածին մէջ գտնուող զուտ թրքաբնակ վայրերուն մէջ ներկայիս ապրող թուրքերուն եւ այլ իսլամ այլազգիներուն: Այսինքն այն վայրերուն, ուրկէ աքսորեալներու կարաւաններ չեն անցած կամ այդ վայրերուն մօտակայքը ջարդեր տեղի չեն ունեցած եւ հետեւաբար բերնէ բերան եղեռնապատումներ չեն եղած: Ասոնք արեւելեան նահանգներուն բնակիչներուն նման տեղեակ չեն: Պէտք է դիտել տալ թէ Կեդրոնական Թուրքիայէն դէպի արեւմուտք աւելի մեծ բնակչութիւն կայ քան Արեւելեան Նահանգները: Այս շրջանի ատենի հայաշատ քաղաքները՝ Իզմիր, Պուրսա, Գոնիա, Եոզկաթ եւն. ներկայիս ապրողները տեղեակ են անցեալէն:

---

[42] Hambersoum Aghbashian, "52- Ugur Ungor", *Nor Or*, 12 Փետրուար 2015, էջ 9:

[43] "Ozge, 28 ans," *Nouvelle d'Arménie*, Ապրիլ 8:2009, էջ 7:

[44] «Թուրք մտաւորականի անդրադարձը Հայոց Ցեղասպանութեան», *Զարթօնք*, 14 Փետրուար 2014, էջ 2:

Տիարպեքիրի երբեմնի քաղաքապետ Օսման Պայտեմիր, 2011ին Հայոց Ցեղասպանութեան մասին հարցումի մը ի պատասխան ըսած է «*Մեծ ողբերգութիւններ տեղի ունեցած են: Յաւօք նոր սերունդը հիմնականօրէն Թուրքիոյ արեւմտեան հատուածին մէջ դեռ չէ հասկցած թէ ինչ տեղի ունեցած է*»[45]:

Արխանդի մէջ (Սասուն), հայ մը Հրանուշ Խառատեանին պատմած է «*թուրքը որտեղից պիտի իմանայ եթէ ինքը այդ տարածքից չէ, իր պապերը այդ տարածքից չեն, այ էս կողմի, արեւմտեան մասի թուրքերը որտեղի՞ց պէտք է իմանան ինչ է եղել հայերի հետ*»[46]: Ապա խօսակցութեան ընթացքին ըսած է՝ «*գիտեն արեւելքում, Արեւմտեան Հայաստանի տարածքում, գիտեն այն մարդիկը ում հայրը զինուորական է եղել, պապը զինուորական է եղել,* ասկեար *է եղել եւ արել են էդ անմարդկային կոտորածները կամ գաղթողների կարաւաններին են ուղեկցել, կամ արեւելքում պաշտօնեայ են եղել, նրանք իհարկէ գիտեն: Չգիտեմ նրանք կը պատմե՞ն իրենց զաւակներին, դու կը պատմէի՞ր քո զաւակներին, եթէ դու քո* ասկեար *ժամանակ էդպիսի բաներ արած լինէիր*»[47]:

Խօսողին կարծիքով իսթանպուլի եւ Անքարայի թուրքերը եւ արեւմուտքի գաւառներու թուրքերը ինչպէ՞ս տեղեակ պիտի ըլլային երբ իրենց պապիկները տուն նստած էին, եւ քանի հեռուստացոյց չկար, թերթերուն մէջ չէին գրեր եւ անգրագէտ ըլլալով չէին կարդար. ինչպէ՞ս տեղեակ պիտի ըլլային: Ըստ իրեն, Օրտուի, Սամսոնի, Տրապիզոնի, Թոքաթի եւ Ամասիայի մէջ «*ամէն մարդ գիտէ, թուրքերը՝ նոյնպէս: Խօսած ժամանակ արդէն գիտեն մէկ-մէկ կը խօսուի՝ ասոնք հայերուն հողերն են…*»[48]:

Իսկ Կիլիկիոյ մէջ նախկին Զէյթունի, Ուրֆայի, Մարաշի, Հաճընի, Սիսի ու Այնթապի եւ Ատանայի մէջ գիտեն, ոմանք՝ խեղաթիւրուած կերպով: Մարաշի անունը Քահրաման Մարաշ դրած են, Ուրֆայի անունը՝ Շանլը Ուրֆա, իսկ Այնթապինը՝ Կազի Այնթապ: Հայերը կը ներկայացնեն իբրեւ իրենց «ազգային ազատագրական պայքարի հարց»: Մտաւորական գրող Հայկ Նագգաշեան երբ Ատանա կ'այցելէ, անսխալ թրքերէնով թուրքի մը հարց կու տայ «ատենին հոս հայեր կային, ի՞նչ եղան» եւ իբր պատասխան կը ստանայ «թեմիզլենտիք» (մաքրագործեցինք):

1950-80ականներ՝ գաւառներուն մէջ Մեծ Եղեռնէն վերապրած հայեր Իսթանպուլ կը տեղափոխուէին: Այդ ժամանակաշրջանին տեղափոխուողները «*գլխաւորապէս Կիլիկիայի հայերն էին, որոնք միայն Սրամպուլի մէջ*

---

[45] «"Կիւլն ու Էրտողանը պէտք է ընդունին հայերու կոտորածը" կ'ըսէ Տիարպեքիրի քաղաքապետը», *Զարթօնք*, 10 Մայիս 2011, էջ 2:

[46] Հրանուշ Խառատեան, «Ի. դարի միջնադար», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 33:2013, էջ 419:

[47] Նոյն, էջ 420:

[48] Նոյն, էջ 421:

*պիտի ըմբռնէին հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան ծաւալներն ու իրականութիւնը*»[49]:

Պէտք է նաեւ նշել որ Հրանդ Տինքի սպանութենէն իվեր բազմաթիւ թուրքեր համացանցէն յայտնաբերած են Հայոց Ցեղասպանութեան մասին տեղեկութիւններ:

Շատ կարեւոր է արդէն իսկ սկսուած գործը շարունակել, թրքերէնի թարգմանելով կարեւոր դէպքեր[50], յուշագրութիւններ, արխիւային փաստաթուղթեր: Սարաֆեան նշած է թէ «*կարեւոր ազդեցութիւն ունեցաւ [բրիտանական] Կապոյտ Գիրքին թրքերէն թարգմանութիւնը*»: Ան եզրակացուցած է. «*Մենք առիթը պէտք է լաւ օգտագործենք յարաբերութեան մէջ մտնելու թուրք մտաւորականութեան եւ հանրութեան հետ, անոնց ծանօթացնելու մեր պահանջները, իրաւունքները: Թրքերէն լեզուով հրատարակութիւնները բաւական մեծ եւ կարեւոր դերակատարութիւն ունին այս ուղղութեամբ*»[51]: Ամբողջովին կը բաժնենք մեր պաշտօնակիցին տեսակէտը:

Մեթր Էրտալ Տողան Պուրճ Համուտի Մեսրոպեան վարժարանին մէջ 26 Մարտ 2014ին իր մամլոյ լսարանին ընթացքին իմիջիայլոց ըսաւ. «*Թուրքիան անցեալի երկիրը չէ, եւ նոր սերունդներուն մօտ մտածելակերպի յստակ փոփոխութիւն կայ, նորերուն պահանջները փոխուած են*,- եւ աւելցուց,- *Թուրքիան ամենէն շատ պարտք ունի հայերուն նիւթական, պատմական եւ բարոյական, ու մենք պէտք է թուրքերուն պատմենք թէ 1915ին իրականութեան մէջ ինչ տեղի ունեցաւ*»[52]:

Պոլսոյ հայոց պատրիարք Սահակ արք. Մաշալեան ակնարկելով 1915ի Հայոց Ցեղասպանութեան, ըսած է «*մենք այդ մասին գիտենք, քանի որ ապրած ենք այդ ամէնը, սակայն այս երկրին մէջ այդ ամէնուն մասին շատ բան չեն գիտեր*»[53]:

Ուրեմն պէտք է իրազեկել:

Միայն թուրք լայն հասարակութեան կողմէ Հայոց Ցեղասպանութեան արմատներուն, դրդապատճառներուն, կանխամտածուածութեան, գոր-

---

[49] Հրանուշ Խառատեան, «Ի. դարի միջնադար. իսլամացած, իսլամացուած, ալեւիացած ծպտեալ հայեր Թուրքիայում, Բ.», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 34:2014, էջ 467-8:

[50] Օրինակ մը նշենք. թուրք լրագրող Մեմէտ Պինայ ըսած է թէ իր հայրը պահպանողական թուրք մըն էր, որ 1915ի մասին պետական տարբերակը կ'ընդունէր, բայց ինք Ֆեթհիէ Չեթինի Աննէանէյիմ գիրքը տուած է, ան կարդալէ ետք ըսած է մեծ ոճիր մը գործուած է Անատոլիայէն ամբողջ ազգի մը կորուստով ("Le Scepticisme des intellectuels turcs," էջ 30):

[51] «Հարցազրոյց պատմաբան Արա Սարաֆեանի հետ», էջ 25:

[52] «Մեսրոպեան վարժարանին մէջ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած մամլոյ լսարան», *Զարթօնք*, 28 Մարտ 2104, էջ 3:

[53] «Մենք կ'ակնկալենք որ մարդիկ հասկնան հայ ժողովուրդին կորուստները եւ տառապանքը. Մաշալեան», *Զարթօնք*, 6 Փետրուար 2020:

ծադրութեան, գործուած բարբարոսութեանց եւ հետեւանքներուն լրիւ ու յաջող պատկերացումով եւ ընկալումով կրնանք ստեղծել իրենց մէջ յանցապարտութեան, կամ՝ կատարուածի փոխհատուցումի գիտակցութիւն յառաջացնել: Հրեաները եւ իրենց բարեկամները յաջողեցան այդ ընել գերմաններու մօտ եւ իրենց ողջակիզումը ոչ միայն ընդունիլ տալ, այլ փոխհատուցում ստանալ:

Եթէ Հայաստան կամ սփիւռքահայ Հայ Դատի մարմիններ նիւթապէս եւ այլապէս զօրեղ ըլլային եւ թրքական օտարալեզու հեռուստացոյցներուն նման թրքերէնով եւ անգլերէնով բանող հեռատսիլի կայաններ ունենային եւ շատ ազդեցիկ լաւ կազմակերպուած համացանցային կայքէջեր, ուր վաւերաթուղթերով, վերապրողներու յուշերով, Հայոց Ցեղասպանութիւնը ընդունած թուրք պատմաբաններու եւ մտաւորականներու վկայութիւններով, տեսերիզներով՝ Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը եւ հայկական իրաւունքներն ու պահանջները աւելի հասանելի պիտի ըլլային թուրք լայն հասարակութեան, լուրջ մասնագէտներու (պատմաբաններ-հոգեբաններ եւն.) կողմէ պատրաստուած:

## CONSCIOUSNESS MATTERS: THE ARMENIAN GENOCIDE WITHIN TURKEY (Summary)

ZAVEN MESSERLIAN

The author mentions a good number of testimonies from Turkish and Armenian sources on the question of consciousness of the Genocide among the Turks of Turkey. He concludes that the Turkish authorities are well aware that the Genocide was perpetrated by the Turkish authorities of 1915. However, for political reasons, they deny the facts and distort them. Among the populace, most of the inhabitants of the eastern provinces of Turkey, Turks or Kurds, are well aware of the Genocide. Some even talk openly, while those living in those parts of Turkey where there were few or no Armenians in 1915 do not know the facts of the Genocide.

However, and particularly since the assassination of Hrant Dink in 2007 in Istanbul, from various internet sources Turks have begaun to learn about the Genocide, which Turkish history books have presented in a distorted manner since the establishment of the Republic of Turkey. This was and is the policy of the official Turkish educational curriculum.

# «ԳԱՅԼ» ԲԱՌՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԱԾ ԲՈՅՍԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

**ԱՆԺԵԼԱ ԱՄԻՐԽԱՆԵԱՆ**
anjela.nersisyan.1969@mail.ru

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Բոյսերի անուանումները էթնոբուսաբանական եւ էթնոլեզուաբանական հետազօտութիւնների կարեւոր խնդիրներից են: Դրանք, լինելով ժողովրդի աշխարհընկալման ու լեզուամտածողութեան արգասիք, արտացոլում են տնտեսական զբաղմունքները, կենցաղը, ծէսերն ու հաւատալիքները: Պայմանաւորուած լինելով բազմաթիւ հանգամանքներով՝ այդ անունները կազմւում են ըստ բոյսի ձեւի, չափի, գոյնի, համի, օգտակար, վնասակար կամ բուժական յատկութիւնների, ինչպէս նաեւ որեւէ առարկայի, կենդանու նմանութեան եւն.: Հետեւաբար նոյն բոյսն, ըստ առաւել աչքի ընկնող յատկութիւնների, կարող է ունենալ բազմաթիւ նոյնանիշներ:

Ինչպէս շատ լեզուներում, այնպէս էլ հայերէնում զգալի թիւ են կազմում կենդանիներին առնչուող բուսանունները, որոնց իմաստաբանական բազմաշերտ ստուգաբանութեան համար կարեւոր է նաեւ ազգագրական նիւթերի վերլուծութիւնը:

Ազգագրական նիւթերը ցոյց են տալիս, որ օգտակար վայրի բոյսերի անունները հիմնականում կազմւում են սիրուած ընտանի (գառ, եզ, մաքի, խոյ եւն.) եւ վայրի կենդանիների (եղնիկ, կաքաւ, արծիւ եւն.) անուններով: Անպէտք համարուող կամ վնասակար բոյսերին տրուել են բացասական վերաբերմունքի արժանացած ընտանի կամ վայրի կենդանիների (էշ, շուն, խոզ, գայլ, արջ, օձ եւն.) անուններ: Ինչպէս Թէոդիկն է գրում, «*ժողովրդեան ծանօթ անասուններ, թռչուններ եւ այլ իրենց կազմին զանազան մասերուն առերեւոյթ նմանութեամբ, կամ, նկարագրին հետ աղերսակի, այլ եւ այլ բուսոց եւ պտուկներու անուններ երեւան բերած են. ուրիշ խօսքով՝ ռամիկը հեգնութիւն խառնած է գործին մէջ, ինչ ինչ վայրի թուփեր ու միրգեր մկրտելու առթիւ… անձնիւր բառ յաճախ փոխաբերութիւն մըն է, տեսակ մը գովեստ կամ պարսաւ եւ կամ նմանակերպութիւն*»[1]: Իսկ Կարապետ Գաբիկեանն այս առիթով նշում է, որ «*ըստ ժողովրդային բուսաբանութեան, ամէն բոյս իր խպըլիկը-զայն կեղծողը, անոր միմոսը,*

[1] Թէոդիկ, «Որթն ու իր բերքը. այգեբանական եւ մատենագրական ուսումնասիրութիւն Թէոդիկէ», *Ամէնուն տարեցոյցը, 20րդ տարի*, Վենետիկ, Ս. Ղազար, 1926, էջ 91-92:

*ծաղրածուն ունի*», որոնք յաճախ կազմւում են կենդանու անունով կամ «սուտ» բառով[2]:

Հայերէնում զգալի թիւ են կազմում «գայլ» բառով բաղադրուած վայրի բոյսերի անունները: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ դրանք այն բոյսերն են, որոնց բացասական յատկութիւնները (թունաւոր, մակաբոյծ եւն.), նմանեցուել են այդ գազանի վնասակար բնոյթին: Զգալի թիւ են կազմում նաեւ այն բոյսերը, որոնց անուանումները կազմուել են գայլի մարմնի որեւէ մասին նմանեցնելով:

Ցաւօք, Հայոց Ցեղասպանութեան եւ հայ ժողովրդի տեղահանութեան հետեւանքով բոյսերի անուանումներում խառնաշփոթ կայ, որն այսօր հնարաւոր չէ յստակեցնել, քանի որ դրանց մասին յիշողութիւնն ու գիտելիքի փոխանցումը բռնի ձեւով ընդհատուել է: Յաճախ անհնար է նոյնիսկ ճշտել, թէ խօսքը ո՛ր բոյսի մասին է, քանի որ գրաւոր աղբիւրներում պահպանուել է միայն անուանումը: Բացի այդ, ՀՀ տարածքում դեռեւս գործածական բազմաթիւ վայրի բոյսերի ժողովրդական անուններ ուսումնասիրուած չեն, հետեւաբար յստակ չեն դրանց գիտական անուանումները: Այս երեւոյթն ակնյայտ է նաեւ «գայլ» բառով բաղադրուած մի շարք բոյսերի պարագայում:

## ԳԱՅԼԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Գայլը հայոց մէջ ունի գիշատիչ կենդանիների ընդհանրական, հաւաքական իմաստ («գէլ ու գազան», «շուն ու գէլ»)[3]: Ըստ մարդագայլի մասին աւանդազրոյցների, երբ մարդու վրայ գայլի մորթի էր ընկնում, նա ձեռք էր բերում գայլային յատկանիշներ[4]: Գայլի վերաբերեալ ժողովրդական պատկերացումների ամբողջական նկարագիրն արտացոլուել է նաեւ Յով-

---

[2] Կ. Գաբիկեան, *Հայ բուսաշխարհ*, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1968, էջ ԺԵ, 220-21:

[3] Մ. Աբեղեան, *Երկեր, հտր. Է*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 92. նաեւ՝ Ս. Յարութիւնեան, *Հայ հմայական եւ ժողովրդական աղօթքներ*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2006, էջ 349. նաեւ՝ Ս. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտր. 1*, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երեւան, 1944, էջ 411. նաեւ՝ Ա. Ամիրխանեան, Դաշտային ազգագրական նիւթեր (ԴԱՆ), Լօռու եւ Տաւուշի մարզեր, 2009-16:

[4] Ե. Լալայեան, «Նոր-Բայազէտի գաւառ», *Ազգագրական հանդէս,* Թիֆլիս, XVII:1908, էջ 117. նաեւ նոյնի՝ «Զաւախք», *Ազգագրական հանդէս,* Շուշի, Ա:1896, էջ 370-1. նաեւ նոյնի՝ «Վարանդա», *Ազգագրական հանդէս*, Թիֆլիս, Բ:1987, էջ 226-7:

հաննէս Թումանեանի «Գէլը» պատմուածքում («գիլիցն էլ վերը վնասակար գազան չլինի»)[5]:

Հայկական ժողովրդական հաւատալիքներում գայլի պաշտամունքն առանձնակի տեղ է գրաւում[6]: Ինչպէս թունաւոր կամ վտանգաւոր մի շարք կենդանիներ, գայլը եւս հայոց հաւատալիքներում երկակի բնոյթ ունի: Չար ուժերի եւ խաւարի հետ նոյնացուելուց բացի, գայլին վերագրւում են նաեւ մարդուն պաշտպանելու, պտղաբերութիւն եւ յաջողութիւն բերելու, բուժելու գործառոյթներ[7]:

Գայլի մասին բաւականին ուշագրաւ եւ երկակի բնոյթի տեղեկութիւններ կան Ամիրդովլաթ Ամասիացու *Բժշկարան*ում: Նա, յիշատակելով գայլի անդամների կիրառութիւնը բժշկութեան մէջ, անդրադառնում է նաեւ մի շարք հաւատալիքների: Ըստ նրա, գայլի յօշոտած ոչխարի բրդով հագուստը պաշտպանում է բորոտութիւնից, աչքը՝ ախտերից ու թոյներից, ատամը, մորթին՝ յաջողութիւն բերում: Եթէ գայլի գլուխը թաղեն մակաղատեղում, ոչխարը կը կոտորուի, եզան ախոռում կապած գայլի պոչը վանում է հենց գայլերին[8]:

Ժողովրդական հաւատալիքներում առանձնայատուկ տեղ ունեն գէլկապի աղօթքները, որոնք, գայլի հնագոյն պաշտամունքի արտացոլումը լինելուց բացի[9], ուղղակիօրէն առնչւում են հայ ժողովրդի տնտեսական կեանցաղում կարեւոր նշանակութիւն ունեցող անասնապահական մշակոյթին:

Յաջողակ, բախտաւոր մարդու մասին ասում էին, որ իր վրայ գայլի մազ է պահում[10], գայլի ճրագուն կիրառւում էր մոգութեան եւ հմայութեան

---

[5] Յովհաննէս Թումանեան, «Գէլը», *Ընտիր երկեր*, «Սովետական գրող» հրատ., Երեւան,1978, էջ 310-30:

[6] Ա. Պետրոսեան, «Գայլի պաշտամունքը հայ ժողովրդական հաւատալիքներում», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 2(68):1989, Երեւան, էջ 72-80:

[7] Ա. Պետրոսեան, էջ 73-6. նաեւ՝ Պ. Մոմճեան, «Այնթափի հայոց հին սովորութիւններ», *Արաքս պատկերազարդ հանդէս, գիրք Ա*, երկրորդ տարի, Յունիս, տպարան Ի. Ն. Սկորոխոդովի, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 53:

[8] *Ամիրդովլաթի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց*, ծանօթ.՝ Կ. Յ. Բասմաջեան, Մխիթարեան տպ., Վիեննա, էջ 112, 152-3, 586:

[9] Յարութիւնեան, էջ 348:

[10] Աղ. Մխիթարեանց, «Փշրանք Շիրակի ամբարներից», *Էմինեան ազգագրական ժողովածու,* հրատ.՝ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Ա:1901, էջ 197. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 1*, էջ 410:

նպատակներով, որը թերեւս արտացոլուել է «գայլի ճրագու քսել» դարձուածում[11]:

Տանտիկինները գայլի վէգ (ճան, կոճ) էին ունենում, որպէսզի կովի կաթն առատ լինէր[12], այն կիրառւում էր նաեւ գողացուած իրերը գտնելու եւ մեղաւորներին պատժելու համար[13]:

Դաշտային ազգագրական նիւթերը ցոյց են տալիս, որ այն հաւատալիքը, որ իրենց մօտ էգ գայլի սեռական անդամ պահողները յաջողակ են դառնում[14], յիշւում է մինչ օրս[15]:

Հայերէնում «գայլ» բառով կազմուած անձնանունների գոյութիւնը թերեւս բացատրւում է գայլի խելացի, խիզախ եւ խորամանկ լինելու յատկանիշերով (Գայլ, Գայլուկ, Գայլձագ եւն.):[16] Սպարապետ Վահան Մամիկոնեանին պարսիկները «չարաբարոյ» Գայլ Վահան էին անուանում. «*..սկսաւ Ասուր թշնամանել զՎահան, եւ գայլ կոչէր նմա: Եւ նա ասէ. Յիրաւի է անունդ ինձ. քանզի գամ կոտորեմ, երթամ եւ այլ գամ*»[17]:

Հայերէնում մեծ թիւ են կազմում նաեւ «գայլ» բառով կազմուած տեղանունները (Գայլեդրունք, Գայլատուք, Գայլոտի ծովակ, Գայլեձորոյ դուռ, Գայլոնց վանք եւն.)[18]: Վարագայ սարից բխող Գայլ գետի մասին Գ. Սրուանձտեանցի հաղորդած տեղեկութիւնը եւս բնորոշում է այդ գազանի մասին ժողովրդական պատկերացումները. «*ԹԷ՝ այնքան ահագին եւ անհուն է այս գետը, որ եթէ բացուի իւր ծածկոյթը՝ պիտի ջրասուզէ այդ բոլոր երկիրը... ԹԷ՝ ինչպէս երբեմն տեղ տեղ ծածկոյթը ծակուեր է եւ մարդ կամ անասուն անկէց ջուր խմած՝ երբեմն ալ լուացուած ժամանակ, ջուրը զի-*

---

[11] Պ. Բեդիրեան, *Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 275. նաեւ՝ Յովհաննէս Թումանեան, «Մարօն», *Ընտիր երկեր*, էջ 147:

[12] Լալայեան, «Նոր-Բայազէտի գաւառ», էջ 110. նաեւ՝ Ս. Մովսիսեան (Բենսէ), «Հարք (Մշոյ Բուլանըխ)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 3*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 52:

[13] Պետրոսեան, էջ 74. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, Շնող, 2012:

[14] Լալայեան, «Նոր-Բայազէտի գաւառ», էջ 110. նաեւ՝ Ե. Լալայեան, «Վասպուրական», *Ազգագրական հանդէս,* Թիֆլիս, XXVI:1916, էջ 202. նաեւ՝ Մովսիսեան (Բենսէ), էջ 52:

[15] Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2010-2014:

[16] Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հտր. 1*, Երեւանի պետական համալսարան, Երեւան, 1942, էջ 445:

[17] Յովհ. Մամիկոնեան, *Պատմութիւն Տարօնոյ*, տպ. Սուրբ Ղազար, Վենետիկ, 1889, էջ 34:

[18] Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտր. 1*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1986, էջ 780-2:

*րենք քաշեր կլլեր կամ խեղդեր. արդէն ասոնց համար է որ Գայլ գեր կ'ըսեն*»[19]:

«ԳԱՅԼ» ԲԱՌՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԱԾ ԲՈՅՍԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

«Գայլ» բառով բաղադրուած բոյսերի անունների քննութիւնը ցոյց է տալիս, որ դրանք արտացոլում են այս գազանի բնոյթին առնչուող պատկերացումները, ուստի հիմնականում ուտեստի համակարգում չկիրառուող, վնասակար եւ կամ թունաւոր բոյսեր են: «Իմալ կելն ա չար, ընպէս լը ուր խոտ» արտայայտութիւնը յիշտւում է մինչ օրս[20]: Բարկացած կամ մոլեգնած մարդու մասին ասում են, որ գայլի խոտ է կերել[21]: Ուշագրաւ է գայլաթաթ կոչուող բոյսերից մէկի նկարագրութիւնը. «*...թունաւոր, գետնին փռուած բոյս է, մօտը ուրիշ բոյս չի աճում, արմատներով կողքի բոյսերին խեղդում է*»[22]:

***Մշակովի բոյսերին առնչուող անուններ***

Մշակովի բոյսերի վայրի տեսակների անունները յաճախ կազմւում են մշակաբոյսի եւ որեւէ կենդանու անուններով: Այս պարագայում կենդանու անունը ցուցիչ է, որ բոյսը մշակաբոյսի վայրի տեսակ է:

Երկրագործ ժողովուրդները մշակաբոյսերին (երբեմն դրանց որեւէ օրգանին) նմանեցուած վայրի բոյսերի անունները եւս յաճախ կապում են կենդանիների հետ: Այս պարագայում կենդանու անունը ցոյց է տալիս, որ բոյսը պարզապէս նման է մշակաբոյսի, սակայն վայրի է, յաճախ նաեւ՝ ոչ պիտանի կամ թունաւոր:

**Գայլի խաղող.** Հայերէնում խաղողի որթին նմանեցուած (ըստ մագլցելու եւ փաթաթուելու յատկութեան, պտուղների ձեւի եւն.) մի շարք վայրի բոյսերի անուններ բաղադրուել են որեւէ կենդանու անունով եւ «խաղող» բառով: Այս առիթով Թէոդիկը նշում է, որ «*խաղողով բարդուած ամէն բառ որթաբերք չէ, ինչպէս ամէն փայլող՝ ոսկի չէ*», դրանք «*որթին պտուղին հետ ոչ մէկ կապ ունին, եւ կարծես սրտուեր կ'ածեն անոր համբաւին վրայ*»[23]:

«Գայլ» եւ «խաղող» բառերով կազմութիւններում «գայլ» բառն ունի տարբերակող նշանակութիւն եւ ցոյց է տալիս, որ բոյսը պարզապէս նման է խաղողի: Այդ բոյսերը հիմնականում ուտելի չեն, մի մասն անգամ թու-

[19] Գ. Սրուանձտեանց, *Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ*, տպ. Ե. Մ. Տնտեսեան, Կ. Պոլիս, էջ 112:
[20] Ամիրխանեան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Կաքաւաձոր, 2019:
[21] Գաբիկեան, էջ 37, 250:
[22] Ամիրխանեան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Նիգաւան, 2019:
[23] Թէոդիկ, էջ 91-92:

նաւոր է: Դրանցից է սեւ եւ կլոր պտուղներով թունաւոր, փաթաթուող եւ մագլցող բոյսը[24]:

Բացառութիւններից է ծորը (*Berberis vulgaris L.*), բարբարիս, կծոխուր), որը որոշ բարբառներում կոչւում է գայլի խաղող[25]: Ուշագրաւ է, որ գայլի (գալու) խաղող է կոչւում նաեւ փոքր գառնադմակիկը (*Sedum minus*, կոծիծ խոտ), մինչդեռ «գառ» եւ «դմակ» բառերով բաղադրուած անուններով բոյսերի վերաբերեալ պատկերացումները դրական են[26]: Գառնադմակիկի գալու խաղող անուանումը պայմանաւորուած է այն բանով, որ «*...մանր, ազոխի պէս կանաչախառն-կարմիր տերեւները թութի հատերու պէս մի մի խմբուած կը ծածկեն լերկ ժայռերը*»[27], հետեւաբար ունի կեղծ խաղողի իմաստ:

**Կյուլի/կէլի թուզ (թոզ).** Վայրի թուզն է, որն ուտելու համար պիտանի չէ[28]:

**Գալու տանձ.** Զրուանդը (*Aristolochia L.*, գոմշուկ, որդնտակ, սղանգ, կովուկ) գարշահոտ եւ թունաւոր բոյս է, որն ունի տանձաձեւ պտուղներ, այդ իսկ պատճառով կոչւում է նաեւ գալու տանձ[29]:

**Գայլախնձոր**. Դափնեակը (*Daphne L.*, գայլահատ, գայլխոտ) թունաւոր է, ուստի նրա կլոր պտուղները կոչւում են գայլախնձոր[30]:

### *Վայրի ուտելի բոյսերին առնչուող անուններ*

Որոշ վայրի ուտելի բոյսերի անորակ համարուող տեսակների, կամ դրանց նման բոյսերի անունները եւս բաղադրւում են «գայլ» բառով:

**Կէլի մասուր.** Մասրենու (*Rosa L.*) տեսակ է, որն ունի դառնահամ պտուղներ[31]:

**Գայլաբոխ (*Prangos lindl*)[32].** Թերեւս բոխու (*Hippomarathrum sp.*) ոչ ուտելի տեսակներից է կամ նման է դրան: Հայերէնի բարբառներում յայտ-

---

[24] Ամիրխանեան, ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, Գլաձոր, 2019:

[25] Գաբիկեան, էջ 36:

[26] Ա. Ամիրխանեան, «Գառ եւ դմակ արմատներով բուսանուններ», *Ջահուկեանական ընթերցումներ, գիտական յօդուածների ժողովածու*, «Ասողիկ» հրատ., Երեւան, 2016, էջ 6-13:

[27] Գաբիկեան, էջ 36, 39:

[28] Ամիրխանեան, ԴԱՆ, Սիւնիքի մարզ, Քարահունջ, Հալիձոր, 2021, Շինուհայր, 2022:

[29] Գաբիկեան, էջ 37:

[30] Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու*, հրատ.՝ Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, Թ:1913, էջ 218:

[31] Ամիրխանեան, ԴԱՆ, Սիւնիքի մարզ, Բռնակոթ, 2021:

նի է գէլու բոխ, գէլի բոխի, կէլաբոխ, գէլաբոխի, կէլի պեխի, կէլու պոխի, կիւլի/կիլի պեքի, կիւլուպէքի ձեւերով[33]: Վատ մարդկանց համար ասում էին՝ տառը (դառը) կէլապոխի է[34]:

**Կէլի սոյ.** Բլդրղանի (*Heracleum L.*) նման բոյս է, որի չափազանց դառը տեսակը կոչւում է գ/կէլի սոյ:

**Կիլի պանջար (եղինջ).** Սիւնիքում եղինջը (*Urtika dioica L.*) կոչւում է բանջար, իսկ վերջինիս նման բոյսը՝ կիլի/գայլի բանջար[35], որը նշանակում է կեղծ, սուտ բանջար:

**Գալու բանջար.** Թերեւս այսպէս է կոչուել ուտեստի համակարգում կիրառուող սպիտակ բանջարին (Ornithogalum hajastanum Agapova, կարեկ, Մարիամ Աստվածածնի բանջար, տոնի բանջար)[36]:

***Թունաւոր բոյսեր***

**Մոլեխինդ (***Cicuta L.***,** խնդամոլի, խնդակոթ**).** Տհաճ հոտով բոյս է, որից պատրաստուած թոյնը կիրառուել է հնագոյն ժամանակներից[37]: Մովսէս Խորենացին Տրդատ թագաւորին թունաւորելու մասին գրում է. «*Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն, եւ կամ թէ զմերն իսկ ասել, կատաղեալ Եբրայեցիքն ըմպելի լեղեաւ խառնեալ Աստուծոյ մերոյ*»[38]: Մաղադանոսին (*Petroselinum Hoffm*) նման լինելու պատճառով մոլեխինդը կոչւում է նաեւ գալու մաղադանոս[39], այսինքն՝ կեղծ, սուտ, թունաւոր մաղադանոս:

**Դափնեակ (***Daphne L.***,** անտառի եասաման, կակղենի, կատվենիկ, մազարիոն, տերեւատ**).** Ունի տհաճ հոտ եւ ամբողջութեամբ թունաւոր է:

---

[32] Ղ. Ալիշան, *Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն*, Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 107. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 1,* էջ 410:

[33] Ամիրխանեան, ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, 2019-20, Սիւնիքի մարզ, 2021-22:

[34] Ա. Վարդանեան, *Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները*, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի հրատ., Երեւան, 2022, էջ 39:

[35] Ամիրխանեան, ԴԱՆ, Սիւնիքի մարզ, Խոտ, 2022:

[36] Գաբիկեան, էջ 45:

[37] Հ. Սեպետճեան, «Հայաստանում աճող մոլեխինդը», *Бюллетень ботанического сада*, отв. ред. Т. Катарян (Տեղեկագիր բուսաբանական այգու, պատ. խմբ.՝ Տ. Կատարեան), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1948, էջ 63:

[38] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց*, II, ՂԲ, աշխ.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, Տփղիս, 1913, (նմանահանութիւն՝ ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1991, լրաց.՝ Ա. Բ. Սարգսեան), էջ 247:

[39] Գաբիկեան, էջ 44:

Թունաւորումն առաջանում է նոյնիսկ բոյսի հոտից, կոչւում է նաեւ գայլահատ մահացու[40]:

**Մորմ** (*Solanum L.*, շան լոլիկ, շան հաղող). Կոչւում է նաեւ գալու պլտիկ[41]:

**Իշակաթնուկ** (*Euphorbia L.*, կաղանչան, ափարբի). Պարունակում է այրուածքներ ու խոցեր առաջացնող կաթնանման թունաւոր հիւթ, որը կոչւում է գայլի կաթ կամ օձի կաթ[42]:

**Արջընկոյզ** (*Datura L.*, փուշ խնծոր). Թունաւոր լինելուց բացի, նաեւ թմրեցնող է ու գարշահոտ, խոշոր լինելու համար պտուղը նմանեցուել է ընկոյզի[43]: Կոչւում է նաեւ գայլընկոյզ[44]:

**Մկնսոխ** (*Scilla L.*, բծիծ)[45]. Կապոյտ ծաղիկներով, սոխուկաւոր բոյս է, կոչւում է նաեւ գայլասխտոր՝ այսինքն վայրի, կեղծ կամ թունաւոր սխտոր: Հաւատում էին, որ դռան վերեւում դրուած այս բոյսի սոխուկները կանխում են վնասակար եւ թունաւոր կենդանիների մուտքը: Սոխուկի կեղեւը տրորող մարդն, ըստ հաւատալիքի, կաղ էր դառնում, իսկ տերեւը տրորող գայլը՝ սատկում: Բոյսը նաեւ մկնասոխ է կոչւում, քանի որ մկներն այն ուտելով սատկում են[46]:

Յայտնի է, որ սոխը եւ սխտորը համարւում են չարխափան բոյսեր, որոնցով մարդը պաշտպանուել է չար ուժերից[47]: Հետեւաբար գայլասխտո-

---

[40] Ա. Թորոսեան, *Հայաստանի դեղաբոյսերը*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1983, էջ 44, 46:

[41] Գաբիկեան, էջ 36, 37:

[42] Ռ. Ղազարեան, *Բուսանունների հայերէն-լատիներէն, ռուսերէն-անգլերէն, ֆրանսերէն-գերմաներէն բառարան*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1981, էջ 36. նաեւ՝ *Հայաստանի բնաշխարհ. հանրագիտարան*, խմբ. Յ. Այվազեան, «Տիգրան Մեծ» հրատ., Երեւան, 2006, էջ 251:

[43] Ալիշան, էջ 62. նաեւ՝ Գաբիկեան, էջ 20:

[44] Ղազարեան, էջ 20:

[45] Ալիշան, էջ 93, 107. նաեւ՝ А. Ролловъ, Дикорастущія растенія Кавказа, ихъ распространеніе, свойства и примъненіе (Ա. Ռոլլով, Կովկասի վայրի բոյսերը. դրանց տարածուածութիւնը, յատկութիւններն ու կիրառութիւնը), տպ. Կոզլովսկու, Թիֆլիս, 1908, էջ 459:

[46] Ալիշան, էջ 94:

[47] Յ. Ալլահվերտեան, *Ուլնիա կամ Ձէյթուն. լեռնային աւան ի Կիլիկիա. նկարագիր տեղական, կենսական, բանասիրական եւ լեզուագիտական կողմից*, տպարան Պաղտատլեան, Կ. Պոլիս, 1884, էջ 103, 106. նաեւ՝ Ս. Անդրէասեան, «Ազգագրական. սնոտիապաշտութիւններ», *Բիւրակն*, ԺԷ տարի, թիւ 44, 3 Նոյեմբեր 1899, էջ 697. նաեւ՝ Ն. Տ. Մ., «Սիւրիհիսարցի կինը (հիւանդութիւն եւ բժշկութիւն)», *Բիւրակն*, թիւ 2, ԺԸ տարի, 18 Յունուար 1900, էջ 22. նաեւ՝ Ա. Հոլասար,

րի չարխափան լինելը թերեւս բացատրելի է բոյսի սոխուկով, ինչպէս նաեւ թունաւոր լինելով:

**Վարդապետիկ (***Muscari Mill*, պապկեբլոր**).** Մկնսոխին նման, սոխուկաւոր եւ տհաճ հոտով բոյս է, այդ իսկ պատճառով կոչւում է նաեւ գալու սխտոր, գալու թստիկ կամ գալու թիս: Գոյութիւն ունեն այս բոյսի բազմաթիւ տեսակներ[48]:

**Գայլի պուտ (***Papaver somniferum L.*, կէլի տուպ). Որոշ բարբառներում կակաչը (*Papaver L.*) կոչւում է պուտ կամ տուպ (տոպ), իսկ շշմեցնող եւ թունաւոր տեսակը՝ խաշխաշ կամ կէլու/ի պուտ[49]:

***Փաթաթուող բոյսեր***

Մի շարք վայրի բոյսեր, փաթաթուելով այլ բոյսերի, խաթարում են դրանց բնականոն աճը: Այս երեւոյթը նմանեցուել է գայլի խեղդող յատկութեանը՝ սահմանելով բոյսի անունը:

**Գաղձ (***Cuscuta L.*, գոճմորու, ծտաճինճի, քշութ, աւթիմոն**)[50].** Կոչւում է նաեւ գայլ խոտ[51], գէլուկ (կիլուկ)[52], գայլուկ[53]: Թունաւոր լինելուց բացի նաեւ մակաբոյծ է: «*Պատառաբոյծ փունկ մըն է, թէլ-թէլ կը փաթթուի առուոյտին, կորնգանին, երիժնակին վրայ, ծծակներով կը կառչի եւ կծծէ իրեն պէտք եղած սնունդը անոնցմէ եւ կը չորցունէ զանոնք*»[54]:

Գաղձը փաթաթում է նաեւ խաղողի որթին, այդ իսկ պատճառով կոչւում է նաեւ այգու գայլ[55], քանի որ հայերէնում «այգի» բառը նշանակել է խաղողի որթ եւ խաղողի այգի, յետագայում՝ ընդհանրապէս այգի[56]:

---

«Ազգագրական. նախապաշարումներ Իւնիէի», *Բիւրակն*, թիւ 31, ԺԸ, 1 Օգոստոս 1900, էջ 476. նաեւ՝ Լալայեան, «Վասպուրական», էջ 201:

[48] Գաբիկեան, էջ 36, 37:

[49] Ամիրխանեան, ԴԱՆ, Սիւնիքի մարզ, Բռնակոթ, Անգեղակոթ, Շաղաթ, Սառնակունք, Տոլորս, 2021, Վերիշէն, Տեղ, 2022:

[50] Թորոսեան, էջ 41:

[51] Ամիրդովլաթ Ամասիացի, էջ 106, 110. նաեւ՝ Յ. Գայայեան (Մխիթար Պոնտացի), *Բառարան գանձարան հայերէն լեզուի*, տպ. Գալֆա Գահիրէ, 1938, էջ 78:

[52] Թորոսեան, էջ 41. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Կաքաւաձոր 2019, Վայոց ձորի մարզ, Գլաձոր, 2019, Աղաւնաձոր, 2021:

[53] Ա. Յարութիւնեան, Տարօնի ազգագրական նիւթեր, 1960-1962 թթ., ՀԱԻ արխիւ, Գործ N 69, էջ 185. նաեւ՝ Ղազարեան, էջ 19. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Տաւուշի մարզ, Կողբ, 2018, Կոտայքի մարզ, Բուժական, 2019, Շիրակի մարզ, Վահրամաբերդ, 2021:

[54] Յ. Արթինեան, *Տունկերը եւ անոնց հայերէն անունները*, տպ. Տ. Տօղրամաճեան, Փարիզ, 1906, էջ 42:

[55] Ամիրդովլաթ Ամասիացի, էջ 599. նաեւ՝ Թէոդիկ, էջ 63:

**Գայլուկ (***Humulus lupulus L.*, հմուլ, դրոժի թուփ, հիւսիսայգի, ջղլաբատ)[57]. Փաթաթւում է ծառերին ու թփերին, որի հետեւանքով դրանք չորանում են: Գայլուկը նաեւ թունաւորումներ է առաջացնում, այն հաւաքողները սրտի ցաւեր, ջերմութիւն եւ այլ խանգարումներ են ունենում[58]: Գայլին առնչուող եզակի բոյսերից է, որը կիրառում են ուտեստի համակարգում, մասնաւորապէս մատղաշ ընձիւղները տապակում են[59]: Բոյսը մեծ կիրառութիւն ունի հացի եւ յատկապէս գարեջրի արտադրութեան մէջ[60]:

***Անարժէք համարուող բոյսեր եւ բուսական ծագման նիւթեր***

**Գալու բամպոս.** Հիրիկի (*Iris L.*, բամպոս) դժգոյն՝ դեղին եւ անշուք համարուող տեսակն է[61]:

**Գալու ցնծաղիկ** (*Ornithogalum umbellatum*). Յիշատակւում է որպէս ձնծաղկի նման, բայց անհրապոյր ծաղիկ[62]:

**Գէլկակաչ** (գայլ կակաչ). Թերեւս կակաչին (*Papaver L.*) նմանեցուած ծաղիկ է, կամ էլ դրա անշուք տեսակներից (վայրի անորոշ ծաղիկ)[63]:

**Գալու խէժ.** Գազ (*Astragalus L.*) կոչուող բոյսերի սպիտակ խէժը համարւում է արժէքաւոր, իսկ դեղնագոյնը՝ անորակ[64]: Գալու խէժ ասելով թերեւս նկատի են ունեցել ցածրորակ համարուող դեղնագոյն տեսակը:

***Գայլ-բոյս ուղղակի առնչութեամբ պայմանաւորուած անուններ***

Այն բոյսերն են, որոնք, ըստ հաւատալիքների, ազդում են այդ գազանի վրայ:

**Գէլվժենի.** Ծառը գայլերի համար համարւում է թունաւոր[65]:

---

[56] Գ. Ջահուկեան, *Հայերէն սփռգաբանական բառարան*, «Ասողիկ» հրատ., Երեւան, 2010, էջ 48:

[57] Թորոսեան, էջ 46:

[58] Նոյն, էջ 51:

[59] Ա. Սարուխանեան, «Գայլուկ (սարմաշուղ, շարմաշուղ)», *Գիւղատնտես*, 40:1910, Թիֆլիս, էջ 599. նաեւ՝ Ս. Զելինսկի, «Բոյսերի գործածութիւնը Երեւանի նահանգում, վայրենի բոյսերի գործածութիւնը», *Ազգագրական հանդէս*, Դ(2):1898, Թիֆլիս, էջ 186. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Տաւուշի մարզ, Գանձաքար, Այգեձոր, Այգեհովիտ, 2015, Սիւնիքի մարզ, Գեղանուշ, 2022:

[60] Թորոսեան, էջ 51-52:

[61] Գաբիկեան, էջ 35, 132:

[62] Նոյն, էջ 36:

[63] Մովսիսեան (Բենսէ), էջ 71. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 1*, էջ 411. նաեւ՝ Աճառեան, «Հայերէն գաւառական բառարան», էջ 218. նաեւ՝ Յարութիւնեան, Տարօնի ազգագրական նիւթեր, էջ 8:

[64] Գաբիկեան, էջ 35-6. նաեւ՝ Ս. Յակոբեան, *Հայկական բնաշխարհի դեղաբոյսերը*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1975, էջ 40:

**Ղանձլամեր** (*Helleborus L.*).[66] Թերեւս չափազանց թունաւոր լինելն ընդգծելու համար կոչւում է նաեւ գայլ սպանող[67]:

***Գայլի որեւէ օրգանին նմանեցուած բոյսերի անուններ***

Մի շարք բոյսերի անուններ կազմուել են գայլի օրգաններին, յատկապէս նրա ականջին կամ թաթին նմանեցնելով[68]: Բացի նշուած նմանութիւնից, այդ բոյսերի մեծ մասն ունի նաեւ բացասական յատկութիւններ:

**Գորտնուկ** (*Ranunculus L.*, հրանունկ, իւղածաղիկ, ոսկի ծաղիկ, խարածաղիկ, վիճակի ծաղիկ). Վառ դեղին ծաղիկներով թունաւոր բոյս է, որի եռաբլթակ տերեւները գայլի թաթի նմանեցնելու համար կոչւում են նաեւ գալու թեթիկ կամ գալու տոտիկ: Կոչւում է նաեւ խարածաղիկ, քանի որ ծաղկաթերթիկները մաշկի վրայ «խարան կը բանան»: Վիճակի ծաղիկ եւ համբարձման տօնին աղջիկները վիճակի փարչը զարդարում են այդ ծաղիկով[69]:

**Արծաթախոտ (***Alchemilla L.***).** Կոչւում է նաեւ գայլաթաթ[70], քանի որ տերեւները նմանեցուել են գայլի թաթերին:

**Զրուանդ (***Aristolochia L.***).** Տերեւները գայլի ականջի նմանեցնելու համար կոչւում է նաեւ գալու ականջ (գէլու ակնջիկ)[71]:

**Կնքաբոյս (***Tamus L.***).** Փաթաթուող բոյս է, որի տերեւները թերեւս նմանեցուել են գայլի ականջի, դրա համար էլ կոչւում է նաեւ գայլի ականջ[72]:

**Գալու վիզ**. Մակաբոյծ, աղբերանց արիւն (*Orobanche L.*, եղբայրարիւն) ծաղկի հասարակ, անշուք տեսակ է, ունի աղուամազերով ծածկուած ամուր ցողուն[73], որը նմանեցուել է գայլի վզին: Իդէպ, «գալու վիզ է դար-

---

[65] Վ. Պետոյեան, *Սասնայ ազգագրութիւնը*, ԵՊՀ «Ռոմայոր» տպագրական մեքենայի ցեխ, Երեւան, 1965, էջ 95:

[66] Հ. Սեպետճեան, «Ի՞նչ բոյս է 'վրացի կոճը'», Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հայ բժշկութեան եւ բիոլոգիայի պատմութեան սեկտոր, *Աշխատութիւններ*, 2:1949, Երեւան, էջ 132:

[67] Ամիրդովլաթ Ամասիացի, էջ 211:

[68] Ալիշան, էջ 107, 111. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2009-2013:

[69] Գաբիկեան, էջ 36, 37, 83, 127, 227-28:

[70] Ղազարեան, էջ 19:

[71] Ալիշան, էջ 107. նաեւ՝ Աճառեան, «Հայերէն գաւառական բառարան», էջ 218. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 1*, էջ 411. նաեւ՝ Գաբիկեան, էջ 35, 43. նաեւ՝ Գ. Սրուանձտեանց, *Երկեր, հտր. 1*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 353:

[72] Ղազարեան, էջ 50:

[73] Գաբիկեան, էջ 37:

ձել» դարձուածը վերաբերում է գիրացած, շահամոլ, ինչպէս նաեւ վիզը բռնուած մարդկանց[74]:

ՍՆԿԵՐ

Հայոց ուտեստի համակարգում սունկը համարւում է վնասակար եւ վտանգաւոր, այդ իսկ պատճառով այն աւանդաբար չնչին կիրառութիւն է ունեցել: Միջնադարեան բժշկարանները նոյնպէս սունկը համարում են «պիղծ եւ սպանող», որը «վնասակար է, չէ պարտ ուտել», ուստի նաեւ խորհուրդներ կան, թէ սնկից յետոյ ինչ ուտեն[75]:

Սնկի նկատմամբ գոյութիւն ունեցող բացասական վերաբերմունքը թերեւս բացատրւում է ոչ միայն վտանգաւոր լինելու, այլեւ աղտոտ տեղերում՝ փտած բոյսերի մնացորդների, գոմաղբի վրայ աճելու հանգամանքով[76], այդ իսկ պատճառով համարւում է նաեւ գաղտասէր[77]:

Աշխարհի շատ ժողովուրդների հաւատալիքներում սունկը պտղաբերութեան, առատութեան խորհրդանիշ է, անգամ նոյնացւում է երեխաների հետ[78], սակայն, միեւնոյն ժամանակ, կապւում է նաեւ մահուան հետ: Այդ հակադրութիւնը տեսնում ենք նաեւ հայերէնում՝ բարգաւաճում, ծնունդ, զարգացում, ժառանգ, ինչպէս նաեւ դատարկ, փուչ, բնաջնջում իմաստներով: Այսպէս, «սնկի պէս բուսնել»՝ նշանակում է արագ բազմանալ[79]: «Սունկ աշխարհ գցել» դարձուածը նշանակել է սերունդ թողնել, որդիներ ունենալ[80]: «Սունկ ըլնի տունդ»[81], «հօրդ տանը սոկոն դուրս գա»[82]

---

[74] Գաբիկեան, *Բառգիրք սեբաստիահայ գաւառաբեզուի*, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1952, էջ 129:

[75] Ալիշան, էջ 577:

[76] Ստեփանոս Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, *հտր. 4*, Հյկ. ՍՍՌ հրատ., Երեւան էջ 248:

[77] Գայայեան, էջ 454:

[78] В. Топоров, Семантика мифологических представлений о грибах, Balkanistika, Лингвинистические иследование (Վ. Տոպորով, Սնկերի մասին դիցաբանական պատկերացումների իմաստաբանութիւնը), Balkanistika, լեզուաբանական հետազօտութիւններ, տպ. «Նաուկա», Մոսկուա, էջ 258, 297:

[79] Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2009-2014:

[80] Մալխասեանց, *հտր. 4*, էջ 248. նաեւ նոյնի՝ *Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. 5*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2008, էջ 406:

[81] Տ. Նաւասարդեանց, *Բառգիրք Արարատեան բարբառի*, տպարան Մովսէս Վարդանեանցի, Տփխիս, 1903, էջ 108:

[82] Ե. Լալայեան, «Բորչալուի գաւառ», *Ազգագրական հանդէս,* Թիֆլիս, XI:1904, էջ 122. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Տաւուշի մարզ, Աչաջուր, 2015:

անէծքները, «սունկ անել» դարձուածը նշանակել են հիմնայատակ լինել, բնաջնջուել, «սունկ լինել»՝ փչանալ, աւերուել[83]:

Հայոց ուտեստի համակարգում չնչին գործածութեան պատճառով ընդունուած է սունկ ընդհանրական անունը[84]: Ուտելի սնկերի սակաւաթիւ անուններից ամենից լայն տարածում ունեցողներն առնչւում են գառանը կամ ոչխարին՝ գառան դմակ եւ ոչխարասոկոն (*Agaricus arvensis*)[85]: Ընդհակառակը, ոչ պիտանի համարուող, վնասակար կամ թունաւոր սնկերի անունները կապւում են որեւէ գազանի անուան հետ, ինչպէս օրինակ, գայլի սունկ, օձի սունկ,[86] աղուէսի սունկ, արջի սունկ[87] եւն.՝ թերեւս ընդգծելով դրանց վնասակարութիւնը:

Սնկերն ամենից շատ աղերսուել են չափազանց վտանգաւոր գիշատչի՝ գայլի հետ, ուստի ոչ ուտելի բոլոր սնկերի համար մեծ տարածում ունի նաեւ գայլասունկ[88] (գիլասոկոն, գէլի սունկ, կէլու սունկ, կէլի սունգ, կյուլու սոնգուն)[89] ընդհանրական անուանումը:

Յիշեալ սնկերից կարող ենք առանձնացնել ժողովրդական բժշկութեան մէջ կիրառուող անձրեւասունկը (Lycoperdon)[90], որի փոշին գործածել են այրուածքների, վէրքերի, կտրուածքների բուժման համար[91]:

---

[83] Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, տպարան մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1912, էջ 597. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 4*, էջ 248:

[84] Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2009-2014, Տաւուշի մարզ, 2015-2016, Արագածոտնի մարզ, 2019, Վայոց ձորի մարզ, 2018-2019, Սիւնիքի մարզ, 2021-2022:

[85] С. Нанагюлян, Шляпочные грибы Армении (агарикоидные базидиомицеты), Ս. Նանագիւլեան, Հայաստանի գլխարկաւոր սնկերը (ագարիկոիդ բազիդիոմիցէտներ), Երեւան, էջ 12, 61. նաեւ՝ *Հայաստանի բնաշխարհ. հանրագիտարան*, էջ 302. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2009-2016, Տաւուշի մարզ, 2018, Կոտայքի մարզ, 2019, Սիւնիքի մարզ, 2021-22:

[86] Յ. Սարգիսեան (Ալեւոր), *Բալու (իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը)*, տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1932, էջ 191. նաեւ՝ Ս. եւ Վ. Սանասարեաններ, *Կարնոյ նահանգի ազգագրական նիւթեր*, 1965, ՀԱԻ արխիւ, Գործ N 121, էջ 40:

[87] Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2009-14:

[88] Սանասարեաններ, էջ 40. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Արագածոտնի մարզ, Նիգաւան, 2019:

[89] Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2009-14, Սիւնիքի մարզ, Սառնակունք, Անգեղակոթ, Տոլորս, 2021, Խնձորեսկ, Գեղանուշ, 2022:

[90] Ղազարեան, էջ 9:

[91] Մալխասեանց, *հտր. 1*, էջ 411. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ, 2019, Արագածոտնի մարզ, Ափնա, 2019, Կոտայքի մարզ, Բուժական, 2021, Սիւնիքի մարզ, Շաղաթ, Սառնակունք, Տոլորս, 2021, Տեղ, Խոտ, 2022:

Հայերէնի բարբառներում այս սունկը յայտնի է գիլիփստուկ[92], սատանի սունկ[93], գայլասունկ[94], գէլի ստուկ[95], գիլի/կյուլի/կէլի թիս/թես[96], փստփստիկ[97], կ/գէլի թեստ[98], գիլու փստիկ[99], կէլափստի[100], կյուլի սոնգուն[101], գէլի թստիկ[102], փոշեսունկ, գայլափուք[103] անուններով, քանի որ չորանալուց յետոյ միջից տհաճ հոտով փոշի է դուրս գալիս[104]: Նորայր Բիւզանդացին յիշատակում է որպէս գարշահոտ սունկ[105]: Նոր դուրս եկած ժամանակ անձրեւասունկը որոշ բարբառներում կոչւում է գէլի պանիր, քանի որ սպիտակ է եւ գնդաձեւ[106]: Նշենք, որ ռուսերէնի բարբառներում այս սունկը կոչւում է նաեւ “порховка, пухавка, пылевик, дедушкин или волчий табак, чертова тавлинка, медвежий дым, медвежий табак”[107] (թռչող, բմբուլ, փոշեհան, պապի կամ գայլի ծխախոտ, սատանի բռնոթի, արջի ծուխ, արջի ծխախոտ):

Գայլի վերաբերեալ հայոց պատկերացումներն արտացոլուել են նաեւ սնկերին առնչուող հանելուկներում: Սնկին եւ գայլին վերագրելով նոյնպի-

---

[92] Ամատունի, էջ 133. նաեւ՝ Ղազարեան, էջ 9:

[93] Ամատունի, էջ 133. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 4*, էջ 189:

[94] Մալխասեանց, *հտր. 1*, էջ 411:

[95] Գ. Ստեփանեան, Սեւանի շրջանի Դդմաշէն գիւղի ազգագրական նիւթեր, 1978, ՀԱԻ արխիւ, Գործ N 25, էջ 76:

[96] Մալխասեանց, *հտր. 1*, էջ 410. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու եւ Տաւուշի մարզեր, 2009-14, Սիւնիքի մարզ, Խնձորեսկ, Խնաճախ, Բռնակոթ, Տոլորս, 2021:

[97] Ամիրխանեան, ԴԱՆ, Վայոց ձորի մարզ, Չիւա, 2019:

[98] Նոյն, Վայոց ձորի մարզ, Գետափ, 2019, Սիւնիքի մարզ, Անգեղակոթ, Շաղաթ, Սառնակունք, 2021:

[99] Նոյն, Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ, 2019, Արագածոտնի մարզ, Բիւրական, Ափնա, 2019, Կոտայքի մարզ, Բուժական, 2021:

[100] Նոյն, Վայոց ձորի մարզ, Ռինդ, 2019:

[101] Նոյն, Սիւնիքի մարզ, Խնձորեսկ, 2021:

[102] Նոյն, Կոտայքի մարզ, Բուժական, 2021:

[103] Ղազարեան, էջ 9:

[104] Ամատունի, էջ 133. նաեւ՝ Մալխասեանց, *հտր. 1*, էջ 411. նաեւ՝ Ստեփանեան, էջ 76. նաեւ՝ Ամիրխանեան, ԴԱՆ, Լօռու մարզ, 2008-14:

[105] Ն. Բիւզանդացի, *Քննադատութիւն հայբուսակի*, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1925, էջ 172:

[106] Ամիրխանեան, ԴԱՆ, Սիւնիքի մարզ, Ոյծ, Լեռնաշէն, 2022:

[107] В. Колосова, “Медвежьи” растения в восточнославянских языках (Վ. Կոլոսովա, «Արջ» բառով կազմուած բոյսեր արեւելասլաւոնական լեզուներում), էջ 4 https://www.researchgate.net/publication/274392098_Medvezi_rastenia_v_vostocnoslavanskih_azykah; https://www.youtube.com/watch?v=S87d5_MNdbY; https://www.youtube.com/watch?v=7SPsE4Et2Ko.

սի՝ վտանգաւոր յատկանիշներ, հանելուկներում դրանք դրսեւորւում են որպէս համապատասխան, համարժէք եւ նոյնական:

Բունկալ, բունկալ, մի ոտն ունի,
Մի' ելնա դուրս, գէլ կտանի[108]:
Մէկ ոտանի, մի գլխանի,
Ծնուելուց յետոյ գայլ կը տանի:
Մի սընանի, հազար տիտկանի,
Դուս մի գալ, գէլ կը տանի[109]:

Ամփոփելով նշենք, որ գրաւոր աղբիւրների եւ դաշտային ազգագրական նիւթերի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այն բոյսերն ու սնկերը, որոնց անունները բաղադրուած են «գայլ» բառով, հիմնականում թունաւոր են, ոչ-պիտանի կամ վնասակար: Յաճախ այդ բոյսերը միաժամանակ կարող են լինել ոչ միայն թունաւոր, այլեւ մակաբոյծ, գարշահոտ, փաթաթուող-խեղդող եւն., որոնք, ըստ ժողովրդական մտածողութեան, համարժէք են գայլի բնոյթին:

## COMPOUND NAMES OF PLANTS WITH THE ROOTWORD 'WOLF'

(Summary)

ANJELA AMIRKHANYAN
anjela.nersisyan.1969@mail.ru

The paper examines the usage of the root word 'wolf' in naming plants with certain characteristics and a certain nature.

The author observes that several compound names of plants in the Armenian language are formed with the root word 'wolf'. A study of these names indicates that this usage reflects the perception of 'wolf' in folk culture. As a dangerous animal, wolves were associated with negativity, evil spirits, demons and darkness. Consequently, parasitic plants and those that are not edible and/or poisonous or have an unpleasant odor have the root word 'wolf' in their naming. Furthermore, some plants have been likened to some organs of the wolf, to its paws and eyes, for example. Still, other plants which are not edible but deceive the viewer with their similarities to some other edible plant bear compound names with the root word 'wolf'.

Interestingly, though mushrooms were not widely used in Armenian traditional food, those which are inedible or poisonous include the root word 'wolf' in their names.

---

[108] Սրուանձտեանց, *հտր. 1*, էջ 612:

[109] Ս. Յարութիւնեան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1968, էջ 53:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԵՍԱՊԻ ԲԱՐԲԱՌԻ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

**ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ**
hagopcholakian@hotmail.com

ՄՈՒՏՔ

Յօդուածին նպատակն է Քեսապի հարիւրաւոր բուսանուններն ու պտղանունները ներկայացնել ըստ ծագման եւ կազմութեան, այսինքն՝ խմբաւորել բառերը բնիկ հայերէն, արաբերէն, թրքերէն եւ բարբառային բառաշարքերու մէջ, իսկ ըստ կազմութեան՝ բարբառային բառերը ներկայացնել պարզ ածանցաւոր ու բարդ բառերու խմբաւորումներով: Ասիկա զուտ բարբառագիտական բնոյթ ունի եւ, կը կարծենք, նպաստ մը կը բերէ բարբառային համահաւաք բառարաններու յետագայ կազմութիւններուն, տրուած ըլլալով, որ եղածներուն մէջ գրեթէ կը բացակային Քեսապի բարբառին վերաբերող տուեալները[1]: Հոս բոյսերը չեն ներկայացուիր իրենց բուսական ամբողջական յատկանիշերով՝ նկար, գիտական անուանում, աճման վայր ու եղանակ, տեսակ, գլխաւոր յատկանիշեր ու գործառոյթներ: Բաւարարուած ենք ընդհանուր բացատրութեամբ մը կամ, եթէ ունի՝ տուած ենք հայերէն հոմանիշը:

ՔԵՍԱՊԻ ՇՐՋԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հարուստ է Քեսապի բուսական աշխարհը: Ամբողջ տարին գետինները ունին կանաչ ծածկոյթ, ամէն տեղ կ'երեւին խիտ անտառներ ու թփուտներ, ոմանք՝ մշտադալար: Մէկ երկու տարին ալ կը բաւէ, որ հերկի չենթարկուած արտերը թփուտներու վերածուին: Քեսապի մէջ գիւղացիին ամենէն մեծ աշխատանքը եղած է մշակելի նոր գետիններ բանալը ու անդադար պայքարիլը վայրի բուսականութեան դէմ:

Միօրինակ չէ Քեսապի մակերեւոյթը, ծովամերձ տարածութիւններէն քիչ վեր կը խոյանան բարձրաբերձ լեռնագօտիները, ձորերն ու սարահարթերը: Շատ բոյսեր յատուկ են միայն որոշ շրջանի մը, նոյնիսկ այնքան նեղ, որքան սովորական սենեակի մը տարածութիւնը: Խօսելով բոյսերու մասին գիւղացին անմիջապէս կը նշէ, թէ ուր կ'ըլլայ այդ բոյսը, երբ կ'աճի՝ ինչով տարբեր է նոյն ընտանիքին պատկանող տարբեր բոյսերէ, ինչ յատկանիշեր ունի:

Լիովին տարբեր է խնամուած արտերուն եւ պարտէզներուն, ծովամերձ տարածութիւններուն, խոպան գետիններուն, քարքարուտներուն, ճամփեզրերուն, ջրեզրերուն եւ ուղղակի քարերուն ու քարէ պատերուն վրայ աճած

[1] Քեսապի բարբառին մէջ բ, գ, դ, ձ, ջ խուլեր են, պ, կ, տ, ծ, ճ՝ ձայնեղ: Ղ կոկորդային պայթական է, է՛ վերին բարձրութեան քմային ա, քմային են ա, ու եւ օ: Ըն ունի երկու արժէք. լիահունչ ձայնաւոր է, սեռականի հոլովամասնիկը եւ կը հակադրուի թոյլ Ըին՝ ջէօրը -- ջըրը՛ (ջուրը -- ջուրի): Աւելորդ նկատած ենք շեշտով նշել:

բուսական վայրի ծածկոյթը: Շրջանի բոյսերէն ոմանք չեն հանդիպիր նաեւ մօտակայ շրջաններուն մէջ: Քեսապը իբրեւ լեռնակղզի՝ ունի ինքիր մէջ եւ իր շրջապատէն տարբեր ու բազմազան բուսականութիւն:

Աշնանային անձրեւներէն անմիջապէս ետք զարմանալի առատութեամբ կանաչով կը ծածկուին գետինները: Բազմաթիւ տարեկան բոյսեր ու ծաղիկներ կ'երեւին միայն այս շրջանին, իսկ ոմանք կը շարունակեն աճիլ: Գարնան շունչը կը զգացուի Փետրուարէն անմիջապէս ետք: Ամբողջ բնութիւնը կը ծլի, կը ծաղկի այս եղանակին:

Քեսապի բուսական հարուստ աշխարհը արտացոլուած է տեղւոյն հայոց ճանաչողութեան մէջ: Բուսական աշխարհին հետ քեսապցին շփում ունեցած է դարեր շարունակ, ըլլալով գերազանցապէս հողագործ եւ խաշնարած, կեանքի իր պէտքերը հոգացած է նաեւ անտառային տնտեսութեամբ: Անոր ծանօթ եղած են, ինչպէս մշակելի շատ բոյսեր ու պտուղներ, այդպէս նաեւ վայրի բնութեան մէջ աճածները, զորս ճանչցած է անուններով կամ տուած անոնց նոր անուններ, օգտուած անոնցմէ, իբրեւ ուտելիք, իբրեւ թոյն, իբրեւ զանազան նպատակներով օգտագործելի հումքեր՝ ձէթ, ռուպ, փոշի, մածուկ, իբրեւ զարդեղէն, անասնակեր, շինանիւթ եւ վերջապէս՝ ժողովրդական բժշկութեան մէջ օգտագործելի նիւթեր: Ճանչցած է վայրի տունկերը պատուաստով ընտիր պտղատու ծառերու վերածելու կերպերը: Հարուստ է Քեսապի խոհանոցը ինչպէս մշակովի բանջարեղէնի օգտագործմամբ, նաեւ վայրի խոտերն ու պտուղները օգտագործելու տեսակէտէն: Ամէն քեսապցի ընտանիքի մէջ տարածուած ուտեստներ են վայրի խոտերը, հոսկէ-հոնկէ հաւաքուած վայրի խոտերէ պատրաստուած թթուները, աղցանները, խմորեղէնի տեսակներն ու խոտիկապուրները: Քեսապցին բոյսերէն քաղած է զանազան հումքեր, ինչպէս կաղըրանի ձէթ (ծրդի ծառէն քաղուած)՝ հօտերու բուժական նպատակներով, ձիթապտուղի ձէթը՝ ուտելի, կասլիի ձէթը՝ օճառի արտադրութեան մէջ, խաղողի, եղջիւրի, աղտորի, պղպեղի եւ լոլիկի ռուպը՝ իբրեւ ուտելիք կամ համեմ, տեղբի մածուկը՝ որսորդութեան, շումրայի, քարանուխի, անուխի, աղտորի, պղպեղի փոշիները իբրեւ համեմունք:

Կը պատմեն, որ բուսական բժշկութեամբ զբաղող յայտնի մարդիկ եղած են Քեսապի մէջ, ինչպէս Ծերոն Հեքիմը, Չիւրիքեան տոհմէն (ԺԹ. դար): Շրջանի առաջին վկայեալ բժիշկը՝ Սողոմոն Աբէլեան, բուսաբուժութեան քաջատեղեակ էր: Վերջիններէն եղած է Յակոբ Հատէտեանը: Դժբախտաբար անոնցմէ գրաւոր բան մը չէ հասած մեզի Քեսապի բուսականութեան բուժական յատկութիւններուն մասին: Ներկայիս Քեսապի մէջ կը գործէ Կիրակոս Սարգիսեանը, որ իր աշխատանքներուն մէջ լայնօրէն կը գործածէ Քեսապի բուսական ծածկոյթը: Քեսապցին մինչեւ օրս կը ճանչնայ ու բուժական նպատակներով կ'օգտագործէ բազմաթիւ բուժական խոտեր, ծաղիկներ, տերեւներ եւ արմատներ:

Քեսապի բուսականութիւնը լայն տեղ ունի նաեւ տեղւոյն ժողովրդական բանահիւսութեան մէջ: Քեսապցին բազմաթիւ զրոյցներ ունի բոյսերուն մասին: Բոյսերը կը կերպարաւորուին նաեւ առակներու եւ առածներու մէջ: Ոմանք մտած են տեղացիներու հաւատալիքներուն մէջ, ինչպէս սօսին, փշակաղնին, թթենին ու դափնին, այրամ-մարիամ փուխարան եւն.: Բոլոր ուխտավայրերուն կից կը գտնուին ադար (լաթի երիզ) կապելիք սրբացուած ծառեր ու թուփեր:

## ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՊՏՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԵՐ

Անշուշտ՝ լեզուաբանական տեսակէտէն հետաքրքրական են բարբառի պտղանուններն ու բուսանունները: Բարբառային բառացանկեր պատրաստողները նկատած են նաեւ զանոնք ու տեղ տուած առաւել կամ նուազ չափով, ինչպէս տոքթ. Աւետիս Ինճեճիկեանը իր «Քեսապ եւ իր բարբառը» (Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Գ. հատոր*, էջ 11-178) եւ Նշան Ա. Յովսէփեանի *Քեսապերէնի բառարան* (Լոս Անճելըս, 2019) աշխատութիւններուն մէջ, իւրաքանչիւրը հարիւրեակ մը անուններով: Ես իմ *Քեսապի բարբառը* աշխատասիրութեան (Ա. հրատ., 1986, Հալէպ, Բ. հրատ., 2009, Երեւան) բառացանկերուն մէջ զետեղած եմ բաւական երկար շարք մը անոնցմէ: Այս գործերուն մէջ հայերէն համարժէք չունեցող բուսանունները տրուած են հակիրճ նկարագրութեամբ կամ - ինչպէս շատ անգամ կ'ընեն բացատրական բառարանները - «ուտելի խոտ մը», «ծառի տեսակ», «վայրի բոյս մը» ընդհանուր բացատրութիւններով: Զգացած եմ, որ բուսանուններով ու պտղանուններով զբաղիլը մեծ ժամանակ, բուսաբանական գիտելիքներու բաւարար պաշար ու հմտութիւն ալ կը պահանջէ: Հետեւաբար կը պահանջէր առանձին աշխատանք, ու յետագային լծուեցայ այդ աշխատանքին եւ տակաւին կը շարունակեմ: Արդէն վաւերագրած եմ շուրջ 300 անուն բոյս՝ նկար, գիտական անուանում, նկարագրութիւն, գործառոյթներ: Ուրիշ դժուարութիւն մըն ալ կար. տնտեսական հիմնական փոփոխութիւններ տեղի ունեցած էին արդէն, ցանքը մոռցուած էր, խաշնարածութիւնը վերացած էր, անտառային տնտեսութիւնը, քանի մը վայրի հատապտուղներու օգտագործումէն դուրս, գրեթէ իսպառ վերացած էր: Լեռնային շրջաններէն գիւղացին ոտքը կտրեր էր, հետեւաբար բազմաթիւ բոյսեր ու պտուղներ արդէն գիւղացիի առօրեային մէջ չէին երեւնար, ներառեալ՝ 1939ին Թուրքիոյ կողմը մնացած լայն տարածութիւններն ու արօտավայրերը: Առօրեայէն դուրս մղուելով՝ բառը կամաց-կամաց կը մոռցուէր, ու դուրս կը մնար շրջանառութենէ: Առանձին ցանկագրած եմ 150է աւելի անանուն բոյսեր. գիւղացին կը պատասխանէ, որ անոր ալ բան մը կ'ըսէին, բայց ինք արդէն չի յիշեր:

ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊՏՂԱՆՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ

Բուսանուններն ու պղտաղունները ծագման տեսակէտէ քանի մը շերտերու կը բաժնուին.-

Ա.- ընդհանուր հայերէնեան բառեր.

Բ. - օտարամուտ բառեր՝ գլխաւորաբար արաբերէն եւ թրքերէն.

Գ. զուտ բարբառային բառեր:

***Ընդհանուր հայերէնեան բառեր***

Շատերը հին հայերէնէն փոխանցուած տարբերակներ են՝ անկախ անկէ, թէ ստուգաբանօրէն ի՛նչ ծագում ունին անոնք. կու տանք բոյսն ու պտուղը միասին, ինչպէս՝ եղջերենի/եղջիւր>**աղջիրինա/աղջէր**, աղտորենի/աղտոր>**աղտիրինա/աղտուր**, աբեթ>**է՛բիթ**, աւելուկ> **է՛վիլէօկ**, բաղեղ>**բաղիէղ**, բակլայ>**բէ՛կլու**, բեւեկնի/բեւեկն>**բուվկինա/ բուվիկ**, գարի>**գա̲րա̲**, դեղձենի/դեղձ>**դա̲ղձինա/դիէղձ**, դամոնի/դամոն> **դամմինա/դամմէն**, դդում>**դըդդօմ**, եղէգ>**ըղիէգ**, երեքնուկ>**իրիքէօնկ**, ընկուզենի/ընկոյզ>**ընկուզինա/ընղուօյզ**, թիզենի/թուզ>**թիզինա/թէօզ**, թթենի/թութ>**թիթինա/թէօթ**, լուիկ>**լըվէկ**, խաղող>**խաղուղ**, խնձորենի/խնձոր>**խընձըրինա/-խընձուր**, ծոթրին>**ծըղըրէն** կամ **զըթըրէն**, ծրդի>**ծըրդա**, կաղնի/կաղին>**կա̲ղնա̲/կա̲ղէնտ**, կանկար>**կէ՛նկուօր**, կասլայ (դափնի)>**կա̲սլա̲**, կարոս>**կէ՛րուօս**, կոտեմ>**կուտէմ**, կորեկ>**կուրիկ**, համեմ>**հէ՛միմ**, ձիթենի>**ձիթինա**, մամուխ>**մէ՛մէօխ**, մանանեխ>**մէ՛նիէխ**, մանուշակ>**մէ՛նուշուօկ**, մորմենի>**մըրմինա**, մրտենի>**մըրտինա**, նռնենի/նուռ>**նըռնինա/նօռ**, նշենի/-նուշ>**նըշինա/նէօշ**, ոսպ>**վըսպ**, ուռենի/ուռ՝ ճիւղը>**ուռինա/օռ**, սխտոր>**սըխդուր**, սնձենի/սինձ>**սընձինա/սէնձ**, սմբուկ>**սընպօկ**, սերկեւիլ>**սըրկըվէլ**, սէզ>**սիէզ**, սիսեռ>**սիսիէռ**, սոխ/**սուխ**, սօսի>**սուսա**, վարդենի/վարդ>**վարդիրինա/վուօրդ**, վարսակ>**վարճօգ**, տանձենի/տանձ>**տէ՛նձինա/տունձ**, տոլի>**տո̲ւլլա̲**, ցորեն>**ցիրին**, փիճի>**փիճա**, օրան>**ուրուն** եւն.:

Կարգ մը ծառատեսակներու պտուղը այլ արմատէ է, ինչպէս՝ **տուլլա>խաղուղ, մըրմինա>մըրմընթէօթ, մըրտինա>հընպէ՛լուս**, կամ կազմուած են պտուղ բառի յարադրութեամբ՝ **կասլա>կէ՛սլը պըտօղ, ձիթինա>տէ՛նը պըտօղ**: Ոմանք բարբառին անցած են որոշ իմաստափոխութեամբ, կը տրուին այլ տեսակի բոյսերու, ինչպէս՝ սմբուկ>**սըմպօկ**՝ ուտելի վայրի բանջար մը, վարսակ>**վարճօգ**՝ վայրի խոտ մը, օրան>**ուրուն**՝ ցորենաբոյս վայրի տեսակներ, անասնակեր, համեմ>**հէ՛միմ՝** սովորական պղպեղը եւն.:

***Ուղղակի արաբերէնէ անցած բառեր***

Հոս նկատի առնուած է բառին **արաբերէն**ի միջոցով բարբառին մէջ յայտնուիլը եւ ոչ՝ անոր ստուգաբանօրէն ուրկէ ծագած ըլլալը: Նկատելի է, որ արաբերէնէ եկող բառերը մեծամասամբ հնչիւնափոխուած են, այդ ալ ցոյց կու տայ այդ փոխառութիւններուն հնութիւնը. **աճըրըմ** (աճրամ՝ մանի-

շակագոյն մանր ու խիտ ծաղիկներով թուփ), **աճճօր** (աճճուր՝ աճուր), **աննապ** (աննապ՝ անապ), **զըլգ** (բանճար մը), **զինճար** (փշոտ պատատուկ մը), **զիւուն** (զիւան, հատիկ չբռնած ցորենի հասկ), **խիուօր** (խիար՝ վարունգ), **խուպպազ** (փիփերթ), **հայլըմ** (հելեուն՝ ծնեբեկ), **հապըլ** (բառացի՝ պարան. երկար ոստերով գետնատարած բոյս մը), **հընպէ'լուօս** (հապ ըլաս՝ մուրտ), **հընտըպէլ** (ուտելի խոտ մը), **մըշմէշ** (մըշմօշ՝ ծիրան), **նաանա** (անուխ), **նէ'րճիէս** (նարգիզ), **շիֆուն** (շոֆան՝ վարսակ), **շըգէգ** (կակաչ), **շումրու** (շումրա՝ սամիթ), **պաղտէ'նուօս** (պաղտունէս՝ ազատգեղ), **պամեու** (պամիա), **պէ'տինճուն** (պատինճան, սմբուկ), **պէ'տիէխ** (պաթթիխ՝ սեխ), **պըլլուն** (պըլլան՝ թուփ, որ կը գործածուի իբրեւ կալի ցախաւել), **ռահուն** (ռեհան), **սըմըն** (բառացի թոյն. թունաւոր խոտ մը), **սընպըլ** (սընպօլ՝ սմբուլ), **սըպպէր** (փշաթուզ), **քաման** (քամայէ), **քաստանա** (շագանակ), **ֆասուլիա** (լուբիա) եւն.:

Հոս եւս որոշ բառեր իմաստափոխուած են, օրինակ՝ արաբերէն **քամայէ** բառը կը տրուի անապատին մէջ աճող գետնախնձորի նմանող բոյսի մը, մինչ Քեսապի բարբառին մէջ պարզապէս գետնախնձոր (փաթաթէս) կը նշանակէ: **Բակլա**, արաբերէն պակլէ, կը նշանակէ փիրփրիմ խոտը, մինչ բարբառին մէջ ընդհէնէն է լոբիի ընտանիքէն, արաբերէն՝ ֆուլ: **Պէ'տիէխ** արաբերէնի մէջ ձմերուկ է, իսկ բարբառին մէջ՝ սեխ:

**Թրքերէն** բառեր.- **ազղան** (դեղին ծաղիկով փշոտ թուփ մը), **գապաղինա** (բարտի), **գարատաղինա** (ոչ մշտադալար անտառային ծառ՝ խոշոր տերեւներով ու ճերմակ ծաղիկով), **գարաթանու** (անասնակեր ընդհէնէն), **եաթկըն** (պատատուկ դդմազգի մը, ուտելի), **եարփըզ** (առուներու քարքարոտ եզրին բուսնող վայրի անուխ. ուտելի է), **ենիտունիա** (նոր աշխարհ), **թուրփ** (բողկ), **լահանա** (կաղամբ), **կաւըր սոխանա** (սոխազգի ոչ ուտելի բոյս մը), **մարըլ** (հազար), **շարմաշըգ** (պատատուկ ծաղկեբոյս), **չալթա** (երկար ոստերով փշոտ թուփ, որով ձեռնափայտ կը շինեն կամ պարտէզ կը ծղպեն), **չամ** (սէզի տեսակ մը), **չէօմչա կէլին** (այսպէս կը կոչուի անձրեւաբեր խրտուիլակը՝ «ծակոտկէն շերեփով հարսը». նոյնանուն գարնանային ծաղիկը ունի բոժոժաւոր գինեգոյն ծաղիկ), **չուպանտաքանաք** (տերեւն ու ծաղիկը հոտաւէտ, գարնանային ծաղիկ մը՝ հովուածաղիկ), **պորճախ** (մանր տերեւներով անտառային թուփ է, այծերը շատ կը սիրեն. կը ծաղկի առաջին անձրեւներէն ետք. ունի ձկան բերանի նմանող փնջաձեւ դեղին ծաղիկ), **պութըրագ** (խոտ մը, որուն պտուղը կը փակի կը մնայ անցորդի փէշերուն ու տաբատին), **տընկըլտարան** (ածուներուն մէջ երեւցող մակաբոյծ բոյս մը՝ դեղին ծաղիկով), **փուրչուքլա** (ստեպղին), **քալաք** (սեխ), **քուֆթիքան** (կապոյտ ծաղիկով ուղտափուշ) եւն.:

Թրքերէնէ եկած անուանումները հնչիւնափոխութեան եւ իմաստափոխութեան գրեթէ չեն ենթարկուած, կը թուին նոր անուանումներ են: Ոմանք չենք գտներ թրքերէնին մէջ: Քեսապցին մինչեւ այսօր ալ սովորութիւն ունի թրքերէնով «անուն կախել», այսինքն անուն տալ, սովորաբար այդպէս կը

վարուին նաեւ մարդոց ծաղրանուններու, կովերու, եզներու եւ շուներու տրուող անուններու պարագային՝ **Խուվարտա, Գարագըրչըք, Եանղալ, Քալաք, Քաչա** (մարդու ծաղրանուններ), **Ագուրեուդ, Գըրմըզ, Պայրամ, Ճէյրան, Կատըն, Սուրմէլի, Ֆընտըդ, Զէյթուն, Պորչի** (եզ ու կով), **Ասլան, Գանղալ, Տուման** (շուն):

Գիւղատնտեսութեան զարգացման հետ շրջան մուտք գործեցին նոր մշակութիւններ՝ ծառատեսակ, բանջարեղէն, պտուղ, ծաղիկ եւն., որոնք երկրին մէջ ճանչցուեցան արաբերէն եւ արեւմտաեւրոպական լեզուներէ եկած նոր անուններով, ինչպէս՝ **քիւի, քարամանթինա**, խնձորի տեսակներ՝ **կոլտըն, սթարքըն, քոլա,** ծաղիկներ՝ **կարտինիա, ռոզմարի** եւն.:

## ՉՈՒՏ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՊՏՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Մեծ բաժին մը կը ներկայացնեն զուտ բարբառային բառերը, որոնք ըստ կազմութեան պարզ, ածանցաւոր եւ բարդ բառեր են: Բառը կազմող հիմքերը - արմատ բառ կամ հիմնական ձեւոյթ - կա՛մ հայերէն իմաստափոխուած բառ մըն է, որ հոս վերածուած է բուսանունի, ինչպէս **է՛ւիլ** (աւել), **շընընկ** (շուն-իկ), **ձուլթէկ** (ձիւթ-իկ), **չընղէկ** (զանգ-իկ), կա՛մ յայտնապէս օտար հիմք է, ինչպէս՝ **սատաֆճիք, խուրուզը քափազ** (թրք.՝ աքլորի կատար), **թէքը մուրօք** (թրք.՝ թէքէ՝ խոյի մօրուք) կա՛մ ալ, վերջածանցը չհաշուած, ծագումնաբանօրէն մեզի անծանօթ կը մնայ, ինչպէս՝ **լափթըռըն(ճիք), շընճըռըգ(ինա), ճդն(ա), գարմուգ(ա), կապրաշ(ա)** եւն.: Բաւական շատ են տեղի եւ անձի յատուկ անուններէ ստեղծուած բուսանունները՝ **պաղրասա** (Պաղրաս տեղանունէն, թզենիի տեսակ), **սալթա** (Յորդանանի Սալթ տեղանունէն, որթի տեսակ), **կէ՛րպիկա** (Կարապետ անձնանունէն, մանր խաղող մը) եւն.:

ա.- Պարզ կամ այդպէս ընկալուող բառերը քիչ են թիւով. **գեռնէպ** (ջրադդում), **զըմմէլ** (արտերը ամռան ծածկող մոլախոտ մը), **է՛ւիլ** (աւել, իբրեւ աւել գործածուող բոյս մը), **խըլուօթ** (խիտ ծաղիկներով պատատուկ բոյսի երկու տեսակ), **խռընպօշ** (փակ լճակի մէջ գտնուող ձուկերը թմրեցնելու ծառայող խոտ մը), **կուրանօս** (ապրիմ-մեռնիմ ծաղիկը), **լաբըդխօշ** (խոշոր տերեւներով ուտելի վայրի խոտ մը):

բ.- Բաւականին շատ են ածանցաւոր բառերը: Բուսանուններ եւ պտղանուններ կազմող ածանցներն են.-

Ա /ա -- կը ծագի **Ի** ածանցէն, որ կայ հայերէն շատ ու շատ բառերու մէջ, ինչպէս, կաղնի, ծրդի, փիճի եւն.: Բարբառին մէջ գլխաւորաբար կը կազմէ թուփի ու ծառի անուններ, ինչպէս՝ **բամկա** (բամպակենի, տարեկան դիւրավառ թուփ մը), **հիմքա** (ծղօտի նմանող երկար տերեւներով թուփ, որ կը ծառայէ տեղ մը ծեղպելու համար կամ տախտակամած շինելու համար), **խըզիրա** (կաղնիի ընտանիքին պատկանող ծառ մը), **գարմուգա** (փշոտ թուփ մը), **գասլապա** (կարմիր կեղեւով ծառատեսակ), **կապրաշա** (ծաղկուն

թուփ, ընտիր ճիւղով), **մաննա** (երկար ոստերով ծառատեսակ), **մէ'նտըրա-սա** (փշոտ կաղնիի նմանող մշտադալար ծառ կամ թուփ), **ճըդնա** (ճերմակ եւ կարմիր փնջաձեւ ծաղիկով տեքորաթիւ թուփ) եւն., նաեւ բանջարեղէն-ներ՝ **ֆըրանկա** (լոլիկ), թուզի տեսակներ՝ **ծիրանա, պաղրասա, հուռում-լա, շըպլա, սահլա,** խաղողի տեսակներ՝ **լընդա, կէ'րպիկա, չամչա, գա-լամտարա** եւն.

ԻՆԱ -- կը ծագի հայերէն **ենի** ածանցէն, կայ ինչպէս բնիկ բուսանուննե-րու, այլեւ նոր կազմութիւններու մէջ, ինչպէս, **խընկինա** (խնկենի), **հէ'ւկը-տինա** (հաւկտենի), **հուրկումիլինա** (վայրի սալորի մը ծառը), **մէ'թուզինա** (արքայախնձորի ծառը, պտուղը՝ **մէ'թէօզ**), **շընճըրըգինա** (գարնան փթթող ու վարդագոյն ծաղիկներով զարդարուն ծառ), **ջաղջինա** (ջաղացք բառէն. սալորի ծառատեսակ), **տըխբինա** (ծառ, որուն պըտուղէն կը պատ-րաստեն որսորդական մածուկը՝ տեղբ, արաբերէն տըպըգ բառէն) եւն.. նոյն ածանցը, ինչպէս տեսանք լայնօրէն կը գործածուի թրքերէն հիմքերէ կազմուած ծառանուններու մէջ:

ՕԿ/էօկ -- կը ծագի ուկ ածանցէն, **բամկօկ** (բամպակ-ուկ, ծառի վրայ ա-ճող մակաբոյծ), **դամբուզօկ** (դամբօզ՝ ծոպ-ուկ, ծոպաձեւ երկար կոթունով ծաղիկ մը), **մառնօկ** (փրփրիմ), **տինկէօկ** (տինկ՝ ուղղաձիգ բառէն, ծաղիկ մը), **կէ'թնէօկ** (կաթն-ուկ, ճերմակ հիւթ ունեցող բոյսերու ընդհանուր ա-նուն) եւն.:

ԷԿ -- կը ծագի իկ ածանցէն, **բուվկէկ** (բեւեկնի ծառերուն տակ աճող ու-տելի խոտ մը), **կէ'թնէկ խուտտէկ** (ճերմակ հիւթով ոչ ուտելի խոտ, անաս-նակեր), **ձութէկ** (ձոյթ բառէն, խոտ մը, որուն ճերմակ հիւթը կը դնեն վէր-քին վրայ, որպէսզի արիւնահոսութիւնը կասի), **չընդէկ** (զանգ բառէն, բոժո-ժաւոր ծաղիկ մը), **գընտըրէկ** (ածուներուն մէջ աճող փնջաձեւ խոտ մը), **տէ'պպուցէկ** (արաբերէն **տէպպուց** բառէն՝ ապահով ասեղ, կը տրուի պա-տիճաւոր խոտի մը):

ԸԿ -- **շընընըկ. շընընօկ**՝ շնիկ բառի փաղաքշական տարբերակը, կը տրուի լուիկի վայրի մէկ տեսակին, որուն ծաղիկը խոտերուն մէջ բան փնտռող շան դունչի կը նմանի:

Էօնկ -- կը ծագի **ունք** ածանցէն՝ **բէ'դկէօնք** (պատատուկ), **իրիքէօնկ** (երեքնուկ):

Օք -- կը ծագի ուք ածանցէն, ինչպէս՝ **խուշուրօք** (խոշորուք, ուտելի խոտ մը), **մըսմսօք** (մըսս բնաձայնի կրկնութեամբ, դիւրավառ թուփ մը), **շըլֆը-դօք** (եղինջ, **շըլֆէթ** բառէն՝ մաշկային այրուցք) եւն.:

Ճիք -- **լափթըռընճիք** (մանր կլոր հատապտուղով փշոտ թուփ մը), **սա-տաֆճիք** (շատ ծանր հոտ ունեցող մանրատերեւ թուփ մը):

Էօտ -- հայերէնի ուտ ածանցէն. կը կազմէ նոյն տեսակի ծառեր ունեցող անտառի կամ պարտէզի անուն՝ **կաղնէօտ, կէ'սլէօտ, հիմքէօտ, աղտըրը-նէօտ, խընձըրիկէօտ, դամմինէօտ, մըրմինէօտ, մըրտինէօտ, փիճէօտ, փըշըկաղնէօտ, վարդիրինէօտ, փուրթուգալինէօտ** եւն.:

Կէօտ -- պարտէզի անուն, միայն՝ **թիզինկէօտ, թիթինկէօտ, ձիթինկէօտ**:

գ.- Բարդ բառեր, կրնան ըլլալ իսկական բարդութիւններ, կցականներ եւ յարադրութիւններ:

**1.- Իսկական բարդութիւններ.**

**մէ'թէօզ -- ադամաթուզ** բառին ամփոփումը՝ մաթուզ. մշակովի կամ վայրի կարգ մը ծառերու պտուղներուն ընդհանուր անունը. **մէ'թէօզ** կը կոչուի արքայանարինջ, վերջերս կ'ըսեն նաեւ **մօզիկ թէօզ**: Կայ նաեւ **գասլապը մէ'թէօզ**՝ գասլապի ծառին ողկուզաձեւ պտուղը:

**Մուշէ'տուօք** -- մոշ-ա-տակ. բարբառին մէջ կայ **տուօկ**՝ տակ եւ **տուօք**՝ տունկ: Առաջին հիմքը հաւանաբար կու գայ **մոշ** բառէն. բարբառին մէջ չունի անկախ գործածութիւն եւ չունի ծանօթ հատապտուղին իմաստը: Մշտադալար թուփ է: Այծերը շատ կը սիրեն:

**Սընծըսգան** -- սինձ-ոսկի-ն՝ **ն** աճականով: Կ'ըսեն նաեւ **սընծըսգինա** կամ **սընծըսգինը թէօփ**՝ ենի>ինա աճանցով: Ուղիղ, բազմաճիւղ ոստերով թուփ է, դեղին փոքրիկ ծաղիկով: Սընծոսկիի թուփերուն մէջ շատ կը թռչկոտի մանր դեղնաւուն թռչուն մը, որ թուփի անունով կը կը կոչուի **սընծըսգէ'նիկ**՝ սնձոսկենիկ:

**Քէ'րէ'նուօխ** -- քար-անուխ. անուխի ընտանիքէն: Փոշիի խիւսով հաց եւ այլ խմորեղէններ կը պատրաստեն:

**Է'նգըղթիվ** -- անգղ-թեւ, անգղի թեւերու նմանող խոտ մը:

**Մըրմընթէօթ** -- մորմեն(ի)-թութ. հայերէն՝ մոշ, թուփը՝ **մըրմինա**՝ մորմենի: Առանձին չկայ մորմ կամ մոր բառը:

**Գուրտընքուօք** -- գորտն-քաք, գորտնաբուրդ, ջրիմուռ:

ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարբառի բուսանուններն ու պտղանունները մեծաւմասամբ յարադրութիւններ են, այսինքն երկու կամ աւելի բառերու կապակցութիւն, լրացում-լրացեալ շարքեր: Ըստ արտասանական երանգի՝ ասոնցմէ քիչերը կցական բարդութիւններու պէս կ'արտասանուին, այլ խօսքով՝ բաղադրիչները մեծ մասով կը պահեն առաջին բաղադրիչ բառաձեւի անկախութիւնը:

ա.- Որոշիչ-որոշեալ կազմութիւններ. որոշիչի դերով հանդէս կու գան ածականներ, գոյականներ, յարակատար դերբայ, իսկ որոշեալի դերով՝ խոտ, փուշ, ծաղիկ, պտուղ նշող բառերը՝ **ղըղէն ծաղէկ, կիծծուօկ փէօշ, հուտտուօծ խուտ, մաղվըկ տունծ** եւն.: Ստորեւ այդ շարքը.

**Այրամ-մարիամ փուխարու** -- Մարիամ անունի կրկնութեամբ եւ **փուխարու** բառով, որ արաբերէն **պուխար** բառն է՝ ծուխ, մուխ: Մշտադալար վայրի թուփ է, բուրաւէտ է, մանաւանդ վառելու պահուն, խունկի տեղ կը գործածուի:

**Գագմիկ չայ** -- ուղիղ ցօղունով մանրատերեւ խոտ, որ կը կոչուի նաեւ **լառռուն չայ**: Ցօղունին հաւասար օղակներուն համար կոչուած է **գագմիկ**՝ աստիճանաւոր չայ:
**Դըղէն խուտ** -- դեղին խոտ. դեղին ու առատ ծաղիկներով խոտ:
**Թըթթը խընձիրէկ** -- թթու խնձորիկ. հին բակերուն մէջ հանդիպող խնձորի միակ տեսակը, ծառը՝ հսկայ, պտուղը՝ փոքր տանձի չափով, թթուաշ:
**Թըսսիկ ծաղէկ** -- աշնանային առաջին անձրեւներէն ետք արտերուն մէջ աճող բարակ կոթունով գնդաձեւ կապոյտ ծաղիկ մը: **Թըսսիկ** բարբառին մէջ ունի «փոքր, աննշան» իմաստը, քիչ մը հեգնական:
**Կէ'թնէկ խուտտէկ** -- կաթն-իկ խոտ-իկ. առաջին անձրեւներէն ետք կը բուսնի, հիւթը՝ կաթնաթոյր: Թարմը անասնակեր է:
**Կիծծէօկ փէօշ** -- կայծակ փուշ. տարեկան բոյս է, կարմիր գնդաձեւ ծաղիկով, ուղտափուշ:
**Հուռում թէօթ** -- հոռոմ թութ. խոշոր ու հիւթալի սեւ թութ, որմէ օշարակ կը պատրաստեն, ծառը՝ **հուրում թիթինա՝** հոռոմ թթենի:
**Հուտտուօծ խուտ** -- հոտած խոտ. ընդհանուր անունն է այն բոյսերուն, որոնք փոքրիկ հպումի մը հետեւանքով ծանր հոտ կ'արձակեն:
**Մաղվիկ տունծ** -- մեղու-իկ տանձ. պտուղը՝ փոքր, կլոր, երկար կոթունով տանձ, քաղցր ու բուրաւէտ:
**Մարիամ խուտ** -- Մարիամ խոտ, յայտնի բոյսը, որուն թէյը կը գործածեն յղի եւ ստնտու կիներ:
**Մարտիրուս ծաղէկ** -- մարտիրոս ծաղիկ. գարնանային ծաղիկ մը:
**Պուօզ խուտ** -- բառացի՝ գորշ խոտ. բարակ ցօղուններով ու մուգ կանաչ մանր տերեւներով մշտադալար խոտ մըն է: Վերջերս ընդհանրացած թէյատեսակ է:

բ.- Առաջին բաղադրիչը սեռական հոլովով դրուած գոյական է կամ գոյականաբար ընկալուող այլ խօսքի մաս՝ ածական, յարակատար դերբայ եւն.: Այստեղ ամէն պարագայի սեռական հոլովով դրուած առաջին բաղադրիչը կը պահէ բարբառային իր ձեւի անկախութիւնը ու շատ քիչ բառերու պարագային կցական ինչերանգ ունի: Ճիշտ չէ նաեւ այս բառերը յօդակապով բարդութիւն նկատել: Առաջին բաղադրիչը ունի քանի մը գործառոյթներ, ցոյց կու տայ լրացեալ բոյսին (խոտ, ծաղիկ, ծառ, թուփ, փուշ, պտուղ) աճման տեղը, ծագումն ու պատկանելութիւնը, որով ալ կ'որոշուի տեսակը, ինչպէս՝ **քախքը կէ'նկուօր** (քաղաքի կանկար), **առվը կէ'րուօս** (առուի կարոս), **ծուվը խուտտէկ** (ծովու խոտիկ), **սարփը ծաղէկ** (քարափի ծաղիկ), **Պաղրասը թէօզ** (Պաղրաս տեղանունը առած ծառի թուզ), **սալթը խաղուղ** (Յորդանանի Սալթ տեղանունը առած որթի խաղող) եւն.: Մեծամասնութեամբ ի>ը՛ կամ լիահունչ ը հոլովման բառեր են, կայ նաեւ ան>ուն հոլովման մէկ կազմութիւն՝ **լառռուն չայ** (լեռան չայ), **ուան>վին** հոլովման շարք մը կազմութիւններ՝ **ձըմըռվին դըդօմ** (ձմեռուան դդում՝ դեղին ու մեծ), **գէ'-**

**րընքվին ծաղէկ** (գարնանային ծաղիկ), **ամըռվին խըլուօթ** (ամառուան խլաթ՝ պատատուկ մանր ճերմակ ծաղիկով), **իշշընքվին խըլուօթ** (աշնանային խլաթ՝ պատատուկ, բոժոժաձեւ ծաղիկներով) եւն.:

Այս յարադրութիւններուն մէջ առաջին բաղաղրիչը սովորաբար կ'ըլլալ ա կամ ինա ածանցներով որեւէ բուսանուն: Ասոնք եւս յարադրութեան մէջ մտնելով սեռականը կ'ըլլայ լիահունչ ը ցուցիչով, ինչպէս՝ **կաղնի>կաղնա**, բայց **կաղնը կաղէնտ** (կաղնիի կաղին), **կասլա,** բայց **կէ'սլը պըտօղ, կէ'սլը ձիէթ, կէ'սլը տիրիֆ** եւն.: Բարբառին յատուկ է ետընթաց հնչիւնափոխութիւնը, ինչպէս **ծով՝ ծուօվ>ծուվը խուտտէկ, վարդ՝ վուօրդ>վարդիրինա, քաղաք՝ քաղուօք>քախքը կէ'նկուօր:** Այսպէս կը կազմուին տարբեր ծառատեսակներու պտուղները՝ **չամչա՝** ծառը, բայց **չէ'մչը խաղուղ**, **սահլա՝** ծառը, **սէ'հլը թէօզ** եւն.:

Այդպէս նաեւ **տանա** (**ընտանի** բառին ամփոփումը) եւ **պըրրա** (արաբերէն՝ վայրի) բառերը բուսանուններու պարագային, այսպէս. **պըրրա՝** վայրի, բայց **պըրրը վուօրդ, պըրրը ծաղէկ, պըրրը աճճուրէկ**... **տանա՝** ընտանի, տնական պայմաններու մէջ աճած, բայց՝ **տէ'նը պըտօղ՝** ձիթապտուղ, **տէ'նը ձիէթ՝** ձիթաիւղ, **տէ'նը հէմիմ՝** գարապիպար կամ սեւ գնդիկ: Ստորեւ շարքը.-

**Առվը կէ'րուօս** -- առուի կարոս, ուտելի խոտ մը:

**Արտը կէ'թնէօկ** -- արտի կաթնուկ, ուտելի խոտ մը:

**Գասլապը մէ'թէօզ** -- **Գասլապա** կը կոչուի ծառը, մշտադալար, կարմիր կեղեւով վայրի թուփ կամ ծառ, պտուղը՝ մանր հատիկներով ողկոյզ է, կը սեւնայ Նոյեմբերին, ուտելի է. կը կոչուի **գասլապը մէ'թէօզ՝** գասլապի մաթուզ. սա ալ կը յուշէ, որ բառը ընդհանուր անունն է որոշ պտուղներու: Հայերէնի մէջ կայ **մաթզենի** կամ **մաթուզենի** ծառը: Հայաստանի մէջ «քարալիոք» կոչուող պտուղին տնկովի ծառը Քեսապի բարբառով կը կոչուէր **մէ'թուզինա** կամ **մէ'զզը թիզինա**, իսկ պտուղը՝ **մէ'թէօզ** կամ **մէ'զզըթէօզ**: Վերջերս կը լսեմ **մօզիկթէօզ** անունը:

**Թըփփը կէ'թնէօկ** -- թուփի կաթնուկ. թուփերու ստուերին տակ աճող ու խոշոր տերեւներով խոտ է, հիւթը՝ կաթի պէս ճերմակ:

**Լառռուն չայ** -- բառացի՝ լեռան թէյ. Աստուածաշունչի մէջ կը կոչուի **զոպայի մշտիկ**, արաբերէն՝ **զուֆա**: Առատօրէն կ'ըլլայ Կունիկ լեռան ժայռերու ծերպերուն. ատկէ՝ կը կոչուի **Կունիկը չայ՝** Կունիկի չայ: Տե՛ս նաեւ՝ **գագմիկ չայ:**

**Խըրրը քումաճ** -- **խըրրը** խռնջոցն է՝ կուրծքի աղմուկը. **քումաճը** անստոյգ արմատ է: Երբեմն մինչեւ մէկ հասակ բարձրացող ցօղունով գարնանային բոյս, խոշոր ու ոչ-ողորկ տերեւներով: Հազի դէմ բուժիչ յատկութիւն ունի:

**Ծուվը խուտտէկ** -- ծովի խոտ-իկ. կ'աճի ծովափնեայ ժայռերու ծերպերուն մէջ, ալիքներու ցնցուղին տակ: Պատուական թթու կ'ըլլայ:

**Կէ'սլը պըտուղ** -- Կասլայի՝ դափնիի պտուղ:

**Կէ՛սլը ձիէթ** -- դափնիի պտուղէն արդիւնահանուող ձէթ:
**Ձըմըռվին դըդդօմ** -- ձմեռուան դդում, դդումի չափազանց խոշոր տեսակը, կլոր եւ դեղին: Շերտ-շերտ կը գործածեն, շերտ շերտ անուշ կը պատրաստեն, կուտը կը խարկեն՝ իբրեւ աղեղէն աղանդեր:
**Ճախնը խուտտէկ** -- Ազատգեղի նմանող խոտ, որ կ'աճի առուներու մօտիկ կամ թաց տեղերը: Քաղցրահամ է: Կը գործածուի աղցանի համար:
**Մէ՛նըշկը մար** -- մանուշակի մայր. գարնանային կապոյտ ծաղիկ:
**Մէ՛նտէրը փըշշէկ** -- մինտարի՝ օթոցի փուշ-իկ. երկար ու սուր ելուններ ունեցող տերեւներով գետնատարած խոտ է, հիւթը՝ կարմիր: Ապուրցու է:
**Պարլումը ծաղէկ** -- Պարլումի ծաղիկ. անթառամ ծաղիկ է, բարակ ցօղունով ու բոժոժաւոր գագաթով: Կայ դեղինն ու կարմիրը: Շատ կը գտնուի Պարլումի ուխտավայրի տարածքին մէջ:
**Ջըրը կուտէմ** -- ջուրի կոտեմ:
**Սարփը ծաղէկ** -- սարփ՝ քարափ. սարի ծաղիկ. գարնան առաջին ծաղիկներէն մէկը, որ մեծ խտութեամբ կը հանդիպի լեռնալանջերու եւ ծմակուտերու մէջ:
**Վառուծը խուտ** -- խոտ մը, որուն փոշին այրուցքները կը բուժէ:
**Վարդապիտը սընծէկ** -- Վարդապետի սինձ-իկ. ալոճի ընտանիքին պատկանող փշոտ թուփի մը փոքրիկ կարմրագոյն պտուղը՝ սնձիկ:
**Տէ՛նը պըտօղ** -- ընտանի պտուղ, ձիթապտուղ, ուտելի:
**Տէ՛նը ձիէթ** -- ընտանի ձէթ, ուտելի:
**Տէ՛նը հէ՛միմ** -- սեւ գնդիկ կամ գարապիպար կոչուածը:
**Փըշըկաղնա** -- փուշի կաղնի կամ փշակաղնի, թուփ կամ ծառ, սնտիան:
**Քէ՛խքը կէ՛նկուօր** -- քաղաքի կանկար. տարեկան բոյս է:
**Քուշկէրը է՛սսիէղ** -- կօշկակարի ասեղ. գետնատարած ու մանր կլոր տերեւներով խոտ մըն է, պատիճին մէջ ամբողջ երկայնքով կան իրարու փակած ճերմակ մազմզուքներ, սրճագոյն ու գնդաձեւ վերջոյթով: Ոմանք բոյսը **ժամացոյց** կը կոչեն: Կը կոչուի նաեւ **տէ՛պպուցէկ**՝ գնդասեղ:
**Ֆըրանկը պէ՛տինճուն** -- ֆրանկի սմբուկ. հայերէն՝ լոլիկ. կը կոչուի նաեւ **ֆըրանկա**, իսկ վերջերս՝ **պանատուրա**. լոլիկի մշակումը լայն տարածում կը գտնէ 1920ականներէն սկսեալ: Լոլիկի մածուկին կ'ըսեն **ֆըրանկըռռոպ**՝ ֆրանկի ռուպ կամ **պէ՛տընճըռռօպ**՝ սմբուկի ռուպ:

գ.- Կենդանիի անունով յարադրեալ բուսանուններ եւ պտղանուններ. առաջինը կենդանիի մը անունին սեռականն է, իսկ երկրորդը՝ կենդանիի մարմնի անդամ մը կամ բուսանուն մը: Այս անունները միշտ չէ որ նմանութեան մը հիման վրայ կառուցուած են: Այս յարադրութիւններուն մէջ լրացեալի դերով հանդէս կու գան այծ գայլ, գառ, էշ, թոպեկ (շնագայլ), խոզ, խորոզ, կաքաւ, հաւ ու հաւեր, ձագ, ձի, ձուկ, մաքի, մեղու, ուղտ, պախրի բառերը: Ասոնց հետ պէտք է դնել նաեւ մարդ ցոյց տուող քանի մը բառեր՝ երէցկին, հարս, վարդապետ, հովիւ: Ասոնք պատկերաւոր անուններ են:

**Ըղտը պունճօգ** -- ուղտի մանեակ, կարգ մը կենդանիներու՝ ուղտի, այծի, վիզէն կախ մորթի նմանողութեամբ ծաղիկի անուն:
**Գըլլը ծաղէկ** -- գայլի ծաղիկ. կ'ըսուի նաեւ **նապաստակի ականջ.** ծաղիկը՝ կարմիր, թուփը փնջաձեւ է. ճերմակ եւ բաց ու գոց կանաչ գիծերով զարդարուն հաւկթաձեւ տերեւներ ունի:
**Թիպիկը բակլա** -- թոբեկի բակլայ. հովանոցաձեւ տերեւներով տարեկան բոյս է, ունի կապոյտ ծաղիկ, ապա բակլայի նմանող պատիճաւոր պտուղ:
**Թիպիկը տուլլա** -- թոպեկի՝ շնագայլի, տոլի՝ որթատունկ. կը բուսնի ժայռերու ծերպերուն, տերեւը որթատունկի նման է, ոստերը՝ նոյնպէս, գոյնը՝ բոսորագոյն. կը տարածուի ժայռերուն ու ծառերուն վրայ: Կու տայ մանր հատիկներով ողկուզաձեւ պտուղ՝ թոպեկի խաղող: Կը չորնայ, բայց աշնան անձրեւներէն ետք կրկին կ'աճի:
**Իծծը մուրօք** -- այծամօրուք, կը կոչուի նաեւ **թէ'քը մուրօք**՝ խոյի մօրուք, **թէ'քէ'վըրը մուրօք**՝ թագաւորի մօրուք, **թաթը մուրօք**՝ թաթի մօրուք: Գարնան՝ արտերուն մէջ կ'աճի: Ծոպաձեւ բարակ տերեւներով ու ճերմակ հիւթով ուտելի խոտ մըն է:
**Իշշը կակաչ** -- վայրի խոտ մը մանր մուգ կանաչ տերեւներով եւ ձեւաւոր ոստերով, որոնք ամռան շարքով մանր կապոյտ ծաղիկով կը պատուին:
**Իշշը վուօրդ** -- արտերուն ու պարտէզներուն մէջ գարնան առանձին աճող մանրատերեւ բոյս է, ունի մանուշակագոյն սիրուն ծաղիկ:
**Իրըսկընը պուրտ** -- (երէցկինի պորտ), փնջաձեւ տերեւներով խոտ մը: Թարմը ապուրցու է:
**Խուզզը պըճէճ** -- պատիճաւոր փռուող տարեկան բոյս է, պատիճը՝ հաստկեկ ու բրդոտ, ոմանք հունտը կ'ուտեն:
**Խուրուզը վարտէք** -- խորոզի՝ աքլորի վարտիք. գարնան աճող խոտ, դահնալէ ետք բոլոր ոստերուն ծայրը կ'ունենայ կարմրաւուն հինգ փերթանոց բաց կարմիր ծաղիկ:
**Խուրուզը քափազ** -- աքլորի կատար. ուղիղ ցօղունով ու ոստեր արձակող խոտ մը, որ դահնալէ ետք կ'ունենայ վառ կարմիր թաւշանման ու գեղեցիկ ծաղիկ:
**Կէ'քվը ճեռնիէգ** - կաքաւի ճիռն-իկ՝ կաքաւաճիռ. գետնատարած վայրի խոտ, ուտելի է:
**Հարսը մէ'տէօնք** -- հարսի մատներ. խաղողի տեսակ՝ հարսնամատ:
**Հէ'վըրը կըտէկ** -- հաւերու կուտ-իկ. ուտելի խոտ մը:
**Ձէ'գը բարձէկ** -- ձագի՝ թռչունի բարձիկ, գարնան աճող ուտելի խոտ մը:
**Ձըկը խուտ** -- ձուկի խոտ: Եղինջի ոչ-ուտելի տեսակէն հարթ տերեւներով տարեկան խոտ, որ ուտելի տեսակին հետ (**շըլֆըդօկ**) մեծ խտութեամբ կ'աճի պարարտ գետիններու մէջ կամ աղբիւսներու վրայ:
**Ձիը պըճէճ** -- պատիճաւոր փռուող կամ մագլցող տարեկան բոյս, պատիճը՝ բարակ ու երկար, հունտը ուտելի է:

**Մաղվը ծաղէկ** -- մեղուի ծաղիկ. մէկ թզաչափ կոթունով սեղմ տերեւներուն ետեւէն բացուող ծաղիկ է քանի մը բաժակով:
**Մաղրը պըճէճ** -- մեղրի պաճիճ. պատիճաւոր փոռւող տարեկան բոյս, պատիճին հատիկները ոլոռնի կը նմանին. ուտելի է. որոշ տեղեր շատ կը պատահի, թուփերը քաղելով բոցի վրայ կը խանձեն, կ'ուտեն:
**Մէ'քը ականջ** -- գառնականջ. կ'ըսուի նաեւ թրքերէնը՝ **գուզը գուլաղէկ**՝ գառան ականջ-իկ:
**Մէ'քը դըմմօկ** -- մաքիի դմակ, նոյնը՝ **մաղվը ծաղէկ**
**Պախրը լիզզէօ** -- պախրի՝ եզ, եզան լեզու. կայ երկու տեսակ. ողորկ տերեւներով տեսակը իբրեւ թէյ կ'օգտագործուի աւազի խնդիր ունեցողներուն կողմէ, ունի բուժական յատկութիւն, կ'ունենայ հասկաձեւ բուկեր: Երկրորդը գետնատարած մանր փուշերով կոշտ տերեւներ ունի, ուտելի է, կ'օգտագործուի խոտիկապուրի պատրաստութեան մէջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Քեսապի բարբառի բուսանուններն ու պտղանունները, ըստ ծագման, մեծամասնութեամբ բնիկ հայերէն բառեր են, որոնք բարբառին անցած են համապատասխան պատմական հնչիւնափոխութեամբ եւ մասնակի իմաստափոխութեամբ: Արաբերէն եւ թրքերէն ծագման բառերը քիչ պարագաներու հայերէն բառերը փոխարինած են: Նոր մշակութիւնները բարբառին մէջ կը մտնեն ծագման անուններով: Բարբառի ածանցաւոր ու բարդ բառերու կազմութեան մէջ կ'երեւին հայերէնի օրինաչափութիւնները, ուր հիմնական թէ երկրորդական ձեւոյթները մեծամասնութեամբ դարձեալ կը սերին հայերէնէն: Բարդ բառերու փոխարէն տիրական են յարադրաւոր բարդութիւնները որոշիչ-ոչոշեալ, յատկացուցիչ-յատկացեալ կաղապարով, ուր բաղադրիչները կը շարունակեն պահել իրենց ինքնուրոյնութիւնը, կցականութիւնը չէ տարածուած: Յարադրաւոր բառերու մէջ շատ են կենդանիներու անուններով կազմուած պատկերաւոր անունները: Զուտ բարբառագիտական խորքով յօդուածը նաեւ անհրաժեշտ կը գտնէ Քեսապի բուսական ծածկոյթի ըստ էութեան ուսումնասիրութիւնը՝ տալով բոյսին նկարը, գիտական անունը, ամբողջական նկարագրութիւնը, գործառոյթները եւ ներկայութիւնը ժողովրդային հաւատալիքներուն եւ զրոյցներուն մէջ:

## A GENERAL OBSERVATION OF PLANT NAMES IN THE DIALECT OF KESAB

(Summary)

HAGOP CHOLAKIAN
hagopcholakian@hotmail.com

The paper examines the names of plants and fruits in the dialect of Kesab. The origins of most of these nouns are native Armenian words which have been imported to the dialect with historical and partial semantic changes. On rare occasions names which originate from Arabic or Turkish have replaced the Armenian names. As for newly cultivated plants and fruits, they are imported to the dialect using their original names.

The paper analyses as well the formation of compound and ածանցաւոր words and notes that both the formation and secondary ձեւոյթները are derived from and follow the basic patterns of Armenian. Instead of compound words, juxtaposed compound words with attribute vs subject (or determinant vs. determined) and possessor vs. possessed format are more dominant. In this case the constituent words maintain their authenticity while agglutination is not a widespread form. In the case of juxtaposed compound words, names constructed from the names of the animals the plant or fruit resembles constitute the majority.

The paper argues the importance of extensive study of the Kesab greenery from a dialectological perspective. Such a study should include a picture of the plant, its scientific name, a full description, its functions and its presence in popular beliefs and tales.

# ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

**ՄՈՀԱՄՄԱԴ ՄԱԼԷՔ ՄՈՀԱՄՄԱԴԻ**
m.malekmohammadi@fgn.ui.ac.ir

ՄՈՒՏՔ

Հայ-արաբական լեզուական առնչութիւնների վաղ շրջանը, ըստ որոշ վարկածների սկիզբ է առել Ք.ա. Դ.-Գ.դդ. ընթացքում, երբ արաբական ցեղերը բնակութիւն էին հաստատել Միջագետքում, պատմական Հայաստանի հարաւում շփուելով հայ բնակչութեան հետ: Հայ-արաբական լեզուամշակութային շփումները դարերի ընթացքում աւելի են խորանում, յատկապէս Կիլիկեան Հայաստանի պաշտօնական լեզուի՝ միջին հայերէնի ժամանակաջրջանում, երբ սկիզբ է առնում գիտութեան եւ արուեստի հայկական վերածնունդը:

Սոյն յօդուածում, անդրադարձ է կատարուել հայ-արաբական լեզուական յարաբերութիւնների պատմական վաղ եւ ուշ շրջանաբաժանումների քննարկմանը: Քննարկուել է Ներսէս Մկրտչեանի (1928-2016) ուսումնասիրութիւնների նորոյթը հայ-արաբական լեզուական առնչութիւնների ասպարէզում: Նրա ստուգաբանական պարզաբանումները տպաւորիչ եւ տրամաբանական վերլուծութիւններով նոր մարտահրաւէր էին հայ լեզուաբանութեան մեծեր Հայնրիխ Հիւբշմանի, Հրաչեայ Աճառեանի եւ այլ հեղինակաւոր մասնագէտների որոշ եզրայանգումների դէմ, որոնց համաձայն արաբների հետ հայերի առաջին շփումները տեղի են ունեցել միայն Է. դարից սկսեալ, իսկ արաբական փոխառութիւնները հայերէնում կատարուել են Է. դարից յետոյ:

Հիմք ընդունելով թեմային վերաբերող ուսումնասիրութիւնները, ստուգաբանական մօտեցումներով վերանայուել են միջին հայերէնի արաբական ծագմամբ մի շարք բառեր:

ՆԱԽԱԲԱՆ

Հաշուի առնելով Հայկազեան համալսարանի նախաձեռնութիւնը՝ հայ-արաբական փոխառնչութիւնների թեմային նուիրուած 2022ին գիտաժողովը[1], ինչպէս եւ *Հայկազեան հայագիտական հանդէս*ի (*ՀՀՀ*) երկարամեայ աւանդը հայագիտութեան եւ հայերէնագիտութեան բնագաւառներում՝ որպէս տուեալ տարածաշրջանի գիտական միակ պարբերականը, ձեռնամուխ եղանք *ՀՀՀ*ում անդրադառնալու հայ-արաբական յարաբերութիւն-

[1] Գիտաժողովը կազամակերպուել էր համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութիւններու կեդրոնի կողմից: Այն տեղի ունեցաւ 6 եւ 7 Դեկտեմբեր 2022ին, Հայկազեան համալսարանում:

ների ամենաէական թեմային՝ լեզուական առնչութիւններին[2], մանաւանդ որ հայ-արաբական փոխյարաբերութիւնների ոլորտում արձանագրուած լեզուական առնչութիւնները մշտապէս ականաւոր լեզուաբանների ուշադրութեան կենտրոնում են եղել, երբեմն էլ նոր մարտահրաւէրների, վիճելի կարծիքների, եզրայանգումների տեղիք են տուել:

Հայ-արաբական լեզուական առնչութիւնները անբաժանելի մաս են կազմում հայ ընդհանուր լեզուաբանութեան, հայերէնագիտութեան եւ մասնաւորապէս միջինհայերէնեան շրջանի աղբիւրագիտութեան ուսումնասիրութիւններին: Հայ-սեմական լեզուական շփումները, հայերէնի աքքադական եւ ասորաարաբական փոխառութիւնների հարցը քննարկել են հայ եւ այլազգի մասնագէտներ մասնաւորապէս՝ Հիւբշմանը, Եոզէֆ Կարստը, Նիկողայոս Ադոնցը, Բագրատ Խալաթեանցը, Յովհաննէս Սագզեանը, Աճառեանը, Գրիգոր Ղափանցեանը, Գէորգ Ջահուկեանը, Յակոբ Մոմճեանը, Ռաֆիկ Ղազարեանը եւ Մկրտչեանը[3]:

---

[2] ՀՀՀի էջերում հրատարակուած «Ստուգաբանութիւնների քննարկում. *Նորայայտ բառեր վաղաշխարհաբարեան աղբիւրներում (16-18րդ դդ.) բառարանի*» յօդուածում մասնակիօրէն անդրադարձել ենք նաեւ հայ-արաբական լեզուական առնչութիւններին (41:2021, էջ 479-98):

[3] Heinrich Hübschmann, *Die semitischen Lehnwörter im Altarmenischen*, «ZDMG» 46: 1892, էջ 226-68. նաեւ՝ J. Karst 1901, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg: Verlag von Karl Trübner. Photomechanischer Nachdruck 1970, Berlin, Walter de Gruyter & Co.. նաեւ նոյնի՝ *Geschichte der Armenischen Philologie in ...,* Heidelberg, Winter, XII, 1930. նաեւ՝ Н. Мкртчян *Семитские языки и армянский* (Ներսէս Մկրտչեան, Սեմական լեզուները եւ հայերէնը) «Դրազարկ», Երեւան, 2004. նաեւ նոյնի՝ *Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հտր. Ա*, Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Երեւան, 1972. *հտր. Բ*, ԵՊՀ հրատ., Երեւան. 1975. նաեւ՝ «Արաբերէն փոխառութիւններ հայերէնում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 10:1987, էջ 54-60. նաեւ՝ «Արաբերէն փոխառութիւններ հայերէնում (նախքան արաբների արշաւանքը Հայաստան)», *Լրաբեր*, 2:1984, էջ 72-82. նաեւ՝ «Արաբերէն փոխառութիւններ հայերէնում (նախքան արաբների արշաւանքը Հայաստան)», *Լրաբեր*, 3:1980, էջ 49–64. նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, հտր. II*, «Հայպետհրատ», Երեւան, 1951. նաեւ՝ Ա. Դարեան, «Ակնարկ հայ-արաբ մշակութային կապերուն վրայ»՝ *Էջեր գրականութեան եւ արուեստի*, Պէյրութ, 1972, էջ 40-71. նաեւ՝ Էսգէթ, «Սեմիտական բառեր հին հայերէնում», *Արարատ*, Զ, է-Ը, Թ-Ժ: 1915. նաեւ՝ Հայնրիխ Հիւբշման, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, գերմ. թարգմ.՝ Մ. Ն. Յարութիւնեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2004. նաեւ՝ Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան, *Միջին հայերէնի բառարան,* ԵՊՀ հրատ., Երեւան, 2009. նաեւ՝ Ս. Ղազարեան, *Միջին հայերէն, գիրք Ա*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1960. նաեւ նոյնի՝ *Միջին գրական հայերէնի բառապաշարը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2001. նաեւ՝ Յ. Մոմճեան, *Հայ լեզուն արաբ բերնի մէջ եւ փոխադարձաբար*, տպ. Մշակ, Պէյ-

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀԻՆ ԵՒ ՄԻՋԻՆ ՇՐՋԱՆԵՐԸ ԸՍՏ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Հայերէնը իր պատմական զարգացման ընթացքում շփուել է տարածաշրջանի մի շարք լեզուների հետ: Հայոց լեզուի հին եւ հնագոյն շրջանում «*քրիստոնէութիւնը եւ քրիստոնէական կրթութիւնը մղիչ գործօններ են եղել յունական եւ ասորական փոխառութիւնների համար, որոնց մեծ մասը 3րդ դարի վերջի (Հայաստանում քրիստոնէութեան ընդունումը) եւ 5րդ դարի սկզբի (Քաղկեդոնի ժողովի) միջեւ ընկած ժամանակահատուածում են մուտք գործել հայերէն, ուրեմն զգալիօրէն աւելի ուշ՝ քան պարսկական փոխառութիւնները, որոնք գերազանցապէս արդէն պարթեւների ժամանակաշրջանում են ներթափանցել*»[4]: Սակայն պէտք է նկատել, որ «*պարթեւական ժամանակաշրջանի պարսկական մշակոյթը Հայաստանի վրայ աւելի մեծ ազդեցութիւն է ունեցել, քան սասանեան շրջանի քրիստոնէականը*»[5]: Այն ինչ բացատրւում է հին հայերէնում իրանական փոխառութիւնների անհամեմատ մեծ քանակի առկայութեամբ:

Եթէ հայոց լեզուի հին եւ հնագոյն շրջանը համարուել է - առաւելապէս - հայ-իրանական լեզուական առնչութիւնների շրջան, ապա հայոց լեզուի միջին շրջանը կարելի է համարել հայ-արաբական լեզուական առնչութիւնների շրջան՝ հաշուի առնելով այն որ արաբական փոխառութիւնները կազմել են միջին հայերէնի փոխառեալ բառապաշարի գերակշռող մասը: Աճառեանը իր *Արմատական բառարան*ում բերում է արաբերէնից հայերէն փոխառեալ 702 բառ, իսկ գերմանացի լեզուաբան եւ հայագէտ Կարստը իր առայսօր չհրատարակուած "Wörterbücher des Mittelarmenischen" բառարանում (մեր հաշուարկումով) ներկայացնում է 1231 (976 + 255) բառ: Ղազարեանի եւ Աւետիսեանի *Միջին հայերէնի բառարան*ում արաբական փոխառութիւնների թիւը կազմել է 1436 բառ[6]:

Ըստ հին եւ միջին հայերէնի մասնագէտ Ղազարեանի՝ արաբերէնից փոխառուած բառերի մեծագոյն մասը ժողովրդական փոխառութիւններ են, որոնք միջին գրական հայերէնին են անցել ուղղակի ճանապարհով՝ ժողովրդախօսակցական լեզուից[7]: Ժողովրդական բնոյթի արաբական փոխառութիւնները արտացոլում են կեանքի տարբեր կողմերը, միաժա-

---

րութ, 1960. նաեւ՝, Մ. Մուրադեան, «Արաբական փոխառութիւնները միջին գրական հայերէնում», *Լրաբեր*, 2:1967, էջ 29-40. նաեւ՝ Գէորգ Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն (նախագրային ժամանակաշրջան)*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987:

[4] Հիւբշման, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, էջ 352:

[5] Նոյն, էջ 353:

[6] Ղազարեան, *Միջին գրական հայերէնի բառապաշարը*, էջ 91:

[7] Նոյն:

մանակ դրանք կենդանի վկայում են այն յարաբերութիւնների մասին, որոնք երբեւէ գոյութիւն են ունեցել հայ եւ արաբ ժողովրդների միջեւ:

Ինչ վերաբերում է գրական փոխառութիւններին, որոնք կատարուել են գրաւոր եղանակներով՝ հիմնականում կատարուել են արաբերէնից թարգմանուած տարբեր աշխատանքների միջոցով: Պէտք է նկատել, որ «*անժեխտելի է, որ միջնադարում մեծ նուաճումների հասած արաբական գիտութիւնը՝ յարակից մի շարք ճիւղերով, նշանակալից դեր է խաղացել ժամանակի հայ գիտական մտքի զարգացման գործում*»[8]: Հարկ է նշել, որ բուսանունները մեծագոյն մաս են կազմում միջին գրական հայերէնի արաբական փոխառութիւնների իմաստային բազմազան խմբերի շարքում[9]:

## ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԵՐԸ

Հայ-արաբական լեզուական առնչութիւնները կարելի է բաժանել պատմականօրէն երկու շրջանների.-

Ա. Վաղ շրջան[10], մինչեւ Է. դար, նախքան արաբների արշաւանքը Հայաստան.

Բ. Ուշ շրջան, Է. դարից յետոյ:

## ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ (ՄԻՆՉԵՒ Է. ԴԱՐ, ՆԱԽՔԱՆ ԱՐԱԲՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ)

Ըստ ասորա-բաբելական սեպագիր աղբիւրների վկայութիւնի, հայ-արաբական լեզուական առնչութիւնների վաղ շրջանը սկիզբ է առել Ք.ա. Դ.-Գ. դդ. ընթացքում, երբ արաբական բազմաթիւ ցեղեր բնակութիւն էին հաստատել Հիւսիսային Սիրիայում եւ Միջագետքում, շփուելով Միջագետքում հայ բնակչութեան հետ: Նման եզրայանգման համար Մկրտչեանը մէջբերելով պատմաբան Ադոնցի հետեւեալ պարզաբանումները, գրում է. «*Յետագայ դարերում նոյնպէս չի ընդհատւում արաբների հոսքը դէպի Հիւսիսային Միջագետք, ինչը կարելի է համարել որպէս Սասանեանների կործանման հարցում հիմնական դերերից մէկը*»[11]: Ադոնցը այս կապակցութեամբ գրում է. «*Արաբական յայտնի եւ ազդեցիկ ցեղերը վա-*

---

[8] Նոյն, էջ 93-94:

[9] Աւելի մանրամասն տե՛ս՝ Ղազարեան, *Լեզուաբանական ուսումնասիրութիւններ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2010, էջ 245-48:

[10] Հայ-արաբական վաղ շրջանի (մինչեւ 640) մերձեցումների վերաբերեալ պահպանուած հայ եւ օտար աղբիւրների վկայութիւնների մասին մանրամասն տե՛ս՝ Մկրտչեան, «Արաբերէն փոխառութիւններ հայերէնում (նախքան արաբների արշաւանքը Հայաստան)», *Լրաբեր*, 3:1980, էջ 49–64. նաեւ՝ Մոմճեան. նաեւ՝ Մուրադեան, էջ 29-40. նաեւ՝ Դարեան, էջ 40-71:

[11] Մկրտչեան, 3:1980, էջ 52:

*ղուց բոյն էին դրել Հայկական Միջագետքում: Անապատի որդիները դիւրաւ տապալեցին Սասանեանների աշխարհասասան պետութիւնը մասամբ այն պատճառով, որ ցեղական յենարաններ ունէին գլխաւոր ճանապարհների վրայ: Դարերի ընթացքին արաբական հեղեղը հոսել էր կամացուկ եւ լճացել Եփրատ եւ Տիգրիս գետերի տափաստաններում՝ ծնունդ տալով մեծամեծ իշխանական տների, որ բնական հանգրուաններ դարձան նորեկ աշխարհակալների համար*»[12]:

Ինչ վերաբերում է վաղ շրջանի հայ եւ արաբ ժողովուրդների լեզուական առչութիւնների հարցին, մանաւանդ այն ժամանակաշրջանում, երբ արաբները դեռեւս գրականութիւն չունէին, ապա ըստ Մկրտչեանի «*մինչեւ արաբների կողմից Հայաստանի նուաճումն արդէն բազմաթիւ արաբերէն կամ արաբա-ասորական կոյնէին յատուկ բառեր փոխանցուել էին հայերէնին եւ դրանք որոշ հնչիւնական օրինաչափութիւններով տարբերւում են VII դ. եւ աւելի ուշ կատարուած փոխառութիւններից*»[13]: Ըստ նրա «*կասկած չի յարուցում արաբահայ վաղ մերձեցումների պատմական իրողութիւն լինելը, դրանք մէկ անգամ եւս հաստատւում են հայերէնի այսպէս ասած «ոսկեդարեան» բառապաշարում բազմիցս վկայուած արաբերէն փոխառութիւններով*»[14]: Ուստի վաղ շրջանի արաբական կամ ասորա-արաբական (արամէա-արաբական) փոխառութիւնները կատարուել են Հայաստանի հարաւային բարբառների միջոցով, որտեղ աւելի արտայայտիչ է սեմական նստուածքը հարաւային Հայաստանի յարակից գաւառների ասորիների եւ հայերի շարունակական յարաբերութեան հետեւանքով:

Մկրտչեանը իր *Սեմական լեզուները եւ հայերէնը*[15] աշխատութեան մէջ քննարկել է հայերէնի սեմական լեզուաընտանիքի պատկանող բառապաշարը, այդ թւում՝ աքքադերէն, քանաներէն, արամէերէն, ասորերէն, ասորա-արաբերէն եւ արաբերէն բառերը: Մկրտչեանը սոյն արժէքաւոր աշխատութեան մէջ քննարկել է հայերէնի եւ սեմական լեզուների բառային եւ քերականական ընդհանրութիւնները: Ըստ նրա լեզուաբանական ուսումնասիրութիւնների եզրայանգումների՝ հայերը ապրելով աքքադացիների հարեւանութեամբ հարիւրաւոր լեզուական փոխառութիւններ են կատարել ատենի աքադերէնից (դպիր, կնիք, անագ, գագաթ, ագուռ, թոնիր, քաղաք եւն. շուրջ 300 բառ):[16]

---

[12] Նիկողայոս Ադոնց, *Պատմական ուսումնասիրութիւններ*, հրատ. Ա. Ղուկասեան, Փարիզ, 1948, էջ 54:

[13] Մկրտչեան, Լրաբեր, 3:1980, էջ 53:

[14] Մկրտչեան, *Լրաբեր*, 2:1984, էջ 72:

[15] Мкртчян, *Семитские языки.* նաեւ՝ Մկրտչեան, *Սեմական լեզուները*:

[16] Տե՛ս նաեւ՝ Լ. Խաչատրեան, «Ներսէս Մկրտչեան. *Սեմական լեզուները եւ հայերէնը*», Երեւան, «Դրազարկ», 2004, 376 էջ», *Պատմաբանասիրական հանդէս*,

Մկրտչեանի հայ-արաբական լեզուական առչութիւնների ուսումնասիրութիւնները եւ ստուգաբանութիւնների արդիւնքները, ստուգաբանական պարզաբանումները տպաւորիչ եւ տրամաբանական վերլուծութիւններով նոր մարտահրաւէր էին հայ լեզուաբանութեան ասպարէզի մեծեր Հիւբշմանի, Աճառեանի եւ այլ հեղինակաւոր մասնագէտների[17] որոշ եզրայանգումների դէմ, որոնց համաձայն արաբների հետ հայերի առաջին շփումները տեղի են ունեցել միայն Է. դարից սկսեալ, իսկ արաբական փոխառութիւնները հայերէնում կատարուել են Է. դարից յետոյ:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել որ Մկրտչեանի ուսումնասրութիւնների նորոյթը համարտում է մինչեւ արաբների Հայաստան արշաւելը արաբերէնից հայերէն կատարուած փոխառութիւնների իրողութիւնը[18], միչդեռ ինչպէս նշուեց՝ Հիւբշմանը եւ Աճառեանը ընդհանրապէս ժխտում են հայերէնում արաբական ծագման բառերի առկայութիւնը մինչեւ Է. դարը[19]:

Յատկանշական է նաեւ, որ ըստ Ջահուկեանի՝ «*Հրդ դ. մատենագրութեան մեջ կան մի շարք բառեր, որոնք սեմական լեզուների համապատասխան բառերի մէջ ամէնից աւելի մօտ են արաբականներին: Այսպիսի դէպքերում Հ. Հիւբշմանը եւ Հ. Աճառեանը կամ ընդհանրապէս ժխտում են հայերէն բառերի սեմական ծագումը, կամ ենթադրում փոխառութիւն ասորական բարբառներից*»[20]: Ակադեմիկոսն իր այդ համոզմունքը ապացուցում է արաբական ցեղերի առկայութեամբ՝ Իրանի եւ Բիւզանդիայի սահմանամերձ վայրերում՝ Է. դարից աւելի վաղ, Հայաստանի հարաւային շրջաններին մերձաւոր վայրերում «իւրատեսակ ասորա-արաբական կոյնէի» առկայութեամբ[21]:

Հարկ է նշել նաեւ, որ վերջին տասնամեակներին հայ-արաբական լեզուական առնչութիւնների թեմային նուիրուած մի շարք աշխատանքներում Մկրտչեանի յուժ կարեւոր ուսումնասիրութիւնները զերծ են մնացել մասնագէտների ուշադրութիւնից:

## ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ

---

1:2006, էջ 328-31. նաեւ՝ Ռ. Ղազարեան, Վ. Համբարձումեան, «Ներսէս Մկրտչեան-80», *Պատմաբանասիրական հանդէս,* 1:2010, էջ 293-94:

[17] Heinrich Hübschmann (1892), *Die Semitischen Lehnwörter im Altarmenischen.* Zeitschrift der. Deutschen Morgenländischen Gesellschaft 46, էջ 226-68. (ZDMG). նաեւ՝ Heinrich Hübschmann, (1895): Armenische Grammatik, էջ 259-80:

[18] Աւելի մանրամասն տե՛ս՝ Խաչատրեան:

[19] Hübschmann, *Die Semitischen Lehnwörter in Armenischen*, ZDMG 1892, էջ 126-268. նաեւ՝ Hübschmann, Persische studien, Strassburg, 1895, 1, էջ 259-80. նաեւ՝ Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, հտր. 2*, էջ 169-17:

[20] Ջահուկեան, էջ 485:

[21] Նոյն:

ՈՒԽ ՇՐՋԱՆԸ (Է. ԴԱՐԻՑ ՅԵՏՈՅ)

Հայաստանում եւ Հայաստանից դուրս հայ-արաբական յարաբերութիւնների ուշ շրջանը մասնագէտները բաժանել են երկու մեծ ենթաշրջանների.-

Ա. շրջանը սկսւում է Է. դարի կէսերից եւ աւարտւում Թ. դարի վերջերին - շուրջ 3 դար - արաբական խալիֆաթի տիրապետութեան շրջանը, երբ արաբերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ խիստ աննշան է եղել:

Երբ Հայաստանը նուաճուեց արաբների կողմից 774-75ի հայկական ապստամբութիւններից յետոյ, արաբները սկսեցին զանգուածաբար գաղթել Հայաստան, Շայբանիների ցեղը տիրեց Դատուանին, Սուլայմ ցեղը գրաւեց Բաղէշից մինչեւ Կարին ընկած շրջանները, Կայսիկները հաստատուեցին Վանայ լճի շրջակայ գաւառներում, 786-809ի ընթացքում, արաբ ցեղերը բերւում եւ բնակեցւում էին Հայաստանում[22]:

Երկրոդ շրջանը ընդգրկում է ԺԲ.-ԺԷ. դարերը, որոնք համընկնում են հայ ժողովրդի տնտեսական-մշակութային վերելքի եւ կայուն քաղաքական զարգացումների հետ. այդ շրջանում կատարւում է միջինհայերէնեան շրջանի արաբական փոխառութիւնների գերակշռող մասը: Կիլիկեան Հայաստանի պաշտօնական լեզուի՝ միջին հայերէնի ժամանակաշրջանում, երբ սկիզբ է առնում գիտութեան եւ արուեստի հայկական վերածնունդը գիտութեան զանազան ոլորտներում, մի շարք աշխատանքներ են արաբերէնից թարգմանւում հայերէն, որոնց միջոցով բազմաթիւ փոխառութիւններ են կատարւում արաբերէնից հայերէն:

Ինչ վերաբերում է մասնաւորապէս միջին հայերէնի արաբական փոխառութիւնների անցման հարցին, ապա պէտք է նշել, որ այդ փոխառութիւնների մի զգալի մասը կատարուել է պարսկերէնի միջոցով, ինչը հաստատւում է հնչիւնական օրինաչափութիւններով: Աճառեանի համոզմամբ՝ միջին հայերէնի արաբական փոխառութիւնները բուն Հայաստանում անմիջաբար արաբերէնից չեն, այլ թերեւս ներթափանցել են հարեւան պարսկերէնի միջնորդութեամբ[23]: Ուշագրաւ է նրա վերլուծութիւնը այս կապակցութեամբ. «*Յատկապէս ԺԱ. դարում, երբ հայոց Բագրատունի թագաւորութիւնն արդէն վաղուց հաստատուած էր, արաբները Հայաստանից հեռացած եւ նոյնիսկ իրենց անկման շրջանն էին մտած: Այս պարճառով ազդեցութիւնը պիտի վերագրենք ոչ թէ ուղղակի արաբներին, այլ մեր հարեւան պարսիկներին*»[24]: Ըստ այդմ՝ պարսկերէն եւ արաբերէն բառերը կարելի է իրարից չտարանջատել, մանաւանդ որ հիմնա-

[22] Ա. Տերղեւոնդեան, *Արաբական ամիրայութիւնները բագրատունեաց Հայաստանում*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, էջ 62:

[23] Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, Հ. II*, էջ 183, 186:

[24] Նոյն, էջ 183:

կան մասը հաւասարապէս գործածուած է եղել ե՛ւ պարսկերէնում, ե՛ւ արաբերէնում, ե՛ւ թուրքերէնում:

Արդ, սոյն յօդուածի սահմաններում ըստ այբբէնական կարգի ստուգաբանական նկատառմուներով վերանայւում եւ ներկայացւում են միջին հայերէնեան շրջանի մի շարք արաբական փոխառութիւնները: Բառայօդուածների մէջբերումների խնդրով հարկ է նշել որ հիմք ընդունելով թեմային վերաբերող ուսումնասիրութիւնները, ստուգաբանական մօտեցումներով վերանայուել են միջին հայերէնի արաբական ծագմամբ մի շարք բառեր: Որոշ տեղերում չակերտների մէջ չենք գրել, որովհետեւ փոփոխութիւններ ենք կատարել եւ անուղղակի յղում ենք տուել: Քանի որ մէջբերումների կառուցուածքը փոխել ենք եւ որոշ ուղղումների ենք ենթարկել, ուստի չակերտների փոխարէն փակագծերի մէջ ենք յղումը տուել:

Որոշ բառերի համար նոյն ստուգաբանութիւնը կատարել են միքանի հեղինակ: Մենք վերանայել ենք ստուգաբանութիւնները եւ ներկայացրել նոր ձեւաչափով՝ ուստի չակերտների մէջ չենք գրել, բայց յղումը փակագծերի մէջ ենք տուել: Նման դէպքերում գտել եւ գրել ենք արաբատառ բառը[25], նաեւ՝ անգլերէն թարգմանութիւնը եւ բառայօդուածի վերջում նշել ենք, նաեւ այն հեղինակներին, որոնք ստուգաբանել են բառը:

1. Աբդլ Ճաֆարի Abdl čafari ‘Jafar's servant’ (Personal name). Etym.= Arab. عبد الجعفر Aʿbd Ul-ǰaʿfari. (ԶՊՔ, 1958:29):
2. Աբդլ Մելիք, Abdl MeliK‘ ‘Melik's servant’ (Personal name). Etym.= Arab. عبدالملک Aʿbd Ul- MaleK‘, Abd Ul- MaleK‘. (ԶՊՔ,1958:25):
3. Աբդլազիզ Abdlaziz, Աւտուլ Ազիզ Avtul Aziz. Etym.= Arab. عبد العزيز Aʿbd Ul-aʿziz. In the 13th century version of ԶՊՔ was a sound change [b] > [v], Abdlaziz> Avtulaziz. (ԶՊՔ, 1958:25, 30, 38):
4. Աբդլայ, Abdla, Etym.= Arab. عبدالله A‘bdullah (Աբդուլլայ), (Personal name) Ծառայ Ալլահի (Աստուծոյ), Ս. Մոհամմադ մարգարէի հօր անունն է. (ԻՀՄ, 1930:120):
5. Աբեղայ abeła ‘religious, moine, religieux, μονάζων, μοναχός Monachus, վանական, կուսակրօն, կրօնաւոր’. Etym.= syr. abīlā, awīlā ‘monk, friar, տխուր, տրտում, լալ, սգալ, տրտմել’. Arab. ابيل ebīl ‘old man, priest, ծերունի, քահանայ’. (ՆԲՀ, ՀԱԲ, 1971:74, WMA):
6. Աբլահ ablah, adj., ապլեհ aplah. Etym.= arab ابله ablah ‘Stupid, ignorant, յիմար, տգէտ’: «Աբլահ մարդուն ու խումարին ու հարբածին խրատ մի տաք» /ԽՆ, 65/ (ՄՀԲ, 2009:13):

[25] Ստուգաբանութիւնների համար արաբերէն բառերը, հիմնականում մենք ենք գտել:

7. Աբհուլ abhul, n., Etym.=arab. ابهل abhul ‘Savin, Juniperus Sabina’ ցրդենոյ պտուղ ‘fruit of the Savin, Juniperus Sabina L.’ (Greppin, 1995:386):

8. Ագատ agat ‘colure’ (Astronomy) 14 cen. «Որ չունի ագի, կամ որոյ հատեալ է ագին. պոչատ. Գոյրուգսուզ: Ոսկիփոր» (ՆԲՀ) «Երկու մեծ բոլորակք՝ որ հատանեն զհասարակածն եւ զկենդանակամարն ի չորս մասունս հաւասարս»: «Ասին ագատք, զի են անկատարք» [Norayr. Dict. fr. arm. 259 II.] Etym.=Arab. عقد ‘aqd ‘communication, crown, necklace, կապ, պսակ, մանեակ’,عقده uqada ‘loop, կապ, հանգոյց’. (ՀԱԲ, 1971:77, WMA):

9. Ագլիմա aglima, ախլիմիա axlimia ‘a kind of plant: cadmia’ (med.). Etym.= Arab. القليميا al-qalimiā or qlīmiā. (WMA, ՀԲԲ, 1944:19):

10. Ագուռ aguŕ ‘brik, աղիւս’. Attested twice «Աղիւս թրծեալն հրով ագուռ՝ կացցէ եւ ի ջրի լաւ քան զքար». [Վրք. hg. Բ. B. 328] «Որպէս ագռոյ հարկանել զգլուխ նորա»: [Վարք Գէորգայ, էջ 32]. Etym.= Pers. اگور āgū, «աղիւս, brik», but originally is a semitic word, Persian borrowed the word from another semitic language. Furthermore, compare: Assyr. agurru, syr. agūrā, Arab. آجور، آجر ajur, or ajūr. Krd. ājūr. (Georg. aguri, agurxana, Mingr. angora, Apghaz. Angur). (ՀԱԲ, 1971, 78. WMA):

11. Ագռ agŕ *Գիրք վաստակոց*ում **ագռ**ը հանդէս է գալիս երկու իմաստով՝ ա) «քաղցուի կամ մեղրի դիրտ», բ) «վէրքի շարաւ»[26]: Թէեւ **ագռ**ը բերուած է Աճառեանի բառարանում[27], սակայն ստուգաբանութիւնն ու ծագումը բաց են թողնուած: Ըստ Մկրտչեանի՝ հնարաւոր է, որ նոյն արմատից են նաեւ մի շարք բառարանների բերած ագորանք «աղբի մթերք» եւ ագոռանք «դիզուած աղբ»[28] ձեւերը՝ հայերէն -անք ածանցի յաւելմամբ: Համաձայն Մկրտչեանի՝ թուում է, **ագռ**ը ինչմամբ եւ նշանակութեամբ նոյնանում է արաբերէնի ʾakar «պղտորութիւն, նստուածք, տականք, դիրտ» կամ akārа «նստուածք մրուր, տականք» բառի հետ[29]:

12. Ադադ adad ‘Alidade, անկիւնաչափ, շարժուն քանոն՝ որով չափեն զանկիւնս, երկրաչափութեան, r. alidade, alhidāde’. The only attestation mentioned in Norayr. Dict. fr. arm. 42 b. Etym.= Arab. ʿiḍāda عِضَاده (with Turk. pronunciation: ezade). (ՀԱԲ, 1971:80, WMA):

---

[26] *Գիրք վաստակոց*, Վենետիկ, 1877, էջ 93, 213:

[27] Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտր. 1*, ԵՊՀ, Երեւան,. 1971, էջ 78-79:

[28] Երեմիա Մեղրեցի, *Բառգիրք հայոց*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 5. նաեւ՝ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտր. Ա,* Վենետիկ, 1836, էջ 3. նաեւ՝ *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865, էջ 2:

[29] Մկրտչեան, «Արաբերէն փոխառութիւններ», *Լրաբեր*, 10:1987, էջ 54-60:

13. Ադաթ adat‘, ատաթ, n., Etym.=Arab., pers. عادت ʿadat ‘custom, tradition, order, սովորութիւն, աւանդոյթ, կարգ ու կանոն’: «Բլբուլն ի վարդն ասաց. Թէ ի՞նչ ադաթ կայ քեզ» /ՄՆ, 111/ (ՄՀԲ, 2009:14):

14. Ադալաթ adalat‘, n. ‘Justice’ Արդարութիւն: Իւր երկիրն է խիստ ադալաթ, որ ոչ գող կայ եւ ոչ բոզ (Պօղոսեան, 2014, 20) Etym.= arab. pers. عدالة، عدالت:

15. Ադամայ (որդիք) adama Etym.= Arab. بنى آدم bani ādam ‘Human beings, ադամորդիներ’ (տե՛ս՝ Pers. آدميزاد adamizad). (ԶՊՔ, b, 1958:19 34, 36). 8c, 12c “՛ի բռ. յտկ. ան: Առաջին մարդն, նախաստեղծ. իսկ երկրորդ կամ նոր Ադամ ասի Քրիստոս Տէրն մեր. ատամ, ատեմ. *Եղեւ մարդն առաջին Ադամ 'ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ'ի” (ՆԲՀ):

16. Ադարոր adaror ‘pearl or jewel, մի տեսակ գոհար կամ մարգարիտ’ Etym.= Arab. در durr, durra, pl. durar درر. The spelling of Armenian word has been changed (ՀԱԲ, 1971:81, WMA):

17. Ադաւաթ adavat‘ Etym.=arab, pers. عداوة، عداوت adāvat ‘enmity, hatred, grudge, թշնամութիւն, ոխ’: Ադաւաթ անել. կռիւ անել, աղմուկ բարձրացնել, ոխ՝ քէն պահել: «Դուն ալ ադաւաթ կ'անես, գիտես թէ հետ քեզ խռով եմ» /ՆՔ, 33/ (ՄՀԲ, 2009:14):

18. Ադեն aden, ադին adin, ադենային adenayin (adj.). Etym.= syr. ‘aδen, Hebr. ‘ēδen, arab. عدن ’ad’an ‘paradise, դրախտ, եդեմ’ «Բառ եբր. էտէն, փափկութիւն. տեղի դրախտին, եւ Դրախտն. որ եւ ասի դրախտ փափկութեան» (ՆԲՀ, ԲՍՀ, ՀԱԲ, 1971:81):

19. Ադիմ adim, ադէմ adēm ‘pellis, corium, skin, leather, ներկուած սեկ կամ կաշի’. «Եթող զկինն եւ զգեցաւ հանդերձ փիլիսոփայի, սեկ ներկեալ՝ զոր ադէմն կոչեն, եւ ծաղր արար զծիրանիսն». Etym.= arab. adīm (adêm) اديم (WMA, ՀԱԲ, 1971:81):

20. Ազալաունք azalaunk‘ n., Etym.= arab. ʿaḍala (ʿaḍhala) عَضَلَه, pers. ʿaḍala ‘muscle’, pl. ʿaḍolat (ʿaḍhala) عَضَلَات. «Եւ կամ թէ քանի ազալաունք են, որ են մկունք աչացն» (ՄՀԲ, 2009:15):

21. Ազապ azap, n., ազաբ azab, Ազապութիւն, ‘unmarried, ամուրի, չամուսնացած’. Կու սիրեմ ազապ աղջիկ [ՆՔ, 130] The oldest attestation is found in Kostandion (I) Kondak (Katoxikosakan kondak, 13th C.). Etym.=Arab. عزب ‘azab ‘Fr. Celibataire, en. Unmarried’. Arabic word has been borrowed in Turk. azab, Krd. azeb. (WMA, ԲՍՀ, ՀԱԲ, 1971:82):

22. Ազիզ aziz, adj., Etym.=arab. pers. عزيز ʿazīz ‘dear, pleasant, precious, սիրելի, հաճելի, թանկագին’: «Կ'ուզե՞ս, որ ազիզ կենաս, որ ամէն մարդ զքեզ սիրէ: Թէ ինք որ նման գտեր, թող ազիզ արեւս ապրի» /ՆՔ, 161/ (ՄՀԲ, 2009:16):

23. Ազրախ azrax, adj., Etym.=arab. ازرق azraq أَزْرَق ‘blue,[30] կապոյտ’. Գունն սեւ եւ կամ ազրախ լինի. (ՄՀԲ, 2009:16):

24. Աթլազ at‘las, ադլաս adlas, ատլաս atlas ‘satin’. Etym.= arab. اطلس aṭlas ‘satin’. (WMA, ՄՀԲ, 2009, 17):

25. Աթխար at‘xar, Ադխար adxar, օթխոր otxor ‘Juncus odoratus or andropogon schoenanthus, վաղամեռուկ խոտը’. Hbus. 3336. Etym.= Arab. اذخر aḏxir, iḏxir. Lt. oleum adechari was a derivation from this word. (WMA, ՄՀԲ, Greppin 1995:386):

26. Աթուն at‘un, Աթունի at‘uni. Attested only once in Girk T‘ł. 515 (13th c.)= Mix. Asor. 209. «Սեւացեալ իբրեւ զաթունի, որ զբաղնիսն այրէ». Etym.= Arab. اتون atūn, اتّون attūn, Assyr. atūna, atūun, syr. atôna, atūn ‘հնոց, stove, furnace, oven’. (WMA, ՀԱԲ, 1971:89):

27. Աթրաֆ at‘raf, adj. ‘surroundings’ Չորս կողմը, բոլորտիք: Թաւլայ ասելն տիւանխանայ է, ԾԵ միլիօն է, թող զմիջինն եւ զաթրաֆն (Պօղոսեան 2014:21): Etym.= arab. pers. اطراف ‘about, environs, peri-, perimeter, periphery’:

28. Աթրուջան at‘runǰan n. Etym.=arab. الترنجان al-turunǰān ‘Lemon-balm, Melissa officinalis L.’ ձագի դեղ ձագախոտ. (Greppin 1995:387):

29. Ալաթ alat‘, n. ‘tool, accessories, supplies, գործիք, պարագաներ, պիտոյքներ’. Etym.=Arab. آلت ālat‘, pl. ālāt‘ آلات, Turk. alet‘, kurd. alet‘. pl. alat‘. (WMA, ՄՀԲ, 2009:18):

30. Ալաժահրի alažahri, Ալաժարի alažari, Ալժահրի alažhri ‘a kind of plant, ramnus infactorius L, մի տեսակ ներկատու բոյս է’ Etym.= Arab. الجهرى al– ǰahrī «տորոն», Turk. ǰehri, Fr. alizari. (ԲՍՀ, ՀԱԲ, 1971:90):

31. Ալամ alam (1). ‘flag, դրօշ, դրօշակ’. Etym.= Arab. ‘ala ‘m عَلَم. (WMA, ՀԱԲ, 1971:91):

32. Ալամ alam (2) Ալեմ alem, Ալէմ, alēm ‘world, country, universe աշխարհ, երկիր, տիեզերք’ Etym.= Arab. ālam عَالَم. (ՄՀԲ, 2009:18):

33. Ալանի alani ‘publicly, openly, յայտնի, հրապարակաւ’. “Թագաւորն խրատեսցէ զալանի մեղքն.” Etym.= arab. علنى ‘alanī ‘manifeste, notoire, notorious manifesto’. (WMA, ՆԲՀ, ՀԱԲ, 1971:91):

34. Ալաս alas, հալաս halas, Etym.= arab. خلاص xalāṣ ‘release, rescue, Փրկում, ազատում, փրկելը, ազատելը’ Ալաս անել. հսկել: Ու ալաս կենին ոչխարին (ՄՀԲ, 2009:18):

---

[30] Juliane Müller, “Die Farben des Koran. Semantik und Funktion der koranischen Farbbezeichnungen”, *Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft*, 163:2013, էջ 131-2. նաեւ՝ Georg Freytag (1833), “أزرق”, *Lexicon arabico-latinum praesertim ex Djeuharii Firuzabadiique et aliorum Arabum operibus adhibitis Golii quoque et aliorum libris confectum, volume 2*, C. A. Schwetschke, Halle, էջ 235.

35. Ալատնի alatni ‘Elatine, Cancerwort, pointed leaved toad-flax’. Etym.= Arab. alāʕīnī الاطينى, < Gr. Ἐλατίνη, Fr. Véronique, velvete and Gr. Ἐλάτη, ‘pine, սոճի’, Truk. Elatin. (WMA, ՀԱԲ, 1971:91) «Ալատնի: Ինքն մէկ ցեղի խոտ մըն է, որ տերեւն սխտորի տերեւ կու նմանի, եւ տակն փոքրիկ եւ բոլոր կու լինի. եւ ինքն մէկ ազգ սխտոր է եւ հինգ կամ վեց ճուղ կ'ունենայ, եւ երկայնութիւնն մէկ մէկ թիզ կու լինի, եւ ի ցաներուն մէջն եւ ի փոս տեղրանք կու բուսնի» [ԱԱԱ, 36]:

36. Ալարտիմիսա alartimisa, n., սպիտակ կնդրուկ. Etym.=arab. الارطماسيا al-arṭāmāsiyā ‘Wormwood, Absinthe, Artemisa vulgaris L.’. (Greppin, 1995:388):

37. Ալափ alap‘, Etym.= arab. علف ʿalaf ‘forage, արօտ, ճարակ, անասունների կեր, խոտ’, Arab. ʿalaf >pers. ʿalaf, Georg. alapi. (WMA, ՀԱԲ, 1971:92, ԲՍՀ):

38. Ալէմ alēm adj., ալամ, ալէամ, Etym.=arab., pers. عالم ‘learned person; scholar; scientist; Գիտուն, գիտնական, ուսեալ, հմուտ’. Համասփիւռ ծաղիկ անթառամելի, հազերի ալէմ բժիշկ ամէնի. (ՄՀԲ, 2009:19):

39. Ալէփ alēp‘ Ալիփ alip‘ ‘այբ տառը’. According to Ačaŕyan attested only once. Etym.= Hebr. alef, arab. الف alif, Turk. elif ‘The first letter of the alphabet’. (ՀԱԲ, 1971:93):

40. Ալի, Ali, Etym.= Arab. علىA‘lī (Personal name). Ալի պինի Ապու Թալիպ ابوطالب ابن على, չորրորդ խալիֆա (յաջորդ). (606-661): Միւս առաջին երեք խալիֆաներն են՝ Ապու Պեքր, Օմար եւ Օթման. (ԻՀՄ, 1930:115):

41. Ալիկ alik «forage, անասունի կեր, խար կամ կերակուր զոր տան անասնոց ի ժամու, անասունի կերը». «Զառաջին ալիկն յերեկոյէն տուր» [Վստկ. 211] Etym.= Arab. عَليق ʿalīq ‘forage’. (WMA, ԲՍՀ, 2000, 13):

42. Ալլա alla /S. 41/ ալլահ allah /S. 49, 60, 100/. Etym.=Arab. الله Allāh ‘Gott, God, Աստուած’. (Kraelitz-Greifenhorst 1927:774):

43. Ալլահ Աքպար, Allah Ak‘par Etym.= Arab. الله اكبر Allah Ak‘bar ‘Ամենամեծ Ալլահ’ (Աստուած). (ԻՀՄ, 1930: 60):

44. Ալխար հոփի alxar-hop‘i. Etym.= Arab. الغار al-ġār ‘Roman laurel, Laurus nobilis L.’ աղխար, հապալխատ. (Greppin, 1995:389):

45. Ալնահարի alnahari ‘a kind of plant’. According to Ačaŕyan attested only once in Քաջունի, գ. 3. Etym.= Arab. النهر al-nahr ‘white grapes, սպիտակ խաղող’. (ՀԱԲ, 1971, I, 95a):

46. Ալոգհալ aloghal, գիոյ պտուղ. Etym.=arab. الكحول al-kuhul ‘alcohol’, գիոյ պտուղ ‘fruit of the Juniper, Juniperus communis L.’. ալոքհոլ, ալոյհոլ (Greppin 1995:388):

47. Ալուսան alusan Ալուսան, Այլաուսան ayaylusan, Ալուսան, Այլուսան aaylusani ‘ἄλυσσον alysson, alyssum, been, themen. It. ben bianco, ben

russo, alysson, alyssum, վառվառուկ խոտը’. Etym.=Arab. أَلُوسَن ʾalūsan <Gr. ἄλυσσον-. Lt. alyssum, Fr. alysse, alysson «վառվառուկ». հուսնիւ իւսուֆ . حسن يوسف (ՆԲՀ, ՀԱԲ, 1971: 73, ԱԱԱԱ):

48. Ալոփալջիկ մասփուրի հունդ alop‘aljǐk-masp‘uri hund. Etym.=arab. العصفر al- ʿuṣfur ‘Safflower, Carthamus tinctorius L.’ ասփի հունդ ալոփալջրիկ. (Greppin, 1995:390):

49. Ալպուճ alpuč ‘Sweet-flag, Sweet-sedge, Myrtle sedge, Calamus L.’. Etym.= arab. البجّ albuǰǰ, buǰǰ. (ՀԱԲ, 1971:95, WMA, ՄՀԲ): Attested only in [*Առձեռն բառարան*, բ. տպ. Վենետիկ 1865. Հբուս, 27] «հնդկական մի խոտ է կամ acorus calamus». Ալպուճ (Racines indiennes). ինքն խոտի մի տեսակ է, որ ի Հնդկաց կու գայ. եւ ինքն ի պուզէտան կու նմանի. եւ սպիտակ կու լինի. (ԱԱԱԱ, 35):

50. Ալսուս alsus ‘Alsine juniperina Wahlenb, բժշկական բոյս է, բզրուկ, տզրուկ, մկնականջ’. Etym.= arab. السوس al-sūs «մատուտակ, Fr. réglisse, lt. glycyrrhiza». (ՀԱԲ, 1971:96, WMA:

51. Ալփտ շաղգամ alp‘t-sałgam, Etym.=arab. اللفت al-lift ‘Turnip, Brassica rapa L.’ շաղգամ, ալփդ. (Greppin, 1995:389):

52. Ալքիմիա alk‘imiya ‘alchemy, χυμικήˊ, chymica’ «տարրաբանութիւն կամ բանալուծութիւն, մանաւանդ ոսկի շինելու արուեստը». Etym.= arab. الكيميا al-kīmīyā. Fr. alchimie. – Hübsch. 262 (ՆԲՀ, ՀԱԲ, 1971:96):

53. Ախախիա axaxia աղաղիա aqaqia, խախիա xaxia, կակիա kakia ‘acacia, Robinia pseudoacacia, ակացիա ծառը եւ ուլկումիլի խէժը’ Hbus. 28. Etym.= arab. اقاقيا ʾaqāqiā «ուլկումիլի խէժ». Lt. Fr. acacia, lt. acazia, Rus. akagiя «ակացիա ծառը». (ՀԱԲ, 1971:96): Աղաղիա (Cachou). ինքն ղարաձին քամուքն է. լաւն այն է որ սերտ եւ պինտ լինի. հով է եւ չոր է Բ տարաճան. ինքն կապող եւ չորացնող է. զաչքն ուժովցնէ, եւ զգիճութիւնն տանի, եւ չթողու որ ի յաչքն իրք իջնու. (ԱԱԱԱ):

54. Ախայխիր axayxir Etym.=arab. عَقَاقِير ʿaqāqīr, ʿaqqār ‘galenic’. Sing. عَقَّاقِر ʿaqāqr. (WMA):

55. Ախար-Բախար axar-baxar, n. ‘end’ «վերջ» բառի կրկն., Աւարտ, աւարտ-մաւարտ?, վերջմերջ: Մինչեւ կողմն Էւատի հողի ափն, որ էն կուռն ախար-բախարն Գօգու գեղըցի Եղիկին այ (Պօղոսեան, 2014:21): Etym.= arab., pers. آخر āxer +بخير ‘ending well, ending one’s life well, having a good futurity’:

56. Ախարեթ axaret‘, n. ‘afterlife’ յետմահու, ապագայ կեանքը, յաւերժութիւն: Etym.= arab. pers. آخرت axarat ‘afterlife, eternity, futurity’: Զամենայն մնացեալսն ըստ չափու բաշխեաց եկեղեցւոյն, զի յեկեալ ախարեթներէն վճարեսցեն. (Պօղոսեան 2014:21):

57. Ախիլէ axilē, n. (med.) ‘leprosy, phagedenic ulcer’ Կերցաւ հիւանդութիւնը: Յորժամ յաւելնայ զանդամն խոց առնէ, որ տաճիկն ախիլէ ասէ: Etym.= arab. pers. آكله akela, akula (Պօղոսեան 2014:21):

58. Ախինոս axinos ախիրոս, axiros ‘a kind of grass, Acinus, մի տեսակ խոտ է’, Hbus. 29. Etym.= arab. اقينس aqīnus ‘oximum gariofil-plant’<gr. áxinos. (ՀԱԲ, 1971:96): Ախինոս (Erinos). ինքն խոտ մըն է որ ի գետեզերքն կու բուսնի եւ մէկ մէկ թիզ կու լինի ի յերկանքն, եւ տերեւներուն ծայրն ճղքած կու լինի, եւ կամ բաժնած կու լինի. (ԱԱԱԱ):

59. Ախիոն axion ‘a kind of grass, Fr. vipérine, It. echium rubrum L, վիշապագլուխ’. Etym.= arab. اقيون *aqiūn < gr. éχίς. Gr. εχιν > It. echium, It. echio. (ՀԱԲ, 1971:97, WMA):

60. Ախլատ axlat, n., Etym.= arab., pers. xlṭ خلط, pl. axlaṭ اخلاط ‘Four fundamental personality types: sanguine, choleric, melancholic, and phlegmatic.’ «Չորս գլխաւոր տարրերը, որոնք ըստ հին բժշկութեան մտնում էին կենդանի օրգանիզմի կազմութեան մէջ: Դրանք են՝ արիւն, մաղձ, սեւ մաղձ, լորձ: Գիտացիր, որ այս խառնուածոցն բժշկապետքն ախլատ ասեն, եւ այսոնք Դ են. Սաֆրան եւ արիւնն եւ պալղամն եւ սաւտան…». (ՄՀԲ, 2009:20):

61. Ախլիմա axlima ‘a kind of plant, cadmia’ med. Etym.= arab. القليميا qalimiyā, al-qalimiā (իբն-Բեյթար, էջ 314) կամ قليميا qlīmiā, Pers. aqlimiyā. Lt. cadmia, gr. Καδμεια. Ագլիմա aglima, Ախլիմիա axlima. (ՀԱԲ, 1971:97, WMA):

62. Ախլսաչ axəlsač‘ ախրսաչ, ախլսաջ ‘a kind of plant’ med., according to Ačaŕyan attested only once in Hbus. 32. Etym.= arab. اخرساج axarsāǰ. (ՀԱԲ, 1971:98, WMA):

63. Ախհաւան axhavan ‘a kind of plant, Fever-few chrysanthemum Lt. matricaria, Amarella, Partenio, Matricale, Morella, Occhio di sole’. Hbus. 33. Etym.= arab. اقحوان aqḫavān (aqḫuvān), aqḫavān “ромашка”. Pers. اكحوان akḫavān, okḫavān. Tr. Varadika out. (WMA, ՀԱԲ, 1971:98): «Ախհաւան (Matricaire). խոտ մըն է որ դեղին ծաղիկ ունի, եւ տերեւն նման է աղվէշբկին տերեւին. ե՛ւ սպիտակ այլ կու լինի, ե՛ւ դեղին այլ կու լինի. եւ լաւն այն է որ սպիտակ լինի, եւ նոր լինի. տաք է եւ չոր է Բ տարաճան. հալող է» (ԱԱԱԱ):

64. Ախմախ axmax, adj., Etym.= arab. احمق aḫmaq ‘stupid, ignorant, Յիմար, տխմար, տգէտ, անմիտ’. Խելքդ է ախմախ, միտքդ է մոլոր, ետքդ կ'երթայ զինչ ջաղացի սոր. (ՄՀԲ, 2009:20):

65. Ախսրթամար axsrt‘amar ‘a kind of tax, մի տեսակ հարկ, որ վճարւում է քաղաքներում: Համենայն հարկապահանջութիւն եբարձին՝ զմրուր եւ զթաղար, զհեծել, զղափչուն, զախսրթամարն եւ զդռնագիրն ի բաժ ի

դաղմա եւ ի մուլաջիութ դարձուցին'. according to Ačaŕyan (ՀԱԲ, 1971:100) attested only once in a manuscript of Ani. Etym.= Arab. عسكر 'askar, Pers. لشكر laškar 'Armee, army', also: aškar (askər)+ -hamar (–համար): *tahşrthamar, tahşltr (-համար), pers. arab. تحصيلدار taẖşîldār "collector", arab. taẖşīl, *(t)aẖst- (h)amar> *taẖşīldārẖamar. (WMA, ՄՀԲ, 2009:21):

66. Ախրապ axrap, n., Etym.= arab., pers. عقرب ʿaqrab, turk. akreb 'scorpion Կոր, կարիճ'. «Քան զախրապ մաճունին լաւ դեղ չի գտայ այս գաւուս». (ՄՀԲ, 2009:21):

67. Ախրապատին axrapatin, ակրաբադին akrabadin 'pharmacopée, բժշկարան, դեղերի գիրք'. «Տուր այն նուսխայ, որ եախրապատինն է գրած». «Տուր զդեղին նախկին զոր յակրայբադինն կայ գրած». Etym.= arab. اقراباذين aqrābāḏīn 'antibiotics', that is borrowed from classical Syriac ܓܪܦܝܕܝܢ (grpydyn /grapīdīn/, "doctor's prescription"), from Byzantine Greek γραφίδιον (graphídion), gr. γραφίδιον 'booklet, գրքոյկ'. Through Syrian passed to Arabic. (S. 248, ՀԱԲ h. 1, էջ 111, WMA):

68. Ակլիմա aklimia. աղտ է որ ի հալելն է ոսկի եւ արծատոյ ելանէ: Աղտն որ ի հալելէն ոսկւոյ եւ արծաթոյ. see Ախլիմա axlima:

69. Ակողա akoqa Etym.= syr. āqōāłā 'die krŭmme', arab. kūfa. (WMA) al-Kufa:

70. Ակրաբադին akrabadin ախրապատին axrapatin 'pharmacopėe բժշկարան, միջին դարերում դեղագիտութեան եւ դեղօգտագործման գիրք, դեղերի գիրք, դեղագիրք'. Etym.= arab. اقراباذين aqrābāðīn, gr. Γραφίδιον.-Seidel, 248. (ՀԱԲ h. 1, 111,) see Ախրապատին:

71. Ակրաս akras, ի, n., Etym.=arab. قرص qorş 'pill, tablet', pl. اقرص aqraṣ 'Դեղ, դեղահատ'. «Առջի դեղ՝ զայս ակրաս երետ». /Ախրապատին, ՂՅ, Բ, 416/ (ՄՀԲ, 2009:24):

72. Ակրկարհայ akrkarha ակիկահրա akikarha, ակիրկարհա akirkarha, ախրկարհա axrkarha 'a type of grass, Pellitory of Spain, Alexander's foot, Fr. Pyrethre, pyrethrum, Bertram' «մի տեսակ խոտ է, բողի տակ, իգա-բողի». Etym.=arab. عاقر قرحا 'āqir qarhā < syr. 'eqār qarxā 'anthemis pyrethrum, Ակրկարհան վայրի թարխունի արմատն է'. (Hübsch. p. 262, S. 196, WMA, ՀԱԲ, ՄՀԲ, 2009: 24):

73. Ահլ ahl, էհլ ēhl, n., Etym.=arab., pers. اهل '(literary) person(s), Մարդիկ'. Ահլի ղալամ اهل قلم. 'literary persons (collective noun) the commonwealth of letters; the commonwealth of learning; (may also be used as a noun singular with reference to and in description of any specific individual that is a literary person and a professional or freelance writer.)' «Գրչի՝ գրելու հետ գործ ունեցող մարդ: Առնու թուղթ եւ գրէ, զի ահլի ղա-

լամ է» /ՊՖՄ, 99/ «Ահլի նադար. Ուշիմ, շրջահաեաց, խոհեմ մարդ: Ապա քարամ արա, ահլի նազար ես». /ՄՆ, 108/ (ՄՀԲ, 2009:24):

74. Ահմար ahmar, adj., Etym.=arab. احمر aḫmar ‘Red, կարմիր’. «Այն որ քիպրիթի ահմարն է, ինքն ճոհար է». /ԱԱԱ, 230/ (ՄՀԲ, 2009:25):

75. Ահնաֆ ahnaf, n., Etym.=arab. أَحْنَف ‘Clubfoot is a birth defect where one or both feet are rotated inward and downward.’ Ծուռ ոտք: «Եւ ծռութիւն կայ (սմբակի), որ ներքսեւէ լինի, եւ ասեն իր ահնաֆ». /ԲՁ, 89/ (ՄՀԲ, 2009:25):

76. Ահշահ ahšah «Ծերոng շատ զեն առնէ, եւ ստամոքին եւ ահշահին քամի առնէ.» Etym= arab. احَشا aḫšā, pers. احَشا ahšā ‘viscera, Intestines, entrailles’ pl. حَشا ḫašā. (WMA, ՄՀԲ, 2009:25):

77. Ահսաֆ ahsaf, n., Etym.=arab. aḫṣāf ‘scar (an area of fibrous tissue that replaces normal skin after an injury)’ «Սպի: Եւ թէ լինի քովքն սպիտակ, ասեն իր ահսաֆ». /ԲՁ, 57/ (ՄՀԲ, 2009:25):

78. Ահտ aht, n., Etym,= arab. Pers. عهد ʿahd ‘Oath, promise, covenant, treaty, Երդում, խոստում’. «Զերդումն եւ զպայմանն որ է ահտ ու աման մի՛ կոխէք». /ԽՆ, 69/ (ՄՀԲ, 2009:25):

79. Աղալն aqaln, աղալուն aqalun, աղալական aqalakan ‘muscle, muskal’, «Քանի աղալականք, որ են մկունք աչացն» «Քանի աղալունք, որք են մկունք աչաց». Etym.=arab. ʿaḍala (‘aḍhala) عَضَلَه, pers. ʿaḍala ‘muscle’. (WMA) see Ազալաունք azalaunkʿ:

80. Աղալուճի aqaluči axilus ‘Alexylon Agallochum, arab. ‘Ud عود, ‘ud hindi عود هندى, ‘Ud al endd عود الند. E. Agallochum, Indian aloe tree, Turk. Yalan öd ağ, Hind öd ağ’, «հալուէի փայտ» med. Attested only once in Hbus. 49. according to Ačaŕyan etym.= from synonym of arab. آغالوخ āġālūx < gr. αγάλλοχον < sans. Aguru. The original meaning is ‘un- heavy, ոչ-ծանր’= a-guru. Lt. agállóchon, pers. آخيروس axīrus, آخيرنوسaxīnus. (WMA, ՀԱԲ, h.1:118): «Աղալուճի (Agalloche). ինքն փայտ մըն է անուշահոտ. ի Հնդկաց կու գայ. եւ յ. ի այլ կու լինի. եւ լաւն այն է որ քիչ մի լեղի լինի». (ԱԱԱ, 44):

81. Աղարիկոն aqarikon as սպիտակ աղարիկոն spitak aqarikon. Etym. = arab. pers. آغاريقون, غاريقون, lt. agaricum, syn. turk. قطران كوپوكى. (S. 231):

82. Աղեղ aqeq ‘karneol, stein, մի տեսակ ակունք, ագատ’. «Աղեղն կարմիր լինի, բաց կարմիր եւ ալ լինի, լաւն մէկ գոյն լինի եւ առանց տամարի». Etym.=Arab. عقيق ‘aqīq ‘սարդիոն’, Pers. ‘aqīq. (ՀԱԲ, h.1:126):

83. Աղեղ եամանի aqeq yamani ‘karneol. Stein’ (carneole). Etym.= arab. pers. عقيق يمانى ‘aqiq yamani ‘achates carneolus, Agate’. Compare with Tr. hakīk. (WMA):

84. Աղիտայ aqita ‘caramel, եփած եւ թանձրացած ռուպ’. Attested only once in ԶԲ. Etym.= Arab.عقيده aqida ‘caramel’, Tr. ağda اغده (ՀԱԲ, հ.1:130, WMA):

85. Աղլուտ aqlut, գ., Etym.=arab. ikhlāṭ ‘A disobedience in horses, Սլացքի ժամանակ ձիու ընդդիմադիր լինելը’: «Որ եբ հանդիպի ի պատերազմն ու աղլուտ լինի, նա չառնու զիր առջի բնութիւնն ու վախէ կամ խրչի ու ի սիրտ ելնէ ու զելն ուզենայ». /ԲԶ, 74/ (ՄՀԲ, 2009:30):

86. Աղպար aqpar ‘kohl, աչքի քսելու մի տեսակ ծարիր’. Etym.= Arab. اغبار aġbār, غبار ġubār, ġubara. ġabarra. Camp. with Turk. surma, Pers. tutia توتيا, *Collyrii genus ex Tutia carmanica.* «*Ազգ ծարրոյ. որ եւ թութիա, կամ թութի աչաց*» (ՀԱԲ, հ.1:135, WMA): «Աղպար (Tutie). ինքն թութիայ է. եւ սուգծու է. աչից դեղերուն է. եւ գրած է ի վերայ Աղրապատինին, Աստուծով» (ԱԱԱԱ):

87. Աճալ ačal ‘A kind of plant, which used in medicine, cassia senna, սինամէքի’. Etym.= arab. عجاله ‘aǰāla ‘plant, բոյսը’ (ՀԱԲ, հ.1:138, WMA):

88. Աճալ ačal n., Etym.= arab., pers. اجل aǰal ‘death, end, fixed term or period, fate Մահ’. «Մալն ինչ կանեմ, երբ որ յետինս աճալ է»[31] (ՄՀԲ, 2009: 35):

89. Աճամ ačam, Աճեմ ačem, ի, pl., n., Etym.= arab. arab. عجم ʿaǰam ‘Iranian, Պարսիկ’. «Եւ զիայ լեզու ոչ գիտէր, այլ զթուրքին, զարապին եւ զաճամին ճարտար գիտէր»[32] (ՄՀԲ, 2009: 35):

90. Աճայիպ ačayip Etym.=arab., pers. عجايب ʿaǰayib ‘amazing, wonders, զարմանալի, ապշեցուցիչ’ (ՄՀԲ, 2009:35):

91. Աճապ ačap Etym.=arab. pers. عجب ʿaǰab ‘wonder, strange, զարմանալի, տարօրինակ’ «Դու աճապ քաղցր ու լատի՞ֆ ես խօսելով, որ զշաքար ի քո շրթանցդ կու ծախես»[33]: «Անձիկն էր շապկի ոսվոր, աճապ ո՞նց հագաւ նա վալայ»[34] (ՄՀԲ, 2009:35):

92. Աճառ ačaŕ ‘ceiling, roof, առաստաղ, առիք, ոճոռք, տանիք’. Etym.= arab. اجّار iǰǰār, eǰǰār ‘ceiling, roof’. (ՀԱԲ, հ. 1:140, WMA):

93. Աճաս ačas, աճազ ačaz ‘plums, մի տեսակ սալոր’. according to Ačaŕyan attested only once in Hbus. 75. Etym.= Arab. اجاص aǰaş or iǰa ‘plums, սալոր’. (ՀԱԲ, հ. 1:140, WMA): «Աճաս (Prune). որ է դամոնն, որ է սալորն,

---

[31] *Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (16-17րդ դդ.), հտր. Ա*, աշխ. Յ. Սահակեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1986, էջ 199:

[32] *Հայոց նոր վկաներ*, Վաղարշապատ, 1903, էջ 360:

[33] Կոստանդին Երզնկացի, *Տաղեր*, աշխատ.՝ Արմէնուհի Սրապեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1962, էջ 167:

[34] Նահապետ Քուչակ, *Հայրենի կարգաւ*, Հայպետհրատ, Երեւան, 1957, էջ 63:

եւ պ. ալու կասէ, եւ թ. արուկ ասէ. եւ ինքն շատ ցեղ կու լինի. եւ լաւն այն է որ խոշոր լնին եւ քաղցր լինի» (ԱԱԱԱ):

94. Աճեմիստանցի ačemistanc'i, n. 'Iranian, Persian' Իրանցի, պարսիկ: «Աճեմիստանցի է այս Ենկիպէկ մահտեսիս». Etym.= arab. عجم ʿaǰam + pers.-stan + arm. – c'i. (Պօղոսեան, 2014:24):

95. Աճըզիլ ačzəil Etym.=arab. عجز ʿaǰz, turk. aǰiz, 'անզօրութիւն, տկարութիւն, ալարութիւն, թուլանալ, տկարանալ, ալարել'. «Այս հերիք է, զինչ զինչ գրեցի, աճըզեցայ, ձեզ ինչ գաղտնի»[35] (ՄՀԲ, 2009:36):

96. Աճուաֆ ačvaf, աճռաֆ, n., Etym.=arab. اجواف aǰuaf, aǰraf 'Vena portae, (Ventricle) Դռներակ, փորոք'. «Եւ կամ վարէ զինքն ի յերիկամունսն եւ անտից ի հաւաք երակն, որ անուանի աճուաֆ, որ է փորոգ»[36] (ՄՀԲ, 2009:36):

97. Աճուճ ու բաճուճ (մաճուճ) Ačūč-u-bačūč 'Gog and Magog'. Etym.= arab. pers. turk. يَأجوج و مَأجوج yāǰŭǰ -u-māǰŭǰ. (ՀԱԲ, WMA): «Թզաչափ հասակով, եօթ թզաչափ մօրուքով մարդկանց (առասպելական) ցեղ, որ իբր երեւան է գալու աշխարհի վերջում»:

98. Աճուռ ačuŕ, աճուր ačur, հաճուր hačur «melon chate, մի տեսակ բոյս է». «շամամ». Etym. arab. عجور 'aǰūr «Cucumis chate, մի տեսակ վարունգ». (ՀԱԲ, ՄՀԲ, 2009:36): «Աճուր (Tuile). որ է կղմինդրն (որ է տաստանպուռ?). աղէկն այն է որ ջուր չէ հասել ի յինքն. տաք եւ չոր է. եւ իր ձէթն աւգտէ խլութեան եւ ամենայն հով ցաւերուն» (ԱԱԱԱ):

99. Աճպարար ačparar, n., աճապարար, ačaparar 'juggler, conjurer, wizard, ձեռնածու'. *14 cent.* Etym. arab. عجب'aǰab 'amazing, զարմանալիք' + Arm. arar (doer) (ՀԱԲ, 1:142):

100. Ամալ amal 'task, purpose, intent, գործ, նպատակ, մտադրութիւն' «եւ զինչ որ ունի ամալ՝ գայ ի յոտքն փաթաթի նա այլ». Etym.= arab. عمل 'amal. (WMA, ՄՀԲ, 2009:36):

101. Ամալիս amalis, n. 'Wine' Գինի: Ամալիս, որ է խաղողի գինի (Պօղոսեան, 2014:24) Etym.= arab. مَلْسَاء malsa, f. الأَمْلَس al-amlas.

102. Ամայ այիտի ղաղ ama ayiti qaq, n., Etym.=arab. amā al-daqiqa. (Small intestine امعاء دقاق، الأمعاء الدقيقة) «Բարակ աղիքի վերջին մասը՝ աղիճից

---

[35] *Պատմութիւն Վենետիկ քաղաքին, պատմութիւն Փարէզի եւ Վեննայի*, հրատ. ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1966, էջ 284:

[36] Գրիգորիս, *Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց*, աշխատ.՝ Ա. Կծոյեան, խմբ.՝ Լ. Խաչիկեան, Ս. Լալաֆարեան, ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազօտական ինստիտուտ «Մատենադարան», Երեւան, 1962, էջ 144:

սկսած մինչեւ կոյր աղիքը, զալարաղի: Եւ Գ-ին ամայ այիտի ղաղ ասեն:»[37] (ՄՀԲ, 2009:36):

103. Ամայի մուստաղիմ amayi mustaqim Etym.=Arab. امعاء المستقيم amā al-mustaqim ‘rectum intestinal, հաստ աղիքի վերջին մասը, նախաղի’. «Եւ Գ-ին ասեն ամայի մուստաղիմ, եւ ինքն աղիք մն է հաստ եւ ըղորդ»[38] (ՄՀԲ, 2009:36):

104. Ամաn /տալ aman tal «հանգստութիւն, անվտանգութիւն, ապաստան», «Վասն սաստիկ ցրտութեան Գ ամիս գիշեր ցորեկ մէկ աւրմն ամաn չէր ետ մինչեւ ի մարտի ԺԵ, ապա արեւ եւ արեգակ տեսաք». Etym.= arab., pers. turk. امان aman ‘security, safety, respite, refuge’ (Պօղոսեան, 2014:24)):

105. Ամաn aman Etym.=arab., pers. امان amān ‘security, safety, condition, promise, պայման, խոստում’. «Զերդումն եւ զպայմանն որ է ահտ ու ամաn, մի՛ կոխէք» (ՄՀԲ, 2009:36):

106. Ամանաթ amanat՝ ‘deposit աւանդ տրուած բան’. «Ուզեցին ամանթ… այն է վստահութիւն գնալ յոտս նոցայ… Գողութիւն է հատանել զաւանդ եւ զամանաթ». Etym.= arab. امانت amānat ‘honesty, trusteeship, deposit, parcel, consignment’ Աւանդ, պահ տրուած իր, գրաւական երաշխիք, derivated from Arab. امنamn ‘trust, վստահել, ապահով լինել’. according to Ačaŕyan the word was passed through Turkish language into Armenian (ՀԱԲ, 1:145, WMA, ՄՀԲ, 2009:36):

107. Ամառաթ amaŕat ամարաթ amarat, համառաթ hamaŕat. according to Ačaŕyan is a Middle Armenian word. Atested only once in Norayr, Bar. Fr. 661 b. «պանդոկ՝ ուստի կերակրին աղքատք եւ մանկունք դպրոցաց Տաճկաց. դարմանոց». Etym.= arab. عمارت ’imārat «kitchen, բարեպաշտական խոհանոց՝ իւրմէ ժառանգաւորաց եւ կարօտելոց կը բաշխուի նկանակ, ապուր եւ քրքմագոյն փիլաւ». Original meaning is ‘Building, շէնք, շինութիւն’. according to Karst deriveted from pers. ham + arab. mahārat (ՀԱԲ, 1:147, WMA):

108. Ամբար, n., ambar ամպար ampar, եամպար hampar, եանպար hanpar, 8c, 10c, 12c ‘ἀποθήκη horreum, repositorium, Amber, *Ambra*, անուշահոտ մի նիւթ’ Etym.= arab. pers. عنبر ’anbar. M. Iran. Amber, Gr., It. ambra odorosa or ambra grigia. «Ամպար. է նիւթ ինչ-որ, քաղցրահոտ, եւ կարծր որպէս զքար, ամպէր» (ԲՍՀ):

---

[37] Ամիրդովլաթ Ամասիացի, *Օգուտ բժշկութեան*, խմբ. Մտ. Մալխասեանց, Երեւան, 1940, էջ 36:

[38] Նոյն:

**Համառօտագրութիւններ**

ԱԱԱԱ.- Ամասիացի Ամիրդովլաթ, *Անգիտաց Անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց*:

ԲՁ – *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ. դար)*:

ԲՍՀ - Բիւզանդացի, *Բառագիրք սպորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց*:

ԶՊՔ - Ակինեան, «Զրոյց պղնձէ քաղաքի»:

ԻՀՄ - Կիւլէսէրեան, *Իսլամը հայ մատենագրութեան մէջ*:

ԽՆ – *Խրատք Նուշիրուանի*:

ՀԱԲ – Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, 4 հտր.*:

ՀԲԲ - Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*:

ՄՀԲ - Ղազարեան, Աւետիսեան, *Միջին հայերէնի բառարան*:

ՄՆ – Մկրտիչ Նաղաշ, *բանաստեղծութիւններ*:

ՆԲՀ - Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*:

ՆՔ - Նահապետ Քուչակ, *Հայրենի կարգաւ*:

ՊՖՄ. – *Պատմութիւն ֆարման մանկանն*:

Norayr. *Dict. fr. arm.* - Նորայր Ն. Բիւզանդացի, *Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, տպ. Ա. Յ. Պոյաճեան, Կոստանդնուպոլիս, 1884:

S. - Siedel E., Übersetzung von Mechitars des Meisterarztes aus Her (1181) „Ttost bei Fieberrn“ Nach dem Venediger Drucke vom Jahre 1832 zum ersten Male aus dem Mittelarmenischen übersetzt und erläutert von Dr. Med. Ernst, Pub., Leipzig, Johann Ambrosius Barth, 1908.

WMA - Karst J. (1940-1942?),“Wörterbuch des Mittelarmenischen (Handschrift), «Heritage of Josef Karst„ pp. 249, 250, 251, 252, 253, 254, Yerevan Institute of Ancient Manuscripts, Matenadaran.

## ARMENIAN-ARABIC LANGUAGE CONTACTS AND ARMENIAN WORDS OF ARABIC ORIGIN

(Summary)

MOHAMMAD MALEKMOHAMMADI
m.malekmohammadi@fgn.ui.ac.ir

According to certain historians, Armenian-Arabic language contacts begun in 4th-3rd C., when Arab tribes settled in Mesopotamia and interacted with the Armenians of southern Armenia. Armenian-Arabic language and cultural contacts deepened over the centuries, especially during the Middle Ages, when the official language of Cilician Armenia became Middle Armenian.

The paper focuses on these interactions, highlights and discusses the early and late stages of Armenian-Arabic language contacts and the findings of the Armenian linguist Nerses Mkrtchyan concerning Arabic words in Middle Armenian. In this regard, using etymological approaches, the author reviews a number of words in Middle Armenian which have an Arabic origin.

# ՀԻՆՀԱՅԵՐԷՆԵԱՆ ՅԱՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԲԱՐԴՈՒԹԻՒՆԵՐԻ՝ ԳՈՅԱԿԱՆ + ԲԱՅ > ԲԱՅ ԿԱՂԱՊԱՐՈՎ

## (Տարժամանակեայ հայեցակէտ)

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ
lingualal51@mail.ru

ՄՈՒՏՔ

Լեզուի տարժամանակեայ կտրուածքում նրա համակարգի տարբեր մակարդակներում տեղի են ունենում որոշակի փոփոխութիւններ, փոխակերպական գործընթացներ, որոնք սահմանազատիչ դեր են կատարում տուեալ լեզուի գոյավիճակների բնութագրման հարցում: Այդ փոփոխութիւնները կարող են ազդել լեզուի տիպաբանական բնութագրի վրայ՝ ընդհուպ փոխելով նրա ձեւաբանական կամ շարահիւսական տիպերը:

Հին հայերէնի եւ արդի հայերէնի բառակազմական մակարդակների տարժամանակեայ քննութիւնը ցոյց է տալիս, որ հինհայերէնեան որոշակի յարադրութիւններ ժամանակակից հայերէնում հանդէս են գալիս համադրական կառուցատիպերով, որ հետեւանք է լեզուական միաւորների փոխակերպման գործընթացի:

Փոխակերպումը լեզուական արտացոլման դրսեւորումներից է՝ որպէս առարկայական իրականութեան արտացոլման վերացարկուած գործընթաց. այն ընթանում է որոշակի փուլերով, որի տարբեր աստիճաններում ի յայտ են գալիս որոշակի փոխակերպներ, որոնք յատկանշւում են վերացարկուածութեան տարբեր աստիճաններով: Փոխակերպումը լեզուական միեւնոյն բովանդակութեան արտայայտութիւնն է լեզուական այլ կառոյցներով. այլ կերպ ասած՝ փոխակերպել նախադասութիւնը՝ նշանակում է այն փոխել մի քերականական ձեւից միւսի՝ առանց փոխելու նրա իմաստը[1]:

Հինհայերէնեան յարադրութիւնները, լեզուի տարժամանակեայ դիտուածքում փոխակերպուելով համադրական կազմութիւնների, արդի հայերէնում պահպանել են բովանդակային պլանը՝ երբեմն իյայտ բերելով իմաստային որոշակի տարբերակումներ: Փոխակերպման գործընթացի ուսումնասիրութիւնը բացայայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկուած մտածողութեան տարբեր աստիճանների դրսեւորումներ են: Լեզուի փիլիսոփայութեան տեսանկիւնից՝ սերման կաղապարներ են համարւում միջուկային նախադասութիւններն ու բառակապակցութիւնները, որոնցից սերում են բաղադրեալ բառերի կաղապարները՝ որպէս հետեւանք նախադասութիւն> բառակապակցութիւն փոխակերպական գործընթացի. օրինակ՝ Դիմացի լեռը, *որ պատուել է մշուշով*, հորիզոնի վերջին

[1] Գէորգ Ջահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974, էջ 502:

կէտն է/*Մշուշով պատուած* դիմացի լեռը հորիզոնի վերջին կէտն է/*Մշուշապատ* դիմացի լեռը հորիզոնի վերջին կէտն է:

Փոխակերպման արտայայտութեան պլանում բառակապակցութիւնները բնութագրւում են երկակի դերով. նախ՝ որպէս միջուկային նախադասութիւնների փոխակերպման հետեւանք, հմմտ.՝ *պատրւել է մշուշով > մշուշով պատրւած,* երկրորդ՝ որպէս սերիչ կաղապարներ՝ բաղադրեալ բառերի ձեւաւորման գործընթացում, օրինակ՝ *մշուշով պատրւած> մշուշապատ:*

Յարադրական կառոյցների անցումը համադրական կառուցատիպերի՝ լեզուի տնտեսման օրէնքի դրսեւորումներից է[2]. եթէ լեզւում միեւնոյն իմաստը հնարաւոր է արտայայտել երկար եւ կարճ ձեւերով, ապա լեզուն նախընտրում է կարճ ձեւերի գործածութիւնը: Ըստ այդմ, բայական յարադրութիւնները համարւում են երկար ձեւեր, իսկ դրանցից սերած համադրական կառոյցները՝ կարճ. հետեւաբար լեզուն նախընտրում է համադրական կառուցատիպերի գործածութիւնը: Միեւնոյն ժամանակ, պէտք է նշել, որ երկար ձեւերից կարճ ձեւերի անցումը տեղի է ունենում ժամանակի ընթացքում, եւ, ըստ այդմ, փոխակերպման իրողութիւնն արձանագրւում է լեզուի տարժամանակեայ կտրուածքում:

Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ փոխակերպման իւրայատուկ գործընթաց են ապրել որոշ բայական կապակցութիւններ կամ բայակապակցութիւններ, որոնց «բաղադրամասերը ժամանակի ընթացքում միաձուլւում են եւ դառնում իբրեւ ամբողջական՝ բաղադրեալ բայեր, օրինակ՝ *գործածել* (հին՝ ի գործ ածեմ), *ակնարկել* (հին՝ ակն «աչք» եւ արկանեմ «ձգել, գցել, նետել»), *ունկնդրել* (հին՝ ունկն «ականջ» եւ դնեմ «դնել»), *ակնածել* (հին՝ ակն ածեմ), *քարկոծել* (հին՝ «քարով կոծել՝ ծեծել»), *մրածել* (հին՝ զմտաւ ածել») եւ այլն»[3]:

Ինչպէս ցոյց են տալիս վկայուած օրինակները, որոշ բայական բառոյթներ ժամանակի ընթացքում վերլուծականութիւնից անցել են կցականութեան: Հայ քերականագիտութեան մէջ վերլուծական կամ յարադրական բայերը որոշակիօրէն տարբերակւում են համադրական բարդութիւններից:

Թէեւ համադրական բարդութեան մի տեսակը՝ կցականը, եւ յարադրութիւնը համարւում են անիսկական բարդութիւն, սակայն որոշ յատկանիշերով կցական բարդութիւններն աւելի մօտենում են իսկական բարդութիւններին, որ ամէնից առաջ արտայայտւում է նրանց ձեւային դրսեւորումների մէջ: Իմաստային տեսակէտից կցական բարդութիւնները չունեն իսկականների սերտութիւնը, ուստի եւ հեշտութեամբ կարող են տրոհուել ըստ հիմ-

---

[2] Լեզուի պատմական զարգացման պատճառների եւ տնտեսման սկզբունքի մասին տե՛ս՝ Լ. Խաչատրեան, *Ընդհանուր լեզուաբանութեան դասընթաց*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2017, էջ 194-95:

[3] Ա. Մուրվալեան, *Հայոց լեզուի դարձուածաբանութիւն եւ բայակազմութիւն*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1959, էջ 94:

նական բաղադրիչների՝ անկախ բառական շեշտով. այդ պատճառով էլ սրանք դասւում են անիսկական բարդութիւնների շարքը[4]:

Ինչպէս նշում է Ա. Աբրահամեանը, յարադրական բարդութիւնների նկատմամբ համադրական բառոյթներն իրենց կազմութեան առանձնայատկութիւններով աւելի բարձր աստիճանի վրայ են կանգնած. նրանց մէջ բայական իմաստի վերացարկումն ու քերականական ընդհանրացումը աւելի են աչքի ընկնում[5]:

Մանուկ Աբեղեանը յարադրական բայերից կցական բարդութիւնների առաջացման կապակցութեամբ նկատում է, որ երբ յարադրական բայերի բներից նոր բառեր են կազմւում, վերջիններիս մէջ յարադիրն ու իր բայի բունը միացած իբրեւ մէկ բառ են գրւում, որովհետեւ բարդութեան երկրորդ անդամը չի գործածւում այն ձեւով ու նշանակութեամբ, որ ունի բարդութեան մէջ: Նա վկայում է հետեւեալ օրինակները՝ **յանձն առնուլ** (գրաբար՝ յանձն առնուլ), բայց՝ *յանձնառու,* **վրէժ խնդրել,** բայց՝ *վրէժխնդիր,* **վրէժ առնել** (գրաբար՝ վրէժ առնուլ), բայց *վրիժառու:* Կցական բարդութիւններ առաջացել են գրաբարում՝ նոյն ուղիով, ինչպէս՝ **յանձնարար** (գրաբար՝ յանձն առնել), **յուշարար** (գրաբար՝ յուշ առնել, յուշ արարի ձեւից) եւն.[6]:

Հայերէնում աւելի յաճախադէպ են *գոյական+բայ > բայ* կաղապարով կազմուած բարդ բայերը, որոնց մէջ գոյականական լրացումը կարող է կատարել ամենատարբեր շարահիւսական պաշտօններ: Ընդհանրապէս, ժամանակակից հայերէնը աչքի է ընկնում այդ կարգի բարդ բայահիմքերի առատութեամբ, ինչպէս՝ *ալեկոծ-(ել), ախտահան-(ել), ախտորոշ-(ել), ակնած -(ել), ակնկալ-(ել), ահաբեկ -(ել), ամուսնալուծ-(ել), այսահար-(ուել), անդամագր-(ուել), անդամահատ-(ել), անուանակոչ-(ել), անտառա–պատ-(ել), արդիւնահան-(ել), արծնապատ-(ել)* եւն.[7]:

Փոխակերպական *գոյական + բայ > բայ* կաղապարներով առաջացած բարդութիւնների սերիչ կաղապարները անուանաբայական յարադրութիւններ են, որոնք հին հայերէնում գործառւում են որպէս ազատ կապակցութիւններ. փոխակերպման գործընթացում բառակազմական բաղադրիչ է դառնում բայահիմքը (անցեալի կամ երկրորդ հիմքը): Ընդ որում՝ այդ յարադրութիւնները կարելի է քննել երկու կտրուածքով՝ մի դէպքում յարադրութիւններն անուանաբայական կառոյցներ են, միւս դէպքում՝ յարադրութիւններն ունեն նախդրաւոր կառոյցներ:

---

[4] Ա. Աբրահամեան, *Բայը ժամանակակից հայերէնում, գ. Ա*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1962, էջ 163:

[5] Աբրահամեան, էջ 158:

[6] Մանուկ Աբեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն*, «Միտք» հրատ., Երեւան,1965, էջ 174:

[7] Գ. Ջահուկեան, *Ժամանակակից հայոց լեզուի իմաստաբանութիւն եւ բառակազմութիւն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1989, էջ 223:

Դիտարկենք հինհայերէնեան յարադրութիւնների եւ արդիհայերէնեան կառուցատիպերի ու նրանց բառիմաստների յարաբերակցութիւնը:

## Ա. ԱՆՈՒԱՆԱԲԱՅԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Հին հայերէնի անուանական կառոյցներում հանդէս են գալիս *պագանեմ, դնեմ, ածեմ, առնեմ, տամ* ներգործական սեռի բայական բաղադրիչներ, որոնց լրացումները գերադաս անդամի նկատմամբ արտայայտում են խնդրային յարաբերութիւն:

Դիտարկենք հետեւեալ դէպքերը.-

Հին հայերէնում *երկիր պագանել* յարադրութիւնը բառացի նշանակում է «հողը համբուրել», որից՝ «ծունկի իջնել՝ երկրպագութիւն անելու, խոնարհուել՝ ի նշան յարգանքի»: Հմմտ.՝ *Երկիր պագանէին* ամենայն ժողովուրդքն Տեառն Աստուծոյ (Նէեմ., Թ, 3): Նաբուգոդոնոսոր անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ *երկիր եպագ* Դանիէլի (Դանիէլ, Բ, 46)[8]:

Եւ յանձն առ *պաշտել զօրէնս* մոգութեանն. այսինքն *երկիր պագանել* կրակի եւ ջրոյ եւ արեգական, եւ ուրանալ զօրէնս քրիստոնէութեանն (Բուզ., 136):

Յարադրութեան բաղադրիչների ձուլման ճանապարհով հին հայերէնի մակարդակում ունենք *երկրպագեմ* համադրական կազմութիւնը՝ յարադրական բայի իմաստով, ինչպէս՝ Եւ խոնարհեալ *երկրպագեցին* Տեառն Աստուծոյ (Նէեմ., Ը, 6): Տեսեալ զայն Արշամայ՝ *երկրպագէ* Հէրովդի իբրեւ տեառն ամենայնիւ իսկ (Խոր., 142):

Արդի հայերէնում ունենք հինհայերէնեան *երկրպագել* համադրական բարդութիւնը՝ հետեւեալ իմաստներով՝ «1. պաշտել, երկրպագութիւն մատուցել, 2. խոնարհաբար ողջունել, առաջը խոնարհուել»: Համադրական բարդութեան արտայայտութեան եւ բովանդակութեան պլաններում բաղադրիչների ստուգաբանական իմաստները մթագնել են: Հմմտ. 1. Հեռու կողմերից ուխտաւորք եկան *երկրպագելու* սրբոց մասունքին (ՅԹ, 2, 21): Եւ մերպէսներն այդ խօսքերն *են երկրպագում* (ՊՍ, Բ, 81): 2. *Երկրպագում է* չորս կողմը խոնարհ, Արեւ իշխանին ու տիկնոջն էլ ջոկ (ՅԹ, 2, 234):

Հին հայերէնում *ծունր* բաղադրիչով ունենք *ծունր դնել* յարադրութիւնը՝ «ծնկի իջնել՝ աղօթելու, երկրպագելու», ինչպէս՝ Եւ երիս ժամս յաւուր *դնէր ծունր,* եւ կայր յաղօթս (Դանիէլի, 6, 10): *Եդ ծունր,* աղաղակեաց ի ձայն բարձր. Տէ՛ր, մի՛ համարիր դոցա զայս մեղս (Գործ., Է, 59):

Յարադրութեան բաղադրիչների ձուլման ճանապարհով արդի հայերէնում ունենք *ծնրադրել//ծնրադնել* համադրական կազմութեամբ բայական

---

[8] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1836-1837, աշխատութիւնը, որպէս գլխաբառի տարբերակ, տալիս է նաեւ *երկիրպագանեմ* համադրական կազմութիւնը՝ առանց բնագրային վկայութեան:

տարբերակները եւ *ծնրադիր* մակբայը: *Ծնրադրել* կցական բարդութիւնն արդի հայերէնում բազմիմաստ բառ է. հանդէս է գալիս ուղղակի եւ փոխաբերական իմաստներով: Հմմտ.՝

1. Աղօթքի՝ աղերսանքի համար ծունկի իջնել՝ գալ. Տիրամօր պատկերի առջեւ *ծնրադրած*՝ հաւատացեալները փրկութեան ափ էին ակնկալում իրենց մեղաւոր հոգիների համար (Մամուլ): 2. փխբ. Ծունկի իջնելով՝ ողջունել կամ յարգանք մատուցել. Այլասերիլ կոչեցէք զայն, եթէ կը փափագիք, բայց չէք կրնար *չի ծնրադրել* անոր առջեւ (ԺՀԼԲԲ)[9]: 3. փխբ. Պատել, փռուել, տարածուել. *Ծնրադրել է* խաւարը խոժոռ Աղօթարարի ջերմեռանդութեամբ (ՊՍ, Դ, 209):

*Ծնրադիր* բարդութիւնն ունի յատկանշային արժէք եւ նշանակում է՝ 1. «ծնկների վրայ իջած, ծնկաչոք» (մկբ.) - Բոլորը *ծնրադիր* համբուրում են այդ մի բուռ հողը (ԺՀԼԲԲ): 2. փխբ. «Ծնկաչոք կատարուող՝ կատարուած» (ած.) - Մահ պէտք է համասփռենք հոն, ուր մեր ստրուկի *ծնրադիր* պաղատանքները չի հասան (ԺՀԼԲԲ):

Հին հայերէնում *առաջի արկանել* յարարդութիւնը նշանակում է «առաջը՝ առջեւը դնել», ինչպէս՝ Եւ *արկ առաջի* արացն ուտել (Դ. Թագ.,Դ, 40): Եւ *արկ առաջի* նոցա խոտս տակաւ մեծաւ եւ կերան եւ արբին (Դ. Թագ., Զ, 23):

*Ակն ածեմ* յարադրութիւնը հին հայերէնում բազմիմաստ բառ է՝ «զգուշանալ, խորշել, վախենալ» իմաստներով, ինչպէս՝ Սաւուղ *ակն ածէր* յերեսաց նորա (Ա. Թագ., ԺԸ, 15): Ի Տիսբոն փութայր հասանել, ի ծերութենէ հօրն *ակն ածեալ* (Խոր., 321): Գառն անմեղ ի մէջ գայլոց տարակուսալ՝ *ակն ածէ* յայսկոյս եւ յայնկոյս, եւ ոչ գտանէ հովիւ (*Նոր բառգիրք, հտր. 1*, էջ 24):

Հին հայերէնում ունենք նոյնիմաստ համադրական կազմութիւնը՝ *ակնաածեմ,* ինչպէս՝ Եւ ցրտացեալ ի սիրոյն Տրդատայ՝ մեր թագաւորի, *ակնաածէր* որպէս արդարեւ ի թշնամւոյ (Խոր., 237): Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրացն նորա՝ միայն *ակնածէին* ի Մուրացենէն Արգամայ (Խոր., 171):

Հին հայերէնում բառն ունի նաեւ «հոգ տանել, խնամել, աչքի առաջ ունենալ, աչքը պահել մի բանի վրայ» իմաստները, որոնցից զարգացել են «պատկառել, ակնարկել» նշանակութիւնները: Հմմտ՝ Եւ Նաբուքոթոնոսոր արքայ ասէ.Ա՛ռ զդա եւ *ա՛կն ած* ի վերայ դորա (Երեմ. ԼԹ, 12): Տեսից զդա եւ *ակնածեցից* ի վերայ նորա (*Նոր բառգիրք, հտր. 1*, էջ 24):

Հինհայերէնեան համադրական կազմութիւնը (ակնածեմ) փոխանցուել է արդի հայերէնին եւ գործածւում է նախնական իմաստներով, ինչպէս՝ Ատոմը *ակնածեց* ականայ՝ տեսնելով իր առջեւ անձնուէր մարդկանց (ԺՀԼԲԲ):

---

[9] *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, հհ. 1-4*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969-1980:

Հին հայերէնում *խունկ արկանեմ* յարադրութիւնը նշանակում է «խունկ ծխել, խնկել. խունկ մատուցել», ինչպէս՝ Եւ *արկցէ* ի վերայ նորա Ահարոն *խունկ* հանդերձեալ (Ելք, Լ, 7): Եւ դիցես զսեղանն ոսկի՝ *արկանել խունկս* (Ելք, Խ, 5):

Հին հայերէնում նոյն յարադրութեան բաղադրչների ձուլման ճանապարհով ունենք *խնկարկեմ* նոյնիմաստ համադրական կազմութիւնը, ինչպէս՝ *Խնկարկէին* ոսկեղէն բուրվառօք (*Նոր բառգիրք, հտր. 2*, էջ 954): *Խնկարկելովն* ըստ օրինաց ի տաճարին (*Նոր բառգիրք, հտր. 2,* էջ 954):

Արդի հայերէնում գործածւում է *խնկարկել* համադրական կազմութիւնը՝ հետեւեալ իմաստներով՝ 1. «բուրվառը շարժելով՝ խունկի ծուխը տարածել» ինչպէս՝ Արծաթէ բուրվառները ձեռքներին ... շարունակ *խնկարկում էին* (ԺՀԼԲԲ): 2. «Տարածել, լցնել (բոյրի անուշահոտութիւնը»). Սօճիները կարծես ծաղիկների բոյր *էին խնկարկում* (ԺՀԼԲԲ):

Հին հայերէնում *մեղ դնեմ* յարադրութիւնը նշանակում է «մեղադրել, յանցակազմ գտնել», ինչպէս՝ Եւ Աստուծոյ *մեղ դնէ* ի սրտի իւրում (Առակ, ԺԹ, 3): Եւ որ *մեղ դնէ* տարապարտուց՝ ոչ ապրեսցի (Առակ, ԺԹ, 5):

Հին հայերէնում ունենք համադրական կազմութիւնը՝ *մեղադրեմ*՝ նոյն նշանակութեամբ, ինչպէս՝ Հատուսցէ բանս կսկծելիս, եւ *մեղադրեսցէ* զժամանակն (Սիրաք, ԻԹ, 6): *Մեղադրեցաք* յոյժ, զի ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թագաւորաց (Խոր, 335):

Արդի հայերէնում գործածւում է հինհայերէնեան համադրական կազմութիւնը՝ *մեղադրեմ*՝ իմաստային որոշակի տարբերակումով՝ «մէկին մեղաւոր ճանաչել՝ բաւարար ապացոյցների առկայութեամբ, պարսաւել, կշտամբել» իմաստներով: Ինչպէս՝ Արամեանին *մեղադրում էին* կաշառակերութեան եւ անբարոյականութեան մէջ (ԺՀԼԲԲ): Թորգոմն էլի չի հասկանում, *Մեղադրում է* ե՛ւ ինձ, ե՛ւ քեզ (ՊՍ, Գ, 17): Միւս օրը մարդու սիրած ձին է բաց թողնում, կորցնում ու *մեղադրում* քրոջը (ՅԹ, 3, 167):

Հին հայերէնում *թափ անցանեմ* յարադրութիւնը նշանակում է «ուժգին կերպով անցնել՝ անցկացնել մինչեւ յատակը. միջամուխ լինել», ինչպէս՝ Զի նետն *թափ* կարանէ ի կարան *անցեալ* էր (Բուզ., 215): Եւ կարող է հասանել հատանել *թափ անցանել* մինչեւ յորոշումն ոգւոց եւ մարմնոց եւ շնչոց (Ագաթ., 326):

Հին հայերէնում գործածական է համադրական՝ *թափանցեմ* կազմութիւնը՝ նոյն իմաստով, հմմտ. Որպէս յամենեսեան *թափանցեալ* զնախախնամականս իւր ներգործութիւնս (*Նոր բառգիրք, հտր. 1*, էջ 801):

Արդի հայերէնում ունենք *թափանցել* համադրական կազմութիւնը՝ հետեւեալ իմաստներով՝ 1. «որեւէ նիւթի միջով անցնել՝ ճեղքել». Լոյսը... Նոյնիսկ լոյսն աստծոյ Չի թափանցում այնտեղ բնաւ (ՊՍ, Գ, 36): 2. «Մտնել մի երեւոյթի խորքը». Ուսանողները մաքառում են ... *Թափանցելու* արուեստների եւ գիտութեան մէջ անհուն (ԱԻ, 2, 7): 3. «Ներս մտնել». հրապուրանքով լի Սիրտս *էք թափանցում* (ՅԹ, 1, 78):

*Յայտ արարել* յարադրութիւնը հին հայերէնում նշանակում է «յայտնի դարձնել, յայտնել, ծանուցել. ցոյց տալ», ինչպէս՝ Եւ դովին *յայտ արարէք.* երթեալ յարեւն փարաւոնի (Ծնն., ԽԲ, 15): Զի *յայտ արասցէ* քեզ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ (Օրին., Ը, 3): զՍոդոմացւոցն պատմեցին եւ *յայտ արարին* (Եսայ., Գ, 9):

Արդի հայերէնում ունենք համադրական կազմութիւնը՝ *յայտարարել*՝ իմաստի նեղացմամբ՝«հրապարակաւ յայտնել. ի գիտութիւն ընդհանուրի՝ յայտնել», ինչպէս՝ Գոռալով *յայտարարում են,* թէ թագաւորի հրամանն է. խանութները փակ պիտի մնան (ՅԹ, 3, 180): Ով սահմանում է նոր օրէնք ու կարգ, *Յայտարարում է* օրէնքից դուրս (ՊՍ, Ա, 322):

Արդի հայերէնում ունենք որոշ բարդութիւններ (բարդ բայեր), որոնք առաջացել են հին հայերէնի հոլովական կապակցութիւններից՝ բաղադրիչների ձուլման ճանապարհով. ընդ որում՝ դրանք հիմնականում ծագել են *բայ+բացառական հոլով* կառոյցներից՝ *ի* նախդրի անկումով, ինչպէս՝ *ի գահից վիժեմ > գահավիժել, յիրաւմանց զրկեմ > իրաւազրկել, ի շնորհաց զրկեմ > շնորհազրկել, ի պաշտամանէ (ի պաշտամանց) զրկեմ > պաշտօնազրկել* եւն.[10]:

Այսպէս, հին հայերէնում *ի գահից վիժեմ* ազատ կապակցութիւնը նշանակում է «բարձունքից ցած իջնել՝ թափուել՝ գլորուել», հմմտ. Ի վերուստ իբրու թէ ի բարձուէ ուստեք *ի գահից վիժի* (*Նոր բառգիրք, հտր. 1*, էջ 522): *Ի գահից վիժել,* եւ ի վիհս անկանել (*Նոր բառգիրք, հտր. 1*, էջ 522):

Անուանական այդ յարադրութիւնից հին հայերէնում ունենք *գահավէժ* («բարձունքից ցած ընկած՝ գլորուած») եւ *գահավիժեմ* համադրական կազմութիւնները՝ նոյն իմաստով: *Գահավէժ* համադրական կազմութիւնը առաւելաբար գործածւում է *առնեմ* բայական բաղադրիչի հետ՝ *գահավէժ առնեմ,* ինչպէս՝ Եւ *գահավէժ առնէին* զնոսա ի ծայրից բարձրաւանդակին (Բ. Մնաց., ԻԵ, 12): Քաղաքն նոցա շինեալ էր՝ *գահավէժ առնել* զնա (Ղուկ., Դ, 29): Զայլս այլուր տարեալ *գահավիժեաց* (*Նոր բառգիրք, հտր. 1*, 523):

Հինհայերէնեան որոշ անուանաբայական յարադրութիւններ թէ՛ գրաբարում եւ թէ՛ արդի հայերէնում հանդէս են գալիս նաեւ *պարզ կազմութեամբ*՝ բայական բաղադրիչի (յարադրի) զեղչումով: Նման դէպքերում բայական բաղադրչները (առնեմ, տամ, մատուցանեմ) փոխարինւում են անորոշ դերբայի -ել վերջաւորութեամբ:

Այսպէս, *պաշտօն առնեմ, պաշտօն մատուցանեմ* յարադրութիւնները հին հայերէնում նշանակում են «պաշտել, երկրպագել», ինչպէս՝ Բողոքէ՝

[10] Արդի հայերէնում այդ բայերի բայահիմքերն ունեն անկախ բառական արժէք, ինչպէս՝ *գահավէժ, իրաւազուրկ, շնորհազուրկ, պաշտօնազուրկ* եւն.: Դիտարկուած բառերից հին հայերէնում կայ միայն *գահավէժ* բառը, որից՝ *գահավիժեմ* եւ *գահավէժ առնեմ* կազմութիւնները:

եթէ չեմ արժանի *պաշտօն առնելոյ,* այլ պաշտօն հարկանելոյ (Եզն., 15): Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, եւ ոչ *պաշտօն մատուցանեմք* (Եզն., 14)[11]:

Արդի հայերէնում ունենք *պաշտել* բառը՝ «անչափ սիրել, մեծապէս պատուել, մեծարել. աստուածացնել. երկրպագել» իմաստներով, ինչպէս՝ Իմ հայրը այրուեց խարոյկի վրայ, Չուզեց իր *պաշտած* հաւատն ուրանայ (ՅԹ, 2, 207): Եւ մի ժողովուրդ, Որ հացն էր պաշտում՝ նշխարի տեսքով, Մեռնում էր ահա առանց նշխարի (ՊՍ, Դ, 295):

*Պատուէր տամ* յարադրութիւնը՝ «հրաման տալ, պատուիրել, ազդարարել» իմաստներով հին հայերէնում ունի նաեւ համադրական (պարզ) կառուցատիպ՝ *պատուիրեմ,* ինչպէս՝ Եւ ի լինել ճակատուն՝ *պատուէր տայ* զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն (Խոր., 49): *Պատուէր* հրամանի *տայր* պատրաստական լինել կազմութեամբ առ ժամանակ գարնանոյն (Եղիշէ, 80): Եւ արար Նոյ զամենայն, զոր մի անգամ *պատուիրեաց* նմա (Ծննդ., Զ, 22): Զբանն վասն որոյ *պատուիրեցեր*՝ արարի, ո՛վ քաջ (Եղ., 3):

Արդի հայերէնում *պատուիրել* բայը գործածւում է նախնական իմաստով, ինչպէս՝ *Պատուիրում է,* որ էս անգամ միջնեկ աղջիկը տանի ճաշը (ՅԹ, 1, 273): Երրորդով էլ տնտեսում եմ տան ծախսերս՝ Ձեր զոյգի տեղ միշտ կենտ կօշիկ պատուիրելով (ՊՍ, Բ, 45):

## Բ. ՆԱԽԴՐԱԽՈՐ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Այս կարգի կառոյցներում յարադրութեան բայական բաղադրիչն ունի նախդրաւոր կապակցութեամբ լրացումներ, որոնք արտայայտում են խնդրային յարաբերութիւններ: Դիտարկենք հետեւեալ դէպքերը:

Հին հայերէնում *ի գործ արկանել* յարադրութիւնն ունի «վարել, կիրառել» նշանակութիւն, ինչպէս՝ Բայց ես եւ ոչ զմի ինչ յայսցանէ *արկի ի գործ* (Կորն., Ը, 15): Եթէ զպատուհաս իւր *ի գործ ոչ արկանիցէ* (Յովը, ԻԳ, 16):

Արդի հայերէնում յարադրութեան բաղադրիչների ձուլման ճանապարհով առաջացել է *գործարկել* համադրական բարդութիւնը՝ «գործի գցել, աշխատեցնել, շահագործման յանձնել» իմաստներով, ինչպէս՝ *Գործարկում են* նոր ֆաբրիկաներ (ԺՀԼԲԲ):

Հին հայերէնում *յուղի արկանել* (< ի ուղի արկանել) յարադրութիւնը նշանակում է «ուղի՝ ճանապարհ գցել», ինչպէս՝ Որոց *արկեալ* զմեզ *իւղի*՝ առ քեզ առաքեն (Փարպ., 91):

Արդի հայերէնում ունենք *ուղարկել* համադրական կազմութիւնը՝ 1. «Որեւէ բան առաքել՝ յղել մէկին՝ նրան յանձնարարելու համար», 2. «Մէկին մի

[11] Հին հայերէնում ունենք նոյնիմաստ պարզ բայ՝ *պաշտեմ*՝ «կրօնասիրութեամբ մեծարել՝ երկրպագել աստծուն» նշանակութեամբ, ինչպէս՝ Արձակեա՛ զմարդիկն զի *պաշտեսցեն* զՏէր Աստուած (Ելք., Ժ, 7):

գործով տեղ ուղարկել. մի բան յանձնարարել»: Հմմտ. 1. Ամէն կողմից *ուղարկում են* Շատ նամակներ ու խնդիրք (ՅԹ, 1, 112): Համբոյր ու ողջոյն ուղարկում էին (ԱԻ, 2, 80): 2. Ուր որ է՝ շուտով մարդիկ *կ'ուղարկեն*՝ Խըլլեն ձեզանից էդ պարգեւները (ՅԹ, 1, 305):

*Յուղի արկանել* նախդրաւոր յարադրութիւնից հին հայերէնում ունենք հետեւեալ համադրական կազմութիւնները՝ *յուղարկեմ* («հանդիսաւորութեամբ ճանապարհ դնել», «մահամերձ մարդու մասին՝ այն աշխարհը ճանապարհել»), *յուղարկաւոր* («ուղարկուող, ճանապարհ գնացողին ուղեկցող, փխբ. հանգուցեալին ուղեկցող՝ ճանապարհ դնող»), *յուղարկաւորութիւն* («թաղման հանդէս») իմաստներով: Հմմտ. *Ուղարկեաց* զնոսա ի գործ պատերազմին (Փարպ., 122): Խնդրել ի թագաւորէն հետեւակս եւ հեծեալս *յուղարկաւորս* ընդ մեզ (Ա. Եզր., Ը, 52): Եւ ոչ արար նմա ժողովուրդն *յուղարկաւորութիւն* իբրեւ *զյուղարկաւորութիւն* հարցն նորա (Բ. Մնաց., ԻԱ, 19):

Արդի հայերէնում գործածւում են *յուղարկաւոր* եւ *յուղարկաւորութիւն// յուղարկաւորում* բառերը. նորակազմութիւն է *յուղարկաւորել* համադրական բարդութիւնը՝ «հանգուցեալին ճանապարհ դնել» իմաստով: Հմմտ. Ու եթէ թաղում՝ ես եմ առաջին *յուղարկաւորը* (ՊՍ, Ա, 465): Սրտաբեկ ու կիսամեռ հետեւում էի *յուղարկաւորութեանը*՝ սիրածս էակի դագաղից հեռու (ԺՀԼԲԲ):

Զօրավար Անդրանիկին Ֆրեզնոյից յետոյ վերստին *յուղարկաւորել են* Փէր-Լաշէզի գերեզմանատանը (Մամուլ):

Հին հայերէնում *ի կիր առնուլ* նախդրաւոր յարադրութիւնը նշանակում է «գործածել կարիքների համար», ինչպէս՝ *Ի կիր առնուլ* զբանս, զվկայութիւն, զանուն Աստուծոյ (*Նոր բառգիրք, հտր. 1,* էջ 1100):

Արդի հայերէնում ունենք համադրական՝ *կիրառել* կազմութիւնը՝ «գործադրել, կիրարկել, գործածել, օգտագործել» իմաստներով, ինչպէս՝ Կարելի է *կիրառել* աշխատանքի համատեղութեան կարգը (ԺՀԼԲԲ):

Հին հայերէնում *ի կիր արկանել* յարադրութիւնը համարժէք է *ի կիր առնուլ* կազմութեանը՝ նոյն նշանակութեամբ, հմմտ. Որոյ... ելեալ յԵրուսաղէմ, եւ ընդ վարդապետս օրինացն բանս *ի կիր արկեալ* է (Ագաթ., 202): Բանս *ի կիր արկեալ* էր (Ագաթ., 160):

Արդի հայերէնում ունենք համադրական՝ *կիրարկել* կազմութիւնը՝ *կիրառել* բառի իմաստներով, ինչպէս՝ Նա շարունակում էր *կիրարկել* իր հօր տնտեսական քաղաքականութիւնը (ԺՀԼԲԲ):

Հին հայերէնում *զակն արկանել* յարադրական բարդութիւնը նշանակում է «աչքից հեռացնել, անտեսել», հմմտ. Յընտանեաց զաւակի քո *զակն մի՛ արկանիցես* (Եսայ., ԺԸ, 7): Կորացեալ *արկանէր զակն* իւր (առիւծն) յալեւորէ անտի, զի մի երկեցուսցէ (*Նոր բառգիրք, հտր. 1*, էջ 24):

Նոյն յարադրութիւնից հին հայերէնում ունենք *ակնարկեմ* համադրական կազմութիւնը՝ «աչքի նշանով՝ նշանացի հասկացնել, նայել, նկատել,

նշմարել, տեսնել. իմաց տալ» իմաստներով: Հմմտ. Արտեւանունք քո արդար *ակնարկեսցեն* (Առակ, Դ, 25): Եւ *ակնարկէին* որսակցացն ի մեւս նաւն գալ օգնել նոցա (Ղուկ., Ե, 7): Եւ այսու մեզ այսպիսի իմն *ակնարկէ* կարգս վարդապետութեան Հոգւոյն (Խոր., 87):

Արդի հայերէնում ունենք *ակնարկել* համադրական կազմութիւնը՝ հետեւեալ իմաստներով. 1. «հարեւանցիօրէն ասել՝ հասկացնել». Չե՛ս խուսափի, Թորգո՛մ, դու այդ միակ ելքից,- *Ակնարկելով* նորից երգը երեխէքի, Ասաց Մկրտիչը (ՊՍ, Գ, 104): Շատ ծածուկ հաւաքում էին այն գումարը, որի մասին գիշերուայ կերուխումի ժամանակ *ակնարկել էր* քաղաքից եկած «մեծաւորը» (ԺՀԼԲԲ)[12]: 2. «Հայեացքով կամ աչքի շարժումով նշան անել՝ մի բան ցոյց տալ». Մայրը կրկին *ակնարկեց* որդուն, որ լռէ (ԺՀԼԲԲ)[13]:

Գրաբարում *միտք* վերացական գոյականով ունենք բաղադրուած *ի մտի դնել, զմտաւ ածել // ածել զմտաւ* յարադրութիւնները, որոնք սերող կաղապարներ են դարձել *մտադիր*[14] եւ *մտածեմ* համադրական կազմութիւնների համար: Դիտարկենք յարադրական կազմութիւնների իմաստները եւ կիրառական արժէքները գրաբարում:

*Ի մտի դնել* «մտքում վճիռ կայացնել, դատել, խորհել, մտքում դնել», հմմտ. *Եդ ի մտի* իւրում նա թագաւորել եւ ի վերայ երկրին Եգիպտացւոց (Ա Մակ., Ա, 17): Մեք *ի մտի եդաք* անվրէպ խորհրդով խաղալ գնալ յաշխարհն արեւելից (Եղ.,10): *Զմտաւ ածէր* թէ իմասցին եղբարք նորա (Գործ., Է, 25): Արդ *ած զմտաւ* զբանդ, եւ ի միտ առ զտեսիլդ (Դանիէլ, Թ, 23):

Գրաբարում *մտադիր* համադրական բարդութիւնը փոքր-ինչ հեռացել է սերիչ կաղապարի նշանակութիւնից՝ ցուցաբերելով նրբերանգային տարբերութիւն՝ արտայայտելով «մտքում դնող. ուշադիր, զգաստ» իմաստներ: Հմմտ. Որ ամենայնիւ բաւական էին տալ պատճառս *մտադրացն*՝ գտանելոյ զիրացն հաստատութիւն (*Նոր բառգիրք, հտր. 2*, էջ 304):

*Մտածել* համադրական կազմութիւնը պահպանել է սերիչ կաղապարի իմաստն ու նշանակութիւնը, թէեւ կենսունակ գործածութիւն չունի մատե-

---

[12] Արդի հայերէնում ունենք *ակնարկ* բարդութիւնը՝ գրաբարեան *արկանել* բայի երկրորդ հիմքի (արկ) բառակազմական արժէքով՝ «հարեւանցիօրէն՝ կողմնակի կերպով ասուած խօսք». Ես չեմ խաբել ոչ մի խօսքով, Ոչ մի երգով կամ *ակնարկով* (ՊՍ, Ա, 215):

[13] Ընդհանրապէս, արդիհայերէնեան համադրական կազմութիւնների բազմիմաստ բոլոր նշանակութիւնների մատուցումը նոր բան չի աւելացնում նրանց կառուցուածքային պլանին. հետեւաբար բազմիմաստ բառերի դէպքում կը բաւարարուենք երկու-երեք իմաստային կիրառութիւն արձանագրելով:

[14] *Մտադիր* համադրական կազմութիւնը հանդէս է գալիս նաեւ *լինել* բայի յարադրութեամբ՝ կազմելով *մտադիր լինել* վերլուծական ձեւը «մտքում դնել, ուշադիր լինել» իմաստներով. Այլ առաւել եւս արժան է *մտադիր լինել*՝ որ ըստ կարգիս կայ (*Նոր բառգիրք, հտր. 2*, էջ 304):

նագրական երկերում: Հմմտ.՝ Զթագաւորն դաւաճանութեամբ *մտածէր* կորուսանել (*Նոր բառգիրք, հտր. 2*, էջ 305):

Արդի հայերէնում գործածական են գրաբարեան *մտադիր* ձեւից փոխանցուած *մտադիր* եւ *մտադրուել* համադրական կազմութիւնները, ինչպէս նաեւ *մտածել* համատիպ կազմութիւնը:

Արդի հայերէնում գործածական է հինհայերէնեան համադրական կազմութիւնը՝ *մտադիր*՝ «որեւէ բանի նկատմամբ հակում ունեցող» իմաստով, ինչպէս՝ Բռնել է գրազ, Նոյնիսկ ձկներին խեղդամահ անել... Եւ *մտադիր* է գրազը տանել (ՊՍ,Ա, 422): Արդի հայերէնում *մտադիր* սերիչ կաղապարից ունենք *մտադրուել* բարդութիւնը՝ «մտքում դնել, մտադրութիւն ունենալ» իմաստով, ինչպէս՝ Այնպէս էլ սէր ու երազանք, *մտադրուած* խոստովանանք Ենթարկուեցին խուլ վտանգի (ՊՍ, Գ, 62): *Մտադրուել էինք* մի ալմանախ հրատարակել ուսանողական ֆոնդի օգտին (ԺՀԼԲԲ)[15]:

*Մտածել* կցական բարդութիւնն ապրել է իմաստի ընդլայնման գործընթաց եւ արդի հայերէնում հանդէս է գալիս բազմիմաստ նշանակութիւններով: Հմմտ. 1. Միտք անել, խորհել. Դուք *չէ՞ք մտածել,* Կարծես Էոլեան մի նոր քնար է Սիւնից սիւն ձգուող հեռագրի լարը (ՊՍ, Ա, 367): Սենեակի մթնում խոր լռութեան մէջ այդ գիշեր երկար *մտածում էր* նա՝ Աչքերը յառած մութ առաստաղին (ԵՉ, 100): 2. Որեւէ հարցի շուրջ դատողութիւն անել, կշռադատել. Մի՞թէ ճշմարիտ սրանք կոտով ոսկի են չափել,- *մտածում է* թագաւորը (ՅԹ, 3, 14):

Այսպիսով, հինհայերէնեան յարադրութիւնների արտայայտութեան եւ բովանդակութեան պլանների քննութիւնից պարզւում է, որ լեզուի տարժամանակեայ կտրուածքում մի շարք յարադրութիւններ արդի հայերէնում անցել են կցական բարդութիւնների շարքը՝ հանդէս գալով բաղադրիչների միաձոյլ գրութեամբ: Փոխակերպական այդ գործընթացում կենսունակ բառակազմական կաղապար է համարւում գոյական + բայ > բայ փոխակերպման ուղին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հին հայերէնի եւ արդի հայերէնի բառակազմական մակարդակների տարժամանակեայ քննութիւնը ցոյց է տալիս, որ հինհայերէնեան որոշակի յարադրութիւններ թէ՛ գրաբարում եւ թէ՛ ժամանակակից հայերէնում հանդէս են գալիս համադրական կառուցատիպերով: Այդ կարգի յարադրութիւնները, փոխակերպուելով համադրական կազմութիւնների, արդի հայերէնում պահպանել են բովանդակային պլանը՝ երբեմն իյայտ բերելով իմաստային որշակի տարբերակումներ: Այդպիսի բարդութիւնների սերիչ կաղապարներն անուանաբայական յարադրութիւններ են, որոնք հին հայե-

[15] Գործածւում է նաեւ *մտադրել* կազմութիւնը. Երեմիան դեռ ճանապարհի սկզբից *մտադրել էր* ուշադիր դիտել քաղաքն ու նրա շրջապատը (ԺՀԼԲԲ):

րէնում գործառւում են որպէս ազատ կապակցութիւններ. փոխակերպման գործընթացում բառակազմական սերող բաղադրիչ է դառնում բայահիմքը (անցեալի կամ երկրորդ):

Այդ կարգի յարադրութիւններն ուսումնասիրւում են երկու կտրուածքով՝ մի դէպքում յարադրութիւններն անուանաբայական կառոյցներ են, միւս դէպքում՝ յարադրութիւններն ունեն նախդրաւոր կառոյցներ:

Ա) Անուանաբայական կառոյցների փոխակերպումներ. *երկիր պագանեմ* > երկրպագել, *ծունր դնել ծնրադրել // ծնրադնել, ակն ածեմ* > *ակնածել, խունկ արկանեմ խնկարկել* եւն.:

Բ) Նախդրաւոր կառոյցների փոխակերպումներ, *արկանեմ ի գործ* > գործարկել, *յուղի արկանեմ* > ուղարկել, *ի կիր առնում* > կիրառել, *ի կիր արկանեմ* > կիրարկել եւն.:

Գոյական + բայ > բայ կաղապարով համադրական բարդութիւնների առաջացումը փոխակերպման դրսեւորումներից մէկն է, որի ուսումնասիրութիւնը կարեւորւում է հայերէնի պատմական բառագիտութեան տեսանկիւնից:

## ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Ա. Եզր.- Գիրք Եզրի Ա. Ագաթ. – *Ագաթանգեղայ պատմութիւն հայոց*, Տփխիս, 1909:
ԱԻ.– Աւետիք. Իսահակեան, *Երկեր, հտր. 2*, «Հայաստան» հրատ, Երեւան, 1974:
Առակ.- Առակք Սողոմոնի
Բ. Կորն.- Թուղթ Պաւղոսի Առաքելոյ առ Կորնթացիս Բ.
Բ.Մնաց. Բ.- Գիրք Մնացորդաց Բ.
Բ. Օրին.- Երկրորդումն Օրինաց
Բուզ.- *Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց*, Թիֆլիս, 1913:
Գործ.- Գործք առաքելոց
Եզն.- *Եզնկայ Կողբացւոյ եղծ աղանդոց*, Վենետիկ, 1826:
Ելք.- Ելք
Եղ.- *Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, Երեւան, 1957:
ԵՉ.- Եղիշէ Չարենց, *Երկերի ժողովածու, հտր. 4*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, Երեւան, 1968:
Եսայ.- Եսայի
Երեմ.- Երեմիա
Թագ. Ա. Դ.– Թագաւորութեանց Ա.Դ.
ԺՀԼԲԲ.- Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան:
Խոր.- *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն հայոց*, Տփխիս, 1913:
Ծնն.- Ծնունդք
Ղուկ.- Աւետարան ըստ Ղուկասու
Մակ. Ա.- Գիրք Մակաբայեցւոց Ա.
ՅԹ.- Յովհաննէս Թումանեան, *Երկերի ժողովածու, հհ. 1-4*, «Հայաստան» հրատ, Երեւան, 1969:
Յովբ.- Յովբ
Նէեմ.- Նէեմի

ՊՍ.- Պ. Սեւակ, *Երկերի ժողովածու, հհ. 1-4*, «Սովետական գրող» հրատ, Երեւան, 1972-73:
Սիրա.- Գիրք Սիրաքայ
Փարպ.- *Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Տփխիս, 1904:

## THE TRANSFORMATION OF OLD ARMENIAN ANALYTICAL CONSTRUCTIONS INTO COMPOUND WORDS WITH A PATTERN NOUN + VERB > VERB (DYACHRONIC ASPECT)

(Summary)

LALIK KHATCHATRYAN
lingualal51@mail.ru

Dyachronical analysis of levels of word formation in the Old Armenian and Modern Armenian languages shows that certain old Armenian analytic constructions have been transformed into compound words. These, however, have preserved a meaningful plan in the Modern Armenian language, sometimes revealing differences in the semantic plan. The paper examines, through a historical lexicology approach, a set of compound words with the following pattern: noun + verb > verb, and notes that these are the result of a transformation. Transformation, in such cases, is seen as an abstract mechanism of reflection of objective reality, and is characterized by different degrees of abstraction. Besides, in patterns of analytic constructions, which in Old Armenian exhibit free word combination, the verb base becomes a component of word formation.

Such analytic constructions are:

a) Nominal-verbal structures. In this case nominal-verbal structures have been transformed into compound words, like *երկիր պագանեմ* > երկրպագել, *ծունր դնել ծնրադրել // ծնրադնել, ակն ածեմ* > *ակնածել, խունկ արկանեմ խնկարկել* etc.

b) Prepositional structures. In this case prepositional structures have been transformed into compound words, like *արկանեմ ի գործ* > գործարկել, *իւղի արկանեմ* > ուղարկել, *ի կիր առնում* > կիրառել, *ի կիր արկանեմ* > կիրարկել etc.

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՕՐՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ 1994 ՄԱՅԻՍԵԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ 2016 ԱՊՐԻԼԵԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Բ. ՄԱՍ)

**ՀԱՅԿ ՆԱԶԱՐԵԱՆ**
nazaryan_h90.90@mail.ru




Ս-300ՊՍ ՋՀՀ, զինուորական շքերթ, Երեւան, 2016 Սեպտեմբեր 21

ՄՈՒՏՔ

2022ին լրացաւ հայկական զինուած ուժերի հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի կազմաւորման 30ամեակը: Այդ առիթով նախորդ տարի սկսեցինք եւ այս տարի շարունակում ենք ուսումնասիրել հայկական ՀՕՊ զօրքերի պատմութիւնը: Ուսումնասիրութեան առաջին յօդուածում[1] ներկայացրել ենք հայկական ՀՕՊ զօրքերի կազմաւորման գործընթացը եւ մասնակցութիւնը արցախեան առաջին պատերազմին, իսկ այս երկրորդ յօդուածում կը ներկայացնենք հայկական ՀՕՊ զօրքերի զարգացումը, սպառազինութեան ու մեքենասարքերի (*տեխնիկա*) յետագայ համալրման ու արդիականացման գործընթացը 1994 մայիսեան զինադադա-

[1] Ուսումնասիրութեան առաջին մասը տե՛ս՝ Հայկ Նազարեան, «Հայկական հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի կազմաւորումը Արցախեան Ա. պատերազմի տարիներին», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 42/2:2022, էջ 57-72:

րից յետոյ, ՀՕՊ զօրքերի մասնակցութիւնը 2016 ապրիլեան քառօրեայ ռազմական գործողութիւններին:

Յօդուածում զուգահեռներ ենք տարել նաեւ տարածաշրջանի միւս երկու պետութիւնների՝ Ադրբեջանի եւ Վրաստանի հանրապետութիւնների ՀՕՊ զօրքերի կառուցուածքի եւ սպառազինութեան միջեւ:

Ինչպէս յօդուածաշարի առաջին, այնպէս էլ սոյն յօդուածը գրուած է բացառապէս հաւաստի, բաց եւ հասանելի սկզբնաղբիւրների, ինչպէս նաեւ պատմագիտական ու ռազմագիտական գրականութեան հիման վրայ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՕՊ ԶՕՐՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

### 1994Ի ՄԱՅԻՍԵԱՆ ՁԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՅԵՏՈՅ

Արցախեան առաջին պատերազմի արդիւնքում 1994 Մայիսին մի կողմից Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ միւս կողմից Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ ստորագրուեց հայոց համար յաղթական զինադադար: Փաստաթուղթը հեռապատճէնի (ֆաքս) տարբերակով ստորագրեցին, համապատասխանաբար, ԱՀ պաշտպանութեան նախարար Մամեդրաֆի Մամեդովը Պաքւում, 1994 Մայիսի 9ին, ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը՝ Երեւանում, Մայիսի 10ին, ԼՂՀ պաշտպանութեան բանակի հրամանատար Սամուէլ Բաբայեանը՝ Ստեփանակերտում, Մայիսի 11ին: Այն ուժի մէջ մտաւ Մայիսի 12ին[2]:

1995 Մայիսի 9ին Ստեփանակերտում կայացաւ յաղթական զօրահանդէս, որի ժամանակ հրապարակով անցան նաեւ ԼՂՀ ՊԲ ՀՕՊ գնդի (հրամանատար հազարապետ Նիկոլայ Բաբայեան) սպառազինութեան մէջ ընդգրկուած Օսա-ԱԿ (Оса-АК, մինչեւ 10կմ հեռահարութեան), Ս-125 Նեւա (С-125 Нева, մինչեւ 30կմ հեռահարութեան) եւ 2Կ-11 Կրուգ (2К-11 Круг, մինչեւ 50կմ հեռահարութեան) զենիթահրթիռային համակարգերը[3]:

1990ականների կէսերից սկսուեց ՀՀ ՀՕՊ կենտրոնացուած համակարգի ստեղծման գործընթացը: 1995 Փետրուարի 10ին Ալմա-Աթայում ՀՀն Պելառուսի, Թուրքմենստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաճիկստանի, Ուզպեկստանի եւ Ուքրայնայի հետ միասին

---

[2] Զինադադարի փաստաթղթի ամբողջական հրատարակուած տարբերակը տե՛ս՝ Հենրիկ Խաչատրեան, Գարեգին Ղազարեան, Սիրվարդ Մարգարեան, *Յաղթանակներն՝ ինչպէս եղել են. ազդականչ 44*, Հայկական հանրագիտարան. հրատ., Երեւան, 2008, էջ 174:

[3] Զօրահանդէսի արխիւային տեսաժապաւէնը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=0y4lqgMawos&t=1644s: 10.06.2019:

ստորագրեց Անկախ պետութիւնների համագործակցութեան (ԱՊՀ) անդամ-պետութիւնների միացեալ ՀՕՊ համակարգի ստեղծման մասին պայմանագիրը[4]: Միաժամանակ ՀՀ տարածքում գտնուող «Ռուսաստանի դաշնութեան զինուած ուժերի կարգավիճակի մասին» 1992 Օգոստոսի 21ին ՀՀ նախագահ Լեւոն Տէրպետրոսեանի եւ ՌԴ նախագահ Պորիս Ելցինի միջեւ ստորագրուած պայմանագրով եւ 1995 Մարտի 16ի «Ռուսական ռազմական բազայի մասին» երկկողմ պայմանագրով՝ Գիւմրիում տեղակայուած նախկին խորհրդային 7րդ համազօրային բանակի 127րդ մոտոհրաձգային զօրաբաժնի հիման վրայ ձեւաւորուեց ռուսական 102րդ ռազմախարիսխը՝ իրականացնելով նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանների (Թուրքիայի եւ Իրանի հետ ՀՀ պետական սահմանների – Հ.Ն.) անվտանգութիւնը[5]: Պայմանագիրը սկզբնապէս կնքուեց 25 տարի ժամկէտով, իսկ 2010 Օգոստոսի 19-20ը ՌԴ նախագահ Տմիթրի Մետվետեւի ՀՀ կատարած պետական այցի շրջանակներում, Օգոստոսի 20ին ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը եւ ՌԴ պաշտպանութեան նախարար Անաթոլի Սերտիւկովը ստորագրցին N 5 արձանագրութիւնը, որով ռազմախարսխի մասին պայմանագիրը երկարաձգուեց մինչեւ 2044: N 5 արձանագրութեան մէջ «ԽՍՀՄ արտաքին սահմաններ» ձեւակերպումը՝ փոխարինուեց «ՀՀ պետական սահմաններ» ձեւով, ինչպէս նաեւ նոյն արձանագրութեամբ ռուսական կողմը՝ հայկական կողմին արդիական զինատեսակներ մատակարարելու պարտաւորութիւն ստանձնեց[6]:

Ռազմախարսխի կազմում ստեղծուեցին նաեւ օդային եւ ՀՕՊ բաղադրիչները: Մասնաւորապէս, 1995 Յուլիսի 12ին Երեւան «Էրեբունի» օդակայանում տեղակայուեցին ՌԴ ռազմօդային ուժերի 6 հատ ՄիԳ-23 (МиГ-23) կործանիչներ, որոնք 1998ին փոխարինուեցին համեմատաբար նոր 18 հատ ՄիԳ-29 (МиГ-29) կործանիչներով, իսկ արդէն 2001 Յուլիսին «Էրեբունի» օդակայանում կազմաւորուեց ռուսական 3624րդ օդային ռազմա-

---

[4] С. А. Денисенцев; А. В. Лавров; Ю. Ю. Лямин; К. В. Макиенко; А. В. Никольский, *Союзники* (Դաշնակիցներ), խմբ.՝ Կ. Վ. Մակիենկո, Ռազմավարութիւնների եւ արհեստագիտութեան վերլուծութեան կենտրոն, Մոսկուա, 2020, էջ 23:

[5] "Министр обороны Республики Армения Сейран Оганян: Россия – исторически наш стратегический союзник. Газета «*Красная звезда*» (ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան. Ռուսաստան - պատմականօրէն մեր ռազմավարական դաշնակիցը), *Կարմիր աստղ*, Մոսկուա, 20 Մարտի 2009 (http://old.redstar.ru/2009/03/20_03/3_04.html):

[6] Պարզաբանում. Հայաստանում ՌԴ ռազմակայան, «Մեդիամաքս» լրատուական գործակալութիւնը (https://mediamax.am/am/news/parzabanum/13078), 4.02.2015:

խարիսխը[7]: ՄիԳ-29 կործանիչները սկսեցին իրականացնել մարտական հերթապահութիւն մայրաքաղաք Երեւանի երկնքում:



Բուկ-Մ1-2 ՋՀՀ, զինուորական շքերթ, Երեւան, 2016 Սեպտեմբեր 21

1998ին 102րդ ռուսական ռազմախարսխի ՀՕՊ զօրքերը համալրուեցին մեծ հեռահարութեան (մինչեւ 100կմ) Ս-300Վ (C-300B) ՋՀՀերով[8]: Այս համակարգերը, որոնք թրթուռաւոր ամրաշրջանակի վրայ տեղադրուած արձակման կայանքներ են, տեղակայուեցին Գիւմրիի մօտ՝ իրականացնելով 102րդ ռազմախարսխի հակօդային եւ հակահրթիռային պաշտպանու-

[7] Давид Петросян, “Об авиационной компоненте 102-й российской военной базы в Армении” (102րդ ռուսական ռազմախարսխի օդային բաղադրիչի մասին), интернет – журнал *Военно – политическая аналитика (Ռազմաքաղաքական վերլուծութիւն” համացանցային հանդէս)*, մատչում՝ 21.03.2016, (https://vpoanalytics.com/2016/03/21/ob-aviacionnoj-komponente-102-j-rossijskoj-voennoj-bazy-v-armenii/?fbclid=IwAR3b6j6pMNmGkKwn0I4uK43hMoI_Rtu3XpVQR7x5py2IYmQ3bSiQvO3FYIA) մատչում՝ 21.03.2016:

[8] Նոյն:

թիւնը[9]: Արդէն 2010ականների կէսերի դրութեամբ ռազմախարսխի ՀՕՊ 988րդ զենիթահրթիռային գունդը իր կազմում ունէր 1 զօրաբաժին Ս-300Վ, 1 զօրաբաժին Բուկ-Մ1-2 (Бук-М1-2), ինչպէս նաեւ 6 հատ 9Կ35 Ստրելա-10 (9К35 Стрела-10) ԶՀՀեր[10]:

[24] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.326, թ. 70, 71, 72, 73, 74:

[25] Նոյն, թ. 79:

[26] Ներսիսեան, էջ 141:

[27] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240 թ. 21:

[28] «Դրութիւնը 3-րդ գաւառամասում», *Կարմիր Շիրակ*, 1921, թիւ 13, էջ 2. նաեւ նոյն՝ «Տեղեկութիւններ գաւառամասերից, կեանքը 3-րդ գաւառամասում», թիւ 30, էջ 2:

զաւթել են գիւղի տները, այնուհետեւ իրականացրել չարագործութիւններ: Ասկեարները գիւղում մնացած բնակիչներին՝ կանանց, երեխաներին եւ ծերերին բռնութեամբ՝ մտրակելով, հրացանի կոթերով եւ սուիններով հարուածելով ու հայհոյելով տանում-լցնում են Գեւո տացուի (տիրացու կամ հօրեղբայր) գոմը եւ մարագը: Զինուած ասկեարները շրջապատում են շինութիւնը, որ ներսում գտնուողները չփորձեն փախչել: Կտուրին, երդիկի շուրջը նախապէս անցքեր են բացում, որտեղ խոտի կոյտեր են դնում, այնուհետեւ մեծ քանակութեամբ նաւթ են լցնում ու այրում: Մարդիկ այրւում կամ էլ ծխախեղդ են լինում: Այրուող բնակիչների մէջ են լինում նաեւ ականատեսի՝ մայրը, եղբայրները, քոյրերը եւ միւս հարազատները[29]: Այս գիւղում ողջակիզւում են 196 հոգի[30]: Կոտորածների էին ենթարկւում նաեւ այլազգիները: Կոտորածի եւ թալանի է ենթարկւում յունական Ալաքիլիսա (այժմ Հովտուն, Շիրակի մարզ) գիւղը, որի 250 բնակիչներից ողջ են մնում 95 անձ, որից 6ը տղամարդիկ[31]: Ռազմական գործողութիւնների ժամանակ իրականացուած զանգուածային կոտորածներից յետոյ չէին դադարում մարդկանց սպանութիւնները: Այսպէս, Թաքնալի (այժմ Գոգհովիտ, Շիրակի մարզ) գիւղում՝ թուրքերը մտնում էին բնակիչների տները, բռնում նրանց կամ կանչում հարցաքննութեան, ենթարկում տարատեսակ տանջանքների (ծեծում, սուինահարում, գլխիվայր կախում ջրհորը, յատուկ պատրաստուած փայտեայ ձողով հարուածում ոտքի թաթերին մինչեւ արիւնահոսելը, շիկացած շամփուրով դաղում ձեռքերը) եւ պահանջում՝ թաքցրած իրերի եւ կամ սնունդի տեղը ասել[32]: Տարածուած էին ծիսականացուած սպանութիւնները. այսպէս, մի մարդու գլխիվայր կախել են գոմի երկու սիւ-ներին, պարանով մի ոտքը կապել են միւս սիւնին իսկ միւս ոտքին կապած պարանը ձգել են ուժգին միւս սիւնին հասցնելու համար այնքան, որ զոհը երկու կէս է եղել[33]:

Այսպիսով կարող ենք փաստել՝ Հայաստանի Հանրապետութեան Աղբաբայի շրջան բնակուող մահմեդական բնակչութեան ներգրաւուածութիւնը երրորդ գաւառամասի կոտորածներին եւ թալանին:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԱՒԱՌԱՄԱՍԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկրորդ գաւառամասում՝ համեմատած գաւառամասի միւս գիւղերի, շատ են սպանութիւնները Ղոլղաթ (այժմ Գեղանիստ, Շիրակի մարզ) գիւ-

---

[29] «Պատասխան թուրք կեղծարարներին», *Հայոց Ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցեր*, 8:2003, էջ 101-5:

[30] Նոյն, էջ 105:

[31] ՀԱԱ ֆ. 240, ց.1, գ. 240, թ. 126:

[32] Գեղամ Պետրոսեան (ծն. 1912, Սարիար), «Ինչ որ յիշում եմ», ՀՑԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 258, էջ 17, 19-22:

[33] Նոյն էջ 20:

ղում[34]: 1920 Դեկտեմբերի 8ին երկրորդ գաւառամասի դրութեան մասին Ա-լեքսանդրապոլի գաւառի երկրորդ գաւառամասի յանձնակատարի զեկոյ-ցից՝ Ալեքսանդրապոլի գաւառի յանձնակատարին, իմանում ենք, որ Ղոլ-ղաթ գիւղը բնակչութիւն ընդհանրապէս չունի այլ՝ աւերակների կոյտ է: Սպանութիւններ են եղել նաեւ Ղուլիջան (այժմ Սպանդարեան, Շիրակի մարզ) գիւղում: Արթիկ գիւղը (այժմ քաղաք Շիրակի մարզ) ենթարկւում է քուրդ թալանչիների յարձակումներին: Արական սեռի ներկայացուցիչներ չկան, երիտասարդները հիմնականում թաքնուել են Բաշ (այժմ Սարալանջ, Շիրակի մարզ) գիւղում[35]: Գաւառամասի գիւղերում սպանուածների թիւը 291 է, գերուել եւ չեն վերադարձել 306ը[36]: Բռնաբարուել է կանանց 90%[37]: Կազմելով երկրորդ գաւառամասի պատկերը՝ գալիս ենք հետեւութեան, որ այս գաւառամասի գիւղերի բնակչութեան մեծամասնութիւնը դիմել է փա-խուստի, իսկ տեղում մնացածները չեն խուսափել բռնութիւններից:

## ԱՌԱՋԻՆ ԳԱԽԱՌԱՄԱՍԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Առաջին գաւառամասում՝ համեմատած գաւառամասի միւս գիւղերի, խոշոր կոտորածներ են տեղի ունեցել Հաջինազար (այժմ Կամօ, Շիրակի մարզ), Աղքիլիսա (այժմ Կրաշէն, Շիրակի մարզ), Չրախլի (այժմ՝ Ջրառատ, Շիրակի մարզ), Մեծ Քափանակ (այժմ՝ Բասէն, Շիրակի մարզ), Փոքր Քա-փանակ (այժմ Հովիտ, Շիրակի մարզ), Ջաջուռ, Փոքր Ղարաքիլիսա (այժմ Ազատան, Շիրակի մարզ), Դիրաքլար (այժմ Կառնուտ, Շիրակի մարզ), Ղո-նախռան (այժմ Շիրակ, Շիրակի մարզ), 3րդ Արախվալի (այժմ Լեռնուտ, Շիրակի մարզ), Մեծ Սարիար, Դարբանդ (այժմ Կարմրաքար, Շիրակի մարզ) գիւղերում: Ամբողջ գաւառամասում սպանուել է 8133 մարդ, գերուել եւ չի վերադարձել 966ը[38]: Գաւառամասի 34 գիւղի բնակիչներից ողջ են մնացել միայն չորս գիւղերում, այն էլ առանց տղամարդկանց, բացառապէս մեռնող կանացի բնակչութեամբ, որոնց նկատմամբ բռնութիւնները չեն դադարում[39]: Այս շրջանի գիւղերից շատերը նոյնպէս երկրորդ կոտորածն էին տեսնում 1918ից յետոյ: Օսմանեան արշաւանքի ժամանակ Խլի Ղարա-քիլիսա գիւղի 1500 բնակչից ողջ էին մնացել՝ 200ը: Այդ շրջանում բռնա-բարուել եւ առեւանգուել են աւելի քան 5000 կին ու աղջիկ, որոնցից շատե-րը թոյն են խմել, չդիմանալով իրենց դէմ գործադրուած գազանութիւննե-րին, շատերն էլ իսլամ են ընդունել: Ջաջուռի շրջակայ գիւղերի երիտա-

[34] ՀԱԱ ֆ. 240, ց. 1, գ. 240 թ. 26:
[35] Ալեքսանեան, էջ 134:
[36] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240 թ. 26:
[37] Ներսիսեան, էջ 141:
[38] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240 թ. 24, 25:
[39] Ներսիսեան, էջ 143:

սարդներին տարել են մօտակայ լեռները եւ գնդակահարել, դիակները թողնելով գագաթներին եւ ստորոտին[40]:

Վերաշինուած՝ առաջին գաւառամասի մի շարք գիւղերում 1920ին տեղի են ունենում դիմադրական մարտեր (Մեծ եւ Փոքր Քափանակներ, Չրախլի)[41], որոշներում քեմալականներին դիմաւորում են աղ ու հացով, մտածելով այդկերպ կոտորածից փրկուել: Ըստ ականատեսների վկայութիւնների, որոնց՝ սերունդներին փոխանցուած յիշողութիւնները պահպանուել են մինչ օրս, թուրքերին աղ ու հացով են դիմաւորել Դուզքեանդի (այժմ Ախուրեան, Շիրակի մարզ), Դիրաքլարի (այժմ Կառնուտ, Շիրակի մարզ), Թափադոլակի (այժմ Արեւիկ, Շիրակի մարզ) բնակիչները, խոստանալով ընդունել թուրքական իշխանութիւնը: Դուզքեանդ եւ Դիրաքլար գիւղերում աղ ու հացը մօտեցնում են դհոլ-զուռնայի ուղեկցութեամբ «հնչեցնելով տոյ-տոյ պարեղանակը»՝ նրանց սիրաշահելու համար[42]: Թէ որքանով փրկեց այս քայլը անպաշտպան բնակիչներին՝ դժուար է ասել (եւ տալ միանշանակ պատմական գնահատական), այդուհանդերձ այդ գիւղերում սպանութիւններ քիչ են լինում, մինչդեռ Ղարաքիլիսայի գաւառի այն գիւղերը, որոնք դարձեալ աղ ու հացով էին դիմաւորել թուրքերին ամբողջովին կամ մասնակի կոտորուեցին[43]: Խաղաղ բնակիչները, գիւղերի ազդեցիկ մարդկանց նախաձեռնութեամբ, այս քայլին էին դիմում ճարահատեալ, որովհետեւ որոշ վայրերում հայկական զօրքը նահանջել էր, իսկ իրենք մնացել էին թուրքական մահաբեր սրի դէմ միայնակ: Այսպիսի մի դէպք եղել էր 1918ի ձմռանը՝ Արտահանում: Այստեղից շուրջ երեսուն սահնակներով Արդանուչի եւ Շաւշէտի փախստականներին փոխադրել էին Ախալքալաք, որտեղից եօթանասուն սահնակներ կրկին եկել էին՝ մնացածներին եւս փոխադրելու, բայց թշնամին արդէն շրջապատել էր Արտահանը: Քաղաքում մնացած ղեկավար մարմինները երկար խորհրդակցութիւններից յետոյ, որոշում են՝ թուրքերին դիմաւորել աղ ու հացով եւ դհոլ-զուռնայով: Սակայն տասը օր անց թուրքերը եւ քրդերը սկսում են հայ խաղաղ բնակչութեան կոտորածը[44]:

1920 Նոյեմբերի 13ին թուրքերը մտնում են Մեծ Սարիար գիւղ, որը գտնւում էր Ջաջուռ կայարանից մէկ վերստ հեռաւորութեան վրայ, չարչարանքների ենթարկելով կոտորում են 300 հոգու, որից 260 տղամարդ, 40

---

[40] *Հայերի Ցեղասպանութիւնը*, էջ 638, 644:

[41] ՀՑԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 385: Յովակիմ Կարապետեանի (ծն. 1905, Չրախլի) յուշերը: Բանասաց՝ Յասմիկ Խաչատուրի Մուքոյեան (ծն. 1936, Թիֆլիս), որն ապրում էր Շիրակի մարզի Բասէն գիւղում, պատմութիւնը լսել է հօրից՝ դէպքերի ժամանակակից, ականատես-վերապրած Խաչատուր Միքայէլի Հարոյեանից (ծն. 1874, Մեծ Քափանակ):

[42] Բանասաց Յասմիկ Մուքոյեան:

[43] Հախոյեան, էջ 88:

[44] Խորէն Ստամբոլցեան, *Սաթիկի մայրիկը, իրական պատմութիւն զուլումի աշխարհից (գրի առնուած 1925ին)*, հեղինակային հրատ., Երեւան, 2010, էջ 8-14:

կին եւ երեխայ: Թուրքերի հեռանալուց յետոյ սպանուած մարդկանց դիակներ են գտել գիւղի ներքեւում, Երեւան-Թիֆլիս երկաթուղու գծից ներքեւ եւ յանձնել հողին, բոլորը սպանուած են եղել նախապէս միմեանց կապած լինելով, իւրաքանչիւրին սպանել են 30ից մինչեւ 40-50 սուինի հարուածներով: Առաջին անգամ գիւղ են մտել 800 ասկեարով եւ մինչեւ Ապրիլի 21ը մշտապէս ապրել են գիւղում ամենաքիչը 100 ասկեար: Նրանք գիւղերից հաւաքած շուրջ 100 սայլերով վերոնշեալ գիւղից լծկաններով տարել են ամբողջ հացահատիկը, ալիւրը, տեղաշորերը, խալիները, կարպէտները, գիւղատնտեսական բոլոր գործիքները, կահկարասին, մանր եւ խոշոր ընտանի կենդանիներին՝ տաւար, ոչխար, ձի: Բռնաբարուել են կանայք եւ օրիորդները: Թուրքերի հեռանալուց յետոյ, ինչպէս միւս գաւառամասերում այստեղ նոյնպէս մարդիկ կանաչ ուտելով են ապրել[45]: Ղոնախրան գիւղում, որը մօտ էր Ջաջուռին, սպանուում են 600 հոգի, մեծմասամբ տղամարդ: Գիւղը ամբողջովին թալանուել է (հացահատիկ, տաւար, ոչխար, երկրագործական իրեր, զարդեր, տեղաշորեր, հագուստներ): Թուրքական վեցամսեայ ռազմակալումից յետոյ դարձեալ կերակրուել են կանաչով[46]: Թուրքերի հեռանալուց յետոյ գիւղերի յեղկոմների կողմից կազմուած գրեթէ բոլոր ցուցակներում նշւում է, որ գիւղերը ենթարկուել են լիակատար թալանի, հետեւաբար գարնան այդ ամիսներին, ողջ մնացած բնակիչները կերակրուել են «կանաչով»: Հաւանաբար նկատի ունեն կանաչեղէնը՝ վայրի ուտելի բանջարաբոյսերը (շուշան, աւելուկ, եղինջ, կռատուկ, սիբէխ, սինձ, տափոլոռ եւն.), որոնք սննդի մէջ գործածւում են կանաչ եւ եփուած ձեւով: Ալեքսանդրապոլի յեղկոմի նախագահ Սերօ Մանուցեանը 1921 Օգոստոսի 25ին հայյեղկոմին ուղարկուած զեկուցագրում հաղորդում է, որ Ալեքսանդրապոլի գաւառի 4 շրջանից երկուսի բնակչութիւնը «բառիս ամենալայն իմաստով խոտ արածելով է ապրել»[47]:

Քեմալականների կողմից մեծ տարածում էին գտել ողջակիզումները: Զանգուածային ողջակիզումներ են իրականացուել Չրախլի, Մեծ Քափանակ եւ Փոքր Քափանակ գիւղերում[48]: Հաջինազար գիւղի տները ամբողջովին լցուած են եղել դիակներով, շինութիւնները քանդուած, որն էլ վառած են եղել դիակների վրայ: Գիւղի 1875 անձից մնացել է 850ը, մեծ մասը իգական սեռի ներկայացուցիչներ[49]: Թուրքերի կողմից իրականացուել են ե՛ւ ողջակիզումներ, ե՛ւ դիակիզումներ: Շատ գիւղեր նոյն վիճակում էին: Տղա-

---

[45] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.326, թ. 23,75, 76:

[46] Նոյն, թ. 77:

[47] Հրանտ Աբրահամեան, «Ալեքսանդրապոլի իրադարձութիւնների շուրջ (1920 Նոյեմբեր-1921 Ապրիլ)», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2:2007, էջ 132:

[48] Առաւել մանրամասն տե՛ս՝ Վազգէն Հախոյեան, «Քեմալականների իրականացրած զանգուածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գաւառում (1920-1921 թթ.)», *Հայագիտութեան հարցեր հանդէս*, 3:2021, էջ 76-78:

[49] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240, թ. 78:

մարդկանց, կանանց ու երեխաներին հաւաքում եկեղեցիներում ու անասնակերի մարագներում, պատուհաններից եւ դռներից կրակում, այնուհետեւ հրկիզող նիւթեր լցնում եւ այրում՝ դիերն ու ողջ մնացածներին[50]: 1920 Նոյեմբերի 27ին Ալեքսանդրապոլի գաւառի Ա. գաւառամասի յանձնակատարի օգնականի զեկոյցից՝ գաւառային յանձնակատարին տեղեկանում ենք, որ Հաջինազար գիւղում մէկ տան մէջ հաւաքուած են եղել հասակաւոր կանայք, այլ տան մէջ՝ երիտասարդ հարսներ, իսկ մէկ այլ՝ օրիորդներ: Իսկ մէկ այլ տան մէջ հաւաքել էին տղաներին՝ ութ տարեկանից մինչեւ 15 տարեկան: Հասակաւոր կանայք ու տղաները սովից մեռնում էին: Իսկ սարսափելին՝ սկսած 10 տարեկանից բռնաբարում էին բոլոր օրիորդներին[51]:

Արդէն 1921 Յունուարի 16ին Ալեքսանդրապոլի գաւառի Ա. գաւառամասի յանձնակատարը զեկուցում է գաւառային ոստիկանութեան յանձնակատարին գիւղերում տիրող վիճակի մասին, ամբողջացնելով պատկերը՝ իր օգնական Արշակ Սարգիսեանից զանազան գիւղերի մասին ստացուած տեղեկութիւններով: Հաջինազարում հաւաքուած են եղել՝ Ջաջուռի, Աղքիլիսայի, Արախվալիի (Արախվալի 3րդ - Վ.Հ.) բռնաբարուած կանայք ու աղջիկները: Ջաջուռում, Խալիլ փաշայի մօտ, Սարգիսեանցը ցոյց է տալիս իր մանդատը, որին ի պատասխան փաշան մանդատը արհամարհաբար նետում է ախոռներից մէկը: Նա եւ իրեն ուղեկցող 15 ոստիկանները բանտարկւում են, կէս ժամից նրանց ազատ են արձակում, շարքով կանգնեցնում եւ սպառնում գնդակահարել, եթէ այդ կողմերում նրանք եւս մէկ անգամ լինեն: Գիւղում ոչ մի մարդ չի լի-նում, թալանուած գիւղից քիչ հեռու ճանապարհի վրայ տեսնում են 5 կանանց եւ 12 տղամարդկանց դիեր: Գնալով Ղոնախռան, գիւղի շուրջը տեսնում են 20ի չափ կանանց ու տղամարդկանց դիեր, այնտեղ ողջ բնակչութիւն չի լինում: Թոփառլի գիւղում (այժմ Հացիկ, Շիրակի մարզ), նա հանդիպում է փրկուած շուրջ 100 կանանց, որոնցին ղոնախռանցի մի կին պատմում է, որ Ղոնախռան գիւղում տղամարդկանց կոտորել էին, մի մասին գերեվարել, իսկ հարսներին ու աղջիկներին տարել Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբիւր, Լօռու մարզ)[52]: Այստեղ տեսնում ենք, թէ ինչու էր առաւել խստացուած Ջաջուռի տարածքը: Սա առաւել շատ տուժած շրջաններից էր, եթէ յանձնակատարի օգնականը նորից առաջանար կամ գնար կնոջ պատմածի հետքերով՝ կը տեսնէր նաեւ Ջարդի ձորը՝ զանգուածային սպանդի ամենախոշոր վայրը: Թոփառլի գիւղ են եկել 40 ասկեար: Դարբանդ գիւղից կանանց բերել են Թոփառլի, յանձնակատարի օգնականը ցանկացել է դուրս գալ եւ տեսնել, թէ ինչ է կատարուել, սակայն դա

---

[50] ՀԱԱ ֆ. 131, ց.1, գ. 18, թ. 2: Տե՛ս՝ ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 103: Յուշագիր՝ Ղահրաման Զատիկի Սուքիասեան (ծն. 1889, Կարսի մարզ, Արազին):

[51] Ալեքսանեան, էջ 127:

[52] Նոյն, էջ 142-43:

վտանգաւոր է եղել: Առաւօտեան ժամը 7ին գնալով իրենց չաւուշի մօտ, նա խնդրելով եւ վա-խեցնելով հազիւ հազ կարողանում է նրանց ճանկերից ազատել այդ կանանց: Բռնաբարել էին 12 տարեկան աղջիկներին, որոնցից 4ը մահացել էր, իսկ 100ի չափ կանանց ու աղջիկների ոստիկանների հետ ուղարկում է Ալեքսանդրապոլ[53]:

Օրթաքիլիսայում (այժմ Մայիսեան, Շիրակի մարզ) եւս նոյն պատկերն է եղել: Ասկեարները սեփականացրել էին կանանց, ստիպում էին ծածուկ հորերի տեղը ասել՝ հանելով հացահատիկներ: Թոփառլի գիւղում այդպէս սպանել էին երկու կնոջ. պատճառը այն է եղել, որ նրանք չէին ասել պահած հորերի տեղը[54]: Այսպիսով, միւս գաւառամասերի համեմատութեամբ՝ առաջին գաւառամասում արձանագրուել են առաւել շատ կոտորածներ, այստեղ էր գտնւում նաեւ կոտորածների խոշոր վայրերից մէկը՝ Հզազի ձորը (Ջարդի ձոր): Այն Շիրակի նահանգի՝ Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառների սահմանագլխին էր՝ Ջաջուռի լեռնանցքում (թամքոց): Այս լեռնանցքը իրար է կապում Փամբակի հովիտը եւ Շիրակի դաշտը: Քեմալականները բռնազաւթուած երկու գաւառների գիւղերից՝ բռնի եւ տարբեր խարդաւանքներով տեղահանել, այստեղ են բերել խաղաղ բնակիչներին ու փախստականներին եւ զանգուածաբար կոտորել[55]: Մէկ այլ խոշոր կոտորածի ձոր էր Ղուզղունի ձորը՝ Չրախլի (Ջրառատ, Շիրակի մարզ) եւ Խանվալի (1946ից՝ Ծաղկասար: 1960ականներից ապաբնակեցուել է, աւերակները գտնւում են Ջրառատից 5 կմ հիւսիս-արեւելք) գիւղերի միջեւ[56]:

## ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Կարսի անկումից յետոյ, քեմալական արշաւանքի հետեւանքով Ալեքսանդրապոլում վիճակն օրհասական էր, այդ մասին իմանում ենք Ալեքսանդրապոլից ՀՀ վարչապետին ուղղուած հեռագրից: Հակառակ կառավարութեան բարձր ներկայացուցիչների հաւաստիացումներին եւ պահանջներին, որ ոչ ոք չպէտք է լքի իր գործը, քանզի այդ ծանր պայմաններում ճակատը կը կազմալուծուէր, 1920 Նոյեմբերի 5ի լուսաբացին քաղաքը մատնուած էր անիշխանութեան, թալանի եւ աւերման: Ալեքսանդրապոլի նահանգային, քաղաքային, գաւառային եւ հասարակական բոլոր հիմնարկների վարիչները, պաշտօնեաներն անհետացել էին եւ բազմահազարանոց քաղաքը մատնուել էր ոչնչացման: Պետական եւ հասարակական գոյքը թալանուել էր, տեղի էին ունեցել նաեւ հրդեհներ: Երկաթուղու կայարանը նոյնպէս թալանուել էր եւ աւերուել[57]: Այդ խուճապահար եւ դատա-

---

[53] Նոյն, էջ 143:
[54] Նոյն:
[55] Առաւել մանրամասն տե՛ս՝ Հախոյեան, էջ 78-80:
[56] Բանասաց Յասմիկ Խաչատուրի Մուքոյեան:
[57] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 96, 97:

պարտելի փախուստից յետոյ Ալեքսանդրապոլի ժողովուրդը զօրավար Սիլիկեանի թոյլտուութեամբ ժողով անցկացնելով ընտրում է 15 հոգուց բաղկացած համախոհական մարմին, որը զբաղուելու էր իրավիճակով[58]: Այս դէպքերի մասին հաղորդում է նաեւ ժամանակի մամուլը, նշելով, որ Նոյեմբերի 4ին, երբ Ալեքսանդրապոլի շրջանում սկսուել էր ուժեղ թնդանօթաձգութիւն եւ քաղաքը վտանգուած էր, Շիրակի նահանգապետ Կարօ Սասունին անհրաժեշտ համարեց վերցնել նահանգային ոստիկանութիւնն ու շտապել ռազմաճակատ, օգնութեան հասնելու կռուողներին: Մինչդեռ քաղաքային ինքնավարութեան եւ քաղաքացիական իշխանութեան մի շարք ղեկավարներ, հակառակ կառավարութեան հրահանգի, խուճապի մատնուած թողնում են քաղաքը եւ փախչում[59]: Քաղաքում մեծ թիւ էին կազմում 1915ի Մեծ Եղեռնից փրկուած եւ 1920ին Վանանդի նահանգից փախած գաղթականները, որոնք ահաբեկուած մօտեցող թուրքական զօրքերի կոտորածներից՝ դիմում են փախուստի: Կարսից Ալեքսանդրապոլ ընկած գիւղերի բնակչութեան մեծ մասը, շուրջ 60,000 գաղթականներ փախչում են Ղարաքիլիսայի գաւառ, հասնելով Ղարաքիլիսա, Դիլիջան, մինչեւ Սանահին: Ալեքսանդրապոլից այստեղ հասած շուրջ 7000 գաղթականներին Վրաստանի կառավարութիւնը թոյլ չի տալիս առաջանալ, օգտուելով առիթից՝ այն համարելով սահմանագլուխ: Այդուհանդերձ Արդահան-Արտանուչ ճամփան լցուած էր հայ կանանցով ու մանուկներով, որոնք Ալեքսանդրապոլից ու Կարսից փախչում էին Բաթում, որպէսզի խուսափեն առաջացող քեմալական զօրքից: Սովահար փախստականները լցւում էին նաեւ Թիֆլիս, կեանքի ապահովութիւն գտնելու յոյսով: Երեւանի շրջանի գիւղերում նոյնպէս հաստատուել էին գաղթականներ[60]: Ղարաքիլիսայի գաւառում հաստատուած գաղթականները յետագայում որոշակի ապահովութիւն են ձեռք բերում՝ Նոյեմբերի 18ի զինադադարով հաստատուած «չէզոք գօտում», որը ձգւում էր Նալբանդ կայարանից մինչեւ Համզաչիման (այժմ Մարգահովիտ, Լօռու մարզ) այն սակայն գտնւում էր թուրքերի վերահսկողութեան ներքոյ[61]: Մինչեւ զինադադարը՝ Նոյեմբերի 15ին, Ղարաքիլիսայի գաւառի Փամբակի հովտի արեւմտեան հատուածում քեմալականները տեղի բնակչութեան հետ կոտորում են նաեւ Ալեքսանդրապոլի անկումից յետոյ այստեղ պատսպարուած՝ 7500 փախստականների՝ Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջաններից[62]: Քեմալականները Ալեքսանդրապոլի կայարա-

---

[58] Նոյն:

[59] «Դէպքերն Ալեքանդրապոլում», *Յառաջ*, 1920, թիւ 245, էջ 4:

[60] «Հայկ. անկախութիւնը փրկելու համար Հայաստանի ժողովուրդը փրկենք», *Ժողովուրդի ձայնը*, 1920, թի 664, էջ 2. նաեւ նոյն՝ «Հազարաւոր հայ փախստականներ կ'ապաստանին Վրաստան», 1920, թիւ 667, էջ 3:

[61] Կտրիճ Սարդարեան, «Համաշխարհային յեղափոխութեան արեւելեան խաչմերուկում», *Գարուն*, 4:1990, էջ 43:

[62] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 6, ֆ. 114, ց. 1, գ. 131, թ. 12, ֆ. 114, ց. 2, գ.27, թ. 86:

նում աշխատելու համար հաւաքագրուած մարդկանց տանում էին Կարս, Էրզրում, որտեղ նրանց մերկ, ոտաբոբիկ ստիպում էին աշխատել օրական 14-15 ժամ՝ նրանց տալով միայն մէկ ֆունտ հաց: Քաղաքի գրեթէ բոլոր մասնագէտները ուղարկուել էին այնտեղ[63]:

Թուրքական հայասպան քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ թուրքերի եւ բոլշեւիկների կողմից Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանութիւն հաստատելուց յետոյ (1920 Նոյեմբերի 17): Նորաստեղծ իշխանութիւնը թուրքերը ծառայեցրին իրենց շահերին՝ հայերին հանելով հայերի դէմ իբր թէ «հակայեղափոխականներ եւ յեղափոխականներ»: Աջակցելով նորաստեղծ Ալեքսանդրապոլի յեղկոմին, թուրքերի հիմնական նպատակը, ոչ թէ քաղաքում եւ գաւառում կարգ ու կանոն հաստատելն էր, այլ այդ մարմնի միջոցով տեռորի եւ թալանի քաղաքականութիւն իրականացնելը: Ստեղծուած իշխանութեան մարմինները սեփական ժողովրդին թալանելու գործում գերազանցում են մէկը միւսին[64]: Գաւառի բնակչութեանը թալանելուց եւ կոտորելուց յետոյ, դրդելով յեղկոմին յանցաւոր արարքների՝ սեփական բնակչութեան նկատմամբ, թուրքերը բացայայտ վարկաբեկում են յեղկոմին: Թուրքերը սկսում են յարձակումները յեղկոմի անդամների վրայ, գիշերով գնդակահարում են կումունիստներին[65]: Թուրքերի թալանն ուղեկցւում էր բնակչութեան սպանութիւններով: Թուրքերը հայերին սպանում էին որտեղ պատահէր իսկ յանցագործութիւնները կոծկում էին դիակները թաքցնելով: Տանջանքներով սպանուած մարդկանց դիակները յայտնաբերւում են միայն թուրքերի հեռանալուց յետոյ: Քաղաքային դումայի զեկուցագրերից մէկում նշւում է, որ մեծ թուով դիակներ են յայտնաբերուել յատկապէս քաղաքի մարքազի, կայազօրի պետի, քաղաքի պարէտի, ոստիկանապետի ապրած տների նկուղներում[66]: Տարբեր հնարների դիմելով եւ նախօրօք տրուած գաղտնի հրամանով, որով ասւում էր, որ հայերին սպանելու համար թէկուզ բարեկամացէք նրանց հետ, թուրքերը սպանում էին հայերին: Կար կազմակերպուած յատուկ խումբ, որն իր գործակալների՝ գերազանցապէս Աղբաբայի թուրքերի միջոցով, նախապէս կազմուած ցուցակներով ձերբակալում էր ունեւոր հայերին եւ գցում նկուղները, նրանցից վերցնելով մեծ չափերի փրկագին: Փրկագինը ստանալուց յետոյ նրանց սպանում էին, քչերին էր յաջողւում ազատուել[67]:

Յունուարի 1ից թրքական հրամանատարութիւնը յանձինս իր սպաների, շրջում էր քաղաքի բոլոր փողոցները, թալանում եւ տանում ողջ շարժական

---

[63] Աբրահամեան, էջ 126-27:

[64] Կարինէ Ալեքսանեան, «Թուրքիայի ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակութիւնն Ալեքսանդրապոլի գաւառում», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 1:2005, Էջ 20-21:

[65] Նոյն, Էջ 22:

[66] Նոյն, էջ 22:

[67] Նոյն, էջ 22:

գոյքը, գրասեղաններ, աթոռներ, մահճակալներ, փայտի մնացորդներ, վերմակներ, հայելիներ, ամաններ, կահկարասիք եւն. եւ այդ բոլորը քաղաքի իշխանաւոր Քեազիմ Բէյի յայտարարութեան հրամանով[68]: Ալեքսանդրապոլը տնտեսապէս քայքայւում էր երկարատեւ եւ չվերջացող թալանի հետեւանքով: Երկաթուղային գոյքը թալանուել էր: Կարս եւ Թուրքիայի խորքերն են տարել դեպոյի մեքենաները: Ասկեարները կատարում են ձերբակալութիւններ, տներից հանում, մերկացնում են մարդկանց, թալանում, բռնաբարում, ներքնայարկերում գնդակահարում անմեղ բանուորներին եւ գիւղացիներին: Մասնագէտ բանուորներին եւ արհեստաւորներին հաւաքում եւ ուղարկում են Էրզրում: Յունուարի սկզբներին Սեւ եւ Կարմիր աշտարակների մէջ յայտնաբերւում են բազմաթիւ դիակներ: Բերդում գտնւում են մեծ թուով կանայք[69]: Արդէն 1921 Յունուարի 21ից, թուրքական բանակը սկսում է բացայայտ թալանել Ալեքսանդրապոլ քաղաքը[70]: Ալեքպոլի յեղկոմը դարձել էր պատրանք: Թուրքերի գրաւման հետեւանքով երկրի քայքայման, բնաջնջման, ինչ որ չափով իրենց մասնակցութեան «պատասխանատուութիւնից», որին դրդել էին թուրքերը, փորձելով ազատուել Ալեքպոլի յեղկոմը իր Յունուարի 25ի ժողովին որոշում է թողնել իշխանութիւնը[71]: Պարբերաբար մարդկային դիեր են յայտնաբերւում թաղերից, մառաններից, ջրհորերից եւ հորերից: Մայիսի 2ին բերդում յայտնաբերւում է մի հոր ամբողջովին լցուած դիերով, որոնց քանակը անհնար է լինում որոշել: Զոհերը սպանուել էին բազմաթիւ չարչարանքներից յետոյ. նրանք չունէին քիթ, ականջներ, աչքեր, շուրթեր եւն.[72]: Քեմալականները շարունակեցին իրենց նախորդների ցեղասպան քաղաքականութիւնը հայերի նկատմամբ: Այդ քաղաքականութիւնը Կարսի անկումից եւ Վանանդի նահանգի ռազմակալումից յետոյ, առաւել պատկերաւոր դարձաւ Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառներում: Դեռեւս 1920 Նոյեմբերի 8ին քեմալականների արտաքին գործոց նախարար Ահմէտ Մուխթարը ճշտել էր Թուրքիայի բուն նպատակը, երբ զօրքերի հրամանատար Քեազիմ Քարապեքիր փաշան գրում էր, որ Հայաստանը զբաղեցնում է թուրքական բանականին ընդարձակ տարածութիւն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համարում այն ոչնչացնել՝ ինչպէս քաղաքականապէս, այնպէս եւ մարմնապէս[73]:

---

[68] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 49:

[69] Նոյն, թ. 48:

[70] Ալեքսանեան, էջ 23:

[71] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 49:

[72] ՀԱԱ, ֆ. 131, ց. 1, գ. 18, թ. 15, 16:

[73] Զաւէն Մսըրլեան, «Քեմալական Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութիւնը հայոց նկատմամբ (1919-1942)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 38:2018, էջ 395-96:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով Ալեքսանդրապոլի գաւառի կոտորածներին վերաբերող փաստաթղթերի համեմատական վերլուծութեան արդիւնքում գալիս ենք այն եզրակացութեան, որ դրանք ամբողջութեամբ չեն ներկայացնում կոտորածների պատկերը: Գաւառամասերում կոտորածների թուերը ներկայացուած են նախնական, ինչպէս Ալեքսանդրապոլի յեղկոմի կողմից Հայկական ԽՍՀ յեղկոմին տրամադրած տուեալները[74]: Այդ փաստաթղթերը կազմուել են հիմնականում գաւառամասերի յեղկոմների կողմից: Հաւանաբար մարդկային կորուստների հաշուառումներն իրականացուել են գիւղերում ողջ մնացած բնակիչների ներկայութեամբ եւ տեղեկամատեանների տուեալներով: Հարց է առաջանում թէ որքան էր Շիրակի նահանգում (Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառներ), մասնաւորապէս Ալեքսանդրապոլի գաւառում կոտորուած փախստականների (Վանանդի նահանգից եկած) ընդհանուր թիւը: Ներկայացուած տուեալները վերաբերու՞մ են արդեօք նաեւ փախստականներին եւ ի՞նչ սկզբունքով հաշուառում իրականացուեց, կամ իրականացուե՞ց առանձին հաշուառում: Համեմատելով առանձին գաւառամասերի մարդկային կորուստների տուեալները՝ ընդհանրական տուեալների հետ, գալիս ենք այն եզրակացութեան, որ դրանք յետագայում նոր դիտարկումների եւ հաշուարկների արդիւնքում, հաւանաբար լրացուել են եւ վերաբերում են նաեւ Կարսի նահանգի փախստականներին: Ստորեւ՝ Վրացական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին ուղղուած կապի աշխատակից Կոստանոշվիլու՝ 1921 Մայիսի 13ի յայտագրի Ալեքսանդրապոլի քաղաքում եւ գաւառամասերում, ըստ տեղական իշխանութիւնների յանձնաժողովի տուեալների, քեմալականների կարճատեւ տիրապետութեան ժամանակ կատարած խժդժութիւնները[75]:

| Քեմալականների տիրապետութեան ժամանակ կատարած խժդժութիւնները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սպանուել | Վիրաւոր | Գերեվար/ առեւանգուել | կախաղան հանուել | մահացել | Սովամահ եղել | Բռնաբարուել |
| այր | 30,000 | 20,000 | 18,000 | 25 | 10,000 | | |
| կին | 15,000 | 10,000 | 2000 | | | 500 | 25,000 |
| աղջիկ | 10,000 | 5000 | 3000 | | | 1000 | 10,000 |
| երեխայ | 5000 | 3000 | | | | 10,000 | |
| Ընդհ. | 60,000 | 38,000 | 23,000 | 25 | 10,000 | 11,500 | 35,000 |

Օրինակ տղամարդկանց պարագայում սպանուածների մէջ պէտք է, որ լինեն ինչպէս տեղացի բնակիչներ, փախստականներ, այնպէս էլ ռազմական գործողութիւնների մասնակից հայ զինուորներ՝ Հայաստանի Հանրապետութեան այլ բնակավայրերից: Հարց է առաջանում նաեւ թէ որքան էր

[74] Ներսիսեան, էջ 155:

[75] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 169, թ.13: ֆ. 114, ց. 1, գ. 46, թ. 4. նաեւ՝ Ներսիսեան, էջ 155-56, 160-61 (աղբիւրներում կան թուերի անհամապատասխանութիւններ):

թուրք-հայկական պատերազմի ժամանակ զոհուած զինուորների թիւը: Այսպիսով ընդհանուր տուեալներով՝ քեմալականների կողմից զինագրաւուած Ալեքսանդրապոլի գաւառում 1920 Նոյեմբեր-1921 Ապրիլ ամիսներին կոտորուել, գերութեան են քշուել եւ սովամահ եղել շուրջ 100,000 հայեր[76]:

Ամփոփելով վերը նշուածը՝ կարող ենք հաստատել, որ թուրքական բանակի զանգուածային կոտորածները Ալեքսանդրապոլի գաւառում՝ ցեղասպան գործողութիւններ էին: Թուրքերը ոչնչացրել են գրաւեալ տարածքների հայ խաղաղ բնակչութեանը, բռնութեամբ տեղահանել նրանց: Այդ զանգուածային յանցագործութիւններն իրագործում էին մարդկանց ֆիզիկապէս ոչնչացնելու եւ հոգեկան խեղումներ պատճառելու մտադրութեամբ: Դրանք ՄԱԿի 1948 Դեկտեմբերի 9ի «Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ դրա համար պատժի մասին» ուխտի՝ տուեալ յանցագործութեան յանցակազմի կարեւոր բաղադրատարրերն են:

## THE TURKISH MASSACRES IN THE PROVINCE OF ALEXANDRAPOLE IN 1920-21

(Summary)

VAZGEN HAKHOYAN
van.karno@gmail.com

The Turkish-Armenian war of 1920 had a tragic impact on and consequences for the population of Vanand (Kars) and Shirak provinces in the Republic of Armenia, which were occupied by the Turks for a while.

The paper details the massacres, repressions and looting the Turks conducted in the four districts of Shirak province during their occupation. The paper argues that, alongside economic destruction, the occupying Kemalist forces aimed at annihilating the local Armenian population in 1920-1921. Indeed, the Turkish military occupation conducted an anti-Armenian policy and mass massacres, which resulted in the depopulation of the province and the loss of vital means of survival and reproduction for the inhabitants. References are made to the genocidal actions of the Kemalists against the Armenian civilian population and the forms of mass executions.

The author notes that these acts are considered genocidal according to the provisions of the 1948 Genocide Convention.

[76] *Հայոց պատմութիւն, հ. 4րդ, գիրք առաջին (նորագոյն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.)*, Զանգակ, Երեւան, 2010, էջ 216:

# ՐԱՖՖՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԻ ՄԱՍԻՆ *ՄՇԱԿԻ* ԷՋԵՐՈՒՄ (1872-78)

**ԿԱՐԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ** (K86Mkrtchyan@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

*Մշակ* հասարակական-քաղաքական, գրական լրագիրը հրատարակուել է 1872-1921ին Թիֆլիսում: Թերթի հիմնադիր եւ առաջին խմբագիրը Գրիգոր Արծրունին էր: Լրագրում առկայ են բազմաթիւ եւ բազմաբնոյթ յօդուածներ, հրապարակումներ, որոնք արժէքաւոր տեղեկութիւն են հաղորդում ոչ միայն Հայաստանի, այլեւ հարեւան ու հեռաւոր երկրների հասարակական-քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքի մասին: Այդ նիւթերի մէջ որոշակի առանձնայատկութիւն ունեն անուանի գրող, հրապարակախօս, հասարակական գործիչ, պատմաբան ու ազգագրագէտ Րաֆֆու (Յակոբ Մելիքյակոբեան, 1835-88) պարսկահայ գաղթօճախի նուիրուած հրապարակումները, որոնք աչքի են ընկնում իրենց տեղեկատուութեան ստոյգութեամբ, թուային տուեալների նկատմամբ հեղինակի դրսեւորած բծախնդրութեամբ եւ որոշ դէպքերում նրա խորը պատմաքաղաքագիտական վերլուծութիւններով:

Այս պատճառով էլ, Րաֆֆուն իրաւամբ կարելի է համարել պարսկահայ գաղթօճախի տարբեր խնդիրների առաջին լուրջ հետազօտող, որը սկսած 1872ից առարկայօրէն լուսաբանել է հայութեան առջեւ ծառացած հիմնահարցերը պարսկական իրականութեան պայմաններում: Այդ հրապարակումները տպագրուել են *Մշակի* էջերում 1870ականներին, սակայն չեն սահմանափակուել միայն այդ ժամանակաշրջանի հայութեան խնդիրներով: Յաճախ դրանք ունեն միքանի տասնամեակների վաղեմութիւն, այսինքն՝ որեւէ հարց ներկայացնելիս Րաֆֆին նախ կատարում է պատմական ակնարկ, տալիս հիմնաւորումներ, ապա խորամուխ լինում հարցի զարգացման պատմութեանը՝ միաժամանակ վեր հանելով պարսկական պետական համակարգի, հասարակական կեանքի առանձնայատկութիւնները, ինչպէս դրական, այնպէս էլ բացասական կողմերը: Նա հանգամանօրէն ներկայացրել է հայութեան ժողովրդագրական պատկերը, կրօնական խնդիրները, Պարսկահայքում միսիոնարների կրթա-մշակութային գործունէութիւնը, հայ-ասորական առնչութիւնները, ինչպէս նաեւ հայութեան նկատմամբ կիրառուած հալածանքները, բռնութիւնները: Ներկայացուած են նաեւ այն թեմաները, որոնք վերաբերում են Պարսկաստանում մոլեգնած սովին եւ համաճարակներին ու հայութեան վրայ դրանց թողած ծանր հետեւանքները:

Իդէպ, *Մշակ*ում տպագրուած յօդուածներն ունեն կարեւոր նշանակութիւն: Պարսկաստանին եւ պարսկահայութեանը վերաբերող նամակները

մեծ հետաքրքրութեամբ են ընթերցուել ժամանակի ոչ միայն հայ, այլ նաեւ օտար ընթերցողի կողմից եւ եղել են եւրոպական արձագանգներ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ «*Մշակի մէջ տպուած պարոն Րաֆֆիի նամակներն, այնքան ճիշտ եւ կենդանի կերպով նկարագրելով Պարսկաստանի բնակչաց, մանաւանդ հայերի կեանքը, գրգռեց տեղւոյս գերմանացի եւ զուիցերացի պարոնների խորին ուշադրութիւնը, որք յանձնեցին մի հայ եւրիտասարդի ֆրանսերէն թարգմանել եւ մի քանի օրինակ Բերլին յուղարկուեցաւ տպուելու*»[1]:

Աւելին՝ հայութեամբ հետաքրքրուել են Պերլինի քաղաքական գործիչները, որոնք տուեալ ժամանակաշրջանում մեծ քաղաքականութիւն էին մտել եւ ինչու չէ՝ զբաղուած էին Հայկական Հարցով:

Արդ, սոյն հետազօտութեան ընթացքում փորձել ենք դասակարգել, համեմատել ու վերլուծել առաջնահերթ եւ գլխաւորապէս *Մշակ* լրագրի էջերում Րաֆֆու պատմագիտական ու ազգագրական նշանակութեան ժառանգութիւնը, որը վերաբերում է պարսկահայ գաղթօճախին:

Խնդրոյ առարկայ նիւթերի վերաբերեալ, անշուշտ, որոշ անդրադարձեր կան Րաֆֆու երկերում[2]: Սակայն մեր խնդիրն է քննարկել միայն պարսկահայութեանը վերաբերող յօդուածները 1870ականների կտրուածքով: Մեր յետագայ ուսումնասիրութիւններում կ'անդրադառնանք այդ նիւթի շուրջ Րաֆֆու միւս յօդուածներին, գրութիւններին ու նամակներին:

Յայտնի է, որ Րաֆֆին իր գործունէութեան ընթացքում անդրադարձել է հայոց պատմութեան ու գրականութեան հարցերին առհասարակ, ինչպէս նաեւ ընտանիքին, դպրոցին, եկեղեցուն եւ այլ հարցերին՝ նպատակ ունենալով ներկայացնել նաեւ պարսկահայութեան՝ որպէս գաղթավայրի առանձնայատկութիւնները, իսկ ընդհանրապէս նրա ռազմավարական նպատակն էր մշակել հայեցակարգ՝ օտար տիրապետութիւնների դէմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համար:

*Մշակը* լայնօրէն լուսաբանել է տարբեր հայկական գաղթավայրերի բազմաբնոյթ հարցեր, այսինքն՝ որեւէ սահմանափակում չի ունեցել, սակայն սոյն հետազօտութեան շրջանակներում մեր նպատակն է քննարկել միայն պարսկահայ գաղթօճախի հարցերը՝ նշուած լրագրի տեղեկատուութեան լոյսի ներքոյ: Ինչ վերաբերում է *Մշակի* մատենագիտութեան, ապա կարեւոր է Մ.Հ. եւ Ա.Ս. Բաբայեանների կազմած մատենագիտութիւնը, որը վերաբերում է 1872-78ին[3]:

---

[1] «Նամակ Դաւրէժից», *Մշակ* 1872, № 42, էջ 4:

[2] Րաֆֆի, *Երկերի ժողովածու, հատոր 9*, Հայպետհրատ, Երեւան, 1964, էջ 62, 115, 120, 125, 144, 151, 184, 186. նաեւ՝ Րաֆֆի, *Երկերի ժողովածու տասներկու հատորով, հատոր* 11 (*հրապարակախօսական եւ գրական-քննադատական յօդուածներ),* Նայիրի հրատ., Երեւան, 1991:

[3] *«Մշակ» լրագիր (Թիֆլիս), բովանդակութեան ցանկ 1872-1875, պր. 1*, կազմ.՝ Մ.Հ. եւ Ա.Ս. Բաբայեաններ, Փ.Հ. Խանզադեան, խմբ.՝ Ա. Բաբայեան, ՀՍՍՀ Ալ. Մի-

*Մշակի* եւ Րաֆֆիի ճանաչողական բազմաթիւ գրութիւնները այն ազնիւ նպատակն էին հետապնդում, որ ճշգրտուած տուեալների հիման վրայ ներկայացւում էր պարսկահայ կեանքը՝ փորձելով տեղեկացնել հայ հասարակութեան տարբեր ընկերային խաւերին, ազգային գործիչներին ու նրա մտաւորականներին, ինչպէս օտար իշխանութիւնների տիրապետութեան ներքոյ գտնուող հայրենիքում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս հայկական մօտ ու հեռաւոր գաղթավայրերում: Այսպիսով, ի թիւս բազմաթիւ այլ յօդուածների, այդ թւում՝ պարսկահայ կեանքի տարբեր խութերի շուրջ համակողմանի լուսաբանումը վկայում է Րաֆֆիի նուիրեալ առաքելութեան մասին:

## ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՈՒՐՄԻՈՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Հաշուի առնելով այն, որ հայերն Ատրպատականում ապրում էին ասորիների հետ համատեղ, Րաֆֆին ներկայացնում է վերջիններիս նիստուկացը եւ դրա ազդեցութիւնը տեղի հայութեան վրայ: Աւարտելով իր ճամփորդութիւնը Քուրդիստանի շրջանի Աղբակ գաւառակում, նա այցելում է Ջուլամերիկ: Հենց այս այցի ընթացքում է, որ գաւառակի Ղոճանիս գիւղում տեղի է ունենում հանդիպում ասորաց պատրիարք Մար Շիմոնի հետ: Հանդիպումն աչքի է ընկնում ե՛ւ հայ-ասորական առնչութիւնները քննարկելով, ե՛ւ ասորիների ազգագրական սովորոյթները վեր հանելով:

Նախ Րաֆֆու համար հետաքրքրական էր, որ ասորիների հոգեւոր առաջնորդը երիտասարդ էր եւ զբաղւում էր որսորդութեամբ, իսկ նրա տունը միւսներից տարբերւում էր միայն իր մեծութեամբ, «*շինուածքը պարզ եւ անզարդ էր, որպէս հասարակ գեղջուկի բնակարան*»[4]: Մինչդեռ նա կազմակերպում էր ասորիների աշխարհիկ եւ հոգեւոր կեանքը, ղեկավարում համայնքը: Փաստօրէն, ասորիները փորձում էին ի դէմս երիտասարդ հոգեւոր առաջնորդի լուծել իշխանութիւնների հետ առաջացած տարբեր խնդիրներ եւ հնարաւորինս պաշտպանել իրենց շահերը:

Րաֆֆու հետ զրոյցի ընթացքում Շիմոնը նկատում է. «*Հայերը խելացի եւ ճարտար մարդիկ են, բայց ափսոս նոքա իւրեանց բոլոր ճարպկութիւնը գործ են ածում միայն արծաթ ժողովելու: Արծաթը չէ կարող ազատել մարդին, երբ թշնամին յարձակւում է նորա վերայ բաց սրով: Նա խլում է արծաթը այլեւ սպրկացնում է նորան: Հարկաւոր է սրով պատասխանել սրին…*»[5]: Այս դէպքում էլ Շիմոնը՝ որպէս դրացի բախտակից ժողովրդի առաջնորդ,

---

ասնիկեանի անուան հանրապետական գրադարան, ինֆորմացիայի եւ մատենագիտութեան բաժին, 1975, 352 էջ. *պր. 2, 1876-1878*, կազմ.՝ Փ.Հ. Խանզադեան, խմբ.՝ Լ.Մ. Գէորգեան, ՀՍՍՀ Ալ. Միասնիկեանի անուան հանրապետական գրադարան, ինֆորմացիայի եւ մատենագիտութեան բաժին, 1988, 388 էջ:

[4] «ԺԱ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 33, էջ 3-4:

[5] Նոյն:

վեր էր հանում հայ ժողովրդի որոշ հատուածներին բնորոշ թերացումները, որոնք արդիական են: Յիրաւի, իր բնօրրանում սեփական գոյութիւնը պահպանելու համար հայութեանն անհարժեշտ էր ինքնապաշտպանուել, զինուել եւ պայքարել օտար զաւթիչների դէմ:

Ինչ վերաբերում է ասորիների ներքին կեանքին, ապա նշում է, որ Շիմոնի հայրը միշտ աշխատել է որ ասորիները հաւատարիմ մնան իրենց կրօնին՝ նեստորականութեանը: «*Իսկ եթէ կը ցանկանային նոքա փոխել իւրեանց կեանքը, նա միշտ խրատում էր միանալ հայերի[ն] ...: Մեք միանալով հայերի հետ կը կազմէինք մի ուժ եւ զօրութիւն, որով կարող էիմք ընդդիմանալ քուրդերի եւ տաճիկների բռնակալութիւններին*»[6]: Նշելի է, որ Շիմոնի հայրը այդ հարցով հաղորդակցել է Թաւրիզի հայոց հոգեւոր առաջնորդի հետ, բայց վերջինս չի ընդառաջել դրան:

Իդէպ, ասորիների մասին Րաֆֆին մանրամասն գրում է մէկ այլ յօդուածում՝ նշելով, որ «*Ասորի եպիսկոպոսապետի ընտրութիւնը լինում է իւր մօր արգանդից*»[7]:

Րաֆֆին Ջուլամերիկից ճանապարհում է Ուրմիոյ գաւառը, որի հայ բնակչութեան նահապետական կենցաղի մասին եւս արժէքաւոր հրապարակում կայ: Նրա բնորոշմամբ՝ «*Ատրպատականի մէջ առաջին գաւառն է դա, որ նշանաւոր է իւր բնակիչների բազմութեամբ, բերքերի հարստութեամբ եւ իւր գեղեցիկ դիրքով, որ կարող է համարձակ մրցութիւն անել հրաշալի Զուեցերիայի հետ, թէեւ նա չունէ Ալպիի գեղանկար լեռները*»[8]: Այստեղ նա հիւրընկալւում է Նախիջեւանի Թափա գիւղում մի հայ երիտասարդի տանը, եւ ներկայացնում տեղի հայկական ընտանեկան աւանդոյթները:

Խօսելով Ուրմիա քաղաքի մասին, Րաֆֆին նշում է. «*Մի բան միայն զարմացնում էր ինձ, որ Պարսկաստանում հայ կանայք, հետեւելով մահմետականների սովորութեանը, ման են գալիս ծածկուած երեսներով, իսկ այստեղ ընդհակառակն ես տեսնում էի նորանց բոլորովին արձակ, համարձակ վարւում էին տղամարդերի հետ*»[9],- նկատում է Րաֆֆին՝ յաւելելով, որ այդ սովորութիւնը ներմուծուել է տեղացի հայերի մէջ ասորիներից: Փաստօրէն, կենցաղում ձեւաւորուել էին հայ-ասորական սերտ շփումներ: Աւելին՝ իսլամական կրօնական բարքերը հասարակական կեանք ներմուծած պարսկական իշխանութիւնները, փաստօրէն, ինչ որ տեղ ընդառաջել են այս բնակավայրում ասորիներին եւ մասամբ նրանց ազդեցութեան ներքոյ

---

[6] «ԺԲ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 35, էջ 3:

[7] Նոյն:

[8] «ԺԳ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 38, էջ 3:

[9] «ԺԴ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 41, էջ 4:

յայտնուած հայութեանը: Թերեւս հարկ է նկատել, որ կանանց՝ զգեստներ կրելու տեսանկիւնից «ազատութեան ովասիսը» պարսկահայ գաղթօճախի պայմաններում բացառիկ է եղել:

Պարսպապատ Ուրմիա քաղաքի Մարիամ Աստուածածին անունով յայտնի հայաբնակ թաղամասում Րաֆֆին հիւրընկալւում է ասորի ընտանիքում[10], այնուհետեւ այցելում է ամերիկեան «Պորտ» ընկերութեան միսիոնարների տուն: Հետաքրքիր է, որ «*մտանելով նոցա բակում, Պարսկաստանում առաջին անգամ հնչեց իմ ականջներին պիանօի ձայն*»[11]: Փաստօրէն, դաշնամուրի՝ որպէս երաժշտական գործիքի մուտքը Պարսկաստան, առնչւում է օտար միսիոնարների գործունէութեան:

Թուրքերէն, ասորերէն եւ եբրայերէն լեզուների գիտակ Մստըր Պերկին անունով քարոզիչը Րաֆֆուն ներկայացնում է իրենց յաջողուած գործունէութիւնը հայերի եւ ասորիների շրջանում՝ ընդգծելով, որ հայերը եւս մինչեւ իրենց գալը չունէին տպագրուած գրքեր. դրանք հոգեւորականների մօտ պահպանուած մագաղաթի կտորներ էին՝ ժողովրդին անհասկանալի լեզուով գրուած: Խօսքը վերաբերում է գրաբարով շարադրուած կրօնագիտական գրականութեանը, որը այդ ժամանակում աստիճանաբար սկսել էր տպագրուել ժողովրդին հասկանալի լեզուով:

Հայերի՝ այլ ժողովուրդների հետ յաջորդ առնչութիւններից է գնչուների հետ կապերի լուսաբանումը: 1872 Հոկտեմբերին Րաֆֆին դուրս է գալիս Ուրմիա քաղաքից՝ ճանապարհին այցելելով թուրքաբնակ մի գիւղ, որտեղ յաջողւում է անձրեւոտ եղանակին հիւրընկալուել մի ղարաչու՝ ըստ Րաֆֆու «*դոքա ցիգանների մի ցեղ են, որք թափառում են Ասիայում եւ ամէն ազգի հետ անխրիր հաղորդութիւն ունին եւ խօսում են աղճատուած պարսկերէնի խառնուրդից մի առանձին լեզուով*»: Հետաքրքրական է, որ խօսելով Ուրմիա գաւառի գնչուական ցեղերի կենցաղի մասին՝ Րաֆֆին նշում է, որ «*Թեհրանից հեռու՝ Քեազազի կողմերում ապրում են հայ բոշաներ, որոնց կեանքի ձեւերը խիստ նման են ղարաչիներին: Նոքա քրիստոնեաներ են, խօսում են հայերէն, եւ իւրեանց կոչում են լուսաւորչական*»[12]: Փաստօրէն, Րաֆֆին ներկայացնում է հայ բոշաներին՝ որպէս հայութեան մի բեկորի իրողութեան Պարսկաստանում[13]: Այս դէպքում էլ խնդրոյ առարկայ է դարձ-

---

[10] Հիւրանոցներ չլինելու պատճառով քրիստոնեայ օտար այցելուն ստիպուած էր իջեւանել քարւանսարայում կամ մասնաւոր տներում: Ընդ որում, մահմետական ընտանիքը հիւրի կարգավիճակում քրիստոնեային չէր ընդունում: Այդ դէպքում օտարականին սիրով ընդունում էին տեղի քրիստոնեաները՝ հայերը եւ ասորիները, ինչպէս նաեւ հրեաները:

[11] «ԺԴ. նամակ պարոն Րաֆֆիի...»:

[12] «ԺԹ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1873, № 3, էջ 4:

[13] Քեազազ (Քեզզազ) գաւառակը 1856ին ունեցել է 9, իսկ 1903ին՝ 12 հայաբնակ գիւղեր: 1932ին տեղի 15 գիւղերում ապրել են 4156, իսկ 1940ին՝ 4539 հայ: Հայա-

նում հայութեան մոռացուած ընկերային խմբերին, որոնք բնակւում էին Պարսկաստանի տարբեր շրջաններում:

Յիրաւի, բազմաթիւ ծագումով պարսկահայեր ցրուած էին նաեւ բուն Պարսկաստանի սահմաններից դուրս եւ գտնւում էին անընդհատ տեղաշարժերի մէջ հարեւան երկրներում: Այդ մասին Րաֆֆին նկատում է, որ «*Տաճկաստանի ծովեզրեայ քաղաքներում՝ Պոլսում, Տրապիզոնում եւ Ալեքսանդրիայում եւ այլ նաւահանգիստները, պանդոկները, հրապարակները լիքն են պարսկաստանցի հայ մշակներով*»[14]:

Առհասարակ, մեծ էր հայերի եւ ասորիների տեղաշարժը Պարսկաստանից դէպի Ռուսաստան. «*Նոցանից շատ սակաւներին միայն յաջողւում է լիքը քսակով եւ ողջութեամբ իւրեանց հայրենիքը դառնալ, իսկ մեծ մասը մաշւում են եւ կորչում .. օտարութեան մէջ*»[15]: Փաստօրէն, Րաֆֆին բարձրացնում էր ընկերային անապահով խաւերի, ինչպէս նաեւ օտար միջավայրում նրանց ուծացման հարցը:

## ՊԱՐՍԿԱՀԱՅ ՏԱՐԲԵՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽԱՒԵՐԸ *ՄՇԱԿԻ* ԷՋԵՐՈՒՄ

Պարսկահայ գաղթօճախի թուաքանակի վերաբերեալ կարեւոր է հաշուի առնել վիճակագրական տուեալները: Նախ վերջին 200 տարուայ մէջ երկրի քրիստոնեայ բնակչութեան մէջ մեծամասնութիւն են կազմել հայերը: ԺԸ. դարի վերջ-ԺԹ. դարասկզբին հայերի թիւը կազմում էր մօտ 50-60,000[16], 1851ին՝ մօտ 20,000, 1890ին՝ 80,000[17], 1979ին՝ 200,000[18],

---

բնակ էին Աբասաբադ, Ազնա, Ալիաբադ, Ալիբուրջ, Աքբարաբադ, Գովզուդար, Գուլիզարդ (Գուլզար), Դիլիսաբադ (Դիլիսաւա), Դոուղալա, Զիրաքի ղալա, Հոսէյնաբաղ, Ղալաբալման, Ղալառութխանա, Մարանդ, Մէյթիաբադ, Սէյդունա, Սուրան, Ումրիան (Ումբրիան), Քըրթ, Քեալաւա գիւղերը: 1950-60ականներին Քեազազից բազմաթիւ հայեր տեղափոխուել են Թեհրան եւ այլ քաղաքներ, որի հետեւանքով մինչեւ 1970ականները տեղի բնակավայրերը գրեթէ ամբողջութեամբ հայաթափուել են (*Հայ Սփիւռք հանրագիտարան*, խմբ.՝ Յովհաննէս Այվազեան, Ա. Սարգսեան եւ ուրիշ., Հայկական հանրագիտարան հրատ., Երեւան, 2003, էջ 242):

[14] «ԺԸ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 50, էջ 3-4:

[15] Նոյն:

[16] Վ. Բայբուրդեան, *Իրանի պատմութիւն*, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2005, էջ 462:

[17] Գ. Բադալեան, *Իրան. հանրագիտարան*, «Հեղինակային» հրատ., Երեւան, 2011, էջ 397:

[18] Կ. Դալլաքեան, *Հայ Սփիւռքի պատմութիւն (համառօտ ակնարկ)*, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2004, էջ 194:

2003ին՝ 80,000[19], ներկայում՝ շուրջ 50,000[20]: Յատկանշական է, որ մինչեւ Հայոց Ցեղասպանութիւնը հայրենիքից դուրս ապրող հայութեան թիւը (չհաշուած Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւնների հայութիւնը) հասնում էր մօտ 200,000ի, որից 100,000ը բնակւում էր Իրանում, իսկ մնացածը՝ աշխարհի տարբեր երկրներում[21]:

*Մշակի* էջերում որոշակի արժէք են ներկայացնում Րաֆֆու հրապարակած յատկապէս այն նամակները, որոնցում նա իր մասնագիտական հմտութեամբ եւ պարսկահայ գաղթօճախին մօտիկից ծանօթ լինելով, ներկայացրել է մամուլի այլ օրգաններում ու պարբերականներում պարսկահայութեան հասարակական կեանքի վերաբերեալ տպագրուած յօդուածների ուղղումներ, ճշգրտումներ: Թերեւս դրանցից է Րաֆֆու հակադարձումը *Արարատ* ամսագրում հրապարակուած մի յօդուածի, որի շրջանակներում նա բանավէճի է մտնում Երեմեան վարդապետի հետ Մարաղայի կրօնափոխ եղած հայերի հարցի շուրջ: Րաֆֆին գրում է. *«Թապրիզու առաջնորդարանը, փոխանակ հեռացնելու խղճալի մարաղացիներէն այն հանգամանքները, որք առիթ տուեցին նորանց այնպիսի ծայրայեղ զոհաբերութեանը դիմել, ուղարկում է այնտեղ մի խումբ թուրք մուհափիլներ՝ ոստիկանութեան ծառաներ, որ մտրակի եւ ծեծի զօրութեամբ հայրենական եկեղեցւոյ փարախէն խրտնացած հօտը կրկին դէպի այնտեղ դարձնեն»*[22]: Մուհափիլները պատժելուց յետոյ պահանջում են հայերից իրենց «ծառայութեան» վարձը: Այստեղ է, որ Րաֆֆին շնորհակալութեամբ է յիշում տեղի պարսից զօրքի հայազգի պաշտօնեայ Ասլան-Եաւարին, որը հաւաքելով տեղի հայ վաճառականներից գումարը տալիս է նրանց՝ ազատելով հայերին բռնութիւններից:

Յաջորդ ուղղումը վերաբերում է *Մեղու Հայաստանի* թերթում հրապարակուած մի նամակի, որտեղ Թաւրիզի վարժարանների վերաբերեալ ոչճիշտ տեղեկութիւններ է տրուել[23]:

Րաֆֆին հանգամանօրէն անդրադարձել է հայութեան տարբեր հատուածների միջեւ նկատուած հակասութիւններին: Դրանցից մէկում գրում է, որ Պարսկաստանի մի գիւղում - չնշելով գիւղի յստակ անունը - մի հայ կաթոլիկ աղջիկ սիրահարուել էր հայ լուսաւորչական երիտասարդի: Տեղի կաթոլիկ միսիոնարը՝ քարոզիչը, երկար ժամանակ ընդդիմանում է նրանց պսակին, սպառնում աղջկայ ծնողներին, բայց ինչեւէ երիտասարդին պսակում են: Սակայն հարսանիքի միւս առաւօտ աղջկան եւ երիտասարդին

[19] Հ. Փահլեւանեան, «Իրան», *հայ Սփիւռք հանրագիտարան*, էջ 240:

[20] https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html , մատչում՝ 28.01.2023:

[21] Ա. Եղիազարեան, *Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները 1918 թուականից մինչեւ մեր օրերը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2017, էջ 121:

[22] «Նամակ Դաւրէժից», *Մշակ* 1872, № 42, էջ 3-4:

[23] «Նամակ Թեհրանից», *Մշակ*, 1872, № 14, էջ 3-4:

սպանուած են գտնում իրենց անկողնում[24]: Փաստօրէն, հայ յարանուանական խմբերի միջեւ ցաւալիօրէն նկատուել են միջյարանուանական անհանդուրժողութեան որոշ դէպքեր, որոնք տուեալ ժամանակաշրջանում առաջացրել են աւելորդ լարուածութիւն եւ վնասել միասնութեանը:

## ՕՏԱՐ ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐԻ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Րաֆֆին ուրախութեամբ է ծանուցում Խոյում տեղի առաջնորդի հոգատարութեամբ վարժարանի ստեղծման մասին լուրը: Սակայն, ըստ նրա, խնդրայարոյց էր այն, որ ուսուցիչը գալու էր Վանից, մինչդեռ 1872 Յունիսին ամերիկացի միսիոնարները գնացել էին Մարաղա քաղաք եւ «*ժողովրդից մի քանիսին գայթակղացրել էին*»: Այնտեղի քահանան գրել էր Թաւրիզի թեմի առաջնորդին, որ «*Միսիոնարք բաշխում են ձրիաբար գրեանք, ուսուցանում են վարժատան մէջ նոյնպէս ձրի: Սրբազանը լսելով այդ աճապարեց գրել յորդորական թուղթ մարաղեցւոց, յայտնելով նոցա խաբէութիւնը եւ այլն*»[25]: Դրանով տրուել էր յանձնարարական Յովհաննէս վարդապետին, որ շտապ գնայ Մարաղա երեք տներին խրատելու: Փաստօրէն, մի կողմից բարձրացւում էր այլ կրօնի նկատմամբ գայթակղութեան երեւոյթի մասին, իսկ միւս կողմից նշւում, որ միսիոնարները լուծում էին կարիքաւոր տարբեր խաւերի այնքան կարեւոր ընկերային-կրթական խնդիրներ:

Ինչ վերաբերում է Ուրմիայում ամերիկեան միսիոնարների գործունէութեանը, ապա վերջիններս ապրում էին տեղի հայութեան հետ, որոնցից ոմանք յարում էին միսիոնարներին: Երիտասարդ միսիոնար Մստըր Լարէրին Րաֆֆուն ներկայացնում է իրենց տպարանը, որտեղ տպագրում էին ասորերէն գրքեր, ինչպէս նաեւ «Զաբիբդարա» անունով ասորերէն պարբերաթերթը: Իդէպ, այդ առթիւ Րաֆֆին գրում է. «*Ինձ վերայ շատ ախորժ տպաւորութիւն ունեցաւ, երբ Մստըր Լարէրին յայտնեց, թէ նոցա մամուլը գործում է առանց ցենզորի քննադատութեան*»[26]: Իրականում միայն առաջին հայեացքից էր տպաւորութիւն ստեղծւում, թէ գրատպութիւնը Պարսկաստանում վայելում է ազատութիւն, մինչդեռ միսիոնարի խօսքով՝ «*այդ ոչ թէ ազատութիւնից է, այլ կառավարութեան անգիտակցութիւնից, որ տակաւին ծանօթ չէ նորան մամուլի եւ ցենզորի նշանակութիւնը*»[27]: Փաստօրէն, տուեալ դէպքում, կառավարող անգրագէտ շրջանակների գործունէութեամբ եւ գրաքննութեան բացակայութեամբ պայմանաւորուած, Պարսկաստանում յարաբերաբար նպաստաւոր պայմաններ էին ստեղծուել ազատ խօսքի տպագրման հարցում, որից էլ օգտւում էին միսիոնարները:

---

[24] «Պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 3, էջ 4:
[25] «Նամակ Դաւրէժից», *Մշակ*, 1872, № 36, էջ 3:
[26] «ԺԵ. նամակ Պ. Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 43, էջ 3-4:
[27] Նոյն:

Խօսքի ազատութեան հարցի քննարկումից բացի որոշակի նշանակութիւն ունէր միսիոնարների մարդասիրական գործունէութիւնը: Րաֆֆու ուշադրութիւնից չի վրիպել այն, որ «*իւրենաց տան մէջ միսիոնարներն ունէին եւ ապրեկա*» (դեղատուն – Կ.Մ.): Իսկ նրանց բժիշկն առանց խտրականութեան ընդունում եւ անվճար դեղ էր տրամադրում տարբեր ազգերի ու կրօնների հետեւորդ հիւանդներին: Աւելին՝ նրանց հիւրանոցում ձրի օթեւանում էին հայ եւ ասորի աղքատները, որոնց ծախսերն ամբողջութեամբ հոգում էր առաքելութիւնը: Փաստօրէն, մարդասիրական մի շարք կարեւոր նախաձեռնութիւններով նրանք շահել էին տեղացիների համակրանքը:

Հետաքրքրական է, որ օրիորդաց գիշերօթիկ ուսումնարանն էլ կառավարում էին երկու ամերիկացի վարժուհիներ: Սակայն առաջին հայեացքից զարմանալի էր, որ անգլերէն չէին սովորեցնում, քանի որ միսիոնարի բացատրութեամբ՝ «*մեր նպատակն այն է, որ ամէն ազգ, որոյ մէջ մեք լուսաւորութիւն, խղճի ազատութիւն ու կրօնքի ճշմարտութիւն եմք տարածում, կրթուին իւրեանց մայրենի լեզուով*»[28]: Փաստօրէն, նրանց համար կարեւոր էր ունենալ գաղափարակից հետեւորդներ եւ ոչ թէ պարզապէս իրենց լեզուներին տիրապետող մարդիկ: Ահա թէ ինչու միսիոնարներն իրենք էին նախ սովորում եւ լաւ տիրապետում տեղի քրիստոնեայ ժողովուրդների լեզուներին:

Հարկ է նշել, որ քաղաքի օրիորդաց եւ արական ուսումնարաններում սովորում էին փոքրաթիւ հայ աշակերտներ, որոնց համար՝ որպէս վարժապետ հրաւիրուած էր Մուշ քաղաքից մի երիտասարդ, որն աւարտել էր տեղի ամերիկեան միսիոնարների՝ հայերի համար հիմնած ուսումնարանը[29]: Փաստօրէն, պարսկահայութեան կրթական խնդիրները լուծելու համար միսիոնարները օգտւում էին Արեւմտեան Հայաստանում հիմնած իրենց կառոյցներից:

Ուրմիայի կաթոլիկ միսիոնարները բնակւում էին քաղաքի Ֆաթալի Խանգոչ կոչուած թաղամասում, որտեղ գտնւում էր նրանց փոքրիկ վարժարանը եւ եկեղեցին: Րաֆֆին տեղեկացնում է, որ տեղի կաթոլիկ միսիոնարները Լազարեան (Իտալիայի Սուրբ Ղազար կղզում գործող Մխիթարեան ուխտի մասին է խօսքը – Կ.Մ.) միաբանութիւնից էին: Սակայն Րաֆֆու գնահատմամբ՝ «*Լազարիստները միայն կարողացել են Ուրմիոյ նահանգում եւ Սալմաստայ Խոսրովիոյ գիւղում կրօնափոխ առնել մինչեւ եօթն հարիւր գերդաստան ասորիներ, մինչդեռ բողոքականների ժողովուրդը թէեւ դժուար է ճիշտ թուանշաններ դնել, հասնում է միքանի հազար գերդաստանների*»[30]:

---

[28] Նոյն:

[29] Նոյն:

[30] «ԺԶ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 46, էջ 3:

Այս առնչութեամբ, պարսկական քաղաքականութեան վերաբերեալ արժէքաւոր վերլուծութիւն է կատարում Րաֆֆին՝ գրելով. «*Պարսկաստանի բարձրագոյն կառավարութիւնը գործ չէ դնում ոչինչ միջոցներ իւր հպատակ օտարազգիների մէջ մահմեդականութիւն տարածելու: Որովհետեւ իւր տէրութեան մէջ զանազան ազգութիւնները եւ կրօնքները մի ամբողջ ծուլելու գաղափարը դեռ նորան անծանօթ է*»[31]: Այդ մասին է վկայում Միրզա Նաջաֆալի Սարփարաստի[32]՝ արտաքին գործերի նախարարին, գրուած նամակները, որոնցում ցոյց էր տրւում հայերի եւ ասորիների կրօնափոխ լինելու վնասակար հետեւանքը Պարսկաստանի կառավարութեան համար, այն է՝ առիթ էր ստեղծուելու կաթոլիկ ու բողոքական տէրութիւններին միջամտել պարսից հպատակ քրիստոնեաներին վերաբերող խնդիրներին: Ահա թէ ինչու կառավարութիւնը հայոց եւ ասորաց հոգեւոր առաջնորդներին շնորհել էր զանազան իրաւունքներ եւ արտօնութիւններ իրենց ժողովրդի գոյութիւնը սեփական ազգային յենքի վրայ անփոփոխ պահպանելու համար: Նաեւ այդ նոյն նպատակով հայերին չէր արգելում ազգային դպրոցներ բացելը:

Յիշարժան է, որ 1876ին հայ վաճառականներից մէկը, որի անունը չի նշւում, մտադիր էր աջակցել Րաֆֆուն՝ Թաւրիզում բացելու տպարան, հրատարակելու դասագրքեր եւ հայերէն լրագիր, ինչպէս նաեւ տպագրելու իր աշխատութիւնները[33]: Փաստօրէն, տպարանի ստեղծմամբ ապահովուելու էին Պարսկաստանի հայոց դպրոցները դասագրքերով:

1877 Մարտ 4 թուակիր հերթական նամակում ներկայացւում է Թաւրիզի ընթերցարանի գործունէութեան մասին: Ընթերցարանի ընկերութեան ատենադպիրն էր Րաֆֆին: Նոյն թուականի ընկերութեան տարեկան հաշուետուութիւնից պարզ է դառնում, որ ընթերացարանը երկամեայ գործունէութեանն ընթացքում առաջնորդարանից ստացել էր 80, ընթերացարանի գումարով գնուել էր 169, Թաւրիզի բնակիչները նուիրել էին 98, Կ. Պոլսի ազգայինները՝ 437, Աստրախանից՝ 17[34], իսկ Թիֆլիսից՝ 3 գիրք: Ընթերցարանը նուէր է ստացել ընդամէնը 804 գիրք, իսկ նուէր ստացած գրքերի աւելորդ օրինակներն (52 հատ) ուղարկել է Թեհրանի հայկական դպրոցի ընթերցարանին: Նշելի է, որ ընթերցարանից օգտուելն անվճար էր, աւելին՝

---

[31] Նոյն:

[32] Սարփարաստ նշանակում է գլխապահ, որը պարսից կառավարութեան կողմից նշանակուած պաշտօնեայ էր: Նրա խնդիրն էր քրիստոնեաների ու հրեաների պաշտպանութիւնը տեղային բռնութիւններից:

[33] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1876, № 4, էջ 3:

[34] Ուշագրաւ է, որ 1878ին Թովմաս Նազարբէկեանցի նախաձեռնութեամբ Աստրախանում նշուած ընթերցարանի համար հաւաքուել է տեղի ազգասէր պարոնների կողմից 210 ռուբլի («Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1878, № 51, էջ 3):

ընթերցարանի ընկերութեան նպատակը ոչ միայն տեղի հայութեանն օգտակար լինելն էր, այլ նաեւ օտարազգիներին[35]:

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՊԱՐՍԿԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Պարսկաստանում ազգային խտրականութիւնը հայերի եւ թուրքերի միջեւ մեծ չափերի էր հասնում, որն ինչ որ տեղ զսպում էր իշխանութիւնը: Այդ մասին է վկայում այն, որ Խոյ քաղաքի շուկայում Րաֆֆու ընկերոջը՝ Մեսրոպին թուրքերը ծեծում են: Նա անձրեւից թրջուելով անզգուշութեամբ ոմն Սէյիտի հագուստին էր դիպչել, որն ըստ մուսուլմանական կարգի արգելւում է: Մէկ այլ տարօրինակ կարգի համաձայն էլ՝ քրիստոնեաների ձեռքը կպած կերակուրները մուսուլմանները թափում էին շների առջեւ[36]: Փաստօրէն, Պարսկաստանում երկրագործութեամբ եւ խաշնարածութեամբ զբաղուող հայութիւնը չէր կարող դրանցից ստացուած արդիւնքը՝ բերքը վաճառել, քանի որ դա պիղծ էր համարւում: Սակայն միւս կողմից էլ տեղի քահանայի դիպուկ խօսքով՝ «*պէտք է շնորհակալ լինել Մուհամմէտ մարգարէին, որ մեր ուտելիքները մուսուլմաններին հալալ (մաքուր) չէ արած, եթէ հալալ լինէր, բոլորն ուժով կը խլէին մեզանից եւ կ'ուտէին*»[37]:

Րաֆֆին իրաւամբ եզրակացնում է, որ «*հայերը Պարսկաստանի մէջ, այնքան հալածանքների երեսից, եթէ կարողացել են պահպանել իւրեանց ազգայնութիւնը, պատճառն մահմետականութեան եւ քրիստոնէութեան միմեանց հետ հակասութիւնն է*»[38]: Այսպիսով - պայմանականօրէն - հայութիւնն ապրում էր հակասութիւնների մէջ, որն էլ հենց իր գոյութեան երաշխիքն էր:

Հայութեան նկատմամբ նշուած հալածանքների պայմաններում Խոյ գաւառի գիւղերում բնակւում էին 500 տուն հայեր: Սակայն նրանցից միայն մէկն էր հարուստ, որը հագնւում էր աղքատի պէս՝ թուրքերի զոհը չդառնալու համար: Նրանց միջեւ վէճի պատճառ կարող էր դառնալ հայի կողմից թուրքի նման հագնուելը: Ահա թէ ինչու «*հայերը մշտապէս հագնում էին մի տեսակ տեսանելի ղապա, որ տարբերուեն մուսուլմաններից: Աւելին հայերի քաքուլի մէջտեղ, այսինքն՝ գագաթի վերայ միշտ ածելած է լինում, նորանով եւս որոշւում են թուրքերից*»[39]: Ինչ վերաբերում է մահապատժին, ապա «*երբ պատժապարտը հայ էր, նրան չէին մորթում, այլ խեղդում էին կախա-*

---

[35] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1877, № 20, էջ 3:

[36] «Երկրորդ նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 5, էջ 3:

[37] Նոյն:

[38] «Հինգերորդ նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 13, էջ 3-4:

[39] «Երրորդ նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 7, էջ 3-4:

*ղանի վրայ, քանի որ մուսուլման դահիճը եւս մեղք էր համարում իւր դանակը պղծել հայի արիւնով…»*[40]:

Պարսկաստանում տարածուած երեւոյթ էր տարբեր պաշտօնեաների անօրինականութիւնները: Այսպէս, եթէ մի խան կազմակերպում էր որեւէ գաւառի տարեկան վճարելիք արքունական տուրքի հաւաքման գործը, ապա սկզբից նա տալիս էր պարտամուրհակ, որ ամսական լրացնի այդ գումարը: Բացի դրանից, նա մեծ գումար էր վճարում, որ այդ պաշտօնն իրեն յանձնեն: Ահա թէ ինչու նա սկսում էր ժողովրդից մեծ հարկ եւ կաշառքներ վերցնել: Այդպիսի հանգամանքներում զգացւում էր արդարութեան սնտուկի[41] կարեւորութիւնը, որը հնարաւորութիւն կը տար ժողովրդին ուղղակի դիմելու շահին[42]: Սակայն այս ընթացակարգը անյաջող ելք էր ունեցել, եւ շահը հրաժարուել էր այդ մտքից: Առանձնապէս դաժանութեամբ հարստահարւում էր Խոյ քաղաքի բնակչութիւնը, իսկ Թաւրիզում չնայած ժողովրդի բողոքներին «*ափսո՜ս վճիռների գործադրութիւնը շատ ամգամ մնում է անկատար*»[43]: Փաստօրէն, վարչական բարեփոխումները իզօրու չէին դառնում:

Իդէպ, 1870ականների սկզբներին Թաւրիզում մահմետականները յարձակուել են հայկական թաղամասերի վրայ, կողոպտել ու թալանել գոյքը. այն ուղեկցուել է սպանութիւններով: Այդպիսի չարագործութիւնների կեղծ եւ անհիմն «շարժառիթ» էր ծառայում այն, որ իբր հայերը վիրաւորել էին մահմետականների կրօնական զգացմունքները եւ գրգռել մոլեռանդ ամբոխի կատաղութիւնը[44]: Փաստօրէն, այն պահին, երբ կառավարութիւնը ձգտում էր ներմուծել *թանզիմաթը*՝ օրէնսդրութիւնը, հայերին սպառնում էր վերոնշեալ վտանգը:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում Թեհրանից Նայիբուլ Սելթենէի՝ (Աբբաս Միրզա) Թաւրիզի հայերին շնորհած հարկային արտօնութիւնների մասին քննարկումը: Սակայն տեղի կառավարիչ Սահիբ-Դիւանն աշխատում էր չեղարկել այդ հրովարտակը՝ պահանջելով հարկերը, իսկ ժողովուրդը լուռ էր, երբ խլում էին նրա արտօնութիւնը[45]:

---

[40] «Վեցերորդ նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1872, № 16, էջ 3-4:

[41] Շահի կարգադրութեամբ ժողովրդի բողոքներին լուծում տալու համար ստեղծուել էր այսպէս կոչուած «Սանտուղ ադալաթ»՝ «արդարութեան սնտուկ», համակարգը: Դրա նպատակն էր մայրաքաղաք Թեհրանից իրազեկ լինել տեղական պաշտօնեաների անօրինականութիւններին: Այդ սնտուկը պէտք է դրուէր առանձին ատեանում, որի մէջ իրաւունք ունէին իրենց բողոքագրերը թողնել տեղական պաշտօնեաների կողմից անիրաւուած կամ հարստահարուած անձինք:

[42] «Արտաքին տեսութիւն, Պարսկաստան», *Մշակ*, 1874, № 28, էջ 3:

[43] «Արտաքին տեսութիւն, Պարսկաստան», *Մշակ*, 1875, № 16, էջ 4:

[44] «Նամակ Դաւրէժից», *Մշակ*, 1875, № 29, էջ 3-4:

[45] «Նամակ Դաւրէժից», *Մշակ*, 1872, № 42, էջ 4:

Հայութեան դէմ հալածանքների մէկ այլ դրսեւորում տեղի ունեցաւ, երբ 1871ին շահն ուխտագնացութիւն կատարեց Քարպալա: Այդ ընթացքում նրա ուշադրութիւնն են գրաւում մի խումբ մանկահասակ երաժիշտներ, որոնք օսմանեան կառավարութեան կազմակերպմամբ ուղարկուել էին Պաղտատ նորին վեհութեան այցի առթիւ: Շահի հետաքրքրութիւնը մեծանում է, երբ յայտնում են, թէ երաժիշտները հայ պատանիներ են:

Վերադառնալով Թեհրան՝ շահը հրամայում է ստեղծել հայ պատանիներից մի խումբ՝ երաժիշտներ պատրաստելու համար: Ուրմիոյ գաւառ է ուղարկւում մի պաշտօնեայ 10-15 տարեկան, գեղեցիկ, բարձր եւ առողջ հայ աշակերտներից 100 հոգի ընտրելու: Պարսկաստանում նման դէպքերում չգրուած օրէնքով հաւաքում էին միքանի հազար հոգի: Հայերից բացի, վիճակագրող պաշտօնեան իր մատեանում գրանցում է ասորի պատանիներին եւս: Թէեւ ծնողները դիմում են տարբեր միջոցների՝ արծաթով ազատելու իրենց որդիներին, կրօնափոխ անելու եւն., այդուհանդերձ նրանց թիւը չէր պակասում, որովհետեւ արձակուածների փոխարէն բռնում էին նոր գրանցուածների: Քրիստոնեաները դժգոհում են Թեհրանում եւրոպական դեսպանութիւններին, որոնք էլ նախազգուշացնում են շահին, որ նման խռովութիւնը քրիստոնեաների մէջ անցանկալի հետեւանքներ կարող է ունենալ:

Փաստօրէն սովից, տիֆից հազիւ փրկուած հայ մանուկներին այժմ էլ սպառնում էր մի նոր վտանգ: Շահը ետ վերցրեց իր հրամանը միայն այն ժամանակ, երբ իմացաւ, որ Թիֆլիսում նեստորական ասորիներից միքանի հազարն ընդունեցին ուղղափառ դաւանանք: Այդպիսով, խռովութիւնն առժամանակ դադարեց, քանի որ շահը հասկացաւ, որ իր ներքին գործերին կարող է լինել ռուսական միջամտութիւն, եթէ իր երկրի քրիստոնեաները եւս ընդունեն ուղղափառութիւն[46]:

Հարկ է նշել, որ Պարսկաստանում հայերի նկատմամբ մահմետականների կատարած հալածանքների վերաբերեալ յօդուածներ կարելի է հանդիպել *Մշակի* բազմաթիւ էջերում: Այսպէս, Ղարադաղի Քէյվանու գաւառի Սըդըն կոչուած հայաբնակ գիւղը պարտաւոր էր կառավարութեանը վճարել 25 թուման (70 ռուբլի) հարկ: Սակայն գիւղի Բաղր-Խան անունով տէրը միքանի ամսուայ ընթացքում մտրակի օգնութեամբ գիւղացիներից հաւաքում է 2550 ռուբլի: Չբաւարարուելով դրանով՝ նա գիւղացիներից պահանջում է եւս 1800 ռուբլի, որն արդէն անկարող էին նրանք վճարել: 1875 Յունուարի 6ին՝ Ս. Ծննդեան օրը, խանի մարդիկ գրոհում են գիւղի եկեղեցի, ջարդում սպասքը, բռնում քահանային եւ ծեծում ժողովրդին, պահանջելով արծաթ՝ խանի համար: Իվերջոյ, նրանցից 51 հոգու յաջողւում է հասնել Թաւրիզ եւ թեմի առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ դիմել Ատրպատականի կառավարութեան գլխաւոր ներկայացուցիչ Սահ-

[46] «Նամակ Ուրմիից», *Մշակ*, 1872, № 26, էջ 3:

իբ-Դիւանին: Վերջինս «*քրիստոնեաներին վերաբերեալ դէպքերում միշտ արդարադատ է գտանուել եւ ողորմած*» եւ ստանալով շահի համաձայնութիւնը՝ Բաղր-Խանի ետեւից մարդ էր ուղարկել, որ բերեն պատժելու համար: Սակայն յօդուածագիրը համոզուած չէր՝ արդեօք կը պատժուէ՞ր Բաղր-Խանը, քանի որ նա եւ «*նորա նման Չալաբիանի կոչուած խաները Ղարադաղի լեռների աստուածներն են, իսկ խեղճ ժողովուրդը՝ նոցա թշուառ զոհը*»[47]:

Մոլեռանդ զանգուածը բռնութիւններ էր կատարել հայութեան նկատմամբ նաեւ Ռաշտում: Այդ մասին է վկայում տեղի հայերի 1876 Յունիսի 8ի աղերսագիրը պարսից շահին: Սադրազամի հրամանով նահանգապետը ձերբակալում է սպանութիւններ հրահրած մոլլաներին, ինչպէս նաեւ եւս 3000 հոգու եւ ուղարկում Թեհրան: Տեղի թուրքերից՝ որպէս տուգանք կատարած յանցանքի համար հաւաքւում է 2000 թուման: Փաստօրէն, տեղի շիա թուրքերը այդպէս պատժուելով, ինչպէս գրում է յօդուածագիրը՝ «*այժմ սաստիկ վախկոտ են դարձել*»[48]: Պետութեան այդ կարետր քայլը հանգստացնում է հայերին:

Նոյն թուականի մէկ այլ նամակում ներկայացւում են հայութեան նկատմամբ հարստահարութեան դէպքերը: Ըստ յօդուածագրի՝ «*հայը Պարսկաստանում ոչինչ բանի տէր չէ. նրա կեանքը, նրա կայքը եւ նրա ընտանիքը իրան չեն պատկանում*»[49]: Թերեւս այդ անմխիթար վիճակն էր, որ բազմաթիւ հայերի ստիպում էր գնալ Ռուսական Կայսրութեան կազմում գտնուող Արեւելեան Հայաստան: Միայն Սուլդուզից 30 գերդաստան հայեր գաղթել էին Երեւանի գաւառ, իսկ Սպահանի հայերն էլ խմբերով էին գնում այնտեղ:

Հայերի նկատմամբ հալածանքներն ունեցել են դրսեւորման այլ ձեւեր եւս. 1876ի ամռանը Խոյի հայերի անվտանգութեան համար նոր խնդիր առաջացաւ, երբ Միջագետքում տարածուած ժանտախտի պատճառով Պարսկաստանի կապը Պաղտատի հետ կտրուեց: Արգելքի պատճառով պարսիկները զրկուեցին Քարպալայի ուխտագնացութիւնից դէպի Նաճաֆ, որտեղ գտնւում էին Ալիի նահատակուած որդիների Իմամ Հասանի եւ Իմամ Հոսէյնի շիրիմները: Յօդուածագրի խօսքով՝ «*Մի այսպիսի սնահաւատութիւնը ամէն տարի Պարսկաստանի ամենահեռաւոր հազարաւոր կարաւաններ քաշում է դէպի իմամների սուրբ շիրիմները եւ աղքատ, ողորմելի ժողովրդի արծաթը ծախսւում է օտար երկրում*»[50]:

Եւ ահա իմամների որոշմամբ այդ ծիսական արարողութիւնները տեղափոխւում են Խոյ քաղաքի մի հին մատուռ՝ Մաղվարա, որտեղ գտնւում էին միքանի իմամների սերունդների շիրիմներ: Բազմաթիւ հիւանդներ շտա-

[47] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1876, № 4, էջ 3:
[48] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1876, № 24, էջ 3-4:
[49] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1876, № 33, էջ 3-4:
[50] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1876, № 29, էջ 3:

պում են այստեղ, քանի որ հաւատում էին հրաշքով բժշկուելուն: Սակայն «Անանուն» ստորագրութեամբ հեղինակը – որը ենթադրելի է որ Րաֆֆին է - ցաւով նկատում է. «*Այո՛, բժշկւում են… Թէեւ բժշկուած մէկը ոչ ոք չէ տեսել. …Այսպիսի երեւոյթները միշտ սպառնում են վտանգ տեղային քրիստոնեաներին: Ժողովուրդը, գրգռուած իւր ցնորամիտ մոլեռանդութեան մէջ սկսւում է հալածանք բարձրացնել քրիստոնեաների դէմ, ասելով. «անիրաւներ, այսքան հրաշքներ տեսնելուց յետոյ, դուք դարձեալ պիտի մնաք ձեր անհաւատութեան մէջ*»[51]: Փաստօրէն, կառավարութիւնն ուշադրութիւն չէր դարձնում Խոյի հայութեանը, իսկ մոլլաներն էլ ամբոխին գրգռում էին հայերի դէմ:

Հայատեացութեան սուր դրսեւորումներ կային նաեւ Թաւրիզում, որտեղ ոչ միայն հասուն տարիքի թուրք բնակչութեան ատելութեան թիրախում էին յայտնուել հայերը, այլ նաեւ՝ նրանց երեխաների, որոնք վանկարկում էին. «*Էրմենի, ինչու չես թուրքանում, որ հոգիդ ու մարմինդ ազատուի*»[52]: Նշուած խռովութիւնը, որը հեղինակի խօսքով՝ ժողովրդի հոգեւոր կատաղութիւնն էր, կարող էր աւելի վատ հետեւանքներ ունենալ, եթէ Ատրպատականի կուսակալ Սահաբ-Դիւանը չկանխարգելէր հասունացող յուզումները: Իդէպ, Թաւրիզի սնոտիապաշտ բնակչութեան մասին առկայ են այլ յօդուածներ եւս[53]:

Նշենք, որ տուեալ ժամանակաշրջանում հրաշքների վերաբերեալ թմբկահարումը բացատրւում է այն իրողութեամբ, որ Պարսկաստանում տարածում էին գտել որոշ աղանդաւորական շարժումներ, որոնք խարխլում էին իսլամի հիմքերը: Ահա թէ ինչու փորձ էր արւում հրաշքների միջոցով, հիմնականում ժողովրդի անգրագէտ զանգուածների մէջ անսասան պահել աւանդական կրօնը: Այդ շարժման ծաւալման մասին է վկայում նաեւ այն, որ 1878ին մի խումբ աղանդաւորներ Նասրէտտին շահին են ներկայացրել իրենց գործունէութիւնն օրինականացնելու աղերսագիր[54]:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նահատակուած իմամների սգի օրերին հայերի ընկերային կարգավիճակի նկարագրութիւնը Թաւրիզում. «*…Քրիստոնեաների, առհասարակ մահմետականութեան չպատկանող ազգերի դրութիւնը մուհարրէմի ամսում, խիստ աննախանձելի է. մի անմեղ ծիծաղը կամ արհամարհանքը նոցա կողմից դէպի մահմետականների սնոտիապաշտութիւնը, կարող էր վճռել նոցա մահուան դատակնիքը*»[55]: Փաստօրէն, նշուած օրերին հայութիւնը գտնւում էր լիովին իրաւազուրկ կարգավիճակում:

---

[51] Նոյն, էջ 4:

[52] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1876, № 35, էջ 3-4:

[53] Նոյն:

[54] «Նամակ Պարսկաստանից», *Մշակ*, 1878, № 88, էջ 3:

[55] «ԻԲ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1873, № 23, էջ 3:

Թաւրիզ քաղաքի եւ նրա բնակչութեան մասին Րաֆֆին գրում է. «*Ես բնակւում եմ հայոց թաղումը, որ կոչւում է Արմենիսպան (Հայաստան) դա մի առանձնացուած թաղ է, որ բնակեցրած է միայն հայերով: Պատճառը շատ պարզ է, հայը, երկիւղ կրելով քաղաքի մի այլ մասումը առանձնապէս ապրելուց, ստիպուած է եղել միշտ մօտենալ իւր ազգայիններին եւ այդպիսեաւ հաւաքուել են մի տեղ: Հայոց թաղումը բնակւում են ե՛ւ եւրոպական պետութիւնների կոնսուլները ե՛ւ եւրոպացի վաճառականները*»[56]: Քաղաքից ոչ-հեռու գտնուող Լէյլաբաթ արուարձանում եւս բնակւում էին հայեր: «*Թէ՛ քաղաքից դուրս, թէ՛ ներսումը հայոց բնակիչների թիւը կարելի է մինչեւ 500 տուն հաշուել: Դոցա մեծ մասը գաղթականներ են Պարսկաստանի զանազան քաղաքներից եւ գաւառներից այստեղ հաւաքուած, առաւելապէս եկել են Ղարադաղի կողմերից, Չալաբիան կոչուած աւազակների յաղթահարութիւններից ազատուելու համար*»[57]: Այսպիսով, դեռեւս ԺԹ. դարի վերջերին պարսկահայերը սկսել էին թողնել գիւղերը եւ հաստատուել քաղաքներում:

## ՍՈՎ ԵՒ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

1870-71՝ Պարսկաստանին սպառնացած սովի մասին առկայ են թուային տուեալներ: Դրանցից պարզ է դառնում, որ «*Թաւրիզում ամէն օր սովից մեռնողների թիւը հասնում է մինչեւ 50, Թեհրանում՝ 240, Սպահանում մինչեւ 300 հոգի*»[58]: Սակայն վիճակն առաւել մտահոգիչ էր հայ քրիստոնեաների համար, «*որովհետեւ բոլոր հացթուխները մահմետականներ լինելով, նոքա աւելի բարւօք են համարում իրանց ուտելիքը հաւատակցին վաճառել, քան օտարազգին*»[59]: Այդ անմարդկային արարքի դէմ բողոք էր ներկայացրել Սպահանի հայութիւնը, որին աջակցել էր Թեհրանում Մեծն Բրիտանիայի դեսպանութիւնը: Վերջինիս բարերարութեամբ բաւականին գումար էր հաւաքուել ի նպաստ հայերի: Նոյն օրինակին հետեւում են Թեհրանում եւ Թաւրիզում եւրոպական տէրութիւնների միւս ներկայացուցիչները:

Սովի անմարդկային տեսարաններն են նկարագրուած «Նամակ Թեհրանից» վերնագրով յօդուածում. «*Ժողովուրդը սկսել է մեծ մասամբ անասունների նման խոտաբոյսերով կերակրուել, եւ այդ պատճառ է տուել զանազան հիւանդութիւնների, որոնք յայտնուել են ժողովրդի մէջ, ժանտախտենդից մեռնողների թիւը աւելի շատ է քան թէ սովամահների*»[60]: Այդ պայմաններում Սպահանի հայերը սկսում են գաղթել Հնդկաստան:

Րաֆֆու բնութագրմամբ՝ «*երրորդ տարին լինելով տարբեր դժբախտութիւնների մէջ՝ հացի պակասը, սովը, խոլերան, ժանտախտը եւ այլ հիւան-*

---

[56] «ԻԳ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից Պարսկաստանում», *Մշակ*, 1873, № 27, էջ 3-4:

[57] Նոյն:

[58] «Նամակ Թեհրանից», *Մշակ*, 1872, № 8, էջ 3-4:

[59] Նոյն:

[60] «Նամակ Թեհրանից», *Մշակ*, 1872, № 14, էջ 3:

*դութիւններ, Պարսկաստանի ժողովուրդը իւր կրօնական նախապաշարմունքներով, սնահաւատ անգիտակցութեամբ բնութեան ամէն մի զարհուրելի երեւոյթներին տալիս է գերբնական նշանակութիւն: Այդ խաւար ազգերի յատկանիշ է»*[61]: Թեհրանում սովից օրական մեռնում էր մինչեւ 600 հոգի: Անգամ այդ պայմաններում Կասպից ծովի վրայով Ռուսաստանից գնելով ալիւր՝ Մազանդարանում՝ նախքան Թեհրան հասնելը, արդէն միքանի անգամ ենթակայ էր ներքին հարկման, իսկ մայրաքաղաքում այն բաւականին թանկ արժէր հասարակ ժողովրդի համար[62]: Ըստ էութեան, բացակայում էր կազմակերպուած բեռնափոխադրումը, քանի որ քանիցս մերժուել էր եւրոպական ընկերութիւնների՝ Պարսկաստանում երկաթուղի կառուցելու առաջարկը: Դա բացատրւում էր այն առումով, որ երկաթուղիները կարող էին վնասակար լինել Պարսկաստանին պատերազմի ժամանակ եւ նպաստաւոր պայմաններ կը ստեղծէին յաղթող կողմի համար միքանի օրում գրաւելու Թեհրանը:

Վերոնշեալի հետեւանքով Ատրպատականի նահանգում 1874ի գարնանը հացի գինը կրկնապատկուել էր[63]: Փաստօրէն, ժամանակի պահանջներին համահունչ չլինելու պատճառով Պարսկաստանի բնակչութիւնը եւ նրա մի մասը կազմող հայութիւնը յայտնուել էր օրհասական վիճակում:

Իրավիճակն է՛լ աւելի էր բարդանում երկրին պատուհասած բնական աղէտների հետեւանքով: Այդ մասին է վկայում 1872 Մայիսի 15ին տեղի ունեցած ջրհեղեղը Սալմաստ գաւառում, որի հետեւանքով աւերուել էին 200 տուն Սաւրա գիւղում, 209 տուն Դիլիման գիւղաքաղաքում, 120 տուն Մահլամ գիւղում, եւս 7 գիւղեր Ղարադաղում[64]: Ընդ որում, նշուած գիւղերի բնակչութեան մեծ մասը հայեր էին:

Հարկ է նկատի ունենալ, որ 1871ին Պարսկաստանում միայն սովից մահացել էր 3 միլիոն մարդ: Այդ պայմաններում Եւրոպայից եւ Ամերիկայից աջակցութիւնը բաւականին օգտակար դարձաւ ժողովրդի համար եւ խնդիրը մասամբ լուծուեց: Միայն Ուրմիա քաղաքի ամերիկացի միսիոնարները օրական կերակրում էին 300 հոգու: Րաֆֆին համեմատում է, որ հրեայ հարուստ Մոսէս Մանտեֆէօն Լոնտոնից ուղարկել էր խոշոր գումար՝ Պարսկաստանում բնակուող իր հայրենակիցներին, մինչդեռ օտար երկրներում յայտնի հայ հարուստներից ոչ մէկը նման նախաձեռնութեամբ հանդէս չէր եկել: Եւ ահա, որպէս ստեղծուած դրութեան մխիթարանք, Թեհրանում Միրզա Մելքում խան անունով յայտնի հայազգի երիտասարդը ստացել էր առաջին վեզիրի օգնականի պաշտօնը՝ նազմըդ-դովլա տիտղոսով, որը

---

[61] «Նամակ Թեհրանից», *Մշակ*, 1872, № 17, էջ 3:

[62] «Նամակ Թեհրանից», *Մշակ*, 1872, № 19, էջ 3-4:

[63] «Նամակ Սալմաստից», *Մշակ*, 1874, № 20, էջ 2:

[64] «Արտաքին լուրեր, Պարսկաստան», *Մշակ*, 1872, № 22, էջ 3:

նշանակում է տէրութեան բարեկարգիչ[65]: Ուստի, հայութեան մօտ յոյս էր առաջացել, որ այդ երիտասարդն իր գործունէութեամբ կը նպաստի Պարսկաստանի ծանր վիճակից դուրս գալուն: Ակնյայտ է, որ երիտասարդ հայազգի գործչից սպասելիքները աւելի համեստ էին, քան նշուած հրեայ մեծահարուստի դէպքում:

Թաւրիզ քաղաքի նկարագրութիւնից պարզ է դառնում, որ այն ունէր աղտոտուած վիճակ, որը դարձել էր պատճառ զանազան հիւանդութիւնների տարածման: Գերեզմանները գտնւում էին մեծ փողոցների վրայ, որ անցնող մարդիկ նրանց հոգիների համար աղօթէին. «*Իսկ շատերը չեն էլ դնում փոսերի մէջ իւրեանց մեռելների դիակները, այլ լեցնում են գերեզմանատների մօտ շինուած մի հասարակաց ամբարում, որ կոչւում է* դախմա, *նորա լուսամուտներից միշտ դուրս է փչում թունաւոր օդը*»[66]: Ահա թէ ինչու Պարսկաստանի քաղաքային կեանքի հետ միշտ կապակցուած էին հնտախտը եւ ժանտախտը:

1877 Մայիսի 5ին *Մշակը* գրում է, որ Ռաշտում եւ Թաւրիզում ժանտախտի տարածման պատճառով ռուսաց կառավարութիւնը հրամայել էր դադարեցնել բոլոր կապերը Պարսկաստանի հետ: Ընդ որում, ճանապարհորդներին զգուշացւում է, որ նրանք կարող են Պարսկաստանից տարածել ժանտախտը եւ, սահմանապահ վարչութիւնների ուշադրութիւնը հրաւիրւում էր այդ հանգամանքի վրայ[67]: Իդէպ, 1878ին եւս *Մշակը* գրում է, որ ժանտախտի դէպքեր են յայտնուել Ռաշտում եւ Կասպից ծովի Մեշետեզէր նաւահանգստում: Տեղեկացւում է, որ այդ տխուր լուրի հաստատման դէպքում մաքրանոցը (կարանտին) կը շարունակուի ռուս-պարսկական սահմաններում[68]:

Այսպիսով, Պարսկաստանում մոլեգնած ցանկացած տեսակի աղէտ իր բացասական հետեւանքներն էր ունենում պարսկական հասարակութեան մի մասը կազմող հայութեան վրայ եւս:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարող ենք եզրակացնել. -

1. Հայ-ասորական առնչութիւնների լուսաբանումը կարեւոր պատկերացում է տալիս Պարսկահայքում բնակուող այդ երկու ժողովուրդների հասարակական, մշակութային եւ կրթական կեանքի, ինչպէս նաեւ ազգագրական սովորոյթների մասին: Յատկանշական է, որ այդ դաւանակից ժողովուրդները բախտակից էին այն առումով, որ գտնուելով միեւնոյն իրաւազուրկ կարգավիճակում, կարողանում էին համագործակցել ասես հաւա-

[65] «Նամակ Ուրմիից», էջ 3:
[66] «ԻԳ. նամակ պարոն Րաֆֆիի ուղեւորութիւնից»:
[67] «Արտաքին լուրեր», *Մշակ*, 1877, № 31, էջ 3:
[68] «Արտաքին տեսութիւն, Պարսկաստան», *Մշակ*, 1878, № 58, էջ 3:

սարը հաւասարի հետ, նրանց խնդիրները գրեթէ նոյնն էին, իսկ հարստահարողները՝ տեղական եւ բարձրագոյն իշխանութիւնները:

2. Ատրպատականում հայերը հիմնականում զբաղւում էին գիւղատնտեսութեամբ, սակայն իսլամական կրօնական բարքերը խոչընդոտում էին նրանց հողագործական աշխատանքի արդիւնքում ստացուած մթերքի սպառմանը, որի պատճառով էլ ունէին ընկերային խնդիրներ:

3. Կանանց՝ զգեստներ կրելու տեսանկիւնից Ուրմիան եղել մի տեսակ «ազատութեան ովասիս» պարսկահայ կեանքում, որն ինչ-որ տեղ կապուած էր ասորիների հետ համատեղ ապրելուն, իսկ ինչ որ տեղ էլ կարծում ենք այն իրողութեամբ, որ այդ շրջանները պատմական Հայաստանի հողեր էին եւ հայութիւնն ունէր հողատիրոջ թաքնուած զգացումը: Այլ կերպ ասած՝ իսլամական կրօնական բարքերը այդ հարցում չէին կիրառւում:

4. Օտար միսիոնարները կրթամշակութային նախաձեռնութիւններով կարծես մխիթարում էին ընկերային-իրաւական խնդիրներ ունեցող հայերին եւ ասորիներին:

5. Հալածանքներն առհասարակ ուղեկցում էին Պարսկաստանում ապրող հայութեանը, սակայն մոլեռանդ զանգուածների՝ հայութեան դէմ հնարաւոր բախումները կանխարգելելու հարցում սատար էր կանգնում շահը: Այդ տեսակէտից նա արտօնում էր հայութեանը որոշ իրաւունքներ, նշանակում պատասխանատուներ նրանց իրաւունքների պաշտպանութեան համար: Սակայն, միշտ չէ որ մեղաւորները ենթարկւում էին պատասխանատուութեան:

6. Պարսկաստանի բնակչութեան եւ նրա մի մասը կազմող հայութեան համար բնական աղէտները դարձել էին իսկական մարտահրաւէր:

7. *Մշակի* նիւթերի եւրոպական արձագանգները վկայում են, որ այն դարձել էր ժամանակակից չափանիշերով լրատուական եւ վերլուծական կենտրոն, որտեղ խնդրոյ առարկայ են դարձել ամենաբազմապիսի հարցերը, ընդ որում մասնագիտական շեշտադրումներով: Այդ մասին են վկայում հենց Րաֆֆու նամակները խմբագրութեանը, որն էլ հրապարակել է դրանք: Յիրաւի, տուեալ ժամանակի պարսկահայ գաղթօճախի պատմութեան ուսումնասիրութեան համար, *Մշակի* նիւթերն անփոխարինելի են:

8. Բազմաթիւ ծագումով պարսկահայերի՝ Օսմանեան եւ Ռուսական Կայսրութեան սահմաններում ցրուած լինելը վկայում է այս գաղթօճախի տեղաշարժերի մասին, որը դեռեւս ԺԹ. դարի վերջին երեսնամեակին դարձել էր ակնառու խնդիր, եւ որի վերաբերեալ բարձրաձայնում էր *Մշակը*: Այդ երեւոյթը եւս կարելի է դիտարկել հայութեան տեղաշարժերի պատմութեան ենթախորքում: Աւելին՝ լուրջ մարտահրաւէր էր համարւում հնարաւոր ձուլման հարցը, յատկապէս՝ ռուսական միջավայրում, որտեղ ձուլման պայմաններն աւելի նպաստաւոր էին, քան Պարսկաստանում, որտեղ առկայ էր յստակ կրօնական պատկանելութեան հարցը:

## RAFFI'S HISTORICAL ARTICLES IN *MESHAG* BETWEEN 1872 AND 1878 ON THE ARMENIAN COMMUNITY OF IRAN

(Summary)

KAREN MKRTCHYAN
K86Mkrtchyan@gmail.com

The *Meshak* newspaper published in Tbilisi printed diverse articles with valuable information not only about Armenia, but also about public life in neighboring countries. Among these articles, those of the renowned Iranian-Armenian novelist, publicist, and ethnographer Raffi (Hakob Melik-Hakobyan, 1835-1888) stand out primarily for the accuracy of the information they contain, the author's meticulousness towards numerical data, and in some cases his deep historical and political analyses.

This paper tries to classify, compare and analyze Raffi's historiographical and ethnographic articles published in *Meshak*, which refer to the Armenian community of Iran. These articles focus on Armenian-Assyrian relations in the Parskahayk region, the diverse social classes of the local Armenians, and the educational and cultural activities of foreign missionaries, as well as the consequences of famine and epidemics that oftentimes struck Iran.

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ



## ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԵՆԷՔ-ՄԱՏԷՆԻ (ՔԵՍԿԻՆԻ) ՄԱՍԻՆ (1900 Թ.)

ՄԻՀՐԱՆ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@gmail.com

Յետագայ էջերով հրատարակութեան կու տանք Տենէք Մատէն (Քեսկին) քաղաքի մասին 1900ին պատրաստուած անտիպ գրութիւն մը, որ մէկէ աւելի առումներով հետաքրքրական է եւ օգտակար կրնայ ըլլալ քաղաքի պատմութեամբ շահագրգռուողներուն, որովհետեւ անոր անցեալին հայող մեզի ծանօթ գրաւոր աղբիւրները շատ սակաւ են՝ ընդամէնը քանի մը թղթակցութիւն եւ յուշագրութիւն[1], այնպէս որ, այս հրապարակումը կրնայ մասամբ գոցել գոյութիւն ունեցող բացը եւ գէթ ընդհանուր գաղափար մը տալ տեղւոյն հայութեան անցեալին մասին:

Տենէք Մատէն-Քեսկինը հայաբնակ քաղաք մըն էր Անկիւրիա (Անգարա) նահանգի Գըր Շեհիր գաւառին մէջ եւ կեդրոնն էր համանուն գաւառակին: 1915ին ունէր 440 հայ տուն, որոնք բոլորն ալ աքսորուեցան Հայոց Ցեղասպանութեան օրերուն[2] ու մեծամասնութեամբ կոտորուեցան[3]:

---

[1] «Տէնիք-Մատէն», *Դրօշակ*, Վիեննա, թիւ 11, 10 Ապրիլ 1896, էջ 88. նաեւ՝ Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն հայ Կեսարիոյ, Ա. հատոր,* հրատ.՝ Կեսարիոյ եւ շրջակայից հայրենակցական միութեան Գահիրէի վարչութեան, տպ. Յակոբ Փափազեան, Գահիրէ, 1937, էջ 883. նաեւ՝ Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին*, խմբ.՝ Արայ Գալայճեան, St. Vartan Press հրատ., Նիւ Եորք, 1985, էջ 336. նաեւ՝ Թ. Մինասեան, *Յուշեր. Անգարայի եւ Քէսքինի հայոց գողգոթան*, տպարան Ա. Տէրյակոբեան, Փարիզ, 1957, 111 էջ. նաեւ՝ *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառա-րան, Ե. հատոր*, կազմ.՝ Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. ՄելիքԲախշեան, Յ. Խ. Բար-սեղեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2001, էջ 75:

[2] Թէոդիկ, էջ 336:

[3] Ս. Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը*, Կ. Պոլիս, տպ. Յ. Ասատուրեան Որդիք, 1920, էջ 189:

Հեղինակը նախ ընդհանուր գիծերով ներկայացուցած է Տենէք Մատէնի տեղագրութիւնը, գիւղերը, արհեստները, տնտեսական վիճակը, ապա մանրամասնութիւններ հաղորդած է տեղւոյն թուրքերու եւ յոյներու կեանքէն եւ ուրուագծած է անոնց նիւթական ու բարոյական կեանքը, եւ հուսկ անդրադարձած քաղաքի հայութեան ու առանձինն ներկայացուցած երեք մեծ գաղթականութիւններուն՝ կիւրինցիներուն, կեսարացիներուն ու եոզղատցիներուն նկարագիրը, կրթական վիճակը, նիւթական պայմանները, զբաղումները, վաճառականութիւնը, արհեստները, խոհանոցը եւն.:

Հրատարակուող գրութիւնը օրին, մաս առ մաս - չորս անգամով - ղրկուած է Կ. Պոլսոյ *Բիւրակն* հանդէսին, բայց եւ այնպէս, մնացած է անտիպ: Անոր առաջին մասը խմբագրութեան հասած է 14 Փետրուար 1900ին, վերջինը՝ 30 Ապրիլին:

*Բիւրակն*ի «Նամակատուփ»ին մէջ կան հեղինակին ուղուած եւ յօդուածին առնչուող խմբագրական երկու դիտողութիւններ, որոնք կը բացատրեն թէ յօդուածը օրին ինչու՞ չէ հրատարակուած: Առաջինին մէջ ըսուած է որ «*Կը սպասենք աւարտին՝ «Տեղագրականը» հրատարակելու համար*»[4], իսկ երկրորդին մէջ՝ «*Տեղագրականը կը պահենք յարմար ժամանակին*»[5]:

Յաջորդ տարեմուտին, *Բիւրակն* կը դադրէր նախկինի նման ազգագրական հանդէս մը ըլլալէ ու կը վերածուէր կրօնա-դաստիարակչական եւ գրական հանդէսի, այնպէս որ, այս «Տեղագրականը» դուրս կը մնար այլեւս իր հետաքրքրութիւններու դաշտէն ու չէր յանձնուեր տպագրութեան, եւ հանդէսին յղուած ու չհրատարակուած նմանօրինակ քանի մը այլ յօդուածներու հետ, աւելի ետք կ'անցնէր պոլսաբնակ Տէր Յովհաննէս Ա. քհնյ. Մկրեանին, ապա անոր թողնին հետ սեփականութիւնը կը դառնար բանասէր Թորոս Ազատեանին, որուն մահէն ետք, 1957ին կը հանգրուանէր Երեւանի Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան (ԳԱԹ), ուր կը պահուի ցարդ:

Գրութեան հեղինակ **Աղեքսանդր Գըլըճեան**ի մասին կենսագրական տեղեկութիւններ չունինք: Գիտենք միայն որ ուսուցչական պաշտօններ վարած է Տենէք Մատէն եւ Գալեճիք, ու եղած է Կ. Պոլսոյ *Բիւրակն* հանդէսի գաւառային աշխատակիցներէն մէկը: Նոյն հանդէսին մէջ իրմէ հանդիպած ենք հետեւեալ գրութիւններուն.-

1- «Զէքի աշուղը», *Բիւրակն* լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 11, 4 Մարտ 1899, էջ 172-73: Ղրկուած է Տ. Մատէնէն:

---

[4] «Նամակատուփ», *Բիւրակն* լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 15, 18 Ապրիլ 1900, էջ 239:

[5] «Նամակատուփ», *Բիւրակն* լրագիր, Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 31, 1 Օգոստ. 1900, էջ 749:

2- «Գալաճիք ու ես», Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 21, 19 Մայիս 1899, էջ 327-29: Շար.ը՝ թիւ 22, 26 Մայիս 1899, էջ 344-45 եւ թիւ 25, 16 Յունիս 1899, էջ 394-97:

3- «Կտոր մը Զէքի հայ աշուղէն», Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 24, 9 Յունիս 1899, էջ 376:

4- «Երկու խօսք համայլիի մը առթիւ», Նոր շրջան, ԺԷ. տարի, թիւ 45, 10 Նոյ. 1899, էջ 715-16:

Գրութիւնը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ լուրջ փոփոխութեան: Ուղղած ենք միայն հանդիպող ուղղագրական վրէպները ու կէտադրութիւնը՝ բնագիրը աւելի ընկալելի դարձնելու համար, եւ աւելցուցած ենք անհրաժեշտ քանի մը ծանօթագրութիւններ:

Բնագիրը կը պահուի ԳԱՐԻ մէջ, Թորոս Ազատեանի ֆոնտ, 8/III: 16 ձեռագիր էջ է, գրուած ընթեռնելի ձեռագրով եւ կապոյտ մելանով: Քարտէսը առնուած է Յուշամատեան կայքէջէն:




## ՏԵՂԱԳՐԱԿԱՆ.
## ՏԷՆԷԿ-ՄԱՏԷՆ

Հակառակ շատ մը պրպտումներուս, չկրցայ ստոյգ եզրակացութեան մը յանգիլ, սա «Տէնէկ» կամ «Տէնէնք» բառին ստուգաբանութեան նկատմամբ: Իր շատ մօտը գտնուող ծառախիտ լեռները, որք «Տէնէկ տաղը» կը յորջորջուին տեղացիներէն, ատենօք իրենց անունը փո՞խ տուած են մեր գիւղաքաղաքին: Եւ կամ, Տ. Մատէնի շրջակայքը, ըլլալով երբեմն շահագործուած եւ հիմա ամլութեան դատապարտուած արծաթի խորունկ այրե՞րը տեղի տուին «Տէնէնկ» անունին, որ հաւանականօրէն պէտք է ըլլայ արաբերէն «տէհէպ» (ոսկի) բառին աղաւաղեալը: Չգիտեմ:

Տ. Մատէնի ե՞րբ եւ ո՞ր թուականին հիմնարկուած ըլլալն ալ յայտնի չէ: Կը պատմուի որ, ասկէ 40-50 տարի առաջ պարզ, անշուք գիւղ մ'է եղեր՝ թրքաբնակ: Տ. Մատէնի առաջին քրիստոնեայ տարրը կը կազմեն Կիւմիւշխանէէն,

Տրապիզոնէն եւ Ագտաղ-Մատէնէն գաղթող 5-10 տուն յոյները, որոնք վերոյիշեալ հանքերու մէջ իբր բանուոր ծառայած ըլլալով՝ ներկայ ժողովուրդէն կը տարբերին մատէնճի[6] անունով: Ուստի հետզհետէ շէնցած, ծաղկած է Մատէն՝ կեսարացի, կիւրինցի եւ եօզկատցի տարբեր հասարակութեան տակաւ հաստատուելովը:

## Դիրք, օդ, ջուր

Թէեւ լեռնադաշտի մը վրայ կառուցուած է Տ. Մատէն, բայց շրջակայ բլրակները բնական վարագոյրներ են գոգցես, անդին տարածուած ծաղկաւէտ ու գեղատեսիլ հովիտները ծածկելու՝ դիտողի մը աչքերէն:

Մինչեւ մօտ ատեններ, ո՛չ ոք կ'ուրանար Տ. Մատէնի օդին բարերար ազդեցութիւնները: Բայց արդեօք մօտակայ անտառակներու անդուլ ու անխնայ սպառո՞ւմն է, կամ տարբեր հասարակութեան օրըստօրէական աճո՞ւմն է որ տեղի կու տայ ց'այժմ հիւանդութիւններու շարքին:

Ի բաց առեալ 1-2 ընդլեռնեայ աղբիւրները, Տ. Մատէնի ջուրը ո՛չ այնչափ առատ եւ ո՛չ ալ առողջարար հանգամանք մ'ունի: Ուստի, հակառակ գաւառական սովորութեանց, ժողովուրդը հարկադրուած է ջուր գնել *Մէզարլը չէշմէ* անուն վճիտ աղբիւրէ մը, մասնաւոր ջրկիրներու ձեռքով:

## Գիւղեր

Տ. Մատէն մինակ գիւղաքաղաքն է 180-185 գիւղերու, որք երկու գիւղախումբի կը բաժնուին *Սալմանլը* եւ *Գուլագսըզ* անուններով[7]: Այս գիւղերէն 3-4 հատը իբր արուարձան կը ծառայեն Տ. Մատէնի, 1-1½-2 ժամ հեռաւորութեամբ եւ լիովին յունաբնակ են, իսկ մնացեալները թրքաբնակ: Բայց Սալմանլըյի մէջ եւս կը յիշուին քանի մը յոյն գիւղեր: Չմոռնանք յիշել հոս որ այս գիւղերէն շատերը Եօզղատի եւ Սունկուրլուի սահմանակից են: Ուստի Փոքր Ասիոյ երկաթուղիի ընկերութիւնը տրամաբանական գործ մը տեսած կ'ըլլար, երբ վերոյիշեալ քաղաքներու մենաշնորհին մասնակից ընէր Տ. Մատէնն ալ, փոխանակ ժխտելու վաճառականներու (տեղացի) այս մասին մատուցած խնդրագիրը:

Թուրք գիւղացիներուն մեծ մասը բարեբարոյ, պարտաճանաչ եւ չարքաշ մարդիկ են: Իրենց հասարակ զբաղումն է երկրագործութիւն եւ խաշնարածութիւնը: Երկրագործութիւնը հին դրութեամբ [կը] կիրարկուի եւ միջին վիճակի մէջ է, բայց նշանակելի առեւտուրներ կ'ըլլան պրօնի վրայ: Էնկիւրիի գնահատելի պրօնին մեծ մասը այս գիւղացիներու ապրանքներն են, որոնք ուրիշ ապրանքներէն կը տարբերին *Քէսկին մալը* յորջորջումով: Կիները զօրաւոր սեռին հետ համերաշխ կ'աշխատին սերմնացանի, հունձքի, այգեկութ[ք]ի եւ ուրիշ պարագաներու մէջ, եւ իրենց պարապոյ օրերը կը նուիրեն գորգ, կարպետ եւ ծաղկա-կապերտ (չիչէկլի քիլիմ) գործելու: Այս գիւղերէն շատերը մէյ

---

[6] Մատէն (արաբ.).- մետաղ, ճի՝ արհեստ ցոյց տուող թրքերէն մասնիկ, մատէնճի՝ մետաղի գործ ընող, մետաղագործ:

[7] Կը լսենք նաեւ թէ, պաշտօնական թղթակցութիւններ կը կատարուին եղեր տեղական կառավարութեանց միջեւ, Տ. Մատէնի գիւղերը 5 գիւղախումբի բաժնելու համար [Ծանօթագրութիւնը՝ հեղինակին]:

մէկ մզկիթ եւ մէյ մէկ ծաղկոցներ ունին (մէքթէպի իպթիտայի), բայց վերջինները ոչ առաւել գոհացուցիչ:

Յունաբնակ գիւղերն են Պարագ, Գըշլա, Գարըշտըրան, Եօգարը Քէօյ (պաշտօնական տոմարներու մէջ Գարիյէի Պալա): Այս գիւղերու բնակիչներուն մեծ մասն ալ երկրագործ եւ խաշնարած են: Բայց կան նաեւ վաճառականներ եւ որմնադիրներ: Կիները մասնաւոր զբաղումներ չունին:

Այս գիւղերը ունին մէյմէկ քարաշէն ու կոկիկ եկեղեցիներ, սուրբերու անուան նուիրուած: Դպրոցները անկեալ վիճակի մէջ են, ուստի շատ մը ուսանողներ Մատէնի յոյն վարժարանը կը յաճախեն: Իբր զբօսատեղի ալ կը ծառայեն այս գիւղերը Տ. Մատէնի քրիստոնեայ հասարակութեան: Դիտելի է այս գիւղերու եկեղեցիներուն անուան առթիւ Մատէնի յոյն երկսեռ հասարակութեան խումբ առ խումբ դիմումը վերջալուսէն մինչեւ արշալոյս կառքերով, ձիերով, նուագներով, երգերով ու պարերով:

### Վաճառականութիւն

Թէեւ 1200-1300 տուն բնակիչներով փոքր գիւղաքաղաք մ'է Տ. Մատէն, բայց բաղդատմամբ գաւառիս ուրիշ գիւղաքաղաքներու, նաեւ Գըր Շէհիրի ու Չօրումի նման գաւառակներու, շատ շէն ու ծաղկած է իր առեւտրական կողմնակի հոսանքով:

Իր շրջակայ քաղաքներն են Գաղատիա (22 ժամ), Եօզկատ (20 ժամ), Գըր Շէհիր (16 ժամ) եւ Գալէճիք (12 ժամ):

Ինչպէս յիշեցի վերը, երկրագործութեան ու պարտիզպանութեան այժմէութիւնները միջակ են: Տ. Մատէն չունի Պօզուգի առատաբեր երկրագործութիւնը որ կրնայ ամբողջ գաւառը տարիէ մ'աւելի կերակրել եթէ չարտածուի: Բայց անուրանալի է որ, ինչպէս ամէն բան տենդոտ գործունէութեամբ մը զարգացում ունի, առաջ կը մղուի սա նորաշէն գեղաքաղաքիս մէջ, երկրագործութիւնն ալ օրըստօրէական բարգաւաճում մը ցոյց կու տայ:

Արդ, աւելորդ չեմ սեպեր հոս ներկայացնել Տ. Մատէնի արտածութեան եւ ներածութեան միջին հաշուեցուցակը:

| | |
|---|---|
| Ցորեն | քիլօ 2.000.000 |
| Պրօն | քիլօ 350.000 |
| Վուշ (քէթէն թօխումու) | քիլօ 250.000 |
| Պալամուտ (խոզկաղին) | քիլօ 100.000 |
| Մազլը (աս ալ խոզկաղին) | քիլօ 10.000 |
| Քիթրէ | քիլօ 10.000 |
| Ճէհրի (տորոն) | քիլօ 15.000 |
| Գարի | քիլօ 500.000 |
| Բուրդ | քիլօ 150.000 |
| Մորթ | քիլօ 50.000 |
| Իւղ | քիլօ 25.000 |
| Ապուխտ | քիլօ 20.000 |
| Բամպակ | քիլօ 15.000 |

Ներածութիւնք

| | |
|---|---|
| Կշռելի նիւթեր (օգգա մալը) | 2.000.000 |
| Փերեզակի նիւթեր (ադդարիէ) | 200.000 |

Կշռելի նիւթերու կը վերաբերին շաքար, սուրճ, օճառ, երկաթ, պողպատ, մոմ, քարիւղ եւ այլն:

Փերեզակի նիւթերու կը պատկանին սիկարի թուղթ, դերձան, հայելի, եւ այլն:

Վերի ադդարիէի մէջ կը գտնուին նաեւ մանիֆաթուրա[8]:

**Արհեստներ**

Տ. Մատէնի մէջ գործուող արհեստներն են՝ կօշկակարութիւն, երկաթագործութիւն, դերձակութիւն, ոսկերչութիւն, սափրիչութիւն, թամբագործութիւն, մսավաճառութիւն, թիթեղագործութիւն, անագագործութիւն, հացագործութիւն եւ այլն:

Հասարակաց շէնքեր

| | |
|---|---|
| Մզկիթ | հատ 2 |
| Եկեղեցի | հատ 2 |
| Ժողովարան | հատ 1 |
| Բաղնիք | հատ 1 |
| Սրճարան | հատ 9 |
| Գինետուն | հատ 2 |
| Վարժարան | հատ 9 |
| Պանդոկ | հատ 3 |
| Կառապանի պանդոկ | հատ 3 |
| Ճաշարան, | 0 |
| կամ ըստ եղանակին | 1-2 |

Տեղագրական այս ամփոփ ծանօթութենէ վերջ, մասնաւորենք խօսքերնիս եւ ձեռք առնենք ազգագրական ճիւղը:

**Ազգագրական**

**Տ. Մատէն**

Ինչպէս խօսեցանք վերը, 1200-1300 տուն կը հաշուուի Տ. Մատէն: Ասոնցմէ 250-270 տունը հայ (այս թուին մէջ են նաեւ 15-20 բողոքականներ), 280-300 տունը յոյն եւ մնացածները թուրք են:

**Թուրքեր**

Թուրքերը բնութեամբ հեզահամբոյր, պարկեշտ ու քաղաքավար են: Ասոնցմէ շատերը դրամատէր ու խաշնատէր մարդիկ ըլլալով՝ առհասարակ բարեկեցիկ են: Թէեւ մասնաւոր արհեստի մը չեն հետեւիր, բայց օր ըստ օրէս-

[8] Մանիֆաթուրա (ֆրնս.).- տարազագործական արտադրութիւններ, տպածոյի վաճառականութիւն:

կան հակում մը ունին դէպի վաճառականութիւն: Իսկոյն իւրացնել կ'ուզեն ինչ որ շահաւէտ է: Ամէն ոք օրինակելի յարգանք ու մեծարանք մ'ունի իր քրիստոնեայ քաղաքացիին հանդէպ: Տարիներու հոսանքին մէջ շա՜տ հազուադէպ է գողութիւն մը եւ կամ ոճիր մը: Տ. Մատէնի թուրք կիները մասնաւոր զբաղում չունին: Օրն ի բուն տան գործերով եւ իրենց զաւակներուն հոգածութեամբ կը պարապին: Բայց բաղդատմամբ էրիկմարդոց, աւելի դիւրագրգիռ ու կռուասէր են, մանաւանդ շոայլ:

Թուրքերը ունին երկու մզկիթ ու երեք հատ ալ դպրոց՝ *մէկտէպ*[9], *րիւշտիյէ*[10] եւ *իպթիտայիէ*[11] անուններով: Ասոնց մէջ *րիւշտիյէն* գնահատելի ադիւնք մը կ'արտադրէ, շնորհիւ դասատու Եուսուֆ էֆ.ի, որ կրթական գործին անձնուէր մշակ մ'է: Այս դպրոցներէն *մէկտէպի* եւ *իպթիտայիի* ծախքերը կը հոգացուին ժողովուրդի քսակէն, իսկ *րիւշտիյէ*ինը մէարիֆի[12] գանձէն:

## Յոյներ

Տ. Մատէնի բնիկ յոյները կոշտ ու կոպիտ մարդիկ են: Հակառակ եօզղատցի ու կեսարացի բարեկիրթ յոյն գաղթականութեան հետ իրենց ունեցած շօշափման, դեռ կը պահեն ու կը պահպանեն իրենց սովորոյթները, ծէսերն ու տարազները: Ասոնց համար, միմիայն քրիստոնեայ կը սեպուին յոյները, զորս ուրիշ ազգերէն կը յատկանշեն «խրիսթիյան» մակդիրով: Մասնաւոր ատելութիւն մը կը տածեն ոչ-յոյն ազգերու մասին: Տենդոտ պահեցողներ ու ջերմ պահպանողականներ են: Ամէն տուն ունի իր պաշտելի իկօնան եւ կամ մելանոյշ *պանայեան*, զորս կը խնկարկեն եւ կը մոմազարդեն օրն ի բուն եւ գիշերն ի բուն: Վա՜յ անոր որ կը յանդգնի անարգական խօսքեր ըսել այս սուրբերու նկատմամբ: Իսկոյն բզիկ բզիկ ընել կը փորձեն հայհոյիչը կամ ծաղրածուն: Այս բնիկները ընդհանրապէս երկրագործ, քարակոփ եւ որմնադիր են:

Գալով յոյն գաղթականներու, ասոնք առհասարակ կրթեալ եւ լուսաւորեալ մարդիկ են: Մեծ բաժին ունին արհեստի եւ վաճառականութեան մէջ: Կատարեալ սէր ու փափաք կը տածեն կրթական հաստատութիւններու հանդէպ գործով եւ ոչ խօսքով:

Տ. Մատէնի յոյները ունին մէկ եկեղեցի եւ երկու հատ ալ դպրոց արական, իգական: Եկեղեցին թէեւ փայտաշէն, բայց բաւական շքեղ է: Մինչեւ մօտ ատեններ երկու քահանայ ունէր Մատէնի յոյն եկեղեցին՝ Հաճի եւ Պանայուտ անուններով, բայց վախճանմամբ աստիճանաւոր Հաճի էֆ.ի, հիմա անձնուրոյն կը հովուէ Պանայուտ էֆ.: Մանչերու դպրոցը, որ 140-150 ուսանող ունի, կը կառավարուի 3 դասատուներու ձեռքով, մին հմտունակ իսկ երկուքը՝ անճարակ: Այս դպրոցը ո՛չ իր անցեալովը կրնայ պարծենալ եւ ո՛չ ալ ներկայով: Թէեւ բաւական փորձ ու հմուտ դասատուներ ունեցած է Տ. Մատէնի յոյն դպրոցը, բայց յոյներն ալ հայերուն պէս, չեն սիրեր մնայուն դասատու մը ունենալ. նոր տարի եւ նոր դասատու ըլլալու է: Ահա այս պատճառաւ կրթական

[9] Մետրեսէ (արաբ.).- իսլամական աստուածաբանական վարժարան:
[10] Րիւշտիյէ (արաբ.).- բարձրագոյն նախակրթարան:
[11] Իպթիտայի (արաբ.).- տարրական նախակրթարան:
[12] Մէարիֆ (արաբ.).- կրթական տնօրէնութիւն:

արդիւնքը միշտ զէրօ է: Չմոռնանք յիշել թէ Մատէնի մէջ լաւ տաճկագէտ յոյն երիտասարդներ ալ կը գտնուին, որոնք երբեմն դասատու, իսկ հիմա խանութպան, բազմարդիւն Տիգրան էֆ. Անդրէասեանի աշակերտներն են ընդհանրապէս:

Իգականներու յատուկ վարժարանին վրայ չպիտի խօսիմ, որ հիմա փակուած է, քանզի կը լսենք թէ. «Յարեաւ վարժուհին... եւ ցրուեցան ամենայն աշակերտուհիք նորա յերեսաց նորա»:

## Հայեր

Մեծապէս կը սխալին ամէն անոնք որ, մակերեւութապէս ուսումնասիրելու ի-ամտութեան մէջ կը գտնուին Տ. Մատէնի հայ տարրը: Այս փոքրիկ գաղութը կատարելապէս սերտելու համար, անոնց ներքին խաւերուն թափանցել, անձնիւր անհատի բազկերակը զննել, քննել պէտք է:

Տ. Մատէնի հայութիւնը գաղութ մ'է համակ, իրարմէ առաւել կամ նուազ տարբեր ժամանակներու մէջ տեղաւորուած: ՅԻ մասնիկը մեծագոյն դեր մը կը կատարէ այս ժողովուրդին մէջ, բոլորովին անջատ երեք ճիւղերու բաժնելով զանոնք. Կիւրինցի, Կեսարացի եւ Եօզկատցի յատկանիշերով: Գոգցես ուրոյն ազգեր են ասոնք, միշտ զինուած իրարու դէմ՝ ատելութեամբ եւ վատ եսերով: Ուստի անկ է որ համառօտակի ուսումնասիրենք հայ մայր-գոյնի տակ ծածկուած այս տարբեր գոյները:

## Կիւրինցիներ

Թո՛ղ ներուի առաջնութիւնը կիւրինցիներուն կ'ընծայենք: Այս տարրի մէջ ազգային պարագլուխ ըլլալու տենչով արբշիռ, Մենծ աղա յորջորջուելու յոյսով երազուն մէկէ աւելի իտէալականներ գտնուելուն համար է որ, առաջնութիւնը անոնց կ'ընծայենք ի գոհացում իրենց սիրելի տենչանքներուն:

Իբր 90-100 տուն կը հաշուեն կիւրինցիները, որ գրեթէ ընդհանուր առմամբ *կէզէքճիութեամբ* Տ. Մատէն եկած եւ տուն տեղ եղած են, հրապուրուելով անշուշտ շահաւէտ առուտուրներէ:

## Տնտեսական վիճակ

Ասոնց մեծ մասը այսօր ալ *կէզէքճի* է: Իւրաքանչիւրը իր մասնաւոր գիւղերն ունի, ինչպէս նաեւ իր աղան: Խօսակցութեան պահուն շատ անգամ կը կրկնուի «Սագգօ (Սարգիս)ին աղան Թահիր պէկը», «Թաթօ (Թադէոս)ին աղան Հասան պէկը» եւ այլն: Այս գիւղերը եւ աղաները, կամ իրե՛նք իրենց հաւատարմութեամբ շահած, մագնիսած են, կամ իբր ժառանգ ստացած են իրենց հայրերէն: Անուրանալի է որ, կիւրինցի *կէզէքճի*ները մեծ յարգանք ու համարում կը վայելէին երբեմն աշիրէթներու մէջ:

Ինչ որ ալ ըլլայ, կիւրինցիները գործունեայ, ճարպիկ մարդիկ են: Ումպէտ խաղերով, անիմաստ զուարճութիւններով ժամավաճառ ըլլալ չեն սիրեր եւ այս պատճառաւ առ հասարակ բարեկեցիկ են: Տ. Մատէնի միակ եւ եզական հարուստն է դարձեալ կիւրինցի մը, հաճի Յարութիւն աղա Սավուլեան, որ ծանօթ անձնաւորութիւն մ'է գաւառիս մէջ իր բարեգործութիւններով:

### Ֆիզիքական հանգամանք

Կիւրինցիները նշանակելի են ֆիզիքապէս: Քաջառողջ եւ յաղթանդամ են: Գէր կազմուածքով, լուսաշող աչքերով, կարմրուկ այտերով, մեծ մասամբ պարթեւ հասակով, յամր ու պատկառոտ քայլուածքով, հայութեան տիպարներն են գոգցես: Կիւրինցի երիտասարդները թէեւ բիրտ ու տգէտ (յարգելով բացառութիւնները), բայց ֆիզիքապէս կոյս վիճակ մ'ունին: Անոնց համար չեն, «Ինքնապաշտպանութիւն»ներ, «Առողջապահութիւն»ներ, Նաշիկեանի եւ Սէքլէմեանի թարգմանութիւններ եւ չգիտեմ ինչեր: Այդպիսի համաճարակ տիտերու անուններն անգամ լսած չեն անոնք: Տ. Մատէնի Ազգ. վարժարանի մէջ պաշտօնավարութեանս միջոցին եթէ սրտի գոհունակութիւն մ'ունէի, ահա այս կէտն էր: Ես, անձնական դատողութեամբս, կիւրինցի երիտասարդներուն ոչ-ընկերական չէզոքութեանը կը վերագրեմ իրենց անբիծ կուսութիւնը: Վկայ է ինձ պատմութիւնը որ, շօշափումը իր հրահանգիչ ու լուսաւորիչ յատկութիւններով հանդերձ, քանի՜ քանի ապականիչ, թունաւորիչ ախտեր, սովորոյթներ ալ ներմուծած է այսինչ ազգերու, այսինչ քաղաքացիներու եւ ընկերներու մէջ:

### Բարոյական վիճակ

Մեծ մասամբ սակաւապէտ են կիւրինցիները: Ինչպէս ուտելիքի, նոյնպէս հագուստի ու կապուստի մասին միշտ պարզը, անսեթեւեթը, բնականը կը նախընտրեն: Տիպար քրիստոնեաներ են, ո՛չ գործնականապէս: Իրիկուն եւ առաւօտ եկեղեցի կը յաճախեն, պաշտօնապէս: Տենդոտ պահեցողներ են, աւանդաբար: Ասոնց մէջ շատեր ծայրէ ի ծայր գոց գիտեն եկեղեցական առօրեայ սրբասացութիւնները: Վա՜յ այն քահանային կամ երաժիշտին, որ կը յանդգնի կամ կը միամտի սխալ բան մը կարդալ, իսկոյն բամբ ձայն մ'է որ կը բարձրանայ ատեանէ եւ կու գայ ճշդելու տառական սխալն անգամ: Առհասարակ ինքնահաւան են: Ամէն ոք մեծ կարեւորութիւն կու տայ իր խօսքին եւ մասնաւոր շեշտով մը կը յայտարարէ անոր վսեմութիւնը: Ահա այդ պատճառով ողորմելի մարդուկներ, ասունի ու անասունի խառնուրդներ են ուրիշ տեղացիները իրենց աչքին առջեւ: Ասով հանդերձ, շատերը դատողութենէ, նկարագիրէ զուրկ մարդիկ են: Աւելի կը սիրեն այսինչ մոլորակին արբանեակել, քան իրենց *ես*ը անկախօրէն գործածել: Ասոնք ալ գալէճիքցիներու նման եկեղեցին քաւարան մը կը նկատեն, մեղաց պէսպիսութիւններու դէմ: Վերջապէս Տ. Մատէնի կիւրինցի ազգայինները զերծ ու ապահով են քաղաքակրթութեան (գաւառական ըմբռնումով) բարի եւ չար ազդեցութիւններէ:

### Ուտելիք

Կիւրինցիները մսամոլ չեն: Աւելի կը սիրեն բանջարեղէն, քան մսեղէն եւ խմորեղէն: Ասոնց առաջնակարգ կերակուրներն են հերիսա, դդում, հացուհաւկիթ, կէօֆթէ (բառ պարսկ. = ծեծուած, ջարդուած), տեսակ մը բանջար, որ Կիւրինէ ընծայ կը ղրկուի իրենց քաղաքակիցներուն, հէլվա (բառ արաբ. (հէլավէթ) = անուշութիւն, անուշեղէն), տօլմա եւ այլն: Թէեւ ուրիշ շատ մը կերակուրներ ալ կը գործածեն, բայց անոնք բուն Կիւրինի կերակուրներ չեն, այլ շօշափմամբ իւրացուցած են ուրիշ տեղացիներէ: Հերիսան ձմեռի կերակուր է,

զոր կ'ուտեն հարուստները իրենց դրկից դրացիներով եւ ուրիշ հրաւիրեալնե-րու հետ: Դդումը աղքատի կերակուր է, զոր կը հռչակեն *դրախտի կերակուր* (ճէննէթ թա'ամը):

Հերիսան պատրաստելու եղանակը.- *Եարման* (եարմա = լուացուած եւ վերջը ծեծուելով մաշկը հանուած ցորեն, կորկոտ) կը լեցնեն իրիկուընէ խո-շորկեկ սանի մը մէջ՝ հաւասար չափով եւ կ'իջեցնեն թոնիրի մէջ: Վերջը հնդկահաւի կամ կովի եւ կամ ոչխարի 1, 2, 3, 4 օխա[13] միս կը ձգեն մէջը: Մինչեւ առաւօտ լաւ մը կ'եփի: Առտուն մսին ոսկորները կը զատեն եւ կը սկսին ծեծել մասնաւոր թակերով այնպէս որ մազի պէս բարակնայ: Ուտելու ժամանակ մասնաւոր խալկինի մը մէջ կը լեցնեն, մէջտեղը կարագով լեցուն պնակ մը կը զետեղեն եւ տաքդեղ (սեւ կամ կարմիր պղպեղ) ցանելով՝ կ'ըմ-բոշխնեն անկուշտ:

Հացուհաւկիթ.- 5-10-20 հատ հաւկիթ կը կոտրեն ամանի մը մէջ: Դգալով կը խառնեն որ դեղինը եւ ճերմակը իրարու միանան, յետոյ փուռիկը (ֆուռուն էքմէյի) կը կտրեն շերտ շերտ եւ թաթխելով հաւկիթի մէջ կը տապկեն կարա-գով:

Կիւրինցիները առ հասարակ կիներու հետ կերակուր չեն ուտեր: Կինը իբր յետին արարած, անբաժին է բոլոր զուարճութիւններէ եւ ընտանեկան յարա-բերութիւններէ: Բայց տակաւ վեներալու վրայ է այս նահապետական դրութիւ-նը, շնորհիւ ուրիշ քաղաքացիներու հետ իրենց ունեցած շօշափման:

Կիւրինցի պզտիկները էմմի (հօրեղբայր) կ'ըսեն իրենց հօր, ինչպէս հարս, էզէ (կրճատուած թիյ-էզէ-ի = մօրաքոյր)՝ իրենց մայրերուն: Այս տարօրինակու-թեան վերահասու ըլլալու համար բաւական հարցուփորձեր ըրի: Վերջապէս սա եզրակացութեան յանգեցայ թէ, կիւրինցիները մեծ յարգանք ունին տան մեծերու հանդէպ: Օրեր, ամիսներ, տարիներ՝ երկա՜ր տարիներ կ'անցնին եւ ծնողք չեն կրնար իրենց հոգեհատորիկները ողջագուրել իրենց մեծերուն առ-ջեւ, ինչպէս նաեւ գաղտագողի: Չի ժտեր մայր մը իր սիրականը ծունկերուն վրայ նստեցնելով՝ գգուել, խնամել եւայլն: Միայն գիշերները կը համբուրէ իր ձագուկը ահուդողով՝ որ մարդ չտեսնէ: Պզտիկը «հայր» կ'ըսէ իր պապուն եւ «մայր»՝ իր մամին, եւ երբ լայ, «էմմիդ գնա՛, քեզի փարա թող տայ, հարսին գնա՛, շաքար թող տայ» կ'ըսեն: Ահա այս պատճառով մանչուկը, հակառակ բնատուր սիրոյ, գոգցես կը տարակուսի իր կենսատուներու հանդէպ, մինչեւ տան մեծերուն յաւիտենական նինջը: Ով որ կը հանդուրժէ եղծանել այս օրէ-նքը, վա՛տ է եւ անպատկառ:

## Կեսարացիներ

S. Մատէնի կեսարացի գաղութը 70-80 տուն է, միասին առնելով նաեւ թա-լասցիները, կէրմիրցիները եւ էրքիլէտցիները, որոնք Կեսարիոյ արուարձան-ներն են:

[13] Օխա.- ծանրութեան չափ, որուն արժէքը փոփոխական էր՝ ըստ տեղի ու ժամա-նակի: Մերթ կշռած է 213.6 կրամ, մերթ՝ 400, 1225, 1282, 2.225 եւն.:

Կեսարացիները իրենց առեւտրական սուր հոտառութեամբ, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս ալ Տ. Մատէն եկած եւ հաստատուած են, գրեթէ կիւրինցիներու հետ միաժամանակ:

### Տնտեսական վիճակ

Կեսարացիներն ալ առհասարակ բարեկեցիկ են: Գնահատելի ճարպիկութեամբ շահու աղբիւրներ կ'որոնեն: Ասոնց մեծ մասը խանութպան են, պագգալիէ, աթթարիէ եւ մանիֆաթուրա կը ծախեն: Կան իրենց մէջ նաեւ արհեստաւորներ, ինչպէս կօշկակար, դարբին եւ այլն:

Տ. Մատէնի կեսարացիները 70-80 տուն կը հաշուեն, որ իրենց յատկանիշը եղող առեւտրական սուր հոտառութեամբ, հետզհետէ Տ. Մատէն գաղթած եւ հաստատուած են:

### Տնտեսական վիճակ

Կեսարացիները, որ առեւտրական աշխարհի վրայ թափառական հրէայի դերը կը կատարեն գոգցես, բնական տնտեսագէտներ են եւ ծնունդով վաճառական: Մանրազնին քննութիւն մը պէտք է, աղքատին ու հարուստին կենցաղավարութեան տարբերութիւնը որոշելու համար: Հեռո՛ւ, շա՜տ հեռու են արդուզարդէ: Իրենց միակ նշանաբանն է աշխատիլ ու շահիլ: Կարծես որ ոսկին ասոնց փնտռտուքէն վախնալով, դեղնած է:

Բնական տնտեսագիտութեան մէջ ո՛չ նուազ գնահատելի են կիներն ալ: Փոխանակ ումպէտ ու ջնջին ծախսերու, զարդ-ոսկի դիզել է միշտ իրենց տենջանքը, որուն տենդոտ սիրահարներն են: Ահա այս պատճառով, երբ երիտասարդ մը իրենց աղջիկներու ձեռքը խնդրէ, առանց որեւէ բարոյական ու ֆիզիքական հանգամանք մը որոնելու, անհամբեր կը հարցնեն. «դրամ ունի՞»: Մայրերու սիրուն իտէալն է մանկութենէ սկսելով օժտել իրենց աղջիկները: Ուստի, եթէ աղջիկ մը 14-15 տարեկան հասակը թեւակոխէ, լիակազմ կը գտնէ իր սնտուկը հարսնցուի մը պէտք եղած առարկաներով եւ իրեն կը մնայ միայն...: Կեսարացի կինը խիստ լաւ կռահած է ժամանակին յարգը ու գործունէութեան հրաշքները, ուստի միշտ կ'աշխատի, տրամադրելի ժամանակ մ'ունենալով նաեւ բամբասանքի եւ այպանումի: Տ. Մատէնի կեսարացիներն ալ մեծ մասով բարեկեցիկ են:

### Ֆիզիքական հանգամանք

Կեսարացիներու ֆիզիքական վիճակը լաւ է: Առ հասարակ սովորական հասակով, թուխ դէմքերով, կարմրուկ ու կլորիկ այտերով, գիրուկ կազմուածքներով, սեւ աչքերով ու յօնքերով, տափակ քիթով, միջակ բերանով սիրուն տեսք մ'ունին: Աւելի պատկառելի են ջոջերը հին տարազներու տակ, այսինքն իրենց եղանակին յարմար մուշտակներու ու մետաքսեայ պարեգօտներու մէջ:

Եւայի թոռնիկները մեծ մասով զգլխիչ ու դիւթելի են: Աստղիկը անոնց գրաւիչ հանգամանք մը պարգեւած է որ, առաջին տեսութեամբ կը գերեն մեր բանաստեղծ ճահիլները: Եւ յիրաւի, ո՞վ չի պաշտեր աղու նայուածքով, սեւո-

րակ ու բոլորակ աչքերով, աղեղաձեւ յօնքերով, կարմրուկ այտերով եւ վարդ շրթունքներով դիցուհի մը:

Ա՛րդ, հակառակ հայ թերթերու գուժած ինչ ինչ բարոյական անկումներու (պանդխտութեան հետեւանք), կեսարացի կինը, միշտ հաւատարիմ գտնուած է իր էրկանը, անոր երկարատեւ ու անտանելի պանդխտութեան մէջ, օրօրելով իր վիշտերը մելանոյշ ու մաղձոտ երգերով:

## Բարոյական վիճակ

Ինչպէս որ ըսինք, ճարպիկ, բանգէտ ու արթուն մարդիկ են կեսարացիները: Բնութեամբ չափազանց խնայող եւ կամ շիտակը խօսելով բաւական կծծի են: Բարեկամութիւն, անձնուիրութիւն, մարդասիրութիւն, պարագային համեմատ հիւրասիրութիւն, պատիւ, ասոնց ամէնն ալ շահու մէջ կը փնտռեն (միանգամ ընդմիշտ ըսենք որ, ամբողջ գրութեանս մէջ բացառութիւնք յարգի են): Բնական հակում ու համարում ունին իրենց քաղաքացիներու հանդէպ: Թէեւ կիւրինցիներուն չափ ո՛չ եկեղեցասէր, բայց մեծ յարգանք ու սէր կը տածեն իրենց ուղղափառ կրօնին ու Ս. Եկեղեցիին համար: Անուրանալի ճշմարտութիւն մ'է որ, օրինակելի ծառայութիւններ կը մատուցանեն բարեգործական հաստատութիւններու մէջ, եթէ իրենց գործ մը յանձնուի:

## Ուտելիք

Միջդաւանական համագործակցութեան դրսեւորում էր նաեւ այն, որ յարանուանութիւններից իւրաքանչիւրը իր ջանքերը եւ հնարաւորութիւնները գործադրում էր ոչ միայն սեփական անդամների, այլեւ - անկախ եկեղեցական պատկանելութիւնից - բոլոր աղէտեալների կարիքները գոհացնելու կամ նրանց փրկելու համար: Այլ կերպ ասած՝ հայկական եկեղեցիներից իւրաքանչիւրը իր գործունէութիւնը ծաւալում էր ոչ միայն իր նեղ համայնքի, այլ ամբողջ հայ բնակչութեան շրջանում կամ փոքրաձիր մակարդակով ծաւալում էր համազգային գործունէութիւն: 1909ի ջարդերի ժամանակ Քեսապի շրջանի Ներքին Պաղճաղազ գիւղի լատինաց վանքը փախուստի ճանապարհին ժամանակաւոր ապաստան դարձաւ Էքիզօլուք եւ Վերին Պաղճաղազ գիւղերի ողջ հայ բնակչութեան համար: Իսկ դրանից յետոյ լատին վարդապետները առաջնորդեցին փախստական հայերին Լաթաքիա: Իսկ ջարդերի հետեւանքով Լաթաքիա տեղափոխուած հազարաւոր քեսապցիներ տեղաւորւում են, ի թիւս այլ տեղերի, հայոց հոգետանը, լատինաց վանքում, ամերիկեան միսիոնարների կենտրոններում:

Եւս մէկ ուշագրաւ փաստ, որ վկայում է ոչ-այնքան միջդաւանական համագործակցութեան, որքան տարբեր դաւանանքների ներկայացուցիչ հայերի՝ միմեանց նկատմամբ տածած կարեկցութեան եւ միմեանց ճակատագիրը կիսելու պատրաստակամութեան մասին: Այսպէս, հայերի մէջ

[11] Մէջբերումը՝ ըստ նոյն տեղում, էջ 107:

պառակտում առաջացնելու, ինչպէս նաեւ եւրոպական պետութիւններին մոլորութեան մէջ գցելու նպատակով թուրքական իշխանութիւնները յետաձգում են հայ կաթողիկէների եւ աւետարանականների գաղթը՝ կեղծ լուրեր տարածելով, թէ վերջիններս չեն տեղահանուելու[12]: Սակայն 1915 Յուլիսի 30ին, երբ սկսում է Գարատուրան գիւղի հայ առաքելական համայնքի գաղթը, աւետարանական համայնքի մեծամասնութիւնը կազմող Սաղտճեան գերդաստանի ընտանիքները, չցանկանալով բաժանուել իրենց համագիւղացիներից, եւ ազգակիցների ճակատագիրը կիսելու պատրաստակամութեամբ, միանում են գաղթողներին:

***Վերականգնողական աշխատանքներ***

Աղէտից յետոյ իրականացուող վերականգնողական աշխատանքները միտուած էին տարագիրների վերադարձի կազմակերպմանը, աւերուած շինութիւնների վերակառուցմանը, կարիքաւորներին օգնութեան տրամադրմանը, մինչեւ կեանքը բնականոն հունի մէջ մտնելը բնակչութեան առօրեայ կենսագործունէութեան կազմակերպմանը եւն.: Ահա այս խնդիրների շուրջ էլ իրականացւում էր միջյարանուանական համագործակցութիւնը Քեսապում:

1909ի կոտորածից յետոյ, երբ քեսապահայերը վերադարձան իրենց հարազատ բնակավայրերը, թուարկուած խնդիրներն իրենց սրութեամբ ցցուեցին հայ հոգեւոր եւ աշխարհիկ կառոյցների ու առաջնորդների առջեւ:

Կոտորածի հետեւանքով, ինչպէս նշում է Չոլաքեանը, մինչ այդ ոչ այնքան ծանօթ շրջանը մեծ հետաքրքրութիւն սկսեց իրենից ներկայացնել: Ամէն տեղից թէ՛ հայկական եւ թէ՛ օտարերկրեայ բարեգործական կազմակերպութիւններ շտապեցին օգնութիւն տրամադրել աղէտեալներին: Նպաստ է հասնում անգամ Կ. Պոլսի հայոց պատրիարքութիւնից, ՀԲԸՄ Գահիրէի կենտրոնական վարչութիւնից:

Ամբողջ տարածաշրջանում (Կիլիկիա եւ Անտիոք) ստեղծւում են նպաստից ստացման եւ բաշխման յանձնաժողովներ, որոնց ղեկավարութիւնը ստանձնում է Բերիոյ թեմի առաջնորդական տեղապահ Շահէ Ծ. վրդ. Գասպարեանը: Քեսապում նոյնպէս ստեղծւում է այդպիսի յանձնաժողով, որի աշխատանքներին ներգրաււում են հայկական տարբեր եկեղեցիների ներկայացուցիչները: Այսպէս, յանձնաժողովի անդամներ էին տէր Մովսէս

[12] Իդէպ, թուրք պատմաբանների կողմից շրջանառութեան մէջ դրուած այն կեղծ թեզը թէ՝ կաթողիկէ եւ աւետարանական հայերը չեն ենթարկուվել ջարդերի իրենց դաւանանքային պատկանելութեան շնորհիւ, եւ որին որոշակի տուրք են տալիս նաեւ հայկական շրջանակներ, հիմնւում է սոյն հանգամանքի վրայ (Ա. Սիմաւորեան, «Թուրքիայի հայ կաթողիկէ համայնքը»՝ Ա. Սիմաւորեան, Վ. Հովեան, *Հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքները Թուրքիայում. ժամանակակից միտումներ*, «Նորաւանք» ԳԿՀ, Երեւան, 2012, էջ 19-22, 28):

Ծ. վրդ. Ոսկերիչեանը, Աթիկեան քահանան, հայր Սափաթինօն, վերապատուելի Գունտաքճեանը, միսիոնարուհի օրիորդ Չէյմպըրսը եւ ուրիշներ:

Յանձնաժողովի գործունէութեան արդիւնքում հիմնւում են որբանոց եւ այրիանոց: Հայր Սափաթինօն իր խնամակալութեան տակ է վերցնում 200 որբերի, քանի որ կոտորածների հետեւանքով յատկապէս 6-7 տարեկան որբ երեխաների թիւը բաւականին մեծ էր: Այրիացած կանանց աշխատանքով ապահովելու համար հիմնւում է հիւսուածեղէնի փոքրիկ գործարան:

Վերականգնողական շրջանում պակաս կարեւոր չէր նաեւ հոգեբանական աջակցութիւնը աղէտեալներին: Այս տեսակէտից կարեւոր նշանակութիւն ունէին յատկապէս բարձրաստիճան հոգեւոր գործիչների այցելութիւնները աղէտեալ բնակավայրեր եւ ոգեւորիչ ելոյթները: Յատկանշական է այն, որ 1909ի ամռանը՝ ջարդերից յետոյ, մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Խապայեանը եռօրեայ այցելութիւն է իրականացնում Քեսապ, քարոզում տեղի հայ առաքելական եւ աւետարանական եկեղեցիներում, իրականացնում ազգային վարժարանի նոր շէնքի հիմնարկէքի արարողութիւնը, այնուհետեւ, մեկնելով Լաթաքիա, հայ ժողովրդի անունից երախտագիտութիւն է յայտնում տեղի իշխանութիւններին ու բարեգործական կազմակերպութիւններին այնտեղ ապաստանած հայերին ցուցաբերուած աջակցութեան համար:

Ինչ վերաբերում է 1915ի տեղահանութիւնից յետոյ վերականգնողական աշխատանքներին, ապա պէտք է նշել, որ 1918 Հոկտեմբերի 30ին Մուդրոսի զինադադարի կնքումից եւ առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտութիւնից յետոյ տարագրուած քեսապահայերը սկսեցին աստիճանաբար վերադառնալ եւ վերահաստատուել իրենց նախկին բնակավայրերում: Սակայն վերադարձից յետոյ էլ ամէն ինչ հարթ ու հանգիստ չէր: Նախ առաջացել էին անվտանգութեան հետ կապուած խնդիրներ՝ երկու պատճառով.

1. 1920ին կազմացրուեց հայկական լեգէոնը[13], որը Մերձաւոր Արեւելքի հայ բնակչութեան անվտանգութեան երաշխաւորն էր:

2. Քեմալական շարժումից ոգեւորուած տեղաբնակ թուրքերը սկսել էին ոտնձգութիւններ կատարել քրիստոնեաների, այդ թւում նաեւ՝ հայերի նկատմամբ:

Այս մարտահրաւէրներին դիմակայելու նպատակով Քեսապում նախկին լեգէոնականներից եւ նոր կամաւորներից ստեղծւում է զինուորական իշխանութիւն, որը կարողանում է իրականացնել շրջանի պաշտպանութիւնը թուրքերի յարձակումներից: Այդ ինքնապաշտպանական կռիւներին

[13] «Արեւելեան լեգէոն», *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2*, Յ. Մեղապարտի անուան պոլիգրաֆկոմբինատ, Երեւան, 1976, էջ 33:

մասնակցում էին Քեսապի բոլոր յարանուանութիւնները: Օրինակ, ինչպէս վկայում է Չոլաքեանը[14], Վերին եւ Ներքին Պաղճաղազ եւ Չաթալլէք գիւղերի ինքնապաշտպանական կռիւներին մասնակցում էին լատինաց վանքի[15] ուսուցիչ Ծերոն Պետրոսեանը եւ խոհարար Պօղոս Պէօճիքեանը:

Իսկ առօրեայ կեանքը կազմակերպելու նպատակով զինուորական իշխանութեան կողմից Հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիների ներկայացուցիչներից կազմւում է Ազգային միութիւն (ԱՄ), որը ստանձնում է հայաբնակ շրջանի կենսապահովման գործը: Վերջինիս խնդիրներն էին կազմակերպել Քեսապի հոգեւոր եւ կրթական կեանքը, զբաղուել նորաստեղծ եւ նոր վերադարձող ընտանիքների տեղաւորման հարցերով, որբերի եւ այրիների խնամքով, անտէր մնացած կալուածքների օգտագործման, ժառանգութեան եւ այլ հարցերով:

ԱՄն այդ ժամանակ, արդարեւ, հանդիսանում էր Քեսապի քաղաքացիական իշխանութիւնը: Նրա կողմից Քեսապի ներքին կեանքում կարգուկանոն հաստատելու նպատակով անգամ ստեղծւում են ոստիկանութիւն եւ դատարան՝ անկարգութիւններն ու յանցագործութիւնները կանխելու, յանցագործներին պատժելու, վէճերը հարթելու համար: ԱՄն կարողանում է հմուտ կերպով իրականացնել նաեւ հայկական եւ ոչ-հայկական բարեսիրական կառոյցների տրամադրած օգնութեան ստացումն ու բաշխումը:

Կրթական գործը գլուխ բերելու խնդրով ԱՄն հիմնում է հայ առաքելական եւ աւետարանական համայնքների միացեալ վարժարանների ցանց: Երկու միացեալ վարժարաններ (մէկը՝ աղջիկների եւ միւսը՝ տղաների համար) հիմնւում են Քեսապում 1920ին: Իսկ Քեսապի յարակից գիւղերում մինչեւ 1923 հիմնւում են երկսեռ միացեալ նախակրթարաններ: Որպէս ենթակառուցուածքներ օգտագործւում են աւետարանական եւ ազգային նախկին վարժարանների շէնքերը: Միացեալ վարժարաններին մեծ օգնութիւն են ցուցաբերում վերակազմաւորուած Ուսումնասիրաց ընկերութիւնը եւ ՀԲԸՄն:

Ընկերային խնդիրների լուծման առումով ԱՄն ստացուած դրամական օգնութեան մի մասն էլ օգտագործում է սերմացուի ձեռքբերման (ժողովրդին բաժանելու նպատակով) համար: Հիմնւում է նաեւ որբանոց, ուր ապաստանում են նաեւ ոչ-քեսապցի որբեր:

Քեսապի պաշտպանութիւնն ապահովելու նպատակով գումարներ են յատկացւում նաեւ զէնքի ու զինամթերքի հայթայթման համար:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ Քեսապում ծաւալուող վերականգնողական աշխատանքների վրայ իր բարերար ազդեցութիւնն ունեցաւ Կիլիկիայում ազգային կեանքի վերազարթօնքը 1919-21՝ ֆրանսական ռազմակալման շրջանում:

---

[14] Չոլաքեան, էջ 118:

[15] Վանքը գտնւում էր Վերին Պաղճաղազ եւ Չաթալլէք գիւղերի միջեւ:

Վերջում հարկ է աւելացնել, որ ներկայում էլ Մերձաւոր Արեւելքում ծաւալւում են փոթորկայոյզ գործընթացներ, որոնք ունեն ցեղասպանական բնութագիր[16]: Արդ, ինչպէս նախորդ դարասկզբի Ցեղասպանութեան տարիներին, այժմ էլ հայութեան փրկութեան նպատակով հրատապ խնդիր է հայկական եկեղեցիների միջեւ համագործակցութիւնը, ինչի համար կարեւոր նշանակութիւն ունի անցեալի փորձի արժեւորումը:

## INTERCONFESSIONAL COOPERATION IN KESAB DURING THE YEARS OF THE ARMENIAN GENOCIDE

(Summary)

VAHRAM HOVYAN
vhovyan@yandex.ru

In spite of some confessional differences, the consciousness of belonging to the same nation and religion – the Armenian nation and Christianity – Christianity has always predominated among Apostolic, Catholic and Evangelical Armenians. This fact has been a serious reason for close cooperation between Armenian Apostolic, Catholic and Evangelical churches in various spheres, due to the commonality of problems as well.

The article aims to show through the example of the small district of Kesab the interconfessional cooperation in the Armenian reality during the most complicated period of the Armenian Genocide. The historical facts of the time include the massacres in Cilicia in 1909, World War I (1914-1918) and the following years. The author outlines the cooperation between the Armenian Apostolic, Catholic and Evangelical churches of the time in three areas: a) prevention of disaster, b) struggle to minimize the harm during disaster and c) recovery efforts.

[16] Տե՛ս, օրինակ՝ Էմմա Բեգիջանեան, «Թուրքական մանեւրներ սիրիական խնդրում», *Հայաստանի Հանրապետութիւն*, 20.01.2023:

# ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

***Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ* (*ՀԱԻԱ*), 4, խմբ. Ս.Գ. Հոբոսեան, Յ.Տ. Մարութեան, Թ.Լ. Հայրապետեան, Տ.Ս. Դալալեան, ՀԱԻ հրատ., Երեւան, 271 էջ:**

ՀԱԻԱ պարբերականի 4րդ հատորն ընդգրկում է գիտական յօդուածները 21 հետազօտողների, որոնք աշխատում են ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում եւ Երեւանի պետական համալսարանում: Հատորը բաղկացած է չորս հիմնական բաժիններից, որոնցում համապատասխան յօդուածները խմբաւորուած են ըստ հետազօտական մօտեցումների եւ մեթոդաբանութեան՝ միջգիտակարգային հետազօտութիւններ, դաշտային հետազօտութիւններ, բնագրաբանական հետազօտութիւններ, իսկ վերջին բաժնի յօդուածները վերաբերում են բանագիտութեան եւ ազգագրութեան պատմութեան որոշակի խնդիրների: Ժողովածուն բովանդակային առումով լիառատ է եւ օգտակար հայագիտութեան խնդիրներով զբաղուող եւ հետաքրքրուող ընթերցողների համար:

ա. «Միջգիտակարգային հետազօտութիւններ» բաժնի չորս յօդուածները գրուած են տարբեր գիտակարգերի՝ հնագիտութեան, մշակութային մարդաբանութեան, ազգագրութեան, բանագիտութեան, աղբիւրագիտութեան եւն.ի համադրմամբ:

Մշակութային մարդաբան Լեւոն Աբրահամեանը «Թամանեանի ժողտունը. առասպելաբանութիւն, գաղափարախօսութիւն, ճարտարապետութիւն» յօդուածում (էջ 8-19) իւրօրինակ ուսումնասիրութիւն է կատարում Ալեքսանդր Թամանեանի նախագծած Ժողտան (այժմ՝ «Օպերայի շէնք»), ճարտարապետի պատկերացումների եւ դրանց պատմամշակութային արմատների միստիկ աղերսների մասին: Հեղինակը նշում է, որ Օպերայի եւ բալէտի թատրոնը Թամանեանի ամենաառեղծուածային շինութիւնն է, որովհետեւ ճարտարապետը համոզուած էր, որ այդ վայրում մօտ երկուհազար տարի առաջ գործել է երգի՝ Վահեվահեան հեթանոսական տաճարը՝ նուիրուած Վահագն աստծուն, ինչպէս նաեւ սիրոյ դիցուհուն՝ Աստղիկին: Ստացւում է, որ երգի տաճարն առնչւում է սիրոյ եւ ռազմի գործառոյթներին: Աբրահամեանն իր յօդուածը դիտարկում է Պապեռնիի «Մշակոյթ մէկ» եւ «Մշակոյթ երկու» մոդէլների շրջանակում եւ բացայայտում Թամանեանի ստեղծած «Մշակոյթ երկուսը»: «Մշակոյթ մէկը» յեղափոխական սկզբունքով ժխտում է անցեալը, իսկ միւսը՝ յատուկ հայեացք է դէպի անցեալ: Յօդուածում յստակ սահմանազատւում է ստալինեան եւ թամանեանական «Մշակոյթ երկուսը»: Ըստ հեղինակի՝ ստալինեան «Մշակոյթ երկուսը» հայեացք էր դէպի կայսերական տիպի անցեալ, իսկ թամանեանականը՝ որպէս դասականութեան եւ միջնադարեան հայկական ճարտարապետութեան համադրումով արուած կառոյց: Հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ Թամանեանը քրիստոնէութեան դէմ չէր պայքարում, բայց իր կառուցած թատրոնի նախասկիզբներ գնացող տաճարը արդէն իսկ յուշում էր, որ իր ստեղծածը պայքարի ու յաղթանակի հետ պէտք է առնչութիւն ունենար: Ստացւում է, որ այդ Վահեվահեան որակումը ունի առասպելաբանական-հնատիպային ենթախորք եւ ինչպէս հեղինակն է ցոյց տալիս՝ դրա մասին Թամանեանը եթէ չունէր յստակ պատկերացում, ապա ունէր որոշակի բնազդային զգացում:

Հնագէտ Արսէն Բոբոխեանը «Կաթքար-վիշապաքար. Երուանդ Լալայեանից հարիւր տարի անց» յօդուածում (էջ 20-35) քննութեան է ենթարկում կաթքար-վիշապաքար փոխառնչութեան հարցը՝ եզրակացնելով, որ այդ կոթողներն, ըստ ամենայնի, նոյն բովանդակային ու գործառնական նշանակութիւնն են ունեցել: Կաթքարը, ըստ ժողովրդական հաւատալիքի, սուրբ, նուիրական քար է համարուել: Այս եզրոյթը առաւել բնորոշ է Ախալքալաքի շրջանի հայութեանը: Անուանումների ընտրութիւնն էլ պայմանաւորուած է կաթքարի մասին եղած աւանդազրոյցով, որում չի արձանագրւում վիշապաքար անունը: Այսինքն՝ ստացւում է, որ ջաւախեցիները կարող են վիշապաքարը նաեւ կաթքար անուանել: Հեղինակը քննաբանում է կաթքարի մասին աւանդազրոյցը՝ ներկայացնելով չորս հեղինակների՝ Լալայեանի, Ի. Ռոստոմիշվիլիի, Ե. Թաղաիշվիլիի եւ Վարդ Բդոյեանի գրառած տարբերակները եւ դրանց յաւելում հինգերորդը՝ իր գրառածը: Խօսելով աւանդազրոյցի մասին, թէ որտե՛ղ եւ ե՛րբ է առաջացել կամ ի՛նչ կապ ունի վիշապաքար հնագիտական կոթողի հետ՝ հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ այն կարող է ունենալ հին տեղական արմատներ, իսկ այն, որ Ջաւախքի Կաթքարին վերագրում են պտղաբերութեան, ուղեցոյց քարի կամ սահմանաքարի գործառոյթներ՝ ցոյց է տալիս համընկնումը վիշապաքարերի համար ենթադրուող գործառոյթներին:

Բանագէտ Տորք Դալալեանը «Նուագարանների առաջացումն ու գործառնութիւնը ըստ Վարդան Այգեկցու եւ Յովհաննէս Պլուզի հաղորդած աւանդազրոյցի» յօդուածում (էջ 48-59) խօսում է հարուածային եւ լարային նուագարանների առասպելաբանական ծագման, դրանց ունեցած գործառնական նշանակութեան եւ էութեան մասին: Հեղինակը, քննաբանելով Այգեկցու եւ Պլուզի հաղորդած աւանդազրոյցները, նշում է, որ այս զրոյցները սերտ շփման մէջ են եղել տարբեր կրօնների պատկանող գաղափարախօսական ուղղութիւնների հետ եւ ըստ այդմ էլ արտացոլում են գտել ոչ-պաշտօնական կրօնական գրուածքներում, ուստի կարելի է համարել, որ այս աւանդազրոյցը բանահիւսական եւ հոգեւոր բնագրերի միաձուլուածք է: Նուագարաններն ունեցել են մեղսայարոյց էութիւն, որի մասին եղած քրիստոնէական պատկերացումը տարածուած է եղել միջնադարեան Հայաստանում: Գուսանական արուեստի հանդէպ ունեցած բացասական վերաբերմունքը հասկանալի է, որովհետեւ, ըստ եկեղեցու, հենց գուսաններն էին հեթանոսական վիպասքեր երգողները: Աւանդազրոյցը ցոյց է տալիս, թէ ինչպէս է Կայէնի սերունդների անիծուած լինելը եւ երգարանների ստեղծումը կապւում հենց նրանց զարմի հետ: Ըստ աւանդազրոյցի՝ Կայէնի ցեղի կանայք պճնուելով եւ նուագարաններով գայթակղում են Սէթի ցեղի տղամարդկանց, որի հետեւանքով էլ Աստծոյ սիրելի որդիները օտարանում են Աստծուց: Հայ բոշաները համարւում են Կայէնի զարմեր, որովհետեւ հենց նրանց ունեցած երկու յատկանիշը՝ պճնասիրութիւնն ու նուագածութիւնը, յիշեցնում է գնչուներին՝ վստահաբար կապուելով նրանց ունեցած թափառական կեանքի հետ: Գրելով Յովհաննէս Երզնկացի Պլուզի օտեցումների մասին՝ նշւում է, որ Երզնկացին տարբերութիւն էր դնում նուագարանային երաժշտութեան եւ գուսանական արուեստի միջեւ, քանի որ գուսանական արուեստը կապուած էր նախաքրիստոնէական հեթանոսական մշակոյթին, հասկանալի է դառնում նրա ունեցած բացասական վերաբերմունքը առ գուսանական արուեստ: Ըստ հեղինակի եզրայանգման՝ ե՛ւ Այգեկցու, ե՛ւ Պլուզի աւանդած տարբերակները միջնադարեան բանահիւսութեան գեղեցիկ նմուշներից են, եւ որ Կայէնականների ու Սէթեանների մասին դիցաբանական վերոնշեալ

պատկերացումները յարատեւել են մինչեւ Ի. դար, մասնաւորաբար դրսեւորուելով բոշաների վարած նեղ՝ մարդկանց գայթակղելու, «քաղաքականութեամբ»:

Ազգագրագէտ Լիլիթ Սիմոնեանի «Արեւելեան Հայաստանի սրբավայրերը 17րդ դ. վերջին. ըստ Երեմիա Քէօմիւրճեանի քարտէզի եւ Թովմա Վանանդեցու "Բան չափեալ 'ի սրբազան տեղիս աշխարհիս հայոց"ի» յօդուածում (էջ 36-47) մանրամասնօրէն ցոյց է տրւում Քէօմիւրճեանի քարտէզի եւ Վանանդեցու պոէմի ստեղծման ժամանակից մինչեւ մեր օրեր տեղի ունեցած փոփոխութիւնների ընթացքը: Այդ փոփոխութիւնները վերաբերում են ոչ միայն սրբավայրերի մոռացմանը կամ վերածնմանը՝ որպէս պատմական յուշարձանների, այլեւ ուխտագնացութեան դրդապատճառների եւ դրանց հետ կապուած աւանդազրոյցների, նաեւ ժողովրդական պաշտամունքի ձեւերին: Հեղինակը ցոյց է տալիս, թէ մասնաւորաբար սրբավայրերի ո՛ր մասն է պահպանել կենսունակութիւնը, եւ որոնք՝ հիմնովին մոռացուել են: Նշում է, որ ըստ ազգագրական գիտարշաւների տուեալների՝ որոշ դէպքերում ուխտագնացութեան աւանդոյթը պահպանուել է մինչեւ մեր օրեր, ինչպէս Սաղմոսավանք, Տեղերի վանք, Վարդաբլուրի Ս. Սարգիս եւն., միւս դէպքում էլ դժուարութեամբ են նոյնականացւում սրբավայրերը, իսկ ուխտագնացութիւնը կա՛մ մարել է, կա՛մ դարձել պատահական այցելութեան վայր, դրանք են՝ Արշակունեաց վանքը, Գառնիի վանքը, Բաշգոփարան-Ստեփանոսի ուխտը:

բ. *ՀԱԻԱ* 4րդ հատորի երկրորդ բաժինն ընդգրկում է դաշտային հետազօտութիւնների՝ ազգագրական կամ բանահաւաքչական, հիման վրայ գրուած յօդուածները:

Առաջինը ազգագրագէտ Յակոբ Չոլաքեանի «Անտիոքի հայաբնակ շրջաններու տոհմիկ նուագարանները» վերտառութեամբ յօդուածն է (էջ 62-74), որում հեղինակը ներկայացնում է Սիրիայի Անտիոքի շրջանի հայաբնակ գիւղերում տարածուած փողային եւ հարուածային երաժշտական գործիքները: Հեղինակը նշում է, որ շրջանի հայերը սերտ յարաբերութիւններ ունէին արաբախօս եւ թրքախօս գիւղերի բնակիչների հետ, եւ հարսանիքների ժամանակ փոխադարձ ներկայութեան էին արժանացնում միմեանց: Բնականաբար, հիւրերին մասնակից դարձնելու համար իրենց ուրախութեանը՝ մեծ տեղ էին յատկացնում պարեղանակներին՝ խնջոյքները սկսելով թմբուկի հարուածներով: Չոլաքեանը իւրաքանչիւր գործիքի մասին խօսելիս տալիս է նաեւ դրա թրքական եւ/կամ արաբական անուանումները: Նշում է, որ զուռնա-թմբուկի նուագածութեան համար յատուկ առիթներ կային՝ հարսանիքը, Բարեկենդանը եւ մեծ ուխտագնացութիւնները: Խօսելով շուրջպարերի եւ մենապարերի մասին՝ նշում է, որ դրանք կատարւում էին զուռնայի նուագածութեան ներքոյ: Մուսալեռցիները եւ արաբախօս հայերը շուրջպարը անուանում էին *փապքի*՝ ոտքի հարուած, իսկ քեսապցիները՝ *վուօզ*՝ վազք: Շուրջպարի դադարից յետոյ սկսւում էր մենապարը, երբ պարողը պարային շարժումներով խաղային հնարքներ էր կատարում: Գոյութիւն ունէին նաեւ հովուական նուագարաններ, ինչպէս *ուպան* կամ *ալաչոխը*, *արղուրը*: Քեսապի շրջանի գիւղերում տարածուած է եղել նաեւ *գաւալը*, որ այժմ գործածող չկայ: Այսպիսով, հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ այդ նուագարանները շրջակայ արաբ, քուրդ եւ թուրքմէն ժողովուրդները թէեւ գործածել են, սակայն պարեղանակներն ու խաղեղանակները ունէին հիմնականում ծիսակարգային իւրայատկութիւններ: Այդ նուագարաններից այժմ որոշակի կենդանութիւն պահպանել են թմբուկը եւ զուռնան:

Ազգագրագէտ Յարութիւն Մարութեանի «Արհեստագործական որոշ աւանդոյթների վերափոխումը Տաւուշում (ըստ Իջեւան եւ Դիլիջան քաղաքների նիւթերի» յօդուածում (էջ 75-84) անդրադարձ է կատարւում վերոնշեալ քաղաքների արհեստագործական հարուստ աւանդոյթներին, որոնք, որոշակի փուլեր անցնելով, հասել են մինչեւ մեր օրեր: Հեղինակը քննարկման նիւթ է դարձրել գորգագործութեան եւ փայտագործութեան կենսավարումը այս շրջանում: Ըստ հեղինակի՝ Տաւուշում գործել են տարբեր տեսակի գորգեր, սակայն խորհրդային տարիներին ամենաշատ գործուող, լայն տարածում ունեցող կամ այլ կերպ ասած՝ «մակնիշային» (brand) գորգը համարւում է «դեղնաքիւնջը», որի հեղինակը Նունուֆար Էդիլեանն է. այս գորգի ստեղծումը թուագրվում է 1905ով: Մարութեանի կատարած հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ 1950-80ականներին տնայնագործական եղանակով գորգի գործումը ձեռք է բերել իւրատեսակ արդիւնաբերութեան ձեւ, որի պատճառների մէջ կարեւորագոյններից մէկը սպառման շուկայի առկայութիւնն էր: Իսկ շուկան ներկայացնում էր ընդգրկուն տարածք՝ ադրբեջանական Ղազախը, ինչպէս նաեւ ԽՍՀՄ այլ հանրապետութիւններ: Հեղինակը ցոյց է տալիս այն գործօնները, որոնք ազդեցին գորգագործութեան զարգացման վրայ. փակուեցին հումքի ներկրման, արտադրանքի սպառման ճանապարհները, վերացաւ պահանջարկը, տնայնագործական գորգի արտադրութիւնը դարձաւ ոչ-շահութաբեր եւ ոչ նպատակայարմար: Խօսելով այժմեան գորգագործութեան մասին՝ հեղինակը հաւաստում է, որ խոշորագոյն գորգագործական ձեռնարկութիւնները (Մեգէրեան, Թումֆենկեան) իրենց առաջ խնդիր են դրել վերակենդանացնելու հին, աւանդական հայկական գորգագործութեան թեմաները, գործել հնաոճ գորգեր:

Ինչ վերաբերում է փայտագործութեանը, ապա Տաւուշում դրա զարգացածութեանը նպաստող կարեւորագոյն գործօնը հումքն է, քանի որ Տաւուշը Հայաստանի ամենաանտառաշատ մարզերից մէկն է: Փայտի հետ կապ ունեցող արհեստաւորների ու արուեստագէտների մէջ հեղինակն առանձնացնում է 5 խումբ: Կան ծառերի արմատների վրայ փորագրութիւն անողներ, ծառերի բների մշակումից շրջանակ ստացողներ, յուշանուէր պատրաստողներ, փայտի կիսամշակ կտորների վրայ բնութեան տեսարաններ, թռչուններ եւ այլ պատկերներ ձեւակերտողներ, ինչպէս նաեւ արհեստաւոր-արուեստագէտներ, որոնք ձեռքի աւանդական գործիքներով ստեղծում են բարձրարուեստ աշխատանքներ: Հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ փայտի փորագրութեան աւանդական եղանակները կարծես թէ իրենց տեղն աստիճանաբար զիջում են փայտի մշակման այլ արհեստագիտական լուծումներին: Իջեւանի եւ Դիլիջանի արհեստագործական աւանդոյթների մէջ առկայ զարգացումները տեղ են գտնում զուգահեռ ընթացող միքանի ուղղութիւններով՝ այդկերպ ձեւաւորելով անցումային շրջանի համար բնութագրական հետաքրքիր վիճակներ:

Ազգագրագէտ Արգամ Երանոսեանը «Հայոց տոհմածառերի ազգագրական ուսումնասիրութիւն. յիշողութիւն եւ սերունդների տեսողական խօսոյթ» յօդուածը (էջ 85-92) նուիրել է հայոց տոհմածառերի տիպաբանական ուսումնասիրութեանը: Հեղինակը հայոց տոհմածառային մշակոյթը ձեւաւորող չորս ժամանակաշրջան է առանձնացրել՝ ԺԹ. դարի առաջին կէս, ԺԹ. դարի վերջից Ի. դարի սկիզբ, խորհրդային շրջան եւ յետխորհրդային շրջան: Մինչ բուն շրջանների մասին խօսելը՝ Երանոսեանը հայ մատենագրութիւնից բերում է տոհմածառերի օրինակներ, որոնք եղել են «Գահնամակ»ների եւ «Ձօրանամակ»ների տեսքով: Այնուհետեւ, ԺԷ. դարից սկսած՝ մարդկութեան առաջացման եւ զարգացման պատմութիւնը պատ-

կերուել է ծառի տեսքով: Այդ երեւոյթը հայ իրականութեան մէջ սկսեց գործածուել ԺԸ. դարից: Հեղինակը խորհրդային շրջանին բնորոշ է համարել տեղեկատուական եւ խորհրդանշական հարուստ նիւթ պարունակող տոհմածառերը, որոնցում առկայ է բնակավայրի, տոհմի հիմնադրման մասին բնագրային շարադրանք: Նոր շրջանի համար հեղինակն ընդգծում է որ այս շրջանում ստեղծուած տոհմածառերն ունեն յիշողութեան պահպանման կարեւոր գործառոյթ: Յետագայում, շրջաններում հայերի մէջ խորհրդանշող է դառնում կենաց ծառի դրսեւորումը, իսկ տոհմածառերում մարդիկ պատկերուած էին նոան վրայ: Ամփոփելով՝ հեղինակը նշում է, որ տոհմածառը, որպէս կարեւոր տեղեկատուութիւն հաղորդող տեսողական նիւթ, առկայ է ընտանիքների, տոհմերի մասին պատմող գրեթէ բոլոր գրքերում: Շատ յաճախ նաեւ դա դառնում է տուեալ ժամանակաշրջանի իւրօրինակ համապարփակ նկարագրութիւն:

«Կաթը եւ կաթնամթերքը հայ ժողովրդական բժշկութեան մէջ» յօդուածում (էջ 93-103) ազգագրագէտ Յասմիկ Յարութիւնեանը խօսում է հայ ժովորդական բժշկութեան դարաւոր աւանդոյթների մասին: Ըստ դաշտային ազգագրական նիւթերի՝ ժողովրդական բժշկութեան կենսունակութիւնը պայմանաւորուած է արհեստավարժ բժշկութեան հանդէպ բնակչութեան որոշակի մասի թերահաւատութեամբ: Հաշուի առնելով, որ կաթն ու կաթնամթերքը հայ ժողովրդական բուժամիջոցների մէջ ուրոյն տեղ են ունեցել՝ հեղինակը մանրամասնօրէն քննաբանում է դրանց ունեցած նշանակութիւնը, օգտագործման իւրայատկութիւնները, նաեւ այժմեան կենցաղավարումը: Ըստ հեղինակի՝ քանի որ կաթնամթերքը համարւում է դիւրամարս սնունդ, շատ տարբեր հիւանդութիւնների պարագայում այն օգտագործուել է որպէս սննդակարգի հիմնական մաս: Կաթը եւ կաթնամթերքը ժողովրդական բժշկութեան մէջ գործածուել են կանխարգելիչ, բուժիչ, նաեւ ախտորոշիչ նպատակով: Քննաբանելով ժողովրդական իմաստութեան որոշ երեւոյթներ՝ Յարութիւնեանը գալիս է այն եզրայանգման, որ այս միջոցները ժողովրդի բազմադարեան փորձի ու պրպտումների արդիւնք են, որոնք յաճախ հիմնաւորւում են նաեւ արհեստավարժ բժշկութեամբ: Սակայն կան դէպքեր, ըստ հեղինակի, որոնց պէտք է վերապահումով մօտենալ, քանզի նիւթը ժամանակի ընթացքում աղճատուել է, եւ դրա հնարաւոր օգտագործումը կարող է ունենալ վնասակար հետեւանքներ: Հեղինակն այն կարծիքին է, որ շարունակական ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն կարող են ընձեռել ոչ միայն ժողովրդական, այլեւ արհեստավարժ բժշկութեան համար, դրանք կարող են ունենալ ոչ միայն գիտական նշանակութիւն, այլեւ գործնական:

Էթնօբուսաբան Անժելա Ամիրխանեանը կատարած դաշտային ազգագրական նիւթերը ամփոփել է «Վայրի բոյսերի թթուները Լօռիում եւ Տաւուշում» յօդուածում (էջ 104-13): Հեղինակը, 2009-15ին կատարած ուսումնասիրութիւնների արդիւնքում, գրանցել է 20ից աւելի վայրի բուսատեսակների անուանումներին եւ դրանց գործառոյթներին վերաբերող բանահաւաքչական նիւթեր: Թթուներից շատերը առատօրէն կիրառւում են գարնան եւ ամռան սկզբին, իսկ որոշները՝ ձմռանը: Հեղինակը նշում է թթուների գործածութեան առանձնայատկութիւնները, թթու դնելու աւանդական եղանակները, թթուների պահածոյացման նոր եղանակները: Ըստ հետազօտման, վայրի բոյսերից որոշները՝ սինդրիկ, շուշան, բոխու, ջոնջոլ, բաւականին յարգի են համարւում, եւ մինչ օրս էլ զարդարում են տօնական սեղանները: Ըստ դաշտային դիտարկումների՝ խորհրդային շրջանի համեմատ թթուների կիրառութիւնը զգալիօրէն կրճատուել է, որի պատճառը հատիկային ուտեստի նուա-

զումն է: Հեղինակը նշում է, որ հայոց ուտեստի համակարգում թթուները ամէնից շատ կարեւորւում են ձմռանը, քանի որ այդ շրջանում կենդանական իւղով հատիկաւոր կերակուրները գերակշռում են: Վայրի թթուները գործածւում են նաեւ ապուրներ եփելու, տապակելու համար: Հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ վայրի բոյսերը, որպէս կենսոլորտի մաքուր, վիտամիններով հարուստ մթերք, հետզհետէ աւելի արժէքաւոր են դարձել: Սա նպաստում է ինչպէս թթուների պահպանմանը, այնպէս էլ նոր կերակրատեսակների ստեղծմանը: Թթուների տեսակները որոշակի քանակութեամբ պահպանուել են, յատկապէս գարնանը դրանք կարեւոր տեղ են գրաւում հայկական խոհանոցում: Թթուի համար պիտանի բոյսերը այժմ հասանելի են դարձել նաեւ քաղաքաբնակներին:

Ազգագրագէտ Գարեգին Գրիգորեանը «Փոխօգնութեան տարրերը Տաւուշի սահմանամերձ գիւղերում» յօդուածի (էջ 114-122) մէջ անդրադարձ է կատարում հարեւանների, ազգակիցների, համայնքների միջեւ աւանդականօրէն ձեւաւորուած փոխօգնութեանը: Յօդուածում նշւում է, որ փոխօգնութեան ցուցանիշը, ըստ էթնօսըն կերաբանական հետազօտութիւնների, յատկապէս Տաւուշի մարզում բարձր ցուցանիշ է գրաւում՝ 68%: Հեղինակը տնտեսական փոխօգնութեան ամենատարածուած ձեւն համարում է խոտհունձը: Սրան զուգահեռ գործուն է եղել նաեւ այգեգործութիւնը, դաշտավարութիւնը, անասնապահութիւնը: Փոխօգնութեան առօրեայ-կենցաղային ձեւերից մէկը հաց թխելն է համարուել, որը կատարուել է 5-7 հարեւան կանանցով: Ըստ հեղինակի՝ Տաւուշի մարզի սահմանային բնակավայրերից հաւաքած նիւթերից կարելի է եզրակացնել, որ օգնութեան այդ ձեւերը կարեւոր դեր են կատարում հանրային, ընտանեկան, ազգակցական յարաբերութիւններում: Եւ այդ ձեւերը, որոշակի վերապահումներով, սակայն շարունակում են կենցաղավարել եւ միտումներ կան նաեւ վերականգնելու մոռացութեան մատնուած ձեւերը, քանզի ընկերա-տնտեսական արդի պայմաններում փոխօգնութեան շնորհիւ հնարաւոր է դառնում դիւրացնել մարդկանց առջեւ ծառացած տարբեր խնդիրների լուծումներ:

Ազգագրագէտ Թորգոմ Աղանեանի «Մշակութային աւանդոյթների պահպանման եւ մշակութային էկոլոգիայի խնդիրները յետաղէտեան Գիւմրիում» յօդուածը (էջ 123-30) նուիրուած է Գիւմրու մշակութային պատշաճեցման, մշակութային կենսոլորտի խնդիրների վերլուծութեանը: Հեղինակը խօսում է Սպիտակի երկրաշարժի հետեւանքով մարդկանց կրած բարոյահոգեբանական եւ ընկերաբանական զրկանքների եւ դրանց թողած ազդեցութեան մասին: Ըստ հեղինակի՝ մարդու հոգեկերտուածքի վրայ վատ ազդեցութիւն է թողնում կեղտոտ, քանդուած փողոցները, կիսաւեր կառոյցները, աղբի հաւաքատեղիի վերածուած այգիները, պուրակները: Այս պատկերը կարելի է տեսնել Գիւմրիում, ինչը ենթադրել է տալիս, որ այդ միջավայրում տասնամեակներ շարունակ ապրող մարդը այլեւս ուրիշ կերպ է ընկալում մշակոյթը: Եւ որպէսզի մարդկանց մէջ առաջանայ երջանկութեան, յարմարաւետութեան եւ ապագայի նկատմամբ վստահութեան բարձր զգացում, պէտք է բարելաւել կենսական միջավայրի ցուցանիշերը: Արտակարգ պայմաններում, երբ մարդը ապրում է բարձր նեարդային լարուածութիւն, մեծ նշանակութիւն է ստանում հոգեկան պատշաճեցման ունակութիւնը: Այսինքն՝ արուեստի ստեղծագործութեան ընկալումը բերում է ներքին լարուածութեան թուլացման, օգնում է վերականգնելու հոգեկան հաւասարակշռութիւնը: Ըստ հեղինակի հաւաքած նիւթերի՝ Գիւմրին իւրօրինակ ուժանիւթի բացառիկ այցեքարտ է: Բանասացները նշում են, որ երկրաշարժից յետոյ մշակոյթի մէջ մեծացել է արհեստավարժութիւնը, աւելա-

ցել են պետական նուագախմբերը՝ սիմֆոնիկ, ժողովրդական: Հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ Գիւմրու բնակչութեան մէջ նկատւում է կենցաղի եւ մշակոյթի վերընձիւղման երկուութիւն: Կեանքի բոլոր բնագաւառներում որոշակիօրէն պահպանւում է աւանդականը, որից ձուլւում է նաեւ ժամանակակիցը: Հեղինակը այն համոզմունքն է յայտնում, որ մշակութային միջավայրը կարեւոր նշանակութիւն ունի մարդկանց ինքնազգացողութեան եւ յատկապէս երեխաների գեղագիտական ճաշակի ձեւաւորման վրայ:

Մշակութային մարդաբան Գոհար Ստեփանեանի «Բացառապէս կրծքով կերակրման վեցամսեակը՝ որպէս մօր եւ մանկան կեանքի անցումային փուլ» յօդուածն (էջ 131-41) առանձնանում է նրանով, որ այս հետազօտութեան աղբիւրը համացանցն է՝ Դիմագիրը (Facebook): Հեղինակը քննում է կրծքով կերակրման (ԿԿ) աւանդական եւ արդի կիրառումները: Ըստ նրա՝ ԿԿ ընթացքի փորձութիւնների զգալի մասը պայմանաւորուած է աւանդական մօտեցումների արդիականութեամբ, որոնք որոշակի փոխյարաբերութեան մէջ են մտնում նաեւ մեր ժամանակների մօտեցումների հետ: Կատարած հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ վեցամսեակում ԿԿ բացառիկութեան առումով կան նաեւ նկատելի տարակարծութիւններ: Մասնաւորաբար, աւանդաբար ընդունուած կիրառում է եղել կրծքի կաթի կամ հում սերի մէջ փշրած փշատ, ինչպէս նաեւ կովի կաթ տալը: Հեղինակը դիտարկում է վեցամսեայ շրջանն իբրեւ անցումայն փուլ մօր եւ մանկան կեանքում եւ նշում, որ առաջին վեցամսեակում երեխայի միակ սնունդը մայրական կաթն է: Մայրիկներն այս ընթացքը բնորոշում են որպէս ճանապարհորդութիւն, այլ կերպ ասած՝ սա անցումային ձեւին նմանուող իրողութիւն է: Հետաքրքիր է, որ մայրերի քննարկումներում՝ յղիանալու եւ երեխայի ծննդեան հետ միասին մայր դառնալու պայման է համարւում ԿԿն: Այս երկու փուլերի համանմանութիւնը խօսում է այն մասին, որ յետծննդեան փուլում կարեւորւում է հենց այդ՝ ներարգանդային միասնութեան շարունակութեան ապահովումը, ինչն էլ դառնում է գլխաւոր փորձութիւն: Որպէս ամփոփում՝ հեղինակը նշում է, որ եղել է վկայութիւն, ըստ որի՝ առաջին վեցամսեակում տղայի եւ աղջկայ հագուստների միջեւ առանձին տարբերակում չի նկատուել, ինչն էլ խօսում է այն մասին, որ նորածնի սեռային տարբերակման համար եւս անցումային է համարուել առաջին վեցամսեակը:

Մշակութային մարդաբան Եուլիա Անտոնեանի «Հայաստանում խաչքաւորի պակաս չկայ. խաչքաւորի ինստիտուտը ժամանակակից Հայաստանում» յօդուածը (էջ 142-53) ազգագրական ակնարկ է, որ վերաբերում է խաչքաւորի պաշտօնի ընկերաբանական գործառոյթներին եւ դերակատարման փոխակերպումներին: Խօսելով խորհրդային տարիների մասին՝ հեղինակը նշում է, որ այդ շրջանում խաչքաւորն ունեցել է խորհրդանշական պաշտօն, որը ծիսական խորհրդի մէջ որեւէ կարեւոր նշանակութիւն չի ունեցել, եւ որի մասնակցութիւնը սահմանափակուել է Քրիստոսի մկրտութեան օրով: Ժամանակակից Հայաստանում խաչքաւորի կերպարն ակնյայտօրէն ձեռք է բերել նոր իմաստներ եւ ընկերաբանական աւելի նշանակալից դերակատարում: Խաչքաւորը դառնում է եկեղեցական ծէսերի եւ եկեղեցական տնտեսական կեանքի աշխարհիկ մասնակից: Խաչքաւորը նաեւ ունի նիւթական պարտականութիւններ՝ վերանորոգել եկեղեցին, ֆինասաւորել եկեղեցական տարբեր միջոցառումներ: Ըստ հեղինակի՝ խաչքաւորների շարքում կարելի է տեսնել քաղաքապետերի, գործարարների, բարձրաստիճան զինուորականների, բայց ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ ոչ՝ բժիշկ, ուսուցիչ կամ արուեստագէտ (թերեւս, մէկ-երկու բացառութեամբ): Հեղինակը եզրափակում է, որ այժմ այդ դե-

րը սովորական բարեգործի դեր չէ. նա եկեղեցու կամ համայնքի ընտրած եւ հաստատած «պաշտօնական» բարեգործն է, եւ սա էլ բարոյականութեան չափումնեերին աւելացնում է պատուի «ձեւակերպումը», ինչը շատ կարեւոր է հենց հայոց մշակութային միջավայրում:

«Դաշտային հետազօտութիւններ»ը եզրափակում է բանագէտ Լուսինէ Ղռէջեանի յօդուածը (էջ 154-64)՝ նուիրուած «Սեւանի աւազանի բանահիւսական եւ ազգագրական մշակոյթի արդի վիճակը»ին: Այս յօդուածը 2008-15ի դաշտային դիտարկումների արդիւնքում հաւաքագրուած նիւթերի ներկայացումն է: Հեղինակի ուսումնասիրման դաշտը Գեղարքունիքի մարզն է՝ որպէս մէկ ամբողջական բանահիւսական մշակութային տարածք, որի բնակչութեան ազգագրական եւ բարբառային բազմազանութիւնը նկատելի կնիք է թողել նրա հոգեւոր մշակոյթի եւ մասնաւորաբար՝ բանահիւսութեան վրայ: Ըստ հեղինակի՝ Սեւանի աւազանում համեմատաբար կենսունակ են վիպական ժանրի ստեղծագործութիւնները, որոնց մէջ առանձնապէս հետաքրքիր են երգիծական զրոյցները, զուարճախօսութիւնները, երդումները, օրհնանքները, սնահաւատական զրոյցները: Ճամբարակի շրջանում կատարած հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ 20-40 տարեկանների շրջանում պատմուող նիւթը հիմնովին գրական լեզուով է, իսկ տարիքային աւելի բարձր խմբի ներկայացուցիչները դեռեւս պահպանել են բարբառը: Հեղինակը նշում է, որ իրենց ազգագրական նկարագրով աւելի պահպանողական եւ աւանդապահ են մարտունեցիներն ու վարդենիսցիները, ովքեր Մուշից, Ալաշկերտից եւ Դիադինից գաղթած վերաբնակիչների շառաւիղներ են: Գաւառի շրջանի մասին խօսելիս՝ հեղինակը նշում է, որ այստեղ բանահիւսութեան աւանդական ժանրային համակարգն իր տեղը զիջում է աւելի փոքրածաւալ տեսակներին՝ անեկդոտ-զուարճախօսութիւն, աւանդական զրոյց, ասոյթ եւն.: Խօսելով Վարսեր, Ծովագիւղ, Գեղամաւան, Նորաշէն համայնքների մասին՝ հեղինակը նշում է, որ այստեղից մեծ քանակութեամբ խնջոյքի, հարսանեկան, պանդխտութեան երգեր, խաղիկներ եւ տարածքի տեղանունների շուրջ հիւսուած բազմաթիւ աւանդազրոյցներ են գրառուել:

Գ. Յաջորդ բաժնի՝ «Տեքստաբանական հետազօտութիւններ»ի 4 յօդուածները վերաբերում են միջնադարեան մատենագրական եւ նոր ժամանակների բանահիւսական տարբեր բնագրերի բանագիտական քննութեանը:

«Անէծքը եւ օրհնանքը Ստեփանոս Օրբէլեանի *Պատմութիւն նահանգին Սիսական* երկում» յօդուածում (էջ 166 -76) մշակութաբան Սիրանուշ Առաքելեանը ցոյց է տալիս անէծք-օրհնանքի մշակութային ընկալումները, դրանց բնոյթը եւ հաւատալիքային յենքը, անէծքների բնագրային կառուցուածքը եւ մուսուլմաններին ուղղուած անէծքները: Հեղինակը քննում է Սիւնեաց աշխարհի վանքերի վիմական արձանագրութիւններում, արքունական եւ եկեղեցական գրութիւններում, վճռագրերում, շրջաբերականներում, կտակագրերում, նզովագրերում առկայ անէծք-օրհնանքի ժողովրդական հնագոյն ըմբռնումներն ու իրաւաբանական կիրառութիւնները: Երկում յիշատակուած եւ հենց պատմիչի տուած անէծքները ուղղուած էին ոչ միայն քրիստոնեայ աշխարհականներին եւ հոգեւորականներին, այլեւ մուսուլմաններին: Հետաքրքրական է, որ անէծքը ոչ միայն վախի մթնոլորտ է ստեղծել, այլեւ հանրութեան գիտակցութեան մէջ առաւել չափով ամրապնդել է քրիստոնէական վարդապետութեան վախճանաբանական (վախճանական ճակատագրի) պատկերացումները՝ խթանելով հաւատալիքային նոր արժէհամակարգի ձեւաւորումը եւ որդեգրած վարդապետութեան ամրակայումը: Ըստ հեղինակի՝ անէծքի բնագիրը

հիմնականում սկսւում է, քրիստոնեաների պարագայում՝ «նզովուած լինես», մուսուլմանների պարագայում՝ «մերժուի եւ բիւր հազար նալլաթ կրի» բանաձեւումներով, որին նախորդում կամ յաջորդում է «ումի՞ց» հարցադրումը: Հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ Օրբէլեանն իր երկում յիշատակել է Սիւնեաց աշխարհին՝ մասնաւորապէս Սիւնեաց մետրոպոլիտական աթոռին վերաբերող՝ իր ձեռքի տակ եղած ե՛ւ մագաղաթեայ, ե՛ւ վիմական արձանագրութիւնները, որոնք եզրափակւում են հմայական-կիրառական բանահիւսութեան մաս կազմող անէծք-օրհնանքներով՝ ուղղուած ինչպէս քրիստոնեաներին, այնպէս էլ մուսուլման իշխողներին:

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում բանագէտ Արմէն Սարգսեանի «Թաղման ժողովրդական ծիսակարգային տարրերի արտացոլումը հայկական անեկդոտներում» յօդուածը (էջ 177-86), որում հեղինակը ներկայացնում է թաղման ծիսակարգի հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ: Սարգսեանը, տարբեր իրավիճակներով պայմանաւորուած, մահամերձի՝ մահուանից առաջ արտայայտած ցանկութիւն, հանգուցեալին լողացնել, գերեզման փորել, հոգեհաց, հանգուցեալի յիշատակը յաւերժացնող տապանաքար դնել, տապանաքարային գրութիւններ, այս թեմաներին վերաբերող զաւեշտներ է ներկայացնում, որոնք ցոյց են տալիս մարդկանց՝ անգամ ցաւի մէջ չընկճուելը, տոկունութիւն եւ կենսախնդութիւն պահպանելը: Հեղինակը նշում է, որ թաղումներին առնչուող երգիծական մանրապատումների ստեղծման պատճառ կարող է դառնալ Հայաստանի առանձին շրջաններում կամ որոշ բնակավայրերում ու արտերկրի հայաշատ վայրերում թաղման ազգային աւանդական ընդհանուր ծիսակարգից տարբերուող, երբեմն էլ՝ արտառոց ու զաւեշտալի թուացող արարողակարգերի կիրառումը: Շատ հետաքրքիր է նաեւ, որ պատմական Հայաստանի տարբեր գաւառներից գրառուած՝ յուղարկաւորութեանը առնչուող ժողովրդական ստեղծագործութիւններում մեծ թիւ են կազմում հանգուցեալի վրայ լաց լինելու զուարճախօսութիւնները: Դրանցից շատերը տեղում ամրագրւում են այդ արարողակարգին ներկայ գտնուող առաւել սթափ որոշ մասնակիցների յիշողութեան մէջ եւ յետագայում ծաղկեցւում ու որոշակի կառոյցի մէջ են դրւում՝ անեկդոտի տեսքով շարունակաբար պատմուելով: Հեղինակը գալիս է այն եզրայանգման, որ այս երեւոյթն իր մէջ ամբարում եւ պահպանում է այդ արարողակարգին առնչուող բազմաթիւ ինքնատիպ տարրեր, որոնք պատկերացում են տալիս հայ մարդու կեանքի, կենցաղի, սովորոյթների, նիստուկացի, մարդկային փոխյարաբերութիւնների մասին:

Բանագէտ-հեքիաթագէտ Մարինէ Խեմչեանի «Աստծոյ միջամտութեան դրուագը հայ ժողովրդական հեքիաթների սիւժէներում» յօդուածում (էջ 187-98) հեղինակն անդրադարձ է կատարում *Աստուած* բառի յիշատակութիւններին, Աստծոյ միջամտութեան տեսակներին՝ հերոսի խնդրանքը լսելով, առանց հերոսի խնդրանքի, հերոսին երազում խորհուրդներ տալով, ժառանգի մոտիւին եւ խնդրանքը առ Աստուած, առանց խնդրանք նուիրատուութեան եւ միջնորդաւորուած նուրատուութիւն թեմաներին: Հեղինակը փաստում է, որ Աստծոյ տեսանելի կամ անտեսանելի ներկայութիւնն առկայ է պատմական Հայաստանի պատմազգագրական բոլոր երկրամասերի հեքիաթների գերակշիռ մասում: Հայկական բազմաթիւ հեքիաթներում հերոսի գործողութիւնների ընթացքում ծագած խնդիրների լուծման համար երբեմն Աստուած չի սպասում, որ իրեն խնդրեն, այլ ինքն է որոշում նուիրատուութիւն կատարել, եւ հենց նուէ տալով էլ Աստուած երբեմն դառնում է նաեւ խորհրդատու: Պատահում է նաեւ, որ Աստուած միջնորդաւորուած է ներկայանում հերոսին՝ ծերունու, հրեշտակի կերպարանքով: Հեղինակն

ամփոփում է յօդուածը՝ գալով այն եզրայանգման, որ հեքիաթի հերոսին Աստուած ուղեկցում է ամէնուրեք, Աստծոյ նուիրատուութիւնը միշտ ուղեկցւում է խորհրդատուութեամբ՝ նուէրը ճիշտ օգտագործելու նպատակով, քանզի հակառակ դէպքում այն չի կարող ծառայել յօգուտ հերոսի:

Բանագէտ-հեքիաթագէտ Գոհար Մելիքեանը «Феминный аспект сказок цикла "Умная дочь крестьянина» (Կանացիութեան արտացոլումը «Գիւղացու խելացի աղջիկը» հեքիաթախմբում) յօդուածում (էջ 199-207) քննաբանում է հայ ժողովրդական հեքիաթների պատկերացումները՝ հերոսուհիների ողջախոհութեան, հնարամտութեան եւ կանացի հմայքի մասին: Աշխատանքում անդրադարձ է կատարւում պատմողի եւ նիւթը հաւաքագրողի սեռի խնդրին, Գրիմ եղբայրների «Գիւղացու խելացի դուստրը» հեքիաթին եւ դրա հայկական տարբերակին, այլաբանութիւնների մեկնաբանման մոտիւներին եւ օջախի խորհրդաբանութեան: Հեղինակը յատկանշական է համարում այն, որ անգամ տղամարդ ասացողների վերապատումներում տեսանելի է կանանց դերի արժեւորումը: Մելիքեանը «Գիւղացու խելացի աղջիկը» հեքիաթի օրինակով ուսումնասիրում է Հայաստանի պատմազգագրական տարբեր շրջաններից գրառուած 22 տարբերակները: Ըստ դրանց՝ հերոսուհիներն ինքնաբաւ են, ընդունակ են իրենց կայացրած որոշումներով պաշտպանելու թէ՛ իրենց, թէ՛ իրենց հարազատներին, լուծելու հանելուկներ, որոնց պատասխանները յաճախ տղամարդկանց չի յաջողւում գտնել: Հեղինակի եզրայանգումը հետեւեալն է՝ հեքիաթային այս սիւժէները պատկանում են այն հեքիաթների շարքին, որոնցում կինը իմաստալից խօսքով հնարամտօրէն արտայայտում է իր դիրքորոշումը՝ հասարակութեան մէջ շահեկանօրէն ամրապնդելով իր կարգավիճակը: Եւ շատ յաճախ հերոսուհին հակասութեան մէջ չի մտնում հանրութեան հետ, բայց որպէսզի հասնի իր նպատակին՝ օգտագործում է իր կանացի հմայքը եւ բնատուր մտածելու ընդունակութիւնը:

դ. Ժողովածուի վերջին բաժինը, որ վերնագրուած է «Բանագիտութեան եւ ազգագրութեան պատմութիւն», ներառում է 3 յօդուած: Առաջինը համշէնագէտ-բանագէտ Սերգէյ Վարդանեանի «Կրօնափոխ համշէնահայերի բարբառի եւ բանահիւսութեան ուսումնասիրութեան պատմութիւնից» ուսումնասիրութիւնն է (էջ 210-28): Այստեղ ժամանակագրական հերթականութեամբ անդրադարձ է կատարւում Թուրքիայում եւ Կենտրոնական Ասիայում բնակուող կրօնափոխ համշէնցիներից կատարուած բանահիւսական եւ բարբառագիտական գրառումներին: Հեղինակը նշում է, որ 1984ին եւ 1987ին Ղրղզստանում, Ղազախստանում եւ Ուզբեկստանում կրօնափոխ համշէնահայերից գրառած նիւթերի մի մասը հրատարակել է *Ձայն համշէնական* ժողովածուի 3րդ հատորում: Վարդանեանը նշում է, որ առաջիններից մէկը, ով փորձել է ուսումնասիրել կրօնափոխ համշէնցիների Խոփայի խօսուածքը, վրացի լեզուաբան Իոսէբ Ղիփշիձէն է: Հարվըրտի համալսարանի երեք աշխատակիցներ՝ Բերթ Վոքսը, Սերջիօ Լա Փորթան եւ Էմիլի Թաքըրը, Համշէնի բարբառի Խոփայի խօսուածքի թուրցեւանցիների (դրսեցիների՝ այլ գիւղերի բնակիչների) ենթախօսուածքով, Պոստոնում ձայնագրել են զուարճալի մի պատում, որը յետագայում տպագրուել է ԱՄՆ հանդէսներից մէկում: Վարդանեանն իր կատարած ճամփորդութեան ընթացքում գրառել է համշէնահայերի բանահիւսութեան արձակ եւ չափածոյ բազմաթիւ նմուշներ՝ երգեր, խաղիկներ, որոնք յետագայում տեղ են գտել հայկական երգիչ-երգչուհիների, ազգագրական երգի-պարի խմբերի երգացանկում:

Բանագէտ Թամար Հայրապետեանը «Յովսէփ Օրբելու բանահաւաքչական եւ բանագիտական գործունէութիւնը» յօդուածում (էջ 229-40) ներկայացնում է մեծանուն գիտնականի անձը, հայ քաղաքական եւ մշակութային կեանքում նրա ունեցած դերը: Հեղինակը խօսում է Օրբելու կատարած հսկայածաւալ աշխատանքի մասին՝ նրան բնորոշելով որպէս հնագէտ, վիմագրագէտ, աղբիւրագէտ, բարբառագէտ: Անդրադարձ է կատարում Օրբելու ազգագրական-բանահաւաքչական գործունէութեանը, ինչպէս նաեւ նրա մասնագիտական գործունէութեան վերջին շրջանին: Օրբելին առաջիններից էր, որ գրառել եւ ուսումնասիրել է պատմական Հայաստանի Մոկս գաւառի հայ եւ քուրդ բնակչութեան բառուբանը, կեանքը եւ կենցաղը, սովորոյթները, լեզուական առանձնայատկութիւնները: Նա համախմբագրել է «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի համահաւաք բնագիրը եւ ռուսերէն թարգմանութիւնը, նորովի մեկնաբանել դիւցազնավէպի միջազգային զուգահեռները՝ ընդգծելով դրա ինքնատիպութիւնն ու գեղարուեստական արժանիքները: Հեղինակը, իր կատարած ուսումնասիրութիւնների շրջանակում, գալիս է այն եզրայանգման, որ Օրբելու կեանքում առանձնայատուկ տեղ են ունեցել սկզբունքայնութիւնը, մարդկային ճակատագրերի նկատմամբ անթաքոյց կարեկցութիւնը:

Այս բաժնի եւ ընդհանուր ժողովածուի վերջին յօդուածը ազգագրագէտ Վարդիթեր Մադաթեանի «"Ազգ" հասկացութիւնը հանրային մարմինների շարքերում. "Ազգ"ի, ազգակցական կապերի դրսեւորումներ Տաւուշում (19-20րդ դդ.)» յօդուածն է (էջ 241-59): Հեղինակը անդրադարձ է կատարում խորհրդային եւ հայ ազգաբանութիւնում արիւնա-ազգակցական յարաբերութիւնների ուսումնասիրութեանը՝ մասնաւորաբար Տաւուշում այդ կազմակերպութեանը առնչուող գրականութեանը եւ աղբիւրներին: Նշում է, որ ազգ-արիւնակցական կապերի յայտնի դրսեւորումներից են ազգակից գիւղերի խմբերը, ազգակցական թաղերը, փոխօգնութեան ձեւերը ազգակիցների հետ, գերեզմանոցները եւն.: Հեղինակի հաւաքած դաշտային նիւթերի համաձայն՝ շատ են գիւղերի հիմնադիր "ազգ"երին նուիրուած յուշարձանների կառուցումը, ազգի անունով աղբիւր-յուշարձանների եւ դրանց կից հանգստի գօտիների կառուցումը, ազգի մասին գրքոյկների, նկարագրքերի, տոհմածառերի պատրաստումը:

Ամփոփելով *ՀԱԻԱ-4* հատորի քննութիւնը՝ կարող ենք ասել, որ դրանում ընդգրկուած յօդուածների հեղինակները իւրովի են մօտեցել իրենց առաջ դրուած խնդիրներին, սակայն որոշ յօդուածների պարագայում երբեմն պակասում է յստակութիւնը, շատ յաճախ կարելի էր քննաբանման նիւթը աւելի տարողունակ ներկայացնել, ինչը հնարաւորութիւն կը տար ընթերցողին առաւել լաւ պատկերացնելու երեւոյթի էութիւնը: Այդուամենայնիւ, ժողովածուն հարուստ է նորոյթներով եւ հայոց պատմամշակութային ժառանգութեան զանազան ոլորտներին վերաբերող յօդուածներով: Յատկանշական է նաեւ հատորի կուռ կառուցուածքը, տրամաբանօրէն տարբերակուած ենթաբաժինները՝ ըստ իմաստային ոլորտների եւ կատարուած ուսումնասիրութիւնների մեթոդաբանութեան, ինչպէս նաեւ յօդուածների նոյնական կառուցուածքը եւ յղման համակարգի ընդհանուր սկզբունքները, որոնք գիտական լուրջ ձեւ են հաղորդում կատարուած հետազօտութիւններին:

ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՅԵԱՆ
khechoyan.anahit@mail.ru

**Հենրիկ Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, հինգ հատորով*, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., Երեւան, 2021-2022:**




Ամերիկաբնակ գրասէր բարերարներ տէր եւ տիկին Յովսէփ եւ Քարոլին Նալպանտեանների հովանաւորութեան ու սիրայօժար պատրաստակամութեան շնորհիւ անուանի բանասէր-գրականագէտ, յայտնի միջնադարագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր Հենրիկ Բախչինեանը հրապարակ է բերել իր հերթական մեծարժէք ծաւալուն ուսումնասիրութիւնը՝ «Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը» խորագրով, կազմուած հինգ ընդարձակ հատորներից, որը, ինչպէս հեղինակն է բնորոշում, «*հայ միջնադարեան գրաւոր-անհատական բանաստեղծութեան պատմութիւնը ամբողջականօրէն եւ համակարգուած ներկայացնելու առաջին փորձն է*»[1]:

Եւ իսկապէս, նման տարողութեամբ քննութիւն մեզանում կատարւում է առաջին անգամ, որը թանկագին արգասիքն է Բախչինեանի բազմամեայ տքնաջան աշխատանքի, ով տարիներ զբաղւում է հայ միջնադարեան գրականութեամբ: Նման ուսումնասիրութեան կարիքը վաղուց զգալի էր մեր բանասիրութեան մէջ:

Անշուշտ, հայ միջնադարեան բանաստեղծները վաղուց են գնահատուել, իսկ նրանց ստեղծագործութիւնները՝ արժանացել գրականագիտական վերլուծութիւնների, բնագրագիտական հետազօտութիւնների, անուանի բանասէր-գրականագէտներ են անդրադարձել հայ միջնադարեան քնարերգութեանը: Սակայն, աւելի

[1] Հենրիկ Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Ա. Ոսկեդարից մինչեւ Նարեկացի (5-10րդ դդ.)*, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., Երեւան, 2021, էջ 5:

յաճախ գրելով հայ միջնադարեան գրականութեան զարգացման ընթացքը ներկայացնող ամբողջական ուսումնասիրութիւններ եւ առանձին-առանձին, համապատասխան մենագրական գլուխներ նուիրելով միջնադարեան նշանաւոր հեղինակներից իւրաքանչիւրին, իրենց աշխատանքում, ուսումնասիրուող նիւթի ծիրով պայմանաւորուած նաեւ, հասկանալի պատճառով նրանք անհրաժեշտ չափով սպառիչ ու ամբողջական մեկնաբանութիւն չեն տուել հայ բանաստեղծութեան գրապատմական ուղուն վերաբերող բազմաթիւ հարցերի: Գրուել են նաեւ մենագրական բնոյթի հետազօտութիւններ, որոնցում սովորաբար հեղինակներն իրենց ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնները գլխաւորապէս կենտրոնացրել են որեւէ հեղինակի ու նրա ստեղծագործութեանը առնչուող հարցերի վրայ: Եւ ահա, գիտական շրջանառութեան է դրւում մի տարողունակ ուսումնասիրութիւն, որը նուիրուած է հայ միջնադարեան բանաստեղծութեանը՝ սկսած անհատական՝ որպէս եկեղեցական ծիսական երգի գրական բաղադրիչ հանդիսացող երգ-բանաստեղծութեան սաղմնաւորումից, ձեւաւորումից ու կայացումից մինչեւ ԺԸ. դար՝ ներառեալ Սայեաթ-Նովան:

Բախչինեանը այս համարձակ ձեռնարկութեանը հասել է ոչ դիպուածօրէն ու անմիջապէս: Նրա աշխատասիրութեամբ տարբեր տարիների լոյս են տեսել Պաղտասար Դպիրի չափածոյ գործերի ամբողջական ժողովածուն եւ մի ուսումնասիրութիւն՝ նրա մասին, տպագրուել են ԺԵ. դարի եւ ԺԲ.-ԺԸ. դարերի հայ գրականութեանը, ապա նաեւ շարականագրութեանը նուիրուած ուսումնասիրութիւններ, կազմուել են շարականների ժողովածուներ՝ ըստ հեղինակների, նաեւ զուգահեռ աշխարհաբար վերածումներով ու քննութեամբ: Նոյն սկզբունքով Բախչինեանը կազմել եւ հրատարակել է Ներսէս Շնորհալու ժամերգերը, Գրիգոր Նարեկացու գանձերն ու տաղերը, Սայեաթ-Նովայի եռալեզու բանաստեղծական ժառանգութիւնը: Կազմել է նաեւ Ֆրիկի, Յովհաննէս եւ Կոստանդին Երզնկացիների, Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծական ժառանգութիւնն ընդգրկող հատորներ[2]: Ասել է թէ հայ միջնադարեան բանաստեղծութեան հարուստ անդաստանը իր զանազան կողմերով եւ բնագաւառներով համակողմանիօրէն ծանօթ է եղել Բախչինեանին, որից յետոյ միայն - ինչը տրամաբանական է - հնարաւոր կը լինէր համարձակութիւն առնել՝ ձեռնարկելու նմանօրինակ մի ծաւալուն ուսումնասիրութիւն:

Ուսումնասիրութիւնը կազմուած է հինգ հատորներից, որոնցից իւրաքանչիւրը նուիրուած է պատմական որոշակի ժամանակաշրջանի՝ «Ա. Ոսկեդարից մինչեւ Նարեկացի (5-10րդ դդ)», «Բ. Մինչեւ Շնորհալի եւ յետոյ (11-12րդ դդ.)», «Գ. Երզնկացիներ, Ֆրիկ, Թլկուրանցի (13-14րդ դդ.)», «Դ. Մինչեւ Աղթամարցի եւ յետոյ (15-16րդ դդ.)», «Ե. Մինչեւ Սայեաթ-Նովա (17-18րդ դդ.)»:

Հատորներից իւրաքանչիւրը գիտական տեսակէտից հետաքրքիր է հայ չափածոյ խօսքի զարգացման ընթացքը պատկերացնելու առումով, ինչպէս նաեւ հայ միջնադարեան գրականութեան մէջ եղած բանաստեղծական տեսակները լիովին սահմանելու դիտակէտից:

Իր աշխատանքին մօտենալով բացառիկ խնամքով եւ աչալրջութեամբ, ինչը օրինաչափ է Բախչինեանի համար, անուանի գիտնականը, ուղենիշ ունենալով Մանուկ Աբեղեանի *Հայոց հին գրականութեան պատմութիւն* աշխատութիւնը, ինչպէս նաեւ այլ ուսումնասիրողների՝ հայ միջնադարեան բանաստեղծութեանը

[2] Նոյն, էջ 8:

նուիրուած հետազօտութիւնները, երբեմն ընդառաջելով, յաճախ էլ վիճարկելով նրանց առաջադրած տեսակէտերը[3], ներկայացրել է հայ բանաստեղծութեան գրապատմական երկար ուղին՝ համապատասխան փուլերով: Օրինակ, Բախչինեանը ընդունելի չի համարում անուանի բանասէր-երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանի այն կարծիքը, թէ ժամագրքային երգը կապւում է բացառապէս Շնորհալու անուանը: Այլ բան է, որ Շնորհալու շնորհիւ ժամերգը դարձաւ ինքնուրոյն եւ բարձրարժէք երաժշտաբանաստեղծական ստեղծագործութիւն[4]: Բախչինեանը չի ընդունում նաեւ այն կարծիքը, թէ Ե. դարի հեղինակ Դաւիթ Քերթող-Քերականի՝ Տիգրան Երուանդեանին նուիրուած ներբողը բանաստեղծութիւն է: Բանասէրի փաստարկումներով՝ այդ երկը, որից ընդամէնը մի հատուած է պահպանուել, զուտ ճարտասանական սեռի գործ է[5], որովհետեւ, ինչպէս ինքն է բացատրում, «*Ճարտասանութիւնը վերաբերում է գեղարուեստական արձակին, բանաստեղծութիւնը՝ չափաբերուած գեղարուեստական խօսքին*»[6]: Իսկ Է. դարի հեղինակ Դաւթակ Քերթողի յայտնի «Ողբք ի մահն Ջուանշիրի մեծի իշխանի» ստեղծագործութիւնը, հակառակ Աբեղեանի, գտնում է, որ հոգեւոր երգ է, որքան էլ թէեւ նրա նիւթը իրական-պատմական է. «Խնդրոյ առարկայ երկը *պատմական-աշխարհիկ նիւթի հիման վրայ, օրիներգի ժանրով գրուած, ողբական բովանդակութեամբ, վիպական-վկայաբանական արտապաշտամունքային հոգեւոր երգ է, ճարտասանական բանաստեղծութիւն*»[7]՝ գրում է Բախչինեանը: Այլ բան, որ այդ երկը, ինչպէս գտնում է միջնադարագէտը, «նպաստել է աշխարհիկ բանաստեղծութեան, մասնաւորապէս՝ պատմական բանքի տեսակը հանդիսացող *պատմական* ողբի ի յայտ գալուն»[8]:

Յաճախ էլ, ինչպէս, օրինակ, ժամագրքային քարոզների եւ Գրիգոր Նարեկացու գանձերի աղերսների ու տարբերութիւնների եւ առհասարակ Գանձարանների եւ գանձարանային միաւորների մասին հարցերն են, որոնք արդէն արծարծուել են բանասիրութեան մէջ, մասնաւորապես Արմինէ Քէօշկէրեանի կողմից[9], նոր հետազօտողից պահանջուել է, ըստ էութեան, բացառապէս հաստատող գնահատական դրանց վերաբերեալ:

Իւրաքանչիւր հատոր սկսում է տուեալ պատմական ժամանակաշրջանի պատմամշակութային հարցերը լուսաբանող ներածութեամբ, որին յաջորդում են տուեալ շրջանը որակող խոշոր հեղինակների ստեղծագործութիւնների գաղափարական բովանդակութեան եւ գրական-գեղարուեստական արժանիքների վերլուծութիւնները, որոնք բացայայտում են իւրաքանչիւրի բերած նորութիւնն ու ներդ-

---

[3] Նոյն, էջ 6:
[4] Նոյն, էջ 17-18:
[5] Նոյն, էջ 24:
[6] Նոյն, էջ 346:
[7] Նոյն, էջ 122:
[8] Նոյն, էջ 157:
[9] Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ գանձեր*, աշխ.՝ Արմինէ Քէօշկէրեան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1981, էջ 9-51. նաեւ՝ Ներսէս Շնորհալի, *Տաղեր եւ գանձեր*, աշխ.՝ Արմինէ Քէօշկէրեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ ԺԶ.-ԻԲ.. նաեւ՝ Արմինէ Քէօշկէրեան, *Գանձարանային մշակոյթ. սկզբնաւորում եւ զարգացում (Ժ.-ԺԳ. դարեր)*, «Եասոն» հրատ., Երեւան, 2008, էջ 5-46:

րումը հայ քերթութեան մէջ: Համեմատաբար «երկրորդական կարգի» բանաստեղծների ժառանգութիւնը եւս առնուած է քննութեան: Ասել է թէ՝ գրեթէ ոչինչ ոչ մէկը եւ ոչինչ շրջանցուած չէ:

Հատորներն ունեն յաւելուածներ, որոնք երբեմն վերաբերում են մասնակի խնդիրների, ինչպէս, օրինակ, ճարտասանութեան եւ բանաստեղծութեան ժանրային սահմաններին[10], Նարեկացու ներբողեաններին[11], տուեալ ժամանակաշրջանի հեղինակների կենսագրութեանը: Ուշագրաւ են նաեւ Խաչատուր Էրզրումեցու եւ Աբեղեանի՝ հայ բանաստեղծութեան տեսութեանը նուիրուած դիտարկումները, ինչպէս նաեւ հայ աշուղութեանը յատկացուած յաւելուածները[12]:

Իւրաքանչիւր ժամանակաշրջանի քննութիւնը աւարտւում է ասուածի ընդարձակ, խոհուն ամփոփմամբ, որտեղ, պէտք է ասել, երբեմն նկատւում են նախընթեր ասուածի բառացի կրկնութիւններ:

Ուշագրաւ է նաեւ այն, որ տարբեր հեղինակների բնագրերից մէջբերումներ կատարելիս Բախչինեանը չի բաւարարուել մինչ այժմ տպագրուածով. ըստ անհրաժեշտութեան կատարել է բնագրային որոշ փոփոխութիւններ եւ միջամտութիւններ՝ ըստ առկայ տարընթերցուածների: Կատարել է նաեւ բանասիրական ճշտումներ, սրբագրումներ: Օրինակ, նա անընդունելի է համարում օրիներգերի հեղինակ Մովսէս Քերթողին եւ Մովսէս Խորենացուն, ինչպէս նաեւ Քերթողահօրը եւ Պատմահօրը տարբեր անձինք ներկայացնելու փորձերը՝ համոզուած, որ այդ անունների տակ միեւնոյն անձն է[13]: Կամ Գրիգոր Մագիստրոսի բանաստեղծական գործերից ամենանշանակալիցը՝ «Առ Մանուէէ» կամ «Հազարտողեան» յայտնի երկը, պոէմ ժանրային անունով բնորոշելը[14]: Իդէպ, առաջին հատորում, մինչ Նարեկացու բանաստեղծական երկերի բուն քննութեանն անցնելը, Բախչինեանն առանձին գլխով՝ վերնագրած «Բանաստեղծական նոր ժանրեր», անդրադառնում է Ժ. դարի հայ հանճարի ստեղծած ու հեղինակած բանաստեղծական տեսակներին՝ իւրաքնաչիւրին տալով սպառիչ նկարագրականներ, ինչպէս, օրինակ, աղօթական բան կամ բանք[15], գանձ կամ բանաստեղծական քարոզ[16], հանգամանօրէն անդրադառնում է Աղօթամատեանի սեռի բնոյթին: Ու թէեւ շատ դրոյթներ, տեսակէտեր ու մտքեր՝ մասնաւորապէս կապուած Նարեկացու *Գանձարանի*ն, մեզ արդէն յայտնի են այդ ստեղծագործութեանը Բախչինեանի նուիրած նշանակալի, իսկապէս անստգիւտ ուսումնասիրութիւնից[17], որին յաճախ ինքն էլ՝ հեղինակը, յղում-

---

[10] Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Ա.*, էջ 346-59:

[11] Նոյն, էջ 360-82:

[12] Հենրիկ Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Բ. մինչեւ Շնորհալի եւ յետոյ (11-12րդ դդ.)*, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., Երեւան, 2022, էջ 264-94. նաեւ նոյնի՝ *Դ. մինչեւ Աղթամարցի եւ յետոյ (15-16-րդ դդ.)*, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., Երեւան, 2022, էջ 305-20. նաեւ նոյնի՝ *Ե. մինչեւ Սայեաթ-Նովա (17-18րդ դդ.)*, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., Երեւան, 2022, էջ 294-300:

[13] Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Ա.*, էջ 63:

[14] Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Բ.*, էջ 23:

[15] Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Ա.*, էջ 167:

[16] Նոյն, էջ 173:

[17] Հենրիկ Բախչինեան, *Գրիգոր Նարեկացու գանձարանը. վերծանութիւն եւ քննութիւն*, հրատ.՝ ՀԲԸ Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադ-

ներ է տալիս, քաղուածաբար յաճախ կրկնում, սակայն երկրորդման կամ կրկնութիւնների պատճառով, նոր հետազօտութիւնը բացարձակապէս չի կորցնում իր գիտական արժէքը, քանի որ ասուածը իր բնականոն եւ անհրաժեշտ տեղում է, առանց որի, համոզուած ենք, աշխատանքը միայն կը տուժէր՝ թերի թողնելով հայ բանաստեղծութեան գրապատմական երկարաձիգ ուղու մի էական փուլի վերաբերեալ ամբողջական պատկերացումը:

Շատ կարեւոր է, որ միջնադարեան իւրաքանչիւր բանաստեղծի ստեղծագործութիւնը քննելիս Բախչինեանը այն չի դիտարկում մեկուսի, իբրեւ նախորդներից չէզոք մի երեւոյթ: Նաեւ ամէն մէկի ստեղծագործութիւնը անմիջական կապի մէջ է տեսնում տուեալ ժամանակաշրջանի պատմական-հոգեբանական, հոգեւոր-գեղագիտական, դաւանաբանական տիրապետող տրամադրութիւնների ու շահագրգռութիւնների հետ: Բախչինեանը մեծ կարեւորութիւն է տալիս նաեւ բանաստեղծների անհատականութեանն ու խառնուածքի ինքնատիպութեանը:

Նման գործը պահանջում է ոչ միայն եռանդուն եւ տքնաջան տեւական աշխատանք, այլեւ միջին հայերէնի ու մանաւանդ գրաբարի փայլուն իմացութիւն, այն էլ Ժ. դարի գրաբարի: Ուրեմն միայն պատկերացնել կարելի է, թէ ի՛նչ ջանք ու եռանդ, իմացութիւն է պահանջուել մեծավաստակ գիտնականից՝ իրականացնելու այսպիսի մի աշխատութիւն:

Ուշադրութիւնից չի վրիպում նաեւ այն, որ բանասէրի վերլուծութիւնները կամ ծանօթագրութիւնները յաճախ ընդմիջւում կամ աւարտւում են ուշագրաւ եզրակացութիւններով, որոնց մի մասը - ճիշտ է - թէեւ արդէն արծարծուել է միջնադարեան բանաստեղծներին նուիրուած տարբեր հեղինակների, ինչպէս նաեւ սեփական ուսումնասիրութիւններում (իդեպ, Բախչինեանը շատ յաճախ բուն շարադրանքում կամ տողատակի ծանօթագրութիւններում քաղուածաբար մէջ է բերում տարբեր բանասէրների կարծիքները, դրանք մօտաբերում, բաղդատում կամ հակադրում միմեանց, երբեմն էլ մէկը լրացնում միւսով), եւ եթէ անգամ մտածենք, որ Բախչինեանից առաւել գուցէ պահանջուել է հաստատող, ճշգրտող հայեացք, ապա, միեւնոյն է, նա իր մտահանգումներին ու հիմնաւորումներին հասել է բուն նիւթի խոր ու բազմակողմանի ուսումնասիրութեամբ, գիտական դիպուկ, բնորոշ բացայայտումների շնորհիւ:

Առանց չափազանցման կարելի է ասել, որ Բախչինեանի այս ծանրակշիռ աշխատութեան իւրաքանչիւր հատոր, գլուխ, ամէն հատուած, եթէ չասենք ցանկացած էջ, խիստ օգտակար եւ արժէքաւոր կարող են լինել ուսումնասիրողների մեծ մասի իմացութեան համար: Հատորներից կարելի է բերել ինչքան ասես օրինակներ, որոնք պերճախօս վկայութիւնն են այն բանի, թէ Բախչինեանը որքան մտահոգ է իր ընթերցողների եւ բանասիրութեամբ զբաղուողների խոր իմացութիւնների խնդրով: Սա խօսում է հեղինակի բարեխղճութեան եւ իր առջեւ դրուած խնդրին անմասն նուիրուած լինելու մասին:

---

րամ, Պէյրութ, տպ. Շիրակ, 2016: Այս ուսումնասիրութեանը մենք անդրադարձել ենք առանձին գրախօսականներով (Վաչագան Աւագեան, «Հենրիկ Բախչինեան. Գրիգոր Նարեկացու գանձարանը. վերծանութիւն եւ քննութիւն», *Պատմա-բանասիրական հանդէս*, 3:2017, էջ 229-35. նաեւ՝ Վաչագան Աւագեան, *«Նշանակալից ներդրում նարեկացիագիտութեան ասպարեզում»*, *Էջմիածին*, Ժ:2017, էջ 150-61:

Վերջում նկատենք, որ վաստակաշատ գիտնականը իր այս աշխատութիւնը նուիրել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի հին եւ միջնադարեան գրականութեան բաժնի՝ հայ միջնադարեան բանաստեղծութեան ուսումնասիրութեան եւ հրատարակութեան ասպարէզում մեծ աւանդ ունեցող մի շարք երախտաւորների ու իր գործընկերների (Գրիգոր Յակոբեան, Պարոյր Սեւակ, Մայիս Աւդալբէգեան, Արմէնուհի Սրապեան, Մանիկ Մկրտչեան, Վարագ Ներսիսեան, Պօղոս Խաչատրեան, Արշալոյս Ղազինեան, եւ ուրիշներ) յիշատակին, որոնց հետ անցել է այդ «արգասաւոր բաժնի բովով»[18]:

Ամփոփելով, վստահաբար կարող ենք ասել, որ Հենրիկ Բախչինեանի այս նոր ու անվերապահօրէն արժէքաւոր ուսումնասիրութիւնը գալիս է լրացնելու հայագիտութեան մեծ երախտաւորի բեղուն վաստակը եւ իր կայուն տեղն է ունենալու հայ միջնադարագիտութեան պատմութեան մէջ:

ՎԱՉԱԳԱՆ ԱՒԱԳԵԱՆ
avagyan.vachik@yandex.ru

[18] Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, Ա.*, էջ 7-8:

# ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

**Անժելա Ամիրխանեան** **anjela.nersisyan.1969@mail.ru**
Ծնած է Կիրոբվական (այժմ Վանաձոր), 1969ին: 1995ին աւարտած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտի հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: Ներկայիս ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի գիտաշխատող է եւ կ'ուսումնասիրէ հայոց հաւաքչական մշակոյթն ու անոր արդի դրսեւորումները, ինչպէս նաեւ էթնոլեզուաբանական եւ էթնոբուաբանական խնդիրները:
Համահեղինակ է (Ս. Հոբոսեանի, Բ. Գասպարեանի, Հ. Յարութիւնեանի, Ա. Սարատիկեանի հետ), *Խաղողի եւ գինու հայոց մշակոյթը*, հատորին (Երեւան 2021):

**Սիւզաննա Բարսեղեան** **syuzanna.barseghyan@gmail.com**
Ծնած է Երեւան: 2005ին վկայուած է ընկերաբանութեան մագիստրականով, իսկ 2020ին՝ պատմական գիտութիւններու թեկնածուի կոչումով՝ ազգագրութիւն մասնագիտացմամբ: 2004-09՝ աշխատած է Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւններու հայկական կեդրոնը, իբրեւ վերլուծաբան, ապա՝ հետազօտութիւններու ղեկավար: 2020-21՝ եղած է ՀՀ վարչապետի օգնական: 2011էն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի Սփիւռքի հետազօտութիւններու բաժնի գիտաշխատող է: Հեղինակ եւ համահեղինակ է գիտական ու կիրառական հետազօտութիւններու եւ յօդուածներու:

**Սեդա Գալստեան** **sedagalstyan@yahoo.com**
Ծնած է Երեւան, 1957ին: 1980ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը: 1992էն ցայսօր Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի վարիչն է:
Մասնակցած է գիտաժողովներու, հրատարակութեան պատրաստած է Ա-Դոյի, *Հայութեան երկունքը* (2014) հատորին ձեռագիրը, համահեղինակն է (Սահակ Թորոսեանի հետ) *Հայաստանի առաջին հանրապետութեան Երեւանի նահանգապետը* մենագրութեան (2007) եւ *Կոչեմ ապրողաց* գիրք-ալպոմին (2015), հեղինակն է *Սարդարապատի հերոսը, մահապարտների հոգին, Կարսի դաւաճանութեան զոհը* (2019), *Վերածնուած Հայաստան՝ Տէր Զօրից Սարդարապատ* (2020) հատորներուն, ինչպէս նաեւ *Հայոց պետականութեան վերածննդի 100 էջերը* լուսանկարային-ալպոմ դասագիրքին (2018): 2022ին արժանացած է «Հայաստանի նոր եւ նորագոյն պատմութիւնը ճանաչելի դարձնելու» պատուոգրին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի Ա. հանրապետութիւնը, Խորհրդային շրջանը:

**Մարի Ալիք Գարամանուկեան** **maryalikkaramanoukian@gmail.com**
Ծնած է Մոնթրէալ, 1993ին: 2015ին աւարտած է Հալէպի համալսարանի անգլերէն լեզուի եւ գրականութեան բաժինը, իսկ 2018ին՝ մագիստրականը, Հայաստանի ամերիկեան համալսարանի անգլերէնը իբրեւ օտար լեզու դասաւանդելու բաժինէն, ուրկէ 2021ին ստացած է քաղաքական գիտութիւններու մագիստրականը
Ներկայիս կը բնակի Երեւան: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ քաղաքական համարկումը, Սփիւռքը, բառապաշարի դասաւանդում եւ իւրացում:

**Գալիա Դաւիդովա** **galya.davidova.60@gmail.com**
Ծնած է 1960ին, Արմաւիր: 1986ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժանմունքը: 1986էն կը պաշտօնավարէ Հայոց ազգագրութեան թանգարանի «Ազգագրութեան» բաժինը (ներկայիս՝ աւագ գիտաշխատողի հանգամանքով):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ասորիներու ԺԹ. դարավերջ–Ի. դարասկիզբ պատմութիւնը եւ ընկերատնտեսական պայմանները, հայոց եւ ասորական հարսանեկան ծիսակարգերն ու տօները, Հայաստանի ասորիներու տօները: 2016ին հրատարակած է «Ասորական եւ հայկական հարսանեկան ծիսակարգերի համեմատական բնութագիրը (ԺԹ. դարավերջ – Ի. դարասկիզբ)» յօդուածը: 2019էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Հրանդ Խաչատուրեան** **herantk33@gmail.com**
Ծնած է 1933ին, Իսքենտէրուն: 1939ին ընտանեօք հաստատուած է Լիբանան: 1958ին վկայուած է Պէյրութի ամերիկեան համալսարանէն իբրեւ բժիշկ եւ տեղափոխուած Մ. Նահանգներ: 1958-61՝ կատարած է յետդոկտորական ուսումնասիրութիւններ՝ հոգեբանութեան բնագաւառին մէջ, Րոչեսթըր (Նիւ Եորք) համալսարանը: 1984ին արժանացած է Richard W. Lyman մրցանակին, անդամ է "Alpha Omega Alpha"ին: 1985ին Pacific Graduate School Psychologyն իրեն շնորհած է պատուոյ դոկտորի կոչում:
1958-61՝ պաշտօնավարած է Րոչեսթըրի Strong Memorial Hospitalին մէջ, իսկ 1969էն դասաւանդած, վարչական, կրթական եւ մանկավարժական բեղուն գործունէութիւն ծաւալած է Սթենֆըրտ համալսարանին մէջ, ուր ստանձնած է բարձրագոյն պաշտօններ: Հեղինակ է 11 հատորներու, որոնց շարքին՝ *Fundamentals of Human Sexuality* (1972), *Human Sexuality: A Comparative and Developmental Perspective* (1974), *Human Sexuality: Sense and Nonsense* (1974), *Biological Apects of Human Sexuality* (1975), *Guilt: The Bite of Conscience* (1977, 2010), *Fifty: Midlife in Perspective* (1986), *Cream of the Crop: The Impact of Elite Education in The Decade After (1994), The Way it Turned Out: A Memoir* (2012):

**Լալիկ Խաչատրեան** **lingualal51@mail.ru**
Ծնած է 1952ին, Կամօ (այժմ՝ Գաւառ): 1973ին աւարտած է ԽԱՀՊՄՀի բանասիրական ֆակուլտէտը: 1997ին պաշտպանած է դոկտորական, 2003ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1997-2003՝ գրաբար եւ հայ հին գրականութիւն դասաւանդած է Հալէպի մէջ: 2001-13 եւ 2015-16՝ ԽԱՀՊՄՀ հայոց լեզուի եւ անոր դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հին հայերէնը, բառակապակցական իմաստաբանութիւնը, բառարանագրութիւնը, հայոց լեզուի տեսութիւնը, ընդհանուր լեզուաբանութիւնը եւ փոխառութիւնները: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու: 2019էն վարիչն է ԽԱՀՊՄՀ լեզուաբանական հետազօտութիւններու գիտական աշխատանոցին: 2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Սամուէլ Խաչատրեան** **samuelkhatchatourian@gmail.com**
Ծնած է Արմաւիր, 1996ին: 2019ին աւարտած է մագիստրականը՝ ԵՊՀի Եւրոպական ուսումնասիրութեանց կեդրոնէն:

Գիտական հետաքրքրութեանց ծիրը կ'ընդգրկէ ժողովրդահաճութիւնը, հայկական քաղաքական բնագաւառը, Եւրոպական Միութիւնը եւ քաղաքական ծրագրերու արժեւորումը:

**Վազգէն Հախոյեան** (Վան Կարնոյ) **van.karno@gmail.com**
Բանաստեղծ, պատմաբան: Ծնած է 1992ին, Հարթագիւղ, Լօռի: 2020ին աւարտած է ԵՊՀ պատմութեան կաճառի հայագիտութիւն մասնագիտութեան մագիստրականը: Նոյն թուականին ընդունուած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ հիմնադրամի թեկնածուականի բաժինը: Հրատարակած վերջին յօդուածն է «Կարսի հայութեան կոտորածը 1920-1921 թթ.»:
Գիտական հետաքրքրութիւները կ'ընդգրկեն Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութիւնը Արեւելեան Հայաստանի մէջ:

**Վահրամ Հովեան** **vhovyan@yandex.ru**
Ծնած է 1981ին, Ծալկայի շրջան, Վրաստանի Հանրապետութիւն: 2005ին պաշտպանած է մագիստրականը ԵՊՀ միջազգային յարաբերութիւններու ֆակուլտէտի քաղաքագիտութեան ամբիոնը: 2006-18՝ պաշտօնավարած է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին մէջ, 2019էն «Օրբելի» կենտրոնի փորձագէտ է: Հեղինակ է բազմաթիւ յօդուած-ուսումնասիրութիւններու, եւ համահեղինակ՝ շարք մը գիրքերու: Մասնակցած է գիտաժողովներու, նաեւ՝ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներուն:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքի արդի հիմնախնդիրները, Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները: 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

**Մոհամմադ Մալեքմոհամմադի** **MalekMohammadi@em.uni-frankfurt.de**
Ծնած է 1972ին, Իրան: Թեկնածուականը պաշտպանած է 2015ին, ԵՊՀի եւ Վ. Բրիւսովի անուան Լեզուաբանական Համալսարանին մէջ: 2020էն անդամ է Հայագիտութեան Միջազգային Ընկերակցութեան (AIEA), 2005էն մաս կը կազմէ Սպահանի Համալսարանի հայագիտութեան եւ գերմանական լեզուներու եւ գրականութեան բաժնի դասախօսականազմին, 2014էն անդամ է ՀԱԱ ԳԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի լեզուաբանական հանդէսի խմբագրականազմին: Ունի բազմաթիւ ուսումնասիրական յօդուածներ հայ-իրանական լեզուական առնչութիւններուն մասին: Հեղինակ է *Persian language teaching (for Armenian students), հտր. 1* (2014) հատորին: Ներկայիս ընկերակից փրոֆեսոր է Սպահանի Համալսարանին եւ Ալեքզանտր Ֆոն Հումպոլտի անուան դասախօս՝ Johann Wolfgang Goethe Համալսարանին: 2010էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

**Միհրան Մինասեան** **mihran.min@gmail.com**
Ծնած է Հալէպ: Երկրորդական ուսումը ստացած է Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը: Համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու ապստամբութիւնը օսմանցի կուսակալ Խորշիտ Փաշայի դէմ (1819-1820) - Աբրահամ արք. Քիւբէլեանի օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի *Հասկ հայագիտական տարեգիրք*ին, *Բագին*ին, *Ցեղասպանագիտական հանդէս*ին, *Բանբեր մատենադարանի*ին եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով, նուիրուած հայ հնատիպ գիրքին, հայ պար-

բերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագիրերու, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան, հայ լուսանկարչութեան եւն.:
Զբաղած է նաեւ բանահաւաքչութեամբ: Հայոց Ցեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած է վկայութիւններ եւ ազգագրական-բանահիւսական հսկայ նիւթ: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու ինստիտուտ-մատենադարանին եւ ՀՀ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Էլինա Մխիթարեան** **mkhitaryan.elina.m@gmail.com**
Ծնած է 1985ին, Արցախի Ստեփանակերտ քաղաքը, մանկավարժներու ընտանիքի մէջ: 2002-07՝ ուսանած է Արցախի պետական համալսարանի (ԱՊՀ) մարդասիրական ֆակուլտէտը եւ վկայուած իբրեւ պատմութեան ուսուցիչ-պատմաբան: 2012ին աւարտած է երկրորդ մասնագիտութիւնը՝ իրաւագիտութիւն, իսկ 2022ին մագիստրականը՝ նոյն մասնագիտութեամբ: Հետեւած է զանազան խտացուած դասընթացքներու՝ հաշուապահութիւն, պետութիւն-հասարակութիւն-կառավարում-առաջնորդութիւն, կազմակերպում, մարդկային աղբիւրներու կառավարում եւն. նիւթերով: Հետեւած է նաեւ վերապատրաստման դասընթացքներու:
2007էն աշխատած է Արցախի Հանրապետութեան գաղթականներու, վերաբնակեցման, հայրենադարձութեան, տեղահանուածներու հարցերով զբաղող պետական կառոյցներու մէջ: 2022 Ապրիլէն Արցախի Հանրապետութեան պետական նախարարի խորհրդական է՝ տեղահանուածներու եւ փախստականներու, ընկերային աշխատանքի, Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի հետ համագործակցութեան հարցերով:
2008-13՝ դասաւանդած է «Գրիգոր Նարեկացի», իսկ 2012էն իվեր կը դասախօսէ ԱՊՀ պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտէտը, 2017էն՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանին մէջ կը վարէ գաղթականական իրաւունք, ընկերային իրաւունք դասընթացքները: Հեղինակ է պատմագիտական եւ իրաւագիտական շուրջ երկու տասնեակ յօդուածներու: Պարգեւատրուած է 2007ի «Լաւագոյն երիտասարդ աշխատակից» կոչումով, 2013ին՝ Արցախի Հանրապետութեան քաղաքացիական ծառայութեան Բ. դասի պետական խորհրդականի դասային աստիճանով՝ Արցախի Հանրապետութեան նախագահէն: Մխիթարեան ԱՊՀ աւագ դասախօս է, փախստականներու եւ տեղահանուած անձանց հարցերու փորձագէտ: Ամուսնացած է, ունի երեք զաւակ:

**Րոպերթ Մկրտիչեան** **rma@cadcafmservices.com**
Ծնած է Մեսեչուսէց, Մ. Նահանգներ, 1953ին: 1974ին աւարտած է Թաֆց համալսարանի քաղաքային ճարտարապետութեան, 1975ին՝ նոյն համալսարանի գեղարուեստից բաժինը, իսկ 2022ին՝ ոչ-շահութաբեր կառավարման մասնագիտութիւնը՝ Ուորսեսթըր համալսարանէն:
2022ին կազմակերպած է իր հօր՝ Աբրահամ Մկրտիչեանի մետաղարուեստի ցուցահանդէսը՝ Քէյմպրիճի գրադարանին, ինչպէս նաեւ Արիզոնայի մանրակերտից թանգարանին մէջ:
Ստորագրած է խոհագրութիւններ արուեստի մասին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ամերիկահայ արուեստը:

**Կարէն Մկրտչեան** **K86Mkrtchyan@gmail.com**
Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-իրանական յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով:
Ներկայիս ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի հայ գաղթօճախներու եւ Սփիւռքի պատմութեան գիտաշխատող է: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, ՀՀ–Իրանի ԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, ղարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Ցեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին:

**Զաւէն Մսըրլեան**
Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը, Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ:
Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի հայ աւետ. գոլէճի տնօրէնը: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Հայերը համաշխարհային Բ. պատերազմին* (2020): 1971էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Հայկ Նազարեան** **nazaryan_h90.90@mail.ru**
Ծնած է Երեւան, 1990ին: 2008-10՝ ծառայած է հայկական բանակին: 2015ին աւարտած է ԽԱՀՊՄՀի պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտէտի մագիստրականը: 2018ին պաշտպանած է ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի թեկնածուականը՝ «Մեծն Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.)» նիւթով: 2015-21՝ աշխատած է Հայաստանի ազգային արխիւին մէջ: 2022էն աւագ գիտաշխատող է Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնին մէջ:
Մասնակցած է շարք մը հանրապետական եւ միջազգային գիտաժողովներու: Հեղինակ է *Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում (1914-1920 թթ.)* (2020) հատորին եւ շարք մը գիտական յօդուածներու՝ լոյս տեսած *Բանբեր Հայաստանի արխիւների, Էջմիածին, Լրաբեր, Հայկական բանակ ռազմագիտական հանդէս, Պատմաբանասիրական հանդէս* պարբերաթերթերու եւ գիտական ժողովածուներու մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ռազմական պատմութիւն, ռազմական արդիւնաբերութիւն, աշխարհառազմավարութիւնն (Geostrategy): 2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Վահրամ Շեմմասեան** **vahram.shemmassian@csun.edu**
Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Ունի բազմաթիւ յօդուածներ եւ Մուսա Լեռան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, որոնց երկրորդը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիըմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ

մշակոյթին զարգացման իր բերած նպաստին համար (2010): Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Յակոբ Չոլաքեան** **hagopcholakian@hotmail.com**

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան, պաշտպանելով «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» աւարտաճառը: 2014էն ՀՀ ԳԱԱ ՀԱԻի գլխաւոր գիտաշխատող է: 54 տարի աշխատած է իբրեւ հայերէնի ուսուցիչ եւ դասախօս:

Հեղինակ է հայերէնի դասագիրքերու, գիտական յօդուածներու եւ ազգագրական, բանագիտական, պատմագիտական եւ լեզուաբանական հատորներու, որոնց վերջինը՝ *Պատմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականութիւնները* (2023): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Անտիոքի շրջանի հայոց պատմութիւնը, ազգագրութիւնը, բանահիւսութիւնը, բարբառը, արեւմտահայերէնը, Սփիւռքի կրթական վիճակը: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Կարինէ Ռաֆայէլեան** **karine.rafaelyan@mail.ru**

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Հիմնարկի (այժմ Համալսարան) հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: 1994էն Գրականութեան եւ արուեստի թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գրականագիտութիւնը, թանգարանագիտութիւնը, մշակութաբանութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Լուսինէ Սահակեան** **lusine_sahakyan72@mail.ru**

Ծնած է Երեւան, 1972ին: 1995ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը (ԵՊԿ), իսկ 2007ին՝ արուեստագիտութեան թեկնածուականը՝ ԳԱԱ արուեստի ինստիտուտին մէջ՝ «Կոմիտասագիտութիւնը հայ երաժշտագիտութեան մէջ» նիւթով: 2018էն կ'աշխատի դոկտորական թեզին վրայ: 2009էն դոցենտ, 2014էն ԵՊԿ երաժշտութեան պատմութեան ամբիոնի վարիչն է: 2014էն անդամ է ԵՊԿ *Երաժշտական Հայաստան* ամսագրի խմբագրական խորհուրդին: 2015էն անդամ է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհուրդին, իսկ 2020էն՝ ԳԱԹի գիտական խորհուրդին: Հեղինակն է *Կոմիտասագիտութիւնը հայ երաժշտագիտութեան մէջ* մենագրութեան (2010), *Կոմիտաս Վարդապետ* (յօդուածներու ժողովածու)ին (2019) եւ Ռոբերտ Աթայեան մենագրութեան (2021):

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Կոմիտասագիտութիւնը, հայ յօրինողական արուեստը, համաշխարհային երաժշտութիւնը, հայագիտութիւնը:

**Արմէն Շ. Սարգսեան** **armensargg@gmail.com**

Ծնած է 1949ին, Լօռուայ Շամուտ գիւղը: 2018ին պաշտպանած է դոկտորականը՝ «Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ եւ զուարճախօսութիւններ (անեկդոտներ)» նիւթով: 2005էն գիտաշխատող է ԳԱԱ ՀԱԻ հիմնարկին մէջ,

խմբագրած է շարք մը գիրքեր, հրատարակած բանահիւսական եւ լեզուաբանական ուսումնասիրութիւններ, հեղինակ է շարք մը մենագրութիւններու, վերջինը՝ *Մանկական ծիծաղադարան* (2019):
Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ գրականութեան եւ բանահիւսութեան փոխառնչութեան հարցերը, հայ մանկական բանահիւսութիւն/զուարճախօսութիւնը, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ/զուարճախօսութիւնները, ստապատումները, հայ ժողովրդական երկխօսական-հարցուպատասխանական ասոյթաբանութիւնը, բանահաւաքութեան եւ բանահիւսութեան մեթոտաբանութիւնը, մանկագրութիւնը, առակագրութիւնը: 2015էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Անդրանիկ Տագէսեան** **adakessian@haigazian.edu.lb**
Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ "Democracy and Integration in Multicommunal Polities: The Armenians and the Kurds in Lebanon" նիւթով: 1993-2018՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէս*ին: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Յեղասպանագիտական հանդէս* (2018), *Բազմավէպ* (2019), *Բանբեր Հայաստանի արխիւների* (2023) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Այդ հանգամանքով կազմակերպած է ամէնամեայ գիտաժողովներ: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Եգիպտոսի, Սուդանի եւ Եթովպիոյ հայերը/2 գիտաժողովի նիւթեր* (2023), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Լուսինէ Տանաճեան** **lusine.tanajyan@gmail.com**
Ծնած է 1990ին: 2020ին ՀՀ ԳԱԱ ՀԱԻի մէջ պաշտպանած է թեկնածուական: 2011էն կ'աշխատի ՀԱԻի Սփիւռքի հետազօտութիւններու բաժինը՝ որպէս աւագ գիտաշխատող: Ան նաեւ դասախօս է: Մասնակցած եւ ղեկավարած է 20է աւելի միջազգային եւ ներպետական գիտահետազօտական ծրագրեր, կատարած դաշտային եւ վերլուծական աշխատանքներ՝ հայերու համեմատական ուսումնասիրութիւններու, սուրիահայերու ներգաղթի, սփիւռքեան ընկերային փոփոխութիւններու եւ այլ թեմաներու շուրջ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Սփիւռքի ընկերային տեղաշարժերու, ընկերային շարժունակութեան, հայրենադարձութեան, գաղթականական նիւթերը: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

**Լիզա Քարիմեան** **liz79k@gmail.com**
Ծնած է 1979ին, Երեւան: 2001ին աւարտած է ԵՊՀ աստուածաբանութեան ֆակուլտէտի մագիստրականը, իսկ 2004ին՝ թեկնածուականը: 1999-2002՝ իբրեւ խմբագիր եւ թարգմանիչ, աշխատած է, «Գանձասար» աստուածաբանական կեդրոնին մէջ: 2005-17՝ եղած է Վ. Բրիւսովի անուան պետական լեզուահասարակագիտական համալսարանի յունարէնի դասախօս, 2005էն ԵՊՀ կրօնի պատմութեան եւ տեսութեան ամբիոնի դասախօս է: Հեղինակ է *Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները 5-6րդ դարերում (420-550ական թթ.)* (2018) մենագրութեան:

# Աշխատակիցներու Ուշադրութեան

*Հայկազեան հայագիտական հանդէս* (*ՀՀՀ*) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն իվեր, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ: 2022էն սկսեալ ան լոյս կ'ընծայուի վեցամսեայ դրութեամբ:

*ՀՀՀ*ն կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան ազգագրական, աշխարհագրական, բանասիրական, գրական, իմաստասիրական, իրաւագիտական, լեզուագիտական, կրօնական, հնագիտական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), պատմական, տնտեսագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

*ՀՀՀ*ն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու *ՀՀՀ*ի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւս:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 10,000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 5000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 4000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ հետեւեալ կառոյցը.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով շաղկապուած), եզրակացութիւն:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-
Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթիւ:
Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:
Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:
Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները, հարցազրոյցին վայրն ու թուականը:
Կայքէջի պարագային՝ լրիւ հասցէն եւ մատչումի թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն ամփոփում մը, շուրջ 250 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուական-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը, նկար մը եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լաւորակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակներուն տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀի խմբագրութեան յղել հատորէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքերուն վրայ.-
http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .
http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .
https://www.flib.sci.am/ .

# Notes to Contributors

*Haigazian Armenological Review* (*HAR*) has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University. Since 2022 it is being published twice a year.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with archaeology, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, ethnography, geography, history, linguistics, literature, philology, philosophy, politics, religion, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *HAR* should preferably be not more than 10,000 words (including the footnotes), for investigative articles and briefings not more than 4000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Footnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a 250 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and

publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the *HAR*'s style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *HAR* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *HAR*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:
http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .
http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .
https://www.flib.sci.am/ .

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ/TABLE OF CONTENTS


Խմբագրական 3

Editorial 7


## ՅՕԴՈՒԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ RESAERCH ARTICLES

### *Արուեստ եւ Արհեստ Arts and Crafts*


Լուսինէ Սահակեան
Lusine Sahakyan
Արդի կոմիտասագիտութեան հիմնախնդիրներ
Current Issues of Komitas Studies 9

Robert Megerdichian
Րոպերթ Մկրտիչեան
Abraham Megerdichian, *Eemin shinadz panerus* (The Things I've Made)
Աբրահամ Մկրտիչեան. իմին շինած բաներս 23

Անդրանիկ Տագէսեան
Antranik Dakessian
Ակնարկ հայերէն արձանագրութեամբ բաղնիքի պղնձեայ կաւամաններու վրայ
A Survey of the Armenian Copper Bath Tass Used for Clay 49


### *Բանահիւսութիւն Folklore*


Գալիա Դաւիդովա
Galya Davidova
Վերյիշելով եւ վերականգնելով հայկական հարսանեկան ծէսեր, ամուսնական խորհրդանիշեր
Remembering and Reviving Armenian Wedding Ceremonies and Marriage Symbols 71

Արմէն Շ. Սարգսեան
Armen Sargsyan
Հայ ժողովրդական ստապատումներ եւ սուտասելուկներ
Armenian Popular/Folk Cock-and-bull Stories 85


### *Գրականագիտութիւն Literary Criticism*


Կարինէ Ռաֆայէլեան
Karine Rafaelyan
Նիւթական եւ վերացական աշխարհների փոխատեղումը Հրաչեայ Սարիբեկեանի վէպերում (*Երկուորեակների արեւը, Ապուշների ուղեւորութիւնը*)
The Exchanging of Material and Abstract Worlds in Hrachya Saribekyan's Novels *Yergvoryagneri Areve* (The Twins' Sun) and *Abushneri Ooghevorutyune* (The Idiots' Journey) 99

***Եկեղեցի, Կրօնք, Փիլիսոփայութիւն/Church, Religion, Philiosophy***

Լիզա Քարիմեան — Հակաքաղկեդոնականութիւնը Հայաստանում. Զ. դարի սկզբին. Դուինի 506ի ժողովի դաւանական ուղղուածութիւնը — 121
Liza Karimian — Anti-Chalcedonism in Armenia in the Early 6th Century: The Confessional Orientation of the Dvin Council in 506

***Ընկերաբանութիւն Sociology***

Samvel Khachatryan — An Examination of the Intersection of Populaism and Democracy: The Case of Armenia — 139
Սամուէլ Խաչատրեան — Քննութիւն մը ժողովրդավարութեան եւ ժողովրդահաճութեան հատումին. Հայաստանի պարագան

Mary Alik Karamanoukian — Diaspora in Armenia: Immigration and Political Integration of Syrian Armenians — 171
Մարի Ալիք Գարամանուկեան — Սփիւռքը Հայաստանի մէջ. սուրիահայերու ներգաղթը Հայաստան ու համարկումը

Սիւզաննա Բարսեղեան
Syuzanna Barseghyan — Սփիւռքի մամուլն «Ethnic Media» հասկացութեան ենթախորքում
Diaspora Newspapers in the Context of Ethnic Media — 203

Լուսինէ Տանաջեան — Կրօնական վարքագծի որոշ առանձնայատկութիւններ Թեհրանի եւ Լոս Անճելըսի հայկական համայնքներում (Էթնօընկերաբանական հետազօտութիւն) — 219
Lusine Tanajyan — Some Peculiarities in the Religious Attitude of the Armenian Communities of Los Angeles and Tehran

Herant Katchadourian
Հրանդ Խաչատուրեան — Culture and Psychopathology: The Case of the Armenian Village of Anjar
Մշակոյթ եւ հոգէախտաբանութիւն. Այնճար հայաւանին պարագան — 237

Զաւէն Մսըրլեան — Հայոց Ցեղասպանութեան գիտակցութեան հարցը Թուրքիոյ մէջ — 267
Zaven Messerlian — Consciousness Matters: The Armenian Genocide Within Turkey

### *Լեզու Linguistics*


| | | |
|---|---|---|
| Անժելա Ամիրխանեան<br>Anjela Amirkhanyan | «Գայլ» բառով բաղադրուած բոյսերի անուններ հայերէնում<br>Compound Names of Plants with the Rootword 'Wolf' | 283 |
| Յակոբ Չոլաքեան<br>Hagop Cholakian | Ընդհանուր տեսութիւն Քեսապի բարբառի բուսանուններուն վրայ<br>A General Observation of Plant Names in the Dialect of Kesab | 299 |
| Մոհամմադ Բ. Մալէք Մոհամմադի<br>Mohammad MalekMohammadi | Հայ-արաբական լեզուական առնչութիւնների պատմութիւնից<br>Armenian-Arabic Language Contacts and Armenian Words of Arabic Origin | 313 |
| Լալիկ Խաչատրեան<br>Lalik Khatchatryan | Հինհայերէնեան յարադրութիւնների փոխակերպումը բարդութիւնների՝ գոյական+բայ > բայ կաղապարով (տարժամանակեայ հայեցակէտ)<br>The Transformation of Old Armenian Analytical Constructions into Compound Words with a Pattern Noun+Verb > Verb (Dyachronic Aspect) | 333 |


### *Պատմութիւն-Հնագիտութիւն History-Archeology*


| | | |
|---|---|---|
| Հայկ Նազարեան<br>Hayk Nazaryan | Հայկական հակօդային պաշտպանութեան զօրքերի զարգացումը 1994ի մայիսեան զինադադարից մինչեւ 2016ի ապրիլեան ռազմական գործողութիւնները (Բ. մաս)<br>The Development of the Armenian Air Defence Forces between the May 1994 Armistice and the Military Actions of April 2016 (Part 2) | 347 |
| Սեդա Գալստեան<br>Seda Galstyan | Էջեր Անտոն Քոչինեանի արխիւից (1966-74)<br>Pages from the Archive of Anton Kochinian (1966-74) | 367 |
| Vahram L. Shemmassian<br>Վահրամ Շեմմասեան | The Saint Paul Capuchin Mission in Musa Dagh, 1919-39<br>Քափուչինեան Ս. Պօղոս առաքելութիւնը Մուսա Լեռան մէջ, 1919-39 | 387 |

Վազգէն Հախոյեան — Ալեքսանդրապոլի գաւառի 1920-21ի կոտորածները — 409
Vazgen Hakhoyan — The Turkish Massacres in the Province of Alexandropole in 1920-21

Կարէն Մկրտչեան — Րաֆֆու պատմագիտական ժառանգութիւնը պարսկահայ գաղթօճախի մասին *Մշակի* էջերում (1872-78) — 425
Karen Mkrtchyan — Raffi's Historical Articles in *Meshag* between 1872 and 1878 on the Armenian Community of Iran

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ/UNPUBLISHED DOCUMENTS

Միհրան Ա. Մինասեան — Անտիպ տեղեկագիր Տենէք-Մատէնի (Քեսկինի) մասին (1900 Թ.) — 445
Mihran A. Minasian — An Unpublished Report of 1900 on Denek Maden (Kesgin)

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ BRIEFINGS

Էլինա Մխիթարեան — Արցախեան հասարակութիւնը ճգնաժամի պայմաններում (փախստականների եւ տեղահանուած անձանց խոցելի խմբերի օրինակով) — 459
Elina Mekhitaryan — The Critical Conditions of the Indigenous Population of Artsakh (An Observation on Refugee and Internally Displaced Groups)

Վահրամ Հովեան — Միջդաւանական համագործակցութիւնը Քեսապում Հայոց Ցեղասպանութեան տարիներին — 471
Vahram Hovyan — Interconfessional Cooperation in Kesab during the Years of the Armenian Genocide

## ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ BOOK REVIEWS

Անահիտ Խեչոյեան — *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ* (ՀԱԻԱ) - 4 — 483

Վաչիկ Աւագեան — Հենրիկ Բախչինեան, *Հայ միջնադարեան բանաստեղծութիւնը, հինգ հատորով* — 494

Համառօտ կենսագրութիւնն հատորին աշխատակիցներուն 501
Աշխատակիցներու ուշադրութեան 509
Note to Contributors 511
Բովանդակութիւն/Table of Contents 513

*Հայկազեան հայագիտական հանդէս, հտր. 43/1*. տպաքանակ՝ 125
Գին՝ Լիբանան 100,000Լ. ոսկի, արտասահման 30 տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
*Haigazian Armenological Review, Vol. 43/1*
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb